ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

4

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ
III

ЭВЛИЯ ЧЕЛЕБИ

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА,
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ
А. Х. САФРАСТЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գ

ԷՎԼԻՅԱ ՉԵԼԵԲԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ,
ԱՌԱՋԱԲԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ՝ Ս. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Հ. ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական քարտուղար)։

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» սույն մատենաշարի առաջին երեք հատորները հրապարակվել են առանց համապատասխան համարների։ Դրանք են.

1. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Ա., Երևան, 1961։

2. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածական ակնարկով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Բ., Երևան, 1964։

3. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965։

4. Բյուզանդական աղբյուրներ. գիրք Ա., Պրոկոպիոս Կեսարացի. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի։

1—6—1

ԱՌԱՋԱԲԱՆ

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» գրքի երրորդ հատորում ընդգրկված նյութերը քաղվածաբար թարգմանվել են XVII դարի թուրք ուղևոր էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունից»։

Սույն աշխատության I և II հատորներում զետեղված նյութերը հիմնականում պատմական բնույթի էին։ Ներկա հատորի նյութերը, իրենց պատմական, աշխարհագրական, տնտեսական, հնագիտական, ազգագրական և կուլտուր-կենցաղային բնույթով, որոշ չափով լրացնում են թուրք հեղինակների հաղորդած ժլատ տեղեկությունները մեր և հարևան ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուր-կենցաղային կյանքի մասին։

էվլիյա Չելեբիին հաճախ անվանում են նաև թուրքական Իբն-Բաթութա կամ «Աշխարհաշրջիկ»*։

էվլիյա Չելեբիի վերաբերյալ շատ սահմանափակ տեղեկություններ են պահպանվել։ «Ուղեգրության» մեջ նա որոշ կենսագրական տեզեկություններ է հաղորդում իր մասին։ Ծնվել է 1020 թվականին (1611) Կոստանդնուպոլսում։ Ղուրանը անգիր անելու (Հաֆըզ) և պապերի սուլթանական արքունիքի հետ ունեցած կապի պատճառով նրա էվլիյա անվանը հետագայում ավելանում է Չելեբի պատվավոր անունը և կոչվում Հաֆըզ էվլիյա Չելեբի։

էվլիյա Չելեբին նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում. այնուհետև ուսումը շարունակել է շեյխ-ուլ-իսլամ Համիդ էֆենդիի մեդրեսեում։ 1045 թվականին (1636) Այա-Սոֆիայում ծառայել է որպես հաֆըզ։ Հետագայում սուլթան Մուրադ IV-ը նրան իբրև զրուցակից հրավիրել է իր արքունիքը։

էվ. Չելեբին ընդունակություն և մեծ հակում է ունեցել դեպի

---

* سیاح عالم

երգն ու երաժշտությունը, որին շատ է նպաստել նրա գեղեցիկ և հրապուրիչ ձայնը։ Թե՛ արքունիքում և թե՛ դրսում նա սերտ կապ է պահպանել ժամանակի հայտնի երաժիշտների հետ և զարգացրել իր երաժշտական ձիրքը։ Նա զբաղվել է նաև գեղագրությամբ ու նկարչությամբ։ Սիրել է նաև ճարտարապետությունն ու երկրաչափությունը, որն ակնհայտորեն երևում է նրա «Ուղեգրությունից»։ Էվ. Չելեբին առանձին ուշադրություն է դարձրել և կենդանի գույներով նկարագրել է ճարտարապետական զանազան կառույցներն ու պատմական հուշարձանները։ Նա ուսումնասիրել է նաև դրականությունը, ծանոթ է եղել թուրք և պարսիկ բանաստեղծների երկերին (Ֆիզուլի, Բաքի, Ռուժի, Նեջաթի և այլն)։

Սակայն այս ամենի հետ մեկտեղ Էվ. Չելեբին առանձնապես մեծ սեր և հակում է դրսևորել աշխարհագրության ու երկրագիտության բնագավառներում։ Դեռևս վաղ հասակից ձգտել է ճանապարհորդել, ծանոթանալ տարբեր երկրների ժողովուրդների լեզվին, կուլտուրային, կենցաղին ու սովորություններին։

1041 թվականին (1631), 21 տարեկան հասակում, Էվ. Չելեբին սկսում է շրջագայել Կոստանդնուպոլսում և նրա շրջակայքում։ Մոտ ինն տարի տևող այդ շրջագայությունների և ուսումնասիրությունների արդյունքը լինում է նրա «Ուղեգրության» առաջին հատորը, որը խիստ արժեքավոր նյութեր ու փաստեր է բովանդակում Կոստանդնուպոլսի մասին։

Հետագայում, փոքր ընդմիջումներով, շուրջ 41 տարի նա շարունակում է իր ուղևորությունները։ Չելեբին մերթ իբրև հոգևորական՝ իմամ կամ մյուեզզին, մերթ իբրև բարձրաստիճան անձանց ուղեկցող, զրուցակից, անձնական քարտուղար, իսկ երբեմն էլ իբրև տուրքեր հավաքողի քարտուղար, խորհրդական, բանակի իմամ կամ մյուեզզին, հիվանդապահ, սուրհանդակ, ռազմիկ և այլն, 16 անգամ ճանապարհորդել է տարբեր ուղղություններով։

Այդ պաշտոնների բերմամբ, նա թե օսմանյան և թե օտար երկրներում, գրեթե միշտ պատվով է ընդունվել։ Այս հանգամանքը, անտարակույս, հեշտացրել է նրա ուղևորությունները և հնարավորություն տվել առանց արգելքի մուտք գործել պաշտոնական հիմնարկությունները, դիտել և ուսումնասիրել տեսարժան վայրերը, պատմական հնությունները և հուշարձանները, մինչև անգամ ռազմական նշանակություն ունեցող բերդերը։ Այս առթիվ Էվ. Չելեբին նշում է. «Ես լայն հնարավորություն ունեցա ամենակա-

տարյա լ կերպով ծանոթանալ Էրզրումի կենցաղին։ Ինձ թույլատրըված էր տեսնել բոլոր օրենսդրությունները, արձանագրությունները և հիշատակարանները»։

Նա ճանապարհորդել է բազմաթիվ երկրներում՝ Փոքր Ասիա, Հայաստան, Քուրդիստան, Կովկաս, Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա, Եգիպտոս, Հաբեշստան, Բալկանյան երկրներ, Հարավային Ռուսաստան, Ղրիմ, Գերմանիա, Դանիա, Հոլանդիա և Լեհաստան։

Էվ. Չելեբին մի քանի անգամ եղել է Անատոլիայում ու Հայաստանում և անցել այդ երկրների բոլոր կարևոր քաղաքներով ու գյուղերով։ Վերջին ուղևորությունը Էվ. Չելեբին կատարել է 1089 թվականին (1678). ենթադրվում է, որ նա մահացել է այդ ուղևորությունից հետո, 1090 թվականին (1679), մոտ 70 տարեկան հասակում։

Անհրաժեշտ է նշել, որ Էվ. Չելեբին իր ստացած կրթության և շրջապատի պայմանների բերումով եղել է ջերմ հավատացյալ-մուսուլման և կրոնական ավանդությունների ու առասպելների խիստ սիրահար։ Նրա բոլոր հատորներում հիշատակված են բազմաթիվ սրբեր, սրբավայրեր, նրանց հրաշագործությունների վերաբերյալ երբեմն անհեթեթության հասնող սնոտիապաշտական նկարագրություններ։

Էվ. Չելեբին Թուրքիայի ռազմաֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներից է։ Նա դաստիարակվել, ապրել և գործել է այդ միջավայրում։

Էվ. Չելեբին մոլեռանդ մահմեդական է, հավատարիմ «նվիրական իսլամին», թշնամի «անհավատների»։ Այստեղից հասկանալի է, թե ինչու Էվ. Չելեբին չի ըմբռնել և չի կարողացել բացատրել Ռուսաստանի, Լեհաստանի, Հունգարիայի, Մոլդավիայի, Վալախիայի և Թուրքիայի ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների իսկական բնույթը տվյալ ժամանակաշրջանում։ Ֆեոդալական պետությունների միջև տեղի ունեցող պատերազմները նա սովորաբար ընկալում է իբրև ընդհարումներ ժողովուրդների միջև։ Էվ. Չելեբիի, ինչպես նաև ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչների համար, պատերազմական նվաճումները և ավարները հանդիսացել են կյանքի հիմնական նպատակ, և այդ դիրքից նրան բնական են թվում արյունալի «սխրագործությունները, բռնությունները ու ավարառումները»*:

* **Эвлия Челеби,** Книга путешествия, вып. I, Москва, 1961, стр. 10—11 *(ընդգծումը մերն է—Ա. Ս.)։*

Նա «օրինական» է համարել օսմանյան «փառապանծ իսլամական բանակի» դեպի արևելք և արևմուտք կատարած արշավանքները (akinlar), հրով ու սրով, արյունով ու կոտորածներով նվաճումները, ֆեոդալական վերնախավի և օսմանյան բանակի համար հարստանալու գլխավոր աղբյուր հանդիսացող ավարառությունները և գերեվարումները... Էվ. Չելեբիի հաղորդած տեղեկություններից երևում է, որ նա ինքն էլ հաճախ ակտիվ մասնակցել է օսմանյան բանակի նման «հաղթական» արշավանքներին և ավարառումներին...

Էվ. Չելեբիի «Ուղեգրության» առաջին տպագրության կազմակերպիչն ու խմբագիրը՝ թուրք պատմագիր Նեջիբ Ասըմը, «Իգդամ» օրաթերթի 1314 թվականի (1896) 701 համարում հետևյալ կերպ է գնահատում նրան։

«...Օսմանյան երկրներն ամբողջությամբ, Իրանն ու եվրոպական երկրների մեծ մասը ճանապարհորդող այս անխոնջ ուղևորը, իր տեսածներն ու լսածները լրիվ գրի է առել, և կազմել 10 հատորից բաղկացած իր «Ուղեգրությունը» ...Էվ. Չելեբին իսկական ուղևոր է՝ պահանջվող բոլոր հատկանիշներով, հիանալիորեն նկարագրել է անցած ու տեսած վայրերը և ըստ ամենայնի իրականացրել իր ուղևորության նպատակները։ Այս օսմանցի ճանապարհորդը, պաշտոնի բերմամբ, իր այցելած վայրերի վիճակը նկարագրել է պատկերավոր լեզվով, հավաքել է բերնից բերան անցած ավանդությունները, գրի առել հասարակական շինությունների վրա եղած արձանագրությունները և կազմել ժողովրդի բոլոր տարրերի վիճակագրությունները...»*։

Նույն «Իգդամ» թերթի 702 համարում պատասխանելով Նեջիբ Ասըմին, թուրք գրականագետ Ահմեդ Միդհատը գրում է. «...Բոլոր քաղաքակիրթ ազգությունների դարավոր գոյության ընթացքում Էվ. Չելեբիի նման անձնավորությունները շատ քիչ են... Եթե նա ապրած ու գործած լիներ այնպիսի երկրներում, ուր մեծ մարդկանց հիշատակը հավերժացնելու համար արձաններ են կանգնեցնում[1], նման մարդկանց շարքում Էվ. Չելեբին կլիներ առաջիններից... Ինչ որ գրել է նա իր գրքերում, անպայման անձամբ տեսել ու ստուգել է և կամ այդ հարցերի մասին գրված գրքերից օգտվել և գրի է առել... Նեջիբ Ասըմի ասելով «Էվ. Չելեբիին կարելի է դասել համաշխարհային հռչակ վայելող ուղևորների՝ Իբնի-Բաթութայի և Մարկո

---

* اولیا چلبی سیاحتنامه‌سی. در سعادت، ۱۳۱۴، مقدمه‌دن

Պոլսի շարքը», գուցե և գերազանցում է նրանց, քանի որ ավելի շատ երկրներում է եղել և այդ մասին գրել. նա ինչ տեսել է, ասում է՝ տեսա և ինչ լսել է՝ լսեցի, իսկ եթե օգտվում է այլ աղբյուրներից՝ այդ ևս հիշատակում է... Նա չնայած XVII դարի ուղևոր և գրող է, սակայն լեզուն վերին աստիճանի պարզ է ու հասկանալի»*։ Իր մի այլ հոդվածում շեշտելով էվ. Չելեբիի «Ուղեգրության» նաև պատմական աշխարհագրության համար ունեցած բացառիկ կարևորությունը Ահմեդ Միդհատը առաջարկում է Նեջիբ Ասըմին պատրաստել էվ. Չելեբիի ուղևորության «գլխավոր երկրների պատմական քարտեզը» (Մերձավոր արևելքի երկրների ու Արևելյան Եվրոպայի)։ Նեջիբ Ասըմը իր պատասխան հոդվածում համաձայնություն է հայտնում։

Բայց թուրք հեղինակների այդ «գեղեցիկ ցանկությունը» մրնում է միայն ցանկություն։

Հրատարակիչ Ահմեդ Ջևդեթին և խմբագիր Նեջիբ Ասըմին 1314—1318 թվականներին (1896—1900) հաջողվում է տպագրել էվ. Չելեբիի «Ուղեգրության» I—VI հատորները միայն, որից հետո նրա երկերի տպագրության գործը ընդհատվում է մինչև 1928 թվականը, երբ «Ուղեգրության» մնացած հատորների (VII—X) հրատարակությանը Ստամբուլում ձեռնարկում է «Օսմանյան պատմության էնջյումենը»[2]։

«Ուղեգրության» VII հատորի առաջաբանից պարզվում է, որ առաջին հրատարակության ձեռնարկողը ու խմբագիրը՝ Նեջիբ Ասըմը, հնարավորություն չի ունեցել օգտագործել էվ. Չելեբիի «Սեյահեթնամեի» գոյություն ունեցող բոլոր ձեռագրերը և բավականացել է միայն Փերթև փաշայի գրադարանում պահվող ձեռագրով։ Չնայած այդ թերություններին տպագրված բոլոր օրինակները կարճ ժամանակում սպառվել են. ներկայումս էվ. Չելեբիի հատորները հազվադեպություն են։ Նրա աշխատությունը արժանացել է եվրոպական մի շարք գիտնականների ուշադրությանը։ Այսպես, հայտնի արևելագետ-թուրքագետ Ֆոն-Համմերը իր բազմահատոր «Օսմանյան պատմության» համար, իբրև կարևոր աղբյուր օգտագործել է նաև էվ. Չելեբիի «Ուղեգրությունը»։ Բացի այդ Համմերը էվ. Չելեբիի մի քանի հատորներ թարգմանել է անգլերեն, իսկ VI հատորը թարգմանվել է հունգարերեն (այդ հատորը վերաբերում է էվ. Չելեբիի Հունգարիայում կատարած ուղևորությանը)։

---

* Նույն տեղում։

«Օսմանյան պատմության էնցյուկլոպեդիա» տեղեկության համաձայն էվ. Չելեբիի «Ուղեգրության» ձեռագրերից լրիվ պահպանվել են միայն հինգը։ Եվրոպական գրադարաններում եղ ձեռագրերը լրիվ չեն։ Վիեննայի գրադարանում կա միայն IV հատորը, Լոնդոնի Արքայական ասիական գրադարանում միայն I հատորը և այլն։

VII և հաջորդ հատորները հրատարակվել են բոլոր հինգ ձեռագրերի համեմատական սկզբունքով, որոշ ծանոթություններով ու լրացումներով։

էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեջ կարևոր տեղ է գրավում պատմական դեպքերի նկարագրությունը։ Նա ականատես և նույնիսկ մասնակից է եղել այդ դեպքերից շատերին։

էվ. Չելեբիի առաջին հատորում առանձնապես կարևոր են՝ 1. Կոստանդնուպոլսի բազմաթիվ շինությունների (պալատներ, մզկիթներ, բարեգործական հիմնարկներ, աղբյուրներ և այլն), հուշարձանների նկարագրությունը, 2. Սուլթան Սուլեյման Կանունիի վարչական, զինվորական օրենսդրությունները և միջոցառումները (անհրաժեշտ տվյալներով), 3. Սուլթան Մուրադ IV-ի ֆերմանով Ստամբուլում կատարված աշխարհահամարը և կազմակերպված հսկա ու հետաքրքիր շքերթը (ալայ), որին մասնակցել են քաղաքի զինվորական, վարչական, հոգևորական, առևտրական, արհեստավորական և բոլոր այլ էսնաֆները, սկսած պետության բարձր դասերից, վերջացրած ժողովրդական խավերով։ «Ուղեգրության» առաջին հատորում այդ մեծ շքերթի նկարագրությունը բռնում է 150 էջ (արաբական տառերով)[3]։

* * *

Սովետական արևելագետներից էվ. Չելեբիի ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվել են ակադեմիկոսներ Ի. Կրաչկովսկին և Վ. Բարթոլդը։

Ի. Կրաչկովսկին այսպես է բնութագրում նրան. «էվլիյա Չելեբիի տասը հատորանոց աշխատությունը, որպես հուշեր, իր դարաշրջանը բնութագրող կարևոր փաստաթղթերից է, առաջնակարգ աղբյուր այդ ժամանակի պատմության համար, միաժամանակ նույնքան կարևոր նկարագրություն, որը միակն է Արևելյան գրականության մեջ և ամեն տեսակետից կուլտուր-պատմական ուսումնա-

սիրությունների անսպառ աղբյուր է»*։ *Իսկ Վ. Բարթոլդը գրում է. «Էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը» թուրքերեն լեզվով ինքնատիպ աշխարհագրական աշխատություն է, որը, հարուստ բազմաթիվ նյութերով (աշխարհագրական, ազգագրական և լեզվագիտական), իրենից շատ է ետ թողնում արաբական դասական աշխարհագրագետների աշխատությունները, թեև մյուս կողմից, պարզ ասած, բովանդակում է բազմաթիվ մտացածին տարրեր»***։

Ի. Կրաչկովսկին նշում է նաև մի կարևոր պատմա-հնագիտական փաստ։ Էվ. Չելեբին XVII դարում հատուկ ուշադրություն է դարձրել Վերին Միջագետքի և Փոքր Ասիայի խալդական հնության վրա, մի հարց, որը մեծ դեր է խաղացել XX դարի եվրոպական գիտության մեջ և մասնավորապես մեր երկրում։ Նրան ոչ պակաս զարմացրել են ժայռային ճարտարապետության այն հուշարձանները, որոնք նոր ժամանակների համար անլուծելի հանելուկներ են թվացել։ Նրա ուշադրությունը գրավել են նաև յուրահատուկ ծագում ունեցող թունելները, կամուրջները և կամարները, որոնք հազվագյուտ չեն այդ երկրներում։

Իբրև օրինակ կարելի է նշել Վանի ժայռի (բերդի) և Բիթլիսից մինչև Վանա լիճը հասնող քարաշեն կամարների կենդանի գույներով նկարագրությունը։

Կրաչկովսկին նշելով Էվ. Չելեբիի կրոնասիրությունը, գրում է. «Իր միջավայրի և դարաշրջանի համար միանգամայն բնական է, որ Էվլիյա Չելեբին հատուկ ուշադրությամբ կանգ է առել այցելած երկրների կրոնական պաշտամունքների և սովորությունների վրա։ Գյուղերը նկարագրելիս նա միշտ նշումներ է արել, արդյոք նրանց բնակիչները մուսուլմաննե՞ր են, քրիստոնյանե՞ր, թե՞ հայեր։ Քաղաքները նկարագրելիս նա հանգամանորեն կանգ է առնում ուխտատեղիների վրա, պատմում սրբերի հրաշքների և սրբավայրերի ուժի մասին... երբեմն ոչ պակաս ուշադրություն դարձնելով նաև քրիստոնեական կրոնական սովորություններին։ Չելեբիի արժանիքը պետք է համարել այն, որ նրան հետաքրքրում են մեծ մասամբ ոչ թե վերին դասերի պաշտոնական կրոնը, որին նա շատ լավ ծանոթ

---

* И. Ю. Крачковский, Избранные сочинения. М.—Л., 1957, том IV, гл. XXI, Турецкая географическая литература XV—XIX вв., стр. 607 *(ընդգծումը մերն է—Ա. Ս.)*։

** В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России. Л., 1925, стр. 114.

է. այլ ժողովրդական լայն մասսաների կրոնական պատկերացումները»*:

Իբրև օրինակ հիշենք էջմիածնի (Ուչքիլիսե) կրոնական արարողությունները (մասնավորապես մեռոն եփելը)՝ ժողովրդական լայն մասսաների մասնակցությամբ. Մշո սուրբ Կարապետի վանքի ուխտագնացությունը, զոհաբերությունները, աղոթքները և բժշկությունները, Վանի Վարագա վանքի ու Ախթամարի նկարագրությունները և այլն և այլն։

Մի շարք հեղինակներ էվլիյա Չելեբիի և հայտնի ճանապարհորդ Իբն-Բաթութայի միջև գաղափարների և տեսակետների որոշ մերձավորություն են գտնում։

Միջնադարյան թուրք ճանապարհորդ էվ. Չելեբին իր հայրենիքում չի արժանացել այն ուշադրությանը և գնահատականին, որին նա իրավամբ արժանի է եղել։ Այդ է ապացուցում այն փաստը, որ նրա «Ուղեգրությունը» մոտ երկուսուկես դար մնացել է ձեռագիր վիճակում։ Բացի այդ, էվ. Չելեբիի տաս հատորները հրատարակվել են խայտաբղետ ու մեծ թերություններով։

Վերջերս միայն էվ. Չելեբիի «Ուղեգրությունը» Թուրքիայում որոշ չափով հետաքրքրության և ուսումնասիրության առարկա է դարձել։

Ռեշատ էքրեմ Կոչուն կրճատումներով վերահրատարակել է էվ. Չելեբիի «Ուղեգրությունը»։ Ամսագրերում և հանրագիտարաններում լույս են տեսել մի շարք ուսումնասիրություններ։ էվ. Չելեբիի «Ուղեգրության» մասին դիսերտացիաներ են գրվել ու պաշտպանվել Ստամբուլի համալսարանի գրականության ֆակուլտետում։

Այնուամենայնիվ, դեռևս անբավարար են էվ. Չելեբիի մասին թուրքերեն կատարված ուսումնասիրություններն ու հրատարակությունները։ Մինչև օրս չի հրատարակվել «Ուղեգրության» գիտական լրիվ տեքստը։ Բազմակողմանիորեն չեն ուսումնասիրված ստվարահատոր աշխատության մեջ ընդգրկված բազմաթիվ հարցերը։

էվ. Չելեբիի նկատմամբ անհամեմատ ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերվել Արևմուտքում։ Եվրոպական լեզուներով լույս են տեսել մի քանի տասնյակ մենագրություններ, հոդվածներ և գրախոսություններ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, բուլղարերեն, ռումիներեն, սերբերեն, հունգարերեն,

* Крачковский, *նշվ. աշխ., էջ 630—631 (ընդգծումը մերն է —Ա. Ս.)։*

հունարեն և այլ լեզուներով*։ Այս հարուստ գրականության մեջ էվ. Չելեբիի աշխատությունը ուսումնասիրվում է պատմագրական, աշխարհագրական, լեզվագիտական, հնագիտական և այլ տեսանկյուններից։

Անհրաժեշտ է նշել, որ Բալկանյան ժողովուրդների թուրքագետները առանձին հետաքրքրությամբ են ուսումնասիրել էվ. Չելեբիի «Ուղեգրությունը»։ Այդ բացատրվում է նրանով, որ էվ. Չելեբին ճանապարհորդել է Բալկանյան, Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրները և նրանց մասին հաղորդել է պատմական, տեղագրական և կենցաղային բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում այդ երկրների և ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։

Նկատի ունենալով, որ էվ. Չելեբիի «Ուղեգրության» հատորներում շատ հարուստ տեղեկություններ և նյութեր կան նաև ՍՍՌՄ տարբեր երկրամասերի և ժողովուրդների մասին, Ասիայի ժողովուրդների ինստիտուտը սկսել է էվ. Չելեբիից թարգմանել և հրատարակել Սովետական Միության ժողովուրդներին վերաբերող նյութերը։ Վերջերս, անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջաբանով և հավելվածով հրատարակվեցին Մոլդավիային և Ուկրաինային վերաբերող նյութերը**։ Թարգմանության խմբագիրները նշում են այդ կարևոր նախաձեռնության մասին. «էվ. Չելեբիի «Ուղեգրությունը», որը պատմության և ազգագրության վերաբերյալ բովանդակալից հարցեր է ընդգրկում, կարելի է համարել ամենից ավելի արժեքավոր օտար աղբյուրը ՍՍՌՄ ժողովուրդների անցյալը ուսումնասիրելու համար։ էվ. Չելեբիի հաղորդած անթիվ և բազմազան փաստական նյութերը այդ աշխատությունը վեր են ածում բացառիկ կարևոր աղբյուրի՝ նրա տեսած և նկարագրած երկրների ուսումնասիրության համար»***։

* * *

էվ. Չելեբիի «Ուղեգրությունը» կարևոր աղբյուր է նաև Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների միջնադարյան

---

* Տե՛ս **Эвлия Челеби**, Книга путешествия, вып. I, М., 1961, Библиография на европейских языках, стр. 326—330.

** **Эвлия Челеби**, Книга путешествия, отв. редактор А. С. Тверитинова, вып. I. Земли Молдавии и Украины. М., 1961.

*** **Эвлия Челеби**, Книга путешествия, стр. 9—11.

պատմության, սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային պայմանների բազմակողմանի ուսումնասիրության համար։

Պետք է նշել, որ Էվլիյա Չելեբիի Հայաստանի մասին հաղորդած նյութերի մի մասր հայերեն թարգմանվել են դեռևս անցյալ դարի կեսերին՝ հայագետ Յ. Քյուրդյանի կողմից։ Գիրքր հրատարակվել է այսպիսի վերնագրով. «Ուղեգրութիւն Էվլիյա էֆենդիի, թարգմանած անգլերեն հրատարակութենեն, լույս տեսած Լոնդոն 1850 թ., թարգմանեց և ծանոթագրեց՝ Յ. Քյուրդեան»*։

Արդեն ասվել է, որ Չելեբիի «Ուղեգրությունը» թուրքերեն լեզվով (միայն I—VI հատորները) առաջին անգամ լույս է տեսել անցյալ դարի վերջերին, Ստամբուլում։ Դրանից մոտ 50 տարի առաջ, Լոնդոնում լույս է տեսել էվ. Չելեբիի հատորների մի մասի անգլերեն թարգմանությունը։ Քյուրդյանի գրքույկում չի ասված, թե ով է անգլերենի թարգմանիչը։ Սակայն հայտնի է, որ «Օսմանյան կայսրության պատմության» բազմահատորյակի (18 հատոր) հեղինակը՝ Ֆոն-Համմերը իր կապիտալ աշխատությունը գերմաներենից թարգմանել է ֆրանսերեն, մասամբ նաև անգլերեն։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Քյուրդյանը իր գրքույկը կազմել է Ֆոն-Համմերի էվ. Չելեբիի անգլերեն թարգմանությունից։

Քյուրդյանի այն հավաստիացումը, որ նա տալիս է «Հայաստանի մասր ամբողջությամբ», թյուրիմացություն է, քանի որ նա էվ. Չելեբիի «Ուղեգրությունից» թարգմանել է միայն երկրորդ հատորի նյութերը, որոնք վերաբերում են, ինչպես նշում է Քյուրդյանը, «Էրզրումի նահանգապետությանը», նրա սանջաքներին, Երևանին, Կարսին, Երզնկային, Շաբին-Կարահիսարին և այլն։ էվ. Չելեբին իր մյուս III, IV և V հատորներում ևս բավականաչափ տեղեկություններ է հայտնում Հայաստանի և հայերի մասին, որոնք այն ժամանակ անգլերեն թարգմանված չեն եղել և հավանաբար այդ պատճառով էլ Քյուրդյանը անտեղյակ է եղել դրանցից։ Հիշյալ նյութերը վերաբերում են կենտրոնական և արևմտյան Անատոլիային, Կիլիկիային, Սիրիայի և Պաղեստինի հայաբնակ շրջաններին։

Ինչպես իրավամբ նշում է Քյուրդյանը, էվ. Չելեբիի անգլերեն թարգմանությունը կատարվել է այն ժամանակ, երբ Թուրքիայում դեռևս չէին տպագրվել նրա «Ուղեգրությունները»։ Հետևաբար, հավանական է, որ անգլերեն թարգմանությունը կատարվել է Լոնդոնի Արքայական գրադարանում պահպանված էվ. Չելեբիի ձեռագիր օրինակից։

---

* Գրքույկի վրա չկա հրատարակության վայրն ու թվականը։

Քյուրդյանը ծանոթագրելով Էվ. Չելեբիի տեքստը, միաժամանակ քննադատում է այնտեղ տեղ գտած մի շարք պատմական դեպքերի, քաղաքների հիմնադրման ու կառուցման հարցերում առկա անճշտությունները։ «Թուրքական աղբյուրների...» ինչպես նախորդ, այնպես էլ սույն հատորում բացարձակ անճշտությունների դեպքում, ծանոթագրությունների բաժնում երբեմն անդրադառնում ենք դրանց, սակայն ընդհանրապես մեր առջև այդ խնդիրը չի դրվել. հրատարակված նյութերում ինչ խոսք, որ զգալի անճշտություններ կան, որոնց գիտական քննությունը թողնում ենք պատմաբաններին։

Էվ. Չելեբին ճանապարհորդելիս իր տեսածները և ուսումնասիրությունները գրի է առել օրագրության ձևով։ Ահա նրա Հայաստանում և Անդրկովկասում կատարած ուղևորությունների կարևոր երթուղիները։

1050 թվականին (1640) նա Անատոլիայից ուղևորվում է Էրզրում, այնտեղից անցնում Թավրիզ, հետո Երևան, Բաքու, Շամախի, որտեղից գնում է Վրաստան։ Այստեղից նա Ախալցխայով նորից վերադառնում է Էրզրում և ապա Ստամբուլ։

1058 թվականին (1648) Էվ. Չելեբին արևմտյան և կենտրոնական Անատոլիայի վրայով գնում է Պաղեստին (Սուրբ երկիր), հետո Դամասկոսից ուղևորվում է Սվազ, Հալեպ, Ուրֆա, Մարաշ, Կեսարիա։

1065 թվականին (1654) նա Սկյուդարից ուղղություն է վերցնում դեպի Վան, այսինքն կտրում անցնում ամբողջ Անատոլիան, հատկապես կանգ առնելով Վան քաղաքում, նրա բերդի, Վանա լճի շրջակայքում, հետո Վանից մեկնում է Պարսկաստան։

1066 թվականին (1655) Էվ. Չելեբին ճամփորդում է Քուրդիստանում, որտեղից նորից անցնում է Վան, այստեղից Բիթլիս և Արճեշի ու Ադիլջևազի (Արծկե) ուղղությամբ՝ Էրզրում։

Այսպիսով Էվ. Չելեբին տարբեր երթուղիներով ճանապարհորդել է Հայաստանում, Անդրկովկասյան երկրներում, իրանական Ադրբեջանում և Կիլիկիայում։ Այդ հսկայական տարածության վրա նա կանգ է առել բոլոր կարևոր քաղաքներում (Երևան, Թիֆլիս, Գյանջա, Բաքու, Թավրիզ, Էրզրում, Երզնկա, Սվազ, Կեսարիա, Ամասիա, Թոքաթ, Մարաշ, Ադանա և այլն)։ Նա չի բավականացել միայն մեծ քաղաքներն այցելելով, կանգ է առել նաև իր ճանապարհին գտնվող բազմաթիվ փոքր քաղաքներում, գավառական կենտրոններում, հաճախ գյուղերում։

* * *

Առանց նսեմացնելու Էվ. Չելեբիի, իբրև աշխարհահռչակ ուղեգրի, կարևորությունը, որի մասին, ինչպես վերևում նշվեց, այնքան հիացմունքով են խոսում թուրք, օտար և սովետական հեղինակները, անհրաժեշտ ենք համարում մի քանի վերապահումներ անել Հայաստանի պատմության, հայ և հարևան ժողովուրդների կուլտուրայի, կենցաղի և սովորությունների նկատմամբ նրա ունեցած մոտեցման և վերաբերմունքի հարցերում։

Ամենից առաջ պետք է շեշտել, որ Էվ. Չելեբիի «Ուղեգրությունում» կարմիր թելի նման անցնում է իսլամական ֆանատիզմը։ Հաճախ նա սնոտիապաշտ է, երազների, գուշակությունների հավատացող։ Անատոլիայի և Հայաստանի ժողովուրդների կենցաղն ու սովորությունները նկարագրելիս, լեզուն ու կուլտուրան ուսումնասիրելիս, կարծես դիտավորյալ մոռացության է տալիս ոչ-մուսուլմաններին՝ հայերին, վրացիներին և այլն։ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ քաղաքները, նրանց ծագումն ու պատմությունը, կենցաղն ու սովորությունները նկարագրելիս, հաճախ կամ ոչինչ չի ասում հայերի, հայ կուլտուրայի մասին և կամ շատ սահմանափակ տեղեկություններ է հաղորդում։ Նշենք մի քանի օրինակ. Չելեբին շատ քիչ է խոսում Ստամբուլում և Անատոլիայի կարևոր քաղաքներում բնակվող հայ արհեստավորության և առևտրականների, հայերի թվի, զբաղմունքների, ապրուստի պայմանների և կուլտուրայի մասին։ Թեև հիշատակում է, օրինակ, Էջմիածնի, Ախթամարի, Վարագի, Մշո սուրբ Կարապետի վանքերը, սակայն հարևանցի ու անբավարար։ Մի շարք կարևոր հայկական քաղաքների վերաբերյալ հաղորդումներից այն տպավորությունն է ստացվում, որ կարծես այդ քաղաքներում հայեր չեն ապրում (օրինակ Վան, Էրզրում, Դիարբեքիր, Սեբաստիա և այլն)։ Էվ. Չելեբին որոշ ազգությունների և ժողովուրդների ծագման հարցը, լեզվական ստուգաբանությունները փորձում է տալ՝ ելնելով իսլամական ավանդություններից։ Պարզ հայկական ծագում և արտասանություն ունեցող հատուկ անունները ու բառերը ուղղակի աղավաղում է և փորձում է բացատրել և «ստուգաբանել» իսլամական կամ թուրքական ոգով։

Այս և նման հանդամանքները, անտարակույս, որոշ չափով իջեցնում են Էվ. Չելեբիի աշխատության նշանակությունը Հայաստանի, հայ ժողովրդի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմությունը ուսումնասիրելու գործում։ Պետք է նկատի ունենալ, որ

այդ հատուկ է ոչ միայն Էվ. Չելեբիին, այլ նաև այդ դարերի շատ ու շատ պատմագիրների և ուղեգիրների առհասարակ։ Չնայած այս թերություններին, Էվ. Չելեբիի «Ուղեգրությունից» մենք կարող ենք շատ արժեքավոր տեղեկություններ և նյութեր քաղել Հայաստանի և Անդրկովկասյան մյուս երկրների մասին։

* * *

Ներկա աշխատությունը կազմված է ժամանակագրական կարգով՝ Էվ. Չելեբիի կատարած ճանապարհորդությունների տարեթվերին համապատասխան։ Այդ պատճառով անհնարին դարձավ աշխարհագրական կապի պահպանումը։

Էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեզ հետաքրքրող նյութերը թարգմանվել են քաղվածաբար։ Հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմության տեսակետից անհետաքրքիր և անկարևոր մասերը կրճատվել են կամ տրվել է նրանց համառոտ բովանդակությունը։ Նման վերարտադրումները, հեղինակային բնագրերից անջատելու նպատակով, շարվել են ավելի փոքր շրիֆտով (պետիտ), տեքստը ավելի հասկանալի դարձնելու նպատակով անկյունային փակագծերի մեջ են առնվել ավելացված բառերն ու նախադասությունները։

Հեղինակի տված իսլամական (հիջրեթի) տարեթվերի կողքին կամ տողատակին գրեթե միշտ տրված է համապատասխան եվրոպական տարեթվերը։*

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

** Հիջրեթի տարեթվերը եվրոպականի վերածելու լրիվ աղյուսակը (հիջրեթի 1—1360 թթ.) տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության առաջին հատորում, Երևան, 1961, էջ 339—348։*

ԷՎԼԻՅԱ ՉԵԼԵԲԻԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

(1041—1050 թթ.=1631—1640 թթ.)

ՍՏԱՄԲՈՒԼԸ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԸ

Էվ. Չելեբին իր «Ուղեգրության» I հատորն ամբողջությամբ նվիրել է Ստամբուլին[1]։ Հեղինակը տարիներ շարունակ շրջագայել է Ստամբուլում, դիտել և ուսումնասիրել է բազմաթիվ պատմական և օսմանցիների ժամանակաշրջանի հնությունները, շենքերը, պալատները, ջամիներն ու այլ տեսարժան վայրեր։ Այդ պատմական մեծ քաղաքի հիմնադրման և զարգացման վերաբերյալ նա հարուստ պատմական ու ավանդական նյութեր է հավաքել, ուսումնասիրել և գրի առել։

*Էվ. Չելեբին սկզբում կանգ է առնում Ստամբուլի հիմնադրմանը վերաբերող մի շարք ավանդությունների վրա, հիշատակում նրա հիմնադիրներին, պարիսպները կառուցողներին։ Այնուհետև նշում է Ստամբուլի անունները[2] տարբեր լեզուներով։ Էվ. Չելեբին գրում է, որ Ստամբուլը ամենից ավելի բարեշինվել է Կոստանդին կայսրի օրոք։ «Կոստանդինին Ջատկի մի օր ներկայացված դեֆթերի համաձայն, նրա ազգաբնակչությունը քառասուն անգամ հարյուր հազար է եղել» (*)։ Խոսելով Կոստանդինի ժամանակաշրջանի քաղաքի շինարարության և ամրությունների մասին, Էվ. Չելեբին գրում է, որ «Բերդից դուրս մինչև Սիլիվրի և Սև ծովի եզերքը՝ մինչև Թերկոսի բերդը, իրար էին միանում 1200 գյուղեր ու գյուղաքաղաքներ իրենց այգիներով ու պարտեզներով...»**։*

Էվ. Չելեբին շրջագայելով ամբողջ քաղաքում, չափել և հաշվել է նրա տարբեր մասերի, բերդերի, պարիսպների երկարությունը և բարձրությունը քայլաչափով (աղըմ)։ Նա մանրամասնորեն խոսում է քաղաքի ներսի և դրսի բազմաթիվ հանքերի, հանքային ջրերի և այլ բնական հարստությունների ու նրանց ունեցած նշանակության մասին։

Պատմական իրադարձություններից Էվ. Չելեբին հիշատակում է սուլթան Մուհամմեդ Ֆաթիհից առաջ Ստամբուլի տասը պաշարումները՝ սկսած հիջրեթի 43

---

* اوليا چلبى سياحتنامه‌سى. برنجى جلد، ص ٥٥

** *Նույն տեղում, էջ 59։*

թվականից։ Այնուհետև մանրամասնորեն կանգ է առնում Ստամբուլն օսմանցիների կողմից գրավմանը նախորդող և հաջորդող դեպքերի վրա։

Էվ. Չելեբին բավականաչափ տեղ է հատկացնում սուլթան Մուհամմեդ Ֆաթիհի և սուլթան Սուլեյման Կանունիի գործունեության նկարագրությանը։

Այստեղ քաղվածաբար տրվում են սուլթան Սուլեյման Կանունիի հաստատած վարչական, տնտեսական, զինվորական և այլ կանոնների (օրենքների) այն մասերը, որոնք որոշ չափով կապված են նաև Հայաստանի և անդրկովկասյան մյուս երկրների հետ։

ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ՀԱՍՏԱՏԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

...Թեև սուլթան Մուհամմեդ Ֆաթիհր նվաճեց Կոստանդինիյեն (Ստամբուլը), սակայն սուլթան Սուլեյման խանը բարեշինեց (Ստամբուլը) և հատուկ կանոններով (օրենք) Ռումելիում և Անատոլիայում սահմանեց վեզիրությունների, միրմիրանությունների, միրլիվայությունների քանակը։ Ինչպես նաև որոշեց ամեն մի էյալեթում և լիվայում կայսերական, վեզիրական, միրմիրանական և միրլիվայական խասերի քանակը։ [Սուլեյմանի կանոններով որոշվեց նաև] ամեն մի էյալեթում ազատ զեամեթների և ամեն մի սանջաքում թիմարների և զեամեթների թիվը։ Նույն օրենքներով որոշված է նաև ջեբելուների [քանակը], քանի անգամ հազար զինվորների թիվը[3]*։*

...Ռումելիի 20 էյալեթում Սուլեյման խանի կանոններով, ընդամենը կային՝

176 սանջաք.
3306 զեամեթ.
37.389 թիմար.
40.695 զեամեթ և թիմար (միասին).
30.399 արտոնյալ խասեր։

ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ԷՅԱԼԵԹՆԵՐԸ, ՍԱՆՋԱՔՆԵՐԸ, ԶԵԱՄԵԹՆԵՐԸ, ԹԻՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՄՅՈՒՍԵԼԼԻՄՆԵՐԸ

	Սանջաք	զեամեթ	թիմար
Անատոլիայի էյալեթը	13	299	5589
Կարամանի »	7	68	2211
Իզմիրի »	3	108	3699
Մարաշի »	4	29	215
Շամի Շերիֆի (Դամասկոս)	7	128	1865

Թարաբլուսի Շամի էյալեթը	6	63	215
Ջեդիդե Սեյդայի »	4	94	985
Հալեպի »	5	99	833
Ադանայի »	8	43	1559
Ռեհայի[4] »	4 (սանջաք և զեամեթ)		6026
Դիարբեքիրի »	12	926	1926
Էրզրումի »	9	132	5159
Տրապիզոնի (Թերբերի-էֆզուն)	2	56	398
Գյուրջիստանի (Վրաստանի)	չկա	—	—
Կարսի »	6	1	1263
Չըլդըրի »	13	159	689
Վանի »	24	46	2695
Մուսուլի »	3	66	1004
Շեհրի Զորի »	31	85	806
Բաղդադի »	Թիմար և զեամեթ չունի, տարեկան իլթիզամով[5] է տրվում:		
Բասրայի »	սալյանեով[6] է կառավարվում:		
Մըսըրի (Եգիպտոս) »	Թիմար և զեամեթ չունի. իլթիզամով է կառավարվում:		
Դեհլիզի-Ջեզջեյի էյալեթը	Վերին Եգիպտոսի էյալեթն է:		
Թարաբլուսի »	սալյանեյով է կառավարվում:		
Թունիսի »	տարեկան իլթիզամով է տրվում:		
Ջեզայիրի (Ալժիր) »	տարեկան իլթիզամով է տրվում:		

Վերոհիշյալ օրենքով և սովորություններով կառավարվող էյալեթներում ընդամենը կային 151 սանջաք, 1571 զեամեթ և 41286 թիմար:

...Ամբողջ Փադիշահական երկրի եկամուտը երեք մասերից է կազմված. առաջին—փադիշահական խասերի մասը, երկրորդ—վեզիրների, միրմիրանների և էմիրների (ումերա) խասերի մասը, երրորդ—զեամեթ և թիմարների մասը:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԵՅԼԵՐԲԵՅԻՆ ՈՐՔԱՆ ԽԱՍԵՐ ՈՒՆԻ

Ռումելիի միրմիրանների խասերի ընդհանուր գումարը 11 անգամ 100 հազար ակչե* է: Անատոլիայինը՝ 10 անգամ 100 հազար[7] ակչե

Կարամանի խասերը	660071		»
Շամի »	10	անգամ	100 հազար »
Սվազի »	9	»	100 հազար »
Էրզրումի »	12	»	100 հազար և 14600 »

* Ակչե—փոքր արծաթյա դրամ, այդ դարում Թուրքիայում գործածական դրամական միավորը, որ հավասար էր ղուրուշի $^1/_{120}$ մասին, իսկ ղուրուշը լիրայի (ոսկի) $^1/_{100}$ մասին:

Դիարբեքիրի խասերը . . . . 12 անգամ 100 հազար և 660 ակչե
Վանի » . . . . 11 » 100 հազար և 32200 »
Բուղինի » . . . . 8 » 100 հազար և 80000 »
Ջեզայիրի » . . . . 885000 »
Հալեպի » . . . . 817760 »
Մարաշի » . . . . 628480 »
Բոսնայի » . . . . 650000 »
Թեմեշիվարի » . . . . 806790 »
Կարսի » . . . . 820770 »
Չըլդըրի » . . . . 925000 »
Տրապիզոնի » . . . . 794850 »
Ռակայի » . . . . 681056 »
Մուսուլի » . . . . 682000 »
Շեհրի Զորի » . . . . 11 անգամ 100 հազար »
Թարաբլուսի Շամի . . . . 786000 »
Լոզիի » . . . . 988000 »
Ղրիմի (սուլթանի) խասերը 12 անգամ 100 հազար ակչե է ստացվում Քեֆե[8] նավահանգստի մաքսատնից:
Քեֆեյի փաշայի խասերը . . . . 679000 ակչե
Եյրիի » . . . . 800080 »
Կանժայի » . . . . 746000 »
Մորայի » . . . . 656000 »
Բաղդադի » . . . . 12 անգամ 100 հազար »
Բասրայի » . . . . 10 անգամ 100 հազար »
(վեզիրություն լինելուց հետո)
Էլ Հասեի խասերը . . . . 888000 »
(վեզիրություն չէ, բայց կառավարություն է)
Նվիրական Մեքքայի խասերը—Եգիպտոսի շերիֆի սուրբերից[9] է ստանում
Հաբեշի խասերը . . . . 10 անգամ 100 հազար 80 ակչե է
Եգիպտոսի վեզիրների խասերը . . . . 487 եգիպտական քիսե,*
Թարաբլուսի, Թունիսի, Ջեզայիրի, վեզիր կափուտան փաշայի խասերը 12 անգամ 100 հազար 700 ակչե է...

(էջ 173—178)

ԷՅԱԼԵԹՆԵՐԻ ՍԱՆՋԱՔՆԵՐԸ**

...Սվազի էյալեթը *կազմված է 7 սանջաքից, ունի դեֆթեր քեթխուդասի[10], դեֆթեր էմինի[11] և թիմարի դեֆթերդար[12], չավուշների*

* *Քիսե (քսակ)—դրամապարկ, քսակ, որը բովանդակում էր 500 ղուրուշ:*
** *Տրվում են թեմայի հետ առնչվող էյալեթները:*

քեթխուդա և էմին[13], ալայի բեյ[14], չերիբաշիներ[15]։ Սվազ քաղաքը փաշայի սանջաքն է։ Սանջաքներն են՝ Դիվրիկի, Չորում, Քեսկին, Բոզավոր, Ամասիա, Թոքաթ, Ջիլե, Ջանիկ, Արաբկիր։ Հետո Ջիլեն դարձել է Վալիդե խասի[16]։

Ադանայի էյալեթը դիվանի ոչ մի ծառայող չունի, որովհետև Հալեպից բաժանվելով էյալեթ է դարձել։ Սանջաքներն են՝ Սիս, Թարսուս, Կարադաշ, Սելեֆկե։ Ունի բոյբեյիներ[17]։ Ապստամբները (ավազակները) շատ են, որովհետև էյալեթը քարքարոտ է։

Դիարբեքիրի էյալեթը կազմված է 19 սանջաքից, կա նաև հինգ հյուքումեթ։ Այս սանջաքներից 11-ը, իբրև օսմանյան կալված, կառավարվում են օսմանյան երկրի այլ մասերի նման։ 8-ը քրդական բեյերի տիրապետության ներքո են գտնվում, որովհետև (սուլթանը) Սելիմ խանը [այդ երկրները] նվաճելու ժամանակ նրանց (քուրդ բեյերին) յուրթլուք և օջաքլըք[18] է շնորհել։ Նշանակումն ու հրաժարականը թողնված է իրենց կամքին։ [Բեյերի] մահանալու դեպքում, էյալեթի վալիի հրամանով սանջաքները նրանց որդիներին են տրըվում։ Մյուս սանջաքների նման, սրանց տներն ու բերքերը նույնպես գրանցվում են դեֆթերում և նրանց հողերի վրա թիմար ու զեամեթներ կան։ Երբ փադիշահական արշավանք (պատերազմ) է տեղի ունենում, ալայի բեյերի դրոշակի տակ ծառայություն կատարող թիմարի տերերի զեամեթները և սանջաքները, այլոց նման, տղային կամ ազգականին են տրվում։ Սակայն Սելիմ խանի օրենքների համաձայն կառավարության (հյուքումեթ) արձանագրված սանջաքներում թիմար ու զեամեթներ չկան։ Իշխողները կառավարում են իբրև իրենց սեփականություն, տներն ու բերքերը նրանց է պատկանում։ Օսմանյան սանջաքները հետևալներն են՝ Խարփութ (Խարբերդ), Արղնի, Սևրեկ, Նիսիբին, Հիսնի-Քիֆ, Միղարկին (Միֆարկին), Ակչե Կալա, Խաբուր, Սենջար։ Յուրթլուքի և օջաքլըքի կարգով կառավարվող սանջաքներն են՝ Սեղման, Կուլբ, Մեհրանիե, Թերջիլ, Աթաք, Փերթեք, Չապաքչուր (Ճաբաքչուր), Ջերմիկ։ Կառավարությունները հետևյալներն են՝ Էլ-Ջեզիրեի, Էկինի (Էկիլ), Գենջի, Փալույի, Խրույի։

Քուրդիստանի այս սանջաքները մեծ էյալեթների չափ ընդարձակ են։ Դիարբեքիրի դիվանը նմանապես ունի ռուզնամեջի[19], մալդեֆթերդարի[20], թիմար դեֆթերդարի, դեֆթեր էմինի, չավուշների քեթխուդա, էմին և քարտուղար, ալայի բեյ և չերիբաշիներ։

Կարսի էյալեթի սանջաքների թիվը վերը հիշված է, նվաճվելու ժամանակ ենթարկվում էր Էրզրումին։ Հետագայում, երբ նրան կըց-

վեցին Բասենի սանջաքները՝ էյալեթի վերածվեց։ Դիվանը ծառայողներից չունի մալդեֆթերդարի։ Սակայն ալայի բեյ, չերիբաշի ունի։ Սանջաքներն են՝ Փոքր Արդահան, Հոջոջան, Զարուշատ, Կեջվան, Կաղզվան։ Կարսը փաշայի սանջաքն է։

Չըլդըրի, *այսինքն Ախըշկայի (Ախալցխայի) էյալեթը ծառայողներից մալդեֆթերդարի և դիվանի այլ ծառայողներ չունի, սակայն ալայի բեյ և չերիբաշի ունի։ Կազմված է 13 սանջաքից՝ Օլթի, Խերթվիս, Արդանուշ, Հաջրեք, Արդահանի Բյուլյուքը, Փոսխով, Մախջիլ, Աջարա, Փենեք։ Բացի այդ, 4 սանջաքը յուրթլուքի, օջաքլըքի և սեփականության կարգով են կառավարվում։ Դրանք են՝ Փերթքերք, Լիվանե, Նըսֆի Լիվանե և Շեշատ։ Սակայն սուլթան Մուհամմեդ IV-ի ժամանակ Կարա Մուրթեզա փաշան նվաճելով Քութայիսի բերդը՝ կցեց սանջաքներին։ Թեմեր Սերխանի որդիները իրենց հպատակությունը հայտնեցին և սանջաքի վերածվեց։*

Գյուրջիստանի էյալեթը։ *Աչըքբաշիի, Շեշատի, Դադիանիի, Գորիլի, Մեգրելիստանի բոլոր բեյերը քաֆիրներ են։ Սակայն Մուրադ IV-ի ժամանակ բոլորը հպատակվել են և Սեֆեր փաշան՝ վեզիրության կարգով, իշխել և Ախալցխայի բերդը դարձրել է կենտրոն։ Մինչև հիմա էլ ամեն տարի նվերներ են ստացվում։*

Տրապիզոնի էյալեթը *(Թերեբ-էֆզունի, Թերեբ-էֆսունի)։ Սա էլ Ռումի երկրի սանջաքներից է։ Գյումուշխանե, Մախչա (Մաչկա), Ռիզե և Գյունիայի չորս սանջաքները միանալով կազմում են Տրապիզոնի էյալեթը։*

Վանի[21] էյալեթը *ունի 15 սանջաք, դեֆթեր էմինի, չավուշների քեթխուդա, էմին և քյաթիբ, ալայի բեյ, չերիբաշի, թիմարի դեֆթերդար։ Սանջաքներն են՝ Ադիլջևազ, Արջիշ, Մուշ, Բարկիրի (Բերկրի), Կարկար, Քեսանի, Զիրիկի, Սղերտ, Խանի, Աղաքիսի, Էքրատ, Բենի Կոթուր, Բայազիդի բերդը, Բերդա, Ախլաթ։ Այս էյալեթին հպատակ են Ալ-Աբբասյաններից՝ Բիթլիսի խանը, Հեքարիի իշխողը, Մահմուդիի իշխողը և Փինյանիշի իշխողը։ Էյալեթում թիմար և զեամեթ չկա։ Սրանց տուրքերը (խարաջ) ամբողջապես Վանի կուլի (զորաբանակի) հետ է կապված։ Տները և բերքերը իբրև սեփականություն իրենց է պատկանում։ Երբ իշխողը մեռնում է, իշխանությունը անցնում է որդիներին կամ ազգականներին։*

Էրզրումի էյալեթը *18 սանջաքից է կազմված[22]։ Ունի խազինեի դեֆթերդար, դեֆթերի էմին, դեֆթերի քեթխուդա, չավուշների քեթ-*

խուղա, էմին և քյաթիբ։ Սանջաքներն են՝ Կարահիսար-ի Շարքի, Բասեն, Իսպիր, Խնուս, Մալազկերտ, Կուղիջան, Թորթում, Մժըն-կերտ, Մամրվան։ Էրզրումը փաշայի սանջաքն է։

ՍՈՒԼԵՅՄԱՆ ԽԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՕՐԵՆՔՆԵՐԸ) ՍԱՆՋԱՔԻ ԲԵՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավելի խաս ունեցող սանջաքի բեյը իր ստորադասից բարձր է համարվում։ Իսկ եթե մեծ վեզիրությունից հրաժարվի՝ ոչ ոք նրա վրա գերիշխող չի լինի, որովհետև մեծ վեզիրը բացառիկ պաշտոն ունի և գերիշխում է բոլորի վրա։ Մի սանջաքի բեյին, ըստ օրենքի նախապես 200 հազար ակչեի բեյություն է տրվում։ Այնուհետև, եթե նվիրական պատերազմներում նա փադիշահին ծառայություններ մատուցի, [այդ գումարը] ավելանում է ըստ իր արժանիքի՝ հազարին հարյուր ակչե ավելի կտրվի։ Ծառայությունը որքան արժեքավոր լինի, այնքան մեծ կլինի թերաքքին (առաջադիմությունը, ավելացումը), ի վերջո միրմիրան կդառնա։ Իսկ եթե փադիշահական ապարանքի աղաները սանջաքներ գնեն, սկզբից ոչ թե 200 հազար ակչե, այլ ավելի կտրվի։ Յուրաքանչյուրի համար օրենքը տարբեր է։ Օրինակ՝ ենիչերիի աղային[23] 500 հազար ակչե է։ Նիշանջի բաշին[24], կափուջի բաշին[25], մեծ միրախորը[26] 400 հազար ակչե կստանան։ Ջաշնիգիր բաշին[27], մյութեֆերրիքա բաշին[28], չաքըրջի բաշին[29], փոքր միրախորը, սիլահդար աղան[30], աջ ուլուֆեջին[31], ձախ ղուրեբա աղաները[32], բոլորը 300 հազար ակչեատեր սանջաքի բեյեր են համարվում։ Սեքբան բաշին[33], դեֆթեր քեթխուդասին, թիմարի դեֆթերդարը և յայաբեյերը[34], եթե 50 հազարից ավելի զեամեթներ ունեն, ստանում են 100 հազար ակչեի սանջաքներ։ Օրենքով, երբ մի սանջաք ազատ է մնում, թերաքքիով տրվում է արժանի համարված բեյին։ Ենիչերիությունից և զորագնդից դուրս եկած բեյերին՝ սանջաքի բեյ լինելու դեպքում, խասեր են տրվում ազատ մնացած թիմարներից։ Փադիշահական պատերազմի ժամանակ, սանջաքի բեյերը, իրենց տիրապետության տակ գտնվող սանջաքի զինվորների թվի համաձայն, ըստ խասի յուրաքանչյուր 5000 ակչեին մի կանոնավոր ջեբելու[35] են տալու։ Իսկ եթե 200 հազար ակչեի սանջաքի տեր լինի, ցածր աստիճանավորները 140 ջեբելու զինվորով պատերազմի կգնան, իսկ եթե 500 հազար ակչեի սանջաքի տեր լինի՝ 100 ջեբելու կտա։ Նորից ամեն մի 5000-ին (ակչե) մեկ։ Փաշան, միրլիվան և զեամեթի ու թիմարների տերերը մեկական ջեբելու տալով են մասնակցում պատերազմին։

ԱՄԵՆ ՄԻ ՍԱՆՋԱՔԻ ԲԵՅԻ, ԴԵՖԹԵՐԻ ՔԵԹԽՈՒԴԱՅԻ, ԹԻՄԱՐԻ ԴԵՖԹԵՐԴԱՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԽԱՍԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ.

Զյուլկադերիյե, այսինքն՝ Մարաշի էյալեթում

Մալաթիայի խասերը		500.000
Այնթաբի	»	145.130
Կարսի Մարաշի (Զյուլկադրիյե)	»	205.300
Սեմսեմատի	»	200.000
Մարաշի դեֆթերի քեթխուդայի	»	870.073
Մարաշի թիմարի դեֆթերդարի	»	20.300

Սվազի (Ռում) էյալեթում

Ամասիայի միրլիվայի խասերը			300.000
Չորումի	»	»	300.000
Բոզոքի	»	»	212.750
Դիվրիկի	»	»	250.360
Ջանիկի	»	»	207.224
Արաբկիրի	»	»	210.000
Սվազի դեֆթերի քեթխուդայի զեամեթները			80.200
Սվազի դեֆթերդարների	»		82.550

Էրզրումի էյալեթի էմիրների խասերը

Կարահիսար-ի Շարքիի խասերը		12.000
Քղիի	»	20.000
Բասենի	»	29.400
Իսպիրի	»	300.000
Խնուսի	»	588.440
Մալազկերտի	»	500.000
Թերջանի	»	164.229
Կուզիչանի	»	200.702
Թորթումի	»	237.000
Մժնկերտի	»	240.000
Սամերվանի	»	203.000
Էրզրումի խազինեի դեֆթերդարի		142.900
Էրզրումի դեֆթերդարի քեթխուդայի զեամեթները		150.000
Էրզրումի թիմարի դեֆթերդարի		202.000

Կարսի էյալեթի խասերը

Փոքր Արդահանի խասերը		29.030
Հոչոչանի	»	153.500

Զարուշատի	»	240.000
Կաղզվանի	»	200.000
Կեչվանի	»	200.000

Չըլդըրի, այսինքն Ախալցխայի էյալեթում

Օլթիի միրլիվայի խասերը		200.017
Փերթքերքի	»	1.462.190
Արդնինիչի (Արդանուշի) խասերը		280.000
Մեծ Արդահանի խասերը		300.000
Շևշատի (օջաքլըքի կարգով) խասերը		656.000
Լիվանեյի (օջաքլըք, երկու սանջաքում) խասերը		365.000
Խերփութի խասերը		200.500
Սեմրեքի	»	265.000
Փոսխովի	»	206.500
Մախջիլի	»	203.229
Փեների	»	400.000

Տրապիզոնի էյալեթում

Բաթումի դեֆթերի քեթխուդայի զեամեթը		300.000
Բաթումի թիմարների դեֆթերդարի	»	40.290

Դիարբեքիրի էյալեթում

Խարփութի (Խարբերդի) լիվայի խասերը			219.999
Էրղանիի	»	»	200.519
Սիվերեկի	»	»	303.043
Աթակի	»	»	147.200
Նիսիբինի	»	»	200.000
Թերջիլի	»	»	445.200
Ջերմիկի	»	»	22.140
Հիսնի-Քիֆի	»	»	103.955
Էկինի (էկիլի, օջաքլըքի կարգով)		»	89.675
Չեբաքչուրի (Ճաբաքչուրի)		»	370.000
Չմշկեզեք (Չմշկածագ)	»	»	334.223
Սեֆաթի	»	»	26.905
Սղերտի	»	»	223.272
Ակչա Կալայի	»	»	200.000
Միաֆարկինի	»	»	200.000
Լիսան և Փոզրանի լիվաների խասերը			100.000
Կալերի (օջաքլըքի կարգով)	»	»	66.668
Խանչաքի	»	»	427.900
Փերթեկի	»	»	28.000
Խաքիչի	»	»	278.340
Ամիտի խազինեյի դեֆթերդարի խասերը			140.395
Դիարբեքիրի դեֆթերի քեթխուդայի զեամեթը			100.924
Թիմարի դեֆթերդարի		»	80.000

Վանի էյալեթում

Ադիլջևազի միրլիվայի խասերը			450.346
Էրջիշի	»	»	300.000
Մուշի	»	»	410.000
Բարկիրի	»	»	200.000
Կարկարի	»	»	200.000
Քեսանի	»	»	250.000
Էսփագիրդի	»	»	250.000
Աղա Քիսի	»	»	290.000
Էքրադի	»	»	290.000
Վանի Բենի Կոթուրի		»	270.000
Բայազիդի բերդի		»	10.044
Բերդայի	»	»	200.000
Հվեչիքի	»	»	385.000
Վանի դեֆթերի քեթխուդայի զեամեթը			60.189
Վանի թիմարների դեֆթերդարի		»	53.870

ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ՕՐԵՆՔՈՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԵՅԼԵՐԲԵՅՈՒԹՅԱՆ ԿԸԼԸՋՆԵՐԻ[36] ԲՈԼՈՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ, ԱՄԵՆ ՄԻ ՍԱՆՋԱՔՈՒՄ ԵՎ ԷՅԱԼԵԹՈՒՄ ԹԻՄԱՐԻ ՈՒ ԶԵԱՄԵԹԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ռումելիի էյալեթների բոլոր սանջաքներում զեամեթները և թիմարները ընդամենը 9284 կըլըչ են, որոնցից 914-ը զեամեթներ են, մնացածը թեզքերեով և առանց թեզքերեր[37] թիմար են։ Օրենքով, զեամեթի տերերը 5000 ակչեին մի ջեբելու, իսկ թիմարի տերերը 3000 ակչեին մի ջեբելու են տալիս։ 10 հազարից ավելի զեամեթի տերերը երեք ջեբելու են տալիս։ Այսպիսով, ըստ օրենքի, Ռումելիի էյալեթներում զեամեթի և թիմարի տերերը, ջեբելուների հետ միասին, 20.200 զինվոր են տալիս։ Միրմիրանները, սանջաքի բեյերը, դեֆթերի քեթխուդան, թիմարի դեֆթերդարը 5000 ակչեին մեկ ջեբելու են տալիս։ Նրանց ջեբելուների թիվը 2500 զինվոր է։ Այսպիսով, Ռումելիի զինվորների թիվը, ըստ օրենքի, ջեբելուների հետ միասին՝ 33.000 ընտիր զինվոր, այլ ծառայողներով՝ 40.000 խուլամական զին:վոր է։

Անատոլիայի էյալեթներում

Այս էյալեթները 7310 կըլըչից են բաղկացած, որից 195-ը զեամեթներ են, մնացածը թեզքերեով և առանց թեզքերեի թիմարներ են։ 9700 ջեբելուներով ընդամենը 17.000 զինվոր կա։ Յուրաքանչյուր

տալայի բեյի դրոշակի ներքո այս զինվորները պատերազմի են գնում։ Օրենքով, թիմարի տերերի տարեկան եկամուտը՝ 373 անգամ 100 հազար և 17.730 ակչե է։

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՍԱՆՋԱՔՈՒՄ ՈՐՔԱՆ ԹԻՄԱՐ ԵՎ ԶԵԱՄԵԹ Է ԳՐԱՆՑՎԱԾ

...Ռումի՝ այսինքն Սվազի էյալեթը 3133 կըլըջից է բաղկացած, որից 900-ը զեամեթ է, մնացածը թեզքերեով թիմար։ Օրենքով թիմարի և զեամեթի տերերը՝ ջեբելուների հետ միասին՝ 9000 զինվոր են տալիս։ Տարեկան եկամուտը 131 անգամ 187 հազար և 327 ակչե է։ Սվազի, Ամասիայի, Չորումի, Դիվրիկի, Ջանիկի, Արաբկիրի լիվաների թիմարներն ու զեամեթները միասին են գրանցված, ավելի կամ պակաս չկա։ Սվազի լիվայում 48 զեամեթ, 928 թիմար կա, բոլոր լիվաների թիմարներն ու զեամեթները այս կարգով են։

Մարաշի էյալեթը 2169 կըլըջից է բաղկացած, որից 29-ը զեամեթ է, մնացածը՝ թեզքերեով և առանց թեզքերեի թիմարներ են։ Էմիրների, զեամեթ և թիմարի տերերի՝ ջեբելուների հետ միասին, զինվորների թիվը 5500 է։ Տարեկան եկամուտը 94 անգամ 100 հազար և 23.017 ակչե է։ Մարաշի լիվայում 3 զեամեթ, 1120 թիմար կա, Կարսում՝ 2 զեամեթ, 656 թիմար, Այնթաբում՝ 2 զեամեթ, 656 թիմար, Մալաթիայում՝ 8 զեամեթ, 276 թիմար։ Բարեշեն լիվա է։

Տրապիզոնի էյալեթը 454 կըլըջից է բաղկացած, ջեբելուների հետ միասին 1850 զինվոր ունի։ Տրապիզոնի լիվայում 43 զեամեթ, 328 թիմար կա, Բաթումիում՝ 5 զեամեթ, 72 թիմար։

Դիարբեքիրի էյալեթը 300 կըլըջից է բաղկացած, ջեբելուների հետ միասին զինվորների թիվը 1800 է։ (Սուլթան) Մուրադ խանի IV-ի ժամանակ 900 կըլըջ էր։ Ամիդի լիվայում 9 զեամեթ, 169 թիմար կա, Խարփութում՝ 3 զեամեթ, 163 թիմար, Արղնիում՝ 9 զեամեթ, 123 թիմար, Սևերեկում՝ 4 զեամեթ, 164 թիմար, Նիսիբինում՝ 4 զեամեթ, 15 թիմար, Թերջիլում՝ 4 զեամեթ, 163 թիմար, Ջերմիկում՝ 8 զեամեթ, 13 թիմար, Հիսնի-Քիֆում՝ 45 զեամեթ և թիմար, Չապաքջուրում՝ 5 զեամեթ, 30 թիմար, Չմշկածագում՝ 2 զեամեթ, 7 թիմար, Կալեբում՝ 44 զեամեթ և թիմար, Սենջարում՝ 6 զեամեթ, 21 թիմար։

Էրզրումի էյալեթը 279 կըլըջից է բաղկացած, ջեբելուների հետ միասին 8000 զինվոր ունի։ Էրզրումի լիվայում՝ 56 զեամեթ, 2215

թիմար կա, Թորթումում 5 զեամեթ, 49 թիմար, Նամերվանում՝ 4 զեամեթ, 92 թիմար, Քղիում (Քիֆիում)՝ 8 զեամեթ, 229 թիմար, Խնուսում՝ 2 զեամեթ, 425 թիմար, Մալազկերտում՝ 9 զեամեթ, 282 թիմար, Թեքմանում՝ 1 զեամեթ, 253 թիմար, Կարահիսարի Շարքիում՝ 4 զեամեթ, 946 թիմար։

Չըլդըրի էյալեթը *656 կըլըջից է բաղկացած, ջեբելուների հետ միասին 800 զինվոր ունի։ Օլթիի լիվայում 3 զեամեթ, 123 թիմար կա, Արդահանում՝ 8 զեամեթ, 45 թիմար, Արդանուշում՝ 44 զեամեթ, 49 թիմար, Հաջրեքում՝ 3 զեամեթ, 12 թիմար, Խերթվիսում՝ 12 զեամեթ, 35 թիմար, Փոսխովում՝ 1 զեամեթ, 18 թիմար, Փեթեքում՝ 8 զեամեթ, 54 թիմար, Բասենում՝ 9 զեամեթ, 14 թիմար, Լոզիում՝ 9 զեամեթ, 10 թիմար, Օղջեում՝ 8 զեամեթ, 18 թիմար, Ախալքալաքում՝ 32 զեամեթ և թիմար, Ջեթլեում (?) 13 զեամեթ, 14 թիմար, Իսպիրում՝ 1 զեամեթ, 4 թիմար, Փերթեքում 4 զեամեթ, 98 թիմար։*

Վանի էյալեթում, *ջեբելուների հետ միասին, զինվորների թիվը 1300 է, սակայն աջ և ձախ թևերի զինվորները միանալով քրդերին դուրս են եկել շահի դեմ։ Վանի լիվայում 48 զեամեթ, 35 թիմար կա, Շեներկերում (?) 47 զեամեթ, 33 թիմար, Զոբանլիում՝ 2 զեամեթ, 26 թիմար, Վեղանեում՝ 7 զեամեթ, 61 թիմար, Բայազիդի բերդում՝ 4 զեամեթ, 125 թիմար, Էրջիշում՝ 14 զեամեթ, 68 թիմար, Ադիլջևազում՝ 9 զեամեթ, 101 թիմար, Քորլատեքում (?)՝ 7 զեամեթ. 67 թիմար։*

...Սուլթան Սուլեյմանի երջանիկ ժամանակ Ռումելի անունով հայտնի ընդարձակ էյալեթներում զեամեթի և թիմարի տերերի՝ ջեբելուների հետ միասին, ընդամենը 74.000 զինվոր կար, իսկ Անատոլիայի էյալեթներում՝ 91.600 զինվոր... Ալ-Օսմանի տիրապետության տակ գտնվող երկրներում հաշվի է առնված ռոճիկ ստացող զինվորական ծառայություն կատարողների թիվը. 5 անգամ 100 հազար պաշտոնի տեր էշքինջի[38] *հավատացյալ զինվոր է գրանցված։*

* * *

Այնուհետև I հատորում էվ. Չելեբին խոսում է Սուլեյման Կանունիի օրոք կատարված նվաճումների մասին։ Դրանցից հիշենք մի քանիսը. հիջրեթի 940 թվականին (1533—1534) գրավում են Ղազվինը, Բաղդադը, Երևանը, Թավրիզը և Համադանը. 941 թվականին՝ Վանի, Ադիլջևազի, Արջիշի, Ախլաթի, Բարկիրի (Բերկրիի) բերդերը։

Համառոտակի նշված են նաև սուլթան Սելիմ II-ի, սուլթան Մուրադ III-ի, սուլթան Ահմեդի, սուլթան Օսման II-ի իշխանության տարիների կարևոր դեպքերը։

Էվ. Չելեբին մանրամասնորեն անդրադառնում է սուլթան Մուրադ IV-ի իշխա-

նության տարիների դեպքերին, որոնց ինքը ժամանակակից և ականատես է եղել։ Չելեբին տասնյակ էջեր է հատկացնում իր փադիշահի (սուլթան Մուրադ IV-ի) հետ ունեցած տեսակցությանը, գրույցին և փադիշահական շնորհներին ու պարգևներին արժանանալուն։

«Ուղեգրության» այս հատորում կարևոր տեղ են գրավում նաև Ստամբուլի բազմաթիվ ջամիների, ուխտատեղիների, պալատների և այլ շինությունների նկարագրությունները։

Գրքի հաջորդ էջերում Էվ. Չելեբին նկարագրում է Կոստանդինիյեից դուրս, մինչև Սև ծովի նեղուցը ընկած երեք մևլիյեթների[39] շինությունները, ջամիները, մեսջիդները[40] և այլ բարեգործական հիմնարկությունններ ու տեսարժան վայրեր։ Այստեղ նկարագրվում են Եդի Կուլեն, Էյուբը, Նյուզլիջեն, Կասըմփաշան, Ղալաթան, Ռումելի Հիսարը, Սկյուդարը և այլն։ Էվ. Չելեբին, ըստ իր սովորության, մանրամասնորեն նկարագրում է բոլոր քաղաքամասերը, նրանց բնական պայմանները, բնակչությունը, արհեստներն ու առևտուրը, կարևոր շինությունները, զբոսավայրերը և այլն։

Սույն հատորում կարևոր տեղ են գրավում Ստամբուլի բնակչության տարբեր դասերին, դրանց թվում նաև արհեստավորությանը վերաբերող նկարագրական և թվական տեղեկությունները։

«1048 (1638) թվականին սուլթան Մուրադ IV-ի ֆերմանով Ստամբուլում տեղի ունեցած ընդհանուր գրանցումը (աշխարհահամար)» վերնագրով հատվածում Էվ. Չելեբին պատմում է. սուլթան Մուրադ IV-ը շատ է հետաքրքրվել պատմությամբ։ Մի անգամ սուլթանը իր ուլեմաների և վեզիրների հետ՝ տարբեր երկրների և քաղաքների պատմության մասին խոսելիս հարցնում է, թե՝ «Մեր մայրաքաղաք Ստամբուլի նման պատմական անցյալ ունեցող, մեծ ու բարեշեն փառավոր քաղաքի բնութագիրը պատմագիրները գրի առե՞լ են, ուղևորները տեսե՞լ են»։ Ներկաների տված պատասխանները սուլթանին չեն բավարարում և այդ պատճառով նա հրամայում է Ստամբուլում աշխարհահամար կատարեն և արդյունքը իրեն՝ փադիշահին ներկայացնեն։ Սուլթանի հրովարտակում ասված էր

«Ստամբուլում որքան սուլթանական ջամիներ, վեզիրական ջամիներ, մզկիթներ, մեդրեսեներ, դար-ուլ-կուրաններ, դար-ուլ-հադիսներ[41], պատանիների վարժապետանոցներ, մենաստաններ, խաներ, բաղնիքներ, քարվանսարայներ, վեզիրների պալատներ, այանի և ազնվականների սարայներ, ջրի աղբյուրներ, սեբիլխանեներ[42], ջրի ծորակներ, ջրհորներ, իսլամական թաղեր, քրիստոնյաների և հրեաների թաղեր, եկեղեցիներ, հացի փռեր, կարկանդակի փռեր, բեքսիմետի փռեր, ձիթաղացներ, ջրաղացներ, կափաններ և վերջապես իմ Ստամբուլ քաղաքում չորս մևլիյեթներում որքան բարեգործական շինություններ կան, բոլորը պետք է գրանցվեն և ներկայացվեն իմ Երջանիկ Դռանը։ Այդ բոլորը ոչ չարամիտ մարդկանց միջոցով նորից ստուգել պիտի տամ։ Ձեր գրանցման մեջ եթե անճշտություն գտնվի, գրանցողներին չորս կտոր պիտի անեմ»։

Այս մասին մեծ վեզիր Բայրամ փաշային, Ստամբուլի մոլլա-

յին, Էյուբի, Ղալաթայի, Սկյուդարի մոլլաներին կայսերական խաթ-թեր ուղարկվեցին։

Վերոհիշյալ փադիշահական հրամանի համաձայն Ստամբու-լում, Եդի-Կուլեում, Էյուբում, Քյաղաթխանեում, Սյուտլիջեում, Փիրիփաշայում, Խասքյոյում, Կասըմփաշայում, Ղալաթայում, Թոփ-խանեում, Բեշիկթաշում, Հիսարում, Բողազ Հիսարներում, Բեյքո-զում, Անատոլի Հիսարում, Ջենգելքյոյում, Կուզղունջուքում, Սկյու-դարում՝ մինչև Բագրքյոյում, բոլոր շինությունները, այգի և պար-տեզները, խանութներն ու բեզիստանները, բոլոր գինվորները, ար-հեստավորները, այանները երեք ամսում լրիվ գրանցվեցին։ Մեծ մի դիվան կազմվեց, որը կոչվեց «Էվսաֆի Կոստանդինիյե» և ներ-կայացվեց Նորին Վսեմություն փադիշահին։ Հայտնի պատմագիր Սոլաք Զադեն գիշեր-ցերեկ փադիշահի ներկայությամբ կարդաց այդ դիվանը, որից սուլթան Մուրադը շատ գոհ մնաց։

Էվ. Չելեբին վերոհիշյալ դիվանի մասին գրում է.

«Աստծո կամքով այդ տարի մեր էֆենդին՝ Մելեք Ահմեդ փա-շան, ղազի Մուրադ խանի սիլահդարության պաշտոնին արժանա-ցավ, իսկ Բաղդադի նվաճումից հետո արժանացավ Բաղդադի և Դիարբեքիրի վալիության պաշտոնին։ «Էվսաֆի Կոստանդինիյեն» Մելեք Ահմեդ փաշայի մոտն էր մնացել։ Նվաստս նրանից վերցնե-լով մի օրինակը՝ այստեղ գրի առա»։

(էջ 506—509)

Էվ. Չելեբիի հետագա մանրամասն նկարագրությունից պարզվում է, որ փա-դիշահական հրամանով կազմակերպվում է էսնաֆների, զինվորների և այլ ծա-ռայողների պաշտոնական շքերթ (ալայ)։

«Այդ կարգը (սովորությունը) մեզ մոտ հնուց ի վեր գոյություն ուներ,— ասում է Էվլիյա Չելեբին։— Էսնաֆը մեծ հարսանիքներում (արքունական) և այլ հանդիսավոր օրերումն էլ այդ կերպ էր (շքեր-թով) անցնում։ Այդ ժամանակ Ստամբուլը բաժանվում էր չորս մոլլայության (կամ կադիության)՝ Ստամբուլ, Էյուբ, Ղալաթա և Սկյուդար»։

Ըստ Էվ. Չելեբիի հաղորդած տեղեկության, այս չորս քաղաքամասերում գո-յություն ունեին ընդամենը 1100 էսնաֆներ՝ բաղկացած 57 դասերից։ Հազարից ավելի էսնաֆներից յուրաքանչյուրի մասին Էվ. Չելեբին հաղորդում է հետաքրքիր տեղեկություններ։

Ուշագրավն այն է, որ Էվ. Չելեբին տարբեր էսնաֆների շարքում հիշատակում է նաև գրպանահատներին, գողերին, խարբերաններին և նման տարրերի, որոնք նմա-նապես իբրև էսնաֆ պետք է մասնակցեին շքերթին։

«Սրանք տուրք են տալիս ասես բաշիին[43] և սուբաշիին[44],— գրում է Էվ. Չելեբին,— ման են գալիս Ստամբուլի բազմամարդ վայրերում և գողություն անում, գավառներից եկած պանդուխտներից մինչև անգամ աչքի սյուրմեն (ծարիր) գողանում»։

Այս շքերթի (ալայ) նկարագրությունը Էվ. Չելեբիի «Ուղեգրության» I հատորում 150 էջից ավելի տեղ է գրավում։

Ավելորդ համարելով այդ նյութերի լրիվ թարգմանությունը, բավականանում ենք շքերթի կազմը, մասնավորապես արհեստավորների մի քանի խմբերը համառոտակի նշելով։ Թեև այդ մասին Էվ. Չելեբին գրեթե ոչինչ չի ասում, սակայն հայտնի է, որ Ստամբուլի այդքան բազմաթիվ և բազմատեսակ արհեստավորների մեջ հայերը բռնում էին, հավանաբար, առաջնակարգ տեղերից մեկը։

Այդ հսկա շքահանդեսին մասնակցել են զինվորական, վարչական, քաղաքային և այլ հիմնարկների բազմաթիվ խմբեր։ Էվ. Չելեբին նշում է շքերթի առջևից անցնող և որոշ չափով կարգ ու կանոն պահպանող ալայի չավուշների, սուբաշիների, զինված աջեմի օղլանների[45], մաքրողների, գերեզմանափորների խմբերը, բոլորն իրենց հատուկ տարազով, զենքերով և իրենց աշխատանքի գործիքներով։ Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ խոսելով լաղըմջիների[46] մասին Էվ. Չելեբին գրում է, որ «Սրանց մեծ մասը կեսարացի հայեր են. թվով 5000 մարդ»։ Այլազգի արհեստավորներից էսնաֆներ Էվ. Չելեբին երբեմն հիշատակում է հրեաներին և հույներին։

Շքերթում այնուհետև անցնում են զինվորական և ոստիկանական խմբերը, մինչև անգամ դահիճներն՝ իրենց պաշտոնին համապատասխանող բոլոր գործիքներով, հետո գողերի խմբերը, ձիապանները, Ստամբուլի գիշերապահները (12 հազար մարդ) իրենց հատուկ տարազով և գործիքներով։ Դրանց հետևում են հոգևորականները (շարիաթի), վարչական, դատական և այլ պաշտոնյաներն, ինչպես նաև բանաստեղծները (800 մարդ), արտասանողները, ընթերցողները, սուլթանի, վեզիրների և այանների գովք ասողները, որոնք հատուկ պատգարակների վրա նստած, ձեռքերում գրքեր, քերթվածներ բռնած, արտասանելով անցել են փադիշահի առջևով։ Նույն ձևով անցել են նաև աստղաբաշխները (70 մարդ), աստղագուշակները (հատուկ էսնաֆ են) և այլ բազմատեսակ գուշակներ։ Այնուհետև հոգևորական դպրոցների խոջաները և նրանց բազմաթիվ աշակերտները... Բժիշկները (հեքիմները) անցել են պատգարակների վրա ձեռքերում դեղերի շշեր, բժշկական գործիքներ և մի շարք հիվանդների պուլսերը բռնած... Վիրաբույժները, ատամնաբույժները, դեղագործները, հիվանդապահները իրենց հատուկ գործիքներով և բազմատեսակ դեղորայքներով։

Ստամբուլի գյուղատնտեսության մասին որոշ պատկերացում են տալիս Էվ. Չելեբիի կողմից հիշված մի շարք էսնաֆները։ Զորս Մելեիությունում գրանցված 21 հազար տնտեսություններում աշխատել են 57 հազար չիֆթչիներ[47], 4395 այգիներում աշխատել են 43.950 այգեպան, բազմաթիվ պարտիզպաններ. բանջարամշակներ և այլն։ Այս խմբերը շքերթում անցել են իրենց մշակության արտադրանքներով և ժողովրդին պտուղներ, բանջարեղեն և ծաղիկներ բաժանելով։ Դրանց հետևել են հացագործները (999 խանութ—10 հազար մարդ) և Ստամբուլի բազմատեսակ թխվածքների, քաղցրեղենների էսնաֆները։

Շքերթի հաջորդ խմբից հիշատակության արժանի են Սև ծովի նավատորմի

անձնակազմը (9000 մարդ)։ Անցնում են նաև Ստամբուլի տարբեր մասերի նավաշինարարական աշխատողները, պարանագործները, կողմնացույցի, ավազի ժամացույցի և քարտեզի մասնագետները... Շատ հետաքրքիր է նաև Էվ. Չելեբիի տված հետևյալ տեղեկությունը.

«Ստամբուլում, Թավուք-բազար թաղամասում էսիր-բազարը (ստրուկների շուկա) անունով հայտնի մի տեղ կա, որի վերևի և ներքևի հարկերում կան 300 խցիկներ։ Երկաթյա փականքով դռան առաջ նստած կառավարիչը տասանորդ է առնում վաճառված ըստրուկների և ստրկուհիների համար։ Ստրուկների առևտրով պարապող վաճառականների թիվը մոտ 2000 է։ Սրանք Կովկասից, Վրաստանից և Ղրիմից՝ իբրև նվիրական պատերազմի ավարներ, ստրուկներ են բերում և վաճառում»։

Այնուհետև, Էվ. Չելեբին ամենայն մանրամասնություններով թվում է հարյուրավոր մեծ և փոքր արհեստավորական խմբեր, որոնց շարքում խիստ կարևոր տեղ են գրավում սուլթանական արքունիքին սպասարկող բազմաթիվ արհեստավորները և ծառայողները։ Այդ խայտաբղետ, հետաքրքիր, XVII դարի Ստամբուլի իրական պատկերը, կենցաղն ու սովորությունները կենդանի և իրական գույներով պատկերացնող շքերթի մանրամասն նկարագրությունը տալուց հետո Էվ. Չելեբին վերջացնում է այսպես.

«...Հետո իրենց շեյխերին, նաղիբներին ու քեթխուդաներին ալայներով իրենց տները տարան, բոլորը փադիշահի համար աղոթք անելով իրենց տեղերը գնացին։ Այս ալայի համար Ստամբուլում երեք օր և երեք գիշեր բոլոր աշխատանքները դադարեցվեցին, որովհետև բոլորը զբաղված էին ալայի պատրաստությամբ։ Այդ ալայը չի կարելի նկարագրել լեզվով և գրչով։ Նվաստս՝ Էվլիան, որքան հնարավոր է, աշխատեցի գրի առնել։ Այդպիսի ալայ ոչ մի փադիշահի ժամանակ չի եղել և ոչ էլ կլինի»։

(էջ 500—669)։

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

(1050—1058 թթ.=1640—1648 թթ.)

Ստամբուլից — Սամսուն — Կիրասուն — Տրապիզոն — Մեղ-րելիստան — Ամասիա — Էրզրում — Շուշիկ բերդ — Հասան Կալա — Խնուս — Ուչքիլիսե (Էջմիածին) — Կարաբաղ — Նախիջևան — Պարսկաստան — Թավրիզ — Երևան — Գյանջա — Արեշ — Նիյազաբադ — Շամախի — Բաքու — Շաբուրան — Դերբենդ — Թիֆլիս — Ազղուր — Ախալցխա — Չըլդըր — Կարա Արդահան — Էրզրում — Հասան Կալա — Կարս — Կաղզման — Մաղազբերդ — Ջարիշատ — Ուչքիլիսե — Երևան — Շորագյալ — Էրզրում — Բայբուրդ — Ջանջա — Իսպիր — Թորթում — Ակչակալա — Էրզրում — Խնուս — Մամա-Խաթուն — Քեմախ — Երզնկա — Շաբին-Կարահիսար — Նիկհիսար — Լադիկ — Մարզվան — Ստամբուլ։

1050 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԲԱԹՈՒՄԻ ԵՎ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Էվ. Չելեբին իր ուղևորության նկարագրությունը սկսում է Ստամբուլից։ Հեղինակը հիշատակում է ծովային ճանապարհի այն բոլոր մեծ ու փոքր նավահանգիստները, որոնց կողքով անցել կամ որտեղ կանգ է առել նա։ Այդ նկարագրությունների մեջ կան բազմաթիվ աշխարհագրական, պատմական տեղեկություններ. բերդաքաղաքների նկարագրություններ և այլն։ Ծովային ճանապարհով անցնելով Անատոլիան, նա Սև ծովի եզերքով համնում է Սամսուն նավահանգիստը։

Սամսուն բերդի բնութագիրը: *Հիմնադիրն է Ռում-օղլի Խերդիլիե կայսրը։ Հետագայում սուլթան Ալայեդդին-Սելջուկին գրավելով այն՝ միացրեց իր կալվածներին։ Այնուհետև, անցավ սուլթան Յըլդըրըմ Բայազիդ խանի ձեռքը։ Ունի ենիչերիական սերդար, քեթխուդա, բերդակալ (դիզդար) և բերդապահ զինվորներ։ Սակայն մյուֆթի և նկիբական նադիր չունի։ Այանն ու էշրաֆը շատ են։ Բնակիչները բոլորը նավաստիներ և պարանագործներ են. Ռամիկներ (ավամ) չկան, ուլեմաները շատ են։ Բոլորը, իրենց կարողության համապատասխան, սպիտակավուն, կապտագույն մաքուր համաստներ են հագնում։ Քաղաքը գտնվում է Սինոպի արևելքում։*

Բերդը ծովի եզերքին է, քարաշեն և ամրակուռ է։ Էյրիի[1] գրավման ժամանակ, ռուսները այս բերդը նվաճել և որոշ մասերը ավերել են. սակայն հետագայում նորից վերանորոգվել է։ Բավականաչափ բերդակալներ և զինվորներ կան։ Ունի 70 աշտարակ և 2000 պարիսպի պատվար։ Ամասիայի առաջից հոսող Չարշամբա բազարի գետը Սամսունի արևելյան կողմից թափվում է Սև ծովը։ Դա անանցանելի մեծ գետ է։ Նախապես անցնում է Թոքաթ քաղաքով, հետո Ամասիայի կողքով և ոռոգում է մի շարք քաղաքների հողերը։ Այս կապակցությամբ Ամասիայի և Թոքաթի ժողովրդի մեջ որպես առասույթ տարածված է. «Թոքաթը ապականում, Ամասիան խմում է»*։ Սամսունն ունի իր անուշահամ գետակը՝ Գանավքարիզ անունով։ Տները կղմինդրա[illegible] են. հարուստ[illegible] [illegible]ներով և [illegible]։ Մեդրեսե, իմարեթ (բարեգործական հիմնարկություն) և նման հիմնարկություններ չկան, բայց կան փոքրահասակների 7 դպրոցներ։ Նավամատույց (լիման) չունի, բաց տարածություն է, սակայն խարիսխ կարելի է գցել։

Սամսունի գովասանքի արժանի հատկությունները: Լեռներում հայտնի են վայրի խաղողը, նռագույն տանձը և նրա թթուն, որը հազարավոր տակառներով տարվում է Ստամբուլ։ Նավերի համար անհրաժեշտ պարաններ պատրաստելու կանեփի թելը այնքան շատ է, որ կարելի է ասել, թե ամբողջ աշխարհի [կանեփը] այստեղից է գնում։ Քաղաքը գտնվում է ծովածոցի մոտ, իսկ նրա հարավային կողմում գտնվող լեռը ծովեզերքին է։ Այստեղից ընկերներով նավով [illegible]դինը ռեպի Ունիայի բերդը...

Կիրասուն բերդի բնութագիրը: Հիմնել է Ստամբուլի Կոստանդինը։ Հետագայում թեև անցել է սուլթան Ուզուն Հասանի[2] ձեռքը, սակայն Ջենովայի ֆրենգները գրավել են այն։ Ֆաթիհ[3] սուլթանը այս բերդը գրավելու ժամանակ Մահմուդ փաշային ասում է. «Այս գիշերը բերդի տակը կմտնես»** և ֆերման է տալիս. փաշան մտնելով բերդի տակը գրավում է այն. այդ պատճառով էլ [բերդը] Կիրասուն է կոչվել[4]։ Գտնվում է 17-րդ կլիմայական գոտում։ Տրապիզոնի էյալեթի սահմանագծին՝ փաշայի խաս է։ Իշխողը մյուսելլիմ է։ Ունի ենիչերիական օջախից սերդար, բերդի բերդակալ, բերդապահ զինվորներ, մաքսատան էմին, մյուֆթի և նագիբ։ Ընկած է ծովեզերքում՝ Ջանիկի և Տրապիզոնի միջև։ Տրապիզոնը Կիրասունի արևելքումն է։ Ջենովայի ֆրենգների ձեռքում եղած ժամանակ բարեշեն և մեծ քաղաք է եղել։ Երևում են այդ ժամանակաշրջանից մնա-

* Թուրքերեն՝ توقاد صيجار، أماسيا ادجر

** Թուրքերեն՝ كيره سن

ցած շինությունների հետքերը և ավերակները։ Սակայն Կիրասունը ներկայումս այնքան էլ մեծ քաղաք չէ։ Շուկայի մեջ մզկիթներ, ջամիներ, խան, բաղնիք և բազարներ կան։ Բերդը ծովեզերքումն է։ Այգիներում և պարտեզներում պտուղները շատ են։ Նավահանգիստը շատ լավ խարիսխ է բռնում։ Սակայն քամու ազդեցության ենթակա է։ Լիմանի արևմուտքում մի փոքր կղզի կա... Այս քաղաքը Տրապիզոնի էյալեթին է ենթակա։ Օմար փաշայի զինվորներից շատերը՝ ծովից գզվելով, ցամաքով Տրապիզոն են գնում։

Այստեղից ծովով դուրս գալով դեպի հյուսիս՝ եկանք Փերփոլուն *բերդը, որը քառանկյունի մի ժայռի վրա հին և փոքր բերդ է ծովեզերքում։ Ունի բերդակալ և զինվորներ։ Նավահանգիստը լավն է։ Գավառը այնքան էլ բարեշեն չէ։ Տրապիզոնի նահիյեն է։ Ժողովուրդը «չենգալան» հույներ են։ Այդտեղից մեկնեցինք դեպի Գորելի բերդը... այնուհետև հասանք Փոփոլի մենզիլը... հետո Գելիյե բերդը... Փորող հրվանդանի բերդը... Այնտեղից Փոլթա-բազարը։*

Փոլթա-բազարը: *Սա ևս Տրապիզոնին ենթակա նահիյե և սուբաշիություն է։ Շրջակայքում մոտ 100 բարեշեն գյուղեր կան և այս հովտում շաբաթը մի անգամ շուկա է կազմակերպվում, որտեղ մոտ 10 հազար մարդ է հավաքվում։ Այստեղ գտնվող բարեշինությունը Տրապիզոնում* Խաթունիյե *անունով հայտնի, (սուլթան) Սելիմ խան I-ի մոր բարեգործական էվկաֆն է*[5]*։ Այստեղ կա մի մեծ նավահանգիստ, որը Սև ծովի նավահանգիստների շրջանում հայտնի է Փոլթայի*[6] *նավահանգիստ անունով։ Ութ քամիներից պաշտպանված, խարիսխ բռնող, խոր մի նավահանգիստ է։ Այստեղից ավելի առաջանալով հասանք Կալա Թիմանի գետակը, որը սկիզբ առնելով Տրապիզոնի լեռներից, Փոլթա նավահանգստի մոտ թափվում է Սև ծովը։ Այստեղից շարժվելով, հասանք Սերե կոչված վայրը, որտեղ բարեշեն և գեղատեսիլ գյուղեր կան։ Բնակիչները* մենգեսելե *կոչված նավակներով գնում են Տրապիզոն և գալիս են։ Ժողովուրդը հույներ և իսլամներ են։ Գյուղերը ընկնում են Տրապիզոնի հարավային կողմը։*

(էջ 69—81)

ՄԵԾ ՔԱՂԱՔ ԵՎ ԼԵԶԳԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲԱՐԵՇԵՆ ԲԵՐԴԻ. ԱՅՍԻՆՔՆ ԹԱՐԵԲԻ-ԷՖԶՈՒՆԻ[7] (ՏՐԱՊԻԶՈՆԻ) ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Առաջին հիմնադիրը Մեծն Ալեքսանդրի դարի մի թագավոր է եղել։ Հետագայում, երբ Ադրբեջանի իշխող Ուզուն Հասանը այս քաղաքը ջենովացիներից գրավեց՝ Թարեբի-զեն[8] *անունը ստացավ,*

տրովհետև այդ ժամանակաշրջանում քաղաքի իշխողը հաճոյասեր մի կին էր։ Այնուհետև, Թիմուրի օրոք, երբ սուլթան Ուզուն Հասանը գնաց դեպի Միջագետք՝ Թիմուրին դիմավորելու, Ստամբուլի թեքֆուրը Ռում Կոստանդինը, նպաստավոր առիթ գտնելով, գրավեց այդ կողմերը։ Հետո, 878 (1473) թվականին, Ֆաթիհ Մուհամմեդ խանը փադիշահական նավատորմով Ստամբուլից եկավ Տրապիզոն և իր անթիվ զինվորներով շարժվեց Ուզուն Հասանի վրա։ Թերջանի դաշտում տեղի ունեցած պատերազմում սուլթան Հասանի մոտ 40 հազար զինվորներին սրի քաշեց։ Իսկ պարտված սուլթան Հասանը փախավ Ադրբեջանի բերդը... '

Օսմանցիները սուլթան Մուրադ I-ի մղած Քոսովայի պատերազմից ավելի մեծ պատերազմ չեն ունեցել։ Այս նվիրական պատերազմից 13 տարի առաջ, Ֆաթիհը իր անթիվ զինվորներով Տրապիզոնը ծովից և ցամաքից 70 օր պաշարելուց հետո, 865 (1460) թվականին գրավեց հույներից։ (Ֆաթիհը) շատ հավանելով քաղաքի օդն ու ջուրը, նրան Թարեբի–էֆզուն անունը տվեց։ Իսկապես, որ հաճույքի և ուտել-խմելու վայր է։ Քաղաքը կոչվում է նաև Ստորին Բաթում և Լեզգի քաղաք։ Ոմանք էլ Թարեբի-էֆզուն են անվանում, բայց հասարակությունը (ավամ) Տրապիզոն է ասում։ Մուհամմեդ խանը (Ֆաթիհը) այս քաղաքը գրավելուց հետո՝ մայրաքաղաքի վերածեց ու այնտեղ փող կտրել և խութբե կարդալ տվեց և երեք տարի այնտեղ ապրելով, նրա հյուսիսային կողմում գտնվող Վրաստանը, Մեգրելիստանը, Աբազիստանը իրեն հպատակեցրեց ու ենթարկեց, արքայորդի (շեհզադե) Բայազիդ խանին Տրապիզոնի իշխան նշանակեց և ինքը վերադարձավ Ստամբուլ։ Իսկ երբ Բայազիդը փադիշահ դարձավ, իր փոխարեն, Տրապիզոնի իշխան նշանակեց իր որդի Սելիմին։ Ավելի ուշ, երբ սուլթան Բայազիդը մեռավ, Սելիմ I-ը ինքնուրույն փադիշահ դարձավ։ Սա եղել է աջեմների դեմ մղվող հայտնի Չըլդըրի պատերազմում, հետո գնացել է Եգիպտոսի նվիրական պատերազմին, որոնք առանձին պատմություններ են։

Շեհզադե (արքայորդի) Սուլեյմանն էլ Տրապիզոնում իշխանություն ստացավ։ Տրապիզոնը հին քաղաք է և Ալ-օսմաններից չորս փադիշահի մայրաքաղաք է եղել։ (Սուլթան) Սուլեյման խանը 926 (1519) թվականին փադիշահ դառնալով իր մորը ուղարկեց Տրապիզոն։ Քաղաքում աշխարհահամար կատարել տվեց և Բաթումի սանջաքն էլ նրան միացնելով՝ մի առանձին էյալեթ կազմեց։ Երկու թուղով[9] միրմիրանություն է։ Մուրադ IV-ի և Իբրահիմ խանի իշխանու-

թյան ժամանակ մի շարք թուղավոր վեզիրների շնորհվել է իբրև արփալըք[10]։ Սուլեյման խանի օրենքով փադիշահի կողմից սահմանված է 30 հազար [ակչեով] խաս։ Սանջաքներում 11 սուբաշի կա։ Ըստ արդարադատության, տարեկան 19 հազար ղուրուշի ընկույզի հկամուտ[11] ունի, իսկ երբ բռնություն գործ դրվի, 30 հազար ղուրուշի կհասնի։

Էյալեթը 5 սանջաքի է բաժանվում՝ Խանջա, Ստորին Բաթում, Վերին Բաթում, Գունիա և Տրապիզոն։ Փաշան նստում է Տրապիզոնում։ Ըստ օրենքի՝ թիմարի դեֆթերդար, դեֆթերի քեթխուդա, դեֆթերի էմին, չավուշների քեթխուդա և չավուշների էմին ունի։ Բաթումի լիվայի դեֆթերդարի թիմարների խասերը՝ 42 299 ակչե է։ Տրապիզոնի լիվայում կա 43 զեամեթ և 226 թիմար, Բաթումի լիվայում՝ 13 զեամեթ և 72 թիմար, Տրապիզոնում ընդամենը 454 միավոր է գրանցված[12]։ Ըստ օրենքի՝ ջեբելուների հետ միասին, 1800 անվանի զինվոր ունի։ Իսկ փաշայի ջեբելուները 1000 քաջերից են կազմված։ Ալայի բեյի, չերիբաշիի և յուզբաշիների հետ միասին ընդամենը 3000 զինված զինվոր ունի։ Պատերազմի ժամանակ այդ բոլոր զինվորները զինված հավաքվում են փաշայի և ալայի բեյի դրոշակի տակ։ Զներկայացած զինվորի զեամեթը ուրիշին է տրրվում։ Բոլոր գյուղերը բարեշեն և՝ հարուստ են։

(էջ 81—83)

ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԿԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀՊԱՏԱԿ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԲՈՅԲԵՅՆԵՐԸ[13]

Աբազա աշիրեթներն են՝ Ջաչլերը, Արլանը, Ջանդալարչիլին, Մեծ Ջանդաները (ծովեզերքումն են), Քեչները, Արթերը, Կամըշները, Սուչեները, Բոզոդոքը, Կութասը, Աշըքլին, Յուգարըլին, Ջեմբեն, Սովուք-Սուն և այլն. մոտ 70 ցեղեր և աշիրեթներ, որոնք բոլորն էլ հպատակեցված են և հնազանդ։ Մեգրելիստանի և Վրաստանի բեյերը ևս ենթարկված և հպատակեցված լինելով, ամեն տարի իրենց հպատակությունը և հաշտությունը վերանորոգելու համար 40—50 ղուլամ (պատանի) և ստրկուհի, հազար զույգ բրդյա (թիֆթիկ) գուլպա, փադիշահական խոհանոցի համար՝ հազար զույգ որրիչ* աստառի բեզ և այլ բազմաթիվ նվերներ ուղարկելով՝ Տրա-

* Բնագրում՝ փաչավրա (ջնջոց)։

պիզոնի փաշաներին հպատակություն են հայտնում և պայմանագիր կնքում։

Տրապիզոնը 500 ակչեով մկլևիություն է։ Ունի 41 նահիյե, բայց շատերը ապստամբված են։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, նվիրական նաւգիբ, սերդարի փոխարեն՝ պատկառելի ենիչերիի չավուշ, սիփահիի քեթխուդայի փոխարեն՝ քաղաքի սուբաշի, մյուհթեսիբ-աղա[14], մաքսապետ, ձկան էմին, ներկատան էմին, գինու էմին, մոմատան էմին և վերջապես 17-ի հասնող իշխանավոր պաշտոնյաներ, որոնք իրենց ձեռքում կայսերական հրամանագրեր ունեն։ Վիլայեթի բոլոր ավագանիների (այան) ձեռքում եղած փադիշահական հրամանների մասին, եթե աստված կամեցավ, իր տեղում կգրենք։ Այս քաղաքը 17-րդ կլիմայական լայնության մեջ է։ Ռումի քաղաքներից է։ Հրախտանման գեղեցիկ քաղաք է՝ Սև ծովի արևելյան ափին։ Ստամբուլի նեղուցից մինչև Տրապիզոնի նավահանգիստը ընդամենը հազար մղոն է։ Տրապիզոնի արևելքում գտնվող Գեզգի լեռան շուրջը ապրող ժողովուրդը կոչվում է Գեզգի ցեղ, որն աղավաղված ձևով լագգի (լեզգի) է կոչվում։ Ոմանք թեթևացնելու համար գ և ի տառերը ջնջում և լազ[15] են ասում։ Ղազի սուլթան Մուհամմեդ Ֆաթիհը այս բերդը գրավելիս տարբեր ժողովուրդների Տրապիզոն փոխագրելով՝ բնակեցրեց այնտեղ։

Անունները՝ Ալի Փեշե, Վելի Փեշե, Խեթավերթի Փեշե, Ջաֆրր Փեշե, Փեշիր Փեշե, Ֆասիլի Փեշե, Մեծի Փեշե, Միսեր Փեշե, Ֆեխրադ Փեշե, Մեհմեթ Փեշե։

Ազգանունները՝ Ֆըրթուշ-օղլի, Ֆոդոլ-օղլի, Ֆեզարազ-օղլի, Կեշումբուր-օղլի, Կեթրազ-օղլի, Կալաֆաթ-օղլի, Կոսդեհ-օղլի, Փիփուլի, Կաշիդյարի, Սիամի, Ջորկալի, Հաջի Ձեչք, Կոթուլ, Մեսլի, Ալի Բեշար, Քյունելի, Ալի Փեշե։

Կանանց անունները (իրենց արտասանությամբ)՝ Ումխան, Իսմեխան, Ռափիյե, Ասիյե, Խանֆե, Աֆիֆե, Սանջե, Ֆաթմա, Խոֆեսթի, Թունթի, Գյուլ Շախի, Մեմերմահ, Խևա, Խումա, Ջախլա, Անֆե։

Ստրուկների անունները՝ Ուսեֆ, Փետվան, Քանանեն, Ելախ, Կուլի, Ռուսթեմ, Ափարթի, Ջանսի, Խալի և այլ բազմաթիվ նման տարօրինակ անուններ։ Բայց եթե ուշադրությամբ դիտենք, կտեսնենք, որ այս անունները հայտնի խոսքեր են, սակայն լազերը հարմարեցնելով իրենց բարբառին՝ աղավաղել են դրանք։

Տրապիզոնի ժողովուրդը մաքուր վերարկուով և հագուստով կրթված մարդիկ են։ Նրանց մեջ մի շարք բանաստեղծներ կան, որոնք արտասանում են և պարսկերեն ղազելներ ասում։ Մեր օրե-

րում՝ իր ճարտասանությամբ նշանավոր Օկշի Զադեն գեղեցիկ լեղվի տեր բանաստեղծ է և 11 դիվան ունի...

Տրապիզոնի բերդի գովքը: *Բոզ-Թեփեյի լանջի և Սև ծովի եզերքի միջև ընկած երկու մեծ բերդից է կազմված։ Բաժանվում է երեք մասի. մեկը կոչվում է Ստորին պարիսպ (Աշաղի հիսար), մյուսը՝ Միջին պարիսպ (Օրթա հիսար), իսկ միջնաբերդը կոչվում է Աշտարակի պարիսպ (Կուլե հիսար)։ Բոլորից ավելի ամրակուռն ու անառիկը աշտարակի պարիսպի բերդն է, որովհետև գտնվում է Բոզ-Թեփեյի վրա։ Լեռան կողմից դժոխային անդունդի նմանվող մի խոր փոս (խենդեք) կա, որի մեջ 77 մարդ կտեղավորվի։ Ամբողջապես կտրված ժայռ է։ Սրա մեջ մի ջամի, բերդապահների տներ, մթերանոցներ և զինանոցներ կան։ Հյուսիսային կողմի պարսպից մի դուռ է բացվում դեպի միջին պարիսպը, որը դուրս է գալիս քաղաք, սա է միակ դուռը։ Թեև մի ուրիշ դուռ էլ ունի, սակայն այդ դուռը միշտ փակված է և բացվում է միայն անհրաժեշտության դեպքում։ Միջին պարիսպը երկարաձև ամրակուռ բերդապատ է։ Նախկինում սրա արևելյան կողմի պարսպի մեջ Բերդ (կալա) անունով հայտնի և դեպի միջնաբերդը բացվող դռան մոտ Նոր Ջյումա քավուսի անունով մի դուռ կար։ Երկրորդ դուռը նույնպես այդ պարսպի արևելյան վերջավորությունում է և բոլոր խաղախորդների գործարանները (դեպպաղխանե) այս դռնից դուրս են գտնվում։ Այդ պատճառով էլ այս դուռը կոչվում է Դեպպաղների դուռ։ Այդ դռան առջևից մի փոքրիկ գետ է հոսում։ Արևելքում այս գետը լեզգիների լեռներից հավաքվելով, հոսում է խաղախորդների գործարանների մոտով և թափվում ծովը։ Երբեմն վարարում է։ Խաղախորդների շուկայում քարաշեն մի մեծ կամուրջ կա, որի հիմնադիրը Ուզուն Հասանն է։ Ուզուն Հասանը Էրզրումի արևելքում գտնվող Հասան Կալեի տերն է եղել, հետագայում տիրացել է նաև Տրապիզոնին։ Երրորդ դուռը՝ բերդի արևմուտքում, Զինդանի դուռն է։ Բոլոր ոճրագործները և պարտքերի մեջ թաղվածները այս դռան բերդում են բանտարկված։ Այս դռնից դուրս՝ նույնպես քարաշեն կամուրջով, գնում են Ջղանոս։ Չորրորդ դուռը՝ պարսպի հյուսիսումն է և բացվում է դեպի ստորին պարիսպը ու կոչվում Ստորին պարսպի դուռ։*

Ստորին պարիսպ *[բերդի]՝ հյուսիսային կողմի պատը ծովեզերքում է։ Բերդը քառանկյունի է։ Սա էլ չորս դուռ ունի։ Առաջինը Ջղանոսի դուռն է. սրա և Զինդանի դռան միջև ընկած, պարսպի պատին կպած երկար մի կամուրջ կա։ Երկրորդը՝ Սյութխանեի դուռն*

-է, որից դուրս՝ ծովեզերքում, քրիստոնյաների մի թաղամաս կա։ Երրորդը Մոլոզի դուռն է։ Փոքր խճաքարերը հունարեն մոլոզ են կոչվում։ Այս թաղամասի ծովափը ամբողջապես մոլոզ քարերով ծածկված լինելու պատճառով, դուռը՝ Մոլոզի դուռ անունն է ստացել։ Լազերի լեզվով խարխուլ և հենարաններով պահվող տներին մոլոզ են ասում։ Այս դուռը բացվում է դեպի ծովը։ Ստորին պարիսպի (բերդի) երկու կողմի պատերը կպած են ծովին։ Ծովի մեջ՝ մեկ ծայրից մինչև մյուսը, պատեր են կառուցված, որպեսզի ժողովրդի և թշնամու մուտքը արգելվի։ Այդ դուռն այնքան էլ բանուկ չէ։

Չորրորդը Մումխանիե դուռն է։ Տրապիզոնում մեղրամոմ և ճարպամոմ շատ կա։ Մոմը այս դռան մոտ է պատրաստվում, այլ տեղերում թույլ չի տրվում, որովհետև մոմի գործարանը պետական լինելով (միրի), առանձին էմին ունի։ Այս բերդերի տարածությունը շուրջանակի 9 հազար քայլ է։ Տրապիզոնի տների մեծ մասը նայում են դեպի հյուսիս և արևմուտք. բոլոր տները ծածկված են կարմրագույն կղմինդրով։

Այնուհետև էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Տրապիզոնի ջամիները, մեդրեսեները, հոգևորական դպրոցները, բաղնիքները, իսլամական բարեգործական շինությունները և այլն։

Տրապիզոնի շուկան: Շուկաներից ամենալավը Մոմխանեի դռնից դուրս գտնվող էսնաֆներն են։ Սրանք դռան ուղղությամբ և ծովեզերքում ընկած հարուստ և ճոխ խանութներ ունեն։ Բարեշեն մի բեդեստան կա, որի վաճառականները (խաջեգի) հարուստ, վեհանձն և պատկառելի բազիրգաններ են։ Օրթա Հիսարում կան ամեն տեսակի էսնաֆներ, 70—80 խանութներ, որոնք փոքր շուկա (քյուչուք բազար) են կոչվում։

Տրապիզոնի ժողովրդի գույնն ու դիմագծերը: Տրապիզոնը գտնվում է հինգերորդ կլիմայում[10], նրա օդն ու բնությունը գեղեցիկ են, այդ պատճառով էլ ամբողջ ժողովուրդը հաճոյասեր և զբոսասեր է, տրամադրված են խմելու և զվարճանալու, անհոգ են և անտարբեր, սիրահարվող են և հավատարիմ։ Նրանց գույնն ու դիմագծերը կարմրավուն են։ Կանայք՝ աբաղա, վրացի և չերքեզ գեղեցկուհիներ ու, սրտաց սաչ լուսնի նման գեղեցկուհիներ կան։

Տրապիզոնի բնակչության աշխատանքն ու զբաղմունքը: Այս քաղաքի բնակչությունը վաղուց ի վեր բաժանվում է 7 դասի. առաջին դասը այյան և աղնվական դասերին պատկանող բեյեր ու բե-

յորդիներ են, որոնք պերճանքով սամույրի մուշտակ են հագնում։ Երկրորդ դասը՝ ուլեմաները, բարեպաշտները և այլ բարեկեցիկ մարդիկ են։ Ուլեմաները իրենց հատուկ համազգեստը ունեն և արժանի են հարգանքի։ Երրորդը՝ վաճառականներն են, որոնք գնում են դեպի Ազաք (Ազով), Կաֆաք, Մեքրեք (?), Աբազա, Չերքեզիստան ու Ղրիմ, առևտուր անում։ Կերպասից վերարկու (ֆերաջե) և կոնթուշ, դոլմա և բաճկոնակ (ելեկ) են հագնում։ Չորրորդը՝ արհեստավորներն են, որոնք բոլորը կերպասից վերարկու և խալաթ են հագնում։ Հինգերորդը՝ Սև ծովի նավաստիներն են, որոնք իրենց հատուկ համազգեստն ունեն, հագնում են շատ ուռած՝ դոլմա կոչված համազգեստը, փաթաթում են կտավից սարքեր, ծովի վրա առևտուր են անում և դրանով էլ ապրում։ Վեցերորդը՝ պարտիզպաններն ու այգեպաններն են։ Այս քաղաքի Բոզ-թեփե բլուրը ամբողջովին այգիներով է ծածկված։ Ըստ սիջիլլի[17] արձանագրության, 31 հազար այգի և պարտեզ կա։ Յոթերորդը՝ ձկնորսներն են։

Տրապիզոնի նշանավոր արհեստները և նրանց բնութագիրը։ Աշխարհում Տրապիզոնի ոսկերիչների նման կատարելագործված վարպետներ չկան։ Մինչև անգամ (սուլթան) Սելիմ I ծնված լինելով այստեղ՝ իր պատանեկության տարիներին սովորում է ոսկեդրոշմիարհեստը[18] և իր հոր՝ Բայազիդ խանի անունով Տրապիզոնում դրոշմ[19] փորագրել տալիս։ Նվաստս տեսել է այդ դրոշմը։ Այդ ժամանակից սկսած ոսկերիչները հռչակ են ստացել։ Այնպիսի ձիու սանձեր, բուրվառներ, վարդաջրի ամաններ, սրեր, խոհանոցի դանակներ են պատրաստում, որ նմանները այլ երկրներում չեն գտնվի։ Ղոր-ղոր-օլի անունով հայտնի մի տեսակ դանակ են պատրաստում։ Տրապիզոնի կացին անունով հայտնի կացինը այլ երկրներում չկա։ Շատ լավ ընդունելության արժանացած և գովված են նաև սադաֆից պատրաստված սնդուկը, սեղանատախտակը, դնաթը[20], ռիքդանը[21], որոնք միայն Հնդկաստանում և այստեղ են պատրաստում։

Տրապիզոնի ուտելիքներն ու խմիչքները։ Գորշագույն լեռների խաղողի հյութը շատ համեղ է լինում և խմողներին բոլորովին չի գինովցնում։ Երեք անգամ եռացված և թանձրացած կարանֆիլեն[22], միսքեթը[23] շատ համեղ են։ Ուտելիքներից մասնավորապես պտուղները՝ կեռասը, լեհիջան տանձը, բեյ արմուդին (տանձ), գյուլաբի տանձը, սինոբի խնձորը, համրք խաղողը, մյուլքի խաղողը, ֆրենգի խաղողը շատ ընտիր են։ Բադլջան ինջիրի անունով հայտնի թուզը այնքան համեղ է, որ նմանը Նազիլլիում[24] անգամ չի լինում։

Լիմոնը, նարինջը, նուռը, ձիթապտուղը ամենուրեք հայտնի են։

Յոթը տեսակ ձիթապտուղ ունի։ Տրապիզոնի ձիթապտուղի մանր տեսակը՝ դեռ չհասած ուտվում է և սև կեռասի նման է։

Տրապիզոնի խուրմա կոչվածը բնորոշ է այս շրջանի համար։ Փռում չորացնում և ուղարկում են մյուս վիլայեթները։ Երկու-երեք կորիզով շատ համեղ պտուղ է։ Տրապիզոնը ունի բազմատեսակ ծաղիկներ, մասնավորապես, կարմրագույն մի տեսակ մեխակ կա, որը բացված կարմիր վարդի նման նուրբ է և բուրմունքը հիացնում է մարդու։ Ամեն մեկը 5—6 դիրհեմ ծանրություն ունի։

Քաղաքի հիանալի եղանակի և կլիմայի հետևանքով լեռներում տուսախի (շիմշիր), իսկ այգիներում սոճիի և հունական ընկույզի ծառեր են աճում։ Տարօրինակ է և սքանչելիք. նրա (Տրապիզոնի) հարավում գտնվող Էրզրումի լեռներում ձմռան սոսկալի սառնամանիքների ժամանակ այստեղ ծաղկում են վարդ, շահասպրամ և շեփորուկ։ Ձմեռ չի լինում, կամ շատ թեթև է անցնում։ Բնակիչները լավ վարքի տեր, պանդուխտներին սիրող մարդիկ են։ Սակայն չիչո, չըղթան և լեզգի ցեղերի ռայաները վերին աստիճանի կոպիտ են և թշնամաբար տրամադրված։ Այդ ցեղերը ունեն տարբեր բարբառ, խոսքեր ու բառեր, որը բուն Տրապիզոնի ժողովուրդն անգամ չի հասկանում։ Թարգմանության կարիք է զգացվում...

Այստեղի մարդիկ մեծ մասամբ նավաստիներ են։ Ծորոխ գետով գնում են Մեգրելիստան, գերիներ բերում և փող վաստակում։ Այստեղ լավ խարիսխ բռնող մի մեծ նավահանգիստ կա։ Սակայն արևմուտքից բաց է։ Եթե 300 մղոն դեպի արևմուտք գնանք, կհասնենք Ղրիմի Քեֆե[25] բերդի նավահանգստին։

Ձկների լավ տեսակները: Շատ համեղ են լսրեք ձուկը և քեֆալը։ Մեկ թզից ավելի երկար կարմրագլուխ թեքեր ձուկը, ուսկումրը ձուկը և այլ հազարավոր տեսակի ձկներ։ Սակայն լազերը բոլոր այս ձկներից ամենից ավելի սիրում են խամսի ձուկը, որի առևտրի համար պայքարում ու կռվում են։ Այս ձուկը խամսինում[26] երևալու պատճառով կոչվում է խամսի բալըղը։ Խամսիի մասին այսպիսի մի ոտանավոր են ասում*։

---

* Այս ոտանավորը Էվ. Չելեբին գրի է առել Տրապիզոնի բարբառով՝ լազերին հատուկ արտասանությամբ.

طرابزو ندر يريمز، آخجا دوتمز الوموز
خامسى بالوق اولماسه، نيچه اولورنى حالوموز.

Տրապզոնդրր երիմիդ,
Ախչա թութմաղ էլումուղ,
Խամսի փալուք օլմասա՝
Նիջե օլուրթի հալումուղ։

Մեր տեղը Տրապիզոնն է։
Մեր ձեռքը փող չի բռնում։
Եթե խամսի ձուկը չլիներ,
Ի՞նչ կլիներ մեր վիճակը։

Խամսի ձուկը մի թիզ երկարությամբ. բարակ, կապտավուն և արծաթափայլ է։ Այնքան օգտակար է, որ եթե մեկը 7 օր անընդհատ այս ձկով սնվի, նրա սեռական ցանկությունը խիստ կավելանա։ Շատ դյուրամարս է։ Ծանր հիվանդություն կրած մարդը, եթե այս ձուկը ուտի, կառողջանա։ Տան մեջ օձ կամ կարիճ լինելու դեպքում խամսի ձկան գլուխը ծխացնում և փախցնում են նրանց։ Այս ձուկ ուտելը տրապիզոնցիների սովորությունն է։ Նրանից 40 տեսակի կերակուր են պատրաստում՝ խորոված, սուպ, յախնի, բյորեկ, բաքլավա և այլն։ Բացի այդ փիլեքի անունով մի տեսակ կերակուր էլ են պատրաստում։

Տրապիզոնի զբոսավայրերը: Ջղանոսի դռնից դուրս գտնվում է Կավաքի հրապարակը, որտեղ արձակուրդի օրերին փաշաները զինվորների հետ տեգ (ջիրիտ)[27] են խաղում։ Հրապարակը շատ ընդարձակ է, կենտրոնում երեք հարկանի իրար միացած նավակայմեր են տնկված, որի գագաթին մի ոսկեզօծ գնդակ կա. խաղի սիրահար սիփահիները վազեցնում են իրենց ձիերը և այդ գնդակին նշան բռնում։

Խոշ Օղլան գետը սկիզբ առնելով Էրզրումի էյալեթի Քերեքտե նահիյեի Յըլան Մեսջիդի անունով հայտնի լեռան ստորոտից, ոռոգում է մի շարք գյուղերի և գյուղաքաղաքների այգիներն ու պարտեզները և Տրապիզոնի մոտ՝ թափվում է Սև ծովը։ Գետի ակունքի մոտ, մի լեռան վրա՝ Խոշ Օղլան անունով մի հովիվ բերդ է կառուցել, որը գտնվում է Տրապիզոնի հարավում, երկու մենզիլ հեռավորության վրա։ Այդ բերդի տիրոջ անունով էլ գետը կոչվում է Խոշ Օղլանի գետ։ Տրապիզոնցիները այդ լեռան Աղաչ բաշի են ասում։ Տրապիզոնից Բայբուրդ գնացողները այս լեռով են անցնում. ուրիշ ճանապարհ չկա...

Այս քաղաքում մի քանի ամիս զբոսնելով ու զվարճանալով, բոլոր հայտնի ուլեմաների ու բարեպաշտների հետ սրտակից զրույցներ ունեցանք և ըստ մեր ցանկության ման եկանք ու դիտեցինք քաղաքը։ Հնարավորին չափ ծանոթացանք քաղաքի վիճակի հետ։ Քեթենջի Օմեր փաշայի քեթխուդան՝ Օմեր աղան, իբրև պատգամավոր, Մեգրելիստանի վիլայեթին նվերներ էր տանելու։ Յովաստս էլ նրան ընկերացավ։

(էջ 83—94)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԵԳՐԵԼԻՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ

Լազերի մենգիսեյե կոչված 20 նավակներով, 200 հոգով՝ զինված վիճակում, դուրս եկանք Տրապիզոնից և աստծուն ապավինելով, նավարկեցինք հյուսիս և հասանք Դեյիրման Դերե նավահանգիստը, որը Տրապիզոնից ոչ հեռու ընկած մեծ նավահանգիստ է։ Նորից դեպի հյուսիս շարժվելով, հասանք Շանա գյուղը։ Բոլոր լեռները և քարերը ծածկված են կաղնու անտառներով։ Շանայի կաղինը ամենուրեք հայտնի է։ Այստեղից գնացինք Սյուրմենե։

Սյուրմենե բերդի բնութագիրը: *Սա Տրապիզոնին ենթակա է։ Գրավել է Ֆաթիհ Ղազին։ Բերդը կառուցել են հույները, նրանցից գրավել է Հերսեք Զադե Ահմեդ փաշան։ Ունի սուբաշի, 150 ակչեի կադի. բերդակալ և զինվորներ։ Սակայն ավազանի չունի։ Պաշտպանված է վեց քամիներից, լավ խարիսխ է բռնում և շատ մեծ նավահանգիստ ունի։ Սակայն արևմտյան և հյուսիսային քամիներից այնքան էլ ապահով չէ, այնպես որ 3—4 խարիսխ պետք է գցել։ Այստեղից առաջանալով հասանք Մահնոզ նահիյեն։ Սա էլ Տրապիզոնի սահմաններում է և 60 բարեշեն ու հարուստ գյուղեր ունի։ Լեռները ծածկված են պիստակի (ֆըսթըք) և տուսախի (շիմշիր) ծառերով։ Այստեղից դուրս գալով գնացինք Ֆենլի Փերևելի գյուղաքաղաքը։ Տրապիզոնին ենթակա մեծ նահիյե է, ժողովուրդն ամբողջապես չիչոններ են (ցեղ)։ Այստեղից մեկնեցինք դեպի Ռիզե և այնտեղից էլ Խուբան գյուղաքաղաքը։ Սա, Տրապիզոնի հողում, ծովեզերքում ընկած այգիներով ու պարտեզներով գեղեցիկ մի վայր է։ Ժողովուրդը ամբողջովին չլթա լազեր են, մի մասն էլ հույներ։ Այստեղից առաջանալով հասանք Գունիայի բերդը։*

Ամրակուռ Գունիա բերդի բնութագիրը: *Տրապիզոնի էյալեթում է և Բաթումի սանջաքում։ Փաշան առանձին խասերի, 15 զեամեթի ու 53 թիմարի տեր է։ Ունի չերիբաշի և ալայի բեյ։ Ըստ օրենքի, պատերազմի ժամանակ՝ ջեբելուների հետ միասին, 800 զինվոր է տալիս։ Բացի այդ, ինքը՝ փաշան, առանձին 300 զինվոր ունի։ Մեգրելիստանի ծայրագույն սահմանը լինելով, այդ զինվորները արշավանքի համար չեն նախատեսնված, նրանք պաշտպանում են բերդը։ Ունի բերդակալ և մոտ 500 բերդապահ զինվոր, մեկ օդա բարձր Դերգահի ենիչերիներ. 800 զինվորներ և չորբաջիներ[28] գիշեր-ցերեկ պահակություն են անում։ 150 ակչեի գավառ է (կազա). նահիյեներում ապրում են ապստամբ կիկո լազերը։ Կադին տարեկան 500*

ղուրուշի եկամուտ ունի, բայց 700 ղուրուշի։ Բերդը ծովեզերքում ընկած խիստ ամրակուռ շինություն է... Քաղաքը գտնվում է Ճորոխ գետի եզերքում։

Ջորուխ (Ճորոխ) գետը: *Ջորուխը աղավաղված չափ-ռուս բառն է, նշանակում է* հոգու գետ: *Հավաքվում է Էրզրումի արևմուտքում գտնվող Ջաղնի Գյոլի-Հիսարի, Շաբին-Կարահիսարի լեռներից և անցնում Բայբուրդ քաղաքով։ Երկու կողմում բարեշեն տներ կան։ Այնուհետև հոսում է Բայբուրդի կողքով և Լազգե վիլայեթի սահմաններում ոռոգում մի շարք գյուղերի ու քաղաքների այգիներն ու պարտեզները և Գունիա բերդի մոտ թափվում Սև ծովը։ Այս մեծ գետը անանցանելի է և կամուրջ չի պահում։ Լազերը բազմաթիվ նավակներով այս գետով նավարկում են դեպի վեր՝ արևելք ու դեպի Մեգրելիստանի սահմանները և աղ, երկաթ, գործիքներ, զենքեր են բերում և Մեգրելիստանում, Վրաստանում փոխանակում տոսախի (շիմշիր), մեղրի, զտված մեղրի, գեղեցիկ տղա ու աղջիկ ստրուկների հետ և առևտուր անում։*

Քաղաքը դիտելուց հետո, Կեմրեք կոչված վայրից Ջորուխ գետով մեկ օր դժվարությամբ նավարկելով հասանք Մեգրելիստանի սահմանը։ Այս վայրը Խոշ-Ադա անունով մի բեյի սահմանն է։ Լեռները ամբողջովին տոսախի ծառերով են ծածկված։ Բարեշեն և ընկուզենիների այգիներով հարուստ գյուղեր կան։ Մի գիշեր քնեցինք բեյի գյուղում։ Մեզ շատ մեծ հարգանք և պատիվ տրվեց։ Այստեղից առաջանալով, Մեգրելիստանի վիլայեթում դիտեցինք 70 քաղաքանման գյուղեր և նորից վերադարձանք Գունիա բերդը։ Այստեղից բոլոր ընկերների հետ միասին Տրապիզոն եկանք։ Նվաստս, Գունիայի աղայի՝ չիչեկչի բաշիի օդայի (զորամաս) հետ միասին նշանակվեցինք Ազաքի արշավանքին։

Ազաֆի արշավանքին[29] գնալիս Աբազայի վիլայեթում մեր իջեւանած մենզիլները: *Տասը լազ մենզեսելե նավակներով 300-ի չափ հրացանաձիգ ենիչերիներ և նվաստս՝ 5 վրացի ղուլամների հետ միասին, ճանապարհ ընկանք։*

Մենզեսելե նավակները: *Այս նավակները շինում են Ջորուխ գետի եզերքին աճող կոպիտ կաղամախի ծառերի երեք կտորից։ Տախտակներից մեկը, իբրև տաշտ տակի մասն է, մի-մի տախտակ էլ կողերին են։ Տախտակները շատ մեծ են։ Նավերի կողերը հյուսված են երկու մատի հաստություն ունեցող եղեգնից և խսիրի խոտերից։ Ծովում, փոթորիկի ժամանակ ջուրը այդ եղեգների արանքից նավի մեջ է լցվում, այնպես, որ այս նավերը փոթորիկի ժամանակ խցա-*

նի նման լողում են Սև ծովի վրա։ Առաջն ու հետևը միօրինակ, տաշտանման նավակներ են։ Այս ծովերում այդ նավակները հայտնի են մենգեսելե անունով, հարյուր մարդու տարողություն ունեն։ Մեր բոլոր գործերն աստծո կամքին հանձնելով, այս նավակներով, նպաստավոր եղանակին, հարավային քամու օգնությամբ անցանք Ջորուխ գետը։ Նորից վերադարձանք Մեգրելիստանի սահմանը և հասանք Սուկարի նավահանգիստը։ Սիվրի-խաքելե նավամատույցում մի ավերակ ջրաղաց կա։ Կա նաև Ծավիսեն նավահանգիստ և մի ավերակ բերդ։ Մեգրել հովիվները իրենց ոչխարներով ու այծերովը այս բերդում են ձմեռում։ Այստեղից գնացինք Ռաբչե նավահանգիստը, որն ունի մեծ և ավերակ մի բերդ։ Այս բոլոր հինգ նավահանգիստները գտնվում են Մեգրելիստանի սահմանում։ Բարեշեն վայրեր չկան։ Միայն հուլիսին և հնձի ժամանակ վաճառականների նավերը այստեղ են բերում աղ, ամանեղեն, զենքեր և փոխանակում են աղջիկների ու տղաների հետ։ Լեռներում այգիներով և պարտեզներով բարեշեն, բայց անհնազանդ մեգրելական գյուղեր կան։ Անթիվ զինվորներ էլ որ լինեն, անհնար է բարձրանալ այդ լեռները։ 40—50 հազարի չափ հրացանաձիգ ժողովուրդ ունի։ Գոնիայից 100 մղոն հեռավորության վրա ընկած այս 5 նավահանգիստները մի ցերեկվա և գիշերվա ընթացքում անցնելով՝ հաջորդ օրը հասանք Ֆաշե[30] գետին։

Ֆաշե գետը: Սա Դանուբի պես լայն գետ է. որոշ տեղերում լայնությունը մի մղոնի է հասնում։ Ամենանեղ տեղը կես մղոն է։ Խորությունը հասնում է 8—10 գրկաչափի (կուլաչ)։ Մեգրելիստան և Աբազա վիլայեթներ գնացող նավերը այս գետով են նավարկում և 100 մղոնով վեր են բարձրանում։ Գետաբերանը գտնվում է Սև ծովի հյուսիսային (փոյրազ) վերջավորության մի ծովախորշում։ Ստամբուլից մինչև այստեղ 1380 մղոն է։ Սև ծովի մի ծայրն այս գետն է։ Գետը կազմվում է Էլբրուս (Էլբիզ), Օբոր, Սետեշե լեռներից հավաքվող գետակներից և անցնելով Մեգրելիստանի, Վրաստանի, Դաղստանի, Կաբարթայի և Չերքեզիստանի միջով ու հոսելով դեպի հարավ՝ Մեգրելիստանի և Աբազայի միջով, թափվում է ծովը։ Գետի արևելքում գտնվում են մեգրելական ապստամբ գյուղեր։ Արևմուտքում՝ աբազաների չաչեր ցեղի երկիրն է։ Երկու կողմումն էլ թփուտներ և անտառներ կան։ Մեգրելներից իրեր են գողանում և վաճառում առևտրականներին։ Մի քանի պատմագիրներ Ֆաշե գետի մասին ասում են, որ այդ Խազերի ծովի, կամ Շիրվան, Գիլան, Դեմիր Կափու ծովերի ճյուղն է, որ թափվում է Սև ծովը։

Սակայն այս Ֆաշե գետը անմահական ջրի նման քաղցր է, իսկ Գիլանի ծովը Սև ծովից ավելի փոքր մի ծով է, որի ջուրը օձի թույնի նման աղի և լեղի է։ Սև ծովի և Խազերի ծովի միջև եղած տարածությունը 15 կոնաք է։ Սակայն հավանական է, որ Խազերի ծովը Էլբրուս լեռան տակից ճյուղավորվելով, ստորերկրյա անցնում և հոսում է Սև ծովը։ Սակայն քաղցրության և աղիության տեսակետից այդ ենթադրությունը անհավանական է։ Անցնելով այս գետից, ճանապարհ ընկանք դեպի արևմուտք։ Ամբողջ մի օր Սև ծովի եզերքով գնալով, հասանք Աբազա[31] վիլայեթը։

(էջ 94—93)

Ճանճազե վիլայեթի, այսինքն Աբազայի երկրի բնութագիրը: *Ամբողջությամբ Սև ծովի հյուսիսային եզերքում ընկած Աբազայի երկիրը սկիզբ է առնում Ֆաշե գետից, իսկ վերջին սահմանը՝ արևմուտքում, 42 կոնաք հեռավորության վրա ընկած Քեֆեի էյալեթի սահմաններում գտնվող Թամանի կղզու (թերակղզու) մոտի Անապա բերդի լիմանն է։*

Այնուհետև Էվ. Չելեբին աբխազական ցեղի ծագումը բացատրելիս, մանրամասնորեն կանգ է առնում ազգերի և ցեղերի ծագման մասին գոյություն ունեցող մի շարք ավանդությունների վրա։ Վերջում ցույց է տալիս, որ աբազաները արաբական ծագում ունեն և կուրեյշական[32] ցեղից են։ «...Չերքեզները, աբազանները, լազերը, առնաուտները, Ումանի արաբները, Քիսի արաբները, բոլորը եղբոր զավակներ, կուրեյշիներ են»,— եզրակացնում է Էվ. Չելեբին։

(էջ 98—102)

Աբազայի վիլայեթում ապրող բարեկեցիկ աշիրեթները: *Այս հատվածում Էվ. Չելեբին հիշատակում և նկարագրում է բոլոր աբխազական աշիրեթները՝ Չաչերը, Արլանը, Մեծ Չանդարը, Քեզիլերը, Արթը, Սետեշեն, Կամըշը, Մուզիլերը, Ջումբերը, Բոզոտոկը, Օտովիշը, Աչղիլին, Սողուք-սուն և Կութասը։ Այս բոլոր աշիրեթները ծովեզերքում են։ Բացի այդ, լեռներում էլ ապրում են «տասը ապստամբ աշիրեթներ»,— գրում է Չելեբին։ Այս հաշվով ծովեզերքում և լեռներում 25 աբխազական աշիրեթներ են եղել։ Այնուհետև, ուղեգիրը նմուշներ է բերում աբխազական լեզվից։*

*Էվ. Չելեբին Աբխազիայից գնում է Անապայի բերդը, իսկ այնտեղից Ազաքի բերդը։ Այստեղից գնում է Ղրիմ, որտեղից Սև ծովով դեպի Ստամբուլ նավարկելիս Էվ. Չելեբին և իր ընկերները սոսկալի նավաբեկման են ենթարկվում. նավը ընկղմվում է և մի քանի հարյուր ուղևորներ խեղդվում են։ Էվ. Չելեբին երեք գիշեր ու ցերեկ՝ մի տախտակի կպած մաքառում է փոթորիկի արհավիրքների դեմ և դուրս գալիս Սիլիսթրեի ծովափը։ Այստեղից գնում է Ստամբուլ։ Այնտեղ որոշ ժամանակ իմամի պաշտոն է վարում։ 1050 թվականին մասնակցում է Մալթայի դեմ կազ*մակերպված նվիրական պատերազմին: *Նույն թվականին՝ մաքսատան քարտուղարի պաշտոնով, գնում է Էրզրում։*

(էջ 102—166)

1050 (1640) ԹՎԱԿԱՆԻ ՌԵՋԵԲ ԱՄՍԻ[33] ՍԿԶԲԻՆ ԴԵՖԹԵՐԴԱՐ-ԶԱԴԵ ՄՈՒՀԱՄՄԵԴ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ ՑԱՄԱՔՈՎ ԷՐԶՐՈՒՄԻ ԷՅԱԼԵԹԸ ԳՆԱԼԻՍ ՄԵՐ ԴԻՏԱԾ ՄԵՆԶԻԼՆԵՐԸ, ԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԵԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Այս խորագրի տակ Էվ. Չելեբին նկարագրում է իր ուղևորությունը Ստամբուլից Էրզրում։ Նա անցնում է Սկյուդարով, Կեքրոզեով, Բոլուով, Օսմանջըքով և այլ վայրերով, որոնց մասին տալիս է պատմական և տեղագրական տեղեկություններ։ Այնուհետև կանգ է առնում նաև Ամասիա քաղաքում։

Ամասիա բերդի բնութագիրը: *Ասում են այս բերդը հնագույն ժամանակներում կառուցվել է Ամելեքե[34] ցեղի կողմից։ Հարյուրավոր մելիքներից մնացած ռումական (հունական) բերդ է։ Մի քանի պատմագիրներ ասում են, որ այս բերդը կառուցել է լեռներ խորտակող Ֆերհադը։ Հետագայում, 476 (1083) թվականին Ալ-Դանիշմենտներից՝ սուլթան Մելիք Ղազին, գրավել է ռումերից։ Իրանի Ադրբեջանի փադիշահները քանիցս պաշարել են այս բերդը, սակայն չեն կարողացել գրավել։ Հետո Դանիշմենտներից որոշ ժամանակով անցել է սելջուկների ձեռքը, իսկ այս վերջիններից՝ Թիմուրի օրոք, օսմանցիներին։ (Սուլթան) Յըլդըրըմ Բայազիդ խանը այս բերդը գրավելուց հետո, Թիմուրի չարագործություններից ապահով լինելու համար այնտեղ իշխող է նշանակում իր շեհզադեին՝ Իսա Չելեբիին։ Դար-ուլ-մելիք[35] և սուլթանների քաղաք լինելով, այստեղ խութբե է կարդացվել և փող է կտրվել[36], քանի որ շրջակա լեռներում և քաղաքում արծաթի հանքեր կան։ Այստեղ կառուցվել են փադիշահներին բնորոշ խաս սարայներ[37] և դրախտանման այգիներ։ Այսպիսով, նա եղել է Ալ-Օսմանի մայրաքաղաքներից։ Էբու-էլ-Ֆեթհի ժամանակ գրանցված է էյալեթի սահմաններում իբրև Ամասիայի բեյի կենտրոն։ Ամասիան խոշոր և կարևոր քաղաք լինելով, մի քանի անգամ արփալըքի կարգով շնորհվել է երեք թուղավոր վեզիրներին։ Փադիշահական կանոնով փաշայի կայսերական խասը 200.000 ակչե է։ Սանջաքում 19 զեամեթ և 42 թիմար կա։ Ունի ալայի բեյ և չերիբաշի, բոլորը պատերազմ գնացող զինված և ընտիր զինվորներ են։ 300 ակչեի աստիճանով կադա է։ Բարեշեն է։ Իյնե-բազարի, Ակ-դաղ, Կեֆալե անուններով նահիյեները խիստ բարեշեն են։ Սանջաքում 10 կադա կա՝ Քյոփրյու, Սեմրե, Զ'ւյթուն, Գյումյուշ, Բուլուկ, Մերզիֆուն (Մարզվան), Քերքևազ, Լատիք, Վեբայ, Զենուն-Արադ։ Ամասիայի կադին տարեկան 7000 ղուրուշի եկամուտ ունի, իսկ փաշան՝ արդարադատության կարգով, 70 հազար ղուրուշի եկամուտ։ Փաշայի խասը 6 սուբաշիություն է. դրանք*

են՝ Բեյ-բազար, Վերայ, Իյնե-բազարի, Ակ-դաղ, Սուլու, Օվա։ Ունի նաև խասերի սուբաշի, մյուֆթի, Նագիբ-ուլ-էշրեֆ, ենիչերիների սերդար, սիփահիի քեթխուդա, այաններ և էշրաֆներ, ուլեմաներ և սյուլեհաներ[38], հարուստ վաճառականներ։ Ազնվականներից՝ 500 ակչեի բազմաթիվ մոլլաներ, բեյեր, բեյզադեներ, փաշազադեներ կան։

Ամասիա բերդի գովաբանությունը: [Ամասիայի բերդը] դեպի երկինքն է խոյացած. Նրա բարձրագագաթ աշտարակներն ու պատնեշները մշտապես մխրճված են ամպերի մեջ։ Պարզ եղանակին, կեսօրին, երևում են բերդի ջամիների մինարեները։ Բերդի շրջագծի երկարությունը 9060 քայլաչափ է։ Բերդը հնգանկյունի է, Նրա անկյունները կապված են, քարաշեն է և ամրակուռ։ Ունի 41 աշտարակ և 800 պատնեշ։ Բերդում եղած տները ինձ հայտնի չեն, սակայն հնուց կառուցված պալատները, ռազմամթերանոցը, հացահատիկների պահեստը և ջրի ավազանները գեղեցիկ են։ Ջրի ճանապարհները իջնում են մինչև ներքևից հոսող գետը։ Քառակի երկաթե դուռը նայում է դեպի արևելք։ Բերդումն է գտնվում (սուլթան) Յըլդըրըմ խանի ջամին։ Ունի նաև ստորերկրյա դժոխանման մի բանտ (զընդան)։ Բերդում կան մոտ 70 մեծ և փոքր թնդանոթներ։ Երկրի ներքին մասում գտնվելու պատճառով բալյեմեզ թնդանոթներ չկան։ Բերդի տակը բազմաթիվ քարայրներ կան։ Ջելալիներ[39] Կարա Յազըջիի և Կարա Սայիդի ժամանակ վիլայեթի այաններն ու էշրաֆները իրենց բոլոր թանկարժեք իրերն ու ապրանքները պահել են այս քարայրների մեջ։ Իրենք ևս՝ իրենց ընտանիքներով ու երեխաներով, ապահով կերպով թաքնվել են այստեղ։ Խավարյալ Թիմուրը այս բերդը 7 ամիս պաշարել և ուզել է գրավել, բայց չի հաջողվել։ Այս վայրը թեև երկրի ներքին մասումն է, սակայն որպեսզի ջելալիների կողմից պաշարման չենթարկվի, բերդակալ աղան և բերդապահ զինվորները մշտապես զինված և պատրաստ վիճակումն են։

Քաղաքի ճիշտ մեջտեղից հոսող Թուզանլի գետի ափին գտնըվող ստորին բերդը ցածր պատերով քարաշեն բերդ է։ Տարածությունը ինձ հայտնի չէ։ Ունի երեք դուռ. դրանք են դեպի հարավ բացվող Կարանլըք կափուսու [դուռը], նորից դեպի հարավ՝ Միտենուս կափուսուն, որը Բայազիդ խանի (սուլթան) կամրջի ճանապարհն է. արևմուտքում գտնվող Մեյդան կափուսուն գտնվում է մեծ և տախտակաշեն կամրջի դիմաց, որտեղից գնում են դեպի քաղաքի Կյոք Մեդրեսեն։ Արևելքում գտնվում է Սերկիչի կամրջի դու-

որ, որտեղից գնում են դեպի քաղաքի ղարիբների ջամին։ Այս բերդի շրջակայքում քարեշեն պալատներ և 600 տուն կա, շուկան փոքր է, ունի նաև ջամի։

Բերդի կողքով հոսող Թուզանլի գետը, Թոքաթից վերև գտնըվող նույն սանջաքի լեռներից՝ Թուզանլի սարից սկիզբ առնելով, անցնում է Թոքաթի բերդի կողքով և մի շարք այլ վայրերով, ապա Ամասիայով... Ամասիայից հետո այս գետը ստանում է Չարշենբե անունը և անցնելով մի շարք գյուղերով ու քաղաքներով, ոռոգում է այգիներ, պարտեզներ ու արտեր և Սամսունի բերդի արևելքում թափվում Սև ծովը։ Չարշենբե գյուղաքաղաքի մոտ այս գետին են խառնըվում բազմաթիվ ջրեր։ Նիքհիսար բերդի մոտով հոսող Կերքյոք[40] գետը Բողազքեսենում նույնպես միանում է այս մեծ գետին։ Այդ գետի վրա կառուցված է սուլթան Բայազիդի մեծ և հոյակապ կամուրջը։ Ամասիան՝ գետի երկու կողմում, շարք-շարք լեռների և ձորերի միջև ընկած մեծ քաղաք է։ Գետը հարավից մտնում է քաղաք, ոռոգում հազարավոր այգիներ ու պարտեզներ, մի քանի ջրի անիվներ դարձնում և ապա հոսում դեպի հյուսիս։ Օսմանյան երկրում նշանավոր են Համա, Ադանա և Ամասիա քաղաքների ջրի անիվները։ Գետով երկու՝ արևելյան և արևմտյան, մասերի բաժանված Ամասիա քաղաքը ունի 48 իսլամական և 5 քրիստոնյա թաղամաս։ Քաղաքում կան մեծ ու փոքր մոտ 5000 քարեշեն տներ և դղյակներ, որոնցից երկուսը բնորոշ են փադիշահներին, այսինքն սուլթանական դղյակներ են։ Այս դղյակները գտնվում են գետի եզերքին, գեղազարդված են դրախտանման այգիներով ու պարտեզներով, վարդերով ու շուշաններով։ Բազմապիսի պտղատու ծառերով հարուստ, աննման դղյակներ են։ Փաշայի դղյակը կցված է Մուհամմեդ փաշայի ջամիին։ Միջնաբերդումն են սուլթան Բայազիդի, Շեմսի փաշազադե Ահմեդ փաշայի, խոջա Ահմեդ փաշայի, Կելտիք Քանլի Ալի փաշայի դղյակները։ Բոլոր դղյակները ծածկված են կղմինդրներով։ Բացի դրանցից այլ դղյակներ էլ կան, որոնց մասին կարիք չկա խոսել, որովհետև անկարևոր բաների մասին գրելն ու կարդալը ձանձրալի է։

Ամասիայի ջամիների մասին։ Ամենից առաջ պետք է հիշել սուլթան Բայազիդ Վելիի ջամին։ Բայազիդ խանը իր շեհզադեության ժամանակ առաջին անգամ Տրապիզոնում, այնուհետև Ամասիայում եղել է վալի։ Այստեղից գնում է պետության մայրաքաղաքը, իր հոր Ֆաթիհ սուլթան Մուհամմեդ խանի մոտ։ Վերջինիս Մալթեփեում մահանալուց հետո, փադիշահ է դառնում։ «Ամասիայում

ես իշխանություն վարեցի» ասելով, ժողովրդին ազատում է բոլոր տեսակի սովորական հարկերից և այս ջամին կառուցել տալիս։ Շատ հիանալի ջամի է. երկարությունը և լայնությունը 100 քայլ է։ Միհրաբն ու մինբերը, մյուեզզինի վայրը շատ գեղարվեստական են։ Միակտուր գմբեթը շատ մեծ չէ... կառուցվել է 893 (1487) թվականին։

Այնուհետև էվ. Չելեբին թվում է Ամասիայի բազմաթիվ ջամիներն ու մեսջիտները, մեդրեսեները, դերվիշների թեքյեները, քարվանսարայները, խաները և բաղնիքները։

Շուկաներն ու բազարները: Մոտ 160 տարբեր տեսակի էսնաֆներ կան, որոնք ունեն 1060 խանութ։ Շուկաները, ընդհանրապես, Բրուսայի շուկաների նման քարակերտ և ամուր են։ Բերդանման, գեղեցիկ գմբեթներով և չորս երկաթյա դռներով բեդիստանը[41] գտնվում է Բայազիդի ջամիի կողմը։

Թաղամասերը: Կա 48 թաղամաս. բերդի կողմից Ջամլարի թաղն է, դիմացից՝ Բայազիդ փաշայի, Մուհամմեդ փաշայի, Դղյակի և Սևաչեի թաղերն են։ Վերջինիս բնակիչները հայեր են։ Ապա Սոֆիների, Ջոփլիջայի թաղերն են։ Բերդի տակը՝ Սերգեզի Դերե և Կազիի կամրջի, Թեմնայի, Կըլչիի, Իկաչըքի թաղերն են և այլն։

Այնուհետև, էվ. Չելեբին թվում է քաղաքի նշանավոր մարդկանց անունները, այանները, էշրաֆները և այլն։

Քաղաքի բնակիչների դեմքի գույնի և աշխատանքի մասին: Ժողովուրդը ընդհանրապես զբոսասեր և զվարթ լինելու պատճառով, դեմքի գույնը մշտապես կարմրավուն է։ Բնակիչների մի մասը փաշա, բեյ, զեամեթի և թիմարի տերեր և պաշտոնյաներ են, մի մասն էլ՝ ուլեմաներ, կազիներ, շեյխեր, խաթիբներ, մի մասը՝ վաճառականներ ու արհեստավորներ։

Ուտելիքներն ու խմելիքները: Կազլե նահիյեից ստացվում է դանտեր դնե դիշի ցորենը, որից պատրաստում են սպիտակ լավաշ և այլ տեսակի հացեր։ Կա 40 տեսակ տանձ, կարմիր կեռաս, 7 տեսակ խաղող, թութ, հայտնի է 7 տեսակ սերկևիլ։ Ամբողջ աշխարհում հայտնի է լավ մշակված սերկևիլը, որից նվերներ են ուղարկում փադիշահներին։ Խմիչքներից հայտնի են անուշաբույր և համեղ փեքմեզի շերբեթը, սերկևիլի շերբեթը, որը շատ օգտակար է բաղնիքների տաքության ժամանակ։ Խաղողի հյութը շատ ուժեղ է։ Թթի գինին՝ յոլտըֆլի գինին իբրև նվեր ուղարկվում է մինչև Աջեմի երկիրը։

Արհեստները: *Բոլոր էսնաֆներում բազմաթիվ հայտնի վարպետներ կան, բայց ամենից ավելի նշանավոր են դերձակները և քամբակ գզողները... երիտասարդ սափրիչները, հալվաջիները շատ հայտնի արհեստավորներ են։*

Անցյալի հուշարձանը: *Ամալեքեի ժամանակ Թուզանլի գետը այս քաղաքի կենտրոնով չի հոսել։ Ֆերհադ անունով մի երիտասարդ, սիրահարվելով Շիրին անունով մի աղջկա, իր սիրուց մղված գետը հոսեցրել է քաղաքի կենտրոնով. այդ պատճառով էլ շրջակա լեռները կոչվում են Ֆերհադի լեռներ։ Ֆերհադի բրիչների հետքերը, մինչև հիմա էլ պարզ երևում են քաղաքի արևելքում գտնվող ժայռերի վրա։ Քաղաքի բոլոր աղբյուրների ջրերը այս ժայռից են հոսում։*

Եղանակի և օդի մեղմությունը: *Քաղաքը գտնվում է հինգերորդ կլիմայում, գետի եզերքին, բլուրների և ձորերի միջև, այդ պատճառով էլ եղանակն ու օդը այնքան մեղմ են, որ երկու կողմերի լեռները ամբողջովին այգիներով են ծածկված. շատ բերքառատ վայր է։ Տների պատշգամբները նայում են դեպի արևմուտք և հյուսիս. ձմեռը բավականին խիստ է լինում։ Աղբյուրները, որոնք գալիս են վերին Ֆերհադի լեռներից, հիանալի ջրեր ունեն... Կան մոտ 70 զբոսավայրեր։ Սրանցից ամենանշանավորը Քանլի փունարն է*[42]*։ Այստեղ մի կախարդ կին Ֆերհադին ասել է, թե «Շիրինը մեռավ, էլ ինչի՞ համար ես աշխատում» և տալիս է Շիրինի լոքման*[43]*։ Ֆերհադը իր ձեռքում եղած բրիչը վեր է գցում և գլուխը պահում տակը։ Բրիչի պատճառած վերքից Ֆերհադը մեռնում է։ Ահա այդ դեպքի կապակցությամբ էլ այս աղբյուրը կոչվել է Քանլի փունար (արյունոտ աղբյուր)։*

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Ամասիայի սուլթանական և իսլամական ուխտատեղիները։ Ամասիայից նա ուղևորվում է Նիքսարի բերդը, որտեղից գնում է Գյոլի Հիսար բերդը. այնուհետև Շաբին Կարահիսարը չհասած, հիշատակում է Էնտեր գյուղը, որը «Շաբին Կարահիսարի սահմաններում,— գրում է էվ. Չելեբին,— Ակշարա դաշտում 150 բարեշեն տներով հայկական գյուղ և զեամեթ է»։ Ճանապարհին հանդիպում է նաև իսլամ և հայ բնակիչներով Կազի Օզլի և Կարաջալար գյուղերին. այնուհետև անցնում է Սարիղելեղ, Քերմլի բարեշեն գյուղերով, որոնք նույնպես հայ ու իսլամ բնակիչներ են ունեցել։

Շարունակելով իր ուղևորությունը, էվ. Չելեբին անցնում է բազմաթիվ գյուղերով և հասնում Թերջանի դաշտը։ Նա գրում է.

Այս դաշտը պատերազմական վայր է եղել, ներկայումս գյուղացիները հողը հերկելիս, գետնից մարդկանց ոսկորներ են դուրս բերում, ինչպես նաև շատ իրեր և հարստություններ։

---

* էվ. Չելեբի, *Ուղեգրություն, հատ. II, էջ 199—200։*

Գյուղերի շարքում նա հիշատակում է նաև Թերջանլի Ալի Աղա գյուղը, իբրև բարեշեն հայկական և իսլամական գյուղ։ Այդտեղից մեկնում է և իջևանում Մամախաթուն գյուղում, որն «Էրզրումի նահիյեում, ընդարձակ և բլրավոր դաշտում ընկած բարեշեն մուսուլման գյուղ է, ազատ է և Ալա աղայի զեամեթն է»։ Այստեղից մեկնում ու անցնում է Հերսի անունով 150 տուն բնակչությամբ հայկական գյուղով, որը Էրզրումի դաշտի արևմտյան վերջավորության վրա է գտնվում։ Ապա գնում է Ըլըջա[44] գյուղը։*

Ըլըջայի ջրի բնութագիրը: *Էրզրումի կաղայի արևմտյան կողմում արտակարգ մի ջերմուկ կա։ Ամեն տարի այս ջերմուկում անպայման մի մարդ պետք է խեղդվի։ Շատ օգտակար է։ Ջուրը տաք է, բայց երբ սառը ջուր են խառնում՝ բարեխառն է դառնում։ Շատ օգտակար է բորոտություն հիվանդության դեմ։ Նախորդ փադիշահներից մեկը այս ջերմուկի վրա կառուցել է տվել մի մեծ կամար և ապակիներով ծածկված մի ավազան։*

Օդն ու ջուրը հիանալի են։

*Ինչպես վերևում նշվեց էվ. Չելեբին Էրզրում էր եկել մաքսատան քարտուղարի ու նեդիմի[45] պաշտոնով։ Այս առթիվ նա գրում է. «Երբեմն նեդիմության և երբեմն էլ քարտուղարության պաշտոնով զբաղվելու հետ մեկտեղ, հնարավորին չափ, հետամուտ եղա Էրզրումի վիճակի հետ ծանոթանալու և տեղեկություններ ձեռք բերելու գործին. աչքով անցկացրի բոլոր օրինագրքերը և դեֆթերխանեի տոմարները (սիջիլլաթ)»***։*

(*էջ 183—205*)

ԲԱԽՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ, ԱՄՐԱԿՈՒՌ ԲԵՐԴ՝ ԷՐՁԵՆԻ ՌՈՒՄ ՔԱՂԱՔԻ, ԱՅՍԻՆՔՆ ԷՐԶՐՈՒՄԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Ոմանք անվանում են Էրզրում***։ Ադրբեջանին սահմանակից մի ընդարձակ էյալեթ է։ Մի քանի պատմագիրների ասելով Նաշիրվան Ադիլն է կառուցել. սակայն ճիշտն այն է, որ կառուցվել է Ակչակոյունլի[46] փադիշահներից մեկի՝ Էրզեն Բայ բին-Սոկթար-բին Կյունդուզ Բայի կողմից։ Սրա պապերը եկել են Մահանի երկրից, որոնք Վանա ծովի եզերքում կառուցել են Ախլաթի բերդը և այնտեղ բնակվել։ Էրզեն Բայի բոլոր պապերը ներկայումս թաղված են Ախլաթում։ Ալ-Օսմանի նվիրական նախնիները՝ Էրթուղրուլը և Սուլեյման Շահը, այս Ախլաթի փադիշահների ցեղից են։ Հետագայում*

---

* Էվ. Չելեբի, *հատ. II, էջ 202։*
** *Նույն տեղում, էջ 205։*
*** *Նույն տեղում, էջ 205։*

էրզրում քաղաքը և Ադրբեջանը անցել են Ուզուն Հասանի ձեռքը, որը կառուցել է իր ամրությամբ հայտնի Հասան Կալեսին։ Հետո, երբ Ֆաթիհը գրավում է Ստամբուլը, նա (Ուզուն Հասան) նախանձում է և տիրանալով Ալ-Օսմանի որոշ սահմաններին, սկսում է խաղաղությանը հակառակ քայլեր կատարել։ Իսկ Էբու-էլ-Ֆեթհը ռումերից գրավելով Տրապիզոնի բերդը և նավատորմով մեծ քանակությամբ զինվորներ բերելով, Թերջանի դաշտում, 866 (1561) թվականին իր 300 հազար զինվորներով Ուզուն Հասանին պարտության է մատնում։

Փադիշահի կողմից էրզրումի վեզիրի խասը 1.914.600 ակչե է։ Էյալեթը ունի 12 սանջաք, խազինեի դեֆթերդար, դեֆթերի քեթխուդա, թիմարի դեֆթերդար, չավուշների քեթխուդա, չավուշների էմին։ Ունի նաև ալայի բեյ և չերիբաշի։ Սանջաքներն են՝ Կարահիսար-ի Շարքի, Կղի, Բասեն, Իսպիր, Խնուս, Մալազկերտ, Թեքման, Կուփջան, Թորթում, Մժնկերտ, Մամրովան (Մամրվան), էրզրում։ էրզրումը փաշայի սանջաքն է։ Մալ դեֆթերդարիի խասը 1.152.900 ակչե է, զեամեթի քեթխուդայի խասը՝ 50.000, թիմարի դեֆթերգարիի խասը՝ 20.200 ակչե է։ էրզրումի սանջաքում ընդամենը 56 զեամեթ, 2219 թիմար կա։ Ամբողջ էյալեթում եղած զեամեթ և թիմարների կըլըչների թիվը 5269 է։ (Սուլթան) Սուլեյմանի կանոնով ալայի բեյի՝ Հյուսեյին Աղա-զադեի դրոշակի տակ, ջեբելուների հետ միասին 19 հազար զինվոր է հավաքվում, իսկ փաշան, կայսերական խասի կարգով, ջեբելուների հետ միասին, 2000 զինվոր ունի։ էրզրումի զինվորները ընտրյալ, սպառազեն, քաջ և կտրիճ, հերոս երիտասարդներ են։ Նահիյեի հետիոտներից կան ենիչերիների աղա, 7 օդա բարձր Դերգահի ենիչերիներ, մեկ օդա թնդանոթաձիգ, մեկ օդա ջեբեջի, որոնք բոլորը ապրում են բերդում։ Աբազա փաշան[47] պատահական կերպով էրզրումում ջելալի է դառնում և մի գիշեր հարձակվելով ներքին բերդի վրա բոլոր ենիչերիներին սրի քաշում։ Բերդից դուրս մնալով ազատվում է միայն ենիչերիների աղան։

Աբազա փաշան տիրանալով էրզրումի բերդին, լրիվ 10 տարի (կառավարության դեմ) թշնամական դրության մեջ մնաց։ Սերդար Ջերքես Մուհամմեդ փաշան, Դիշլենկ Հյուսեին փաշան, Թիմուր Կազըք Խալիլ փաշան և մի շարք այլ սերդարներ 7 անգամ հարձակվեցին նրա (Աբազա փաշայի) վրա, սակայն չկարողացան նրա ձեռքից առնել էրզրումը։ Ահա այս աստիճան ամրակուռ, անառիկ և սոսկալի մի բերդ է էրզրումը։ Ներքին բերդը ևս ամրակուռ է։

Հետագայում արյուծանման քաջ Խուսրև փաշան մեծ քանակությամբ զինվորներով եկավ Աբազա փաշայի վրա և նրան առանց շունչ տալու, իր հնարամիտ միջոցներով բերդը քանդեց թնդանոթներով և Աբազա փաշային ստիպեց անձնատուր լինել։ Այնուհետև, Խուսրև փաշան Աբազային սուլթան Մուրադ IV-ի մոտ տարավ. սրա ոճիրների դեֆթերը (տոմարը) կրակի մեջ այրվեց և նրա հանցանքները ներվեցին։ Էրզրումում Աբազայի ապստամբությունից հետո Ալ-Օսմանի [կառավարությունը] հատուկ ուշադրության առարկա դարձրեց այս բերդը և այնտեղ անհաշիվ ռազմամթերք կենտրոնացրեց ու 6 վաշտ աղաներով զինվոր ավելացվեց։ Կան 2500 կուլ, բերդապահ և 12 աղաներ։ Միջնաբերդում՝ ցորենի ամբարներ, 180 թնդանոթ, Թավրիզի դռան մոտ՝ երկու պարիսպների միջև (սուլթան) Մուրադ խանից մնացած 12 բալյեմեզ թնդանոթ կան։ Բերդը կառուցված է էյերլի լեռան ստորոտում, մի թնդանոթ մենզիլի հեռավորության վրա, սեպաձև, ժայռոտ մի վայրում։ Բերդի հյուսիսային և արևմտյան կողմերում Էրզրումի դաշտն է, որը երկարությամբ և լայնությամբ երկուական փարսախ տարածության է հավասար, կանաչազարդ և բերքառատ մի դաշտ է և ունի հարյուրավոր բարեշեն գյուղեր։

Մեծ Եփրատ գետի բնութագիրը: *Հոսում է Էրզրումի դաշտի ճիշտ կենտրոնից։ Սկիզբ է առնում Վրաստանի արևելքում գտնվող Դումլի Բաբա անունով սուլթանական ուխտատեղիի ժայռի տակից և հոսում դեպի արևմուտք։ Էրզրումի դաշտում իր մեջ է ընդունում բազմաթիվ վտակներ... և Քան գյուղի կողքով հոսելով, երրորդ կոնաքում անցնում է Քեմախ բերդի մոտով, այնուհետև Իզոլի քուրդերի շրջանում Եփրատ գետին է խառնվում Մուրադ չայը, որը գալիս է Բինգյոլ յայլայից։ Հետո ավելի ուժեղանալով հոսում է Մալաթիայի մոտով։ Այնուհետև անցնում է Սմիսաթի[48], Կալայի-էլ-Ռումի[49], Բիրեջիկ բերդի, Բոմբուչա կամրջի տակով, Բալիսի*, Ջաբերի, Ռաքվա բերդերի, Ռուհբեյե, Կրրկիսա, Անա, Հատիշե, Հիյե, Աբյար, Թակուկ, Խելե Քուֆե կոչված վայրերով, որից հետո Բաթայում, Կուրնե բերդի մոտ խառնվում է Շաթ-էլ-Արաբին։ Ծովանման, հսկա գետ է։ Հնդկաստանից դետի վրայով նավեր են գալիս մինչև Բասրա։ Գետ չէ, ծով է։ Այս գետի հունը ակունքն ու գետաբերանը 400 փարսախ տեղ են գրավում. անցնում է 400 քաղաքներով և գյուղաքաղաքներով. նրա սկզբնական հոսանքը Էրզրումի դաշտում շատ հաճելի է. այդ մասին Նվիրական ղուրանում այեթ է*

* *Բալիս—Ներկայումս կոչվում է Մեսքենե (ծանոթ. հրատարակչի)։*

տըված։ Բացի Եփրատից, Էրզրումի լեռներից և Դիարբեքիրի սարերից սկիզբ են առնում 72 մեծ գետեր, որոնք բոլորը հոսում են դեպի Արաբական և Ռումի Իրաքը...

Տիգրիս գետը: *Շաթ-էլ-Արաբի հիմքն է։ Սկիզբ է առնում Դիարբեքիրի արևելքում, Թերջիլի և Միաֆարկինի միջև գտնվող վայրերից և բազմաթիվ վտակներ ընդունելով իր մեջ, անցնում է Հիսնի-Քիֆից և այնտեղից հոսում դեպի Ջեզիրեի Մուսուլ։ Այնտեղից իր մեջ առնելով Վերին Զաբի և Ստորին Զաբի* վտակները, հոսում է առաջ։ Հայկական գյուղերից այս գետին բազմաթիվ աղբյուրներ են խառնվում. [գետը] երկնքի որոտին նման աղմուկ բարձրացնելով է հոսում, այդ պատճառով էլ Մեջնուն-Ջար անունն է ստացել։ Այնտեղից Տիգրիսը անցնում է Թեքրիխով և հետո Բեթայիհում թափվում Շաթը...*

Հնագույն Իրաքի ժողովուրդները ծանոթ էին Եփրատի բարիքներին և օգուտներին։ Գետի երկու կողմում պատնեշներ, ջրամբարներ էին կառուցում և ջրի ողողած բարեբեր հողերը մշակում էին ինչպես հարկն է։ Մի շարք հիվանդությունների դեմ այս գետի ջրի օգտակար լինելու մասին տարբեր ավանդություններ կան...

Եփրատ գետի մի ակունքը Էրզրումի հյուսիսումն է, այդ պատճառով էլ ձմռանը սառչում է և նրա վրայով բազմաթիվ քարավաններ են անցնում։ Իսկ Ռաքքայի հարավային մասի [կլիման] տաք լինելու պատճառով, Եփրատը այստեղ չի սառչում։ Էրզրումի բերդի բնակիչների մեծ մասը Եփրատից է խմելու ջուր վերցնում։ Էրզրումի բերդում Ջեննեթ փունարի[50] *անունով մի աղբյուր կա, որի ջուրը շատ վճիտ է ու կենարար։*

Էրզրումի բերդի ձևն ու մասերը: *Քիչ թեք հարթության վրա, քառակուսաձև, շուրջը քարաշեն երկու կարգ պարիսպներ ունեցող բերդ է. այդ պարիսպների միջև ընկած տարածությունը 10 քայլաչափ է։ Կոչվում է* Քիսարիջե *(Փոքր Հիսար)։ Շուրջը խրամներ կան։ Խրամի լայնությունը 80 քայլ է, խորությունը 20 արշին։ Գյուրջի և Էրզինգան անունով դարպասների խրամները շատ խոր չեն։ Նրանց վրայից կարելի է անցնել կամուրջով։ Երկակի երկաթյա դռներ են։ Այս երկու դռների միջև են գտնվում Երևանը գրավող 10 հատ բալյեմեզ թնդանոթները։ Սակայն Թավրիզ անունով դարպասի կողմը բարձրադիր է և ներքին բերդին կցված պարիսպը թեև մի կարգի է, բայց խիստ ամրակուռ է։ Պատերը ոզնու փշերի նման ծածկված են*

* *Վերին Զաբի, Ստորին Զաբի—պետք է լինի Զաբի-Քեբիր և Զաբի-Սագիր՝ Մեծ Զաբի և Փոքր Զաբի գետերը (ծանոթ. հրատարակչի)։*

թնդանոթներով։ Բոլոր թնդանոթներն ուղղված են դեպի Դար-Աղաչի թաղամասը՝ Գյումյուշլի գմբեթի կողմը։ Դրսի բերդի վրա իշխող և երկինք սլացող մինարեի նման մի բարձր աշտարակ կա, որը հայտնի է Քեսիք-Կուլե անունով. ծածկված է տախտակով։ Բարձրության վրա 10 թնդանոթ է դրված, որոնցից չի վրիպի անգամ բերդի շրջակայքում թռչող թռչունը։ Աշտարակի բարձրությունը 100 արշին է, միջնաբերդի պարիսպների բարձրությունը 60 արշին է. մյուս պատերի բարձրությունը 50 արշին է։ Բերդի երկակի պարիսպների վրա 210 ամուր աշտարակ և 2080 պատնեշներ կան, որոնք բոլորը կապարից որմնածակեր ունեն։ Բերդում կա ընդամենը 1700 տուն, որոնք բոլորը հողածածկ և հին ձևի տներ են։ Էրզրումի էյալեթի մեր դիտած գյուղերի և գյուղաքաղաքների բոլոր տները հողածածկ են։

Թաղամասերը: Ընդամենը 70 իսլամական և 7 հայկական թաղամասեր կան։ Կըբտի և հրեաներ չկան։ Բոլոր տները քար ու կրից են։ Երկհարկանի տները շատ քիչ են, մեծ մասը միհարկանի է։ Այստեղ ձմեռը շատ խստաշունչ է, հաճախ տարիներ են լինում, երբ 10—11 ամիս ձյուն է տեղում։ Այդ պատճառով էլ տները միհարկանի են, տանիքների վրայի ծխնելույզները ծածկված են մոմլաթով (մուշամպա), դռները՝ թաղիքներով։ Աղոթատեղերը բաղնիքի նման են (տաք են)։ Մի խոսքով այս երկիրը գիտություն ձեռք բերելու վայր է։ Եղանակը այնքան էլ լավ չէ։

Էրզրումի պալատների և ջամիների մասին: *Այս հատվածներում Էվ. Չելեբին մանրամասնորեն կանգ է առնում Էրզրումի պալատների, ջամիների վրա, հիշում է նաև մեդրեսեները։*

Շուկան: Կա մոտ 80 խանութ։ Քառակի դռնով, քարուկրե կամարով բեդիստանը բարեշեն է։ Հայտնի են այստեղի թամբագործները, մետաքսագործները, ոսկերիչները, դերձակները։ Սիփահիների շուկան և պարսպի ստորոտը գեղեցիկ են։ Փողերանոցը (զարբխանե) Երզնկայի դռան մոտ է։

Բնակչության դեմքն ու գույնը: Բնակչությունը կազմված է ճուրքերից, քրդերից, թուրքմեններից և հայերից։ Կան նաև Գյոքդուլաք աջեմներ։ [Բնակիչները] առողջ, մարմնեղ, միջին հասակի աշխույժ մարդիկ են։ Տարիքավորներն ու երիտասարդները բոլորը քաջ են և տեսքով։ Ընդհանրապես շատ առողջակազմ են։ Տասից մինչև քսան տարեկան պատանիները շատ գեղեցիկ են։ Դրանից հետո երիտասարդները շուտով մորուքավորվում են և շատ մազոտ են լինում։ Բայց բոլորը համեստ, մեղմ, ուղղամիտ, ուշիմ և խելացի մարդիկ են։

Բնակիչների հագուստները։ *Այանները ասվի սամույր և բարձր տրակի կերպասներ են հագնում. ուլեմաներն ու սյուլեհանները դարձյալ ասվի ֆերաջե և խաֆթան են հագնում։ Հասարակ դասը, արհեստավորներ լինելով, աբա և բեղից խալաթներ են հագնում։*

Օդն ու ջուրը։ *Երեք ամիս շարունակ եղանակը շատ հիանալի է լինում և մարդ կենդանանում է։ Ջուրը վճիտ է և շատ օգտակար կանանց և ձիերի համար։ Հուլիս ամսին Ջեննեթ-փունարի ջրից խմողը առույգություն է ստանում։ Քաղաքը գտնվում է 18-րդ լայնության կլիմայում և 5-րդ բնական կլիմայում։ Ձմեռը խստաշունչ է. հացահատիկները հասունանում և հավաքվում են 60 օրվա ընթացքում։ Մեկ քիլե[51] սերմացուն 80 քիլե բերք է տալիս։ 7 տեսակի ցորեն կա։*

Արհեստները, ուտելիք և խմելիքները։ *Դերձակներն ու ոսկերիչները լավ վարպետներ են։ Շիրեք և Միրեք անունով սուրերը հայտնի են աշխարհում։ Ուտելիքներից հավի կարկանդակը (բյորեք), շիրիշ կոչված բանջարեղենի կարկանդակը, շուկայում պատրաստված ընտիր, սպիտակ և յուղալի չյորեքը, մեկ գրկաչափ ընտիր հացը, գաթան, խաշը (փաչա), թոնիրի խորոված, հարիսան, խմելիքներից՝ տեսակ-տեսակ շերբեթները, հասարակ մարդկանց հատուկ բոզան հայտնի են։*

Զբոսավայրերն են՝ Ջիրիտի հրապարակը, Բազարբաշի ջրաղացի մարգագետինը, Գյումյուշլի գմբեթի հրապարակը, Ումուտում գյուղը, Աբդուրահման-ղաղիի թեքիյեն, Գյուրջի-մեյդանիի զբոսավայրերը։

Էրզրումի շրջակայքի բնութագիրը։ *Բերդի երեք դռներից դուրս՝ արևելքում, արևմուտքում և հյուսիսում, 3000-ից ավելի ռայաների վարոշի չորս կողմում պատեր չկան, սակայն գլխավոր ճանապարհի վրա Թյուրբեի դռներ կան։ Բերդի հարավային կողմում՝ Թավրիզի դարպասից մինչև Երզնկայի դարպասը սկսել են մի կարգի պարիսպի կառուցումը և որոշ տեղերում հասել են մի մարդաբոյ բարձրության, սակայն վերջացնել չեն կարողացել։ Այդ պարիսպների կառուցումը ավարտելուց հետո էրզրումը անառիկ բերդ կդառնա։ Հարավային վարոշը 7 թաղամաս ունի. սրան է պատկանում նաև Բազարբաշիի թաղամասը։ Թավրիզի դարպասի վարոշը գտնվում է մի թեքության վրա. մեծ տարածության վրա՝ Աղաջի և Դուլուքների թաղամասերից մինչև Գյումյուշլի ընկած գմբեթը մի վարոշ է։ Գյուրջի դարպասի վարոշը գտնվում է բերդի հյուսիսային կողմում։ Այստեղ մի քանի հազար տներ, խանութներ և խաներ կան։ Ներկա-*

յումս բարեշինվում են։ Բոլոր վաճառականները այստեղ են ապրում։ Այստեղ է նաև մաքսատունը, ուր նվաստս քարտուղարության պաշտոն էր վարում։ Ջորս կողմում արաբ, աջեմ, հնդիկ, չին վաճառականների տներ կան։ Ստամբուլի և Իզմիրի մաքսատնից հետո ամենից ավելի բանուկ մաքսատունը Էրզրումի մաքսատունն է, որովհետև վաճառականների հետ արդարացիորեն են վերաբերվում։ Երզնկայի դարպասի վարոշը բերդի արևելքումն է, որը Դևե Ջեշմեից մինչև Ալիի ջրաղացն ընկած ընդարձակ վարոշ է։ Ընդհանրապես այս վարոշներում ապրում են հայ ռայաները, որոնք ունեն 13 եկեղեցի։ Սրանց (հայերի) առաջավորները կրոնին համապատասխան հագնում են կապույտ սավի և գլխներին սրբիչ են փաթաթում։ Հասարակները հագնում են շալ հագուստ և ոտքերին բարակ տրեխ կրում։ Վերին աստիճանի ռանչպար ռայաներ կան։ Հայ կանայք ունեն տափակ գլուխ և ծածկվում են սպիտակ չարսավով։ Իսլամ կանայք մետաքսե հագուստ, ոսկյա և արծաթյա թաքիյե են հագնում և ծածկվում սպիտակ չարսավով, իսկ ոտքերին դեղին չիզմե են կրում։ Վերին աստիճանի գեղեցիկ են։ Սրանց լեզուն ու բառերը շատ կանոնավոր են, ատամները միագույն ու խնամքով պահված, երկար կախված են անուշաբույր մազերը։ Օդի (եղանակի) լավության պատճառով տղամարդիկ բարձրահասակ են և երկար են ապրում։ Այսպիսի ասացվածք կա՝ «Պատկառելիությունը (հեյբեթ) անցել է, ուժը անցել է, հասակը հարյուրի է հասել»։

Այնուհետև, Էվ. Չելեբին էրզրումցիների խոսակցական լեզվից նմուշներ է բերում, (որոնք ավելի մոտ են ադրբեջանական բարբառին)։ Սակայն «Դիտության տեր մարդիկ,—գրում է Չելեբին,—խոսում են կատարյալ լեզվով ու ճարտասանությամբ»։

...Չնայած Էրզրումում ձմեռները խիստ են և սառնամանիքային, սակայն այստեղ հիանալի բանջարանոցներ կան, սեխը, ձմերուկը, կաղամբն ու բադրիջանը, շրեշտը շատ առատ են։ Հողը բարեբեր է։ Վիլայեթը ընդարձակ է և հարուստ. հայտնի են ցորենն ու այլ հացահատիկները, ցանքսերը շատ են, բարիքները լիառատ. ապրուստի միջոցները լավ են և հեշտ։ Այս բարեշեն քաղաքը հազարավոր աղբյուրներ և ջրեր ունի։ Էժանությունը այն աստիճանի է, որ ուղտի ատամների չափ ցորենի 5 իշաբեռը արժե մեկ ղուրուշ, 2 ձիու կերը՝ մեկ ակչե, մեկ օկկա ծանրությամբ 5 ընտիր սպիտակ հացը՝ մեկ ակչե, ոչխարի մսի օկկան՝ 2 ակչե, կովինը՝ մեկ ակչե, մեկ հավը՝ մեկ ակչե, 100 տիրհեմ յուղալի քաթմեր չյորեկը՝ մեկ

ակչե, 40 հավկիթը մեկ ակչե։ Այլ ուտելիքները նույնպես էժան են։ Ձմեռվա խստության պատճառով այգիներ և պարտեզներ չկան, սակայն հայտնի են փաշայի պալատի պարտեզը, Հաջի Մուրադի այգին և ծաղկաստանը, Քեֆին-Իյնեսի-օղլիի վարդաստանը, Պետրոսի այգու վարդաստանը և այլ այգիներ ու պարտեզներ։ Նշանավոր են վերոհիշյալ պարտեզների մարրաՐ վարդերը։ Շատ տարածված են ձմեռային խնձորը, Ախլաթի տանձը։ Բայց այլ պտուղներ չկան։ Զբոսավայրերում շատ առատ են ուռենիները և բարդիները։ Ձմեռը երկարատև լինելու պատճառով ցանում, հնձում, կալսում և հավաքում են երկու ամսվա ընթացքում։ Մեր այնտեղ [էրզրումում] եղած տարին, հուլիս ամսին մի սոսկալի փոթորիկ բարձրացավ, անձրև ու ձյուն տեղաց։ Մեր ձիերը իրենց կապերը կտրելով փախան շրջակա գյուղերը և 5—10 օր անտեր թափառեցին։ Ժողովրդի մեջ մի այսպիսի առած կա. մի դերվիշից հարցնում են՝ «որտե՞ղից ես գալիս». պատասխանում է՝ «ձյան բարիքի երկրից», «այդ ի՞նչ երկիր է», պատասխանում է՝ «ցրտից մարդու համար զուլում եղող էրզրումն է»։ «Այնտեղ ամառվա հանդիպե՞ցիր», «Ճիշտն ասած, տասնմեկ ամիս 29 օր այնտեղ ապրեցի. ժողովուրդը միշտ ասում էր, թե ամառը պիտի գա, իսկ ես չտեսա»։ Կա նաև այսպիսի մի առած. մի կատու այս կտուրից մի այլ կտուր ցատկելիս, օդում սառել մնացել է. 8 ամիս անց, խնարիզմ Շահի Ներուզին[52] սառույցը քանդվում է և [կատուն] մլավելով ընկնում է գետնին։ Իսկապես, եթե մեկը թաց ձեռքով կպչի մի երկաթի կտորի, ձեռքը անմիջապես կսառչի և անհնարին կլինի ձեռքը երկաթից պոկել։ Միայն ձեռքի կաշին պոկելով և ծանր ցավեր առաջացնելու գնով կարելի է ձեռքը ազատել։ Նվաստս Ազաքում և Կփչաքում անցկացրել եմ ձմեռվա ամենացուրտ ամիսները, բայց այսպիսի սաստիկ ձմեռ չեմ տեսել։

Պտուղներ այստեղ բերում են երկու կոնաք հեռու վայրերից՝ Իսպիրից, Թորթումից և Երզնկայից։ Դեղձը, ծիրանը, խաղողը ծախվում է օկկան մեկ ակչեով. մի սայլ ձմերուկն ու սեխը ծախվում է 10 ակչեով։ Մի խոսքով ուտելիքի կողմից աննման մի քաղաք է։ Սակայն վառելափայտ չկա, բոլոր լեռները մերկ են (անտառազուրկ), բայց ատնո կամքով, փայտը էժան է։ Երկու կոնաք հեռավորության վրա գտնվող լեռներից նավի սյուների նման գերան անունով փայտեր են բերում, որոնց երկարությունը 40 արշին է և ծախում են 40 ակչեով։ Մաքսատուն եկող բոլոր քարավանների ուղտերը, ըստ օրենքի, փաշայի համար մեկական անգամ փայտ են բերում։ Առանձին փայտի աղա [կառավարիչ] չկա։ Մեկ ուղտի բեռ

փայտը կարելի է գնել 30 ակչեով։ Բայց որովհետև տեղացիները մեծ թվով ոչխար և սևատավար ունեն, աղքատները աթար են վառում։ Աղքատ ռայաների օջախները տան մեջտեղումն են. չորս կողմում անասուններ են ապրում, այդ պատճառով էլ նրանց տները բաղնիքի պես տաք է լինում։ Հացն ու հարիսան թոնիրի մեջ են եփում...

Այնուհետև էվ. Չելեբին խոսում է իսլամական ուխտատեղիների և առասպելների մասին։

(էջ 205—218)

ՄԵՐ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԷՐԶՐՈՒՄԻ ԷՅԱԼԵԹԻ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ՇՈՒՇԻՔ ԲԵՐԴԻ ՎՐԱ

Ալիխան-օղլի Գենջալի Երևանի խանը, հատուկ պատգամավորի և նամակի միջոցով հայտնել էր, որ Ասրեզ գետի հարավում ընկած լեռներում գտնվող Շուշիք բերդի բեյը ապստամբվել է և խաղաղությանը հակառակ՝ Աջեմի Երևան բերդի շրջակայքում կողոպտել ու թալանել է որոշ վայրեր։ Դիվանի բոլոր անդամները խանի նամակը կարդացին և խորհրդակցելուց հետո որոշեցին արշավանք կազմակերպել։ Էրզրումի բոլոր սանջաքների միրլիվաները, զեամեթների և թիմարների տերերը, բոլոր բերդերի զինվորների կեսը, Բարձրագույն հրամանով պատերազմի կանչվեցին։

Աստիճանաբար հավաքվում են ռազմական ուժերը և կազմվում է 70 հազարանոց մի բանակ։ «Աջեմի դեսպանները,—գրում է էվ. Չելեբին,—տեսնելով այս մեծաքանակ բանակը, զղջացին Շուշիքի բերդի վերաբերյալ իրենց ներկայացրած դանգատի համար, վախենալով, որ [այդ բանակը] կարող է պաշարել Երևանը...» Բանակը լրիվ կազմավորվելով անցնում է Դեե Բոյունով [Բասենի դաշտի սկիզբն է] ու Հասան Արաղ բերդի մոտով։ Էվ. Չելեբին անձամբ մասնակցել է այս արշավանքին ու առիթից օգտվելով նկարագրել ճանապարհին ընկած վայրերը։

Հասան Արաղ* **բերդը։** Ադրբեջանի իշխող Ուզուն Հասանը վախենալով Ֆաթիհից, վերակառուցել է այս բերդը։ Այդ պատճառով էլ բերդը կոչվում է Հասան-Կալասի։ Երկինք խոյացող բարձր բերդ

* Հասան Արաղը էրզրումի սանջաքի Բասեն գավառի վարչական կենտրոն Հասան-Կալան է (ծանոթ. հրատարակչի)։

է Բասենի դաշտում։ Հետագայում այս բերդը ուժով ու բռնությամբ գրավվել է Կարա Յուսուֆի քուրդ որդիներից։ Էրզրումի էյալեթի Բասենի սանջաքում բեյի կենտրոնն է։ (Սուլթան) Սուլեյմանի կանոնով բեյի խասը 12.400 ակչե է. ունի 6 զեամեթ ու 225 թիմար։ Ունի նաև ալայի բեյ, չերիբաշի և յուզբաշի։ Նվիրական պատերազմի ժամանակ՝ ջեբելուների հետ միասին, 1500 զինվոր է տալիս, որի կեսը՝ փաշայի ֆերմանով, օգնության եկան բերդի զինվորների հետ միասին։ Աստծո կամքով, երբ վեհաշուք փաշան կանգ առավ այս բերդի տակը, բերդից հրացանների և թնդանոթների համազարկ տվեցին, որից երկինքն ու երկիրը թնդացին, Հասան-Կալան սաղամանդրի[53] նման թաղվեց կրակի մեջ։ Աջեմի պատգամավորը դիտելով այս տեսարանը՝ համրացավ...

Այնուհետև, հեղինակը մանրամասնորեն նկարագրում է փաշային և աջեմի պատգամավորին տրված զինվորական պատիվները, խնջույքը և այլն։

Հասան-Կալայի բնութագիրը: Կառուցված է Բասենի դաշտի հյուսիսում, լեռան գագաթին, երկինք խոյացած սեպաձև ժայռերի վրա։ Մի այնպիսի միջնաբերդ ունի, որի արևելյան կողմից, Ջերմուկից ներքև նայելիս մարդ սարսափում է։ Կուրծքը դեպի դաշտը դարձած այս հսկա և հոյակապ բերդը քարաշեն է և ամրակուռ։ Բերդում բացի բերդակալից, իմամից և մյուեզինից, ոչ ոք չկա։ Այստեղ ձի և էշ չեն կարող բարձրանալ։ Երևանի ֆաթիհ (սուլթան) Մուրադ խան IV-ի համար այստեղ փոքր, բայց գեղեցիկ մի պալատ կա։ Մեր էֆենդին՝ Մելեք Ահմեդ փաշան, Երևան գնալիս, այս պալատում սիլահդար և նիշանջի է եղել... Մի գիշեր մոմի բոցից [սուլթան] Մուրադ խանի վերմակի այրվելու պատճառով, [փաշան] պաշտոնազուրկ է արվում...

Միջնաբերդը շուրջանակի 1000 քայլաչափ է. խրամ չունի։ Մի դուռ ունի, որը նայում է դեպի արևմուտք։ Միջնաբերդը իշխում է հյուսիսի վրա. նրանից ներքև ընկած վարոշը, ռաբաթի բերդը ցածր է, բայց կրկնապարիսպով մեծ բերդ է։ Շուրջանակի երկարությունը 1000 քայլաչափ է։ Քառանկյունի ձև ունի. քարաշեն է և կարծես սպիտակ կարապ լինի։ Պատերը 18 արշին բարձրություն ունեն. կրկնակի են։ Երեք կողմի խրամները խոր չեն։ Թշնամուց երբեք վախ չկա, որովհետև տեղը ցածր և խոնավ լինելու պատճառով թշնամին չի կարող խրամատավորվել։ Մի արշին խորությամբ փորելիս ջուր է դուրս տալիս։ Էրզրումի դարպասը նայում է արևմուտք, երկաթյա փեղկերով մեծ դուռ է։ Արևելքում Ըլըջայի դար-

պասն է։ [Բերդը] ունի 700 կուլ [զինվոր], բերդակալ, շատ ռազմամթերք, 60 մեծ և փոքր թնդանոթներ։ Նշանավոր Աբազա փաշան խորամանկությամբ ու անսպասելիորեն գրավելով այս բերդը՝ ապըստամբվել է։ Հարավից Բասենի դաշտն է, որի երկարությունը 7 կոնաք է։ Բերդում մոտ 590 հողածածկ, քարուկրե տներ կան։ Բերդում կան 7 թաղամաս և 7 մեհրաբ։

Ջերմուկի բնութագիրը: *Ստորին ռաբաթի հարավում, պարիսպների տակը 7 ջերմուկներ կան, որոնց ջրերի տաքությունը չափավոր է։ Այս ջերմուկները ծածկված են կամարներով։ Բացի այդ, կան նաև բերանները բաց 8 եռացող ջերմուկներ, որոնցից յուրաքանչյուրը օգտակար է որևէ կենդանու համար, այսինքն ընտանի կենդանիները եթե որևէ հիվանդություն ունենան և այս ջերմուկներում լողանան՝ կառողջանան։ Այս ջերմուկների ջուրը ուղտերով տանում են, խմեցնում բորոտության ախտով տառապողներին ու առողջացնում։ Շատ նշանավոր ջերմուկներ են։*

Այստեղից շարժվելով դեպի արևելք, 3 ժամից հասանք Սեֆեր-Աղա գյուղը, որը 100 տնից բաղկացած զեամեթ է։ Վերջինից, դարձյալ դեպի արևելք 3 ժամ ճանապարհ գնալով՝ հասանք Չոբան Քյոփրյուսի[54] կոչված վայրը։

Չոբան Քյոփրյուսի: *Կառուցել է Ալ-Չոբանյան իշխաններից մեկը և այդ պատճառով էլ կոչվում է Չոբան Քյոփրյուսի. Արզ* գետի վրա ընկած ծիածանաձև, հոյակապ մի կամուրջ է։ Արզ գետը սկիզբ առնելով Բինգյոլի յայլայից, հոսում է դեպի արևելք, անցնում Մալազկերտի կողքով, այնուհետև Էրթեֆ, Խնուս բերդերի առջևից, Հալկալի կամրջի տակով, ոռոգում է հարյուրավոր գյուղեր, ապա անցնում նաև այս Չոբանի կամրջի տակով և Երևան բերդի մոտ միանում Զանգի-Կուր գետին[55] և հետո թափվում Գիլանի խազերի ծովը։ Այդ գետը արագահոս է. Բինգյոլի յայլայի ձյունը հալվելու ժամանակ վարարում է և ծովի նման բարձրանում։*

Ամբողջ բանակը անցավ երեք օրվա ընթացքում։ Չոբանի կամրջով փաշան նույնպես անցավ մեծ շքախմբով։ Այնուհետև, անցանք Մեծ Արթեֆ գյուղով և կանգ առանք Խնուսի սանջաքի 150 տուն ունեցող հայկական Արթեֆ գյուղում։ Այստեղից շարժվելով դեպի արևելք, 8 ժամից հասանք Կուզուլի-Բաբա գյուղը, որտեղ թաղված է Սուլթանը։ Սա էլ է Խնուսի սահմանում, որտեղից դուրս եկանք և 6 ժամից հասանք Խնուսի բերդը։

---

* Արզը Արաս (Արաք) գետն է (ծանոթ. հրատարակչի)։

Խնուսի բերդը: *Կառուցվել է Ադրբեջանի իշխողներից մեկի՝ Ուզուն Հասանի հորեղբայր Շահ Շափուրի կողմից։ Հետագայում քրդերը հպատակություն հայտնելով՝ բերդի բանալիները հանձնել են Սուլեյման Շահին։ Ներկայումս սանջաքի բեյի կենտրոնն է Էրզրումի էյալեթում։ Փադիշահի կողմից հաստատված բեյի խասը 484.000 ակչե է։ Լիվայում 2 զեամեթ և 425 թիմար կա։ Ջեբելուների հետ միասին 2000 զինվոր ունի։ Սրանք եկան բանակ և տեղավորվեցին իրենց վրաններում։ Բոլորը Մահմուտի (ցեղի) քրդեր են...*

Բերդի բնութագիրը: *Ընկած է Էրզրումից դեպի հարավ՝ երեք կոնաք հեռավորության վրա։ Ալթուն Հալքալի կամրջից դեպի բերդը ուղիղ ճանապարհ կա։ Խնուսի պարիսպը (բերդը) բարձր ժայռի վրա, քառակուսաձև, ամրակուռ մի կառուցվածք է։ Գտնվում է ընդարձակ դաշտի ճիշտ կենտրոնում և իշխում է շրջակայքի վրա։ Ամեն կողմից շրջապատված է երկինք ցցված սեպ ժայռերով։ Բերդի արևելյան կողմի ստորոտում վճիտ ջուր է հոսում։ Բերդի պարիսպի տակը, ստորին մասում վարպետը երկաթյա մի ավազան է կառուցել. վերոհիշյալ ջուրը այդ վանդակի մեջ է լցվում և այնտեղից բաժանվում է ու բազմաթիվ բանջարանոցներ ոռոգում։ Երկաթյա ավազանի մեջ միայն ջուր է լցվում։ Բերդի դուռը այս ջրի ակունքի մոտ է։ Այս բերդում 1200 տուն քրդեր են ապրում։ Բոլոր տները ծածկված են հողով, կղմինդրներով տներ չկան։ Բնակիչները անթիվ ոչխարներ և այծեր ունեն։ Ժողովուրդը գնում է դեպի քաղաքի արևմուտքը՝ Բինգյոլի յայլաները ու այնտեղ կազդուրվում...*

Այնուհետև էվ. Չելեբին տալիս է բանակի դասավորությունը և ապա պատմում, որ ինքը 200 հեծյալներով գնացել է դեպի Զիանդդինի բերդը, որը գտնվում է Էրզրումի և Խնուսի սահմանի վրա։ Այստեղ մի ջերմուկի է հանդիպել, որը բազմատեսակ ջրեր ունի, աղբյուրներից ոմանք եռալու աստիճանի տաք են, իսկ մյուսները սառույցի նման սառը։ Այնուհետև նկարագրում է Շուշիքի բերդի պաշարման, կռիվների և բերդի անձնատուր լինելու մանրամասնությունները։ Ապստամբ քուրդ բեյը գաղտնի փախչում է Իրան։ Նրան հետապնդելու համար բանակ է ուղարկվում։ Այդ կապակցությամբ էվ. Չելեբին գնում է Մակու, այնտեղից էլ Նախիջևան։ Այս ուղևորության ժամանակ էվ. Չելեբին անցնում է նաև Էջմիածնով։

(էջ 219—230)

Ուշֆիլիսեի[56] սքանչելիքը: *Այս վանքի կենտրոնական մասը կառուցվել է Նուշիրվանի կողմից (?)։ Այստեղ ամեն տարի 40—50 հազար մարդ է հավաքվում։ Մինչև անգամ գալիս են Ֆրանգստանից։ Այստեղի լեռան ամենաբարձր գագաթի վրա, կանաչազարդ մարգագետնում, նրանք փռում են իրենց հնագույն գորգը։ Այդտեղի*

լեռներում աճող բոլոր ընտիր տեսակի ծաղիկները, բույսերը և խոտերը հավաքում և լցնում են մի մեծ կաթսայի մեջ։ Մի եռոտանի են դնում գորգի վրա և շատ ուժեղ կրակ վառում։ Այնուհետև այդ կերակուրը (?) բաժանում են իրար մեջ, շատերը շնորհավորության համար, տանում են մինչև Ֆրանգիստան։ Մյուսները տեղն ու տեղը ուտում են և հաճույք ստանում։ Նվաստս վարդապետից հարցրեց նկարագրվածի գաղտնիքը։ Նա ասաց. «Աստված վկա. Քրիստոսը մոր արգանդից բաժանվել է այս գորգի վրա։ Իսրայելացիներից վախենալով թաքնվել են մի քարայրի մեջ, խոտեր հավաքել և սրա (գորգի) վրա մի մեռելի կենդանացրել։ Իսրայելի բոլոր որդիներին հրաշք ցույց տալու համար, բաժանել է այս գորգի վրա եփված կերակուրը։ Հետագայում այս գորգը ընկել է Բախթ Նասարի[57] ձեռքը[*], նրանից էլ անցել է Նաշիրվան-Ադիլին. սա այս վանքը կառուցելիս [գորգի] վրա կերակուր է եփել տվել։ Մենք ևս, նրա վրա կերակուր եփելուց հետո, այն մաքրում ու սրբում ենք և մեր գլխի նման պահպանում պատատների մեջ։ (Սուլթան) Սուլեյման խանը Նախիջևանի արշավանքի ժամանակ այս գորգի վրա երկու անգամ նամազ է կատարել»։ Ահա այսպիսի տարօրինակ բաներ պատմեց նա։ Իբր թե [գորգը] մետաքսից է, բայց ոչ բամբակից է ոչ էլ բրդից. մի տեսակ մոխրագույն, խոշոր գորգ է և շատ ծանր է։ Նվաստիս կարճ խելքովը այդ [գորգը] պատրաստվել է Կիպրոս կղզում գտնվող մի տեսակ քարից, այդ քարը թակնով (թոքմաք) ծեծելիս՝ քաթանի նման է դառնում։ Հետո դրանից թել են մանում և թաշկինակներ, շապիկներ ու հագուստներ պատրաստում և իբրև նվեր ուղարկում Ստամբուլ՝ փադիշահին և այաններին։ Մեր էֆենդիին՝ Կայա Սուլթանին, իր հայրը՝ սուլթան Մուրադ IV-ը ասաց, «Իմ Կայաս, քեզ ժայռից պատրաստված մի շապիկ եմ տալիս», և մի շապիկ ու վարտիք շնորհեց։ Կայա Սուլթանը որոշ ժամանակ հագնելուց հետո, երբ շապիկն ու վարտիքը կեղտոտվում են, կրակ է վառում ու գցում է մեջը. շապիկն ու վարտիքը բոլորովին մաքրվում և սպիտակում են։ Փորձի համար շապիկը նորից է հագնում և տեսնում է, որ ընտիր ու մաքուր շապիկ է։ Այդ շապիկից մեր այաններն ու ազնվականները շատ ունեն։ Կոփուդան Հասան-զադեն նվաստիս այդպիսի մի թաշկինակ նվիրեց. երբ կեղտոտվում էր, կրակի մեջ էի գցում։ Մելեք Ահմեդ փաշայի ներկայությամբ կրակի մեջ այնքան այրեցի, որ վարդակարմիր գույն ստացավ։ Վերոհիշ-

* Բախթ Նասարը Քրիստոսից առաջ է ապրել (ծանոթ. հրատարակչի)։

յալ գորգն ևս, անտարակույս, Կիպրոսի այդ քարից է գործված, վեսսելամ! Նման հրաշք չի կարող լինել։

Այս վայրերը դիտելուց հետո, Ուչքիլիսեից գնացինք դեպի արևելք և անցանք շեն ու հարուստ գյուղերով, բերքառատ վայրերով, մշակված դաշտերով, ինչպես նաև չոր և աղային վայրերով։ Հասանք Նախիջևանի սահմանի վրա գտնվող մի գյուղ, որն ընկած է Շելունի լեռան ստորոտում։ Այստեղ տասնմեկ մինարե տեսանք, բայց նվաստս, այդ պահին լավ վիճակում չլինելու պատճառով, չկարողացա ինչպես հարկն է դիտել այն... Հաջորդ օրը այստեղից մեկնեցինք. 12 ժամ ճանապարհ գնացինք և հասանք Զանգի գետի մենզիլը, որը գտնվում է դաշտի հարավում, մի կանաչազարդ վայրում։ Մեր վրանները խփեցինք գետի եզերքին։ Այս դաշտի չորս կողմի բնակիչները մեծ ուրախությամբ «սուլթանլին եկել է» ասելով, նվերներ, ուտելիք և խմելիք բերեցին և մեզ հյուրասիրեցին։ Մեր ծառաները լիուլի կշտացան։ Մեր ձիերն էլ իրենց փորերը ունեցրին ընտիր առվույտով։ Զանգի գետը հարավից սկիզբ է առնում Խարան լեռներից և հոսում դեպի հյուսիս, ճանապարհին հարյուրավոր գյուղեր է ոռոգում, Արազ գետն էլ առնում է իր մեջ և թափվում Գիլանի ծովը[58]։

Շարունակելով իր ճանապարհը դեպի արևմուտք Էվ. Չելեբին անցնում է Սեդերկի գյուղով, որն «Իմամ Ալի Ռիզայի էվկաֆն է և ազատված է բոլոր տեսակի տուրքերից։ 1000 տնից բաղկացած բարեշեն գյուղ է, ունի անթիվ այգիներ և պարտեզներ»։ Գյուղից դուրս հանդիպել է բարձր կամարներով ծածկված ջերմուկների։ Այնուհետև անցել է մի քանի այլ գյուղերով և կանգ առել Կարաբաղլար մեծ քաղաքում։

Կարաբաղլար մեծ քաղաքի բնութագիրը: Այս քաղաքը սկզբնադրել է Մենուչեհրը։ Հնագույն քաղաք է։ Ներկայումս Նախիջևանի հողում առանձին սուլթանություն է։ Մահմուդ III-ի օրոք օսմանցիներին է պատկանել, բայց հետագայում անցել է աջեմներին։ Խավարյալ Թիմուրը ևս ձմեռել է այդ Կարաբաղլարում և իր անթիվ զինվորներով հինգ ամիս այստեղ է մնացել։ Վերին աստիճանի բարեբեր, բարեշեն և ընդարձակ մի դաշտում է գտնվում։ Սուլեյման խանը և շատ սերդարներ բազմիցս այստեղ են ձմեռել։ Ներկայումս նորից բարեշինվում և կառուցվում է։ Այս քաղաքում մեր ծառաները մոտ 40 մինարե հաշվեցին։ Գոհություն աստծո, այս քաղաքի հիանալի օդից և ջրից մենք մեծ բավականություն ստացանք։ Ընկերներով ձիերին հեծած սկսեցինք քաղաքը դիտել։ Մեզ հյուրընկալողի ասե-

լով, քաղաքում այգիներով և պարտեզներով մոտ 10 հազար տներ կան։ 70 մեհրաբ կա, որոնցից 40-ը մինարեներով ջամիներ են։ Կան նաև խաներ, բաղնիքներ և շուկաներ, որոնց թիվը ներկայումս ավելանում է։ Ուտելիքների և խմելիքների տեսակետից հարուստ երկիր է։

Դնսպանի հետ մի պարտեզում զբոսնելիս, Յըզդան Կուլի անունով մի պարտիզպան մեզ 26 տեսակի ընտիր տանձեր բերեց. մելևջե, աբասի, օրդուբադի անունով տանձերը ուտողի բերանում վարդաջրի համ են թողնում։ Վարդագույն նռնածաղիկները, Երևանի բրինձը, փլավը և հարիսան շատ համեղ են։ Խոհարարները շատ մաքուր են և բոլորը մուսուլմաններ են։ Իսկապես Աջեմի [երկրում] ուտելիք վաճառողների մեջ բնավ հայ կամ հույն չկա։ Այս կողմերում ընդհանրապես հույներ չկան, միայն առևտուր անողներն են գալիս ու գնում։ Հրեաները, շիի բեթրիաները (?), կարաբիները շատ են։ Հերետիկոսներ, ջեբիներ, ջաֆերիներ, կադերիներ, հուրուֆիներ, ջեմինիներ և այլ աղանդավորներ[59] նույնպես շատ շատ են։

Նախշևան, Նաճշի ջիհան[60] (Նախիջևան) բերդի բնութագիրը։ Իսկապես, որ աշխարհի բուքալեմուն[61] նկարների քաղաք է։ Ոմանք Նախջվան, ուրիշները՝ Նախշվան են անվանում։ Իրանի քաղաքների պարծանքն է։ Ներկայումս Ադրբեջանի տերիտորիայում ընկած առանձին խանություն է, որի խանը մեծ թվով զինվորներ ունի։ Ունի նաև պետության հավատարմատար, քալանթար, մյունշի[62] և այլ պաշտոնյաներ, որոնք բոլորը պետական գործ են կատարում։ Կա նաև կադի և շեյխ-ուլ-իսլամ։

Այս քաղաքը հնագույն ժամանակներում կառուցել է Շահ-էֆրասյաբը[63], որի նախահայրերի գերեզմանների կամարները ներկայումս էլ երևում են։ Նրա իշխանության ժամանակ Նախիջևանը բարեշեն և հարուստ է եղել, դաշտերում և հարթավայրերում մի թիզ անմշակ հող անգամ չի մնացել։ Հետո մոնղոլական ցեղերը, ագահությունից դրդված, եկել են անթիվ զինվորներով և ավերել, քանդել այս քաղաքի Նաճշիջիհանները, բերդը հիմնահատակ կործանել և հողին են հավասարեցրել։ Հետագայում օսմանցի սուլթան Մուհամմեդ խան III-ի օրոք, երբ քաղաքը օսմանցիների ձեռքում է եղել, «մոլորյալ շահի»[64] կողմից եկել է Զյուլֆիքար խանը և Նախիջևանը գրավել։ Այնուհետև, սուլթան Մուրադ խան IV-ի զինվորները եկել և Դաբանի Յասը Մուհամմեդ փաշայի գլխավորությամբ գրավել են այս քաղաքը։ Ահա այսպես են աշխարհի գործերը...

(Սուլթան) Մուրադ IV-ից հետո այս վայրը ավելի է բարեշին-

վել ու հարստացել։ [Քաղաքում] 10 հազար 200 հողածածկ մեծ տներ, 70 ջամի և աղոթատեղիներ, 40 մզկիթ, 20 հյուրանոց, 7 գեղեցիկ բաղնիք և մոտ 1000 խանութներ կան։ Շինությունների մեծ մասը գեղեցիկ է։ Քաղաքը գտնվում է չորրորդ կլիմայի կենտրոնում, օդը բավականին խիստ է, այգիները և պարտեզները քիչ են և պտղատու ծառերն էլ սակավ։ Ունի 7 տեսակի բամբակ՝ զաղի, մոնլայի, զաֆերանի, լալի, խաս, սպիտակ։ Ցորենն ու գարին հայտնի են։ Արհեստավորները լավ վարպետներ են. փորագրիչներից հայտնի են Բահրամ Յուրին և Դեսթե խանին։ Ամբողջ աշխարհում ճանաչում են գտել այդտեղի չթերը։ Գարին շատ առատ է և ուժեղ. սև գարու չորս օկկան բավականացնում է մի ձիուն։ Բանջարանոցներում ընտիր ձմերուկ և սեխ է լինում։ Կանայք սպիտակ և բարեձև գեղեցկուհիներ են։ Տղամարդիկ երկար գլխակապ են փաթաթում և դեղեցիկ զարդարուն փեշերով հագուստներ հագնում։ Ոտքերին գույնզգույն թաղիքե կոշիկ, կանաչ, կարմիր և նարնջագույն չստեր են կրում։ Կանայք սուր-սուր թաքիյեներ են դնում [գլխներին] և ծածկվում են սպիտակ սավանով, ոտքերին գույնըզգույն չըզմաներ հագնում։ Ընտրյալները բազմատեսակ, բարձրորակ Իսֆահանի մուշտակներ են հագնում, ծանրաբարո շարժ ու ձև ունեն, նուրբ ու գեղեցիկ են խոսում և ժողովրդի հետ մոտիկություն ցույց տալիս։ Ժողովուրդը շաֆիներ[65] են։

«Մենք Շաֆիի դավանանքին ենք պատկանում»,—ասում են և պնդում նրանք, սակայն սուտ է, ջաֆերիներ են։ Հետևում են էզանի հինգ որոշյալ ժամերին, սակայն միատեղ են նամազ առնում։ Մեծ և հիանալի ջամիներ կան, ինչպես օրինակ՝ Ահմեդ փաշայի, Գյոզել Ալի փաշայի, Ջղալ-օղլիի, Խատեմ Ջաֆէր փաշայի ջամիները, որոնք նկարազարդ, ֆաղֆուրով և չինական ապակիներով զարդարված ջամիներ են։ Շատ ջամիների կամարները հախճապակիով են ծածկված...

Նախիջևանի Ռիզա-էդդին խանը եկավ մեզ դիմավորելու և դեսպանին ու նվաստիս մի այգի տարավ։ Այգում բոլոր այանների և ազնվականների ներկայությամբ նամակներ կարդաց։ Կազմվեց մի մեծ մեջլիս։ Խանը բարձրաստիճան, վեհանձն և գեղեցկախոս էր։ Ծագումով վրացի փեշե[66] է եղել, որը սուլթան Մուրադ IV-ին Բաղդատը հանձնող Շահ-Մեֆիի գլխավոր խազինատարի պաշտոնից հասել է խանության և Արիստոյի (Արիստոտել) նման նախատեսող մի անձնավորություն էր։ Ազգականը Դևլեթ Միրզա խանն է։ Այս անգամ, խնջույքից հետո, մեր փաշայի կողմից ուղարկված պատ-

դամավոր Ալաջա Աթլի Հասան աղային և նվաստիս մի մի պատվո խալաթ, տասական թուման բաղնիքի փող ու մի ձի նվիրեց և իր պատգամավորին էլ խալաթ հագցրեց։

Լուրջ և բարեսեր խան է, ունի 40—50 հեռատես մտքի տեր ուլեմաներ, նեգիմներ և զրուցակիցներ։ Այս քաղաքի թե ռայաները և թե բերայաները դեհկանների լեզվով են խոսում, սակայն իմաստուն բանաստեղծներ են։ Ուշիմ նեդիմները հիանալի խոսում են փեհլևիերեն և մոնղոլերեն...

Այնուհետև, Էվ. Չելեբին, ըստ իր սովորության, այդ լեզուներից բերում է մի շարք օրինակներ, թվեր, անուններ և գործածական խոսքեր։

...Այս նահիյեներում ապրող թերեքեմե-գյոքդուլաք և մոնղոլական ցեղերը տարբեր բարբառներ ունեն...

Նախիջևանի դաշտի նահիյեներում ապահով և ամրակուռ բերդեր կան։ Մենք տեսանք միայն մի քանիսը, բայց որովհետև այդ ժամանակ ավելի շատ որսորդությամբ էինք զբաղված, չկարողացանք ինչպես հարկն է դիտել դրանք։

Բոլոր բերդերից ամենից ավելի ամուրը Էլինջար Վան բերդն է, որը կառուցել է Մոնլա Կութբեդդինը։ Կան նաև Սերան, Սոսո-Մարուն անունով բերդեր։ Այս վերջինը կառուցված լինելով Միրվան-էլ-Համարի կողմից՝ կոչվել է Սոսի-Միրվան։

(էջ 218—240)

Էվ. Չելեբին այնուհետև անցնելով Պարսկաստան, շարունակում է գրի առնել իր ուղևորությունը։ Նա նկարագրում է բազմաթիվ քաղաքներ ու բերդեր։

8 ժամ դեպի հարավ գնալով, հասանք Քեսիքքենդ մենզիլը։ Սա հազար տուն ունեցող, այգիներով և պարտեզներով, երեք ջամիով, խանով և բաղնիքով բարեշեն մի գյուղ է... Այստեղից 7 ժամ ճանապարհ գնալով հասանք մեծ Արաս գետին, որը սկիզբ է առնում Վանի էյալեթի Փիթանշի քրդերի լեռներից հոսում է դեպի հյուսիս և խառնվում Զանգի գետին (?)։ Անգամ ձիով անհնար է անցել այս գետը։ Այստեղից շարժվելով, անցանք բարեշեն ու ծաղկազարդ գյուղերի միջով և մեկ ժամ հետո հասանք Կարաբաղ քաղաքը։

Կարաբաղ բաղաքի բնութագիրը: *Փոքր Ադրբեջանի քաղաքներից է։ Այս քաղաքը ավերել է Էյրիյի ֆաթիհ սուլթան Մուհամմեդ խանի վեզիրներից մեկը՝ մեծ սերդար Կոջա Ֆերհատ փաշան։ Հետագայում նորից բարեշինվել է, սակայն բնակչության անհնազան-*

*դության պատճառով սուլթան Մուրադ IV-ը Երևանը նվաճելուց հե-
տո, վերադառնում է և դարձյալ ավերում այն: Ներկայումս աստի-
ճանաբար նորից վերաշինվում է: Թավրիզի սահմաններում ընկած
առանձին սուլթանություն է: Ունի հազար զինվոր, քալանթար,
դարողեչ, մյունշի, բինբաշի և դիզ-չեոքեն աղա: Ընդարձակ դաշ-
տում ընկած, դրախտանման այգիներով, հազար տուն ունեցող մի
քաղաք է: Ունի 7 ջամի, 7 բաղնիք, 3 խան և 600 խանութ: Այս բա-
րեշեն քաղաքի մշակված դաշտերը շատ են, բարեգործական շի-
նությունները բազմաթիվ: Օդն ու ջուրը հիանալի են, գետերը արա-
գահոս, անուշահամ ու վճիտ: Այգիներն ու պարտեզները զարդա-
րում են անսահման դաշտերը: Ուտելիքներից և խմիչքներից հայտ-
նի են տասը տեսակի կարմրավուն և հյութեղ խաղողները, ընտիր
գինին, 18 տեսակի համեղ ու հյութեղ նուռը: Գետնի տակից ամեն
կողմ են հոսում քեհրիզների ջրերը: Հնագույն ջամիների և մզկիթ-
ների սուր գմբեթները գեղազարդ են...*

*Այս քաղաքի բնակիչները, քաղաքը բարեշինելու պայմանով,
ազատված են բոլոր տեսակի սովորական հարկերից: Միայն Պարս-
կաստանի շահին իբրև նվեր տանում են տարեկան հարյուր ուղտի
բեռ օրդուբադի, մալաշա, աբասի տանձերի, ծիրանի, դեղձի, սերկե-
վիլի հիր, չամիչ և այլ բազմաթիվ պտուղներ: Ադրբեջանում երեք
Կարաբաղ կա, որոնցից յուրաքանչյուրը դրախտանման այգիներ
ունի:*

*Այս քաղաքից մեկնելով դեպի հարավ, մեկ ժամ քայլելուց հե-
տո, Երս դետը ժան գետակին խառնվելու վայրում հազարավոր
դժվարություններով անցանք: Այս գետերը Վանի Փիթանշիի և Ա-
բաղայի լեռներից հավաքվելով հոսում են այստեղից և Նախիջևանի
դաշտից երեք մերհալե ներքև միանում են Արաղ գետին, սա էլ Կուր
գետին, իսկ Կուր գետը միանում է Թերեք գետին[67] և թափվում Խա-
զերի Գիլանի ծովը:*

*Շարունակելով իր ուղևորությունը, Էվ. Չելեբին իջևանում է Թավրիզի էյալեթի
Գերգեզի, Զինուսի գյուղերում և հետո Թեսվի քաղաքում: Այստեղից մեկնում է
Մերենտ և այնուհետև Թավրիզ:*

*Թավրիզում Էվ. Չելեբիին մեծ շուքով ու հանդիսավորությամբ ընդունում է Ալի
խանը:*

*Էվ. Չելեբին խանին է հանձնում էրզրումի վեզիր դեֆթերդար Ջաղե Մուհամմեդ
փաշայի գրությունը և նվերները:*

Մեծ քաղաք և հնագույն բերդ Թավրիզի բնութագիրը: *Մոնղոլե-
րեն* **Թիվրիս** (تبرس) *է կոչվում: Դրի լեզվով՝* **Թիվրիզ**, *Դեհկանով՝*

Թաբրիզ, բուն ֆարսերենով՝ Թաբրիզ (تبریز), որ նշանակում է տենդ բափող: Արդարև, որևէ դողացնող այլ երկրներից Թավրիզ գալուն պես, սրա ջրի շնորհիվ նոր հոգի է ստանում և տենդից ազատվում է։ Եգիպտական Կահիրեում էս տենդ չկա։

Թավրիզի հիմնադիրը խալիֆա-Հարուն-էլ-Ռաշիդն է։ Հիշյալի խաթունը՝ Զեբիդեն, հաճելի համարելով այս վայրի օդն ու ջուրը, Մեմուն խալիֆայով հղի լինելով, ընտրում է այս անարատ հողը և մեծ ծախքեր անելով սկսում է կառուցել այս խոշոր քաղաքը, որը Աբասիների ֆարս ուլեմաների կողմից Թիբրիզ է անվանվել։ Թավրիզի շուրջը կարելի է շրջանցել երեք օրվա ընթացքում։ Հետագայում, Աբասյան խալիֆաներից մեկի՝ էլ-Մյութթեվեքիլ-Ուլալահի օրոք, տեղի ունեցած մեծ երկրաշարժից Թավրիզ քաղաքը ավերվում է և 40 հազար մարդ մնում են ավերակների տակ։ Մյութթեվեքիլ խալիֆան Բաղդատից մեծաթիվ զինվորներով գալիս է Թավրիզ, խոշոր գումար է ծախսում, քաղաքը նորից վերաշինում է և դառնում է նրա երկրորդ հիմնադիրը։ Քաղաքի մի կողմը հասել է Ուջան լեռանը, մյուսը Սեհլան լեռանը, մի ծայրն էլ Սենջան լեռանը։ Թավրիզի պարիսպը նախկինից ավելի ամուր և հաստատուն է։

Թավրիզի բերդի նկարագիրը: Շրջագիծը ընդամենը 600 քայլ է եղել։ Հիմա էլ հետքերը երևում են։ Ունի 300 աշտարակ, 300 պատնեշ, 6 դուռ։ Դռներն են՝ Դերվազեի-Ուջանը, Բաքի-Սերվանը Դերվազեի-Սերզուտը, Բաբի-Շամ Ղազանը, Բաբի-Սերուն, Բաբը-Թեբրիզի... Այս դռներից ամեն մեկում 500 զինվոր պահապանություն են անում։ Հելաքու խանը այս Թավրիզում հաստատվելով, որպես նրա երրորդ հիմնադիրը, ձգտում էր իշխել բոլոր փադիշահների վրա...

Հետագայում սուլթան Մուհամմեդ Շահ-Ղազանի արդարադատության և արդարության շնորհիվ այս վայրը բարեշինվում է այն աստիճան, որ Թավրիզը հասնում է մինչև Լիյան, Սենջան, Ուջան ու Սեհլան լեռները և աննման քաղաքի տեսք ստանում։ Չորս կողմից պարիսպ է շինվում, որի շուրջը ոտքով չորս օրում հազիվ կարելի լինի շրջել։ Աբասիների օրոք կառուցված բերդում ներքնաբերդ է լինում։ Դրանից հետո Թավրիզը մի շարք մելիքների և փադիշահների ձեռքն է անցնում, երբեմն ավերվում է, երբեմն բարեշինվում։ 959 (1551) թվականին Սուլեյման խանը [սուլթան] այստեղի ժողովրդին հպատակեցնում և իշխանությունը հանձնում է Շահ էլկաս Միրզային։ Սակայն 961 (1553) թվականին շիիները նորից գրավում են այն և, վերջապես, օսմանցի սուլթան Մուրադ III-ը իր վեզիրներից մեկին՝ Էոզդեմիր-օղլի Օսման փաշային սերդար է նշա-

նակում ու անթիվ զինվորներով ուղարկում է աջեմների երկիրը... Սա գրավում է Թավրիզը և ամբողջ Ադրբեջանը ձեռք գցելու նպատակով Թավրիզի կենտրոնում 12.700 արշին շրջագծով մի ամրակուռ բերդ է կառուցում։ Շահ-Ղազան անունով դարպասի վրա այսպիսի թվական է արձանագրված. «Թավրիզն առավ Էոզդեմիր-զադեն, թվական 993 (1585)»։ Մի այլ արձանագրության մեջ ասվում է. «Աստծո օգնությամբ Թավրիզը վերակառուցելով՝ դարձավ նրա հինգերորդ հիմնադիրը։ Զինվորներով 36 օրվա ընթացքում բերդն ապահովեց բոլոր կարիքներով և նրա պահպանության համար 40 հազար կուլ (զինվոր) նշանակեց...»։

Այդ ժամանակ Էոզդեմիր-զադեն մահանում է և նրան իբրև սերդար փոխարինում է Ջղալի-զադեն։ Ստամբուլից ուղարկված նոր սերդար Ջաֆեր փաշան գալիս է Թավրիզ, քաղաքը ավելի է բարեշինում և ճոխացնում։ Ջաֆեր փաշայի մարդահամարով քաղաքում 300 հազար, էյալեթում 500 հազար բնակիչ է լինում։ Սակայն հետագայում, երբ օսմանցի սիփահիները և ենիչերիներն ապստամբվում են, աջեմի շահը առիթից օգտվելով գրավում է Գենջեն, Շիրվանը, Շամախին, Դեմիր Կափուն, Երևանը (Ռևան), Նախիջևանը և Թավրիզը։ Հետո մեր էֆենդին՝ սուլթան Մուրադ IV-ը, Շիրվանի, Շամախիի, Թիֆլիսի ու Թումանիսի բերդերը գրավելու համար գալիս է Աջեմի երկիրը։ 7 օրվա ընթացքում ավերում է Երևանի բերդը, Նախիջևանը, Մերենդը և Կարադաղները, մի շաբաթ մնում է Թավրիզում և վերադառնում է Դարուսեադեթ (Ստամբուլ)։ Մյուս կողմից Շահ Աբասը իր Իրանի և Թուրանի զինվորներով գալիս է Թավրիզ և քաղաքը վերաշինում։ Այս քաղաքը աջեմների ձեռքումն է և Ադրբեջանի մայրաքաղաքն է։ Խանություն է։ Մի քանի անգամ խանություն է եղել։ Ունի 10 հազար զինվոր, մյուֆթի, շեյխ-ուլ-սադաթ, մոլլա, քալանթար, մունշի, դարուղա, կափուջի-բաշի, դիզչեոքեն-աղա, յասաուլի-աղա, էշիկի-աղա և միհմանդարներ[68]։ Այս բազմաթիվ աղաները Թավրիզ քաղաքը կառավարում և արդարադատություն են անում։ Ոչ ոք չի կարող ուրիշին պատկանող անգամ մի հատիկին ձեռք տալ։

Այնուհետև, էվ. Չելեբին նկարագրում է Թավրիզի ջամիները, մեդրեսեները, դար-ուլ-հադիսները և դերվիշների թեքյեները.

Աղբյուրները և հոսող ջրերը: Վեց հոսող աղբյուրներ կան, որոնց ակունքները լեռներում են։ Բացի դրանցից քաղաքի ներսում և քաղաքից դուրս 900 քահրիզներ կան։ Ունի 1100 սեբիլխանեներ, որոնք գեղազարդ շենքեր ունեն...

Թաղամասերը։ *Այս երկրում թաղամասերը* դերվազե են *կոչվում։ Կա մոտ 1070 դերվազե. Նշանավորներն են՝ Դեմեշգիյեն, Փելբաղը, Կամրջի թաղը, Մեյխուրան, Ռեզչոն, Շեթերբան, Խիյաբան, Սերխաբր և այլն։*

Այանների դղյակները։ *1070 դղյակներ կան։ Ամենանշանավորները՝ Ալլահվերդի, Ռյուսթեմ, Բենդ, Փիրիվդան խաների դղյակներն են և խաների հատուկ դղյակն է։*

Իջևանատները։ *200 իջևանատուն կա։ Նշանավորները Ջեբիտեի, Շահ-Ջիհանի, Շահ-Իսմայիլի, Փերթուղանի, Դուխտերշահի իջևանատներն են։ Կան նաև 110 բեքյար-խաներ*[69]*։*

Շուկան և բեդիստանը։ *Ընդամենը 7000 խանութ կա։ Մեծ մասը Հալեպի ձևով քարուկրե ամուր շինություններ են։ Բոլոր ապրանքները այս շուկայումն են վաճառվում։ Մի մեծ բեդիստան կա, ուր առևտուր են անում բազմաթիվ խոջաներ։ Այս քարաշեն, մեկ կամարով մեծ բեդիստանի նմանը ոչ մի տեղ չկա։ Ունի չորս երկաթյա դռներ, որոնք բացվում են դեպի շուկան։*

Ժողովրդի դեմքն ու գույնը։ *Օդի և ջրի լավության շնորհիվ ծերերն ու երիտասարդները, ամբողջ ժողովուրդը, առողջ և բարեկազմ են, գեղեցիկների դեմքի գույնը ժպտացող վարդի նման կարմիր է, սիրունիկ բերանները փոքրիկ բուքալեմուն տուփի են նման։ Իրենք սլվի հասակով, կարմիր այտերով և սև, հաճելի դեմքով մարդիկ են, սակայն հպարտ են ու գոռոզ։ Նրանց վարվելակերպը ազնիվ է, խոսելաձևը քաղցր է և հաճելի։*

Ազնվականները և այանները։ *Ազնվականները՝ էշրաֆները, այաններն են, բայց կան նաև բազմաթիվ ցածր դասի մարդիկ։ Շատ են նաև էվշարի, դումդումի, դումիվելի, խելչանի, թերեքեմե և գեոքդուլաքի դասերը, որոնք զբաղված են առևտրով և խիստ հարուստ են։ Բոլորը պատկանում են շիի դավանանքին։*

Այնուհետև, էվ. Չելեբին գրում է ուլեմաների, այուլեհանների, գրողների և բանաստեղծների լեզվի և բարբառների մասին։

Բնակչության հագուստը։ *Այաններն ու էշրաֆներն իրենց գլխին կարմրավուն և կարմիր գլխակապեր են փաթաթում։* Կըզըլ-բաշ *անունը դրանից է առաջացել։ Շատերը աջեմական սպիտակ մեհմեդիից սարըք են փաթաթում։ Սակայն սրանք իրենց գլխանոցի վրա անպայման կրում են թաջ կոչված սրածայր գլխարկը։ Ուլեմաների թաջը երկու թիզից ավելի է։ Այանները կապույտ սամույր, իսկ մնացածները սավի են հագնում։*

Եղանակը։ *Այս երկրում նեսիմ անունով մի քամի է փչում*

առավոտյան, որն ամբողջ ժողովրդին նոր կենդանություն է շնորհում, այդ պատճառով այստեղ տենդ բոլորովին չկա. Շեյխերն ու ծերերը ապրում են մինչև 170 տարեկան և Արիստոտելի նման մտածող մարդիկ են։

Ջրհորները: Թավրիզում 9 քեհրիզի ջրերից բացի, մոտ 7000 ջրհորներ կան։ Քեհրիզի ջրերը հորերի ջրերից ավելի լավն են։ Ջրհորների խորությունը 30—40 արշին է։ Ձմռանը ջրերը տաք, իսկ ամռանը սառն են լինում...

Հացահատիկներն ու բերքը: Այստեղի դաշտերում մշակված 7 տեսակի ցորենը շատ հատիկառատ է, գարին էլ առատ բերք է տալիս։ Ունի 7 տեսակի բամբակ։ Մյուս բերքերը նմանապես առատ են։ Մի խոսքով հարուստ և բերքառատ երկիր է։

Արհեստները: Այստեղի ներկարարներն ու նկարիչները, ոսկերիչներն ու դերձակները կատարյալ վարպետներ են և ոչ մի երկրում չկան։ Այս քաղաքում կան բոլոր տեսակի արհեստավորներ։ Մասնավորապես, այստեղ գործված կերպասները, մետաքսյա հագուստները, թավիշը հայտնի են Թավրիզի ղումաշ անունով։

Այնուհետև, Էվ. Չելեբին խոսում է Թավրիզի բարեգործական հիմնարկությունների, հայտնի և ընտիր ուտելիքների, պտուղների, խմիչքների և այլնի մասին։

ԹԱՎՐԻԶԻ ՍՐՏԱՌՈՒՉ ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր առավելություններից մեկն այն է, որ հոսող ջրերը առատ են, գիշեր-ցերեկ մեծ ճանապարհները մաքրում են, ոչ մի փոշի չեն թողնում և հետո ջրում են։ Շուկաները, փողոցները այնքան մաքուր և զով են լինում, որ անգամ հուլիս ամսին շուկաներում մարդիկ շոգից չեն նեղվում։

Երկրորդ առավելությունն այն է, որ Մուհամմեդի սերնդի ազնիվ կույսերին ծառա դասակարգին կնության չեն տալիս...

Երրորդ առավելությունն այն է, որ Շեյխ Սեֆիի կանոնի համաձայն, բոլոր շուկաներում գնումն ու վաճառքը բեսի և աբասի ոսկով է կատարվում։ Այս երկրում մյուս երկրների դրամները չեն անցնում։ Դրամ կտրվում է 7 տեղում՝ Էրդեբիլում, Համադանում, Բաղդատում, Իսֆահանում, Թիֆլիսում, Նեհավենդում և Թավրիզում։ Դրամների մի երեսին գրված է՝ لا اله الا الله علی . لی الله, մյուս երեսին՝ շահի անունն է։ Օրինակ՝ Շահ-Աբասի Թավրիզում կտրած

դրամի վրա գրված է՝ قاغلام کلب علی شاه عباسی Կազիքի՝ *դրամների վրա գրված է՝ ضرب فی تقلیس، ضرب فی تبریز, իսկ մյուս նախշրված կողմում, թվականն է փորագրված։ Անցուկ դրամների և էնտազեների ծայրերին, քիլենիրի, գործածվող կերպասների վրա գրված է նվիրական նախադասությունը։ Վայ այն մարդուն, որ այդ նվիրական խոսքին հակառակ առևտուր անի։*

(էջ 240—276)

Այնուհետև, էվ. Չելեբին նկարագրում է Թավրիզի մեծ ուխտատեղիները, ինչպիսիք են Կամշի բերդը, Մեսաղե քաղաքը, Հնագույն Ուջան բերդը, Իրանի հնագույն մայրաքաղաք Էրդեբիլը և այլն։

Թավրիզի խանը էվ. Չելեբիին տալիս է Էրզրումի փաշային ուղղված նամակ և 10 ուղտաբեռ տարբեր նվերներ, որոնց թվում երկու վրացի ղուլամ։ Իրեն՝ էվ. Չելեբիին, խանը այլ նվերների հետ միասին տալիս է մեկ վրացի ղուլամ։

Վերջում էվ. Չելեբին գրում է. «Թավրիզում 42 հայկական եկեղեցի կա»։

(էջ 263)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԹԱՎՐԻԶ ՎԻԼԱՅԵԹԻՑ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Թավրիզից էվ. Չելեբին ուղևորվում է դեպի հյուսիս և անցնելով «Թավրիզի ծաղկազարդ դաշտերով և բարեշեն վայրերով», ճանապարհին իջևանում է Հաջի Հարամի, Սեֆյան գյուղերում, Մեզիտխան մենզիլում, Քերեմիլ գյուղում և ապա հասնում է Խոյ բերդը։

Խոյ քաղաքի և բերդի բնութագիրը: *Ադրբեջանի հողում առանձին սուլթանություն է, որը մոտ հազար նյոքերներ ունի։ Ունի նաև կադի և մյուֆթի, նադիբ և մյունշի, քալանթար և դարուղե, կուրուջի, դիզ-չեոքեն և միհմանդարի պաշտոնյաներ։ Խոյ քաղաքը ընկած է Մենենտի արևմուտքում՝ 10 փարսախ հեռավորության վրա, հարթ դաշտում և քառանկյունի, ամրակուռ մի բերդ է։ Շրջագիծը 20 հազար քայլաչափ է։ Չորս կողմում գտնվող խրամները շատ խոր չեն։ Ունի երկու դարպաս. մեկը հարավում՝ Թավրիզի դարպասը, մյուսը արևմուտքում՝ Մենենտի դարպասը։ Բերդի մեջ 100 տուն և մի ջամի կա։*

Բերդի հիմնադիրը եղել է Ֆերհադ փաշան, իսկ հին քաղաքի հիմնադիրը Հայդար փաշան է եղել։ Այս քաղաքը մի քանի անգամ ավերվել և վերաշինվել է։ Քաղաքից դուրս 7000 տուն, 70 ջամի,

---

• Կազիքի قازبکی) պղնձյա դրամ, այսինքն՝ մանր (ծանոթ. հրատարակչի)։

2 բաղնիք, 7 խան և մոտ հազար խանութ կա։ Չորս կողմը զարդարված է այգիներով և պարտեզներով։ Այս քաղաքի շրջապատը 13 հազար քայլաչափ է։ Մուրադ խան IV-ի ավերումից հետո աստիճանաբար վերաշինվում է։

Այս դաշտավայրը բրինձ է տալիս։ Եղանակը տաք է։ Հայտնի են նաև բամբակն ու հյութեղ խաղողը։ Գետը Սալմասի լեռներից հավաքվելով խառնվում է Արազին։ Հայտնի են այգիներն ու պարտեզները, վարդաստանները։ Պտուղներից նշանավոր է փեյղամբերի տանձը։

Ժողովրդի դեմքն ու գույնը սպիտակ է։ Գավառներում 180 բարեշեն գյուղեր կան։ Բնակիչների մեծ մասը շաֆիի սյունիներ են։

Այստեղ Խոյի խանին հասցեագրված նամակներ հանձնեցի, երկու օր հաճելի և ուրախ ժամանակ անց կացրինք, բազմաթիվ նվերներ և 200 զինված ընկերներ առնելով ուղևորվեցինք և 9 ժամից հետո հասանք Բեհիստուն քաղաքը։ Խոյ քաղաքից նշանակված առանձին քալանթար ունի։ Նախկինում Թավրիզի նման քաղաք է եղել։ Այս քաղաքը ավերել է Հելաքու ցեղը։ Ներկայումս 1000 տուն ունեցող փոքր քաղաք է... Այստեղից շարժվելով դեպի հյուսիս, հասանք Չորսի բերդը, որ Նախիջևանի տերիտորիայում ընկած առանձին խանություն է, ունի 2000 զինվոր ... Քաղաքից դուրս 7000 տուն կա... ունի նաև շատ բարեշեն պալատներ...

Այստեղից եկանք Մելլիի Ռիվան գյուղը, որը Երևանի տերիտորիայում ընկած 500 տնով, այգիներով ու պարտեզներով գյուղ է։ Ապա անցնելով կանաչազարդ դաշտերի միջով, հասանք Թութ-Ալիմի մենզիլը, որտեղից շարժվելով Արազի գետեզերքով և գետն անցնելով՝ իջևանեցինք Կուֆաջ գյուղում։ Սա բրնձի բերքով հարուստ, բարեշեն և գեղեցիկ գյուղ է։ Այստեղից գնացինք Օշարլի գյուղը, որտեղ ապրում է թուրքմեն օշար ցեղը։ Ապա, նորից Արազի եզերքով առաջ շարժվելով եկանք Շորագյալ քաղաքը, որը հնում մեծ քաղաք է եղել, սակայն ներկայումս այնքան էլ շեն չէ։ Սուլթանություն է։ Այստեղից եկանք Շարաբ-խանի մենզիլը, ապա Սեյֆեդդին գյուղը, որն ընկած է Երևանի տերիտորիայում, Արազի եզերքին և Երևանի խանի խասն է։ Սուլթան Մուրադ IV-ը Երևանի պաշարման ժամանակ այս գյուղից 70 հազար մեծ ծառեր է կտրել, Երևան տարել և ամրություններ կառուցել։ Այս գյուղից մարդիկ ուղարկեցինք Երևանի խանի մոտ և հաջորդ օրը, վաղ առավոտյան շարժվեցինք դեպի Երևան։

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Ադրբեջանի Երևան բերդի բնութագիրը: *Երբ մենք քաղաք մտանք, 20 թնդանոթ արձակեցին և հանդիսավորություն տեղի ունեցավ։ Շքերթով մտանք խանի պալատը։ Պալատում ոչ ոք չկար, դատարկ էր։ Պարզվեց, որ խանի քրոջը տվել են Խազերի ծովեզերքին գտնվող Բաքու բերդի խանին և տեղիս խանը հարսանիքի է գնացել։ Քեթխուդան մեզ ընդունեց դղյակում, ուտելիք ու խմելիք տվեց և մենք սկսեցինք հաճելի ու զվարճալի ժամանակ անցկացնել... Նվաստս, որ այստեղ պետք է քարավան հավաքեի, մեր կարելիության սահմաններում, դիտեցի նշանավոր Երևան քաղաքը։*

Երևան քաղաքի կառուցման մասին: *810 (1407) թվականին էմիր Թիմուրի վաճառականներից մեկը՝ Խոջա-խան Լեհազանին, ոտք է դնում Երևանի հողի վրա և ի՞նչ տեսնում. մի արգավանդ հող... Իր բոլոր մարդկանց հետ միասին անմիջապես հաստատվում է այստեղ։ Զբաղվելով բրնձի մշակությամբ, օրեցօր հարստանում է և այդտեղ մի մեծ գյուղ է հիմնում։ Այնուհետև, 815 (1412) թվականին Իրանի Շահ Իսմայիլը իր վեզիրներից մեկին՝ Ռեվան Կուլի խանին, հրամայում է այդտեղ մի բերդ կառուցել։ Նա էլ 7 տարվա ընթացքում կառուցում և բերդին տալիս է իր անունը։ Զանգի գետի արևելյան եզերքին ընկած, կղմինդրով և քարով շինված գեղեցիկ բերդ է, սակայն միհարկանի է։ Հետագայում, 939 (1532) թվականին Սուլեյման խանը (սուլթան) արշավում է Նախիջևանի վրա և գրավում այն։ Այնուհետև, իսլամական զորքերի շնորհիվ գրավում է նաև Երևանը, նրա ամուր և փոքր բերդը ամբողջությամբ քանդել է տալիս և մեծ ավարով վերադառնում է իր մայրաքաղաքը։ Հետագայում, Մուրադ III-ի օրոք, Աջեմի երկրի վրա սերդար է նշանակվում մեծ վեզիր Ֆերհադ փաշան, որը կողոպտում ու թալանում է Գենջեի, Շիրվանի, Շամախիի, Երևանի և Նախիջևանի կողմերը, Շահի որդու և նրա ենթակաների դղյակները ավերում և քարը քարի վրա չի թողնում։ Հետո գալիս կանգ է առնում Երևանի բերդի տակը ու հանգստանում։ Երևանը ամբողջությամբ ձեռք բերելու նպատակով խորհրդակցում է մարդկանց հետ և Զանգի գետի եզերքին, Թոքմաք խանի Սարայ անունով դրախտանման այգին մեջ առնելով՝ ձեռնարկում է հարավից հյուսիս մի մեծ փոս փորելու աշխատանքին։ 150 հազար իսլամական զինվորներ, 45 օրվա ընթացքում եռանդով կառուցում, վերջացնում են բերդը և 40 օրվա ընթացքումն էլ լրացնում են բերդի ռազմամթերքներն ու այլ կարիքները։ Առաջին միր-*

միրանությունը՝ վեզիրության աստիճանով, տրվում է Սուլեյման խանի հարգելի ընտանիքում մեծացած ու դաստիարակված Ջղալեզադե Յուսուֆ փաշային։

Ֆերհադ փաշան բերդի պաշտպանության համար այնտեղ 70 հազար զինվոր է թողնում և ինքը գնում է այդ շրջանում գտնվող Շորագյալի բերդը նորոգելու։ Վերանորոգումից հետո այնտեղ ևս զինվորներ է թողնում։ Այնուհետև նորոգում է նաև Կարսի բերդը և հավատացյալ զինվորներով լցնում։ Գրավում է Արդահանը, նորոգում է Ախալցխայի սպիտակ մարգարիտի նման բերդը, մեջը 3000 զինվոր է թողնում։ Թեմրիս խան-օղլիին, վեզիրության աստիճանով, Ախալցխայի կառավարիչ է նշանակում և ինքը վերադառնում է Ստամբուլ։

Մյուս կողմից արդարադատ Ջղալե-զադե Յուսուֆ փաշան իշխում է Երևանի էյալեթում, քաղաքը նորից ձեռք է բերում Սուլեյման խանի ժամանակի բարեշինությունը և յուրաքանչյուր գյուղ վեր է ածվում մի խոշոր քաղաքի։ Հետագայում, 1012 (1603) թվականին աջեմները գրավելով Գենջեն ու Շիրվանը, այնուհետև 7 օր անդադար գնդակոծում են Երևանը։ Էրզրումից օժանդակություն չհասնելու պատճառով, բերդում գտնվող մուսուլման ղազիները սոված ու ծարավ են մնում և ստիպված բերդը հանձնում են Աջեմի սերդար Թոքմաք խանին։ Այստեղից նրանք դուրս են գալիս և հետիոտն հասնում Կարս, այնտեղից էլ Էրզրում։ Մինչև 1037 (1627) թվականը [Երևանը] աջեմների ձեռքումն է մնում, նախկինից ավելի բարեշեն ու մարդաշատ է դառնում։ Սակայն միևնույն ժամանակ [Երեվանի] էմիր-Գյոն խանի զինվորները Կաղզվանի, Կարսի, Ախալցխայի և Արդահանի վրա ոտնձգություններ են կատարում։

Ախալցխայի և Վրաստանի բեյերի կողմից հավաքական խնդրագրեր և օգնություն խնդրող պատգամավորներ են ուղարկվում Ստամբուլ։ Անմիջապես Աջեմի շահի մոտ դեսպաններ են ուղարկվում...

Անատոլիայի և Ռումելիի բոլոր միրմիրանները շարժվում են դեպի Երևան։ 1044 (1634) թվականին սուլթան Մուրադ խան IV-ը իր անթիվ զինվորներով կանգ է առնում Սկյուտարի դրախտանման այգու սուլեյմանական վրանում։ Իրագործվում են օսմանյան կանոնները և արարողությունները, պատրաստվում ու լրացվում են բոլոր պատերազմական հանդերձանքները։ [Փադիշահը] 40 հազար ենիչերիների և 22 հազար սիփահիների շատ մեծ նվերներ տալով վերցնում է իր հետ։ Իբրև տեղակալ Ստամբուլում թողնում է Բայ-

րամ փաշային։ Նույն թվականի նվիրական շևվալ ամսի 5-ին նա Սկյուտարից շատ մեծ արագությամբ գալիս է Կոնիա, ապա Կեսարիա և այնտեղից Սվազ...

Այստեղից անցնելով մի շարք մենզիլներով, Էրզրումի դաշտում երկու կողմից բանակին միանում են նոր զորամասեր և բանակի զինվորների ընդհանուր թիվը հասնում է 200 հազարի։ Գալիս է նախ Ռումելիի էյալեթի մյութասաթրիֆ Ջանփոլադ-զադե Մուստաֆա փաշայի 30 հազարանոց զորամասը...

Էրզրումից երեք օրվա ընթացքում հասնում են Հասան Կալա, այնտեղից էլ՝ Կարսի ճանապարհով, գալիս են Երևան։ 21-րդ օրը [Ստամբուլից դուրս եկած օրից] 200 հազարանոց բանակով Երևանի էյալեթում վրաններ են խփում։ Բերդից երկարաձև թնդանոթներով աչեմները զինվորներին նեղություն են պատճառում, սակայն [օսմանյան] զինվորները, ուշադրություն չդարձնելով թնդանոթաձգության վրա, անցնում են Զանգի գետի մյուս ափը...

Գետն անցնելով, բոլոր ղազիները օր-ցերեկով, բոլորի աչքի առաջ, սկսում են խրամատներ փորել։ Թավրիզի դարպասի կողմից Ռումելիի էյալեթի զինվորները, Ջանփոլադ-զադե Մուստաֆա փաշան իր էյալեթի զինվորներով և 20 օդա ենիչերիներով, խրամատների մեջն են մտնում։ Աջ կողմից Անատոլիայի վեզիր Գյուրջի Մուհամմեդ փաշան, իր էյալեթի զինվորներով և 20 օդա բարձր Դերգյահի ենիչերիներով, նույնպես խրամատներ են մտնում։ Սադրազամ Դաբանի-Յասը Մուհամմեդ փաշան, իր կափու-կուլիի զինվորներով և 20 օդա ենիչերիներով, Ռումելիի և Անատոլիայի զորամասերի միջև ընկած տարածությունում, խրամատ են մտնում և սկսում են կռվել։ Ենիչերիների աղան՝ Կարա-Մուսթաֆա փաշան, ենիչերիների քեթխուդայի և 10 օդա ենիչերիների հետ միասին, Զանգի գետի կողմից սկսում է բերդը գնդակոծել 20 թնդանոթով։ Մի օր [սուլթան] Մուրադ խանը, անձամբ մտնում է Ռումելիի էյալեթի զինվորների խրամատը, Կարա-բալի կոչված թնդանոթով նշան է բռնում խանի պալատին և թնդանոթի մի արկ դիպչում է նշանին։ 20 թնդանոթներ սկսում են որոտալ հինգ կողմից։ Էրզրումի վալին՝ Քյուչյուկ Ահմեդ փաշան, հյուսիսային կողմից մի բարձր ամրության վրա կանգնած, 50 թնդանոթով աչեմներին թույլ չի տալիս գլուխ բարձրացնել և սկսում է քանդել բերդը։ Երևանի բերդին նայող Մոհնադի բլուրից, քափուդան Դելի Հյուսեյին փաշան գիշեր-ցերեկ անդադար, շարունակում է գնդակոծել բերդը դրսից և ներսից։ Թնդանոթների հարվածներից բերդի ոչ միայն պատվարներում և որմնախորշերում, այլև գետնափորերում մնալն անկարելի է դառնում...

Մի խոսքով բերդի չորս կողմը, հինգ ժամվա ընթացքում լցվում է մարդկային ծովով։ Պահակները սկսում են կողոպտել ու թալանել վիլայեթը։ Այլ ելք չունենալով սյուննի այանները ամեն օր նվերներ էին բերում և աման էին խնդրում։ Սակայն [օսմանյան բանակը] բոլոր ջանքերը գործ էր դնում, որ բերդը շունչ չկարողանա քաշել։

Իններորդ օրը, բերդի աշտարակների և պատնեշների վրա բարձրացած աջեմները՝ «աման, աման, ո՛վ դու ընտրյալ Ալ-Օսման» կանչելով, խանի միջոցով ուղարկում են բերդի բանալիները և աման են խնդրում։ Հավատացյալ մարտիկները լցվում են բերդը։ Հաջորդ օրը, Մազանդարանի հրացանաձիգների աղան՝ Միր Ֆեթթահը, դուրս է գալիս բերդից և փադիշահի ոտքերը համբուրելու շնորհին արժանանում։ Պահապան զորամասերը ուղարկվում են դեպի Նախիջևան։ Բերդում Մուհամմեդի էզան է կարդացվում և բերդի աշտարակներն ու պատնեշները 7 օր շարունակ զարդարվում են դրոշակներով։

Բերդը 40 օրվա ընթացքում նորից նորոգվում և վերակառուցվում է, Մյուրթեզա փաշան Երևանի իշխող է նշանակվում։ Նա 40 հազար մուսուլման ղազիներով մնում է բերդը պահպանելու։

Հետագայում, Աջեմի շահը 100 հազարանոց բանակով գալիս, սկսում է գնդակոծել Երևանի բերդը և մեծ նեղություն է պատճառում [օսմանցիներին]։ Դաբանի-Յասր Մուհամմեդ փաշան թշնամացած լինելով Երևանում պաշարված Մյուրթեզա փաշային, Երևանին օգնության չի գալիս։ 7 ամսյա պաշարումից հետո բերդում սննդամթերքներն ու վառոդը վերջանում են։ Մյուրթեզա փաշան կուլ է տալիս իր ադամանդե մատանին և մահանում։ Հաջորդ առավոտյան օսմանցի զինվորները աման կանչելով դուրս են գալիս բերդից և բերդը հանձնում են Շահին։ Երբ զինվորները դուրս են գալիս, կըզլբաշները նրանց վրա են հարձակվում, մի մասին ոչընչացնում են, մյուսներն էլ իրենց գցում են Արաղ գետը։ Գետն ընկածների միայն մի մասն է ազատվում։ Նրանք ապաստանում են Կարսի և Բայազիդի բերդերում։

Երբ Սուլթան Մուրադ խանը ստանում է այս դժբախտ լուրը, փութաջանությամբ գոտին երկու անգամ իր մեջքովն է փաթթում[70] և ջանք է թափում աջեմների ձեռքից ազատել մեր մեծ Իմամի գերեզմանի քաղաքը՝ դրախտաշեն Բաղդադը։

1045 (1635) թվականից սկսած Երևանը աջեմների ձեռքումն է և բարեշինվել ու շենացել է։ Սակայն որովհետև բերդը միայն մի պարիսպ ունի, ուժեղ հարձակումների չի կարող դիմանալ։ Բերդը

գտնվում է Զանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է։ Մինչև հիմա էլ նրա պարիսպների և պատվարների վրա երևում են [սուլթան] Մուրադ IV-ի թնդանոթների հետքերը։ Ֆերհադ փաշայի կառուցած մասի բարձրությունը 40 արշին է, իսկ Թոքմաք խանի կառուցածը 50 արշին երկարություն ու 20 արշին լայնություն ունի և քարուկրով է շինված։ Զանգի գետի կողմից խրամներ չունի, բայց որմնախորշերը շատ են։ Հարավային, արևելյան և հյուսիսային կողմերում խրամներ կան, բայց որովհետև վայրը ջրառատ է, այնքան էլ խոր չեն։ Խրամների որոշ տեղերի լայնությունը հասնում է 150 արշինի։ Ունի երեք հաստատուն երկաթե դարպաս։ Թավրիզի դարպասը բացվում է դեպի հարավ, Մեյդանի դուռը դեպի հյուսիս։ Վերջինս կոչվում է նաև Յայլայի դարպաս։ Զոբան Մեյդանին այս կողմումն է։ Մի դուռն էլ աջեմների Դերվազի-փել կոչված կամրջի դարպասն է։ Օսմանցիներից մնացած 100 մեծ ու փոքր թնդանոթներ կան։ Այլ ռազմական հանդերձանքների և ռազմամթերքի քանակը անհաշիվ է։

Այս վայրը Ադրբեջանի սահմանում գտնվելով դժվարությամբ է ընկել աջեմների ձեռքը։ Մոտ 3000 բերդապահ զինվորներ, 3000 խանի զինվորներ և 7000 էյալեթի զինվորներ ունի։ Այս վայրը մի քանի անգամ խաների իշխանության ներքո է եղել։ Ունի կադի, մոլլա, նվիրական շերիֆ, քալանթար, դարուղա, մյունշի, յասաուլի աղա, կորուջի-բաշի, էշիքի-աղա, դիզ-չյոքեն-աղա, 7 միհմանդար և շեհպենդեր։

Քաղաքում կան մոտ 2060 հողածածկ տներ։ Ամենալավ շինությունը խանի դղյակն է, որը բարեշինվել է էմիր-Գյունե խանի կողմից։ Այս դղյակի մոտ, ձախ կողմից փողերանոցն է (զարբխանե), որտեղ աբասի և բեսի է կտրվում։ Յայլայի դռնից դուրս գտնըվող մեծ վարոշը կոչվում է էսքի շեհիր[71]։ Այս վարոշում կա խան, ջամի, շուկա, բազար։ Խանի այգին գտնվում է կամրջի ծայրին։ Այստեղ էլ ջամի, խան, բաղնիք և շուկաներ կան, կարծես քաղաք լինի։ 1045 (1635) թվականին, Աջեմի ձեռքն անցնելուց հետո, արևելյան կողմից դեպի դուրս բերդի շուրջը ավելացվել են երեք շարք քարուկրով լցված փոքր պարիսպներ։

(էջ 276—280)

Մեր դիտածները Երևանից Բաքու ուղևորվելիս: Երևանից հյուսիս, Զանգի-Կուր գետերի[72] ափով, բրնձի դաշտերի միջով անցնելով հասանք Խոջա-բաղի գյուղը, որը Երևանի խանի խասն է։ Գյուղն

ունի 500 տուն, ջամի, բաղնիք։ Բարեշեն և մեծ գյուղ է։ Այնտեղից դարձյալ շարժվեցինք դեպի հյուսիս և հասանք Դեմիրչի Հասան գյուղը։ Սա հնագույն ժամանակներում թուրքմենական քաղաք է եղել. ներկայումս, ձմռան ամիսներին, թուրքմեն ցեղերի համար ծառայում է որպես յուրթ։ Այստեղից նորից հյուսիս գնալով՝ եկանք Գենջե քաղաքը։

Գենջե մեծ ֆաղաֆի և բերդի բնութագիրը: Այս քաղաքը Իրանի Շահ Թահմասբ խանից 1014 (1605) թվականին ուժով գրավել է Ֆերհադ փաշան և իշխող է նշանակել Մուհամմեդ փաշային։ Սակայն աջեմները մեծաթիվ զինվորներով վեց ամիս շարունակ պաշարել են քաղաքը։ Մուսուլման ղազիները, օգնություն չստանալու պատճառով, ստիպված են եղել բերդը հանձնել և հեռանալ։ Սակայն աջեմները բոլորին ոչնչացրել են։ Էյրիի ֆաթիհ սուլթան Մուհամմեդ խանը տեղեկանալով այդ մասին, դիմում է որոշ նախաձեռնությունների, որոնք, սակայն անհետևանք են մնում։ Ներկայումս [Գենջէն] աջեմների ձեռքումն է և մեծ քաղաք է։ Շահը բերդը քանդել է տվել։

Քաղաքն ունի 6000 տուն, այգիներ ու պարտեզներ, ջամի, խան, բարեգործական շինություններ, բաղնիք, բեզիստան և բարեշեն շուկա։ Քաղաքը գտնվում է այգիներով ու պարտեզներով հարուստ մի դաշտում, իսկ հարավից լեռներ են։ Լեռները ևս ամբողջովին այգիներով են ծածկված։ Գենջեի թթի մետաքսը հայտնի է ամենուրեք։

Դաշտերում չորս կողմից տարածվել են 7 նահիյեի գյուղերը, որոնք զբաղվում են բամբակի ու բրնձի մշակությամբ և մետաքսագործությամբ։ Հայտնի են Գենջեի ձիու պայտը, երկաթը, ինչպես նաև մետաքսը։ Այս քաղաքը իշխանության կենտրոնն է։ Ունի 3000 նեոքեր. քարտուղար, քալանթար, դարուղա, կազի և դատավորներ...

Քաղաքում, խանի մոտ երեք օր հյուր մնալուց հետո, հիսուն ընկերներով Գենջեից շարժվեցինք դեպի հյուսիս։ Մեզնից աջ արևելքում, Բորիստանի խանության վիլայեթն էր։ Անցնելով նրա սահմանով, հասանք Քելեք Հեզար Ահմեդի մենզիլը։ Այս վայրում հնում քաղաք է եղել, ներկայումս 700 տնից բաղկացած, այգիներով ու պարտեզներով բարեշեն մեծ գյուղ է։ Սա Գենջեի խանի խասն է, ունի ջամի, խան և բաղնիք։ Հայտնի է այստեղի նուրբ մետաքսը։ Այստեղից դարձյալ դեպի հյուսիս շարժվելով, 9 ժամից հետո հասանք Մեքուչրուտ[73] գյուղը։ Կուր գետի եզերքին ընկած, 7000 տնից բաղկացած, ջամիով և բաղնիքով մուսուլմանական գյուղ է. քյաֆիր բոլորովին չկա։ Մետաքսը շատ ընտիր է։ Կուր գետի մյուս ափին

Քենդերե անունով հայկական գյուղ կա, որտեղից նրանք [հայ գյուղացիները] նավակներով անցնում են Միքուշքուտ և ձեռնածություններ անում։ Այս գյուղերը Գենջեի սահմանի վրա են։ Այստեղից դուրս եկանք և Կոշլունջա կիրճից անցնելով, հասանք Արս բերդը։

Մեծ և նշանավոր Արս (Արշ–Արեշ) բերդի ու քաղաքի բնութագիրը: *Աջեմի երկրում, Շիրվանի էյալեթումն է։ Հին ժամանակ կառուցվել է Քեյմուրաս Շահի կողմից։ 995 (1586) թվականին գրավվել է Մուրադ խան III-ի վեզիրներից մեկի՝ Լալա Կարա Մուսթաֆա փաշայի կողմից։ Օգնության եկող 40 հազար աջեմի զինվորները բերդը գտել են օսմանցիների ձեռքում։ Նրանք անմիջապես բերդը պաշարել են և մինչև կեսօր կռվել ու պատերազմել են։ Մուսուլման ղազիները քաջ Լալա փաշայի գլխավորությամբ հարձակվում են նրանց վրա, 30 հազար աջեմներին անարգանքով գետնին են հավասարեցնում, իսկ սրից ազատված թուրքմեններին, վրացիներին... փախուստի են մատնում։ Էոզդեմիր-օղլի Օսման փաշայի քեթխուդան, Շիրվանի զինվորներով, հանդիպում է փախչողներին և Կուր գետի եզերքին շատերին կոտորում։ Մի մասն էլ, սարսափելով օսմանցիներից, հավաքվում են Կուր գետի կամրջի վրա։ Կամուրջը խորտակվում է և զինվորները գետն են թափվում։*

Երբ մեծ սերդարը նկատում է, որ այս վայրը Գենջե քաղաքի և Շիրվանի ճանապարհին է ընկած ու խիստ կարևոր քաղաք կարող է դառնալ, հավաքում է բոլոր ղազիներին և քաղաքի այլ կառուցողներին։ Այս քաղաքից դուրս, Շահ-Խեյաբանի անունով մի այգու շուրջը երեք դռնով, 17 ամրություններով պարիսպներ է կառուցել տալիս։ Շրջագիծը 9000 քայլաչափ է։ Սերդարը այս բերդի կառուցումը լրացնում է 40 օրում և միրմիրանության ատիճանով նվիրում սուլթան Մուրադի ընտանիքում մեծացած ու դաստիարակված Կըյթասի բեյին և ինքը վերադառնում է Ասիթանե (Ստամբուլ)։ Ներկայումս այս գեղեցիկ քաղաքը ընկած է Ռանաշահ լեռան ստորոտում, Բրուսա քաղաքի նման հիանալի օդով, պարտեզներով ու այգիներով, ծաղկաստաններով մի վայր է։ Ունի մոտ 10 հազար հողածածկ տուն, մոտ 40 ջամի, որոնցից նշանավորներն են Մուրադ III-ի, Ֆերհադ փաշայի, Կարա-Սինան փաշայի ջամիները և այլն։

Քաղաքի անունը Արս է, սակայն Աջեմի թուրքմենները և Դաղըստանի կոմուքները Արշ են կոչում։ Հետագայում, սուլթան Մուսթաֆա խանի դահակալության օրոք, աջեմները գրավում են այս վայրերը։ [Քաղաքում] 40 փողոց և 40 մեհրաբ կա. ունի մեդրեսե, թե-

ֆիյե, 16 բաղնիք, 800 խանութ, 17 սրճարան և վաճառականների խան։ Կանայք՝ վրացի, ղադիանի, աչըք-բաշի և շուշադի ցեղերի աղջիկներից են։ Օդն ու ջուրը հիանալի է, այդ պատճառով էլ գեղեցիկները շատ են։ Շրջակայքում կան 7 նահիյե, որոնցից յուրաքանչյուրում հարյուրավոր շեն գյուղեր կան։ Այսպես, Արսի մոտի Լևենտի երկիրը[74], Սուլթանչըք գյուղը, Էոզդեմիր-Ջադե-Օսման փաշայի անցած կամուրջի՝ Մեծ Փելունայի երկիրը, Շայի գյուղը բարեշեն են։ Թուրքմեն ցեղերը յայլա բարձրանում են այս քաղաքի մոտ գտնվող լեռը։ Այս շրջանի Շեքիի բերդը նույնպես բարեշեն է։ Դաղըստանցիները երբեմն-երբեմն այս կողմերում ոտնձգություններ են կատարում, սակայն բերդը ներկայումս Արսի խանի իշխանության տակ է գտնվում։ Արսի խանությունը Դաղստանի և Վրաստանի միջև ընկած բարձր խանություն է։ Ունի 3020 նեոքեր, կադի և 12 դատավոր։ Այս քաղաքում մնացինք երեք օր, խանից նվերներ ստացանք և մազանդարանցի 200 հրացանաձիգ ընկերներով շարժվեցինք դեպի հյուսիս և երկու մենզիլ անցնելով, հասանք Շեքի բերդը։

Շեքի բերդի բնութագիրը: Այս բերդը հնում կառուցել է Վրաստանի Շուշալեի մելիքներից մեկը՝ Ալեքսանդրը։ Նրանից անցել է Դաղստանի բեյի ձեռքը, ապա աջեմներին։ Սակայն սուլթան Մուրադ խան III-ի վեզիրը՝ Լալա Կարա Մուսթաֆա փաշան, գրավելով այս բերդը, նվիրել է Լևենտ խան-օղլի Էրքելադ բեյին։ Հետագայում, սուլթան Մուսթաֆա խանի գահակալության ժամանակ, նորից աջեմների ձեռքն է անցել։ Ներկայումս սուլթանություն է։ Ունի մոտ հազար զինվոր։ Շիրվանի էյալեթում գտնվող ժայռի վրա կառուցված քառաշեն ամուր բերդ է, ունի երկու դարպաս՝ Գենջեի և Շիրվանի դարպասներ անունով։ Դաղստանի սահմանի վրա ընկած բավականաչափ շեն բերդ է, սակայն Վրաստանի մասն է համարվում, որովհետև հիմնադիրը վրացի է։ Ունի 3000 տուն, 7 մեհրաբջամի։ Հայտնի են շուկայի Միրզա Ալի բեյի և բերդում գտնվող Լաղոշ-օղլի Ահմեդ բեյի և Մուրադ խան III-ի ջամիները։ Ունի նաև խան, բաղնիք և շուկա։ Այգիներից և պարտեզներից աննման մետաքս է ստացվում։ Այս բերդից մեկ օրագնաց դեպի արևելք գնացինք և հասանք Կնութ գետին։ Այստեղից էլ շարժվելով դեպի հյուսիս, Էոզդեմիր-Օսման փաշայի կամրջովը անցանք Կարոդ գետը և հասանք Քոյուն-Գեչիտի կոչված վայրը։ Այստեղ, գետնի վրա բլուրների նման մարդկային ոսկորներ էին կուտակված։ «Այս ի՞նչ է»,— հարցրինք մեր ընկերներից մեկից՝ Ալի Աղայից։ Նա պատասխանեց. «Սա կռվի դաշտ է. Մուրադ խան III-ի սերդար Լալա Մուս-

թաֆա փաշան շրջապատելով Իրանի Թավրիզ, Մուղան, Լոռի, Նախիջևան, Կարաբաղ և Կաղան քաղաքների խաների իշխանության տակ գտնվող 20 հազար զինվորներին, սրի է քաշել։ Մի կողմից հարձակվել է Էոզդեմիր-օղլին, մյուս թևից Հալեպի վալի Մուհամմեդ փաշան, մի այլ կողմից Մարաշի էյալեթի մյութասարիֆ Մուսթաֆա փաշան և մի վայրկյանում 10 հազար պարսկական զինվորներ են կոտորել։ Մնացած 10 հազար զինվորները Քոյուն-Գեչիտի կամրջից ոչխարի հոտի նման գետն են թափվել ու խեղդվել։ Այդ մեծ պատերազմի ժամանակ 40 հազար շահսևենների Լալա Մուսթաֆա փաշան է սրի քաշել։ Օսմանցիները իրենց գերեզմաններում հանգիստ չմնա՞ն։ Ահա այս ոսկորները դրանց նշաններն են»։

Մեռածների համար ֆաթիոե[75] կարդացինք և անցանք... Ընդարձակ դաշտերով շարժվելով դեպի հյուսիս, անցանք նաև Աք-Սու գետը, որին աջեմները Գիլան-չայի են ասում։ Այն սկիզբ է առնում Արսի լեռներից և խառնվում Կուր գետին։ Այստեղից երեք ժամ ճանապարհ գնացինք և հասանք Մահմուդաբադ նահիյեն։ Մի ընդարձակ դաշտում 200 շեն և հարուստ գյուղեր կան, որոնք տարեկան, ասում են, հազար ուղտի բեռ մետաքս են արտադրում։

Յուրաքանչյուր գյուղը մի առանձին կասաբա[76] է։ Ունեն ջամիներ, բաղնիքներ և շուկաներ։ Ռայաները՝ հայ, գեոք-դուլուք, թուրքմեն, մոնղոլ և կոմուք ցեղերիցն են. մի ցեղն էլ իթ-թիլ է կոչվում։

Իթ-թիլ ցեղի վիճակը: Մշտապես կովի մեջ եղող մի ցեղ է։ Ապրում են սանջաքի լեռներում, Մարգին բերդի մոտ։ ...Եթե նրանց հարցնես, կասեն՝ «Մենք վեհափառ Համզեի սերնդիցն ենք»։ Սակայն չգիտեն, թե ի՞նչ է ծոմը, նամազը, հաջը, զեքաթը։ 7—8 տղամարդ ամուսնանում են մի կնոջ հետ։ Այդ կնոջից ծնված ապօրինի զավակի հայրը որոշելն որքա՜ն դժվար է։ Սակայն կադիները դրա դյուրությունը գտել են. երեխային մի խնձոր են տալիս, տղան խնձորը հայրության թեկնածուներից որին որ նետի, նրան համարում են երեխայի հայրը։ Դրանից հետո կինը այդ տղամարդու իշխանությանն է ենթարկվում և ոչ ոք դրան չի կարող խանգարել։ Աջեմի երկրի մոմ-մարողներ անունով հայտնի ցեղը սա է։ Այդպիսի բարքերի տեր ցեղ ոչ մի տեղում չենք տեսել։ Սակայն իրենք խաներին և շահին վերին աստիճանի հնազանդ ու հպատակ են:

Կըյթաք ցեղի բնութագիրը: Այս երկրում կա նաև կըյթաք անունով մի ցեղ, որոնց թիվը հասնում է 20 հազարի։ Ապրում են Դաղըստանի տերիտորիայում։ Երբեմն գնում են Արս և Շեքի քաղաքները՝ առևտուր անելու։ Սրանք ևս վերին աստիճանի յուրօրինակ մարդիկ

են. գլուխները կաթսայի նման մեծ են, կոշտ մազեր ունեն, երկու մատնաչափ լայնությամբ հոնքեր, խիստ լայն թիկունք և կուրծք, բարակ մեջք, հաստ սրունքներ, տափակ կրունկներ, կլոր աչքերով կարմրավուն մարդիկ են: Պատկանում են շաֆիի դավանանքին: Երբ նրանք գնում են Արսի և Շեքիի շուկաները, նախ հետիոտն իջնում են դաշտը, ապա նստում Շեքիի սայլերը, որովհետև ձին ու ջորին չեն կարող տանել այդ փղանման մարմինները...

Այնուհետև էվ. Չելեբին օրինակներ է բերում «Մոնղոլ ցեղի մեկ ճյուղից»՝ կըյթաքների լեզվից:

...Սրանք բնիկ Մահանի երկրից[77] եկած մոնղոլներ են, թուրքեր են, բայց խոսում են մոնղոլերեն. մոնղոլերեն նշանակում է թուրքերեն: Այդ ցեղը (մոնղոլ) մենք ուսումնասիրել ենք Մահմուդաբադ երկրում:

Այստեղից նորից դեպի հյուսիս գնացինք և հասանք Գիլան-չայի եզերքին: Շիրվան վիլայեթի տերիտորիայում Գիլան-չայի եզերքին ընկած է 600 տնից բաղկացած Օղուզ անունով թուրքմենական գյուղը: Դաշտերի միջով անցնելով եկանք Նիյազաբադ քաղաքը:

Նիյազաբաղ fաղաfի բնութագիրը: Գտնվում է Շիրվանի տերիտորիայում: Կառուցվել է Եզդ Ջիրտ շահի կողմից: Հնում մեծ քաղաք է եղել: Մինչև հիմա էլ պահպանվել են նրա շինությունների ավերակները, ծիածանանման բարձր կամարը: Հետագայում Դաղըստանի կումուքները, կըյթաքները և այլ ցեղեր միացած ու միաբանված, հարձակվել են այս քաղաքի վրա, ավերել և կործանել են այն: Օսմանցիներից Մուրադ խան III-ի մեծ սերդարը՝ Կոջա Ֆերհադ փաշան, ձմեռել է այս քաղաքում: Այնուհետև, դեպի Շիրվան շարժվելուց առաջ բերդը ավերել է: Ներկայումս Աջեմի և Դաղստանի միջև ընկած ձմեռանոց է: Ունի 40 մեհրաբ և 40 թաղամաս, ջամի, խան, բաղնիք, շուկա: Սուլթանություն է և ունի մոտ 1000 ներքեր, 12 դատավոր, քալանթար: Այգիներով ու պարտեզներով 6000-ից ավել տուն կա, մեզ այդպես պատմեցին: Երկիրը ընդարձակ է և հարուստ, դեղեցիկները շատ են, բարիքն ու բերքը առատ է: Հոսող ջրերով հարուստ, բարեշեն քաղաք է: Սակայն քաղաքի կենտրոնում գտնվող բերդը ավերված է: Այսպիսի արգավանդ, հիանալի ջրով ու օդով վայրում թեև բերդը շատ անհրաժեշտ է, բայց ավերված է... քաղաքի բնակիչների մեծ մասը պատկանում են հանեֆի դավանանքին, որովհետև գտնվում են Շիրվանի էյալեթի տերիտորիայում, իսկ այդ էյալեթը 78 տարի օսմանցիների ձեռքումն է եղել:

Այս քաղաքից ուղեկիցներ վերցնելով, նորից դեպի հյուսիս գնացինք և հասանք Ֆերեհ-զար, որն Շամախիի տերիտորիայում Աք-սուի եզերքին ընկած, 500 տնից բաղկայած մի փոքր քաղաք է։ Ունի ջամի, բաղնիք, խան և փոքր շուկա։ Այստեղից նորից դեպի հյուսիս շարժվելով, ճանապարհին ճաշեցինք Քեոր-խուդաբենտե անունով շահի որսատեղում, որտեղից գնացինք Թիլ-չայի գյուղը, որը կոչվում է նաև Գյոք-սու։ Գետը գալիս է Դաղստանից և թափվում Կուր գետի մեջ։

Ալբերզ (էլբրուս) լեռը: *Այս լեռից բազմաթիվ գետակներ են հոսում և խառնվում Կուր գետին։ էլբրուսից դեպի հյուսիս հոսող գետերը թափվում են Խազերի ծովը։ Այս լեռան հարավից անցնող գետերը թափվում են Սև ծովը, իսկ հյուսիս-արևելքից հոսող վտակները, ընդհանրապես, խառնվում են Կուբան գետին։ Կուբան գետը՝ Թամանի թերակղզու մոտ, թափվում է Սև ծովը։ էլբրուսը խիստ բարձր է, մեծ լեռ է։ Չորս կողմում չորս փադիշահներ կան, իսկ հաբավում ապրում են աբազա ցեղերը։ Երկարությունը 80 կոնաք է։ Այս լեռան ստորոտում ապրում են Մեգրելիստանի, Վրաստանի, Աչրք Բաշիի, Շուշատի, Գուրիելիի և Դագիանիի ժողովուրդները։ Այս ցեղերի գրաված տարածությունը և Վրաստանի երկարությունը 40 մենզիլ է։ Վրաստանի ձմեռանոցի՝ Աջեմի սահմանի վրա գտնվող Թիֆլիսի վիլայեթի և Սերիր էլլան քաղաքի սահմանները հասնում են էլբրուս լեռան փեշերը, որոնց երկարությունր 19 կոնաք է։ Այստեղից հյուսիս՝ էլբրուս լեռից հյուսիս՝ չերքեզների երկիրն է, որտեղ ապրող չերքեզները բաժանվում են կաբարթայ, բեսի, բուլիֆայ, խեթուֆայ, մեմսուխ, բոզեդոք, թակա-կազանա, շեֆաքի և այլ ցեղերի և որոնք ապրում են այս լեռան լանջերին։*

Երկարությունը 80 կոնաք է։ Այս հաշվով լեռան երկարությունը 240 կոնաք կլինի։ Խիստ մեծ լեռ է. 10 կոնաք հեռավորությունից պարզ երևում է բարձր գագաթը։ Այս լեռը երկրի վրա եղած 148 լեռներից, ամենաբարձր 12 լեռներից մեկն է։ Ոչ ոք չի կարողացել բարձրանալ նրա մինչև կեսը։ Այս լեռան վրա ապրում են բազմատեսակ մարդիկ։

(էջ 286—291)

Մենք կանգ էինք առել Գյոք-սու գյուղում։ Սա խոշոր գյուղ է, ունի քալանթար և միհմանդար։ Գյուղն ունի 700 տուն, այգիներ և պարտեզներ։ Մետաքսը ընտիր է։ Բնակիչները բոլորը սյուննիներ են

և Շահ-Իսմայիլին մորուքի տուրք են վճարել։ Սակայն ներկայումս, Շահ Աբբաս II-ի ժամանակից ազատված են բոլոր տեսակի արտակարգ տուրքերից։ Սա, Շամախիի, իր բարեշինությամբ հայտնի, գյուղերից մեկն է։

Այստեղից նորից դեպի հյուսիս շարժվելով, մի ժամ հետո հասանք Աք-սու, որը գտնվում է Շամախիի տերիտորիայում. 100 տնից բաղկացած ջամիով, խանով և բաղնիքով, այգիներով և պարտեզներով շեն գյուղաքաղաք է։ Աք-սու գետը անցնում է այստեղից և թափվում Կուր գետը։ Գետի ակունքը Շիրվանի լեռներումն է։ Այն Շամախիի դաշտում ոռոգում է բրնձի դաշտերը և հետո խառնվում է Կուր գետին։ Այստեղից նորից դեպի հյուսիս գնացինք և հասանք Շամախիի բերդը։

Շամախի բերդի բնութագիրը: Առաջին հիմնադիրը եղել է Իրանի շահ Եզդ Ջիրտը, հետո եղել է բազմաթիվ իշխողների կենտրոնը։ Այս վիլայեթում 7 խանություն կա։ Ոմանք ասում են, որ Շամախի անունը Շամի Ախիի կրճատված ձևն է և իբր թե առաջին բնակիչները եկել են Շամից։ Դաղստանցիները ասում են Շեմխի, գիլանցիները՝ Շամ-ակի, բայց ճիշտը՝ Շամախի-Շամակին է։ 40 խանություն ու 48 կադիություն է, և ունի 40 նահիյե, 70 բերդ և մոտ 1300 շեն գյուղեր։ Հին և բարեշեն քաղաք է։ Սուլեյման խանի [սուլթան] վեզիրներից Ուլամա փաշան և Կարամանի վալի Փիրի փաշան Սուլեյման խանի հատուկ նամակով եկել են Շիրվան քաղաքը։ Այաններր, խորհրդակցելուց հետո, բերդի բանալիները հանձնել են Փիրի փաշային և օսմանցիներին հպատակություն ու հնազանդություն են հայտնել։ Երբ այս մասին հայտնել են [սուլթան] Սուլեյման խանին, նա բերդի իշխանությունը շնորհել է Փիրի փաշային։ Հետագայում Շահ Թահմասբը 7 ամիս պաշարել է այս բերդը։ Թեև բերդում գտնվողները ամաճ կանչելով հանձնվել են, բայց [շահը] բոլորին հավաքել տարել է և բերդի իշխանությունը հանձնել իր եղբորը՝ Էլկաս Միրզային։ Էլկաս Միրզան երեք տարի իշխել է այստեղ։ Սակայն իր եղբոր վարվելակերպը նրա մեջ կասկածներ է արթնացրել և մահվան վախից, 954 (1548) թվականի մի գիշեր իր մարդկանց ու ծառաների հետ միասին թողել է Շիրվանը և փախել դեպի օսմանյան երկիրը։ 40 օր Հեյհաթի դաշտով[78] քայլելուց հետո, հասնում է Քեֆե, այնտեղից էլ մի նավակով գալիս է Ստամբուլ, որտեղ ընդունվում է խիստ բացառիկ պատվով և հարգանքի արժանանում։

Միրզա Էլկասի պատմությունը այս է. «Սուլեյմանի ժամանակ հպատակվեց Միրզա Էլկասը, թվական 954»։

Էլկաս Միրզան Ստամբուլում ապրել է Փերթև փաշայի պալատում։ Այդ ժամանակ Էգիրնեում գտնվող սուլթան Սուլեյման խանը մեծ շքերթով վերադառնում է Ստամբուլ և անցնում Էգիրնեի դռնով։ Էլկաս Միրզան այդ շքերթը դիտում է Շեհզադե ջամիի մոտից։ Նա դիմելով իրեն պատիվ տվող փադիշահին ասում է. «Ո՛վ Ալ-Օսմանի ընտրյալ, դու այս փառքով և վեհությամբ, ի՞նչպես է, որ դուրս չես գալիս Աջեմի շահ համարվող իմ եղբոր դեմ» և հիանում է տեսնելով փադիշահի զինվորների կարգն ու կանոնը։ Հետագայում Սուլեյման խանը, դեպի Վան և Ազրբեջան արշավելիս, Էլկաս Միրզային էլ իր հետն է տանում... Լալա Մուսթաֆա փաշան Շիրվանի էյալեթի մեծ սերդար նշանակվելիս, Էլկաս Միրզային՝ նախապես Շիրվանում իշխան լինելու կապակցությամբ, Թավրիզից տանում է իր հետ։ Նրանք միասին քանդում և ավերում են Նախիջևանը, Երևանը, Գենջեն և Շիրվանը։ Վերադարձին ստացվում է Թահմասբի մահվան լուրը։ Հետո պաշարում է Շամախի բերդը, 7 օրվա ընթացքում Շահ Թահմասբի որդուց ամանով գրավում է բերդը, վերանորոգում և բավականաչափ զինվորներով ու ռազմամթերքով ապահովում է այն։ Շիրվանի էյալեթի տերիտորիայում գտնվող Մահմուդաբադի խանությունը տրվում է Էլկաս Միրզային։ Սրտովառված Էլկաս Միրզան շատ անգամներ Աջեմի երկրի վրա ասպատակություններ է անում և ավերում է նրանց երկիրը։ Այնուհետև Շիրվանում մի շարք վեճեր են առաջ գալիս։ Ի վերջո, Սուլթան Մուրադ III-ի ժամանակ, Էոզդեմիր-Զադե Օսման փաշան ամանով գրավում է Դեմիր Կափուն և այս վայրն ու բերդը նորոգել է տալիս։ Դրանից հետո այն նորից աջեմների ձեռքն է անցել, սակայն ազատագրվել է Կոջա Ֆերհադ փաշայի ձեռքով։

Ի վերջո, Աջեմը նորից է գրավել այս վայրերը, որից հետո Դեմիր Կափուի փաշան և Խենդան Ազա-զադեների գերդաստանը եկել են Օսմանյան երկրի մայրաքաղաքը։ Այդ ժամանակից սկսած այն գտնվում է Աջեմի ձեռքում և ներկայումս խանություն է։ Ունի կադի, 12 դատավոր։ Բերդը գտնվում է Կուր գետի եզերքին, բարձր ժայռի վրա, քարաշեն է և շատ ամրակուռ։ Ներկայումս ներքին բերդը շատ ամուր և բարեշեն է, իսկ ստորին բերդը շատ տեղերում քանդված է։ Ունի բերդակալ, դիզ-չյոքեն աղա և մոտ 1000 բերդապահ զինվոր։ Քաղաքում կա մոտ 7000 հողով ծածկված շեն տուն, ամեն տան առջևից ջուր է հոսում, այգիներն ու պարտեզներն անթիվ են։ Ունի 26 թաղամաս, Մեյդանի և Սաբուրանի թաղերը քաղաքի ամենալավ մասումն են և ունեն շատ բարեզարդ տներ։ Կա մոտ

70 մեհրաբ։ Դիվ Ալիի ջամին հին շինություն է... Կան 44 քարուկրով կառուցված քարվանսարայներ, խաներ։ Ամեն մի խանի մեջ, վաճառականը առանց փակելու իր սենյակը՝ իր ուզած ապրանքը վաճառում է շուկայում և բազարում. խանի մեջ ապրանքներր թողնում է գորգի վրա թափված, որոնց վրա հսկողություն է կատարվում պահապանների կողմից։ Շիրվանի երկիրը այս աստիճան ապահով և վստահելի վայր է։ Կան մոտ 200 փոքր խանութներ, սակայն քարուկրից կառուցված բեզիստան չկա. կան թանկագին ապրանքներ։ Սրճարանները խիստ մաքուր և հաճելի են։ Բարեբեր հողում աճում են բրինձ, բամբակ, 7 տեսակի խաղող, աբասի և մալաչա տանձեր, ձմերուկ։ Եղանակը բարեխառն տաք է, որովհետև քաղաքը գտնվում է 5-րդ կլիմայի վերջում։ Գեղեցիկները հայտնի են աշխարհում։ Բնակիչների մեծամասնությունը սյուննի դավանանքին են պատկանում, կան շատ ուլեմաներ և սյուլեհաներ։

Այնուհետև, էվ. Չելեբին շարունակելով իր ճանապարհը անցնում է մի շարք գյուղերով և մենզիլներով։ Բաքու մտնելիս էվ. Չելեբին ականատես է լինում մեծ հանդիսավորությունների։ «Մոսկվայի թագավորի Ազդիրխանի (Աստրախան), Սարայ և Հեմեշդեք բերդերից պատգամավորներ էին եկել և հարսանիքի առթիվ նվերներ բերել»։ Այսպիսով, 1057 (1647) թվականի մուհարրեմ ամսի առաջին ուրբաթ օրը մտնում են Բաքվի բերդը։

Բաքու բերդի բնութագիրը: Շիրվանի էյալեթումն է ու սահմանակից է Աջեմին։ Այստեղ տրված խնջույքից հետո, էրզրումի վալի Մուհամմեդ փաշայի նամակը, նվերների հետ միասին, հանձնեցի խանին։ Ուրախությամբ և սրտառուչ նա ասաց. «Բարի՛ եք եկել»։ Թավրիզի ու Նախիջևանի խաների նամակներն էլ հանձնեցի և «Ձեր հարսանիքը շնորհավոր լինի» ասելով՝ բարեմաղթություններ արի...

Բաքվի բերդը, Մոսկվայի թագավորության դիմաց, Խազերի ծովի եզերքին, մի բարձր ժայռի վրա Դարա շահի կողմից քառակուսաձև կառուցված հիանալի բերդ է։ Ներքնաբերդը դեպի արևմուտք բացվող մի դուռ ունի։ Շինված է Նախիջևանի երկաթից։ Շրջագիծը 700 քայլ է, ունի 70 աշտարակ և 600 պատվար։ Պարսպի բարձրությունը 40 արշին է։ Կառուցված լինելով ժայռի վրա՝ խրամներ չունի։ Բերդում կան մոտ 70 հին և հողածածկ տներ։ Հայգար փաշայի ջամին մինարե չունի, խան, բաղնիք և այլն՝ բոլորովին չկան։ Սակայն ծովեզերքի մեծ ռաբաթը* բարեշեն քաղաք է և ունի մոտ

* Ռաբաթ—ընդհանրապես քարվանսարայի և հյուրանոցի իմաստ ունի, սակայն այստեղ վարոշ իմաստով է գործածվում (ծանոթ. հրատարակչի)։

1000 տուն, այգիներ և պարտեզներ, ջամի, խան, բաղնիք, շուկա և բազար։ Երեք կողմից պաշտպանված է պարիսպներով և ունի երեք դարպաս։ Գիլանի դարպասը բացվում է դեպի հյուսիս, Բաբ-էլ-էբվաբի [Դերբենդ] դարպասը՝ դեպի հարավ, Լիմանի դարպասը՝ դեպի արևմուտք, ծովեզերքում է։ Այս ռաբաթում 7 մինարե է երևում, ունի 3 բաղնիք։ Միրզա խանի բաղնիքը հաճելի է։ Շուկաներն ու բազարները այնքան էլ ճոխ չեն, բայց որովհետև Մոսկվայի սահմանագլխումն է գտնվում, ունի շահսևեն և դիզ-չյոքեն զինվորներ։ Շիրվանի էյալեթում առանձին խանություն է։ Ունի 3000 զինվոր և 12 դատավոր։ Ունի նաև առանձին գադի և 7 նահիյե... Դիմացում, 300 մղոն հեռավորության վրա, Մոսկվայի երկիրն է։ Այն տարին, երբ էոզդեմիր-գադեն գրավել է այս բերդը և բերդում իշխել է օսմանցիների կողմից նշանակված Կուբար փաշան, աջեմների դրդումով Մոսկվայի կազակները եկել և պաշարել են Բաքվի բերդը, սակայն նրանք և նրանց հետ նաև աջեմները սրի են քաշվել։ Մինչև օրս էլ նրանց ոսկորները ծովեզերքի մի ժայռի վրա թափված մնում են։

Քաղաքի օդը տաք-բարեխառն է։ Գավառներում բրինձ և քաթան է մշակվում և այգիներ ու պարտեզներ են աճում։ Բամբակը շատ ընտիր է, սակայն ջուրը նավթի յուղի հոտ է արձակում։ Քաղաքի մոտ, 7 տեղում, նավթահանքեր կան, որոնցից ամեն մեկը տարբեր գույն ունի՝ դեղին, կարմիր, սև և այլն։ Միսքերի, Սեդանի, Ռինեբի նահիյեների բնակիչները մեղրամոմից կամ յուղից պատրաստված մոմեր չեն վառում, նրանք սև նավթի յուղ են վառում ճրագների մեջ։ Ժողովուրդը վերին աստիճանի առողջակազմ և մարմնեղ է, բավականին գեղեցիկներ կան։ Քաղաքը գտնվում է 18-րդ լայնության կլիմայի սահմանում։ Ժողովրդի մեծ մասը սյունիներ են։ Այս բերդի և Դեմիր բերդի [Դերբենդ] միջև ընկած տարածությունը՝ ծովեզերքով, 4 կոնաք է։ Սրանց միջև գտնվող Միսքեր նահիյեն բարեշեն գյուղեր ունի, բնակիչները քոչվոր թուրքմեններ են և քոչում են իրենց օբաների հետ միասին։ Շաբուրան քաղաքն ընկած է Բաքվի արևելքում, 3 մենզիլ հեռավորության վրա։ Շամախի բերդն էլ նմանապես արևելյան (?) կողմն է և 5 կոնաք է։ Գիլանն էլ հյուսիսումն է։ Բաքուն Շամախիի նավահանգիստն է։ Չինաստանից, Խաթայից[79], Խութենից[80], Ֆաղֆուրի երկրից[81], Կալմախի (Կալմըք) և Մոսկվայի երկրներից առևտրական ներկայացուցիչներ և քարավաններ ապրանք են բերում։ Մոսկովուները[82] մշտապես Բաքու են գալիս և այստեղից աղ, նավթ, ղաֆե-

ռան ու մետաքս են գնում և տանում Մոսկով։ Մոսկովի պատգամավորները գալիս և մնում են իբրև պատանդ։ Մոսկվայի երկրից, ընդհանրապես Բաքվի միջով, մի մասն էլ Գիլանից՝ Աջեմի երկիրն է գնում սամույր, ձկան ատամ, սկյուռի մորթի, բուլղարական թելաթին[83]։ Բաքվի նահիյեներում աղային վայրեր կան. մարդը կամ ձին, եթե ոտքը գետին դնի և մի փոքր կանգնի տեղում, ոտքերը կայրվեն։ Քարավան բշողները որոշ տեղերում գետինը փորում են և կաթսան դնում հողի մեջ. գետնի տաքությունից նրանց կերակուրը մի վայրկյանում եփվում է։ Տարօրինակ աստվածային իմաստություն է։

Կուր գետը ծովն է թափվում քաղաքի հյուսիսից...[84] Գետի լայնությունը հավասար է Դանուբի լայնությանը, բայց խորությունը պակաս է...

Բաքվի բոլոր այաններին հրաժեշտ տալուց հետո ճանապարհ ընկանք դեպի հարավ։

(էջ 286—302)

ԲԱՔՎԻ ԲԵՐԴԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆՔ ՎՐԱՍՏԱՆ

Բաքվի և Երևանի խաներից 100 զինված նյոքերներ վերցնելով, անցանք Բաքվի հարավային ծովեզերքի աղոտ վայրերով և դիտեցինք նավթի հանքերը։

Նավթի-յուղի հանքերը: Գետնի տակից եռալով նավթը դուրս է գալիս մի մասը ծովեզերքում, մի մասն էլ Մեսքերի նահիյեում։ Ընդհանրապես, ջերմուկի ջրերի նման փոքր լճակ է կազմում. նավթի յուղը սեր է կապում հեղուկի երեսին և մնում։ Նավթը առանձին էմանեթ[85] է և շահին տարեկան 7000 թյումեն եկամուտ է տալիս։ Նավթի էմինի մարդիկ մտնում են այդ լճակների մեջ, նավթը հավաքում և լցնում են այծի տիկերի մեջ։ Այնուհետև, վաճառականները առնում և երկրե-երկիր են տանում։ 8 գույնի նավթ կա, սակայն դեղին նավթը գերադասելի է։

Սև նավթը տանում են Աջեմի երկիրը, Ուզբեկստան, Հնդկաստան, Իրաք, Քուրդիստան, Վրաստան, Դաղստան և Ալ-Օսմանի երկիրը։ Այդ երկրների բերդերում սև նավթը վառում են և լուսավորում բերդի շրջակայքը։ Երբ թշնամու զինվորների վրա են հարձակվում, նրանց վրա և ոտքերի տակ նավթոտ վերմակներ ու հին շորեր են նետում և այսպիսով կրակ առաջացնում։ [Նավթը] շատ կարևոր է

բերդի և քաղաքի մթերքների համար։ Մինչև անգամ շահի պալատում, մայրաքաղաքում վառվող ջահերը Բաքվի նավթով են վառվում։ Նավթի վրա գիշեր-ցերեկ հսկող պահապաններ կան։ Որովհետև եթե կրակ ընկնի, անընդհատ կայրվի և մարելը անհնար կլինի։ Այդ պատճառով նավթահանքերի շրջակայքում լեռնանման հողեր են կուտակված, դրանք պատրաստ պահվում են. եթե նավթի հանքի մեջ մի կայծ է ընկնում, անմիջապես բոլոր ռայաներն ու բերաչաները վազում են, կրակի վրա հող ածում ու մարում։ Ուրիշ միջոց չկա...

Այստեղից ծովեզերքով նորից դեպի հարավ գնացինք և կանգ առանք Մեսքերի թուրքմենական օբաներում։ Այս դաշտերում ձմռանը իրենց օբաներով բնակվում և հանգստանում են մոնղոլները, թուրքմենները և կոմուքները։ Վերին աստիճանի բերքառատ վայր է։

Խազերի ծովի ճսկա կոկորդիլոսի ականջը: Այստեղից շարժվեցինք ծովեզերքով և ճանապարհին, ծովի ալեկոծության պատճառով, ծովեզերք նետված մի ձուկ տեսանք. երկարությունը լրիվ 100 քայլ էր, երկու գլուխ ուներ. մեկը պոչի մոտն էր և նման էր օձի գլխի, մյուսը՝ մեծ գլուխը, բաղնիքի գմբեթի չափ կլիներ։ Կարծես առասպելների մեջ նկարագրված աժդահան էր։ Վերին ծնոտի վրա 150 ատամ կար, ստորին ծնոտի վրա 140 ատամ։ Ամեն մի ատամի երկարությունը մի արշին էր և մարդու սրունքի հաստություն ուներ։ Ականջները փղի ականջների նման էին։ Ամբողջ մարմինը ծածկված էր կուղբի մազի նման մազով։ Այս ձուկը իսկապես վերին աստիճանի ահարկու և հսկա մի կենդանի էր։ Ամբողջ Բաքվի, Շամախիի, Դեմիր Կափուի ժողովուրդն՝ այստեղ հավաքված, դիտում էին այդ կենդանուն։ Խազերի ծովի մի ուղևոր՝ խոջա Սատիխանը, այդ մասին պատմեց. «Այս ձուկը հատկապես Խազերի ծովում հանդիպող մի կոկորդիլոս է, որին ծովի նավաստիները նեհենգ փիլ գյուշի[86] են անվանում։ Բոլոր ձկները սրանից վախենում են։ Այս Խազերի ծովեզերքում եղած տարօրինակ պատյանները, դիակները իսկապես ոչ մի ծովեզերքում չկան։ Պատյաններից շատերը բոլորովին նման չեն ծովային կենդանիների. չորս անկյունանի, հնգաձև, կլոր և բարակ պոչով կենդանիներ կան։ Սակայն քեփի և մինա անունով ձկները վերին աստիճանի գեղեցիկ են և մեկ արշին երկարություն ունեն։ Լիքաթև և սեբղ, սիհի և այլ տեսակի ձկները շատ համեղ են»։

Խազերի ծովը, ծովայինների ասելով, Սև ծովից ավելի մեծ է, ոչ մի ծովի հետ կապ չունի և առանձին մեծ ծով է։ Ալեկոծությունը Սև ծովից ուժեղ է։ Երկարությունը վերջանում է Ֆաղֆուրի երկրի սահմանի մոտ, որը յոթերորդ կլիմայի վերջն է։

Արևմտյան կողմում Մոսկովի երկիրն է, արևելքում՝ Աջեմի Գիլանը և Հոզբեկ, Բուլղար, Կալմախ (Կալմիկ), Չին, Ֆաղֆուր և Կազակի երկրներն են։ Կազակների և Մոսկվայի երկրների միջև ընկած տարածությունը ձմռան սաստկության պատճառով 7 ամիս սառած է մնում։ Կալմախ թաթարներն անցնում են սառույցների վրայով և Մոսկվայի երկիրը կողոպտում ու թալանում են։ Վերցրած գերիները վաճառում են Չին, Խաթայ ու Խեթեն երկրներում և Հնդկաստանում։ Գիլանի, Բաքվի, Դեմիր Կափուի և Թերեքի բերդերի շրջանում խազերի ծովը երբեք չի սառչում, որովհետև այս վայրերը տաք են։

Բաբ-էլ-էբվաբ կոչված Դեմիր Կափուից դեպի հարավ մի ծոց կա։ Ծովը վերջանում է Դաղստանի սահմանի, Ավարի երկրի, Թերեքի գետաբերանի, մոսկվացիների Թերեք բերդի մոտ։ Ծովը տարածվում է հարավից դեպի հյուսիս, երկարությունը 4000 մղոն է, խորությունը 300 արշին։ Ծովի վրա մոտ հազար նավ կա...

Անցանք խազերի ծովի եզերքի արևելյան դաշտերով և հասանք Շաբուրան մեծ քաղաքը։

Շաբուրանի բնութագիրը: *Շիրվանի վիլայեթի գեղեցիկ քաղաքներից է, սակայն գրանցված է Դեմիր Կափուի տերիտորիայում։ Նա կառուցվել է Իսքենդեր շահի կողմից։ Հետագայում, մոնղոլ Հուլաքուն եկել, այս քաղաքը ավերել է և կործանել, բնակիչներին ոչնչացրել և տները հողին է հավասարեցրել։ Այնուհետև, նորից վերաշինվել և շենացել է։ Վերջապես Մուրադ խան III-ի վեզիրի Էոզդեմիր-զադե Օսման փաշայի կողմից Դեմիր Կափուի գրավման ժամանակ, իրենց հպատակությունն են հայտնել նաև Շաբուրան քաղաքի բնակիչները և քաղաքը սանջաքի բեյի կենտրոնն է դարձել։*

Ավելի ուշ, Մուրադ խան IV-ի գահակալության ժամանակ, Շիրվանը գրավող աջեմները, իրենց իշխանությանն են ենթարկել նաև Շաբուրանը։ Ներկայումս Դեմիր Կափուի տերիտորիան սուլթանություն է։ Գտնվում է 5-րդ կլիմայի վերջում։ Իրանում, Թավրիզից հետո, իր օդովն ու ջրովը հայտնի քաղաք է։ Ունի 70 մեհրաբ և 70 թաղամաս։ Նշանավոր ջամիներն են՝ Թոքմաք խանի ջամին, Ուչար խանի ջամին, Ուզուն Հասանի ջամին, որի նմանը ոչ մի տեղում չկա։ Մինչև անգամ Էոզդեմիր-օղլի Օսման փաշան ամեն ուրբաթ օրը, Դեմիր Կափուից մեծ հանդիսավորությամբ եկել և այս ջամիում աղոթք է արել։ Դիտելու արժանի հին աղոթավայր է, որի չորս պատերի վրա եղած նուրբ արվեստի բուկալեմուն նկարները, մարմարները ճարտարապետությունից հասկացողներին հիացմունք

են պատճառում։ Քաղաքը գտնվում է Միսքիրի հովտում, բարեբեր մի վայրում։ Ունի 7 նահիյե, որոնք կոչվում են 7 մոլորակների անուններով։

Այստեղից քոչվորների միջով անցնելով, եկանք ծովից հեռու մի ընդարձակ դաշտում ընկած Ձերբ գյուղը, որը գտնվում է Դեմիր Կափուի տերիտորիայում և Դաղստանի իշխող Միխալ Շահի խասն է։ Շահին այն նվիրել է Էոզդեմիր-զադե Օսման փաշանե։ Հետագայում, թեև աջեմների ձեռքն է անցել, սակայն նորից Միխալ Շահի իշխանության տակն է մնացել։ Ունի 500 տուն, ջամի, բաղնիք, քարվանսարա, շուկա, բազար. փոքր քաղաք է։ Բնակիչների մեծ մասը Դաղստանի կոմուք ցեղից են, շատ լավ դրահներ են պատրաստում։ Այստեղից դեպի հարավ (?) գնացինք և եկանք Դեմիր Կափու բերդը։

Բենդեր–Բաբ, այսինքն Իսքենդեր–Զյուլկարնեյնի Բաբ-էլ-էբվար քաղաքի, Դեմիր Կափու բերդի բնութագիրը։ Մի քանի պատմագիրների վկայությամբ այս քաղաքը կառուցել է արաբական իշխող (?) Իսքենդեր Զյուլկարնեյնը [Մեծ Ալեքսանդրը]։ Ալեքսանդրը պարիսպը կառուցել տալուց հետո, եկել է այս Դեմիր Կափուի վայրը և ի՞նչ տեսնի, Դաղստանի տերիտորիայում, ծովեզերքում ընկած մի հիանալի վայր...

Իր իշխողների հետ խորհրդակցելով, չափել է տվել Դեմիր Կափուի դիրքի բարձրությունը և գտել, որ Խազերի ծովը Սև ծովից ավելի բարձր է (?)։ Այդ պատճառով մտադրվել է Խազերի ծովը միացնել Սև ծովին։ Գիտնական երկրաչափներ է ուղարկել երկու ծովերի միջև, որոնք երեք օրում հասել են Դաղստանի Էլբրուս լեռան ստորոտով, Մեգրելիստանի սահմանով դեպի Սև ծովը հոսող Ֆաշե գետի վերջավորությանը։ Սրա [Սև ծովի] բարձրությունն էլ չափել են և գտել, որ Սև ծովը Խազերի ծովից 20 անգամ[87] ցածր է (?)[88]։ Այնուհետև սկսել են անհրաժեշտ գործիքներ պատրաստել, սակայն իմաստունները առարկել են և ասել. «Ո՛վ Իսքենդեր, դու նշանակված էիր Էջուջի պարիսպը[89] կառուցելու. այս գործը շատ երկար աշխատանք է պահանջում։ Թեև այս երկու ծովերի միջև ընկած տարածությունը երեք օրվա ճանապարհ է, սակայն Էլբրուս լեռան ստորոտի կայծքարե ժայռերը ծակելու համար մեծ գումար և Նոյի կյանք է պահանջվում։ Իսկ աստղագուշակություն գիտությունը տեղեկացնում է, որ դուք 32 տարի եք սուլթանություն անելու։ Կարծում ենք ավելի կարևոր գործեր կան»։ Իսքենդերը այդ գիշեր մի սոսկալի երազ է տեսնում և այդ մտքից հրաժարվում է։ Հետո Դեմիր Կա-

փուից սկսած, Դաղստանի լեռների միջով, 7 կոնաք երկարությամբ, մինչև Սև ծովը, երեք կարգի ամրակուռ պարիսպներ է կառուցել տալիս՝ երեք կարգի խոր խրամներով։ Այս պարիսպը Արևելքում գտնվող Իրանի և Թուրանի երկրների, Արևմուտքում՝ Կըփչաքի դաշտի ցեղերի՝ դեղին ցեղի, Ղրիմի և ռուսական ցեղերի միջև սահման է եղել։ Ներկայումս էլբրուսի, Դարյանի [Դարիալի] լեռներում երեք կարգի պարիսպ, երեք կարգի խրամ կա, որոնք նվաստս՝ էվլիյաս, տեսել է։ Ղրիմից Կոմուքի երկիր գնացող մարդիկ, եթե ուշադրությամբ դիտեն, իրենք էլ կտեսնեն։ Ոմանք ասում են, որ Իսքենդերի կառուցած էջուջի պարիսպը սա է։ Սակայն անհավանական է։ Իբնի-Իսհակի վկայությամբ Իսքենդերի ծնունդից մինչև ռեսուլուլլահը [Մուհամմեդը] 882 տարի է անցել, հիջրեթից մինչև մեր ուղևորության ժամանակը 1057 տարի է անցել։ Այդ դեպքում Իսքենդերից մինչև այս օրը 1939 տարի կլինի։ Այդ պատճառով պարըսպի շատ տեղեր քանդվել են և որոշ մասերումն էլ մնացել են միայն աշտարակներն ու պատվարները, իսկ խոր խրամները ավազով են լցվել։ Այս մանրամասները դիտողների համար աննկատ չեն մնում։ Թոհֆեի պատմությունը ասում է. «Իսքենդերը գետնի խորքում, 70 օրվա ընթացքում, մի տեղում անցք փորել տվեց և այդպիսով Խազերի ծովը թափել տվեց Ցաշե գետի մեջ»[90]։ Սակայն նվաստս առարկում եմ։ 1050 թվականին, երբ գնում էի դեպի Ազաքի բերդը, իջևանեցի Ցաշե գետի եզերքին, որի ջուրը կենսատու աղբյուրի ջրի նման մաքուր և անուշ է, իսկ Խազերի ծովի ջուրը մահացու թույնից ավելի վատ է. եթե մեկը այս ջրով մաքրվի, իր ծածուկ տեղերը կրակի պես կայրվեն։ Այդ ինչպե՞ս է, որ երկրի տակից Ցաշե գետին խառնվելով հանդերձ, Ցաշե գետի ջուրը շաքարից ավելի անուշահամ է մնում։ Սխալ միտք է։ Իսքենդերը իր պարիսպը կառուցել է Խազերի ծովի ծայրից մինչև այս Դեմիր Կափուն։ Դեմիր Կափուն լեռան ստորոտում, դեպի ծովն իջնող ամրակուռ մի բերդ է։

Դեմիր Կափու բերդի պատկերը: Առաջին հիմնադիրը եղել է Իսքենգեր Զյուլկարնեյնը։ Հետագայում, էմևիներից[91] մեկը՝ Յեզիտրին Աբդել Մելեքը, գրավել է օտարների ձեռքից և Դաղստանի բոլոր ժողովուրդները իսլամություն են ընդունել։ Այնուհետև, շատ անգամներ պաշարվել է, երբեմն քանդվել, երբեմն վերաշինվել է և վերջապես 986 (1578) թվականին Մուրադ III-ի վեզիր էոզդեմիրզադե Օսման փաշան՝ սերդարության աստիճանով, իր անհաշիվ զինվորներով եկել է այս բերդի վրա, նրա իշխողին՝ Ջրաղ խանին,

կապել ու կաշկանդել է, վիրայով գրավել և իբրև Շիրվանի էյալեթի բարձրապատիվ իշխող, նորոգել և լրացրել է այս բերդը։ Մուսուլման ղազիները այս բերդից դուրս գալով գիշերային հարձակումներ են գործել Շիրվանի երկրի վրա և գրավել են 70 բերդ։ Փաշան բերդում 1000 ենիչերի, 4 վաշտ սիփահի, 10 օդա ջեբեջի, 10 օդա Բարձր Դերգահի թնդանոթաձիգ, 60 թնդանոթ, 500 սնդուկ ռազմամթերք ու այլ հանդերձանքներ է թողել և բերդի պահպանությունը ապահովել է 15 հազար զինվորով։ Արդարության և իրավունքի շնորհիվ այս շրջանը շենացել և հարստացել է։

Դրանից հետո Կըփչաքի դաշտի, Չերքեզստանի և Դաղստանի կողմից ճանապարհներ են բացվում և Ղրիմից թաթար զինվորները ռազմամթերքներ և այլ հանդերձանքներ են բերում։ Սակայն օգնություն չստանալու պատճառով աջեմները ամանով գրավում են բերդը։ Մուսուլման ղազիները գնում են Դաղստան, ապա Չերքեզստան, իսկ այնտեղից էլ Ղրիմ։

Այս վայրը (Դեմիր Կափուն) շատ բարեբեր է և ներկայումս Աջեմի խանություններից է։ Ունի 12 դատավոր, մյունշի, քալանթար, յասավուլ, դիզ-չյոքեն և չիյ-իյեն աղաներ, 2000 դիզ-չյոքեն թուլունգ և 9000 նյոքեր։ Ես տեսնվեցի բերդի խանի հետ և նրան հանձնեցի Երևանի, Գիլանի ու Բաքվի խաների նամակները։ Ծովեզերքում, Կայթաք-խան հրվանդանի մոտ, մեզ ծովափնյա մի մեծ պալատ հատկացրին և լավ հյուրասիրեցին...

Դեմիր կոչվելու պատճառը: Իսքենդերը իր կառուցած պարսպի մեջ մի երկաթե դարպաս է դնում և այնտեղ պահապաններ կանգնեցնում։ Մինչև Նաշիրվանի[92] ժամանակներն այս երկաթե դարպասը հաստատ մնում էր իր տեղում, այդ պատճառով էլ բերդը Դեմիր Կափու է կոչվում։ Երկրորդ հիմնադիրը Նաշիրվանն է, երրորդը՝ Յեզդ Ջերդ շահը, չորրորդը՝ Շահ Իսմայիլը, հինգերորդը՝ էողդեմիր-օղլի Օսման փաշան։

Բերդի արևմտյան կողմը դտնվում է խազերի ծովեզերքում և ծովի ալիքները հարվածում են նրա պարսպի հիմքին։ Այս պարիսպները Յեզդ Ջերդ շահից հետո վերաշինվել է խազերի Շահի կողմից և այս մասին ծովեզերքի Իսքելե Կափուսիի վրա ֆարսերեն ոտանավորով թվական է գրված։ Ծովի կողմից երևում է նաև Իսքենդերի կառուցած պարիսպը։ Որքա՜ն հսկա և լայն պարիսպ է։ Իշխողները, եթե կամենան, այդ պարսպից մինչև բերդն ընկած վայրը կարող են նավահանգիստ շինել։ Ներկայումս աշտարակներն ու պատ-

վարները ծովի մեջն են։ Պարսպի երկարությունը ծովեզերքի վրա մեկ նետի մենզիլ է։ Բերդը շինված է մի ժայռի վրա, հնգանկյունի ձևով։ Նվաստս, թեև շատ ուղևորություններ եմ կատարել, բայց այսպիսի ամրակուռ բերդ չեմ տեսել։ Հեռատես վարպետ երկրաչափը այս բերդը կառուցել է երեք մասից և երեք ամուր ու պինդ եռհարկանի դարպաս է կանգնեցրել։ Բերդի մի մասը արևելքից նայում է լեռան կողմը, երկրորդ դարպասը բացվում է դեպի քաղաք։ Արղանայի պարսպի մեջ երկու դարպաս կա։ Կան նաև երկու ամուր դարպասներ, որոնք բացվում են քաղաքի ստորին կողմի վրա։ Մեկը Մեսքուրի դարպասն է, որը արևելքից բացվում է դեպի Մեսքերի նահիյեն։ Այս դարպասից իրենց սայլերով ու ձիերով դուրս եկողները գնում են դեպի Շամախի բերդը։ Իսկ մյուս՝ հարավային կողմի, դարպասից գնում են Կըփչաքի դաշտը, Ղրիմ և Ջերքեզստան։ Սակայն դեպի Դաղստան ձիու սայլ չի աշխատում, այն աշխատում է միայն մոսկովցիների Թերեք բերդի, Կազանի և Կըփչաքի դաշտի կողմերում։ Բերդի երրորդ մասը ծովի կողմն է ընկած, որը այնքան էլ բարեշեն չէ։ Վերջերս Կարշաջայ խանը բերդի պահապանների և դիզ-չյոքենների համար տներ է շինել։ Գիլանի և Բաքվի կողմից եկող վաճառականների ձիերն ու սայլերը բերդի այս մասից են ներս մտնում։ Ծովի կողմից էլ այստեղ շատ նավեր են գալիս։ Այդ պատճառով բերդը արժեքավոր և կարևոր է։

Բերդը քառակուսի ձև ունի, շրջագծի երկարությունը 11,060 քայլ է, ունի 70 խոշոր աշտարակներ, որոնցից յուրաքանչյուրի վրա մեկ մզկիթ և մեկ մեդրեսե պիտի լինի։ Աշակերտների համար Բաքվից սև նավթ են բերում ու ճրագներ վառում... Բերդի շրջապատում 7060 պատվար և որմնախորշ կա։ Ամեն գիշեր բերդը լուսավորում են նավթի յուղով, որովհետև բերդը 7 ոխերիմ թշնամիներ ունի. մեկը կազակներն են... սրանք պարսպին չեն մոտենում, որովհետև ծովեզերքում 70 բայլեմեղ թնդանոթ կա։ Այս թնդանոթները օսմանյան թնդանոթներ են. այնքան փայլուն են, որ մարդ իր դեմքը տեսնում է նրանց մեջ, ինչպես հայելիի մեջ։ Մյուս թշնամիները օսմանցիներն ու Ղրիմի և Կալմըքի թաթարներն են։ Հարավից թշնամին Ջերքեզն է, հարավ արևելքից՝ Դաղստանի Կոմուքի ցեղը, արևելքից՝ Վրաստանի Թեմրիս խանի երկիրն է։ Ահա այս պատճառով բերդում կանոնավոր պահպանություն կա, և հարձակում լինելու դեպքում կրակ են վառում և իմաց են տալիս բերդի բնակիչներին։

Այնուհետև, Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Դեմիր Կափու բերդի շինությունները, նշում, որ բերդում կա 1200 հողածածկ տուն, պալատներ, ջամիներ, խանութներ և այլն։ Վարոշում՝ մոտ 1000 տուն, շրջապատում այգիներ և պարտեզներ կան։ Նկարագրում է նաև խոլամական ուխտատեղիները։

(էջ 302—312)

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՄԻՐ ԿԱՓՈՒԻՑ ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ

Էվ. Չելեբին իր ուղևորությունը շարունակում է Դաղստանի միջով, կանգ է առնում Ավարների երկրում, Սերիր էլլան քաղաքում, Խեթենի երկրում և այլ վայրերում և ապա մտնում է Վրաստան։

Սահմանային Օտետի բերդը Աջեմի իշխանությանն է ենթարկվում։ Մենք բերդը թողեցինք ձախ, անցանք Շեքիի բերդի սահմանով և հասանք Զոխուրիե գյուղը, որը գտնվում է Վրաստանում, Թեմրիս խանի տերիտորիայում։ Թիֆլիսի խանին ենթակա մեծ գյուղ է։ Ի1այաները վրացի ազնավուրներ, հայեր և գյոք-դուլաքներ [աջեմ] են։ Այստեղից շարունակելով ճանապարհը, եկանք Կախեթ քաղաքը, որը Վրաստանում է, սակայն Աջեմի իշխանությանն է ենթակա։ Առաջին հիմնադիրը Նեշիրվանն է։ Ժամանակի ընթացքում բերդի որոշ մասերը քանդվել են. շրջագծի երկարությունը 14 հազար քայլ է։ Ունի 170 աշտարակ և 3 դարպաս։ Բերդում 2000 բարեշեն տուն կա։ Ունի նաև ավերված ջամիներ, խան և բաղնիքներ, շուկա և բազար։ Ջուրը հիանալի է։ Գետը սկիզբ է առնում Էլբրուս լեռան 9-րդ շերտի ստորոտից և, Կախեթի այգիներն ու պարտեզները ջրելուց հետո, խառնվում Կուր գետին։ Օդը քիչ սառը լինելու պատճառով մետաքսը ընտիր չէ։ Բնակիչները հայեր, գյոք-դուլաքներ և վրացիներ են։ Իշխողն առանձին սուլթանն է. ունի հազար նյոքեր, 12 դատավոր և կազի։

Շահ Իսմայիլը [սուլթան] Սելիմ խանի հետ ունեցած Չըլդըրի պատերազմից առաջ, հավանելով այստեղի կլիման, 3 տարի ապրում է այս քաղաքում։ Բերդից դուրս, սաթրանջաձև փողոցներում մի մեծ վարոշ է կառուցել տալիս, որը նման է Միջին Մաչարիստանի[93] Կաշե քաղաքին։ Պատերազմի ժամանակ Շահի 100 հազար զինվորները սրի քաշվեցին և միայն ինքը կարողացավ փախչել Ադրբեջանի երկիրը։ Այնուհետև, օսմանցի և վրացի զինվորները գալիս են այս քաղաքը և կողոպտում ու թալանում են։ Հետագայում այնքան էլ չի բարեշինվել... Ֆերհադ փաշան Էրս [Արեշ] բերդը վերակառուցելիս, սրա քարերը սայլերով փոխադրել է տալիս այնտեղ։

Սուլթանը նվաստիս, իբրև պատիվ, մի օրագնացի համար ուղեկիցներ տվեց։ Շարժվելով դեպի հարավ, իջևանեցինք Իուտերայ խանի գյուղում։ Կուր գետի եզերքին, 1000 տնից բաղկացած, ջամի, խան և բաղնիքով մի գյուղ է։ Այստեղից էլ եկանք Թիֆլիսի բերդը։

Թիֆլիսի բնութագիրը։ *Իրանի երկրի պատմագիր «Շերեֆնամեի»*[94] *հեղինակի վկայությամբ այս քաղաքը հիմնել է Իսքենդեր Ջյուլկարնեյնի խազինեդար Բիթլիսը, որը միաժամանակ կառուցել է նաև Վանի էյալեթի Բիթլիսը։ Հետագայում, այն պաշարել են հարյուրավոր ավազակներ, թագավորից թագավորի է անցել և, ի վերջո, անցել է Վրաստանի իշխող Դավիթ խանի իշխանությանը։ Դավիթը, վախենալով օսմանցիներից, ապաստանում է Աջեմի շահի մոտ, թագ է հագնում և իր երկրի վրա խան նշանակվում։ Բավական երկար ժամանակ իշխում է և Նաշիրվանի նման արդարադատ է լինում, [երկիրը] բարեշինում և հարստացնում է։*

Վերջապես, սուլթան Մուրադ III-ի օրոք Լալա Ֆերհադ փաշան, անհամար զինվորներով Վրաստանի վրա է գալիս և գրավում Չըլդըրի բերդը ու 70 այլ բերդեր։ Երբ Դավիթ խանը լսում է, որ մեծ սերդարը գալիս է Թիֆլիսի վրա, Թիֆլիսում իբրև պաշտպան 40 հազար զինվոր թողնելով՝ պատրաստվում է կռվի։ Մյուս կողմից [օսմանցի] զինվորները մենզիլից մենզիլ անցնելով իջևանում են Շիրվանի դաշտում։ Սերդարը նախապես նամակ է ուղարկում Թիֆլիս և առաջարկում է հավատացյալ դառնալ «կամ իսլամական կրոնը ընդունեցեք, կամ բերդը փադիշահին հանձնեցեք և բերդից դուրս խարջ վճարող ռայաներ դարձեք։ Հակառակ դեպքում, նվիրական կրոնի անունով, ձեզ բոլորիդ սրի կանցկացնեմ, ձեր ընտանիքներին ու երեխաներին գերի կտանեմ»։ Նամակը ստանում, ծանոթանում են բովանդակության հետ և բոլորը հավաքվում են խորհրդակցության։ «Օսմանլուն թող իր ուզածից ետ չկանգնի» ասելով՝ պատգամավորին վռնդում են և փակվում բերդում։ Սակայն նախազգալով հետևանքները, նորից են խորհրդակցում և համոզվելով, որ օսմանյան բանակի հարձակմանը չեն դիմանա, բոլորը հեռանում են երկրից և բերդը ամայի թողնում։ Երբ մեծ սերդարը իմանում է այդ մասին, իսլամական բանակով հետապնդում է նրանց։ Թիֆլիսի մոտ անցնում է Կուր գետը և մի գիշեր ու ցերեկ արագ գնալով, Ջեքեմ բերդի մոտ հասնում է Թիֆլիսի խանին։ Նրանք իրենց ընտանիքներով ու երեխաներով ապաստանել էին անտառում։ Մուսուլման ղազիները հարձակվելով՝ վրացի կըզըլբաշների գլուխները բաժանում են նրանց մարմիններից։ Մեծ հարստություն են ձեռք գցում, դին-

վորներից ամենահետինը մի վահան լիքը ոսկու է տիրանում։ Հաղթական սերդարը անմիջապես ենիչերիների աղային՝ 7 օդա ենիչերիներով, ուղարկում է Թիֆլիսի բերդը գրավելու, իսկ ինքը իսլամական բանակով գնում է Ջեքեմի բերդը գրավելու։ Բերդը գրավում է ամանով և մեջը զինվորներ թողնում։ Այդտեղից շարժվելով դեպի հյուսիս, պաշարում է Քերիմ բերդը։ Բերդը չդիմանալով օսմանյան հարձակմանը, ամանով հանձնվում է մեծ սերդարին։ Բերդում եղողները փախչում են իրենց դժոխքը։

Նվաստս Ջեքեմի բերդը չտեսա։ Սակայն երբ անցնում էի Կախեթի բերդի դաշտով, Քերիմի բերդը տեսա, բայց ներս չմտա։ Օսման փաշան, որսի ելած առյուծի նման, 27 մեծ ու փոքր բերդ գրավեց այս էյալեթում և բոլորի մեջ զինվորներ ու պահապաններ թողեց։ Հետո մենզիլները անցնելով մտավ Թիֆլիսի բերդը, որտեղ մեծ հանդիսավորություններ տեղի ունեցան։ Ապա մեծ սերդարը բերդը ամրացրեց և էյալեթում աշխարհահամար կատարեց։ Միրմիրանության կարգով կառավարությունը հանձնեց Կասթեմունիի էյալեթի մյութասարիֆ Սոլաք Ֆերհատ փաշա-զադե Մուհամմեդ փաշային։ Այլ կարիքների ու ռազմամթերքի հետ թողեց նաև 20 օդա ենիչերի, 5 օդա թոփչի՝ 170 ավերված բերդերից...[95] Վրաստանի մյուս շրջաններն էլ կարգի բերելուց հետո, գնաց պետության մայրաքաղաքը։

Մյուս կողմից, աջեմներն ու Վրաստանի քյաֆիրները 7 ամիս պաշարում են Թիֆլիսի բերդը։ Բոլոր մուսուլման ղազիները անոթության ու սովի են մատնվում և վերին աստիճանի տանջվում։ Ստիպված ուտում են իրենց ձիերին, շներին և մինչև անգամ իրենց նահատակվածների դիակները։ 7000 ակչեով գնում են Սու-բաշի անունով մեկի շունը և ուտում։ Չնայած այդ վիճակին՝ քաջաբար դիմագրում են թշնամու մի շարք տեղերում կատարած հարձակումներին։ Աստվածային կամեցողություն։ Երբ էրզրումի վալին՝ Մուսթաֆա փաշան, իր անթիվ զինվորներով շտապ կերպով գալիս է, բերդը պաշարող սերդարը՝ Իմամ-Կուլի խանը, փախչում է և անսահման քանակությամբ հարստություն, ավար և պաշարեղեն է թողնում պատերազմի վայրում։ Բերդում պաշարված ղազիները հարստանում են շատ առատ բարիքներով։ Երբ Մուսթաֆա փաշան մոտենում է բերդին, հավատացյալ զինվորները նորից ոգևորվում են։ Երկրորդ անգամ մեծ վեզիրի որդին՝ Հյուսնի փաշան, 3000 ուղտի բեռ ցորեն և այլ հացահատիկներ է պահում բերդի ամբարներում։ Ներկայումս էլ փոքր բերդում (Քյուչուք Կալա) ամբարներ կան։

Սուլթան Մուրադ III-ի ժամանակից մինչև սուլթան Մուսթաֆայի գահակալությունը այս բերդը [Թիֆլիս] Ալ-Օսմանի ձեռքումն է եղել։ Հետո վրացի քյաֆիրները աջեմների հետ միանալով, անսպասելիորեն հարձակվել են և բերդում եղած մուսուլման ղազիները ամա՜ն կանչելով բերդը շահին են հանձնել և դուրս են եկել այնտեղից։ Այդ ժամանակից սկսած [Թիֆլիսը] Աջեմի ձեռքումն է, շատ բարեշինվել ու շենացել է։

Թիֆլիսի բերդի նկարագիրը: Կուր գետի եզերքին, սեպ ժայռի վրա, մեկը մյուսի դիմաց կառուցված երկու բերդ կա, որը Բիթլիսի (?) Թիֆլիս է կոչվում։ Կուր գետը հոսում է [բերդերի] միջով։ Մի ժայռից դեպի մյուս ժայռը խոշոր կամուրջ է գցված, այնպես, որ հեշտությամբ մի բերդից կարելի է անցնել մյուս բերդը։ Մեծ բերդը [Կալայի քեբիր] Կուր գետի հարավումն է, փոքր բերդը [Քյուչուք կալա] հյուսիսումն է։

Կուր գետը: Մեծ բերդի դաշտահայաց կողմից, բախվելով պարսպի պատերին, հոսում է Փոքր բերդի դռան առջևից և յոթևբորդ կոնաքում, Բաքու բերդի և 'րիլան քաղաքի միջև ընկած վայրում, թափվում է Խազերի ծովը։ Չըլդըրի վիլայեթի լեռներից սկիզբ առնելով, անցնում է Կարա Արդահանից, դիպչում Ախալցխա և Ազղուր բերդերին, ապա հոսում է Թիֆլիսի միջով և թափվում Խազերի ծովը։ Շատ մեծ գետ է։ Իրանի պատմագիրները ասում են, որ սրա մեջ մոտ 1060 հոսող ջրեր են թափվում։ Այս գետի եզերքին, սեպաձև ժայռի վրա Բիթլիսի կառուցած Մեծ բերդի շրջագծի երկարությունը 6000 քայլ է։ Սակայն հին շինություն է։ Պարսպի բարձրությունը 60 արշին է, ունի 70 աշտարակ, 3000 պատնեշներ և մի կամրջով դուռ, խրամ չունի։ Կուր գետի վրա կա ջրի աշտարակ, պաշարման ժամանակ այնտեղից ջուր են խմում։ Պարիսպների միջև 600 հողածածկ տուն կա։ Խանի պալատը այս բերդումն է։ Ունի նաև ջամի, խան, բաղնիք և փոքրիկ շուկա։ Փոքր բերդը կառուցվել է ավելի ուշ՝ Յեզդ Ջըրդ շահի կողմից, որը սեպաձև մի ժայռի վրա, քառակուսաձև փոքրիկ բերդ է։ Կամրջի ծայրին մի փոքր դուռ ունի։ Բերդում 300 տուն և ջամի կա, սակայն բեդիստան և այլ շինություններ չկան։ Այս բերդը ընկած է Մեծ բերդի հյուսիսում։ Բայց Փոքր բերդի պարիսպները ավելի ամուր են։ Աշտարակների վրա 3000 պահապաններ են լինում։ Ամեն գիշեր, մթնով, պահապանները խուդա-խուբ[96] են ասում և կանչում։ Բնակիչների մեծամասնությունը սոմանցիների ժամանակից մնացած սյուննիներ են և հանեֆի ու շաֆիի դավանանքներին[97] են պատկանում։ Ուլեմաները շատ են։

Բարիքներից հայտնի են հատիկ-հատիկ ցորենը, ընտիր Թիֆլիսի սպիտակ հացը, սպիտակ և կարմրավուն դեղձը, բամբակն ու բուրդը, խաղողը։ Կուր գետը բերքատվությանը ոչ մի օգուտ չի տալիս. Բերքը հասունանում է անձրևով։ Կուր գետը իր ակունքից սկսած, չնայած անցնում է 150 գյուղաքաղաքներով, ոչ մեկին օգուտ չի տալիս, այդ պատճառով Քյոր (կույր) է կոչվել։ Մոնղոլները այս գետին Օուր (سو) են կոչում, որ նշանակում է անօգուտ։ Ջուրը անուշահամ է, բայց որովհետև շատ ցածրից է հոսում, բարձր տեղերը չի ոռոգում։ Բաղնիքները լավը չեն, որովհետև քաղաքում ջերմուկ կա։

Թիֆլիսի ջերմուկի բնութագիրը: Մեծ բերդի արևելյան կողմում բնական հոսող տաք ջուր կա, որի մեջ կարելի է ոչխարի գլուխն ու ոտները եփել։ Կամարածածկ, օգտակար ջերմուկ է։

Ուխտատեղիներից հայտնի են Իմամ Հեսամ էֆենդիի, Ֆերհադ փաշայի քեթխուդա՝ Ռիդվան աղայի և Ջեմ Ալի էֆենդիի ուխտատեղիները։

Թիֆլիսը Կախեթի բերդից 5 մենզիլ հեռու է, Արսի բերդից՝ 4 կոնաք, Գենջեի բերդից՝ 4 կոնաք։

Այստեղից 200 ընկերներով 3 թյումեն ճանապարհածախս վերցրինք և նեղ ճանապարհով դեպի հարավ 4 ժամ ճանապարհ գնալուց հետո հասանք Քոսխեթի [Կվիշխեթի] բերդը։

Սեպաձև ժայռի վրա կառուցված քառակուսաձև փոքր բերդ է։ Աջեմի իշխանության տակ է, Թիֆլիսի նահիյեն է։ Մեզանից աջ, մի բարձր ժայռի վրա երևաց Լոռի բերդը։ Բերդին մոտ չգնացինք, միայն հեռվից դիտեցինք ու անցանք։ Այստեղից եկանք Սուրան [Սուրամ] բերդը։ Թիֆլիսի խանի իշխանությանն է ենթակա, գտնըվում է մի ժայռի վրա և փոքրիկ բերդ է, սակայն վերին աստիճանի անմատչելի, ամրակուռ բերդ է, որի աշտարակներն ու պատնեշները վերասլաց են։ Առաջին հիմնադիրը Նեշիրվանն է եղել։ Վրաստանի հնագույն բերդերից է։ Բնակիչների մեծ մասը վրացիներ, գյուրջուլաքներ և հայեր են։ Այստեղից դուրս եկանք և 4 ժամ դեպի արևմուտք գնալուց հետո հասանք Ազղուր բերդը։

Հնագույն Ազղուր բերդի բնութագիրը: Կոչվում է Ալեքսանդրի Դուր: «Շերեֆնամե»-ի պատմության վկայությամբ Վրաստանում կառուցված առաջին բերդը սա է։ Կառուցվել է Մեծ Իսքենդերի կողմից։ Մարմար քարերով կառուցված այս մեծ և չորս անկյունանի բերդը ցույց է տալիս, որ Իսքենդերի կառույցներից է։ Քառակուսի, հին բերդ է։ Վրաստանում, Ախալցխայի տերիտորիայում ընկած

նայիրություն է[98]։ Դեպի հարավ նայող մի դուռ ունի։ Աղան է իշխում։ Ունի մոտ 200 զինվոր, նաև ջամի, խան, բաղնիք և 40—50 խանութ։ Այգիներն ու պարտեզները շատ են։ Այս վայրը գտնվում է Վրաստանի շեշատ ցեղի տերիտորիայում, բնակիչները վրացերեն են խոսում։

Այնուհետև էվ. Չելեբին մի քանի օրինակներ է բերում շեշատցի վրացիների լեզվից, տալիս է գործածական իրերի անունները։

Վրաստանի թագավորների սերունդը: Նեմրուդին[99] հակառակվող ազգերից առաջինը եղել են հրեաները, հետո վրացիների դադիանի և շեշատ ցեղերը։ Ավելի ուշ գուրիելի, աչըք-բաշի, մեգրել ցեղերը։ Սրանք բոլորն առաջացել են հրեաներից՝ Դավիթի ժողովրդից, սակայն հետագայում ընդունելով քրիստոնեությունը առաջնորդվել են Ավետարանով։ Այս ցեղերը 12 լեզվով են խոսում, բարբառները հատուկ են իրենց և չեն հասկացվում։ Իրենց սխալ կարծիքով շեշատ և դադիանի ցեղերի լեզուները ամենաուղիղ լեզուներից են։ Մոսկվացիների [արքայական] գերդաստանը վերջանալու դեպքում, Վրաստանից տանում են մեկին և թագավոր նշանակում։ Ազնըվական ցեղ է։ Վրացի վարդապետները իրենց նախահայրերին հասցընում են մինչև Քեյքավուսը և նրա միջոցով՝ մինչև վեհափառ Դավիթը։ Այդ մասին պատմում են այսպիսի մի տարօրինակ ավանդություն։ Վրաստանում մի թագավոր է լինում, որին իբրև թագավոր հաջորդում է իր աղջիկը՝ Թեմրեզը (د ,ه;)։ Սա սկսում է կառավարել հորից ժառանգած երկիրը։ Թագուհին իր աղջկան, արբունքի հասնելուց հետո, տալիս է Բեյդիվան անունով իշխանազունին։ Այդ աղջիկը երեք որդի է ունենում, որոնք մեծանալով՝ Վրաստանը բաժանում են իրենց մեջ։ Մարալե անունով մեծ բեյ-զադեն վերցնում է Քութայիսի երկիրը, որի իսկական անունը Աչըք-բաշիի վիլայեթ է։ Այս աչըք-բաշի ցեղի սերունդը սկիզբ է առնում վերոհիշյալ բեյզադեից։ Միջնակ որդուն՝ Սիմոնին, տալիս են Թավրիզի երկիրը, փոքր որդուն՝ Դադիանիին՝ տալիս են Բաղթի (باغت) վիլայեթը։ Դադիանի ցեղի սերունդը սկսվում է այս Դադիանիից։ Դադիանի բեյը աշխարհաշեն, արդարադատ մի արքա լինելով՝ ամբողջ Վրաստանը հպատակվում է նրան։ Ներկայումս Վրաստանում բոլոր վրացիները Դադիանի և Աչըք-բաշի բեյերին, ինչպես իրենց գլխավոր վարդապետների, հարգանք են մատուցում։ Երբ թագավորները գահ են բարձրանում, նրանց սուրը այս Դադիանի և Աչըք-բաշիի բեյերի ձեռքով են կապվում։

Սուլթան Սելիմ առաջինը, Տրապիզոնում եղած ժամանակ, լավ հարաբերության մեջ է եղել Քութայիսի բերդի Աշըք-բաշի բեյի հետ, և փադիշահ եղած ժամանակ Աշըք-բաշի երկիրը ազատել է խարաջից և սովորական տուրքերից։ Մինչև այսօր էլ ազատված են։ Միայն ամեն տարի պետության մայրաքաղաքն են ուղարկում գերիներ, բացառիկ գեղեցիկ վրացուհիներ, բազե և սպունգ։

Այստեղից [Աղզուրից] դուրս եկանք և անցնելով բերքառատ վայրերով՝ հասանք Ախալցխա։ Այս վայրի անունը Ախասխա է, սակայն նրա չորս կողմում բնակվող ցեղերը իրենց բարբառով են կոչում։ Օրինակ, Ախսկա, Ախրկասև, Ակասկա։ Սակայն փադիշահական դեֆթերխանեում գրվում է՝ «Չըլդըրի էյալեթի մյութասարրիֆ այսինչ փաշան»։

Բերդի առաջին հիմնադիրը Նեշիրվանն է։ Նեշիրվանը ամեն տարի՝ վեց ամիս, յայլայի օրերն անց է կացրել Ախալցխայում։ Հետագայում շատերի ձեռքն է անցել։ «Շերեֆնամեի» պատմության վկայությամբ, էմիր Հեշամ-բին Աբդյուլ Մելիքը Շամից եկել է բազմաթիվ զինվորներով, և գրավելով Հալեպի, Այնթաբի, Մարաշի, Մալաթիայի, Դիարբեքիրի, Էրզրումի և այլ բերդեր, անցել է Վրաստան և գրավել է նաև Ախալցխայի բերդը։ Թիֆլիսը և Վրաստանի ու Դաղստանի քաղաքները հպատակեցնելուց հետո, վերադարձել է իր մայրաքաղաքը՝ Շամը։ Հետո վրացիները ապստամբվել և ամբողջովին հրաժարվել են իսլամությունից ու հպատակությունից։ Հետագայում, Ադրբեջանի թագավոր Կարա Կոյունլի[100] Կարա-Յուսուֆը գրավել է այս վայրերը, սակայն երբ հանդես է եկել Թիմուրը, Կարա-Յուսուֆը չի կարողացել դիմանալ և ապաստանել է Ալ-Օսման Յըլդըրըմ Բայազիդ խանի մոտ։ Հետո այս բերդը անցել է Ուզուն Հասանի ձեռքը։ Թիմուրը շարժվել է Ուզուն Հասանի վրա, սակայն Ուզուն Հասանը խելացիությամբ համբուրել է նրա ասպանդակը և այդպիսով իր վիլայեթը ազատել է կողոպուտից ու թալանից։ Դրանից հետո անցել է Ադրբեջանի պետության Շեյխ Սեֆիի որդի, Իրանի Շահ Իսմայիլի ձեռքը։ Սա Ախալցխան յայլայի վերածելով, ամբողջ Վրաստանի ցեղերը հպատակեցնում և ենթարկում է իրեն։ Բայազիդ խանի օրոք նա ավերելով ու քանդելով Ալ-Օսմանի վիլայեթը [երկիրը], հասնում է մինչև Արփա Չուքուրի (Սվազ) և 7 էյալեթ առնում է իր տիրապետության տակ։ Այդ ժամանակ Սելիմ խան առաջինը Տրապիզոնի իշխողն էր։ Սա, առյուծի նման հասնում է այս չարագործ շահի բանակի հետևից և բոլորին սրի քաշում։ Իսկ երբ փադիշահ է դառնում՝ նվիրական պատերազմի

հերթը [հասել է] ասելով, իր բազմաթիվ զինվորներով գնում է Շահ Իսմայիլի վրա և Չըլդըրի դաշտում տեղի ունեցած պատերազմում Աջեմի 100 հազար զինվորներին սրի է քաշում։ Ահա Շահ Իսմայիլի անհեռատես կերպով մինչև Սվազ հարձակվելու արդյունքը։ Այդ պատերազմում շահը հազիվ կարողացավ իր անձն ազատել և Ադրբեջան փախչել։ Այս պատերազմից հետո Սելիմ խանը ամբողջ Վրաստանը իրեն հպատակեցրեց և իր հրամաններին ենթարկեց։ Հետագայում սուլթան Սելիմ խանը [Ախալցխան] մի մեծ էյալեթի վերածեց և շնորհեց իր վեզիրներից մեկին։

Չըլդըրի էյալեթը 13 սանջաք ունի. ունի նաև մալ և թիմարի դեֆթերդար, դեֆթերի չավուշների էմիններ, չավուշների քեթխուդա և չավուշների քարտուղար։

Սանջակներն են՝ *Օլթի, Խըրթիզ [Խերթվիս], Արտենջ [Արտանուշ], Հաջրեք, Արդահան, Փոսխով, Մախջիլ, Ախալցխա (փաշայի սանջաքն է)։ Փերթքերք, Լիվանե, Նըսֆ-Լիվանե և Շեշատ սանջաքները յուրթլուք ու օջաքլըք են և ժառանգվում են իբրև սեփականություն։*

Խասերը [*ակչեով*]. *Օլթի —910.017, Փերթքերք —462.190, Արտանուշ 260.000, Արդահան —300.000, Շեշատ —65.000, Լիվանե —65.000, Խերթվիս—200.500, Հաջրեք—365.000, Փոսխով—206.500. Մախջիլ—20.322, Աջարա—200.000, Փեթեք—400.000:*

Բոլոր սանջակներում եղած զեամեթները և թիմարները: *Ընդամենը 656 զեամեթ և թիմար կա։ Օրենքով, ջեբելուների հետ միասին 800 զինվոր ունի։ Փաշայի զինվորների հետ միասին՝ 1500 զինվոր։ Օլթիում 3 զեամեթ և 123 թիմար կա, Մեծ Արդահանում՝ 8 զեամեթ և 87 թիմար, Արտանուշում՝ 4 զեամեթ և 42 թիմար, Հաջրեքում՝ 2 զեամեթ և 72 թիմար, Խերթվիսում՝ 13 զեամեթ և 35 թիմար, Փոսխովում՝ 12 զեամեթ և 68 թիմար, Փեթեքում՝ 8 զեամեթ և 54 թիմար, Սասինում՝ 7 զեամեթ և 4 թիմար, Լորիում՝ 9 զեամեթ ու 10 թիմար, Ախալցխայում՝ 10 զեամեթ և 17 թիմար, Չաքլեքում՝ 11 զեամեթ և 32 թիմար, Խաթլեում՝ 18 զեամեթ և 7 թիմար, Իսպիրում՝ 4 զեամեթ և թիմար։ Պատերազմի գնալու դեպքում 1060 գյուղից տարեկան 320 քիսե եկամուտ է ստացվում, որը ստանում են զեամեթի և թիմարի տերերը։ Սուլթան Սելիմը փառավոր թուղրայով այս էյալեթը շնորհեց իր սանջաքի փաշային և նրան Էրզրումի, Սվազի, Մարաշի, Ադանայի էյալեթների և Չըլդըրի վալիների վրա հրամանակատար [ֆերմանբեր] նշանակեց։ Օրենքով նրանք ամեն տարի պարտավոր են դիմել նրա պաշտպանությանը։ Նախա-*

պես 500 ակչեով մսլեիությամբ գավառը շնորհվեց էսքիլի Ռամազան էֆենդիին։ Ներկայումս 300 ակչեով շերիֆի կաղա է։ Կադին, ըստ օրենքի, տարեկան 7 քիսե եկամուտ է ստանում, փաշան՝ 80 քիսե։ Ունի սուբաշիություն։ Չըլդըրի միրմիրանի փադիշահական խասը 400.000 ակչե է։ Ունի մոտ 2000 կուլ զինվորներ, բերդի աղաներ և 7 օդա փադիշահական դերգահի ենիչերիների, ջեբեջիների և թոփչիների աղաներ։

Այն ժամանակ, երբ [էյալեթը] ամեն տեսակետից բարեշեն վիճակումն էր, 1044 (1634) թվականին կըզըլբաշը, առիթը գտնելով, գրավեց [այս էյալեթը]։ Հետագայում, սուլթան Մուրադ IV-ը, Երեվանը Աջեմից գրավելուց հետո, Ախալցխան էլ գրավեց։ Ներկայումս վերաշինվում և բարեշինվում է։

Ախալցխա բերդի նկարագիրը։ *Սեպաձև ժայռի վրա կառուցված քարաշեն, ամրակուռ և հաճելի բերդ է։ Երկու դարպաս ունի։ Բերդում մոտ 1100 հողածածկ, առանց այգիների ու պարտեզի տներ կան։ Մի դարպասը բացվում է դեպի արևելք, մյուսը՝ արևմուտք։ Ունի 28 մեհրաբ։ Վերին բերդում կառուցված սուլթան Սելիմ I-ի ջամին հողածածկ հնագույն շինություն է։ Այս քաղաքում կապարով ծածկված շինություններ չկան։ Այդ գեղեցիկ ջամիի մինարեն խորտակվել է։ Քունբեթ-օղլիի ջամին հողածածկ է և առանց մինարեի։ Ստորին բերդում գտնվող Խալիլ Աղայի ջամին նույնպես հին շինություն է, մեծ թվով հասարակություն ունի. սրտառուչ և զվարթ ջամի է։*

Վիլայեթի ժողովուրդը իսլամ է, բոլորը հավատացյալ, կրոնասեր մարդիկ են։ Օրվա հինգ ժամից բացի, յուրաքանչյուր ջամիում Ղուրան և այլ գիտություններ են կարդացվում։ Առանձին դար-ուլ-թեդրիս, դար-ուլ-հադիս և դար-ուլ-կուրաներ[101] *չկան, բայց գիտության ծարավ մարդիկ շատ են։*

Բերդից դուրս գտնվող վարոշը նմանապես շատ բարեշեն է։ Խաներից նշանավորներն են՝ Դելի Մուհամմեդ խանը, էքմեքչիի և Իսա Աղա-օղլի խաները։ Գեղեցիկ բանջարանոցները շատ են, այգեգործությունն ու բերքը առատ է։ Վճիտ գետը սկիզբ է առնում Օդե լեռներից և քաղաքի ցանքատարածությունները ջրելուց հետո, հոսում է դեպի Էրզրում բերդը և ապա Քոսխեթ բերդի մոտ՝ խառնվում Արազ գետին։ Այս բերդից դուրս գտնվող խրամը կամրջով են անցնում։ Դրսի վարոշի շուրջը պարիսպներ չկան։ Այս վարոշում մոտ 300 փոքր խանութ կա։ Բեդիստան չկա։ Եղանակը բավականին խիստ լինելու պատճառով ժողովուրդը առողջակազմ է, քաջ և ան-

վանի։ Մասնավորապես վիլայեթի վալի՝ վեզիր Սեֆեր փաշան, որ ծագումով վրացի է, խելացի, հնարամիտ և քաջ անձնավորություն է։ Նրա քեթխուդան՝ Դերվիշ-Աղան, նմանապես վրացական ծագումով, բարեսեր և պատվասեր անձ է։ Սեյֆի և մյուս ազնվականները հնարագետ և վեհանձն մարդիկ են։

Ախալցխայից դեպի արևելք 6 կոնաք հեռավորության վրա ընկած է Երևանը։ Նրանց միջև Կարսի բերդն է։ Ախալցխայից մինչև Թիֆլիս 6 մենզիլ է և կարելի է այնտեղ գնալ թե արևելքից և թե արևմուտքից։ Այստեղից մինչև Գենջե դարձյալ 6 մենզիլ է։

ՉԸԼԴԸՐԻ ԷՅԱԼԵԹԻ ՁՈՐՍ ԿՈՂՄՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՊԱՏԱԿ ԵՎ ՀՆԱԶԱՆԴ ԲԵՐԴԵՐԸ

Չըլդըրի մոտ գտնվող Խերթվիս բերդը 986 (1578) թվականին գրավել է Լալա Մուսթաֆա փաշան։ Խերթվիսի մոտի Ախալքալաքի բերդը նույնպես Լալա Մուսթաֆա փաշան է գրավել։ Փերքանի և Մեծ Վալե բերդերը ընկած են երկու բարձր լեռների արանքում։ Բարձր ժայռի վրա կառուցված փոքրիկ բերդեր են։ Բուն Վրաստանում գտնվող Քութայիսի բերդը Չըլդըրից 2 մենզիլ հեռավորության վրա է և Աչըք-բաշ վիլայեթի մայրաքաղաքն է։ Սա Որիրաթ լեռան մոտ է և բարեշեն է։ Վրաստանի արքայանիստ քաղաքն է։ Սելիմ խանի խալիֆայության ժամանակ այս վայրը օջաքլըքի կարգով հյուքումեթ է եղել։ Խասը 606.000 ակչե է։ Հաջրեքի բերդը ընկած է Ախալցխայի ու Արդահանի միջև և Չըլդըրի էյալեթի բարեշեն լիվաներից է. միրլիվայի կենտրոնն է։ Գրավվել է Լալա փաշայի կողմից։ Բեյի խասը 365.000 ակչե է։ Ունի ալայի բեյ և կագի։ 500 զինվոր է տալիս։ Շեյթանի բերդը 990 (1582) թվականին գրավել է Ֆերհադ փաշան, որը Չըլդըրի մոտ, մի ժայռի վրա կառուցված ամուր բերդ է։ Կըզլար կալասին նույնպես Չըլդըրի մոտ, Ջաղ գետի եզերքին, սեպաձև ժայռի վրա կանգնած աննման բերդ է։ Ալթուն կալասին քառակերտ է և Կըզլար կալասիից 3 ժամ հեռավորության վրա է։ Օդուրխա բերդը Ախալցխայից ոչ հեռու ընկած մի փոքրիկ բերդ է։ Ալ բերդը Ախալցխային մոտ է։ Փոսխով բերդը Ախալցխայի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է. խասերը, զեամեթները և թիմարները վերևում հիշվեցին։ Լալա Մուսթաֆա փաշան այն գրավել է 986 (1578) թվականին։ 150 ակչեով կազա է։ Ունի ալայի բեյ և չերիբաշի։ Նախկինում Շեշատի երկրում 2 թուղով միրմիրանություն է եղել։ Չըլդըրից 7 ժամ տևող հեռավորության վրա է։

Շեշատի բերդը *օջաքլըքի կարգով հյուքումեթ է, կադի չունի։ Շեշատի երկիրը ապստամբների վայր է։ Խարբերի բերդը՝ Արտանուշի բերդի մոտ, մի ձորի եզերքին ընկած անառիկ բերդ է։ Արտանուշի բերդը գտնվում է Չըլդըրի էյալեթում և սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյի խասն ու զեամեթը վերևում հիշվեց։ Ավխեթչի բերդը սանջաքի բեյի կենտրոնն է։ Դեֆթերի-խաքանիում*[102] *արձանագրվում է որպես Մախչիլ։ Անառիկ բերդ է։ Բեյի խասը հիշվեց վերևում։ Ջաղիսմանի բերդը Չըլդըրի մոտ գտնվող անառիկ բերդ է։ Ուրիշ բերդեր էլ կան։*

Ախալցխայից մինչև էրզրում ընկած վայրերը: *Ախալցխայից Վալղար յայլայով անցանք և 4 ժամից հետո եկանք Քինավա բերդը։ Սորից դժվարին ճանապարհով շարժվեցինք դեպի արևմուտք և հասանք Կարա Արդահան բերդը։*

Կարա Արդահանի բերդը գրավվել է Սելիմ խան I-ի կողմից։ Չըլդըրի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյի խասը 300.000 ակչե է։ Սանջաքում 6 թիմար և 87 զեամեթ կա։ Ունի ալայի բեյ, չերիբաշի, բերդակալ և 200 բերդապահ զինվոր։ Բեյը, ջեբելուների հետ միասին, մոտ 1000 զինվոր կարող է տալ։ 150 ակչեով շերիֆ կաղա է։ Նագիբ չունի, մյուֆթին Ախալցխայումն է։ Բերդն անառիկ մի ժայռի վրա է. ունի քառակուսի ձև և ամրակուռ է։ Ասիթանեի կողմից մեկ օդա ջեբեջիներ ունի։ Այս քաղաքում հայտնի է Կիյա փաշայի խրամը։

Արդահանի մոտ եղած բերդերը: *Վալեի բերդը 987 (1579) թվականին գրավել է Լալա Մուսթաֆա փաշան։ Ախարիսի բերդը մոտ է Օլթիին։ Փերթեքի բերդը, Հեմազարի բերդը, Մամրվանի բերդը, Նեզերբար բերդը, Ղազի Սեֆեր փաշայի բերդը, Քենզեի բերդը, Կեզանի բերդը և այլ բերդեր, բոլորը գրավել է Լալա Մուսթաֆա փաշան։*

Այս [Արդահանի] բերդը ցուրտ կլիմա ունի և այդ պատճառով այգիներ ու պարտեզներ չկան։ Պտուղները ստացվում են Աջարա բերդից և Թորթումից։ Արդահանի բնակիչները հավատացյալ մուսուլմաններ են։ Կրոնասեր և պանդխտասեր մարդիկ են։ Մեծ մասը զբաղվում են երկրագործությամբ, մի մասն էլ վաճառականներ են։ Լեռներում աճում է fյուfեմ *կոչված հիանալի պտուղը։ Այս բերդը էրզրումի հյուսիսումն է և նրանից հեռու է 5 մերհալեով։ Արդահանից մինչև Կարս մեկ կոնաք է։*

Այստեղից քարքարոտ վայրերով նորից դեպի արևմուտք գնացինք և հասանք Քոլե բերդը։ Ախալցխայի տերիտորիայումն է և

կառուցել է Վրաստանի բեյ Լևենդ խանը։ Չըլդըրի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է։ Փադիշահական կանոնով բեյի խասը 300.000 ակչե է։ Ունի ալայի բեյ, չերիբաշի, բերդակալ և բերդապահ զինվորներ։ Բերդը գրավվել է Սելիմ խանի կողմից։ Գտնվում է անմատույց ժայռի վրա։ 150 ակչեով կաղա է։ Ունի ջամի, խան և բաղնիք։

Այստեղից նորից դեպի արևմուտք գնացինք և 8 ժամից հետո հասանք Ինեքի բերդը։ Կառուցվել է այդ անունով վրացի իշխանի կողմից։

Չըլդըրը սանջաքի բեյություն է։ Բեյի խասը 400.000 ակչե է։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Ըստ օրենքի, ջեբելուների հետ միասին, 1000 զինվոր է տալիս։ Բնակիչները բարեպաշտ մարդիկ են, ապրում են երկրագործությամբ և խնայողությամբ։ Ջուրը շատ լավ է, կան հայ, գյոք-դուլաք և վրացի ռայաներ։

Այստեղից շարժվեցինք դեպի հյուսիս-արևմուտք և 2 ժամից հետո հասանք Մամրվան բերդը։ Կառուցվել է վրացի բեյերի կողմից։ Գրավել է Լալա Կարա Մուսթաֆա փաշան։ Նախկինում սանջաքի բեյի կենտրոն է եղել։ Ներկայումս էրզրումի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոն է։ Բեյի խասը 203.000 ակչե է։ Ունի չերիբաշի և ալայի բեյ։ Բեյը, ջեբելուների հետ միասին, 500 զինվոր ունի, 150 ակչեով շերիֆ կազա է։ Ունի բերդակալ, աղաբ-աղասի և բերդապահ զինվորներ։ Բերդը ամրակուռ և քառակուսի ձևով է կառուցված։ Դեպի հարավ նայող մի դարպաս ունի։ Ընդամենը 800 տուն կա։ Բնակիչները մուսուլմաններ են և Նակշբենդի[103] միաբանությանը պատկանող կրոնասեր մարդիկ։ Ունի ջամիներ, բաղնիք, խան և փոքր շուկա։

Այստեղից դարձյալ դեպի արևմուտք գնացինք և հասանք էյդ գյուղը, որը Մամրվանի նահիյեում ընկած մուսուլմանական և հայկական գյուղ է։ Ապա շարժվեցինք դեպի արևմուտք և հասանք Կարա Գյունեք գյուղը, որը էրզրումի էյալեթի նահիյեներից է։ Բարեշեն գյուղ և զեամեթ է։ Անցնելով Վրաստանի լեռնանցքով, եկանք կանաչազարդ Ումուդում-Դեդե գյուղը։ Մի բարձր լեռան ստորոտում, 100 տնից բաղկացած բարեշեն գյուղ է։ Գտնվում է Եփրատ գետի ակունքում։ Նշանավոր Եփրատ գետը բխում է այս գյուղի մոտի մի մեծ քարայրից։ Գետում մի արշին երկարությամբ ձկներ կան, որոնք վերին աստիճանի համեղ են։ Այստեղ է թաղված Ումուդում-Դեդեն, որի գերեզմանը հայտնի և կարևոր ուխտատեղի է։ Այդ պատճառով ոչ ոք չի համարձակվում այդտեղ ձկներ որսալ։

Սակայն մի փարսախ ներքև որսում ենք։ Մարդ այս ձուկը ուտելիս նրա համեղությունից ու անուշահոտությունից հիանում է։ Որքան էլ ուտես, ոչ տաքություն կունենաս և ոչ էլ ծանրություն կզգաս։

Ումուդում-Դեդեի ուխտատեղին նվիրական վայր է. շեյխը՝ Իբրահիմ էֆենդին, նույնպես նվիրական և բարձր անձնավորություն է։

Այստեղից նորից էրզրումի դաշտով գնացինք և ողջ ու ապահով հասանք էրզրումի բերդը։ Առանց մեր հագուստը փոխելու, մեր փաշա էֆենդիին ներկայացանք և Երևանի խանի նամակն ու նվերները հանձնեցինք... Այստեղ մի շաբաթ մնացինք։ Այդ ժամանակ Երևանի խանից նամակներ ստացվեցին։ Խանը գրում էր. «Ձեր Կարսի կուլերը մեր զորականներին նեղություն են պատճառում։ Խնդրում ենք ձեր կուլերից մի աղա ուղարկեք, որ գա այստեղ և քարավանները էրզրում տանի»։ Տասներորդ օրը նվաստիս նորից Աջեմի երկիրը ուղարկեցին։

(էջ 325—328)

1057 (1647) ԹՎԱԿԱՆԻ ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

էրզրումից արևելք 11 ժամ գնալուց հետո հասանք Հասան Կալա բերդը, որը նախապես նկարագրել ենք։ Բասենի դաշտով նորից դեպի արևելք գնացինք և եկանք Բատելչանլի գյուղը, որ հայկական գյուղ և զեամեթ է։ Ապա, 9 ժամ հետո կանգ առանք Մեյտանչեքում, որը Բասենի դաշտում ընկած շեն գյուղ է։ 10 ժամից հետո հասանք Մժնկերտ բերդը։ էրզրումի էյալեթում է և Խերասան բեյի իշխանության տակ։ Բերդը կառուցված է սեպաձև ժայռի վրա, ունի բերդակալ, 150 բերդապահ զինվոր և 200 տուն։ Բասենի կաղայում նայիբություն է։ ...Այստեղից դեպի արևելք գնալով, անցանք էրզրումի սահմանի վրա գտնվող Խանի ձորը և մտանք Կարսի էյալեթի տերիտորիան։ Եղի-Քիլիսե ավերակ վանքը և լեռնանցքը անցնելով, 6 ժամից հետո հասանք Բարդուզ բերդը։

Բարդուզի բերդը *Կարսի իշխանության մեջ է. կառուցվել է Ակ Կոյունլի էլ-Մելիք Իզզեդդինի կողմից...*

Այստեղից գնացինք Քեչկվան-դուդման բերդը։

Քեչկվան-դուդմանի[104] նկարագիրը: *Փիժենի, Սեֆաքի, էֆրեսյաբի պատերազմների պատմության մեջ մի քանի պատմագիրների կողմից հիշված այս բերդը, Աբբասի խալիֆ էլ-Մութենսեր Բալ-*

լահի իշխանության օրոք, եկել է մոնղոլ ցեղի Հելաքու խանը, քաղաքը ավերել է և ժողովրդին սրի ու կրակի մատնել։ Հետագայում այս բերդը Կարա-Կոյունլի Կարա-Յուսուֆի շնորհիվ վերաշինվել ու շենացել է, սակայն Թիմուրի ձեռքով նորից ավերվել է։ Սուլթան Սուլեյմանի Նախիջևան ուղևորվելու ժամանակ, օսմանյան բանակի առաջապահի հրամանատար Լալա Կարա Մուսթաֆա փաշան գրավել է նաև այս վայրերը։ Ներկայումս Կարսի էյալեթի իշխանության մեջ առանձին սանջաքի բեյի կենտրոն է։ Բեյի խասը 153.300 ակչե է...

Այստեղից շարժվեցինք դեպի արևելք և հասանք Ալ-Օսմանի սահմանի ծայրամասը կազմող Կարսի բերդը։

Կարսի բերդի նկարագիրը: *Օսմանյան երկրում Կարս անունով երեք սանջաք կա. մեկը Կարա Դաշլըքի Կարսն է՝ Սելեֆքեում, երկրորդը՝ Մարաշի Կարսը, երրորդն էլ այս Կարսն է։*

Սուլթան Մուրադ III-ի օրոք, Լալա փաշան որպես սերդար, իր հետ վերցնելով Անատոլիայի վեզիր Ջաֆեր փաշային, Շամի վեզիր Թոփալ Մուհամմեդ փաշա-զադե Հասան փաշային և Բլանլի Ալի փաշային, 100 հազարանոց բանակով գալիս է և կանգ առնում Կարսի հողում։ Նա անհրաժեշտ է համարում վերաշինել ու շենացնել աջեմների ավերած Կարսի բերդը և ձեռնարկում է այդ աշխատանքներին։ Ռումելիի փաշան, Մահմուդ փաշայի ձեռքով, քառանկյունի սպիտակ մարմարի վրա արաբերեն լեզվով ու ջելի *տառերով գրել է տալիս հետևյալ գրությունը և ամրացնում ստորին վարոշից դեպի հարավ նայող դարպասի վրա. «Հիմնեց այս նվիրական բերդը թագավորների մեծը՝ Ֆիրուզ Ագայը։ Մեծն Աստված օգնի նրան։ Մեր տերը սուլթան Մելիք-Իզեդդին Իյդուլլահի իշխանության օրոք, անվանի Սուլթան Քերիմ-էդդինի աղջկա օժանդակությամբ կառուցեց։ Աստուծո լույսը նրա գերեզմանի վրա լինի»*։*

(էջ 330)

Երկրորդ հիմնադիր Լալա փաշան այս հնագույն հուշարձանը մեծ խնամքով իր տեղն է դնում և ցույց է տալիս բարեգործ մարդ-

---

* انشاءهذه القثعه المبارکة آصف الملوك فيروز آقای اعزالله انصاره فى ايام مولانا السلطان الملك عزالدين ابدالله دولة باعناية بنت السلطن كريمالدين المعرفة نور الله قبرها و مرقدها.

կանց։ Բերդը 70 օրվա ընթացքում վերակառուցում և հոգում է բոլոր ռազմամթերքների և այլ հանդերձանքների կարիքը...

Այնուհետև, էվ. Չելեբին պատմում է մի առասպելական սրբի գերեզմանի մասին, որի վրա կառուցված է Հասան-Հերգանիի ջամին։

...Կարսի էյալեթում աշխարհահամար է կատարվում։ Ներկայումս օսմանցիների ձեռքումն է և փադիշահական հրամանները գրվում են այսպես. «Կարսի էյալեթի մյութասարրիֆ իմ վեզիր այսինչին»։ Աջեմի սահմանի վրա է։ Քանիցս արփալըքի կարգով վեզիրներին է շնորհվել։ Ներկայումս փաշան 600.000 ակչեի փադիշահական խաս ունի։ Նախկինում եղել է Էրզրումի սանջաքը։ Դեֆթերի քեթխուդա, դեֆթերի էմին և այլ պաշտոնյաներ չկան։ Սանջաքները հետևյալներն են՝ Փոքր Արդահան, Խոջուջան, Զարեշատ, Քեչվան, Վրիշան։ Կարսը փաշայի կենտրոնն է։ 7 զեամեթ և 102 թիմար կա։ Ջեբելուների և փաշայի զինվորների թիվը 3000 ընտիր զինվորների է հասնում։ Քանիցս դուրս է եկել Աջեմի 7—8 խանությունների դեմ։ Ունի ալայի բեյ և չերիբաշի, 300 ակչեով կազա, բերդակալ, 7 աղաբի աղաներ, 3 օդա ենիչերի, մեկ օդա ջեբեջի և մեկ օդա թոփչի։ Զորբաջիները իրենց մարդկանցով միասին էրզրումումն են մնում։ Կա 1500 բերդապահ զինվոր։ Վանի, Կարսի և Ախալցխայի կուլերը (զինվորները) սահմանի վրա են գտնվում և հայտնի են իրենց քաջությամբ ու համարձակությամբ։

Եփրատ գետի ափին, Բիրեջիկի բերդի առաջ գտնվող գետանցքի նավերի եկամուտը, ինչպես նաև Հալեպի էյալեթի Սրուջ և Մենբեջ գյուղերի եկամուտները արձանագրված են իբրև Կարսի բերդի զինվորների օջաքլըքը։ Այնպես, որ այդ տեղերից տարեկան 70 բեռ ակչե ռոճիկ են ստանում։ Կարսի էյալեթը 10 կաղա ունի։ Իսկ ամեն մեկ կաղան՝ 8 նահիյե։ Ունի նաև շեյխ-ուլ-իսլամ, նագիբ, այաններ և էշրաֆներ։

Կարսի բերդի նկարագիրը: Կառուցված է հյուսիսային կողմում, մի թնդանոթի մենզիլի հեռավորության վրա գտնվող բարձր լեռան գագաթին։ Այս բերդի միջնաբերդը գտնվում է լեռան ստորոտում, մի ժայռի վրա։ Ստորին պարիսպը գտնվում է մի հարթության վրա։ Ընդամենը հինգ կարգի ամուր պարիսպներ ունի։ Բերդի դարպասը նայում է դեպի արևելք։ Վերին բերդ կոչված միջնաբերդի դարպասը բացվում է դեպի արևմուտք և երկաթե ամուր դարպաս է։ Պարիսպների միջև բերդակալի տուն և 200 լևենդների տներ կան։ Ռազմամթերքը առատ է և կանոնավոր։ Միջնաբերդում շուկա, բազար, խան

և բաղնիք չկան։ Այս բերդից ցած գտնվող վարոշը պարսպի նման է։ Երկու կարգի ամրակուռ պատեր կան։ Երկաթե երեք դարպասներ ունի։ Դարպասներից ներս լիքը հրացաններ և բազմատեսակ ռազմական գործիքներ կան։ Դռնապաններն ու հսկողները միշտ պատրաստ են։ Այս դարպասներից մեկը բացվում է դեպի արևմուտք՝ էրզրումի կողմը և կոչվում է Սու-Կափուսու, մյուս դարպասը բացվում է դեպի Կաղզման և կոչվում է Օրթա-Կափու։ Երրորդը բացվում է դեպի արևելք՝ Երևանի կողմը և կոչվում է Բահրամ փաշա-Կափուսու։ Բերդի պատերի վրայի պահակատներից բերդապահները գիշեր-ցերեկ պահակություն են անում և մութ գիշերներին ջահերով լուսավորում են բերդի պարիսպներն ու դարպասները։ Վարոշի պատերը այնքան էլ բարձր չեն, բայց շատ ամուր են և քարաշեն։ Սուրին բերդի շրջապատի խրամի տեղում լիճ է։ Այն գրավում է Բահրամ փաշայի տնից մինչև Օրթա-Կափուն ընկած տարածությունը։ Ջուրը հիանալի է։ Այս կողմից բերդին տիրանալը անհնարին է։ Բերդի շրջապատում 220 խիստ ամրակուռ աշտարակներ կան, ինչպես նաև 2080 պատնեշ և պատվարներ։ Այս մեծ ռաբաթի շրջագծի երկարությունը 5700 քայլ է։

Շինությունները: Այս բերդում մոտ 3000 այանի, էշրաֆի և արհեստավորների տներ, 47 մեհրաբ, ջամի և մզկիթներ կան։ Դրանցից միայն ութի մեջ ուրբաթի սալավաթ է կարդացվում։ Ամենահինը Լալա փաշայի կողմից կառուցված Շեյխ Հասան-Հերգանի ջամին է... հետո Վայիզ էֆենդիի ջամին է՝ ջրի դռան մոտ, Սուլեյման էֆենդիի ջամին է... Հյուսեյին քեթխուդայի ջամին, որը Կըզըլ Քիլիսե անունով մի մեծ վանք է եղել, և փադիշահի ֆերմանով ջամիի է վերածվել ու խավարից ազատվել։

Հողը բարեբեր է և բերքառատ։ Քարուկրից կառուցված բեդիստան չկա, բայց 200 խանութ կա։ Հինգերորդ կլիմայի կենտրոնում գտնվելու պատճառով ձմեռը շատ խստաշունչ է լինում. այդ պատճառով էլ այգիներ ու պարտեզներ չկան։ Սակայն բերքը, հացահատիկը շատ առատ է։ Բնակիչները շատ առողջ են և վաճառականությամբ ու երկրագործությամբ են ապրում։ «Հոշակը փորձանք է» ասելով, բնակվում են հասարակ, միահարկանի, փայտաշեն տներում։ Ուլու ջամիի մոտի փաշայի պալատը բարեզարդ է. այս պալատի մոտ մի շարիաթի դատարան կա...

Էվ. Չելեբին Կարսից գնում է Ախալցխա և այստեղ էրզրումի փաշայից իր բերած նամակը հանձնում է տեղի փաշային։ Փաշան և իր այանները հերքում են աչեմների քարավանների կողոպտելու մասին Երևանի խանի գանգատը և այդ հա-

մարում աջեմների ու կաղզվանցիների կողմից կազմակերպված զբպարտություն։ Այստեղից էլ. Ձելերին մի կոնաք ճանապարհ գնալուց հետո, անցնում է Արազ գետը և կանգ առնում Կաղզմանում։

Կաղզման բերդի բնութագիրը: Գտնվում է Արաղ գետի Հարավային կողմում, որը համարվում է Ադրբեջանի տերիտորիան։ Արաղ գետը սկիզբ առնելով արևմուտքից՝ Բինգյոլի լեռներից, անցնում է բազմաթիվ քաղաքներով ու բերդերով և հոսում դեպի արևելք։ Արփա-չայը Փիլեազդի լեռան մոտ միանում է Արաղ գետին։

Կաղզման բերդը թեև դտնվում է Ադրբեջանի տերիտորիայում, սակայն Ալ-Օսմանի էյալեթն է։ Կառուցված լինելով Նաշիրվանի աղջիկներից մի անարատ կույսի կողմից, կոչվել է նրա անունով։ Շատ արքաների ձեռքն անցնելուց հետո, անցել է Ուզուն Հասան շահին, նրանից էլ գրավել է Շահ Իսմայիլը։ Հետագայում [սուլթան] Սուլեյման խանին հպատակություն է հայտնել և Կարսի էյալեթում առանձին սանջաք է եղել։ Ունի ալայի բեյ, չերիբաշի, 900 զինվոր։ 150 ակչեով կազա է։ Ունի նաև բերդակալ և 300 բերդի զինվորներ։ Սահմանված ռոճիկները ստացվում են աղահանքից։

Բերդի արևմտյան կողմում կա մի մեծ և հարուստ աղահանք։ Կա նաև հազվագյուտ ջրաղացի քարի հանքավայր, որտեղից ջրաղացի քարեր են տանում Աջեմի երկիրը, Էրզրում և այլ երկրներ։ Այդ քարը Կաղզմանի լեռներից է ստացվում։

Այս լեռներից է ստացվում նաև վիրե քարը, որը վիրաբույժները մերհեմի[105] են վերածում և վերքերի վրա դնում։ Այս լեռներից են ստացվում և պատրաստվում նաև ոսկերիչների խողովակ, սափրիչների սրելու քար և այլ տեսակի քարեր։ Երկու տեղում ոսկու և արծաթի հանքեր կան։ Բայց որովհետև ծախսը եկամտից ավելի է, առայժմ չեն շահագործում։

Բերդը կառուցված է մի հարթավայրում, բայց ամրակուռ, քառակուսի ձևով փոքրիկ բերդ է։ Վերևում և ներքևում 700 տուն կա... Թեև առևտրական քաղաք չէ, բայց սահմանի վրա է։ Երևանի արևմուտքում գտնվող և երևացող Աղրի-դաղը Կաղզմանի մոտ է։ Աշխարհում նշանավոր և բարձր լեռներից մեկն էլ այս է։ Թուրքմենների յայլան է։

Արազի եզրին գտնվելու պատճառով Կաղզմանի կլիման տաք է։ Ամենուրեք այգիներ ու պարտեզներ կան։ Բնակիչները ուղղամիտ, հանդարտ, հնազանդ մարդիկ են, գեղեցիկները շատ գրավիչ են։ Հաճոյասերները ընդհանրապես աջեմի երգեր են երգում, լավ ձայն ունեն, հաճելի բնավորությամբ մարդիկ են։

(էջ 323—325)

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՄԵՋ ՀԱՆԴԻՊԱԾ ՄԵՆՁԻԼՆԵՐԸ

Մաղազ բերդը Վրաստանի տերիտորիայում է։ Կարսի էյալեթի իշխանության մեջ, ըստ հին օրենքի, մերլիվայի կենտրոն է եղել։ Ներկայումս Կարսի նահիյեներից է։ Բերդը կառուցել է Իրանի շահ Մուրադ խանը։ Հետո անցել է Ակ Կոյունլի սուլթանների ձեռքը։ Նրանցից գրավել է Շահ Իսմայիլը։ Հետագայում գրավել է սուլթան Սուլեյման խանը։ Բերդակալը բերդի իշխողն է, ունի 150 բերդապահներ...

Բերդի կողքով հոսում է Արփա-չայը։ Այս գետը հոսելով Վրաստանից, անցնում է այստեղից և Թեքելի գյուղի մոտ խառնվում է Արաղին։ Այս Մաղազբերդը սահմանակից է Աջեմի Շորագյալ բերդին։ Սակայն Շորագյալ բերդը Աջեմի ձեռքում է, իսկ Շորագյալի բոլոր նահիյեները մնացել են Կարսի իշխանության տերիտորիայում։ Երկուսի միջև Արփա-չայը սահման է կազմում։ Դիմացի՝ արևելյան, կողմը Աջեմին է պատկանում, իսկ արևմտյան կողմը Կարսի հողումն է։ Այս բերդի ետևում, մի մենզիլ հեռավորության վրա, գտնվում է Ան [Անի] բերդը, որը Կարսի իշխանության մեջ է։ Մի ժայռի վրա ընկած, քառանկյունի, ավերված փոքրիկ մի բերդ է։ Ասում են, որ Նուշիրվանն է կառուցել։ Բերդի ներքևում բարեշեն մի գյուղ կա, որը զեամեթ է։ Ռայաները հայեր են։ Այս Ան բերդի ու Կարսի միջև է գտնվում Իքի-Նեխի լեռը, որը Կարսի ետևումն է և նրանից մի կոնաք հեռու է։

Այս բերդից դուրս գալով, անցանք ընդարձակ, կանաչազարդ վայրերով և հասանք Զարիշադ բերդը։

Զարիշադ բերդի բնութագիրը: Կառուցվել է Իրանի շահերի կողմից։ Այստեղ մեծ թվով աջեմներ խիստ մեծ դառնություն* են անցկացրել, այդ պատճառով էլ այս բերդը կոչվել է Զարիշադ։ Ներկայումս Կարսի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է։ Ունի ալայի բեյ և չերիբաշի։ Նվիրական պատերազմի ժամանակ 1200 զինված զինվոր կհավաքի... Բերդը գտնվում է մի բարձր ժայռի վրա, քառանկյուն, ամրակուռ բերդ է։ Ներսում և դրսում ունի 300 տուն... Ընկած է Կարսից արևելք, Երևանի ճանապարհի վրա և մի կոնաք հեռու է։

Այստեղից նորից դեպի արևելք շարժվեցինք և 9 ժամ ճանապարհ գնալուց հետո հասանք Թալըշ գյուղը, որը Աջեմի տերիտորիայում և Երևանի իշխանության տակ է գտնվում։ Այստեղից գնա-

---

* Թուրքերեն — (زارشلدل) — զարր շեդիդ։

ցինք Կարա-Թիբի գյուղը, ապա 12 ժամ ճանապարհ գնալուց հետո հասանք Ուչքիլիսեի մենզիլը։ Ասում են, որ Ռումի կայսրն է կառուցել։ Այս երեք վանքերից մեկում հայ աղջիկներ [կույսեր], մյուսներումն էլ հույներ և հայերն են ապրում։ Աջեմի երկրի այս Ուչքիլիսեի հնագույն վանքը, մեկ էլ Նախիջևանի ճանապարհի վրա գտնվող Յետի-Քիլիսեի տաճարը նշանավոր են։ Սակայն սրանում [Ուչքիլիսեում] երևելի հուշարձաններ շատ կան։ Այս վանքումն է պատրաստվում միռուն-յաղը (մեռոն), որն իսկապես տարօրինակ է։ Մի մետաքսյա գորգի վրա դնում են կաթսան, տակը կրակ են վառում և եփում են կաթսայի մեջ լցված բույսերն ու ծաղիկները։ Կրակը գորգի վրա չի ազդում և նույնությամբ մնում է։ Հետո այս բույսերի ջուրը, այսինքն յուղը լցնում են հատուկ ամանների՝ կումկումների (գյուգյում) մեջ և իբրև շնորհավորանք տանում են Ֆրենգիստան, իսկ այնտեղից ուխտի են գալիս այս վանքը։ Այգ յուղր գործ են ածում տարբեր հիվանդությունների, վերքերի համար։ Նրանց սխալ կարծիքով ունենում է ազդեցություն։

Տարօրինակ բան: Այս վանքի բակում, բարձր կամարի տակ, օդում կախված մի հաստ երկաթ կա։ Միշտ այդպես մնում է պարապության մեջ և ոչ մի կողմից ոչ մի բանի չի կպչում ու ոչնչի վրա չի հենվում։ Քրիստոնյաների սխալ կարծիքով այդ ուղղահայաց երկաթը մնում է [օդում] առաքյալ Շմավունի հրաշքի շնորհիվ։ Ուրոչ մուսուլմաններ տեսնելով այդ հավատում են դրան, որովհետև այդ ուղղահայաց երկաթը սոսկալի քամիների ժամանակ տատանվում է։ Որպեսզի ոչ ոք դրան ձեռք չտա, վարդապետները նրա շուրջը ծառի ճյուղերից ամուր ցանկապատ են շինել։ Նվաստիս կարծիքով սա հրաշք չէ, այլ հնարագիտություն։

Ուղղահայաց երկաթի հնարագիտությունը: Շենքը կառուցող վարպետը այս երկաթե փոքրիկ սյունի վրա նախապես բարձր կամար է կապել։ Ամենաբարձր գագաթի կենտրոնում մի մեծ մագնիսական քար է դրել։ Մի ուրիշ մագնիսի քար էլ՝ երկրաչափական հաշվով, դրել է այդ գագաթի վրա և դիմացը։ Այս փոքր երկաթե սյունը երկուսի միջև է գտնվում։ Երկու մագնիսական ուժեր հավասարազոր են, այդ պատճառով էլ սյունը այդպես օդի մեջ կախված է մնում։ Այնպես, որ այստեղ ոչ առաքյալների, ոչ Շմավունի հրաշքը կա և ոչ էլ թիլիսման։ Բոլոր դիտողները հիանում ու ապշում են։ Ես նվաստս, իմ կարճ խելքով, այդպես մտածեցի։ Աստծով, կարծում եմ, որ չեմ սխալվել։

Վանքը ունի մոտ 500 վարդապետներ։ Աջեմի և Ալ-Օսմանի

կողմից ամեն գիշեր 500—600 ձիավորներ են գալիս այստեղ իջևանելու։ Վարդապետները կարպետներ ու պարկեր են հանում և հյուրասիրում են եկվորներին։ Յուրօրինակ քրիստոնեական մեծ վանք է։

Այստեղից նորից շարժվեցինք դեպի արևելք, Արազ և Ջանգի գետերն անցանք և երկրորդ անգամ եկանք Երևան։

...Երևանի բերդի խանից նամակներ վերցնելով նորից ուղևորվեցինք դեպի Էրզրում։

ՄԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՐԵՎԱՆԻՑ ԷՐԶՐՈՒՄ

Երևանից դուրս եկանք 700 մարդուց կազմված քարավանով և 5 ժամ հետո հասանք Աբդալլար գյուղը, որը 100 տնից բաղկացած, այգիներով ու պարտեզներով աջեմական գյուղ է։ Գրավման ժամանակ Կարսի տերիտորիայում էր, ներկայումս ենթակա է Աջեմին։ Այդտեղից 4 ժամ դեպի հյուսիս գնացինք և հասանք Աբարան գյուղը։ 500 տնից բաղկացած Գյոքդուլաքի գյուղն է։ Այդտեղից կանաչազարդ վայրերով դեպի արևմուտք գնացինք և հասանք Շարաբ-խանե գյուղը, որը մի ժայռի վրա գտնվող, ուխտատեղիով, 300 տնից բաղկացած, անթիվ այգիներով ու պարտեզներով բարեշեն գյուղ է։ Կարսի տերիտորիայում զեամեթ է։ Այդտեղից դարձյալ դեպի արևմուտք գնացինք, 4 ժամ լեռան ստորոտով ճանապարհ անցանք և հասանք Բեքեմ գյուղը։ Հնում Ուզուն Հասան շահի աղջկա գյուղն է եղել և նրա անունով էլ Բեքեմ է կոչվել, որովհետև աջեմները շահերի աղջկան բեfեմ են ասում։ Կարսի տերիտորիայում գտնվող 300 տնից բաղկացած գյուղ է, բնակիչները հայեր և վրացի ազնվականներ են։ Բուն մեծ քաղաքը խավարյալ Թիմուրը ավերել է և ներկայումս Արփա-չայի եզերքին պարզ երևում են շինության հետքերը։ Այդ շինությունների մեջ 7 բարձր գմբեթներ կան, որոնց մեջ են նաև Ակ-Կոյունլի շահեր՝ Մեջենդի խանի, Ուշար խանի, Օթֆիբայ խանի, Գյունդուզ-բայ խանի արձանները իրենց գահերով. որը պառկած է, որը նստած, կարծես կենդանի լինեն։ Յուրաքանչյուր գերեզմանաքարի վերևում փորագրված է անունն ու պատկերը, մահվան պատճառը և թվականը։ Այս ավերակ քաղաքի շրջապատում մեծ յայլաներ կան։ Այստեղից նորից դեպի արևմուտք գնացինք, անցանք մացառոտ, ճահճոտ և աղոտ վայրերով և հասանք Շորագյալ բերդը։

Շորագյալ բերդի բնութագիրը: Սուլթան Հյուսեյին Բայկարան[106] այս քաղաքի կողքով հոսող Արփա-չայի շրջանի օդը շատ է հավա-

նել և իմաստուն Շորագերի խորհրդով կառուցել ու բարեշինել է այս բերդը։ Հետագայում, Կարա-Յուսուֆի տիրապետության օրոք, Թիմուրը ավերել է այն։ Հետո նորից վերաշինվել է, սակայն Նախիջևանի վրա արշավելիս սուլթան Սուլեյման խանի բանակի առաջապահները ավերել են այս բերդը։ Ներկայումս Արփա-չայի եզերքին երևում են Թիմուրի կողմից ավերված բազմաթիվ կամարների և մեծ գմբեթների հետքերը։

Ինչպես պատմագիր Թոհֆեն է գրում, երաժշտական գիտության 48 բարդությունններից մեկը՝ շորագերի թերքիբը, այդ գիտնականը հորինել է քաղաքը բարեշինելու ժամանակ և իր անունով Շորագեր[107] անվանել։

Այս քաղաքի ամբողջ ժողովուրդը, մեծ թե փոքր, իսկապես զբոսասեր և հաճոյասեր մարդիկ են, աչեմի ձևով շորագեր և սրտառուչ երգեր են երգում։

Քաղաքը այնքան էլ բարեշեն չէ, բերդը ավերված է։ Ունի 300 տուն։ Նահիյեների մեծ մասը ընկած լինելով Արփա-չայի մյուս ափին, մտնում են Երևանի խանության մեջ, իսկ այս ափինը՝ Կարսի։ Այստեղ ևս Վրաստան է համարվում, քանի որ Արաղ և Ջանգի գետերից հյուսիս՝ 40 կոնաք տարածությամբ [երկիրը], սկսած Էլբրուսից մինչև Խազերի ծովը, Դաղստան և Վրաստան է համարվում։ Արևմուտքից սահմանակից է Էրզրումին։

Այստեղից շարժվեցինք դեպի արևմուտք և 5 ժամվա ընթացքում 6 գետ անցանք։ Բոլորը փոքր գետեր են, որոնցից մի քանիսը Վրաստանից, մի քանիսն էլ բխում են Աղզուրի լեռներից, անցնում են այս գյուղերով և թափվում Արազ գետի մեջ։ Ճանապարհների մի մասը ճահճոտ է։ Մենք հասանք Քեչդի նահիյեն։ Ունի մի գետ, որի անունը հայտնի չէ։ Սուլթան Մուրադ խանը Երևան գնալիս, անցել է այս գետով և իր փադիշահական տաղավարի մոտ մի սոֆա[108] է կառուցել տվել, որի հետքերը մինչև հիմա երևում են։ Կարսի այանները նրա չորս կողմը լավ ծառեր են տնկել և վեր են ածել նամազավայրի։ Ճանապարհորդների իջևանելու համար կանաչազարդ մի վայր է։ Այստեղից դիպի արևմուտք գնացինք և հասանք Բուլաք գյուղը, որը Կարսի զեամեթի տերերից մեկի՝ Ջալըք Սեֆի աղայի ալատ զեամեթն է։ Ունի 300 տուն։ Այստեղից եկանք Կարսի բերդը։ Մի գիշեր դիզդար Ալի Աղայի մոտ հյուր մնացինք և առավոտյան բոլոր բարեկամներին հրաժեշտ տալով շարժվեցինք դեպի արևմուտք և անցնելով բերքառատ վայրերով՝ հասանք Դուշ Կիյա մենզիլը, որը Կարսի տերիտորիայում է և 800 տնից բաղկացած զեամեթ

գյուղ է։ Այդտեղից անցանք վերելքներով ու վայրէջքներով, եղևնու անտառներով ծածկված բարձր վայրերով և եկանք Վերնիշան մենզիլը, որը Կարսի տերիտորիայում է, անցյալում սանջաք է եղել։ Գրանցված է Արաղ գետի դիմացի ափի, Վանի էյալեթի Բայազիդ բերդի տերիտորիայում։ Ներկայումս Կարսի ալայ-բեյը այստեղ է նստում։ Գյուղը 300 տուն ունի։ Այստեղից դեպի հյուսիս, երկու մենզիլ հեռավորության վրա Ախալցխան է։

Այստեղից դաշտերի միջով դեպի արևմուտք գնացինք և եկանք Ջինխան բերդը։ Կարսի տերիտորիայում 200 տնից բաղկացած գյուղ է։ Այստեղից անցնող թիմարատերերից տուրք են առնում։ Կարսի փաշայի սուբաշիությունն է։ Բերդը քառանկյունի է, հիմնադիրը ինձ հայտնի չէ։ Հարցրի բերդի բնակիչներին, նրանք էլ չգիտեին։ Փոքր բերդ է։ Բնակիչները շատ համառ մարդիկ են։

Դարձյալ դեպի արևմուտք գնացինք, անցանք եղևնու ծառերով պատված ճանապարհներով և հասանք Սողանլի-Բելի անունով մեծ դերբենդը։ Ռումում, Աջեմում, Բելխում և Բուխարայում հայտնի մի քաղաք է, որտեղից անցնող վաճառականների և ուրիշների մեջքը կոտրվում է։ Հազար ու մի տանջանքով այստեղից էլ անցանք և եկանք Կոմի-Դամի գյուղը։ Բասենի սանջաքի տերիտորիայում, Արազ գետի եզերքին ընկած 150 տուն ունեցող գյուղ է։ Այգի ու պարտեզ չունի։ Այստեղից դաշտերով նորից դեպի արևմուտք գնացինք և հասանք Բասեն գյուղը։ Ունի 300 տուն, էրզրումի վիլայեթի դրանցողի՝ Ջաֆեր էֆենդիի զիամեթն է։ Այստեղից առաջացանք, անցանք Արազի վրայի Չոբան-Քյոփրյու կոչված կամրջով և հարթ դաշտերով շարունակելով մեր ճանապարհը, նորից եկանք Հասան-Կալա բերդը։ Այստեղից դեպի արևմուտք գնացինք և ապահով կերպով էրզրում մտանք...

Այնուհետև, էվ. Չելեբին պատմում է, որ որոշ ժամանակ անց էրզրումի վալին փադիշահական հրովարտակ է ստանում, որով հրամայվում է բոլոր զինվորական ուժերը հավաքել և Կարսի դաշտում պատրաստ լինել պատերազմի։ Այս կապակցությամբ փաշան էվ. Չելեբիին ուղարկում է Ջանջայի և Թորթումի սանջաքները։

(էջ 338—348)

ՓԱԴԻՇԱՀԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՈՒՆԸ ԴԵՊԻ ԲԱՅԲՈՒՐԴ, ՋԱՆՋԱ, ԻՍՊԻՐ, ԹՈՐԹՈՒՄ ԵՎ ԱԿՉԱ-ԿԱԼԱ

Մեր փաշա էֆենդիից վերցնելով փադիշահական հրամանը և բերդերի աղաներին հասցեագրված նամակները, 9 ծառայողներով գնացինք զինվոր հավաքելու։

էվ. Չելեբին, իր սովորության համաձայն, հիշում է իր անցած բոլոր գյուղերն ու վայրերը։ Նշում է նաև, որ «էրզրումի էյալեթի Քղի սանջաքի լեռներում երկաթի հանքեր կան, որից թնդանոթի գնդակներ են ձուլում։ Այդ բարձր լեռնով հարյուրավոր հոսող ջրեր են անցնում երկաթի հանքերի միջով և թափվում Եփրատ գետը։ Այդ պատճառով այդտեղից հետո Եփրատի ջրի համը փոխվում է»։

Չելեբին կանգ է առնում Ախլա-Կալայում։

(էջ 324)

Ախլա-Կալայի բնութագիրը: *Թորթումի սանջաքում է և Վրաստանի հողում։ Վրաստանը իր իշխանության տակն առնելու համար կառուցել է Ուլամե փաշան։ Սակայն ժամանակի ընթացքում բերդը ավերվել է։ Բերդակալ և բերդապահներ չունի։ Գտնվում է Թորթումի հյուսիսում։ Ունի 600 տուն, ջամի, խան, բաղնիք, փոքր շուկա։ Բայազիդ-Վելին իր շեհզադեության շրջանում, Տրապիզոնում վալի եղած ժամանակ պաշարել է այս բերդը և գրավելիս դժվարություններ է կրել։ Գրավելուց հետո որոշ տեղեր ավերել է...*

Այստեղից եկանք Ջաթչա՝ Գյումյուշխանե, քաղաքը... Վիլայեթի բոլոր այանները հավաքվեցին և փադիշահի հրամանը կարդացին։ «Լսում ու հնազանդվում ենք», ասացին բոլոր կուլերը։ Բերաթով ապահարկ մյուսելլիմները (տապարակիրներ) պատրաստվեցին Երևանի արշավանքին։ Մենք էլ սկսեցինք քաղաքը դիտել։ Այս քաղաքում Մեծ Իսքենդերի իմաստուն Ֆիլկոս-Յունանին արծաթի հանքեր է գտել և Իսքենդերին խորհուրդ է տվել քաղաքը բարեշինել։ Հետո քաղաքը անցել է վրացիների ձեռքը։ Ավելի ուշ Ադրբեջանի արքայի՝ Ուզուն Հասանի ձեռքն է անցել։ Ուզուն Հասան շահը էբուէլ-Ֆեթհի[109] հետ Թերջանի դաշտում տեղի ունեցած պատերազմում պարտության է մատնվում և բերդը անցնում է սուլթան Մուհամմեդ Ֆաթիհի ձեռքը։ Այդ ժամանակ այստեղ գտնված արծաթի հանքի նմանը ոչ մի երկրում չկար։ Քաղաքը այդ ժամանակ կոչվել է Գյումյուշ-խանե, սակայն Ալ-Օսմանի արքունական դեֆթերում գրանցված է որպես Ջաթչա։ Ամբողջ բնակչությունը ազատված է ամեն տեսակի տուրքերից։ Փոխարենը պարտավոր են արծաթի հանքերը մշակել։ Քաղաքը ներկայումս օսմանցիների ձեռքում է, ունի մոտ 70 արծաթի հանքավայր, որոնց մի մասը մշակվում է, մի մասն էլ անգործության է մատնված։ Օսմանյան երկրի արծաթի հանք ունեցող մյուս վայրերն են՝ Անատոլիայում՝ Կաղզմանը, Հեքարին, Բինգյոլը, Սենջակը, Աքարը, Եգիպտոսը, Շամի երկրում՝ Ջեբել-Լիբնան, Մուան-օղլի լեռը, Մերզիֆուն (Մարզվան) քաղաքը և այլն։ Ռումիլիում՝ Բոսնայի տերիտորիայում գտնվող Սերեբրենիչեն է, Իսկյուբի մոտ՝ Կարաթովեն է, Փերշեթնեի մոտ՝ Նովեբուր-

դեն է և Սելանիկի մոտ՝ Սիտերկիփսին է և այլն։ Սակայն Գյումուշխանեի հանքի շերտերը մարդու բազուկի հաստությամբ 7 շերտից են բաղկացած և ամբողջն առանց կապարի մաքուր մետաղ է։ Քաղաքում, էմինի թաղում փողերանոց (զարբ-խանե) կա, որը ներկայումս չի աշխատում։ Ջաթչայում կտրված մի քանի ակչե պահում եմ ինձ մոտ...

ԱՅՍՏԵՂԻՑ ԳՆԱՑԻՆՔ ԲԱՅԲՈՒՐԹ ԲԵՐԴԸ

Հնագույն Բայբուրթ բերդի բնութագիրը: *Ալ-Օսմանի մեծ նախահայրերը և Մահանի երկրից եկած Ակ-Կոյունլիները ապրել են այս քաղաքում։ Յայլաները բարձրանալու ժամանակ, գտել են Գյումյուշխանեի մեծ հարստություն պարունակող հանքերը և հարստացել են, որի պատճառով էլ այս քաղաքը Բայ-բուրթ* է կոչվել։ Հետո աղավաղվել և Բայբուրտ է դարձել։ Ուզուն Հասանի ձեռքից գրավել է Ֆաթիհի վեզիր Մահմուդ փաշա-Աթիկը։ Ներկայումս, համաձայն Սուլեյման խանի աշխարհահամարի, էրզրումի վեզիրի փադիշահական խասից անջատված սուբաշիություն է։ 150 ակչեով կազա է։ Կադին տարեկան 6 քիսե եկամուտ ունի...*

Բայբուրթ բերդի նկարագիրը: *Բարձր ժայռի վրա, հնգանկյունի ամրակուռ մի բերդ է։ Պարիսպների բարձրությունը 40 արշին է։ Խրամ չունի։ Պարիսպներից ներս հնում կառուցված մոտ 300 տներ կան, շուկա, խան, բաղնիք չունի։ Երկու դարպաս ունի... Դարպասից ներքև մոտ 1000 հողածածկ տներ կան։ Քաղաքում 19 մուսուլմանական և 7 հայկական թաղեր կան։ Հրեաներ և գնչուներ չկան։ Ծովեզերքը 3 մենզիլ հեռավորության վրա է, որտեղ շատ հույներ կան։ Բնակչության մեծ մասը թուրքմեններ և քրդեր են։ Ֆաթիհը Թիրե քաղաքը գրավելուց հետո, այնտեղից մոտ 3000 մարդ է փոխադրել այստեղ։ Բնակիչների մեծ մասը այդ Թիրեցիների սերունդն են։ Կրոնասեր և բարեպաշտ մարդիկ են...*

Այնուհետև, էվ. Չելեբին նկարագրում է Բայբուրթի ջամիները, մեդրեսեները, բաղնիքները, շուկաները և բեդիստանը։

...Գործվածքներից հայտնի են Բայբուրթի կարպետները, սեջադեները, որոնք շատ ընտիր են և տարվում են շատ երկրներ։

Քաղաքի կլիման սառն է և պտուղները առատ չեն... Ծերերը ապրում են մինչև 150 տարեկան հասակը... Կանայք վերին աստի-

---

** Բայ՝ թուրքերեն հարուստ է նշանակում. բուրթ՝ տեղ, վայր իմաստն ունի. այստեղից էլ Բայբուրթ՝ հարուստ վայր է նշանակում (ծանոթ. հրատարակչի)։*

ճանի համեստ, բարեկիրթ, գեղեցկախոս են։ Քաղաքը Էրզրումի հյուսիսում է և 2 կոնաք հեռավորության վրա է։ Տրապիզոնը գտնըվում է հյուսիսում, ճանապարհը դժվարին է։

Ճորոխ [Չորուխ] գետը սկիզբ է առնում Էրզրումի լեռներից, ոռոգում է բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր և հոսելով Բայբուրթի բերդի կողքով՝ Գունիայի մոտ թափվում է Սև ծովը։ Ոմանք ասում են, որ Ճորոխ անունը Ջուի-ռուհի աղավաղված ձևն է։ Այդ դեպքում իմաստը կլինի՝ հոգու գետ: Բայբուրթցիները լեռների վրայի անտառներից փայտեր են կտրում և Ճորոխ գետն են նետում։

Հետո քաղաքում գտնվող թմբի մոտ ամեն մարդ գտնում է իր նշան արած փայտը և տուն տանում...

Այնուհետև, էվ. Չելեբին նկարագրում է Բայբուրթի իսլամական ուխտատեղիները։

Թորթում բերդը հիմնել է Վրաստանի շահ Մարուլը։ Հետո անցել է Ուզուն Հասանին և սրանից էլ՝ Ֆաթիհին։ Ավելի ուշ վրացիները նորից գրավել են։ Երբ Սուլեյման խանը իմանում է [Թորթումի] գրավման մասին, անմիջապես երկրորդ վեզիր Ահմեդ փաշային սերդար է նշանակում և ուղարկում բավականաչափ զինվորներով։ [Ահմեդ փաշան] գալիս մտնում է խրամատները և յոթ օր ու յոթ ժամ պատերազմելուց հետո, բերդը գրավում է։ Բերդում անհրաժեշտ քանակությամբ պահապաններ, ռազմամթերք, թնդանոթ, պաշարեղեն և այլ հանդերձանքներ թողնելուց հետո, իր զինվորներով հարձակվում և ամանով գրավում է Նեջախ և Էմիր-Ախոր բերդերը։ Այդ բերդերումն էլ բավականաչափ զինվորներ է թողնում։ Այդտեղից շարժվում է Ակչա-Կալայի վրա ու 7 օրվա ընթացքում գրավում է այն և նրա աշտարակի վրա կարդալ է տալիս Մուհամմեդի էզանը։ Դրանից հետո գնում է Նիքերդ, Աշերդ, Քյուչյուք-Ակչե բերդերի վրա, որոնց բեյերը ամանով հպատակություն և հնազանդություն են հայտնում։ Ապա գնում է Դատանլի նահիյեի վրա, որի 60 գյուղերից 15-ը հպատակվում են, մնացածները ավերվում։ Թեքհիս, Ակչա Կալա, Դիվանե Դերեսի բերդերը գրավելուց հետո, բանակը գալիս է Թորթում։ Թորթումը գրանցվում է իբրև սանջաքի կենտրոն։ Ներկայումս էլ այդպես է։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Պատերազմի ժամանակ ջեբելուների և բեյի զինվորների հետ միասին 60 հազար[110] (՞) ընտիր զինվոր է տալիս։ Ըստ օրենքի փաշան տարեկան 12—13 հազար ղուրուշի եկամուտ ունի։ Մեր արշավանքի գնացած տարին, Սեյդի Ահմեդ փաշան, մի փոքր բռնություն գործեց և Թորթումի սանջաքի եկամուտր հասցրեց 24 հազար ղուրուշի։ Երբ նվաստս, կայսերական հրամանով փաշայի մոտ էի, սանջաքի

զեամեթների և թիմարների տերերից բացի, մինչև անգամ ձեռքում բերաթ ունեցող իմամներին և խաթիբներին՝ «Դուք էլ պարտավոր եք պատերազմի գնալ» ասելով՝ նրանց վրա ճնշում գործադրեց և 10 հազար ղուրուշ առավ։ Նվաստիս էլ բնակեցրեց իր պալատում և քաղաքը դիտել տվեց։ 150 ակչեով կադա է և 9 նահիյե ունի։ Նշանավորներն են՝ Յուվանե, Դատանլի, Ըսպիր։ Այս նահիյեներից կադին տարեկան 3000 ղուրուշ եկամուտ ունի։ Ունի շեյխուլ-իսլամ, նագիբ, այան և էշրաֆ, բերդակալ, բերդապահ զինվորներ, ենիչերիների սերդար և քաղաքի սուբաշի։

Թորթում բերդի նկարագիրը: *Բարձր ժայռի վրա է, կառուցված է քառակուսի ձևով և մի երկաթյա դարպաս ունի։ Պարիսպների ներսում 18 տուն և փոքր ջամի կա։ Ունի նաև մի ամբար։ Ստորին վարոշը բարեշեն և գեղեցիկ շենքեր ունի, որոնց թիվը հասնում է 700-ի։ Ունի 7 թաղամաս և 7 մեհրաբ... զանազան տեսակի էսնաֆների հատուկ խանութներ... բոլոր տներն ունեն այգիներ և պարտեզներ, օդը լավ լինելու պատճառով պտուղները խիստ առատ են. հայտնի են խաղողը, տանձը, կարմրավուն դեղձը։ Քաղաքը էրզրումից 2 կոնաք հեռավորության վրա է և վաճառական դասը իրենց պտուղները սնդուկներով Էրզրում են տանում։ Էրզրումի էյալեթում, Երզնկայից հետո իր դրախտանման այգիներով նշանավոր և բարեզարդ քաղաքը Թորթումն է։ Ժողովուրդը անկեղծ, պարկեշտ և պանդուխտներին սիրող մարդիկ են։ Թորթումում բորակ է ստացվում։ Քաղաքը ձորամիջումն է։*

Այնուհետև, էվ. Չելեբին նկարագրում է, թե ինչպես կազակները հանկարծակի հարձակվել են Գոնիա բերդի վրա և գրավել այն։ Սեյդի Ահմեդ փաշան բանակով օգնության է գնում բերդին։ Չելեբին ևս մասնակցում է այդ արշավանքին։ Այս առթիվ նա գրում է.

«...Գոնիայի սահմանին մոտ մի վայրում հանդիպեցինք Մեգրելիստանի զինվորներին։ Սրանք ներկայացան Սեյդի Ահմեդ փաշային. բոլորին պատիվներ տրվեցին։ Եկան նաև մոտ 3000 զինված, երկաթի մեջ թաղված, նժույգներով, դատաստանի օրվա տարբեթ[113] կենդանուն նմանվող մեգրել ազնվականները և մոտ հազար հետիոտն հրացանաձիգներ և վրացի առաջավորներ։ Սրանք դեմքով էլ իրար նման չէին. ոմանք խառն մազերով էին, ոմանք էլ պտտրույգաձև մազերով։ 40—50 տարեկանները ածիլված էին և տարօրինակ դիմագծերով մարդիկ էին։ Սեյդի Ահմեդ փաշան նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին խոստումներ տվեց և խոսքեր ասաց։ Այդ գիշեր մենզիլները անցնելով, առավոտյան վաղ հասանք Սև ծովի եզերքին ընկած Գոնիա բերդը»։

Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է բերդի վրա ցամաքից, ծովից կատարված հարձակումը։ Նշում է նույնպես, որ այդ կռիվներին մասնակցել են նաև Վրաստանի և Մեղրելիստանի ազնվականները։ Բերդի շուրջը կռիվը խիստ կատաղի է լինում։ Ի վերջո օսմանցիները հաղթում են կազակներին, կոտորում և նորից տիրանում բերդին։ Այս արշավանքի կապակցությամբ Անատոլիայի տարբեր մասերից հսկայական թվով զինվորներ են հավաքվում Գոնիայի շրջանում։ Այլ մանրամասնություններից բացի Էվ. Չելեբին հիշում է, որ հաղթանակից հետո, ծովի կողմից 40—50 լաղ՝ մենգեսիլե նավակներով և վրացի «ապստամբ» ազնվականները գալիս են կազակներին օգնության։ Նրանք տեսնելով մեծաթիվ օսմանյան բանակը, փորձում են ետ դառնալ ու փախչել։ Բայց օսմանցիների ուժեղ կրակից ստիպված հանձնվում են։ Նավերը գրավվում են, իսկ ազնվականներին գերի են վերցնում։

Հաջորդ օրը գալիս է նաև Չըլդըրի էյալեթի մյութեսարիֆ վեզիր Կոջա-Սեֆեր փաշան, որը Էրզրումի վալիի հրամանով, 6000 կտրիճ վրացի զինվորներով և Թեմրես խան-օղլի, Լևենտ խան-օղլի, Ալեքսանդր խան-օղլի վրացի գլխավորներով Ախալցխայից շտապ կերպով մեկնում է Գոնիային օգնության։ Սրանց դիմավորում են բացառիկ հանդիսավորությամբ։ Վրաստանից, Մեգրելիստանից, Բաթումից, Լազիստանի սանջաքներից բանակի համար սկսում են հացահատիկ ուղարկել։

Այնուհետև, փաշան Գոնիա բերդը վերանորոգելու համար շրջակայքից ճարտարապետներ և վարպետներ է բերել տալիս։ Խրամները մաքրում և պարիսպները ամրացնում են։ Բերդի պահպանության համար 6000 զինվոր է թողնվում։

Էրզրումի ճանապարհին Սեյդի Ահմեդ-փաշան մուսուլման ղազիներին խորհրդակցության է հրավիրում։ Նա հայտնում է, որ «Մեգրելիստանը Տրապիզոնի էյալեթի իշխանությանն է ենթարկվում և փոխանակ մեզ օգնելու, կազակներին է օգնել և այդպիսով ապստամբել է փադիշահի դեմ... Մեգրել քյաֆիրներից ի՞նչ կերպ վրեժ լուծենք, որ այսքան սոսկալի տանջանքներ կրող հավատացյալ զինվորները ապրանք և հարստություն ձեռք բերեն»։ Խորհրդակցությունը որոշում է արշավանք կազմակերպել։

(էջ 341—356)

ՄԵՐ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՎՐԱ

Բանակը պատրաստվում է արշավանքի։ Տասնյակ հազարավոր զինվորներ, իրենց պարագլուխ փաշաներով և բեյերով, գնում են Մեգրելիստանը թալանելու, ավերելու և գերելու։

...Այդ օրը 10 ժամ ճանապարհ գնալուց հետո իջևանեցինք Բաթումի սանջաքի և Մեգրելիստանի միջև ընկած Ջար-չայիրի վայրում։ Վաղ առավոտյան անցանք Ճորոխ գետի գետանցքով։ Սեֆեր փաշան Վրաստանի զինվորներով կողոպտեց ու թալանեց Մեգրելիստանի Դերանիյե նահիյեն։ Այս բանը տեսնող մեգրելները սկսեցին փախչել դեպի լեռները։ Մեր էֆենդին՝ Դեֆթերդար-զադեն, իր մարտիկներով մտնելով անմատչելի լեռների մեջ, պաշարեց

70—9

մեգրելների Բեջնեն*։ Համազարկ կրակով Բեջնեում գտնվողների հետ ուժեղ կովի բռնվեցին։ Կեսօրից հետո Բեջնեն գրավվեց և այնտեղից 700 գերի վերցրին։ Զինվորները մեծ ավարի տիրացան ու հարստացան։ Այս կռվում ղազիներից 7 կտրիճ նահատակվեցին։ Բակր փաշան մեծ ավար ձեռք բերեց, հարստացավ և միացավ իսլամական բանակին։ Մուսուլման ղազիներին ազատություն տրվեց։ Նրանք խումբ-խումբ շտապեցին դեպի լեռները, ձորերը և հասան մինչև Մերվե բերդը։

Այս բերդի շուրջը մեծ կռիվներ են տեղի ունենում և ի վերջո բերդը գրավվում է. 300 մենդրել սպանվում և 300-ը գերի են ընկնում։

...Օսմանցի զինվորները թաղվեցին ավարի և բարիքների մեջ։ Կռվի ժամանակ գերի վերցված ղուլամներին և ստրկուհիներին հանձնեցին հաղթական սերդարին։ Այստեղից անցանք անտառներով և հասանք Ռողտա դաշտը։ Մուսուլման ղազիները գիշերային հարձակումներ գործեցին շրջակայքի վրա... Հետո մտանք Թեմրիս խանի երկիրը։ Պարզվեց, որ այս վայրը ենթակա է Ախալցխայի վիզիր Սեֆեր փաշային։ Թեմրիս խան-օղլին 3000 վրացի կտրիճներով և 2000 հետիոտն հրացանաձիգներով եկավ և կանգնեց բանակի մի կողմում։ Իր նվերները հանձնեց սերդար Ղազի Սեյդի Ահմեդ փաշային։

Այս Թեմրիս խան-օղլին մի շարք վրացական աշիրեթներից վշտացած էր։ Առաջնորդելով օսմանյան զինվորներին՝ գրավեց Փերնաք, Կումլե, Սեմարզե նահիյեները։

Երեք օր հետո կանգ առանք Ախար բերդի առաջ, այս բերդն էլ հպատակվեց։ Քեթֆուչ փաշայի զորամասը երկու գեղեցիկ կույս աղջիկ էր վերցրել, որոնց նմանը չի ճարվում անգամ Շամի շրջակայքի հուրիների մեջ... Սեյդի Ահմեդ փաշան այս [գեղեցկուհիներին] հազարական ղուրուշով գնեց Քեթֆուչ փաշայից և 20 ուրիշ աղջիկների հետ ուղարկեց սուլթան Իբրահիմ խանին։

Այդ ժամանակ Մեգրելիստանի բեյի հորեղբորորդին գերի էր ընկել։ 100 գերի, 1000 գլուխ կենդանի, մի քանի բեռ ասեղնագործ իրեր և մի քանի բեռ կտորեղեն տալով ազատվեց։ Այս հաղթական արշավանքի ժամանակ մի կովը կես ղուրուշով, մի ոչխարը 5 ակչեով վաճառվեց։ Աչըք-Բաշիի բեյը սերդարին 5 ստրուկ և 5 ստրկու-

* [illegible] —հավանաբար բերդի անունն է։

հի նվեր ուղարկեց, նվաստիս էլ մի ստրուկ, մի ստրկուհի նվիրեց...[112]։

Այստեղից հաղթական բանակով գնացինք դեպի արևմուտք, արշավեցինք Նախաչի, Ակչա-Կալա, Չիքի, Նիքերդի, Քյուչյուք-Կալա բերդերի վրա...

Վերջապես Վրաստանը և Մեգրելիստանը ամբողջովին հպատակություն հայտնեցին։ Բեյերը նվերներով ներկայացան Ղազի Սեյդի Ահմեդ փաշային։ Մեր բանակը ծայր աստիճան հարստացավ գերիներով և ավարով։ Յուրաքանչյուրի ուժերից վեր էր տանել ձեռք գցածը։ Այսպես անցանք Ճորոխ գետի եզերքով և նորից իջևանեցինք Գունիա բերդի մոտ։ Ավարը տարան Տրապիզոն և օգուտով վաճառեցին։

(էջ 356—359)

Այնուհետև, Էվ. Չելեբին մեգրելական լեզվից բերում է նմուշներ։

...Մեգրելիստանում յուրաքանչյուր ցեղ (աշիրեթ) յուրօրինակ առանձին բարբառ ունի։ Մեծ երկիր է։ 70 տեսակի բերք ունի։ Շատ է ոչխարը, այծը, խոզը, լեռներում՝ վայրի եզը, վայրի այծը։ Ունեն նժույգներ։ Սակայն Թաթարիստանում, Վրաստանում և Մեգրելիստանում ջորիներ բոլորովին չկան։ Այս երկրներում շատ է սկյուռը, ինչպես նաև աղվեսը, վայրի կատուն, գայլը, հավը։ Ցորեն ու գարի քիչ են ցանում և բերքը քիչ է։ Եգիպտացորենը շատ առատ է։ Բարձր լեռների վրա աճում են ընկույզի, սամշիտի, եղևնու ծառեր։ Գյուղերը հաստատաբնակ են, չեն քոչում։ Գյուղերն ու բերդերը ունեն այգիներ ու պարտեզներ, եկեղեցիները բարեշեն են։ Որովհետև սրանք հնագույն ազգ են և նրանց երկիրը մեծ երկիր է։

Այնուհետև, Էվ. Չելեբին մանրամասն նկարագրում է իր ուղևորությունը դեպի Էրզրում։ Էրզրումում հաղթական բանակին դիմավորում են մեծ հանդիսավորությամբ։ Ձմեռվա սառնամանիքների պատճառով մեծաթիվ բանակը ցրվում է։

(էջ 359—361)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԶՐՈՒՄԻՑ ՍՏԱՄԲՈՒԼ 1057 (1647) ԹՎԱԿԱՆԻ ԶԻԼԿԱՏԵ ԱՄՍԻ 18-ԻՆ՝ ՁՄԵՌՎԱ ՍԱՍՏԻԿ ՑՐՏԻՆ

Էվլիյա Չելեբին վերադառնալով Էրզրում, շարունակում է ծառայությունն անել մաքսատանը։ Քիչ ժամանակ անց իր էֆենդի վեզիր Մուհամմեդ փաշայի հետ մեկնում է Ստամբուլ։ Այս ուղևորության ժամանակ Էվ. Չելեբին նկարագրում է այն վայրերը, որոնք չէին նկարագրվել նախորդ ուղևորության ընթացքում։

Երզրումից նա գնում է Ըլըջա, Խնուս, Մամա-Խաթուն, Քնթուր: Այստեղից փաշան նրան ուղարկում է Քեմախի բերդը:

Դարի-ֆելլաճի[113], այսինքն Քեմախ բերդի բնութագիրը: Բերդը հին կայսրերից մեկն է կառուցել: Հետո անցել է Ուզուն Հասանի ձեռքը: Թեև Թիմուրը պաշարել է, բայց բերդը դիմադրություն է ցույց տվել: Հետո սուլթան Սելիմ I-ը, Տրապիզոնում իր շեհզադեության ժամանակ, մի կերպ այս բերդը գրավել և մեջը զինվորներ է թողել: Այնուհետև այս բերդը իր իշխանությանն է ենթարկել Շահ Իսմայիլը: Հետո սուլթան Սելիմը փադիշահ դառնալով, Աջեմին առաջին անգամ նվիրական պատերազմ հայտարարելով, իր անթիվ զինվորներով եկել է Անատոլիայից և պաշարել այս Քեմախ բերդը: Բերդը Բըյըքլի Մուհամմեդ փաշայի միջոցով գրավելուց հետո, գրավել է նաև ուրիշ շատ բերդեր և ուղղակի շարժվել Աջեմի երկրի վրա:

Բերդն ըստ Սուլեյմանի աշխարհահամարի Էրզրումի տերիտորիայում է և Կուրու-չայի վոյեվոդության իշխանության տակ է: Էրզրումի փաշայի խասն ու սուբաշիությունը 300 ակչեով նայիբություն է: Քերչաս, Կուրու-չայ և Շեհեր անունով նահիյեներից կադին տարեկան ստանում է 3000 ղուրուշ: Ժողովուրդը նվիրական շարիաթին հպատակ և հնազանդ է: Բերդի դիզդարը նույնպես իշխողներից է: Բերդն ունի 500 բերդապահ, որոնք աղահանքից որոշ հատկացումներ են ստանում: Ունի ենիչերիների սերդար, սիփահիի քեթխուդա, նաքիբ, այաններ և էշրաֆներ: Եփրատ գետի դիմացի ափին, մեկ ժամյա հեռավորության վրա ընկած, 700 տնից բաղկացած Քյոմուր գյուղում նստող աղահանքի էմինը նույնպես իշխողներից է համարվում: Շատ հայտնի է ձյունից սպիտակ և Կըրշեհիրի աղից ավելի համեղ աղը: Ամբողջ Քուրդիստանից և Թուրքմենիստանից Բինգյոլի յայլաները բարձրացող ցեղերը իրենց անհրաժեշտ աղը Քեմախ քաղաքից են գնում: Այս քաղաքի հայտնի արտադրությունից մեկն էլ այստեղ պատրաստվող նուրբ և ամուր վրանի բեղն է, որի նմանը ոչ մի երկրում չի կարելի գտնել... Ժողովրդի բերանում առած է դարձել. «Քեմախի բեղը, Երզնկայի ընկույզը և Բայբուրթի աղջիկը»*: Քյոմուր գյուղի կողքով այգիների միջից հոսող Քյոմուրի գետակը սկիզբ է առնում Քերչասի լեռներից, անցնում Քեմախի բերդի մոտով, մեկ օրյա հեռավորություն կտրելով՝ սուլթան Մելիք Ղազի թեքիյեի մոտ, խառնվում է Եփրատ գե-

---

*کماخ بری؛ ارزنجان قوزی، بایبورت قیزی

տին։ Սրա դիմացը Մյուբարեք գյուղն է, որը բարեշեն է և Էրզրումի կուլերի խասն է։

Աստվածային իմաստություն: Այս Մյուբարեք գյուղի քարայրների միջով հոսող վճիտ ջրերը հուլիսին սառչում և սառույց են դառնում, իսկ ձմռան օրերին բաղնիքի ջրերից ավելի տաք են լինում։ Տարօրինակ աստվածային իմաստություն է։ Ամբողջ վիլայեթի բնակչությունը կաթրf-փենիրի անունով պանիրը պահում է այս քարայրներում. լավ սառնարան է...

Քեմախ բերդի նկարագիրը: Հնգանկյունաձև ամրակուռ բերդ է։ Աշտարակներն ու պատվարները կառուցված են մեծ քարերով։ Էրզրումի տերիտորիայում նման բերդ չկա... Երեք ամուր երկաթյա դարպասներ ունի։ Առաջին դարպասի մոտ և ձախ կողմում երկուական թնդանոթ կա, որոնց երկարությունը 27 թզաչափ է և 3 կանթար ծանրությամբ գնդակներ են արձակում։ Զարմանալին այն է, որ թե՛ վերցնելու և թե՛ իջեցնելու համար խիստ դժվար եղող այսպիսի սոսկալի ծանր թնդանոթները ի՞նչպես են բարձրացրել ու դրել այս անմատչելի ժայռի վրա...

Ներքին բերդում 600 հողածածկ տուն կա, որոնք ընկած են նեղ փողոցների վրա և այգիներ ու պարտեզներ չունեն։ Բերդի մեջ անմշակ և ազատ հողեր շատ կան։ Այդ ազատ հողերում հինգ ցորենի ամբար կա, որոնք [սուլթան] Սելիմ խանի ժամանակից լիքն են բրնձով և կորեկով։ Տեսնողը կարծում է, թե հենց նոր են կալսել և լցրել ամբարը։ Պաշարման ժամանակ զինվորները սնվում են այս հացահատիկով։ Դարպասից ցած, ժայռի մեջ փորված ջրի ճամփա կա, որը իջնում է մինչև գետը։ Պաշարման ժամանակ այդտեղից ջուր են բերում ու խմում։ Ներքևում, իրար կողքի երեք ջրամբար կա...

Այս քաղաքի գեղեցիկները շատ հայտնի են։ Քաղաքը գտնվում է Էրզրումի տերիտորիայում։ Բնակիչները թուրք են։

Այնուհետև, էվ. Չելեբին անցնում է մի շարք վայրերով և գալիս է Երզնկայի բերդը։

Երզնկայի [Էրզինջան] բերդը Էրզրումին է պատկանում։ ' Այս դրախտանման վայրը ձեռք բերելու համար հազարավոր իշխողներ մեծ ջանքեր են գործադրել։ Վերջապես 855 (1451) թվականին սրա փադիշահը՝ սուլթան Ջահրեդդինը, տեսնելով, որ սուլթան Յըլդըրմ Բայազիդ խանը կայծակի նման հաղթում է իր չորս կողմի թշնամիներին, Ամասիայի բերդի գրավման օրը գալիս է Ամասիա և իր Երզնկա բերդի բանալիները հանձնում է Յըլդըրմ Բայազիդին։

Վեհափառ փադիշահը մեծ վեհանձնություն հանդես բերելով, Երզնկայի գահը շնորհում է նորից սուլթան Ջահրեդդինին: Սակայն խութբեն կարդացվում է Յըլդըրմ Բայազիդի անունով և փողը կտրվում է նրա անունով: Այս դեպքից երեք տարի անց սուլթան Ջահրեդդինը մեռնում է և նրա երկիրը անցնում է Կարա-Կոյունլի շահ Կարա Յուսուֆի ձեռքը: Սա 7 տարի իշխելուց հետո՝ երևան է գալիս խավարյալ Թիմուրը: Կարա Յուսուֆը վախից իր գահն ու հանգստությունը թողնում և փախչում է Բաղդատի իշխող սուլթան Ահմեդ Ջելայիրի ու Յըլդըրմ Բայազիդ խանի մոտ և ապավինում նրանց հովանավորությանը: Թիմուրը Յըլդըրմից պահանջում է Կարա Յուսուֆին, սակայն մերժում է ստանում: Թիմուրը ասում է՝ «Քաղաքիցդ ու երկրիցդ հրաժարվիր»: Սակայն Յըլդըրմ Բայազիդ խանը Թիմուրի այդ խոսքին կարևորություն չի տալիս: Այս դեպքը պատճառ է դառնում գժտության Թիմուրի և օսմանցիների միջև: Երբ Թիմուրը իր անթիվ զինվորներով գալիս է Յըլդըրմ Բայազիդ խանի վրա, Կարա Յուսուֆը և սուլթան Ահմեդ Ջելայիրը Ատալիայից նավով փախչում են Եգիպտոս և ապաստանում սուլթան Բերկոկի մոտ: Մյուս կողմից Ուզուն Հասանը տիրանում է Երզնկային և այստեղ խութբեի և փողի դրոշմի տեր է դառնում: Նրա փողերանոցը ներկայումս էլ Մելիքխանեի մոտ է: Յըլդըրմ Բայազիդը մահանում է և Ուզուն Հասանը Երզնկայում անկախություն է ձեռք բերում: Յըլդըրմ խանից հետո, նրա շեհզադեների՝ Մուսա, Իսա, Սուլեյման և Շեհզադե Մուհամմեդ Չելեբիների օրոք Անատոլիան խառնակ դրության մեջ է ընկնում և ի վերջո Չելեբի Մուհամմեդը անկախ փադիշահ է դառնում: Այն ժամանակ Ուզուն Հասանով զբաղվելու հնարավորություն չլինելու պատճառով, Ուզուն Հասանը մինչև Ֆաթիհի ժամանակը ոտնձգություններ է կատարում օսմանյան պետության դեմ: Վերջապես 878 (1473) թվականի հայտնի կռվում Ֆաթիհը Ուզուն Հասանին պարտության է մատնում և ամբողջությամբ գրավում է Էրզրումի և Երզնկայի շրջանները և այս վայրերի երկրորդ ֆաթիհն (նվաճող) է դառնում: Ավելի վաղ, Բայազիդ խանի օրոք, երբ սուլթան Սելիմը իբրև շեհզադե Տրապիզոնում վալի է լինում, Շահ Իսմայիլը գրավում է Երզնկան: Հետագայում, երբ սուլթան Սելիմը փառքով և պատվով բարձրանում է օսմանյան գահը, բանակով գնում է Երզնկայի դաշտը՝ Շահ Իսմայիլի վրա: 921 (1515) թվականին առանց պատերազմի՝ ամանով, գրավում է Երզնկան, որով Երզնկայի երրորդ ֆաթիհն է դառնում:

Երզնկան ըստ Սուլեյման խանի աշխարհահամարի Էրզրումի տերիտորիայում է, փաշայի խասից անջատված է և իշխողը սուբաշի է։ 150 ակչեով շերիֆ կազա է։ Ունի նահիյեներ և գյուղեր։ Կադին 6 քիսե եկամուտ է ստանում։ Հյուքումեթ է։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, նագիր, սիփահիի քեթխուդա, ենիչերիների սերդար, 150 բերդապահներ։ Սրանք առևտրական են։ Բերդը գտնվում է մի ընդարձակ և բաց դաշտի կենտրոնում։ Քառանկյունի ձևով փոքր բերդ է։ Զորապատերը շատ ցածր են և շրջապատի աշտարակները ամուր չեն և բերդը հին է։ Շրջապատի խրամներն էլ ցածր են։ Երբ Աբազա փաշան ապստամբում է Էրզրումում, Երզնկայի խրամները, աշտարակներն ու պատվարները նորոգում և ամրացնում են։ Սակայն չկարողանալով ազատվել Աբազայից, ստիպված են լինում բերդը նրան հանձնել։ Ունի երկաթյա դարպաս։ Դրսի վարոշից կարելի է քաղաք մտնել խրամի վրայի կամրջով։ Բերդում 200 տուն կա, որոնք այգի ու պարտեզ չունեն։ Կա նաև մի ջամի, այլ շինություններ չկան, որովհետև բերդի ներսը նեղ է։ Դրսի վարոշում 1800 տուն կա, երկհարկանի տները հազվադեպ են։ Կա մոտ 70 մեհրաբ, 7 ջամի, 7 դերվիշական թեքիյեներ...

Գեղեցիկները շատ են, կանայք վերին աստիճանի պարկեշտ են և ամբողջովին ծածկվում են... Քաղաքում քարուկրից կառուցված փոքրիկ բեդիստան կա, որտեղ ամեն տեսակ թանկագին ապրանքներ են վաճառում։ Շուկայում 50—100 փոքր խանութներ կան։ Քաղաքի կլիման բավականին տաք է։ Արևելքից Էրզրումն է և լեռներով անցնելու դեպքում՝ երկու կոնաք հեռավորության վրա է։ Այստեղ ձյուն տեղում է, բայց երեք օրից ավելի չի մնում։ Ամառ ու ձմեռ բանջարեղենը անպակաս է։ Հացահատիկների բոլոր տեսակները շատ առատ են։ 70 տեսակի հայտնի տանձեր կան։ Փաշային այստեղ 7 տեսակի հայտնի տանձեր տվեցին։ Օնեք անունով խաղողը պահվում է մինչև նոր խաղողի հասունանալը։ Հայտնի են ծիրանի, տանձի, սպիտակ և դեղին թթի չիրը, ինչպես նաև սև թութը։ Շուկաներում և բազարներում չոր թութը վաճառում և բեռներով այլ երկրներ են ուղարկում, համեմունքներով տեսակ-տեսակ թթի պեքմեզներ են պատրաստում։ Մի բաժակ խմողը նորից կյանք է ստանում։ Երկու օրվա ընթացքում պտուղները Էրզրում են հասցնում։ Այս քաղաքն է Էրզրումին պտուղ մատակարարում։

Այնուհետև, Էվ. Չելեբին նկարագրում է Երզնկայի իսլամական ուխտատեղիները։ Երզնկայից նա գնում է Շեբին-Կարահիսար։

(էջ 373—383)

Շեբին-Կարահիսարի բնութագիրը: *Կարահիսար-ի Շարքին կոչվում է նաև Շեբին-Կարահիսար։ Երկու Կարահիսար կա՝ մեկը այս էրզրումի Կարահիսար-ի Շարքին է, մյուսը՝ Անատոլիայի Աֆիոն-Կարահիսարն է, որը Կարահիսար-ի Սահիբ էլ է կոչվում։ Կարահիսար կոչվելու պատճառը բերդի պատերի քարերի սև լինելն է։ Առաջին իշխողը եղել է Հայկանի (Հայկազյան) մյուլուք Կիամելերը*, հետո անցել է Տրապիզոնի հայերի ձեռքը։*

Հետագայում գրավել է Ֆաթիհը։ Սելիմ խանի օրոք աշխարհահամար է կատարվել և առանձին սանջաքի բեյի կենտրոն է եղել։ Բեյի խասը 13.000 ակչե է։ Լիվայում 32 զեամեթ և 94 թիմար կա։ Փաշայի զինվորների հետ միասին 1000 զինվոր ունի։ Փաշան տարեկան 40 քիսե եկամուտ ունի։ Մի քանի անգամ արփալըքի կարգով շնորհվել է երեք թուղավորի [փաշայի]։ Այս վայրը շնորհվել է նաև Ախալցխայի վեզիր Սեֆեր փաշային և ասում են, որ մյուսելլիմը՝ Դերվիշ Աղան, այստեղից 50 հազար ղուրուշ է ստացել։ 150 ակչեով շերիֆ կաղա է։

Կադին տարեկան 4000 ղուրուշ եկամուտ է ստանում։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, նաքիբ, այաններ և էշրաֆներ։ Սիփահիի քեթխուդան Թեփան Ահմեդ Աղան է։ Ունի նաև ենիչերիի սերդար, սուբաշի, մյուֆթի, կափանի էմին, բերդակալ և 150 թիմարով բերդապահներ։

Շեբին-Կարահիսար բերդի բնութագիրը: *Դեպի երկինք վեր խոյացած, մի բարձր լեռան ամենաբարձր գագաթին կառուցված յոթանկյունաձև մի բերդ է։ Առաջին հայացքից կարծես առանց կայմերի* կալիուն *նավ լինի։ Յոթ կողմից պատերի բարձրությունը 70 արշին է։ Ունի 70 աշտարակ և 100 պատվար։ Շրջագիծը 3600 քայլ է։ Չորս կողմում դժոխանման խոր ձորեր կան, այդ պատճառով խրամի կարիք չի զգացվում։ Ունի եռակի ամուր երկաթյա դարպասներ։ Գիշեր-ցերեկ հսկում են պահապանները, որովհետև Սև ծովի մոտի գյուղերի բնակիչները վախենալով կազակներից, իրենց թանկագին ապրանքները այս բերդումն են պահում։ Բերդի ներսում մոտ 70 նեղ տներ կան։ Ջրի պակասության պատճառով ժողովուրդը նեղվում է ծարավությունից։ Ջուրը էշերի միջոցով բերում են ներքևի գետից։ Ջրի ճանապարհներ կան, որոնք գործում են միայն պաշարման ժամանակ։ Բերդի մեջ ջրամբարներ և ցորենի ամբարներ կան։ Այս ամբարներում հարյուրամյա կորեկ, բրինձ է պահվում։ [Բերդը] երկրի ներքին մասումն է, այդ պատճառով էլ ռազ-*

---

* *Բնագրում՝* ملوك هايكانىدن قيامەلر

մամթերքը և մեծ ու փոքր 50 թնդանոթները, բերդի համեմատությամբ քիչ չեն։

Բերդապահ զինվորների կեսը մեր էֆենդի Դեֆթերդար-զադեի թիմարի հետ միասին տարվեց Գունիա բերդը։ Բերդում կա Էբուէլ-Ֆեթհի փոքր ջամին։ Մյուս շինությունները ստորին վարոշում են։

Վարոշը: 9 թաղում 1600 հողածածկ տուն կա։ Տներն ու պատրշգամբները նայում են դեպի հյուսիս։ Ընդամենը 42 մեհրաբ կա, 3 թեքիյե, 2 բաղնիք, 4 խան, 7 կրոնական դպրոց և մոտ 750 խանութ։ Շուկան այնքան էլ բարեկարգ չէ, սակայն Թափան Ահմեդ Աղան քարուկրից բեդիստան է կառուցել։ Խանութներ կան։ Կենտրոնում լայն, վերևից ծածկված ճանապարհ կա։ Երկու կողմից ամուր դռներ ունի, որոնք գիշերները փակվում են. ունի պահապաններ։

Մի առյուծ: Բեդիստանի քաղաքին նայող դռան ներքին մասում, խոշոր տախտի վրա մի առյուծ է դրված, մորթին լցված է բամբակով, աչքերի փոխարեն խոշոր նարինջներ են դրված, բերանը բացված է յոթ գլխանի աժդահայի նման և լեզվի փոխարեն կարմիր թաղիքի կտոր են դրել։ Ատամները շատ խոշոր են. ամեն մեկը նման է թուրքմենական դաշույնի։ Քթից մինչև պոչի ծայրը 45 թզաչափ է։ Այս առյուծը շատ կատաղի է եղել։ 7 տարի ապրել է լեռներում, ոչխարներ, այծեր և եզներ է ոչնչացրել։ Այդ կենդանիները ուտելով ուռել է։ Երբեմն գյուղերի վրա է հարձակվել, ջորիներ, էշեր, ուղտեր և մինչև անգամ մարդիկ որսացել։ Վերջապես ուժեղ բազուկով մեկը երկճյուղ գնդակով այս առյուծին գլխից խփել սատկեցրել է։ Առյուծի կաշին հանել և տարել են Թափան Ահմեդ Աղային։ Նա էլ բոլորին ցույց տալու նպատակով, բեդիստանի դռան մոտ, տախտի վրա է դնել տվել։ Աստված վկա, այդ առյուծը տեսնողը կարծում է, թե կենդանի է... Սակայն այս առյուծը Բաղդատի, Հալեպի, Կարնայի առյուծների նման սրտառուչ չէ... Այս լեռներում նման առյուծ բոլորովին չի հանդիպել... Կարահիսարի անմատչելի լեռներում շատ կան վագր, վայրի ոչխար, նապաստակ, վայրի եզ, գայլ, աղվես, չախկալ, բորենի և կուզ։

Կարաճիսարի շիբը: Լեռներում մի տեսակ կարմիր շիբ կա։ Ասում են, որ ոսկերիչներն են օգտագործում։ Տանում են տարբեր երկրներ։ Լեռներից հանվում է քառակուսի, հնգանկյունի, վեցանկյունի ձևերով։ Ոսկերիչները այս շիբով սպիտակացնում են արծաթը։

Վիրաբույժները սպեղանի պատրաստելու համար են գործածում։ Ուրիշ մի շարք հատկություններ էլ ունի...

Այստեղից Էվ. Չելեբին շարունակում է իր ուղևորությունը։ Հատկապես նկարագրում է Հաջի-Մուրադ, Նիքսար, Լատիք և Մերզիֆուն [Մարզվան] բերդերը։ Հաջի-Մուրադ բերդից հետո հիշում է Ջավդար հայկական գյուղը, որը զեամեթ է։

Լատիքը հնագույն քաղաք է և բերդ — գրում է Էվ. Չելեբին — Ալլահի վակֆ լինելով չի ավերվել... Էյալեթի վալիից բացի ոչ ոք չի կարող միջամտել այս քաղաքի գործերին։ Բնակիչները տուրքերից ազատված են... Քաղաքում կղմինդրով ծածկված, այգիներով և պարտեզներով 3020 տուն կա... վեզիրների և այանների 41 պալատ։ Միջին դասի մարդիկ վաճառականներ և արհեստավորներ են... Լատիքից մեկուկես ժամ հեռավորության վրա, փոքր գետի եզերքին Խելլեզ անունով մի ջերմուկ կա... Բոլոր նահիյեներից հազարավոր մարդիկ սայլերով գալիս են ջերմուկում լողանում և ազատվում են բորոտությունից ու քոս հիվանդություններից։ Ջերմուկին [Ըլըջա] արաբները ճամամ են ասում, աջեմները գերմաբ, Լատիքում և Ամասիայում՝ կոզե, Թաթարիստանում՝ իլիսի, մոնղոլների լեզվով՝ ճերեճտևս, Թուրքեստանում՝ իլիջե, ռումերի կողմերում՝ կայճարջա, Բոսնայում և Ռումելիի որոշ վայրերում՝ յաճար են ասում*։

Լատիքի լիճը գտնվում է Լատիքի արևելյան կողմում։ Նրա շուրջը կարելի է շրջել մեկ օրում։ Ջուրը հիանալի է։ Լճում 11 տեսակ ձկներ կան, որոնք բոլորն էլ շատ համեղ են...

Մարզվան [Մերզիֆուն] բերդի բնութագիրը։ Հիմնվել է Դանըշմենդիների կողմից։ Հետագայում, Յըլդըրմի օրոք գրավել են օսմանցիները։ Ներկայումս Սվազի էյալեթում, Ամասիա սանջաքի տերիտորիայում ընկած, կղմինդրով կառուցված բերդ է։ Քաղաքը Փիր Դևե-Սուլթանի էվկաֆն է։ Ներկայումս իշխողը Կըզլար աղասին է[114]։ 300 ակչեով շերիֆ կաղա է։ Կազին տարեկան 6 քիսե եկամուտ ունի։ Բերդը հողաշեն է և բերդապահներ ու բերդակալ չունի։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, նաիբ, սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, մյուհթեսիբ, նայիբ։ Մոտ 300 բարձր աստիճանավոր կադի-էֆենդիներ, սյուլեհաներ, էշրաֆներ, աղաներ և փաշայության արժանի քեթխուդաներ կան։ Բնակիչները վերին աստիճանի բարեպաշտ և ուղղամիտ մարդիկ են։ Քաղաքը բարեշեն է և հայտնի է իր բեր-

* Անատոլիայի որոշ շրջաններում՝ կափլըջա և կուտրեփ ճամամի են ասում (ծանոթ. հրատարակչի)։

քառատությամբ և էժանությամբ։ Գտնվում է Դեշան լեռան ստորոտին և ունի կղմինդրով ու հողով ծածկված 4000 տուն։ 44 թաղ և 74 մեհրաբ կա...

Այնուհետև հիշատակվում են Մարզվանի ջամիները, թեքիյեները, մեդրեսեները, բաղնիքները և այլն։

Քաղաքի օդն ու ջուրը լավ են, բնակիչները առողջակազմ։ Բազմաթիվ բեյեր իրենց ընտանիքներով գնում են Մարզվանի ետևում գտնվող Դեշան լեռը և այնտեղ ամառը 6 ամիս անցկացնում թուրքմեն ցեղերի հետ։ Այս յայլան Մահանի երկրից եկած Դեշան-օղլիներին են տվել Դանիշմենդիներն ու օսմանցիները և այդ պատճառով էլ մինչև հիմա ժառանգական մյուլք է...

Այս քաղաքով բազմաթիվ վճիտ ջրեր են հոսում և նրանց մի մասը ոռոգում է Մարզվանի այգիներն ու պարտեզները։ Որքան անձրև տեղա, միևնույն է, այս հովիտը առանց ոռոգման բերք չի տալիս։ Ցանված մի քելե սերմից 80 քելե բերք է ստացվում։ Այս հովիտը ոռոգելու համար ջրերի միրի-աղա կա։ Դեշան-օղլիները նրան բաժին են տալիս իրենց առատ եկամտից։ Լավ աղայություն է։ Եթե գետը հսկող աղաներ չլինեն, Մարզվանի ժողովուրդը միմյանց կկոտորի։ Հիմա էլ շատ կռիվներ են տեղի ունենում։ Ջրի մի մասն էլ հոսում է դեպի Լատիք քաղաքի հովտում ընկած Կավզե կազիության նահիյեները։ Մյուս մասը հոսում է դեպի Օսմանջիքի դաշտերը և ոռոգում է այգիներն ու պարտեզները։ Մարզվան քաղաքը գտնվում է Դեշան լեռան ստորոտում։ Ամասիան այս քաղաքի հարավումն է և 15 ժամյա հեռավորության վրա է։ Լատիքը՝ 12 ժամյա հեռավորության վրա է, Օսմանջիքը՝ 16 ժամյա, Գյումյուշ քաղաքը՝ 10 ժամյա, Քերքերան կազան՝ 8 ժամյա։ Դեշան լեռան հյուսիսային կողմի ստորոտում, դեպի Քյոփրյու քաղաքը ընկած է Կոջա-Կալափին։ Այստեղից երեք մենզիլ հեռավորության վրա է Սամսունի բերդը, որը սրա նավահանգիստն է։ Լինում են Սինոբի նավահանգիստ գնացողներ, բայց Սամսունը ավելի մոտ է։

Ուտելիքները, խմիչքները և արհեստները: *Հայտնի են Այնթապի ռուբի (բեքմեզ) նման լավ ռուբը, համեղ խաղողը։ Փիր-դեդե թեքիյեի շրջակայքում և այլ վայրերում 600 խանութ կա։ Շատ են ներկարարների խանութները, որտեղ ավելի լավ են ներկում, քան Աջեմի ներկարարները։ Հայտնի է կապույտ ներկը։ Վաճառականները ամեն տարի այստեղից հազարավոր թոփ բամբակի բեզ են Ղրիմ տանում և գերիների հետ փոխանակում։ Ղրիմի ժողովրդի ֆարաջ-*

ներն ու հագուստները կարվում են Մարզվանի բեզից։ Հայտնի է նաև բամբակի թելը։ Աչքի են ընկնում չեթի բեզից պատրաստված ներքնակները, գույնզգույն բարձերը, ծաղկավոր ու գեղեցիկ վերմակի երեսները, վարագույրները։ Ամենուրեք ճանաչված են այստեղի գեղեցիկները։

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Մարզվանի իսլամական ուխտատեղիները։

(էջ 373—398)։

Իր «Ուղեգրության» II հատորի հետագա էջերում էվ. Չելեբին նկարագրում է ճանապարհին Մարզվանից մինչև Ստամբուլ պատահած քաղաքները և բերդերը։ Առանձնապես կանգ է առնում Չորումի, էնգյուրիի [Անկարա] վրա։ 1058 (1648) թվականի Ջեմազիլ-ախըրին վերադառնում է Ստամբուլ։

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

(1057—1060 թթ. = 1647—1650 թթ.)

Ստամբուլից Շամ (Դամասկոս) — Ադանա — Մսիս — Իսքենդերուն — Անթաքիա — Մարաշ — Ջյուլկադերիեի Կարս — Կեսարիա — Սվազ — Դիվրիկի — Էգին (Ակն) — Խարբերդ — Փերթեք — Չմշկածագ — Փալու — Չեպաքչուր — Գենչ — Աթակ — Մուշի դաշտ — Մուշ — Մշո սուրբ Կարապետի վանքը — Բինգյոլի յայլան — Սվազ — Ստամբուլ։

1057 (1647) թվականին էվլիյա Չելեբին Սկյուդարից դեպի Շամ (Դամասկոս) ուղևորվելիս կանգ է առնում մի շարք քաղաքներում, որոնց թվում նաև Ադանայում։

Ադանա բերդի նկարագրությունը։ *Առաջին հիմնադիրը հավատացյալներին գլխավորող Մեհմեդ-Բին Ռիշարն է, որը իմամ եղած ժամանակ, Սիհուն գետի եզերքին կառուցել է քառաշեն մի փոքր բերդ և անվանել Դարհեմա...*

Այստեղ մնացինք երկու օր։ Երրորդ օրը այստեղից դուրս գալով անցանք Սիհուն գետի 16 աչքանի մեծ կամուրջով և շարժվեցինք դեպի հարավ, հասանք Մսիս բերդը, որը կառուցել է Ջաֆեր էլ-Մեսուրը։ Հետագայում անցել է իսպանացիների ձեռքը և վերածվել մեծ քաղաքի։ Ունեցել է հազար չուխայի արհեստանոցներ։ Գտնվելով հաջիության գնացողների ճանապարհի վրա, այս վայրի ապահովության համար, Բայազիդ-Վելին գրավել է այն և բերդում մեծ քանակությամբ զինվորներ թողել։ Հետագայում իսպանացիները նավերով եկել և ավերել են ծովեզերքի օսմանյան բերդերը։ Նրանք ավերել են նաև Մսիս բերդը...*

(էջ 41)

* *Պետք է լինի վենետիկցիներ (ծանոթ. հրատարակչի)։*

Ջելերին Ադանայից մեկնում է Փիյաս, Իսքենդերուն (Ալեքսանդրեթ), Անթաքիա, Համա, Հոմս և Շամ (Դամասկոս) քաղաքները։

1059 (1648) թվականին էվ. Չելեբին միանալով Թուրքիստանի երկրի վրա արշավանքի գնացող Դամասկոսի էյալեթի բանակին, լինում է մի շարք քաղաքներում, որոնց թվում նաև Մարաշում։

Մարաշի նկարագրությունը: Նոր Մարաշի հարավային, ներկայումս այգիներով ծածկված, կողմում են գտնվում Հին Մարաշ մեծ քաղաքի ավերակները... Ավերման պատճառն այն է, որ նորին վսեմություն Օմերը, իր խալիֆայության ժամանակ, ինքը անձամբ նվաճելով Երուսաղեմը, գալիս է դեպի Հալեպ, Այնթաբ և Մարաշ։ Մարաշի կայսր Ջեմիջիմեին և բնակիչներին գրում է. «Այս նամակը ստանալուն պես, դուք պետք է ընդունեք նվիրական [իսլամական] կրոնը, բերդը հանձնեք և խարաջը ընդունեք»։ Երբ նամակը կարդում են, Մարաշի բնակիչները թողնում են քաղաքը և փախչում Շիրի լեռները։ Ահա այս պատճառով է ավերվել հին Մարաշը։ Հետագայում Ալ-Ձյուլկադեր Ալա-Ուդդևլեն տիրանալով Մարաշին, քաղաքը բարեշինել է և ինքը իշխել է այնտեղ։

Շիր լեռներից դեպի քաղաք հոսում է մի աղբյուր, որը կոչվում է Փինար-բաշը։ Այստեղ զբոսավայր է. քաղաքի բոլոր երևելիները այստեղ են զբոսնում։ Այս ջուրը մտնելով քաղաք աշխատեցնում է 16 ջրաղաց... Քաղաքի մի կողմում կա մի բարձր սար, որը հիանալի յայլա է։ Այս յայլայի ամենաբարձր մասում Կարա-գյոլ անունով ծովանման մեծ ավազան կա, որի մոտ կա նաև մի մեծ ջրամբար։ Սրա երկարությունն ու լայնությունը 400-ական քայլաչափ է։

Հին ժամանակներում Ջեմիջիմե կայսրը վերոհիշյալ յայլայում և Քյորսեն յայլայում ունեցել է 70 հազար գլուխ ոչխար և այծ, գոմեշ և կով։ Նրա հովիվները այս կենդանիներին կթել ու կաթը լցրել են այդ ավազանի մեջ։ Կաթը այդ ավազանից գետնի տակով սպիտակ մարմարից կառուցված անցքով երեք ժամյա ճանապարհ է անցել և հոսել է դեպի Ջեմիջիմեի պալատը ու այնտեղ լցվել է ավազանների մեջ, իսկ ավազաններից՝ բաժանվել է ժողովրդին։ Կաթի մնացած մասն էլ գործածվել է խոհանոցում և կաթնապուրը բաժանվել է անցորդներին։ Այս Ջեմիջիմե կայսրը այնքան հարստության տեր է եղել, որ մեկ օրում նրա խոհանոցում, այլ կարիքների և ոչխարների համար իբրև թե 70 ջորու բեռ աղ է գործածվել... Նրա օրոք Մարաշը այնքան է բարեշինվել, որ աքաղաղը քաղաքի մի ծայրից մինչև մյուսը տանիքից-տանիք է ցատկոտել... Ներկայումս էլ [Մարաշը] բարեշեն ու գեղեցիկ քաղաք է[1]։

Քաղաքի արևելքում գտնվող լեռների ետևում Էլբիստանի դաշտըն է։ Այդ դաշտով հոսում է Ակ-սու գետը։ Մարաշի ու Այնթաբի քամբակի և բրնձի բերքը ստացվում է այս գետի եզերքին տարածված հողից։ Գետի մի կողմում Մարաշն է, մյուսում՝ Այնթաբը... Քաղաքների միջև Շիր լեռների շղթան է, որը հասնում է մինչև Արփաթե լեռները։ Այս լեռներում և քաղաքներում ապրում են թուրքմեն ցեղերը։ Նրանք եկել են Բուխարայի երկրից և իրենց հետ բերել են իրենց լեզուն։ Թուրքմեն [ցեղերը] խոսում են 12 լեզուներով։ Այս ցեղերը դուրս գալով Մավերաելնեհրից[2], Դանիշմենդի, Ակ-կոյունլու և սելջուկ անուններով, առանձին-առանձին եկել են Ռումի երկիրը և յուրաքանչյուրը գրավել է առանձին տարածություն։ Լեզուները տարբեր են. Թուրքմենական լեզուն առաջացել է թաթարական լեզվից։

Մարաշ քաղաքը լավ դիտելուց հետո, շարժվեցինք դեպի արևմուտք և հասանք Մարաշի կամ Զյուլկադերիեի Կարսը։ Օսմանյան երկրում երեք Կարս կա. մեկը՝ Էրզրումի մոտի Կարսն է, մյուսը՝ Սելեֆկեի սանջաքի Կարա-Թաշըքի Կարսն է, որն ավերակ է, երրորդը՝ Մարաշի Կարսն է, որը Մարաշի շրջանում սանջաքի բեյի կենտրոնն է։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Նվիրական պատերազմի ժամանակ փաշան արշավանքի է դնում իր 800 զինվորներով։ 150 ակչեով կազա է։ Ունի սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, մուհթեսիբ։

Բերդը քառանկյունի է, քարաշեն և ամուր։ Բերդում տներ, ջամի, շուկա և բազար չկա, ստորին մասը այգիներով ու պարտեզներով, դրախտանման ջրերով բարեշեն քենդ է[3]։ Բնակչության մեծամասնությունը թուրքմեն մշակներ են։

Այստեղից դուրս գալով եկանք Գյոքսուի յայլայի լեռները։

Այս լեռների մասին Էվլիյա Չելեբին տալիս է շատ հետաքրքիր տեղեկություններ, որոնցից համառոտակի բերվում են մի քանիսը։

Էվ. Չելեբին կրկնում է երկրագնդի վրա 140 բարձր լեռների մասին իր «Ուղեգրության» մեջ ասածները։ Նրա կարծիքով այս Գյոքսուի յայլայի լեռները ևս այդ բարձր լեռներից են։

Այնպիսի բարձր յայլա է, որի վրա ապրում են 12 անգամ 100 հազար մարդիկ և 100 անգամ 100 հազար կենդանիներ։ Կոնիայի և Մարաշի էյալեթների ժողովուրդները և բազմաթիվ Բոյ բեյի թուրքմենները իրարից անտեղյակ ապրում են այս յայլայում։ Այս բարձր լեռները շատ հարուստ են բազմատեսակ խոտերով և դեղաբույսերով։

Էվլիյա Չելեբին այս յայլան նմանեցնում է Բինգյոլի յայլային...

Ապա շարժվելով դեպի արևմուտք անցնում են Դեյիրման-Բողազի անունով 500 տուն և մի վանք ունեցող հայկական գյուղով և հասնում են Կեսարիա քաղաքը։

Նորին վսեմություն Զաքարիայի օրոք առաջին հիմնադիրը եղել է կայսր Էրջիշնեն։ Շատերի ձեռքն է անցել։ Օմերի խալիֆայության օրոք Խերքիլ կայսրը նորոգել և երբեմն այնտեղ է ապրել։ Սկզբնական շրջանում Կեսարիան ավելի բարեշեն ու բարեզարդ է եղել, քան Մարաշն ու Սվազը։ Ունեցել է անթիվ զինվորներ, որոնք բոլորը հույներ են եղել։ Նորին վսեմություն Օմերը անձամբ գրավելով Երուսաղեմը մեծ սերդար է նշանակել Խալիդ-Իբնի-Վելիտին, 80 հազարանոց բանակով գրավել է Կեսարիան ու այնտեղ զինվորներ թողել...

Կայսրը իմանալով այդ, բերդը պաշարում է և նրանում գտնվող մուսուլման ղազիներին ոչնչացնում։ Այն պահին, երբ բերդը լրիվ պետք է գրավվեր, բերդի ետևից մեծ քանակությամբ զինվորներ են երևում և կոտորում են բոլոր քյաֆիրներին... Դրանից հետո ոչ ոք չի համարձակվել վերականգնել Կեսարիան և մինչև օրս էլ մնացել է ավերված վիճակում...

Երբ Խերքիլ կայսեր որդին Հունաստանի կայսր է դառնում, բոլոր իսլամական երկրները նվաճելու անմիտ նպատակով, գրավում է սաև Կեսարիայի շրջանը և սկսում է վերանորոգել նրա բերդը։ Շամում իշխող Էմևի գերիշխողներից մեկը՝ Մուավիյեն, 80 հազարանոց բանակով բռնությամբ գրավում է այս բերդը։ Հետագայում Կեսարիան ձեռքից-ձեռք է անցել և ի վերջո Ալ-Օսմանի տիրապետությանը ենթարկվել...

[Ծուլթան] Սուլեյմանի գրանցումով Կեսարիան փաշայի սանջաքի կենտրոնն է։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Փաշան ընդամենը ունի 1500 լավ զինված զինվորներ։ Փաշայի տարեկան եկամուտը 40 հազար ղուրուշ է։ Մի քանի անգամ իբրև արփալըք շնորհված է երեք թուղով վեզիրների... Բոլոր նահիյեները բարեշեն են։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, նագիբ, մյուհթեսիբ, շահբենդեր, բարձր Դերգյահի ենիչերիների սերդար, բերդապահ ու բերդի զինվորներ։

Կեսարիա բերդի նկարագիրը։ Քաղաքի հյուսիսային կողմում գտնվող Էրջիս[4] լեռան ստորոտում, բարձր ժայռի վրա այս փղանման ամուր բերդը քարերով կառուցել են ռում մելիքները։ Հետագայում վերանորոգել է Ալ-Դանըշմենդը[5]։ Սակայն մեր նկարագրած հին Կեսարիայից 8 հազար քայլաչափ հեռու գտնվող Նոր Կեսարիան ներկայումս էլ բարեշեն և մարդաբնակ մի քաղաք է։ Այս բերդը հին

և գեղեցկակերտ ամրություն է։ Նրա արևելքում, հինգ մենզիլ հեռավորության վրա, գտնվում է Սվազը [Սեբաստիան]։

Դարպասի [բերդի] կամարի վրա, դեմ-դիմաց ու կողք-կողքի մի առյուծի և մի վագրի քանդակ կա։ Դարպասից ներս հացահատիկների ամբարներ կան, որոնք նվաճման օրից սկսած լիքն են ցորենով, կորեկով, բրինձով և պաքսիմատով։ Կան նաև անհաշիվ զենքեր և ռազմամթերք։ [Բերդի] ներսում վեց հարյուր տուն կա։ Հայտնի են Մոլա-խանեի, Կազանչիլերի, Կըզ-կափուի փողոցները։ Բերդից դուրս փերեզակների, սափրիչների, հին կոշիկի խանութներ կան։ Բերդակալի դռան առաջնամասը բարեզարդված է պարտեզներով ու շատրվաններով։

Բուն քաղաքի գովաբանությունը: Ստորին քաղաքը հարթ և ընդարձակ տարածության վրա ընկած, քառանկյունի, սրբատաշ քարերով շինված, հին բերդով մի մեծ վարոշ է։ Քաղաքի կողքով հոսող գետը կոչվում է Գեզերլեր-սույու։ Վարոշում կղմինդրով ծածկված մոտ հազար երկհարկանի և միհարկանի լավ կառուցված տներ կան։ Շրջապատված է հին պարսպով։ Ունի հինգ դարպաս։ Բոյաջի կափուսին[6] և Քեշի կափուսին[7] նայում են դեպի հարավ։ Դատարանի մոտի Ասար-էոնի դարպասը բացվում է դեպի արևելք։ Ծղուն-բազարի դարպասը նայում է հյուսիս։ Աթ-բազարի դարպասը բացվում է դեպի հյուսիս և գտնվում է փաշայի ապարանքի մոտ։ Պարսպի շուրջը խրամ է փորված։ Ձմռանը այս խրամը լցվում է մեծ քանակությամբ ջրով, իսկ գարնանը խրամում բանջարեղեն են ցանում։ Լավ բանջարեղեն է ստացվում։

Փողոցները: Նշանավորներն են՝ Բյոյուք-չեշմեն և Քյուչյուկ-չեշմեն [գտնվում են մյուֆթիի բաղնիքի դիմացը], Իսհակ Չելեբին, Սայեջին, Կաթըրջի-զադեն, Օդունջին, Ֆրունջին, Թեքյե-Օվասի-բազարին, Հյուսեյնին, Քյուրդլերը, Հաջիֆելեջը, Հասիրը, Դաբաղլարը և Հաջի Ավեզլերը։

Ապարանքներն են՝ Աթ-բազարի մոտի Փաշա-սարային, որն ավելի մեծ է, քան խանը. սրա բակը ջիրիդի հրապարակի չափ ընդարձակ է, ունի բազմաթիվ ուռենիներ, այստեղ դրախտանման ազբյուրներ կան։ Այնուհետև, Դելավեր փաշա սարային, Քերս փաշա սարային, Քյուչյուք Հասան փաշա սարային, Ալի Չավուշ սարային, Չիք Դելի-զադե սարային։

Ջամիները: Ուլու Ջամին Կեսարիայի ամենահին և մեծ ջամին է։ Այնուհետև գալիս են Շեյխ էմիր սուլթանի, Լալա փաշայի, Օսման փաշայի և Հաջի փաշայի ջամիները։ Այս վերջին երեք ջամի-

ները Սուլեյման խանի վեզիրների ջամիներն են և կառուցվել են հայտնի (ճարտարապետ) Միմար Սինանի[8] կողմից։

Էվ. Չելեբին նկարագրում է նաև այլ բազմաթիվ ջամիներ, մեդրեսեներ, թեքիյեներ, աղբյուրներ և խաներ, որոնց վրա կանգ չենք առնի։

Շուկաները (չարշը) և բազարները: *Ինչպես Բրուսան և Էդիրնեն, Կեսարիան էլ երկու տեղում քարաշեն բեդիստան ունի, մեկը ոսկերիչների վաճառանոցն է, որտեղ կարելի է գտնել աշխարհի թանկագին ու շքեղ գոհարեղեններ, կան նաև ուշագրավ ու գեղեցիկ ամանեղեններ։ Գոհարավաճառ ոսկերիչները պատրաստում են գոհարեզեններ։*

Մեծ բեդիստանում խիստ հարուստ խոջաները առևտուր են անում քիսեներով՝ և վաճառում են բազմատեսակ թանկագին կերպասներ: Գլխավոր շուկաներից շատ բարեկարգ է Ուզուն չարշըն, որը գտնվում է Աթ բազարի մոտ և ամբողջովին հագուստեղեն վաճառողների շուկա է։ Սրա աջ կողմում գտնվում է ալյուրի շուկան, որտեղ վաճառվում է սպիտակ և նուրբ ալյուր։ Զարմանալին այն է, որ այս քաղաքում ալյուրը պարկի մեջ լցնելուց հետո, եթե տասր տարի էլ պահվի՝ բոլորովին չի փչանա։ Այդ ալյուրից կարելի է ընտիր և սպիտակ հաց թխել։

Ներքնաբերդի դարպասից դուրս գտնվում է փերեզակների շուկան։ Այստեղից անցնողները բազմատեսակ համեմունքների անուշահոտ բույր են առնում։ Փերեզակներից ցած, հաճելի և մաքուր սափրիչների խանութներում աշխատում են մաքրասեր երիտասարդ սափրիչները։ Սրանցից ներքև գտնվում են կոշիկներ և հողաթափներ նորոգողների խանութները։ Դրանցից հետո, գլխավոր փողոցի երկու կողմերում, մինչև Կարա Բեզիլիի խանութը՝ դերձակների խանութներ են։ Այդ խանութներից հետո գալիս են նպարավաճառների մաքուր խանութները։ Այստեղ է գտնվում նաև մյուհթեսիբի[10] խանութը, բոլոր վաճառականները սուլթանական կշիռից մեկ դիրհեմ անգամ պակաս չեն կարող տալ։ Սրանից հետո գալիս են մսավաճառների խանութները... Ավելի ներքև գտնվում են ընտիր հացի և կարկանդակի խանութները։ Այստեղ թխվում են տեսակ-տեսակ, նշով ու սուսամով (կնջութ) հացեր և սերով կարկանդակներ: Մյուհթեսիբ Աղայի խանութից հետո սկսվում է Արփաջըլար չարշըսին, Կազանջիլեր բազարին, որից հետո արդեն Ներքին բերդն է։ Ձախ կողմում Մևլևիների[11] պարտեզի դուռն է. այս պարտեզը հասնում է մինչև Ուզուն չարշըն...

Հասակավորների և երիտասարդների դեմքն ու դույնը: Այս հնագույն քաղաքը գտնվում է Էրջիս լեռան ստորոտում։ Օդը բավականին ցուրտ է, բնակիչները ընդհանրապես առողջ են։ Ոմանք մեռնում են հարյուր, ոմանք էլ հարյուր վաթսուն և հարյուր յոթանասուն տարեկան հասակում։ Սև ցրված պիսակներով ցորենագույն դեմք ունեն։ Ընդհանրապես, թե՛ երիտասարդները և թե՛ հասակավորները շատ քաջ են ու արի։ Տղաները շուտ են մորուքավորվում, հակամետ են որսորդության ու ձկնորսության։

Ավազանին և պատվավոր անձինք: Հայտնի են Դիլավեր փաշազադե Մուրադ փաշան, Մյուֆթի էֆենդին, Նազիր էֆենդին, Ալի չավուշը, Ջնելի-զադեն, Ակ-Բաշ աղան և այլն:

Վարպետ բժիշկները և վիրաբույժները (ջեռրահ): Շատ կարող բժիշկ և վարպետ արյուն առնող է Էլ կայրրան-օղլին, որն մասնավորապես պուլսի արվեստում հայտնի է։ Այս քաղաքի թուրքերը բժշկին **Էլ-կայրրան** են ասում:

Հագուստները և լեզուն: Ավազանին հագնում է **սայա** կոչված սմփ, սամույրի, աղվեսի մորթուց պատրաստված մուշտակներ և ատլասից կաֆթաններ։ Միջակ դիրքի մարդիկ հագնում են Սկյուտարի և Լոնդոնի կերպասից կարված կաֆթաններ: Կանայք սուր դդակ են կրում և փաթաթվում են մի տեսակ ղենջակով: Քաղաքի կրթված մարդիկ խոսում են արաբերեն և պարսկերեն։ Բայց ժողովրդական լեզուն թուրքերենն է։ Քրդերեն և հունարեն չգիտեն։

Քաղաքը Էրջիսի ստորոտում գտնվելու պատճառով տների ճակատները դարձած են դեպի հյուսիս, այնպես, որ վաղ առավոտյան օդ ներշնչողները, կարծես թե դրախտային զեփյուռ են շնչում։ Ըստ Բեթլեմյոսի [Պտղոմեոսի] քաղաքը գտնվում է երրորդ կլիմայում և 17-րդ սովորական կլիմայական գոտու կենտրոնում... Այդ պատճառով էլ ամեն տարի շատ առատ բերք և բանջարեղեն է ստացվում։ [Քաղաքում] երեք հազար ջրհոր կա, ամեն մի տուն անպայման՝ մեկ կամ երկու ջրհոր ունի։ Քաղաքի չորս կողմում 117 գետեր և գետակներ կան, որոնց մեծ մասը սկիզբ են առնում Էրջիսի յայլաներից։ Այս գետակները քաղաքի այգիները և պարտեզները ջրելուց հետո թափվում են Կըզըլ Ըրմաք գետը։

Կըզըլ Ըրմաք գետը Բաֆրա գավառի մոտ թափվում է Սև ծովը։ Կըզըլ Ըրմաք գետով, քաղաքի արևմտյան կողմից մի ժամ հեռավորության վրա, երկու ժայռի միջև Գյող-Քյոփրու անունով աննման մի կամուրջ է գցված, որը սուլթան Սուլեյմանի օրոք կառուցել է ճարտարապետ Սինանը։ Վարպետ-ճարտարապետը իր կյանքի քա-

նի թանկագին տարիներն այստեղ է անցկացրել և իր ամբողջ կարողությունը գործադրել է ծիածանանման այս աննման կամուրջը կառուցելու համար։ Ամեն մի ուղևոր ակամա և մեծ հիացմունքով է դիտում այս կամուրջը և վարպետին գովաբանում...

Էվ. Չելեբին այնուհետև հիշատակում է Կեսարիայի բազմաթիվ բաղնիքները, այդ թվում միջնաբերդում գտնվող Ֆյուրջի համամին. այնուհետև, ճարտարապետ Սինանի կառուցումներից՝ Հյուսեյին փաշայի բաղնիքը և այլն։ Դռան առաջ երկու հնագույն վանք կա՝ Մելեի խանեի մոտի հունական մի վանքը։ Այնուհետև, նշվում է, որ կաթոլիկական (ֆրենգ) եկեղեցի չկա, իսկ հրեաները ունեն մի տաճար...

Արհեստներն ու արտադրությունը: *Աշխարհի արարչի շնորհիվ այս քաղաքում ձմռանը առատ ձյուն է տեղում և հողը ոռոգում այնպես, որ 77 օրվա ընթացքում աճում են 77 տեսակի բանջարեղեն և բուսականություն։ Մասնավորապես հայտնի են ցորենն ու գարին։ Այս քաղաքում բոլոր տեսակի արհեստները զարգացած են և նրանց արտադրանքը հայտնի է։*

Լեռներում առատ է գխտորը. խաղախորդները այծի կաշին մշակում են գխտորով. ոսկու նման փայլուն դեղին կաշի է ստացվում։ Ժողովրդի մեջ ասացվածք է դարձել՝ «Կեսարիայի կաշվի նրման կրջըր-կրջըր երգում է»։ Այդ կաշվից կարված կոշիկները, հողաթափները և դեղին ջիզմեները ոչ մի տեղ չկան։ Դրանցից նվեր են ուղարկվում բոլոր վեզիրներին։

Ուտելիքները: *Ընտիր և սպիտակ հացը, լավաշը, ծալ-ծալ չյորեքը, համեմունքներով պատրաստված կարկանդակը, համեմունքներով ու քեմոնով կովի մսից պատրաստված* Լահմի-կատիտ *անունով հայտնի բաստրման և անուշահամ սուջուղը (երշիկը) ոչ մի տեղում չկան։ Այս բոլորից իբրև նվեր ուղարկվում է Ստամբուլ։ Հնում այս քաղաքում 40 բարեգործական հիմնարկություններ են եղել, որոնք օգնել են հարուստներին և աղքատներին հավասարապես։ Դրանցից հիմա էլ մնում է Խունդի խանըմի իմարեթը։*

Այնուհետև Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Կեսարիայի 103 զբոսավայրերը։

Էրջիս [Էրջիաս] լեռան տարօրինակ հատկությունները: *Այս լեռան վրա օձ, կարիճ և այլ թունավոր սողուններ չկան։ Ասում են, թե այս բարձր լեռը անհայտ ազնվականների բնակավայր լինելու հետևանքով է, որ այստեղ սողուններ չեն եղել։ Մի ուրիշ ավանդության համաձայն, ընտրյալ նվիրական անձերից մեկը՝ Բաբարթեն*

Հինդին, այստեղ շատ երկարատև կյանք է անցկացրել և այս լեռան վրա սողունների բացակայությունը նրա աղոթքների շնորհիվ է։ Այս լեռան վրա ներկայումս էլ Բարարթեն-բաղի անունով մի այգի կա, որտեղ զանազան տեսակի ինքնաբույս ծառեր են աճում և պտուղ տալիս։ Այս Բաբարթենը այգեպանների փիրն է եղել։ Նրա նվիրական անունը էբու-Զենդ Հինդի է։ Նա ճգնավորական կյանք է անցկացրել. գերեզմանը Հնդկաստանումն է։

Մի ուրիշ ավանդության համաձայն, նվիրական Յահյայի օրոք, երբ Էրջեշ կայսրը այս քաղաքը կառուցելիս է լինում, հին իմաստուններից մեկը՝ Ցելասեկե անունով իմաստունը, բարձրանում է այս բարձր լեռը, ուղղահայաց ձևով 70 տեսակ սողուններ փորագրում, յուրաքանչյուրին առանձին-առանձին թալիսման է անում և դրա համար էլ այս լեռան վրա թունավոր կենդանիներ չկան։ Այս լեռան վրա ամառ-ձմեռ սառույցն ու ձյունը անպակաս են։ Ասում են, որ գայլ կա, բայց մենք չտեսանք։

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Կեսարիայում գտնվող շեյխերի և այլ անձանց գերեզմանները և այդ կապակցությամբ պատմում է մի շարք առասպելական դեպքեր։ Ուղևորությունը շարունակելով նա անցնում է Իոր քաղաքով ու բերդով, ապա Ակսարայով և մի շարք այլ վայրերով, հետո վերադառնում է Կեսարիա։ Այստեղից գալիս է Մարաշի տերիտորիայում գտնվող Էլբիստանի գավառը և այնտեղից էլ Սվազ։

(էջ 177—195)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՍՎԱԶ (ՍԵԲԱՍՏԻԱ)

Հնագույն և բարեշեն Սվազի բնութագիրը։ Նվիրական Ջեքերիյեի օրոք Մարաշի կայսր Ջեմիջիմեն կառուցել է Մարաշը, իսկ նրա եղբայրը՝ Սվազը։ Մի քանի պատմագիրներ ասում են, որ այս քաղաքը կառուցել է Քեյմուրաս Շահը[12], իսկ մի քանիսն էլ՝ Ջեհակ Մարիին[13] են վերագրում։ Քեյմուրասը թաղված է Սվազում։ Նրա օրոք Սվազում չմշակված տեղ չի մնացել։ Մինչև Կըզըլ Ըրմաքի դետեղերքը եղել է բարեշեն ու մշակված։ Հետագայում [Սվազը] անցել է մի շարք մելիքների ձեռքը։ Ի վերջո, Բաղդատի խալիֆա Հարուն-էլ-Ռաշիդի օրոք, Սեյդ Ջաֆեր-Ղազիի շնորհիվ անցել է իսլամների ձեռքը։ Ավելի ուշ, Ալ-Դանըշմենդներից Նիկհիսարի նվաճող սուլթան Մելիք-Ղազին Ալ-Սելջուկների օգնությամբ նորից գրավում է այն։ Իսկ հետագայում, թուրքմեններից խլել է Ալ-Օսման Յըլդըրըմ Բայազիդ խանը։ Սակայն Թիմուրի արշավանքի ժամանակ, առա-

ջինը Սվազն է նրա դեմ ելել։ Բնակիչներից հազարավոր պատանի աշակերտներ նվիրական ղուրանը կրծքներին դրած, դուրս են եկել Թիմուրին դիմավորելու, սակայն այդ երկաթասիրտ ու խավարյալ զզվելիի կատաղած ձիերը նրանց ոտնատակ են արել։ [Թիմուրը] յոթը օր մնացել է այստեղ ու բնակիչներից և ուլեմաներից 70 հազար մարդ է սրի քաշել, բերդը ավերել է և քանդել։ Այդ ավերակները հիմա էլ երևում են։ Ժողովրդի մեջ առած է դարձել «Քեզ հետ այնպիսի բան պիտի անեմ, որ Թիմուր-Լենգը Սվազին չի արել»։ Թիմուրի և Նասրեդդին խոջայի տեսակցության ժամանակ, խոջան Թիմուրին հարցրել է. «Ինչու Սվազում 40 հազար երեխաների և դեռահասների թաթարական ձիերի ոտքերի տակ գցեցիր և 70 հազար աստծո ստեղծածներին կոտորեցիր»։ Թիմուրը պատասխանել է. «Աստված վկա, սվազցիները նվիրական ղուրանը ստեղծված է (սարքված) ասելով, մերժված (ջնջված) այեթներին սարքովի խոսքեր համարեցնելով, ղուրանը ղուրանությունից դուրս են բերել [աղավաղել են]։ Նրանց երեխաները՝ ապօրինի երեխաներ են [պոռնկորդիներ], ծերերը՝ ընդունել են շիի, հուրուֆի, ջեբրի, կադերի դավանանքները։ Աշխարհը կարգի բերելու համար նրանց վրա շարժվեցի և նրանց քաղաքը ավերեցի, բայց քո սիրու համար քաղաքը քեզ պարգևեցի։ Մի վախենա, չեմ ավերի»։ Այնուհետև նա կռվել է Յըլդըրըմ խանի դեմ, որի մանրամասնությունները տրված են 2-րդ հատորում*։

Հետագայում, երբ Չելեբի սուլթան Մուհամմեդը[14] փադիշահ է դառնում, ձեռնարկում է Սվազի նորոգմանը և բարեկարգմանը։ Սա երկու բերդ է կառուցում։ Այնուհետև, Բայազիդի[15] օրոք, Աջեմի շահը, Էրզրումի, Քեմախի, Սվազի և Թոքաթի շրջանները իր ժառանգական կալվածները համարելով գրավում է։ Ավելի ուշ, 921 (1515) թվականին այս վայրերը ետ են խլվում Աջեմի ձեռքից։

Երբ վեզիրության աստիճանով Սվազը տրվեց մեր Լֆենդիին՝ Մյուրթեզա փաշային, չորս ամսվա ընթացքում նվաստս ուղևորություն կատարեց Ուրֆայի, Ռաքայի, Հարանի, Մարաշի և Կեսարիայի շրջաններում և Սվազ գալով նրա քաղցր խոսակցությանն արժանացավ։

Սվազի իշխանությունները: Սուլեյմանի օրենսգրքով Սվազի վեզիրի փադիշահական խասը 9 անգամ 100 հազար ակչե է։ 48 զեամեթ և 928 թիմար ունի։ Սվազի էյալեթում կան հետևյալ սան-

---

* Տե՛ս II հատ., էջ 40 (ծանոթ. հեղինակի)։

ջաքները՝ Ամասիա, Չորում, Բոզոք, Դիվրիկի, Ջանիկ, Արաբկիր և Սվազ։ Սվազը սանջաքի փաշայի կենտրոնն է։ Գանձարանի դեֆթերդար չունի։ Դեֆթերի քեթխուդայի խասը 80200 ակչե է։ Թիմարի դեֆթերդարի խասը՝ 62550 ակչե է։ Ունի չավուշների քեթխուդա և չավուշների պետ։

Բոլոր սանջաքների զինվորները 3133 կըլըջ են։ Ջեամեթների և թիմարների տերերի զինված զինվորների թիվը, օրենքով, 10 հազար զինված և ընտրյալ զինվոր պետք է լինի։ Բոլոր այս զինվորների տարեկան եկամուտը 131 անգամ 100 հազար 7327 ակչե է։ Նահիյեներից՝ մոլլայի եկամուտը 6 հազար ղուրուշ է։ Վեզիրը օրենքով 40 հազար ղուրուշ ունի։ Հանեֆի դավանանքից կա շեյխ-ուլ-իսլամ։ Ունի նաև սիփահիների քեթխուդա, ենիչերիների սերդար, քաղաքի նայիբ, մուհթեսիբ, բաջտար և կափանջի։

Սվաս բերդի նկարագիրը: Քաղաքի հյուսիսային կողմի լեռնե րը կոչվում են Սիբ-Նիշան[16] և Թուզ-Ասար։ Այդ բարձր լեռների լանջերին է գտնվում այս մեծ քաղաքը։ Բոլոր տների ճակատները նայում են դեպի հարավ՝ Սվազի դաշտում գտնվող էյրի կամուրջի կողմը։

Թիմուրի ավերած ստորին բերդը գտնվում է հարթության վրա, որը 10 հազար հինգ հարյուր քայլ տարածություն է գրավում։ Ավերակ բերդի վրա կա 803 (1400) թվականի հիշատակությունը։ Բերդը թեև ավերակ, բայց շատ ամրակուռ է, քարուկրով է լըցված։ Խորասանի քարերով կառուցված մի մեծ բերդ է։ Ամեն կողմից ունի պարիսպներ և աշտարակներ։ Բայց որոշ տեղեր քանդված են, որոնք սակայն հեշտությամբ կարող են վերանորոգվել։ Այս քանդված բերդը հինգ դարպաս ունի։ Արևմուտքից Կայսերիի դարպասն է, արևելքից՝ Փալաշի դարպասը, նորից արևելքից՝ Թոքմաքի դարպասն է, հյուսիսից՝ Ջան-Ջունի դարպասը, հարավից՝ Սիլփորի դարպասը։ Այս բերդը դռան կարիք չունի, սայլեր կարող են ներս մտնել։ Ստորին բերդի վարոշում առանց այգիների ու պարտեզների ընդամենը 4800 տուն կա։ Սրանք դրախտանման ջրեր ունեն։ Քառասուն փողոց կա։ Կայսերիի դարպասի թաղամասը հայկական է. սա նոր թաղամաս է։ Կա նաև հույների թաղամաս։ Նշանավոր թաղամասերն են՝ Աղջա-Յուքե, Էօրթյուլու, Փեյքար, Քյոհնե-Ջիվան, Չարշը Մեյդան, Օղլան Չավուշ, Աղա դեյիրմանի, Բերգեջի-Թարլասի, Բալդըր Բաղայր, Սրք-շոբան, Կալե արդը, Հաջի Ջահիդ, Ուլու ջամի, Փուլուր-Թեփե։ Երկու բերդերը իրարից հեռու են մի նետի թռիչքի տարածությամբ։ Մեկը հարա-

վային կողմի վերին բերդն է, որ Զելեբի սուլթան Մուհամմեդն է կառուցել։ Քառակուսի ձևով է, առանց խրամի, միհարկանի, երկու դարպասով և գտնվում է մի հողաբլրի վրա։ Գործող դարպասը հարավում է, ստորին քաղաքին է նայում։ Իսկ դեպի արևելք բացվող դարպասը միշտ փակ է մնում։ Այստեղ երկու հարյուր բերդապահի համար բնակարաններ, մի ջամի, պաշարեղենի ամբար, ջրի ավազաններ, ռազմամթերանոց և 40 փոքր շահի թնդանոթ կան։ Այս բերդը նայում է ամբողջ քաղաքին։ Ավելի բարձր է, քան փաշայի բերդը։ Միջնաբերդը փաշայի բնակավայրն է։ Ամբողջ Ալ-Օսմանի երկրում միրմիրաններն ու վեզիրները մշտապես միջնաբերդումն են ապրել։ Սակայն Դիարբեքիրում և Սվազում փաշաների միջնաբերդում ապրելը սահմանված է օրենքով։ Սվազում փաշայի կողմից բնակեցված ստորին բերդը նայում է վերին բերդին։ Եթե փաշան ապստամբվի, վերին պարսպի թնդանոթներն, առանց ամաչելու, փաշայի պարիսպը քարուքանդ կանեն։ Փաշայի այս բերդը, Թիմուրի կողմից ավերվելուց առաջ, 586 (1190) թվականին նորոգել էր սուլթան Ալաեդդին Քեյկուբադ Սելջուկին։ Երկու հարկանի սրբատաշ քարերով կառուցված մի ամուր բերդ է։ Շրջագիծը 1500 քայլաչափ է։ Ունի խոր խանդակ, որ շրջապատում է բերդը։ Ունի ընդամենը 20 աշտարակ և 600 ատամնավոր պարսպապատ։ Պարիսպների բարձրությունը 27 արմունկաչափ է։ Ունի միայն 2 դարպաս, մեկը՝ դեպի հյուսիս, որ դուրս է գալիս դեպի լեռնային ճանապարհը և Շեհզադեների գերեզմանատունը։ Երկու շերտ երկաթյա դարպաս է։ Դարպասի ներսից պահպանություն են անում բերդակալ աղան և բերդապահ հսկիչները։ Մյուս դարպասը նայում է դեպի հարավ և ուղղված է դեպի ստորին քաղաքը։ Այս բերդի մեջ անպարտեզ և անայգի, բայց լավ շինված ընդամենը 300 հողածածկ տուն կա։ Փաշայի պալատը այստեղ է։ Նախկինում սա մի հասարակ դղյակ է եղել։ Մեր էֆենդին, Մյուրթեզա փաշան բազմաթիվ սենյակներ, դիվան-խանե, ներքին ղուլամների համար սենյակներ ու բաղնիք շինեց և դղյակը բարեզարդեց։ Բերդում կա նաև մի բաղնիք, մի ջամի և մի մեդրեսե։ Կա մոտ 10 խանութ։

Ստորին բերդը, վերին և ներքին բերդերից ավելի բարեշեն և զարդարված է։ Քանի որ փաշան այստեղ է ապրում, շաբաթական չորս անգամ մեծ դիվան է լինում և շատ մարդիկ են հավաքվում։ Այս բերդը գտնվելով լեռան լանջին, ունի դրախտանման ջրեր։ Սակայն վերին բերդը մարդկանց ճանապարհից դուրս է և ոչ ոք

այնտեղ չի գնում։ Սակայն ջելալիների և ջեմալիների վախից, քաղաքի ավագանիք իրենց ունեցած բոլոր թանկագին իրերը պահում են այդ վերին բերդում։ Սվազ քաղաքը իր երկու ներքին բերդերով, ստորին՝ Թիմուրի ավերած բերդով և վարոշով, ներսում և դրսում ընդամենը 6060 տուն ունի։

Սվազի ջամիները: *Ստորին վարոշի բեդիստանի մոտի Ուլու ջամին՝ երկարությամբ և լայնությամբ, երկու հարյուր ոտնաչափ է։ Հնագույն ջամի է։ Կառուցել է սուլթան Կըլըչ Արսլանը։ Ունի մեկ մինարե, որը հողածածկ և լավ կառուցված շինություն է։ Կան նաև Կըզըլ ջամին, Սիվաս էֆենդի ջամին, Մուսա էֆենդի ջամին, Քիլիսե ջամին և այլն...*

Դար-ուլ-թեղրիսի բնութագիրը[17]։ *Այս մեզրեսեն հայտնի է Կըզըլ Մեդրեսե անունով։ Իսլամական երկրներում գիտության այսպիսի վայր ո՛չ կառուցվել է և ո՛չ էլ կկառուցվի։ Երբ Թիմուրը տեսել է այդ հոյակապ շենքը՝ հիացել է։ Բերդի դարպասի նման մի բարձր դուռ ունի, որը տեսնողին հիացմունք է պատճառում։ Այս դռան աջ և ձախ կողմերի աստիճանների վրա վարպետը բարձրըյալն Աստծո ամենակարող ձեռքով ստեղծված այնպիսի ծաղիկներ է նկարել, որ նայողին թվում է, թե այդ ծաղիկները քամելիոնի նման տարբեր գույներ ունեն։ Դռան վրա գրված է [կառուցման] թվականը. «Բին-Կըլըչ Արսլան-բին Մեսուդ, տարի 569» (1173—1174)։ Ժամանակի ընթացքում մի քանի տեղեր ավերվել են։ Այս մեդրեսեն արժանի է դիտման և բոլոր ուղևորները նրա մասին գովասանքներ են գրել։ Մեդրեսեի վերնահարկում և ստորին հարկում 80 խցիկ կա։ Գիտություն ձեռք բերող էֆենդիները ձմռանը ստորին հարկում, իսկ ամռանը վերնահարկում են սովորում։ Ժամանակին այնպիսի հարուստ կալվածներ է ունեցել, որ իր վագֆների շնորհիվ ուսանողներին օրեկան երկու անգամ ճենապակյա պնակներով ընտիր կերակուրներ են տվել։ Սակայն ներկայումս ուսանողները զրկանքներով ապրող խեղճ մարդիկ են...*

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Սվազում եղած 140 դպրոցները, դերվիշական թեքիյեները[18] և փոքր խաները, հարյուրից ավելի բաղնիքները և մոտ 45 աղբյուրները։

Շուկան և բազարը: *Ուլու ջամիի մոտի բարեշեն և հարուստ բեդիստանը ունի հազարի չափ խանութներ։ Ունի խաղախորդարան, ոսկերիչների և կոշկակարների արհեստանոցներ։*

Սվազի կլիման հիանալի է։ Բնակիչները ցորենագույն են և մարմնապարար։ Ավազանին հագնում է թանկագին հագուստներ։ Միջակ կարողության տերերը՝ Լոնդոնի կերպասից և գույնզգույն բեղերից հագուստներ։ Խոսում են քրդերեն և թուրքերեն։ Տղամարդիկ շուտ են ծերանում։ Աղջիկները շատ գեղեցիկ են և բարեկազմ։ Ջուրը շատ ընտիր է։ Օդը շատ խիստ լինելու պատճառով այգիներ և պարտեզներ չկան։ Լեռները ծառազուրկ են և մերկ։ Քաղաքը գտնվում է չորրորդ գոտում և 17-րդ սովորական կլիմայում։ Բերքերից շատ առատ են ցորենը, գարին, սիսեռն ու ոսպը։ Մեկ քիլեն[19] 40 քիլե բերք է տալիս։ Մեկ օկկա[20] հացը, վեց օկկա կշռող մի ձիու կերը արժե մեկ ակչե։ Շատ կան վանդակաձև բանջարանոցներ։ Տնայնագործական արտադրությունից կարևոր է շատ նուրբ և սպիտակ բամբակի կտավը։ Մի զույգ հողաթափը և շուստը արժե 15 ակչե։ Պատրաստվում են շատ լավ վերմակի երեսներ, չթե գեղեցիկ վարագույրներ։

Ուտելիքներից և խմելիքներից ընտիր և սպիտակ հացը, գաթան, հավի մսից պատրաստված կարկանդակը ոչ մի տեղ չկան։ Նուռը գալիս է Մարաշից, ռուբը [դոշաբ]՝ Այնթափից, խաղողի շիրեն՝ Ամասիայից։

Այս քաղաքը փադիշահին ամեն տարի հազար հարյուր քիսե եկամուտ է տալիս, երկու հարյուր քիսե էլ վեզիրի եկամուտն է։ Բոլոր պատմագիրները Սվազ քաղաքն անվանել են Մայր-քաղաք։ Արդարև մայր-քաղաք է։ Եթե Արաբիայում կամ Ռումի երկրում և Հունաստանում սով լինի, այս քաղաքի հացահատիկը բոլորին կբավարարի։ Կարիքի դեպքում նրա հացահատիկը Մակեդոնիային էլ կփրկի։ Ամբողջ ժողովուրդն ուրախ է, երկիրը հարուստ և բարեշեն, ցանքսերը շատ առատ, բերքն ու առատությունն անհաշիվ, ժողովուրդն էլ շնորհալի։ Բնակչությունը վերին աստիճանի հյուրասեր է։ Պանդոկներում ապրող պանդուխտներին ամեն գիշեր հրավիրում են իրենց մոտ և պատվում։ Այս քաղաքն ամեն տեսակետից գովասանքի արժանի մի սրտաբաց քաղաք է։ Սվազ քաղաքի արևելքում գտնվում է Էրզրում քաղաքը, որը Նիկսարի կողմից 8 կոնաք հեռավորության վրա է։ Հյուսիսում՝ Ամասիան է, Մերզիֆունը (Մարզվանը) և Լադիկը չորս կոնաք հեռու են։ Արևմուտքում գտնվում է Թոքաթ բերդը, որը 3 կոնաք հեռու է։

Այնուհետև, Էվ. Չելեբին երկար նկարագրում է իսլամական ուխտատեղիները, նվիրական գերեզմանները և այդ առթիվ պատմում մի շարք առասպելներ։

Էվ. Չելեբին Սվազից մեկնում է դեպի Դիարբեքիր և նկարագրում այդ ճանապարհին պատահած վայրերը։

Դիվրիկի բերդի բնութագիրը: *Ըստ Ինվանի պատմության, առաջին հիմնադիրը եղել է վեհափառ Սուլեյմանը։ Դիվրիկ անունով մի դև է եղել: Բյուզգեյսեն Այդընջըք քաղաքում մի մեծ պալատ կառուցելու ժամանակ, այս Դիվրիկը չի ցանկանում ծառայել և Դիվրիկ կոչված ժայռի մի քարայրում կապկպված վիճակում տարիներով բանտարկված է մնում։ Հետագայում, վեհափառ Ջեքերիայի օրոք Սվազի բերդի տերը այստեղ բերդ է կառուցում և Սուլեյմանի բանտարկած դևի անունով կոչում է Դիվրիկ։ Այնուհետև մի մելիքից մի այլ մելիքի ձեռք է անցնում և ի վերջո, Ալ-Դանըշմենդիի օգնությամբ վեհափառ Օմարի որդիները և Մալաթիան նվաճող էմիր Ումրան-Լոկմանը գրավում են վերջին մելիքի ձեռքից։ Հետագայում, թեև նորից նրանց ձեռքն է անցնում, սակայն 487 (1094) թվականին ենթարկվում է Ալ-Սելջուկիների տիրապետությանը։ Ավելի ուշ Ալ-Օսմանի Չելեբի սուլթան Մուհամմեդ խանը իր ուժեղ բազուկով գրավում է այս շրջանները և իր իշխանության տակն առնում։ Սակայն Բայազիդ Վելիի օրոք Աջեմի շահը նվաճում է մինչև Սվազ և Թոքաթ ընկած վայրերը։ Ի վերջո, Չըլդըրի ճակատամարտից վերադարձող Սելիմ խանը [այս վայրերի] բնակչությանը իրեն ենթակա և հպատակ է դարձրել։*

[Դիվրիկը] Սվազի վիլայեթում սանջաքի բեյի կենտրոնն է։ Փաշայի զինվորների հետ միասին ընդամենը երկու հազար զինվոր ունի։ Ունի ալայի բեյ, չերիբաշի, յուզբաշի, շեյխ-ուլ իսլամ, նագիբ-ուլ էշրեֆ։ Փաշաներից և բեյերից բաղկացած ավագանին շատ է։ Ունի սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, քաղաքի նայիբ և բազմաթիվ ուլեմաներ և այուլեհաներ։ Կադին գյուղերից տարեկան վեց քիսե, իսկ փաշան, օրենքի համաձայն, 30 քիսե եկամուտ ունենի։ Ժողովուրդը վերին աստիճանի հնազանդ և հպատակ է։

Դիվրիկի բերդի նկարագիրը: *Եփրատ գետի եզերքին, դեպի երկինք սլացած սեպաձև ժայռի վրա հնուց կառուցված մի աննման բերդ է։ Վանի, Մակուի, Շինի, Մարդինի բերդերից հետո [իր ամրությամբ] գալիս է այս Դիվրիկի բերդը։ Այնպիսի բարձր մի բերդ է, որ պաշարելիս՝ միայն* աման *խնդրել տալով կարելի է գրավել։ Այլ ձևով, մի կողմից ականապատելով կամ ստորերկրյա անցքեր փորելով՝ անկարելի է գրավել։ Միակ միջոցը բերդում սով ստեղծելն է։ Սակայն ինչ էլ լինի, բնակչությունը ջրի կարիք չի զգա,*

որովհետև վերին միջնաբերդի ժայռի գագաթից մինչև Եփրատ գետը իջնող մի ջրի ճանապարհ կա, երկու հազար աստիճան ունեցող, քարից կտրված արհեստական սանդուղքով, որը չի կարելի լեզվով բացատրել և գրիչով նկարագրել։ Ջրի գնացողների և ջուր բերողների համար առանձին-առանձին ճանապարհներ կան։ Բացի այդ, բերդում կան անձրևի ջրի համար ջրամբար, ցորենի շտեմարաններ, ռազմամթերանոցներ, 300 հողածածկ տուն և մի ջամի։ Բերդը դեպի արևմուտք նայող և դեպի ստորին քաղաքը բացվող երկաթյա մի դարպաս ունի։ Բերդը քառանկյունի է և քարաշեն։ Աշտարակներն ու պարիսպներն ամրակուռ են։ Ենիչերիական օջախից բերդակալ և բերդապահ զինվորներ կան։ Զնայած երկրի ներսումն է և սահմանի վրա չգտնվելու պատճառով ապահով վայր է, բայց ջելալիների և ջեմալիների վախից, բավականաչափ ռազմամթերք և շաճի լավ թնդանոթներ ունի։ Տոնական և նվիրական օրերին թընդանոթներ են արձակում և քաղաքն աղմկում է։ Բերդի ներսում շինությունների հետք անգամ չկա։ Պարսպի տակով ջիրիդի հրապարակից կամուրջով անցնում ենք Եփրատ գետը և գալիս ենք Դիվրիկի պարսպի մոտ գտնվող Քեսթիֆան բերդը, որը Դիվրիկին հավասար կարևոր և ամուր բերդ է։ Կառուցել է կայսրի աղջիկներից Քեսթիֆան անունով մատաղ մի կույս։ Գտնվում է Եփրատ գետի մյուս ափին, արգավանդ և մաքուր հողի վրա։ Դիվրիկի և այս բերդի արանքով հոսում է գետը, որը Եփրատի վտակն է։ Այստեղից հոսում է դեպի Էգին բերդը, այնտեղից դեպի Արաբկիրի ու Չըմըշկածագի բերդերը, ապա՝ Չաթ անունով վայրում, խառնվում է Եփրատին։ Գետն այնքան էլ մեծ չէ, հուլիս ամսին կարելի է ձիով անցնել։ Դիվրիկի բնակիչները խմում են այդ գետի ջուրը։

Ստորին վարոշը: Բերդից դուրս բոլոր տները դարձած են դեպի արևմուտք։ Եփրատի եզերքին ընկած այգիներով ու պարտեզներով և 46 փողոցով մի քաղաք է։ Նշանավոր փողոցներն են՝ Ալի փաշա, Խամսի աղա, Բեքիր չավուշ, Գիվան և այլն։ Ապարանքներն են փաշայի շուկայի ծայրում գտնվող, ձորի դիմացը՝ Ալի փաշայի, շուկայի մյուս ծայրում՝ Մուհամմեդ աղայի ապարանքները։ Դատարանը գտնվում է Ուլու Ջամիի մոտ։

Ջամիները: Ամենահինը Ուլու ջամին է, որն ունի երեք դուռ և մեկ հիանալի մինարե. կառուցել է Ալ-Սելջուկներից սուլթան Ալաեդդինը։ Այս ջամիի պատի վրա գրված է այսպիսի պատմություն. «Նրա շինության համար ծախսվել է 7 ռումի խարաջ»[21]։ Վարպետն այս ջամիի վրա այնպիսի աշխատանք է թափել, պատերի

վրա այնպիսի բուքալեմուն նկարներ է նկարել, որ այս ջամիին չի կարող հավասարվել ոչ Այա-Սոֆիան, ոչ Բրուսայի Ուլու-ջամին, ոչ Սինոպի Նախշուն մինբերը[22], ոչ Հունաստանի Աթենքի էբու-էլ-ֆեթհի[23] ջամին և ոչ էլ Բուդինի[24] տերիտորիայում գտնվող էսթերգան բերդի ջամին։ Մի խոսքով լեզուն անկարող է տալ այս ջամիի գովաբանությունը։ Այս աղոթարանում գիշեր-ցերեկ հոծ բազմություն է լինում...

Բնակիչները: Այաններն ու ազնվականները շատ են։ Առհասարակ բնակիչները հյուրասեր են։ Ոչ մի գիշեր առանց հյուրի չեն կարող մնալ։ Ժողովուրդը բաղկացած է ռում ռայաներից, թուրքմեններից, քրդերից և այլն։

Մալաթիան գտնվում է Դիվրիկի հարավում՝ մեկ մենզիլ հեռավորության վրա։ Դիվրիկի շրջապատում ապրող ռայաների և բերայայի[25] սովորական հարկերը[26] ամբողջովին հավաքում է Մալաթիայի հարկահավաքը։ Դիվրիկը գտնվում է Եփրատ գետի եզերքին։ Յումջա անունով մի տեսակ կարճ և հաստ փայտ կա, որը կտրում և պատրաստում են վերին Եփրատի լեռների վրա։ Ամեն մարդ իր նշանն է դնում այդ փայտերի վրա և ապա փոխադրում են Եփրատ գետով։ Քաղաքի ծայրամասում գտնվող թմբերի մոտ այդ փայտերը կանգնեցնում են և ամեն մարդ իր նշանով փայտը վերցնում է և փոխադրում։

Քարե բերդի, այսինքն էգին [Ակն] քաղաքի բնութագիրը: Այս քաղաքը էգին է կոչվում, որովհետև կառուցվել է Կասրոխին (?) կայսրի էգին (կամ էկին) անունով աղջկա կողմից։ Այս քաղաքը գրավել է վեհափառ Օմերի որդիներից էմին Օմեր Բին-Լոկմանը։ Հետագայում քաղաքն անցել է քաֆիրների ձեռքը, բայց Հարուն-էլ-Ռաշիդի օրոք Սեյդ Ջաֆեր Բաթալ Ղազին նորից գրավել է այն։ Ավելի ուշ քաֆիրները նորից են նվաճել։ Ի վերջո այս քաղաքը գրավել է Ալ-Սելջուկ սուլթան Ալաեդդինը։ Սելջուկների իշխանության վերջում, նորից անցել է քաֆիրների ձեռքը։ Թիմուրի դեպքից հետո սուլթան Ջելեբին քաֆիրներից գրավել է ամանով:

Մինչև հիմա մոտ 300 քրիստոնյաներ ազատված են սովորական տուրքերից։ Բերդը գտնվում է Եփրատ գետի եզերքի մի ժայռի վրա և կառուցված է քառակուսի ձևով։ Գտնվելով երկրի ներսում այնքան էլ բարեկարգ չէ։ Դեպի Եփրատ ջրի ճանապարհ ունի։ Կան բավականաչափ ամրություններ։ Քաղաքը, [սուլթան] Սուլեյման խանի աշխարհագրով մտնում է Սվազի էյալեթի մեջ։ Ունի սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, բերդակալ և բերդապահ զինվորներ, մյուհթեսիբ և քաղաքի նայիբ։

Մալաթիան այստեղից մեկ կոնաք հեռավորության վրա է և գյուղերում ապրող ռայաների սովորական տուրքերը գանձում է Մալաթիայի հարկահավաքը։ Քաղաքի շինությունների մեծ մասը ժայռերի վրա է, իսկ այգիները ցածում են՝ Եփրատ գետի եզերքին։ Քաղաքի մոտ, Եփրատ գետի վրա մի կամուրջ կա, որ կոչվում է Բուրմա-Քյոփրյու։ Բերդում և ստորին քաղաքում հողածածկ, բայց լավ շինված մոտ 1000 տուն կա։ Կան նաև բավականաչափ ջամիներ, մզկիթներ, 3 մեդրեսե և 40 դպրոց։ Արտադրանքից հայտնի է էգինի աղեղը, բազարում լիքն են աղեղնագործները։ Բնակիչներն ընդհանրապես նետաձիգ լինելու պատճառով՝ այս քաղաքը ստացել է նետաձիգների վայր անունը։ Բոլոր զինվորները լավ աղեղաձիգներ և գոռոզ ու ըմբոստ քաջեր են։

Այստեղից շեն վայրերով շարժվեցինք դեպի արևելք և 7 ժամ հետո հասանք Արաբկիր քաղաքը։

Արաբկիր քաղաքի բնութագիրը: *Առաջին հիմնադիրը հայտնի չէ։ Երբ վեհափառ Մարգարեն 7 տարեկան է լինում, արաբ Հաթեմ-Դային ձանձրացած Նաշիրվանի հոգսից, Մեդինեից գալիս է Մեքքա, տեսնվում իր պապի՝ Աբդյուլ Մեթալիբի հետ, և նրա տված արտոնություններով գալիս է և բնակություն հաստատում Արաբկիրում։ Այստեղ զինվորներ է հավաքում և հաղթելով Նաշիրվանին, իր ձեռք բերած ավարով բարեշինում է այս քաղաքը։ Այդ պատճառով էլ քաղաքը կոչվել է Արաբկիր*[2]։ *Մի շարք իշխողների ձեռքից-ձեռք անցնելով, ի վերջո անցնում է սելջուկներին, իսկ ամենից հետո գրավում է Չելեբի սուլթան Մուհամմեդ խանը։*

Ըստ սուլթան Սուլեյմանի աշխարհահամարի Սվազի էյալեթում սանջաքի կենտրոն է։ Ունի ալայի բեյ և չերիբաշի։ Նվիրական պատերազմի ժամանակ 2 հազար զինված զինվոր կտա։ Փաշան, օրենքի համաձայն, 10 հազար ղուրուշ, իսկ կադին՝ տարեկան 2 հազար ղուրուշ եկամուտ ունեն։ Ունի շեյխ-ուլ-իսլամ, Նագիբ-ուլ-շերիֆ, քեթխուդա, ենիչերիի սերդար, բերդակալ և բերդապահ զինվորներ, մյուհթեսիբ և քաղաքի սուբաշի։

Արաբկիրի բերդի բնութագիրը: *Բերդը շենացրել է Հաթեմ-Դային, որն իշխել է 7 տարի։ Սա հաստատացրել է երկրի ժողովրդին, ապահովել շնորհներով ու բարիքներով, բանակով նորից դուրս է եկել Նաշիրվանի դեմ։ Երբ հասել է Շամի մոտի Մեզիրեբ գյուղը, լուր է ստացել, որ Նաշիրվանը և Աբդյուլ Մեթալիբը Մեքքայում մահացել են։ Ինքն էլ մահանում է Մեզիրեբի մոտ։ Աբդյուլ Մեթա-*

լիրի, Նաշիրվանի և Հաթեմի մահը տեղի է ունեցել մի շաբաթվա ընթացքում։

Եփրատ գետը հոսելով Արաբկիրի մոտով, ամբողջապես ոռոգում է այդ դաշտը, որի շնորհիվ էլ շեն ու հարուստ է դարձել։

* * *

Այստեղից շարժվեցինք դեպի արևելք և իջևանեցինք Դութլիջե գյուղում։ Եփրատի եզերքին ընկած շեն գյուղ է։ Այստեղից այն կողմ սկսվում է Դիարբեքիրի էյալեթը և Չմշկեզեքի [Չմշկածագի] տերիտորիան։ Այդտեղից հարթ դաշտավայրով դարձյալ դեպի արևելք գնացինք, նավակներով անցանք Մուրադ գետը և դիմացի ափին նորից եկանք Դիարբեքիրի էյալեթի Ըշիվան բերդը։

Խարփութի [Խարբերդ] տերիտորիայի մի վայրում Եփրատ և Մուրադ գետերը իրարից մոտ են հոսում և մեկ մենզիլ հեռավորություն անցնելով, Չաթ կոչված վայրում միանում են։ Այդ պատճառով, մեկ օրվա ընթացքում անցանք Եփրատն ու Մուրադը։ Անցնելով Բաղինկ գյուղով, 8 ժամից հետո հասանք Խարփութի [Խարբերդ] բերդը։

(էջ 214—216)

Խար-բիդ, այսինքն՝ Խարփութի [Խարբերդի] բերդի բնութագիրը։ *Ըստ Մուկադդեսի*[28] *պատմության, վեհափառ Ջեքերիյեի դարում կառուցել է Բախտ-ուլ-Նասրը*[29]*։ Մի քանի քրիստոնյա ազգեր էշի պաշտամունք են ունեցել, որի համար այս քաղաքը պարսկերեն լեզվով կոչվել է* Դար-ի Խարփութ[30]: *Մի ուրիշ ավանդությամբ այստեղ աշակերտների վրա ստվեր գցող մի փշոտ ուռենի է եղել և այդ պատճառով էլ կոչվել է* Խարբիտ[31]*։ Մի ուրիշ բացատրությամբ՝ հողում փշեր աճելու պատճառով* Խար-բերիդ *(այսինքն՝ փուշ աճեցնող) է կոչվել։ Ալ-Օսմանի դեֆթերխանեում արձանագրված է* Հասան-Զիյադ էոլքեսի[32] *[Հասան Զիյադի երկիր]։*

Կայսերական արշավանքի ժամանակ, հսկա բազմությամբ բանակի մեջ, որևէ քաղաքի բնակչի նկատի ունենալով կանչում են պայմանական անուններով, օրինակ՝ Հալեպի քաղաքացիներին կանչում են ով էճեդ, *սվազցիներին՝* ռումռում, *դիարբեքիրցիներին՝* ամեդ-ամեդ, *իսկ խարփութցիներին՝* հասան-զադե:

Այս բերդը ժամանակի ընթացքում մի մելիքի ձեռքից անցել է մյուս մելիքին, և ի վերջո, Չըլդըրի գրավումից հետո, սուլթան Սելիմի բարձր վեզիրը՝ Բըյըքլի վեզիր Մուհամմեդ-փաշան, սերդար

նշանակվելուց հետո, Դիարբեքիրը գրավելու ժամանակ Խարփութն էլ է նրան հպատակվել և բերդը ամանով հանձնվել է։ Ներկայումս Դիարբեքիրի էյալեթում սանջաքի բեյի կենտրոնն է։ Ունի ալայի բեյ. չերիբաշի և յուզբաշի։ Պատերազմի ժամանակ, բեյի զինվորների հետ միասին, ընդամենը 2 հազար 200 զինված զինվոր է տալիս։ Կազին նահիյեներից տարեկան 6 քիսե եկամուտ է ստանում։ Սանջաքի բեյը 20 կազայից 18 հազար ղուրուշ եկամուտ է ստանում։ Ունի մյուֆթի, նագիբ-ուլ-էշրեֆ, սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, քաղաքի սուբաշի և մյուհթեսիբ։

Խարբերդի բերդի նկարագիրը: Ներքին բերդը դեպի երկինք խոյացող մի տարօրինակ սեպաձև ժայռի վրա կառուցված քառանկյունի քարաշեն և ամրակուռ մի բերդ է։ Ունի մի դարպաս։ Բերդում մաքուր հողով ծածկված մոտ հազար տուն կա։ Ունի նաև հին, մեկ մինարեով ջամի։ Ջրամբարները և հացահատիկի շտեմարանները նմանապես այստեղ են։ Ունի բերդակալ, քեթխուդա, բերդապահ զինվորներ, նվագախումբ, բավականաչափ ռազմամթերք, շահի լավ թնդանոթներ։ Թիմուրն առաջին անգամ չի կարողացել գրավել, բայց հետո վերադարձի ժամանակ պաշարել է և ամանով գրավել։ Վերին աստիճանի ամուր և բարձր մի բերդ է։ Թեև շրջակայքում բարձր լեռներ կան, սակայն դրանից վնաս չի կրում, որովհետև միջնաբերդը կառուցված է սեպ ժայռի վրա և շրջապատում խրամներ ունի։ Բերդի դարպասի մոտի բաղնիքի շենքը մաքուր և գրավիչ է։

Արտաքին բերդը: Սա ներքին բերդի համար հանդիսանում է վարոշ, որը հին ժամանակ նույնպես ամրակուռ բերդ է եղել։ Ներկայումս վերանորոգման կարիք ունի։ Երկու դարպաս ունի, մեկը դեպի արևմուտք, մյուսը դեպի հարավ։ Բերդում գտնվող ավազանու տները խիստ բարեշեն և ճոխ են։ Բերդում աչքի են ընկնում Մենսեր-զադեի, Քյոսե-զադեի ապարանքները։

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Խարբերդի ջամիները, մեդրեսեները և բաղնիքները։

Շուկան և բազարը: Աճուրդի բազարում ընդամենը 600 խանութ կա, որոնք շատ ճոխ և բարեկարգ են։ Ամենից լավ թամբագործների խանութներն են, որտեղ շատ գեղեցիկ թամբեր են պատրաստում։ Քաղաքը գտնվում է Քուրդիստանի մոտ։ Օդի և եղանակի լավ լինելու պատճառով մարդիկ երիտասարդ են մնում։ Ժողովուրդը խոսում է քրդերեն և թուրքերեն։ Ռայաների մեծամասնությունը քրդեր և թուրքեր են։

Ուտելիքները և խմիչքները: *Հայտնի են այստեղի սպիտակ և ընտիր հացը, չյորեքը և կարկանդակը։ Այգիներում Հեղարի անունով խնձոր է աճում, որ շատ հայտնի է և Ստամբուլի մոտի Կոջաէլի սանջաքի* **մեսքեթե** *խնձորի նման անուշաբույր և կլոր խնձոր է։ Խաղողի այգիներում աճող* **էղնրի** *խաղողը Շամի* **զինի** *խաղողից ավելի համեղ է։*

Խարբերդի լճի հատկանիշները: *Քաղաքի արևմտյան կողմում, քաղաքից երկու ժամվա հեռավորության վրա այգիներով և պարտեզներով շրջապատված մի լիճ կա։ Երկու մարդ մեկ օրում կարող են արագորեն անցնել նրա շրջապատը։ Օձի թույնի նման դառը ջուր ունի։ Մի քանի պատմագիրներ ասում են, որ այս լճի ակունքը Վանա ծովն է [լիճը], որտեղից ջուրը հողի տակից հոսելով թափվում է այստեղ։ Եվ իսկապես, Վանա ծովի ձկներից այս լճումն էլ կան... Այս լճում մի կղզի կա և կղզու վրա՝ մի գյուղ։ Մոտավորապես 300 տնից բաղկացած այս գյուղի բոլոր բնակիչները նկարարներ և դերձակներ են։ Հիշյալ լճի շրջակայքի Հաբուս և այլ գյուղերից ժողովուրդը նավակներով գալիս և դիտում է այս կղզին։ Կղզու վրա մի վանք կա։ Պաշտամունքի արժանացած էշը այստեղ է մեռել և պատրիարքն ու վարդապետները էշի դիակը մումիա են դարձրել և գաղտնի պահել վանքում՝ գետնի տակ։ Այդ մասին վանքի ծառայողներն անգամ չգիտեն։*

Մեզ ասացին՝ «Ջորքոտանին իր ամբողջ մարմնով մինչև հիմա կենդանի է, աչքերը փայլում են գիշերային ճրագի նման։ Ոսկեփայլ քուրձով մի ավանակ է»։ Բայց նվաստս չտեսա։ Պատմում են, որ հնում քրիստոնյա ազգերը այդ ավանակին պաշտել են։

Տարօրինակ սքանչելիք: *Խարբերդի հարավային կողմում, այգիների մեջ, սեպաձև ժայռերի վրա մեծ քարայրներ կան։ Հուլիս ամսին այստեղից հոսող ջրերը սառչում և սառույց են կապում: Սաստիկ շոգի ժամանակ ժողովուրդը այդ սառույցը օգտագործում է և սրտերը հովացնում, իսկ երբ ամառվա ամիսները անցնում են և սկսվում են ձմռան սառնամանիքները, այդ սառույցը ամբողջովին հալվում է և ջուրը բաղնիքի ջրի պես տաք է լինում։ Քարայրների ներսում այնքան տաք է լինում, որ բազմաթիվ օտարականներ գնում են այնտեղ և բաղնիքի նման* **օրինական ղուսլ**[33] *կատարում։ Տարօրինակն այն է, որ սաստիկ շոգերի ժամանակ սառն, իսկ ձմռանը տաք է լինում...*

Մի այլ սքանչելիք: *Քաղաքի մոտ գտնվող դաշտով մի աղբյուր է հոսում: Ամեն տարի, մոտ և հեռու տեղերից հարուստներ, պան-*

դուխտներ են գալիս և ապրում են այս դաշտում, իրենց վրանների մեջ։ Սկզբում, երեք օր աղի և ծանր կերակուրներ չեն ուտում, և պաս են պահում։ Չորրորդ օրը, վաղ առավոտյան երբ մի փոքր բաժակ խմում են այդ աղբյուրի ջրից, երեք անգամ փորները քշում է։ Մի փոքր բաժակ էլ են խմում՝ նորից փորները 3 անգամ քշում է։ Այսպես տասը բաժակ խմող ամուր կազմվածք ունեցող մարդիկ անգամ 30 անգամ դուրս են գնում։ Մի քանիսը սիրտ են թափում և ամեն տեսակ ցավից, ախտից ու զանազան հիվանդություններից բոլորովին ազատվում են։ Այս պատճառով Խարբերդի ժողովուրդը առողջակազմ, կարմրադեմ և փահլևանի նման առողջ մարդիկ են։ Շնորհիվ այդ ջրի, նրանք բժիշկների կարիք բոլորովին չեն զգում։

Խարբերդ քաղաքից մեկնեցինք դեպի արևելք և բարեշեն գյուղերով ու քարքարոտ վայրերով, Մուրադ գետն էլ նավակով անցնելով, հասանք Փերթեք հնագույն քաղաքը (Պերտեք)։

(Էջ 216—220)

Փէրբէֆ ֆալաֆի պատկերը: Փերթեք է կոչվել, որովհետև մոնղոլական լեզվով արծիվը կոչվում է Փէրբէֆ: Այս քաղաքի բերդի վրա մի բռնզաձույլ արծիվ է եղել։ Ամեն տարի Նևրուզին արծիվը երգել է և ամբողջ քուրդ ժողովրդին բազարում հավաքվելու նշան տվել։ Այս պատճառով էլ քաղաքը կոչվել է Փերթեք։ Մարգարեի հիջրեթի 9-րդ դարում Խալիդ բին-Վելիդը գրավելով այս բերդն ու Դիարբեքիրի շրջանը, այդ թռչունի քանդակը խորտակել է։ Մինչև հիմա էլ հայտնի է այդ կախարդական թռչունի տեղը բերդի գագաթին։ Առաջին հիմնադիրը Աքասևրետենն է եղել։ Հետագայում, մի մելիքի ձեռքից անցել է մյուս մելիքին։ Մոլլա Իդրիս-ի Բիթլիսիի օժանդակությամբ Փերթեքի իշխանը Սելիմ խանին սկզբում հպատակություն է հայտնել և բերդը Բըյքլի Մուհամմեդ փաշային հանձնելուց հետո, նորից մշտապես տրվել է իշխանին, որպես յուրթլուք և օջաքլըք: Ներկայումս բեյի սեփականությունն է։ Երջանիկ Աւիթանեից ուղարկված փադիշահական հրամանագրերում բեյին մեծաշուք ջեմ[34] տիտղոսն է տրվում և միրլիվա չի գրվում, որովհետև հյուքումեթ է։ Բերքից ստացված եկամուտները նրան են հատկացվում իբրև խաս և խասերի համաձայն՝ զինվոր հավաքելով, պատերազմի է գնում։ Երբ բեյի գերդաստանը վերանում է, Օսմանյան պետության կողմից սանջաքը ուրիշին է շնորհվում։ Սուլեյմանի օրենքով խասը 380.000 ակչե է։ Նվիրական պատերազմի ժամանակ բեյը 800 զինվոր է ունենում։ Օրենքի համաձայն բեյի

տարեկան եկամուտը 10 քիսե է։ Ունի քեթխուդա, սերդար, մյուֆթի. նագիբ և այլն չունի, բայց քաղաքի սուբաշի ունի։ Բերդը գտնվում է Մուրադ գետի եզերքին, սեպաձև ժայռի վրա և քառակուսի փոքր բերդ է։ Բերդակալը և բերդապահ զինվորները, ռազմամթերքը փադիշահի կողմից չեն նշանակվում, բեյն է տնօրինում։ Այստեղից նորից շարժվեցինք դեպի արևելք և քարքարոտ, դժվարին ճանապարհներով մի մենզիլ տարածություն անցնելով, հասանք Սաղմանի բերդը։

Սաղմանի բերդի նկարագիրը: *Խալիֆ Իդրիսի ասելով Աբբասիների օրոք Կարա Ահմեդը, այսինքն՝ Դիարբեքիրի մելիքը, այս ժայռերի վրա կաքավ որսալիս, մի ժայռի կողմից կովի (սաղմալ) ձայն է լսել։ Մելիքն այդ ժայռի վրա զոհեր է մատուցել և ժայռը երկու մասի է բաժանվել։ Մի օր և մի ցերեկ Թակիանոսի ոսկիներ են հոսել և մելիքն այդ հարստությամբ կառուցել է այս բերդը և անունը Սաղման է դրել (այս բառը* սաղմալ *բառի աղավաղված ձևն է)։ Իսկ Բիթլիսի Աբդալ խանի ասելով այս բերդը կառուցել է Սաղման անունով մի քուրդ բեյ։ Աբդալ խանի պապերից մեկը՝ Շեբեֆ խանը, այստեղ խանություն է արել։ Այդ մասին ավանդություն կա։*

Այս բերդը նվաճել է Խալիդ բին-Վելիդը և 922 (1516) թվականին Մոլլա Իդրիսի և Բըյքլի Մուհամմեդ փաշայի ձեռքով հպատակվել է Սելիմ խանին։ Այս բերդը նմանապես Դիարբեքիրի էյալեթում է և իբրև յուրթլուք և օջաքլըք *գտնվում է սանջաքի բեյի իշխանության տակ։ Թիմարներ և զեամեթներ չունի։ Օրենքով բեյի խասը 367.057 ակչե է։ Ունի 850 զինվոր, մյուֆթի, նագիբ, քեթխուդա, ենիչերիի սերդար։ Բոլորը Դիարբեքիրումն են։ 150 ակչեի աստիճանով կադի և քաղաքային մյուհթեսիբ ունի։ Բերդապահը նշանակվում է բեյի կողմից։ Պարիսպը գտնվում է Մուրադ գետի եզերքին, սեպաձև ժայռի վրա։*

Այստեղից դուրս գալով եկանք Ձմշկեզեք [Ձմշկածագ] բերդը։

Ջեմշիդի ղուլամներից մեկը փախչում և ապաստանում է այս անառիկ երկրում ու մեծ քանակությամբ հարստություն է ձեռք բերում։ Ջեմշիդի վախից նա կառուցում է այս բերդը և անվանում Ձմշկեզեք, որը Ջեմշիդ Քենզեքի (?) աղավաղված ձևն է։

Հետագայում անցել է մի շարք մելիքների ձեռքը։ Ի վերջո բնակիչները հպատակվել են Սելիմ խանին։

Դիարբեքիրի էյալեթում սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյի խասը 334.223 ակչե է. ունի երկու զեամեթ և 8 թիմար, ալայի բեյ

և չերիբաշի։ Պատերազմի ժամանակ բեյի դրոշակի տակ ընդամենը հավաքվում է 100 հազար[35] զինված զինվոր։ 150 ակչեով կազա է։ Ունի մյուֆթի, նադիբ և մյուհթեսիբ, ինչպես նաև բերդակալ և բերդապահ զինվորներ։ Մուրադից [գետից] հեռու ընկած Օաջըք նահիյեի Մենզեր Բաբա-Ազիզի լեռներից սկիզբ առնող մի փոքր գետ խառնվում է Մուրադ գետին։ Այս գետն ամեն տարի, սկսած օգոստոսից, 40 օր դառն և 40 օր անուշահամ ջրով է հոսում։ Գետում կա շատ համեղ կարմրախայտ ձուկ։ Ձկնորսները ուխտատեղիից ցած, որսում են այդ ձուկը։ Իսկ եթե ուխտատեղիից վերև որսան, այդ ձկները չեն եփվի։ Գետի հյուսիսում մի լեռ կա, որի վրա Մենզեր Բաբան մի ծառ է տնկել. ով այդ ծառը կտրի, կվնասվի...

Այստեղից դուրս գալով եկանք Փալուի բերդը։

Փալուի բերդի նկարագիրը: Սրա բեյը 921 (1515) թվականին հպատակվելով Սելիմ խանի վեզիրին՝ Բեյքլի Մուհամմեդ փաշային, երկիրը նորից շնորհվել է նրան։ Ներկայումս Դիարբեքիրի էյալեթում մշտական հյուքումեթ է։ Հրամաններում սրանց էլ մեծաշուք օեմ տիտղոսն է տրվում։ Էյալեթի եկամուտը նրանց հատկացված է իբրև կայսերական խաս։ Այս իշխանության մեջ թիմար, զեամեթ, ալայի բեյ և չերիբաշի չկա։ Նվիրական պատերազմի ժամանակ իշխողը պատերազմի է գնում 2000 զինվորով։ Զինվորները զինված են։ Մազոտ գլուխ և կարմրավուն մորուք ունեն։ Ալ գույնի գլխակապով, յուրօրինակ դեմքով կտրիճ տղամարդիկ են։ Նրանք կռվի են գնում կանոնավոր խմբերով, տասնյակներով, հարյուրակներով և հազարակներով։ Ուրիշ պաշտոններ չկան, բացի մյուհթեսիբից և քաղաքի վոյեվոդայից[36]։

Փալուի բերդը գտնվում է Մուրադ գետի եզերքին, գլուխը հաղթականորեն դեպի երկնակամար բարձրացրած քարաշեն մի բերդ է։ Ոչ մի կողմից մատույց չունի և այդ պատճառով էլ անհնարին է գրավել այն։ Մինչև անգամ Թիմուրը տեսնելով [այս բերդը], բոլորովին ուշադրություն չի դարձրել, անցել-գնացել է։ Բերդում Իբրահիմ բեյից և զինվորներից բացի ոչ ոք չի ապրում և ապրելն էլ անհնարին է։ Ամեն անգամ բերդ բարձրանալը մեծ տանջանք է։ Բերդում մի ջամի, ռազմամթերքի պահեստ և ջրամբարներ կան։ Ժայռերի միջից դեպի Մուրադ գետը իջնող մի ջրի ճամփա կա։ Բոլոր աշտարակներն ու պարիսպները խիստ ամրակուռ են։ Երկաթից շինված դարպասը նույնպես շատ ամրակուռ է։

Փալուի վարոշը: Այս վարոշն ընկած է Մուրադ գետի ափին և

մոտ հալար հողածածկ տուն ունի։ Էրղանին և Էգինը Փալույից դեպի արևմուտք մի-մի կոնաք հեռավորության վրա են, հյուսիսից Խարբերդը[37] մեկ մենզիլ է։ Հարավից Դիարբեքիրն է՝ երկու մենզիլ հեռավորության վրա։

Այս բերդի ետևում Բազեն անունով դրախտանման մի գյուղ կա։ Քուրդիստանում շատ հայտնի այս զբոսավայրը Փալուի բեյի խասն է։ Այստեղ ժայռից վճիտ մի գետակ է բխում, որն անմահական ջուր ունի։ Շաթ-էլ Արաբը երեք ակունք ունի. մեկը սա է։ Իսքենդերը [Ալեքսանդրը] այստեղ մի հավաքավայր է ունեցել։ Շաթի մի ճյուղն էլ Էրղանիի մոտ գտնվող Թախթի մեշան կոչված վայրից հոսող վճիտ և աննման գետակն է։ Իսկ մյուս ճյուղը Խարբերդի և Էրղանիի միջով, Դեմիր Կափու և Ջինարլիի ձորերից հոսելով անցնում է Բերբեդինջ կոչված մեծ կամուրջի տակով, միանում է մի շարք գետերի և խառնվում է Կարա-Քյոփրյույի մոտով հոսող գետին։ Ապա հոսում է Դիարբեքիրի մոտի ժայռի մոտով, ոռոգում բանջարանոցները, 170 բերդաքաղաքներ ու գյուղեր և մինչև դրախտաշեն Բաղդատ հասնելը միանում է 150 գետերի։ Բաղդատից հետո՝ Դիալե, Ջերգե, Հեզեբ Ալի և այլ, մոտ 60 մեծ գետեր ընդունելով իր մեջ, Բասրայից 3 մենզիլ վերև, Ծուրնա բերդի մոտ, Եփրատը միանում է Ֆաթին, որից հետո ստանում է Շաթ-էլ-Արաբ անունը։ Բասրայում հնդկական և պորտուգալական նավերը գալիս և մտնում են [գետին]...

Փալուի բերդի մոտով հոսող գետը մոտ է Մուրադ գետի ակունքին։ Էրզրումի և Մուշի դաշտում, Բինգյոլի լեռներում հազարից ավելի գետակներ միանալով և Մուշի դաշտով հոսելով՝ անցնում են Փալուի բերդի մոտով։ Իզվիլի կոչված վայրի Ջաթ անունով գյուղում խառնվում է Եփրատին և հոսում ներքև։

Փալուում, Իբրահիմ բեյից նվերներ և ուղեկիցներ վերցնելով անցանք սեպ և քարքարոտ վայրերով, բարեշեն գյուղերի հանդիպեցինք և հասանք Ջապաքջուր բերդը (Ծապաղ ջուր)։

Չապաքջուրի մեծ բերդի գովասանքը: Ըստ Մուքատտեսեի պատմության նշանավոր Իսքենդեր Զյուլկարնեյնը[38], երկու եղջյուր է ունեցել (?), որի համար շատ է տանջվել։ Հազարավոր իմաստուններ չեն կարողացել գտնել դրա բուժումը։ Դրանից հետո, հույս ունենալով, որ կարող է բուժվել, Իսքենդերը սկսել է անմահական ջուր փնտրել։ Բայց դարձյալ չի բուժվել: Բասրայում Շաթ-էլ-Արաբ գետից ջուր է խմել և փորի ցավերը դադարել են ու եղջյուրներն էլ սկսել են փոքրանալ։ Հետո Շաթից ջուր խմելով եկել

հասել է Շաթի ակունքի մոտ գտնվող Դիարբեքիր։ Այնտեղից էլ գնացել է դեպի Բեթման գետը, որից օգուտ չի ստացել։ Այնուհետև այդ գետին խառնվող Քեֆենդիր գետից է խմել ու շատ է հավանել։ Ջուր խմելով այս գետի եզերքով հասել է Բիթլիս քաղաքը։ Այստեղ գետը երկու ճյուղի է բաժանվել։ Օնեչ ձորով հոսող գետից էլ է խմել, բայց անօգուտ։ Երբ խմել է Բիթլիսի բերդի աջ կողմից հոսող վտակից, բերդի ժայռի ստորոտում անմիջապես հանգիստ քուն է մտել։ Երբ արթնացել է, այդ գետի ակունքից 7 օր ջուր է խմել և եղջյուրներից մեկը ընկել է, մյուսը մնացել (՞)։ Ասում է. «Վա՜, Բասրայից սկսած իմ խմած անմահական ջրերը այս զուլալ ջրից են»։ Իր Բիթլիս անունով գանձապահին հազարավոր քիսեներով հարստություն է տալիս և հրամայում. «Շուտով այս վայրում ինձ համար այնպիսի մի բերդ կառուցիր, որ ես ինքս պաշարեմ, բայց չկարողանամ գրավել»։ Գանձապահ Բիթլիսը, երբ բերդի կառուցումով է զբաղված լինում, Իսքենդերը, գիտնականների խորհրդով, ճանապարհորդության է դուրս գալիս։ Բիթլիսից մի օրվա ընթացքում հասնում է Մուշի դաշտը, այնտեղից էլ անցնելով մենզիլներով, հասնում է Ջեպաքջուրի լեռան ստորոտին և այստեղ կանգնեցնում է իր իսքենդերական [արքայական] վրանը ու հաճելի և ուրախ ժամանակ անցկացնում։ Ընկնում է նաև մյուս եղջյուրը։ Տեսնելով այս ջրի օգտակարությունը, Մուքատտեսիի ասելով. գետը կոչում է Ջեպամջուր, որ նշանակում է Դրախտի ջուր: Նա, իմաստուններից իր մոտ է կանչում Ֆիլկոսին և ասում. «Վաղուց ի վեր է ինչ դուք իմ նեդիմն եք[39] և չկարողացաք ինձ բուժել։ Դարմանը իր դրախտային գետերից բարձրյալ Աստվածը տվեց։ Շուտով այստեղ ինձ համար մի բերդ կառուցեք և անունը Ջեպաքջուր դրեք»: Այս հրամանը տրվելուն պես սկսում են բերդը կառուցել և 315 օրվա ընթացքում ավարտում են։

Այս բերդը կառուցված է Մուրադ գետի եզերքին և դեպի երկնակամարը խոյացած մի հիանալի բերդ է. իսկապես հնակառույց է և կարծես Ֆերհադի ձեռքով է կառուցվել։ Աշտարակներն ու պարիսպները կառուցված են խոշոր քարերով ու հնգանկյունի են։ Բերդի ներսում տներ կան, որոնք այգիներ ու պարտեզներ չունեն։ Կա ջամի, հացահատիկի շտեմարաններ, ռազմամթերանոց, ջրամբարներ։ Մի շարք մելիքների ձեռքից-ձեռք անցնելուց հետո, ի վերջո Ալ-Աբբասներից և Բիթլիսի իշխող Միր Աբդալ խան էֆենդիի պապերից անցել է Սուլթան Էվհեդուլլահի ձեռքը, որը երկար ժամանակ իշխել է այս բերդում։ Հետո բերդը մի կերպ խլել են և

այնտեղ 7 տարի իշխել։ Ներկայումս իշխող քուրդ բեյի պապերից մեկը՝ Սեհրան խանը, բերդը գրավել է և նրա հաջորդները իշխել են որդոց-որդի։ 921 (1515) թվականին Չըլդըրի նվիրական պատերազմից[40] վերադարձող Սելիմ սուլթանին հպատակություն են հայտնել և բերդի բանալիները հանձնել են Բըյըքլը-Մուհամմեդ փաշային։ Նրանց այս հպատակությանը իբրև վարձատրություն, փադիշահը այս էյալեթը սեփականության կարգով շնորհել է նորից իր տերերին։

Քուրդիստանում գտնվող 9 օջաքլըք սանջաքներից մեկն էլ այս է. բայց այս երկիրը մի միրմիրանության չափ ընդարձակ է։ Իշխողը տարեկան 40 բեռ ակչեի եկամուտ ունի։ Իշխում է 2000 ձիավոր զինվորներով։ Եթե բեյի գերդաստանը զիջի սանջաքը (սուլթան) Սուլեյմանի օրենքով ուրիշին կտրվի։ Բեյի խասը 370.000 ակչե է։ Կա 5 զեամեթ և 35 թիմար։ Օրենքով, ջեբելուների հետ միասին սանջաքի բեյի և չերիբաշիի դրոշակի տակ հավաքվում է 300 զինվոր։ Մյուֆթի, նազիր, քեթխուդա, սերդար, բերդակալ և բերդապահ զինվորներ չունի։ Բերդը գտնվում է բեյի իշխանության տակ և ունի փոքր թնդանոթներ։ Հայտնի են բերդի օդն ու ջուրը, գեղեցիկ աղջիկներն ու տղաները։ Ունի ջամի և մզկիթ։ Փաշայի բերդից 8 ժամյա հեռավորության վրա է։ Մուրադ գետի վրա գցված Ջեպաքջուր մեծ կամուրջով անցնում են Բինգյոլի լեռների [յայլաների] վրա գտնվող Խալթի, Չեքվանի, Եզիդի, Ջազա, Ջեբարի, Լոլո, Իզոլի, Շեքաղի և Քիքի աշիրեթները, որտեղ մոտ 200 հազար մարդ և 10 անգամ 100 հազար ոչխարներ ու այլ կենդանիներ կան։ Այստեղ կանգնած Ջեպաքջուրի բեյի մարդիկ տասանորդ (öşür) են առնում և թռչունն անգամ չի կարող նրանց ձեռքից դուրս պրծնել։ Յայլաներից իջնելիս էլ դարձյալ յայլայի նվեր են առնում։

Այստեղից դուրս եկանք և հասանք Գենջ բերդը։

(էջ 220—226)

Գենջի բնութագիրը: 921 (1515) թվականին այս քաղաքի իշխողը համբուրել է Չըլդըրի նվիրական պատերազմից վերադարձող Սելիմ խանի ձիու կոխած հողը և բերդի 70 բանալիները նրան է հանձնել։ Իր այդ ուղղամտության և ծառայության համար նրա ամբողջ ժողովուրդն ազատվել է ծանր տուրքերից, իշխանությունն էլ բեյին է շնորհվել։ Փադիշահի կողմից նրանց ուղղված բարձր գրություններում «Նորին Բարձրապատվություն» է գրվում։

Այսպիսի անկախ 5 հյուքումեթ կա՝ Ջեզիրե, Էգիլ, Փալու, Խեզո և Գենջ։ Գենջը երկրորդ աստիճանի հյուքումեթ է։ Բեյը հնում

3000 զինվորով է պատերազմի գնացել։ Սակայն ներկայումս իշխող Ալի Բեյը հազար զինվոր ունի։ Բոլոր կալվածների եկամուտը բեյին է հատկացված։ Օսմանյան կառավարության կողմից 300 ակչե աստիճանով մի կագի է գալիս, որն օրենքի համաձայն 4—5 հարյուր քիսե եկամուտ է ստանում։ Շեյխ-ուլ-իսլամն ու նագիբը Բիթլիսում են։ Բերդը գտնվում է բեյի իշխանության ներքո։ Գենջի էյալեթի ավազանին մեծ հարստության տեր է։ Մի ոչխարը տաս ակչե արժի, մի կուլը՝ մեկ քառորդ ոսկի, երկու օկկա սպիտակ հացը՝ մեկ ակչե։ Մյուս ուտելիքները և խմիչքները նույնպես այդպես են գնահատվում։

Բերդի նկարագիրը: Մուրադ գետի եզերքին, դեպի երկինք խոյացած ամրակուռ և հիանալի մի բերդ է։ Բերդում ջամի, շտեմարան և ջրամբար կա։ Բերդի պատի բարձրությունը 12 արմունկաչափ է։ Ամեն կողմից հիմնված է բարձր ժայռերի վրա։ Հյուսիսից դեպի Մուշի դաշտը տանող ուղիղ ճանապարհ կա։ Քաղաքի հարավային կողմից երկու մենզիլ հեռավորության վրա Միաֆարկին բերդն է։ Այս ճանապարհը շատ քարքարոտ է։ Բիթլիս քաղաքը արևելյան կողմում է և երկու մենզիլ հեռավորության վրա է։

Այստեղից դուրս եկանք և հասանք Աթակ բերդը։

Աթակ բերդի նկարագիրը: Այս բերդը Շահ Իսմայիլը գրավել է նրա տիրոջից՝ Եզդան Բեհրամից։ Իսկ հետագայում, սուլթան Սելիմ խանը Շահ Իսմայիլին պարտության է մատնում և գրավելով բերդը յուրթլուքի և օջաքլըքի կարգով շնորհում է նրա հին տիրոջը Եզդան Բեհրամին։

Ներկայումս, Դիարբեքիրի էյալեթում օջաքլըք-հյուքումեթ է։ Բեյի խասը 447.300 ակչե է։ 9 զեամեթ և 76 թիմար կա։ Ընդամենը 800 զինվոր ունի։ Ունի նաև ալայի բեյ, չերիբաշի, սուբաշի և մյուհթեսիբ։ Բերդը գտնվում է գետեզերքին, բարձր ժայռի վրա, քառակուսի է և քարաշեն։

Այստեղից դուրս գալով եկանք Ջեսկե գավառը։ Սա Դիարբեքիրի էյալեթում, Գենջի տերիտորիայում գտնվող, 2000 տնից բաղկացած մի գավառաքաղաք է։ Այստեղ պատրաստված շեյխանի և մեկրավի անունով սրերը, դանակները և դաշույնները ուղարկվում են Դիարբեքիր և Իսֆահան։

Ապա եկանք Կուլեփ բերդը, որը հիմնել է Ալ-Աբբասիներից մեկը՝ էլմութեմիդ Բաալլահը։ Հետագայում բնակիչները հպատակվել են Սելիմ 1-ին և օջաքլըքի և յուրթլուքի կարգով բերդն իր տիրոջն է տրվել։

Բեյի խասը 166.688 ակչե է։ Ունի 2 զեամեթ և 74 թիմար։ Ունի նաև ալայի բեյ։ Միրլիվայի զինվորների հետ միասին ընդամենը 700 զինվոր ունի։

Թերջիլ գետը Շաթին խառնվող գետի մեկ ճյուղն է, որը սկիզբ է առնում այստեղից և փոքրիկ Թերջիլ բերդից 8 ժամյա հեռավորության վրա է։

Այստեղից եկանք Մեհրանիե բերդը, որի բեյի խասը 200.000 ակչե է։ Օջաքլըքի կարգով հյուքումեթ է։ Ունի 100 թիմար, 9 զեամեթ, առանձին ալայի բեյ։ Ընդամենը 500 զինվոր ունի։

Ապա շարժվելով դեպի հյուսիս, մտանք Մուշի դաշտը, որը խիստ ընդարձակ և սրտաբաց մի դաշտավայր է։ Մեջտեղից հոսող Մուրադ գետում բազմատեսակ ձկներ կան։ Այս դաշտավայրի մարգագետիններում եթե կանգ առնի Ջեմափուրի բանակը և գիշեր-ցերեկ արածացնի իր կենդանիներին՝ դաշտի կանաչից ոչինչ չի պակասի։ Այն ձգվում է արևելքից արևմուտք։ Երկարությունը ընդամենը երեք մենզիլ է, իսկ լայնությունը երկու կոնաքից քիչ պակաս։ Դաշտի հարավում գտնվում է Միաֆարկին բերդը։ Սրանց միջի հեռավորությունը երկու մերհալեից[41] պակաս է։ Այս դաշտի բնութագիրը, նրանում ապրող աշիրեթների վիճակի նկարագրությունը կկազմի մեկ հատոր։ Այստեղից շարժվելով դեպի հյուսիս և ձիերով անցնելով Մուրադ գետը, հասանք հնագույն Մուշ քաղաքը։

(էջ 226—228)

Մուշ քաղաքի բնութագիրը։ Գտնվում է Վանի էյալեթի իշխանության մեջ և Վանի ծովեզերքի Թախթվան [Դատվան] սուբաշիությունից երեք մենզիլ, Բիթլիսից էլ մեկ մենզիլ հեռավորության վրա է։

«Շերեֆնամեի»[42] պատմության համաձայն Մուշ քաղաքը Ադրբեջանի հնագույն քաղաքներից է եղել։

Վանա ծովի հյուսիսում, Ադիլջևազ բերդի մոտ գտնվող Սուբհան (Սիփան) սարում մինչև հիմա կալանավորված է յոթ գլխանի աժդահան, որի ձայնը լսվում է միայն 40—50 տարին մեկ անգամ և որը 70—80 տարին մեկ, Սուբհանի սարից 5—10 օրով ցույց է տալիս իր պոչը։ Մի ժամանակ ազատվել է և բոլոր նեմրուդներին[43] ուտելուց հետո, ամենակարող Աստծու հրամանով, նորից մտել է Սուբհանում գտնվող իր քարայրը և բանտարկված մնացել։ Այս աժդահայի մասին, եթե Աստված կամենա, ավելի մանրամասնորեն կգրենք մեր Վանի ճանապարհորդության ժամանակ։ Հետո անիծ-

յալ Նեմրուդը, ամենակարող Աստծու կամքով, Մուշի դաշտում մի հսկա մուկ է ստեղծում, որը բոլոր Նեմրուդներին ուտում է, իսկ Մուշի բնակիչներին ոչնչացնում։ Այդ պատճառով էլ քաղաքը կոչվում է Մուշ[44]։ Այդ քարայրի (որտեղից դուրս է եկել հիշյալ մուկը) տեսակ-տեսակ մկներից ոչ մի երկրում չկան։ Սակայն աստծո հրամանով, Ալեքսանդրի Ֆիլկոս անունով բժշկի կախարդության շնորհիվ. Մուշի դաշտում բոլորովին մուկ չի մնում։ Երբ Թիմուր Լենգը արշավում է Ալ-Օսմանի վրա, Մուշ քաղաքը ավերում և կործանում է, բնակիչներին կոտորում, տները հողին է հավասարեցնում։ Այդ ավերածության հետքերը հիմա էլ երևում են։

Մուշ քաղաքը գտնվում է դաշտի եզերքին, մի լեռան ստորոտում։ Այս քաղաքը և նրա ավերակները դիտելուց հետո, հաջորդ օրը եկանք Մուշի դաշտում գտնվող նշանավոր ու հայտնի Ջանլի Քիլիսեն[45]։

Ջանլի Քիլիսե: Այս եկեղեցին բազմաթիվ ազգությունների մեջ մեծ հռչակ է ստացել։ Տարին մեկ անգամ հարյուր հազարավոր մարդիկ հավաքվում են այստեղ, վրաններ և օթաքներ կանգնեցնում և յոթն օր ու գիշեր առևտուր անում։ Այստեղ բեռներ են թափվում, բեռներ են կապվում և քարավանները գնում են Երևանի կողմերը։ Այստեղ են լինում Վանի վեզիրի, Բիթլիսի խանի և Աթակի բեյի մյուսելիմները[46], որոնք պաշտպանում են վաճառականներին և ժողովրդին։ Թեև եկեղեցին [վանքը] գտնվում է երեք իշխանությունների միջև, սակայն ավելի մոտ գտնվելու պատճառով Վանի վեզիրը ավելի մեծ քանակությամբ զինվոր է ուղարկում և ավելի շատ տուրքեր է առնում։

Ջանլի Քիլիսեի նկարագիրը: Մուշի դաշտի հյուսիսում, խիտ անտառի և այգեստանի միջև ընկած, դեպի երկինք խոյացած հոյակապ գմբեթներով մի հսկա վանք է։ Հիմնադիրը հայտնի չէ։ Վանքի չորս կողմում հարյուրավոր պատրիարքի[47] և վարդապետների խցիկներ կան։ Վանքում ամեն օր հազարավոր սաններով (սահան) առատ կերակուր է տրվում այցելուներին։ Տոնական օրերին հարյուր ոչխար, հինգ կով է մորթվում ու 50 սոմար ցորենի հաց է թխվում և նվիրվում է հյուրերին։

Վանքը ունի 300-ից ավելի վարդապետներ և աշակերտներ (սարկավագ), որոնցից յուրաքանչյուրը երգում է Քրիստոսի վանքում և հատուկ եղանակով Ավետարանը այնպես է կարդում, կարծես մարդկանց սրտերին Քրիստոսի շունչն է փչում։ Հյուրերին մեծ պատիվ և հարգանք են տալիս, կաթ խմեցնում, խուրմա և տար

երկրների այլ պտուղներ ուտեցնում, ամեն գիշեր հարյուրավոր մետաքսյա սփռոցներ, զերբաֆից անկողիններ փռում և այդպես են սպասարկում։ [Վանքի] էվկաֆը [վանական կալվածները] շատ մեծ են։ Փաշային հինգ քիսե և անսահման նվերներ են տալիս։ Ամեն տարի ուխտավորներից շատ մեծ քանակությամբ հարստություն են հավաքում։ Վարդապետները գնում են Քաֆիրիստանի[18] բոլոր կողմերը, մինչև անգամ Ֆրենգիստան և նվերներ են հավաքում։

Քանի որ տեղն եկավ, հիշենք յոթը կլիմաներում մեր դիտած յոթը մեծ վանքերը.

1. Վանի մոտ[19] Ուչքիլիսե, 2. Նախչվանի (Նախիջևանի) մոտ՝ Յեղի Քիլիսե*, 3. Վանի մոտ՝ Վերեք Քիլիսեսին (Վարագա վանքը), 4. Նեմսեի Կայսեր մայրաքաղաքում՝ Ջեհում (?) Իստեֆան Քիլիսեսին, 5. Հունգարիայում, Թիզ գետից մեկ մենզիլ հեռավորության վրա՝ Կաշե Քիլիսեսին, 6. Երուսաղեմի մոտ, Քրիստոսի ծննդավայր Բեյթ-էլլեհմում (Բեթղեհեմ)՝ Կամամեի մեծ վանքը։ Բայց այս Ջանլի Քիլիսեն նմանապես աննման և հիանալի մի շինություն է։

Ջանլի Քիլիսեում ժողովրդի հավաքվելու պատճառը: Հայտնի է, որ Ռումի, Արաբի և Աջեմի երկրների հազարավոր մարդիկ հավաքվում են այստեղ։ Յուրաքանչյուրը բերում է իր ուխտը, վանքի մեջ մտնում, ուխտը կատարում, ինչ բարի ցանկություններ ունի՝ աղոթում է նրանց իրագործման համար և դուրս գալիս։ Հավաքվել են մի խումբ անարժան և վտանգավոր մարդիկ և «աստծո կամքով (ուխտավորների) բոլոր ցանկությունները իրագործվում է» ասելով, սնուցանում և տարածում են այդ անմիտ հավատը։

Տարօրինակն այն է, որ մի քանի հավատացյալ և կրոնասեր, բայց տգետ մարդիկ նվերներ են տալիս, մատաղ անում և գիտություն են խնդրում։ Աստծո կամքով այդ մարդկանց հայտնի են դառնում տարօրինակ և զարմանալի գիտություններ։ Բազմաթիվ խելագարներ և ոչ խելագարներ թամբուր (կիթառ) և զանգ, սանթուր և սրինգ, դուդուկ և այլ երաժշտական գործիքներ, առանց կարգի բերելու, դնում են այս վանքի ուխտատեղը, հաջորդ օրը վերցնում են իրենց երաժշտական գործիքները և այնպես վարպետորեն են նվագում, որ կարծես Հյուսեին Բայկարայի[50] եղանակներն են նվագում։ Այստեղի մարդիկ վարպետ բանաստեղծներ են։ «Այս արվեստն ու բանաստեղծությունը Ջանլի Քիլիսեն է տվել մեզ»,—ասում

* Տե՛ս հատ. II, էջ 232, (ծանոթ. հրատարակչի)։

ւեն նրանք և դրանում համոզված են։ Վանքի ներսում, մի մութ անկյունում մի գերեզման կա։ Այդ գերեզմանը կոչվում է Սիփ-Ղրաբեթ[51]։ Նվաստս հարցրեցի [դրա մասին]. ինձ պատասխանեցին՝ «Վեհափառ Յահյայի[52] հորեղբայրն է»։ Ռումերից հարցրեցի, պատասխանեցին՝ «Քրիստոսի փոխանորդներից է, այսինքն նրա աշակերտներից է»։ Մի խոսքով տարօրինակ և արտակարգ մի տեսարան է։

(էջ 228—230)

Այս վանքում Աթակի բեյի մուսելլիմից մեր էֆենդի Մուրթեզա փաշայի հանձնարարած երեք քիսե ղուրուշը ամբողջապես ոսկով առինք և մեկնեցինք դեպի Սվազ։

ՄՈՒՇԻ ԴԱՇՏԻՑ ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՍՎԱԶ

...Ինչպես արդեն ասել ենք*, երկրի վրա 148 բարձր լեռ կա. մեկը՝ Էլբրուս լեռան ճյուղը հանդիսացող Բինգյոլ յայլայի լեռն է, որի գագաթը կարելի է բարձրանալ երկուսկես-երեք օրվա ընթացքում։ Էլբրուս լեռան ամենաբարձր գագաթը ծածկված է ամպերով և մութն է։ Սաստիկ ցուրտ է և մարդիկ չեն կարող նրա գագաթը բարձրանալ։ Այն վայրերում, որտեղ ճանապարհներ կան, Կըյթաք, Հեյտաք, Կամուք և Չերքես աշիրեթները բարձրանում են և որոշ հանքեր հանում։ Սակայն այս Բինգյոլ լեռան կատարը հիանալի է և նրա ամենաբարձր գագաթը բաց է։ Նրա վրա մարգագետիններով ծածկված 70 մեծ դաշտեր կան։ Արևմտյան կողմում Քիֆիի [Քղիի] լեռներն են. արևելյան՝ Աջեմի երկրի կողմից Երևան բերդի մոտով հոսող, Զանգի գետին հասնող, իսկ արևմուտքից Օսմանյան սահմանի վրա գտնվող Աղրի-դաղին [Արարատ] է։ Սա երկարաձիգ մի լեռ է և նրա երկարությունը 16 կոնաք է։ Հյուսիսում՝ Էրզրումի դաշտն է։ Մեջտեղից հոսում է Եփրատ գետը։ Հարավում Մուշի դաշտն է։ Մուրադ գետը սկիզբ է առնում այս լեռներից։ Մուրադ և Եփրատ գետերի միջև գտնվող Բինգյոլ յայլայի լայնությունը երկու մենզիլ է, սակայն կան վայրեր, որ 3—4 մենզիլ լայնություն ունեն։ Հյուսիսում՝ Էրզրումն է, արևմուտքում՝ Սվազը, հարավում Դիարբեքիրը, արևելքում՝ Վանի էյալեթը և Աջեմի երկիրը։ Վերին աստիճանի հարուստ վիլայեթների մեջ գտնվող այս յայլան յոթը

* Հատոր II, էջ 29 (ծանոթ. հրատարակչի)։

ամիս շարունակ շենանում է մարդկանցով, բայց երբ սկսվում են ձմռան սառնամանիքները, բոլորն իջնում են ցածրադիր վայրերը։

Բինգյոլ յայլայի բնակչությունը կազմված է զազա, լոլո, իզո, եզիդի, խալիթի, փիքվանի, շեկազի, քիքի, բեսյանի և մորքի քուրդ աշիրեթներից, որոնք լեռն են բարձրանում մի քանի անգամ հարյուր հազար անասուններով։ Այնտեղ նոր կյանք են ստանում և էրզրումի վեզիրին յայլայի տուրք են վճարում։ Հինգերորդ կլիմայում գտնվող 29 լեռներից ամենաբերքառատը այս Բինգյոլի լեռն է։ Սրա վրա աճում են բազմատեսակ բույսեր և խոտեր. քիմիական խոտ՝ լիմիա-օթի էլ կա։ Շատերը տեսել են, որ հազարավոր ոչխարների ատամներ կարծես ոսկով և արծաթով պատված լինեն։ Այստեղ կան դեղին, կարմիր և գորշ ցինկի հանքեր, որոնց բնական հոտից մարդու քիթը բռնվում է։ Սուրմաջիները հավաքում են այս ցինկերը և ովքեր ցանկանում են գեղեցկացնել իրենց աչքերը՝ սուրմա են քսում։ Աստծո հրամանով տեսողության ուժը ավելանում է։ Հայտնի են այստեղի յոթանասուն-ութսուն թերթավոր հունական մուշկը, սպիտակ, կապույտ մազավոր հակինթը, հիացինտը սյունբուլը, քառասուն-հիսուն տեսակի քսանական թերթ ունեցող մուշկը, կարմիր և սպիտակագույն տեսակ-տեսակ մանուշակը, ռեհանը, շեփորուկը. բազմատեսակ վարդերը և նունուֆարը։ Պտուղներից այստեղ Արաբկիրի թթի մեծության ելակներ կան։ Մի խոսքով, բժիշկներին և դիտնականներին պետքական բույսերն ու ծաղիկները այստեղ այնքան շատ են, նրանց հաշիվը միայն բարձրյալ Աստված գիտե։

Բինգյոլի օգուտները։ Սա կոչվում է Բինգյոլ (հազար լիճ), բայց քանի՞ հազար լճեր կան այստեղ։ Խըզըր-գյոլի, Իլյաս-գյոլի, Թուլնիրլ-գյոլի, Ականեն-գյոլի, Բելամ-գյոլի։ Բելամ-իբն Բաուրը թաղված է այս լճի հյուսիսում, էրզրումի կողմը ընկած էյերլի սարում։ Կուշ-գյոլի—մի որսորդ թռչուն է որսացել, մորթել և լվացել է այդ լճում, թռչունը կենդանացել է և լճի մեջ ընկղմվելով՝ կորել է։ Հետո աստծո հրամանով, շրջակայքում հազար լիճ է առաջ եկել։ Դրանցից որն է կյանքի լիճը, չի իմացվում։ Այս պատճառով վերոհիշյալը Կուշ-գյոլի է կոչվում (Թռչունի լիճ)։ Հարեմե-գյոլի — երբ կանայք մտնում են այս լիճը, չաղանում, խոշորանում են և ծննդաբերելիս ցավեր չեն քաշում, հեշտությամբ են ծնում։ Էր-գյոլի—այս լճում լողացող տղամարդը ամեն տեսակետից ուժեղանում և սեռական կարողությունը ավելանում է։ Կըլլի-գյոլ—անչափահաս մի անմեղ, եթե երեք անգամ այս լճում լողանա՝ կմազակալվի։ Միս-

կին-գյոլի—այս լճի ջրից խմողը ազատվում է բորոտության հիվանդությունից: Մեներմըք-գյոլի — լուսնոտություն ունեցողները, եթե այս լճի ջրից խմեն, սիրտ կթափեն և կամ կաղատվեն, կամ կմահանան: Միհնեթ-գյոլի—այստեղից խմողը դառնում է վախկոտ: Ջեբբար-գյոլի—այստեղից ջուր խմող մարդր կամ անասունը անգութ է դառնում: Բալլի-գյոլի—շաքարից էլ համեղ է, վաղ առավոտյան սրա եզերքին մանանա է լինում: Քանլի-գյոլի—սրա մեջ տարեկան մի մարդ անպայման խեղդվում է: Ըշմե-գյոլի—այստեղից երեք անգամ խմողը տասնևհինգ անգամ լուծողական խմողի նման փորը քշում է: Սալբաշ-գյոլի—մի քանի անգամ խմողի գլուխը պտտվում է: Այնի-Հայաթ-գյոլի—յոթն անգամ խմողը ամեն տեսակ հիվանդություններից ազատվում և առողջակազմ է լինում: Խաթուն-գյոլի—խմող տիկինը (խաթուն) ճղի է մնում, սեռական կյանքը հաճելի է դառնում: Սենդբան-գյոլի—մշտապես այստեղից խմողը վատաբարո, բարկացկոտ է դառնում: Քասիմ-գյոլի—փոքր լիճ է, մեջը առատ մարգարիտ, ոսկի և արծաթ կա, բայց ձեռք բերելու համար եթե մեկը այդ լճի մեջ մտնի՝ կխեղդվի: Ջոբանյաններից[53] մեկը, ժլատ մի մելիք, ուզեցել է ջրանցք բացել և այս լճի ջուրը հոսեցնել: Լճից անթիվ շնաձկներ ու այլ կենդանիներ են դուրս եկել և շինությունները ավերել: Քերքես-գյոլի — ամեն տարի բազմաթիվ անգղեր գալիս, այս լճում լողանում և հեռանում են: Եթե մարդը այս լճի ջրից խմի, մորուքը կսպիտակի: Ջերնիկ-գյոլի—եզիդի և խալթի քրդերը ընդհանրապես մտնում են այս լիճը և նրանց մարմնի բոլոր մազերը թափվում են ու անմազ դուրս են ելնում: Շոր-գյոլի—որևէ կերակուր եփելիս, եթե սրա ջրից բավականաչափ օգտագործեն, կերակուրը շատ համեղ կլինի:

Սրանցից բացի, այլ լճեր կան, որոնք անմահական ջրի նման ջրեր ունեն: Նրանց մեջ հագուստ լվանալիս, օճառի կարիք բոլորովին չի զգացվում: Այս լճերի ձկները ոչ մի լճում չկան: Բազմատեսակ ձկներից են՝ գեղարդաձկնիկը, կարմրախայտը, հարուն ձուկը, սերքը, ալչրքը, թեփուզը և այլն:

Այս առթիվ հիշենք նաև Անատոլիայի նշանավոր յայլաները: Ամենանշանավորն այս Բինգյոլի յայլան է: Ադանայի մոտ՝ Ծամավան օղլուի յայլան, Կարամանում՝ Դիլենգիի յայլան, Սելեֆկեում՝ Մութի յայլան, Կեսարիայում՝ Էրջիասի յայլան, նրա մոտ և Մարաշի շրջակայքում՝ Քյուքեշի յայլան, Մալաթիայում՝ Էսփոզոյի յայլան, Դիարբեքիրում՝ Կարա Դաղի յայլան, Սենջարի յայլան, Ջեզիրեի յայլան, Վարդիլանի յայլան, Վանի մոտ՝ Վերեքի

[Վարագի] յայլան, Փինյանիշի յայլան, Վանա լճի եզերքին՝ Սուբհանի [Սիփանի] յայլան, Երևանի մոտ՝ Աղրիի (Արարատ) յայլան, Էրզրումի մոտ՝ Կանզալի յայլան, Սվազի մոտ՝ Քաքերի յայլան, Բրուսայում՝ Քեշիշ-դաղի յայլան, Մաղնիսայում՝ Խյանքարի յայլան, Թիրեյի շրջանում՝ Բալ փեյքարի յայլան, Թերքի շրջանում՝ Բոզ-դաղի յայլան, Փիասի մոտ՝ Շուլգայի յայլան, նրան մոտ՝ Բեդրագի յայլան, Հալեպի շրջանում՝ Ջեսումի յայլան և այլն։ Սրանց մեջ ամենարնտիրն ու գրավիչը՝ Բինգյոլի յայլան է։

Այստեղից, ընկերներով ու ծառայողներով շարժվեցինք դեպի հյուսիս և հասանք Բյոյուք-չայիր մենզիլը...

Այնուհետև Էվ. Չելեբին գնում է դեպի Սվազ և 1060 (1650) թվականին Սվազից մեկնում է Ստամբուլ։

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

(1065 թ.=1654 թ.)

Սկյուդարից դեպի արևելք — Ռակբե (Մալաթիա) — Էրղանի — Դիարբեքիր — (Կարա Ամեդ) — Մարդին — Միաֆարկին — Բաթմանի կամուրջ — Հազո — Բիթլիս — Վան — Վանա ծովը — Դատվանի մոտ ուղտերի քարավանի քար կտրած մնացորդները — Ախլաթ-Ադիլջեվազ — Սիփանա սարը — Արճեշ — Բերկրի — Ամիկ — Վանա բերդը։

Ռակբե բերդի, այսինքն՝ Մալաթիայի բերդի բնութագիրը: *Ռումի երկրումն է և ռումերի լեզվով Ռակբե է կոչվում։ Նախկինում, երբ վեհափառ Յունիսը*[1] *Մուսուլ քաղաքում է եղել, նրա ուսմունքով հավատացյալ դարձած Ռակբե անունով կայսրը, հավանելով այս Մալաթիայի վայրի ջուրն ու օդը, այնտեղ մի բերդ է կառուցում, որը մի մեծ քաղաք է դառնում։ Հետո մելիքից-մելիքի անցնելով, վեհափառ Մարդարեի դարում գտնվում է արդարասեր Նեշիրվանի իշխանության ներքո։ Հարուն-էլ Ռաշիդը մի քանի անգամ պաշարել է Մալաթիան, չի կարողացել գրավել այն և ետ է վերադարձել... Մի խոսքով ժամանակի ընթացքում Մալաթիայի համար հազարավոր կռիվներ են տեղի ունեցել։ 476 (1083—84) թվականին Ռումի երկրի վրա ոտք դնող սուլթան Ալայեդդինը գրավելով Մալաթիան նրա բերդը հողին է հավասարեցնում։ Հետո Դանիշմենդի էմիրներից մեկը՝ Մուհամմեդ բին-Դանիշմենդ բին-Մելիք Ղազին, այստեղի օդն ու ջուրը հավանելով 583 (1187) թվականին մի մեծ բերդ է կառուցում, որը մինչև հիմա կանգուն է։ Հետագայում նորից շատերի ձեռքն է անցնում։ Դիարբեքիրի ու Մարաշի իշխողները պայքարել են «Մալաթիան իմն է, քոնն է» ասելով, իսկ Դիարբեքիրի քրդերն ապստամբվել են և օսմանյան երկրներից սկսել են կողոպտել ու թալանել Ամասիան ու Սվազը։ Ի վերջո, երբ այս ծանր դրության մասին լուր է հասնում Բրուսայում գտնվող {սուլթան} Յըլդըրմ*

խանին, նա կայծակի (յըլդըրմ) արագությամբ գալիս է 30.000 զինվորով պաշարում Մալաթիան և 800 (1397) թվականին գրավում այն։ Հետագայում չկարողանալով գրավել Ամասիան, Թիմուրը վերադառնում, գրավում է Մալաթիան և դարձնում է ձմեռանոց... Այնուհետև այս քաղաքը նորից օսմանցիների ձեռքն է անցնում և (սուլթան) Սուլեյման խանը այնտեղ աշխարհահամար է կատարում։

Ներկայումս Մարաշի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է։ Ըստ օրենքի բեյի կայսերական խասը 500 հազար ակչե է։ Կառավարում է 500 զինվորով և տարեկան 80 քիսե եկամուտ է ստանում։ Ունի 7 զեամեթ և 276 թիմար։ Զեամեթը ջեբելուների հետ միասին 800 զինվոր ունի, որոնք պատերազմի են գնում փաշայի դրոշակի տակ։ Ունի ալայի բեյ, չերիբաշի և յուզբաշի։ Նահիյեները քրդական և թուրքմենական գյուղեր են։ Այս գյուղերից կադին, օրենքի համաձայն, տարեկան 20 քիսե եկամուտ է ստանում...

[Մալաթիա] կոչվելու պատճառը: *Աջեմները այս քաղաքը անվանում են էսփողան, թուրքմենները՝ Մալի-աթիյե, արաբները՝ Մալաթիա, հույների լեզվով՝ Ռակբե, պատմագիրները Դարի-Ռակբեն են կոչում։ Այս քաղաքի առաջին հիմնադիրը եղել է Ռակբե անունով կայսրը։ Հետագայում շենացրել է նրա էսփողան անունով աղջիկը։ Այս աղջիկը իր հոր հետ միասին թաղված է պարտեզում, մի քարայրում։*

Մալաթիա բերդի նկարագիրը: *Քաղաքը չորս կողմից շրջապատված է լեռներով, հարավից էսփողան լեռներն են։ Այստեղից բազմաթիվ վճիտ ջրեր են հոսում։ Այդ լեռների միջև փոքր բլուրներ և ձորեր կան։ Մալաթիան գտնվում է մի ընդարձակ հովտում, Դեյրի Մեսիհ[2] գետի կամրջի մոտ, սրբատաշ քարերով կառուցված հնդանկյունի մի բերդ է։ Այդ արագահոս գետակը զարնվելով բերդի պատերին, հոսում է հյուսիսից և 5 ժամյա հեռավորություն անցնելով, խառնվում Եփրատ գետին։ Սկիզբ է առնում էսփողան լեռներից և փոքր վտակ է։ Բերդի ներսից ժայռերի միջով դեպի գետն իջնող ջրի ճամփա կա։ Պաշարման դեպքում պաշարվածները ջրով ապահովվում են այս ճանապարհով։ Բերդը կառուցված է ցածրադիր վայրում...*

Մալաթիան ունի 5265 փայտաշեն և ավազանիի ու երևելիների երկհարկանի քարաշեն տներ։ Բոլոր տները ունեն այգիներ, պարտեզներ և ծածկված են մաքուր հողով։ Այդ բազմատեսակ և բարեշեն տները զարդարում են մեծ վարոշը։ Ռաբաթի շուրջը բերդի պատեր չկան, բայց ամուր դռներ կան, որոնք գիշերները փակվում են։

Մալաթիայում 32 թաղ կա, որոնցից նշանավոր են Էսքի Ջյումրը, Ջամիի Քեբիրի թաղերը... 7 հայկական թաղեր կան։ Հրեաներ չկան... Ավագանիի և ազնվականների 11 ապարանքներ կան, որոնցից ամենաշքեղը փաշայի ապարանքն է... Ունի բարեշեն և հարուստ շուկա, բայց Շամի և Հալեպի նման քարաշեն խանութներ չունի։

Օդը հիանալի լինելու պատճառով տղամարդիկ ընդհանրապես ամրակազմ են և ապրում են վաթսուն-յոթանասուն տարի։ Նրանց ատամները շատ լավ են պահպանվում։ Անգամ հասակ առածները կարմրադույն են և շատ առողջ... Բայց որովհետև լեռնային երկիր է, Քուրդիստան է, գեղեցկուհիներ չկան։

Խոսում են քրդական և թուրքմենական բարբառներով։

...Այստեղ յոթ եկեղեցի կա։ Ամենամեծը Էսփողանի մոտ գըտնըվող Մեսիհի[3] եկեղեցին է, որը կառուցված է բարձր լեռան վրա։ Նրա կողքից հոսում է լեռներից իջնող մի գետակ։ Աջ և ձախ կողմերում Էսփողանի այգիներն են։

Հացահատիկներն ու բերքերը: *Ունի 7 տեսակի խոշոր հատիկներով ցորեն։ Հարգի են նաև գարին, բամբակը և խոտաբույսերը։ Արհեստներից զարգացած է սպիտակ թելի, սպիտակ բեղի արտադրությունը։*

...Բնակչության մեծ մասը զբաղվում է այգեգործությամբ։ Նրանք ապրում են այգիների բազմատեսակ բերքերով։ Մի մասն էլ պարապում է բամբակագործությամբ։ Բոլորը արհեստավոր և աշխատավոր մարդիկ են։

Մալաթիայում 7800 այգի և 600 բանջարանոց կա, բոլորը արձանագրված են սիջիլլում։

Մալաթիայի չորս կողմից 17 գետեր են հոսում. Թոխմա գետը, Թել գետը և այլն։

Մալաթիայի Էսփողանի այգիները, օդն ու ջուրը, պտուղների անսահման առատությունը, անհամեմատ ավելի գերադասելի են... Պտուղներից աչքի են ընկնում ծիրանի տեսակները. մեկ հատը կըշռում է 40—50 տիրհեմ... 80 տեսակի բարձրորակ խնձորներ կան, ամենահայտնին Գյուք-սուի խնձորն է, որի մեկ հատը մի կիյա[4] է կշռում։ Հայտնի է նաև Բել-արմուտին (տանձը)։ Ստամբուլի այաններն ու երևելիները Մալաթիայից մեծ քանակությամբ տանձենու ճյուղեր են բերել տալիս, պատվաստում են տեղական ծառերի վրա ու Մալաթիայի տանձ են ստանում։

Մալաթիայի խնձորները յուրահատուկ գույն և անուշահոտ

բուրմունք ունեն։ Մի տան մեջ եթե 5—10 հատ խնձոր լինի, նրանց անուշահոտ բուրմունքից մարդ կզմայլվի... Այդ խնձորներից նվերներ են ուղարկում զանազան վիլայեթների այաններին, երևելիներին ու փադիշահներին։ Սերկևիլները նույնպես բազմատեսակ են. հատը մի կիյա է կշռում։ Մալաթիայի խաղողից ոչ մի երկրում չկա...

Երբ սկսվում է գարունը, Մալաթիայի բնակիչները, մեծ ու փոքր այան ու աղքատ, բոլորը քաղաքից քոչում են Ասփոզանի այգիները։ Քաղաքում մնում են միայն օտարականները, վաճառականները և մոտ 300 պահապաններ։ Վերջիններս իրենց լապտերները վառած գիշերները քաղաքում պահապանություն են անում և եթե ոճրագործ մարդիկ են բռնում, առանց խնայելու սպանում են, քանի որ նրանք իրենց ձեռքում ունեն նախորդ սուլթաններից տրված որոշակի հրահանգներ...

Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է նաև Մալաթիայի զբոսավայրերը և ուխտատեղիները։

(էջ 7—20)

* * *

Մալաթիայից Էվ. Չելեբին Եփրատ գետի եզերքով անցնում է մի շարք գյուղերով և հետո կանգ առնում Էրղանիում։ Այստեղից ուղևորվում դեպի Դիարբեքիր։

Կարա-Ամեդ բերդի, այսինքն Դիարբեքիր քաղաքի նկարագիրը:

Բազմաթիվ կարծիքներ են դրի առնված Դիարբեքիր կոչվելու մասին:

Երբ վեհափառ Յունիսը ապրել է հին Մուսուլում, կոչ է արել այդ երկրի ժողովրդին ընդունելու [իսլամական] հավատը, սակայն ոչ ոք չի ընդունել այն և այդ պատճառով նա շատ է վշտացել և անիծել է Մուսուլի ժողովրդին, որից հետո [քաղաքը] ավերակ է դարձել։ Այդտեղից նա գալիս է Դիարբեքիր, որի բնակիչները ընդունում են հավատը։ Յունիսը շատ գոհ է մնում և ասում է. «Ձեր երկիրը թող բարեշեն ու ծաղկուն լինի, ժողովուրդը միշտ ուրախ և երջանիկ, ձեր բոլորի ընտանիքներն ու զավակները ազնվական և հասուն լինեն»։ Նա յոթ տարի շարունակ ապրում է Նեֆս-կայասի անունով մի քարայրում։ Այդ ժամանակ մի իշխանուհի կույս աղջիկ է լինում, որը հավատալով Յունիս մարգարեին ընդունում է իսլամական կրոնը։ Շատ հարուստ է լինում և վեհափառ Յունիսի ցուցմունքով սև մարմար քարերով կառուցել է տալիս Դիարբեքիրը։

Այդ պատճառով էլ Աջեմի պատմագիրները քաղաքը անվանել են Իիարի ռաՐյիր (աղջկա, կույսի քաղաք)։ Սակայն հույն պատմագիրները, նրա չորս պատերը սև մարմարից լինելու պատճառով, Կարա-Ամեդ են կոչում։ Կայսերական դեֆթերխանեում[5] էլ այդպես է արձանագրված։

Վերջապես, Դիարբեքիրը մի պետությունից անցնում է մի այլ պետության։ Նաշիրվանից հետո, վեհափառ էբուբեքիրի[6] խալիֆայության ժամանակ, 70 հազար զինվորներով գալիս է մեծ սերդար վեհափառ խալիտը և Դիարբեքիրը կայսրից գրավում է սրի ուժով։ Քաֆիր զինվորները սարսափած բերդի պարսպից վար են թափվում և կտոր-կտոր լինում։ Թեև բերդը գրավվում է, սակայն հետագայում նորից քաֆիրների ձեռքն է անցնում։ Ի վերջո Քուրդիստանի Աբբասիներից մեկը՝ սուլթան էվհադուլլահի որդին, իր անթիվ բանակով Դիարբեքիրի վրա է գալիս և յոթ ամիս պաշարում է այն։ Պաշարվածները սովից ստիպված են լինում աման խնդրել և բերդը հանձնել՝ 7 պայմանով։ Առաջին պայմանը. Օմերի սկզբունքով մեկական ոսկի ջիզիե[7] պիտի վճարեն։ Երկրորդ պայմանը. բերդում գտնվող եկեղեցիները չպիտի քանդվեն։ Երրորդ պայմանը. պատրիարքը, վարդապետները և հոգևորականությունը հարկ չպիտի տան։ Չորրորդ պայմանը. վաճառականները իսլամականների նման մաքսային տասանորդ (ôşur) պետք է վճարեն։ Հինգերորդ պայմանը. բերդում գտնվող տներում պետք է բնակվեն։ Վեցերորդ պայմանը. հին գերեզմանատներում մեռելներ չպետք է թաղեն և գերեզմանոցները պարտեզների ու այգիների չպետք է վերածվեն։ Յոթերորդ պայմանը. իրենց կարմրագույն փաթթոցներին (սարք) արգելք չպետք է լինի։

Այս պայմաններով բերդը հանձնեցին և մինչև օրս էլ բերդում ապրողներն իրենց ձեռքում յարլիղ[8] ունեն։ Այս սուլթանի որդիները Դիարբեքիրի վրա իշխեցին մինչև սուլթան Սելիմ I-ը, երբ Դիարբեքիրի իշխողն էր էլմելիք-ուլ-Մուզաֆֆեր սուլթանը։ Երբ (սուլթան) Սելիմ խանը գնում էր Չըլդըրի նվիրական պատերազմին, Դիարբեքիրի մարդիկ ճանապարհը կտրելով Քեմախի, Թերջանի, Բայբուրդի և Խանչայի բերդերի ճանապարհներում մեծ վնասներ են պատճառում իսլամական զինվորներին։ Սելիմ խանը այդ մասին տեղեկանալիս, իր փադիշահական Դռան կափուջի բաշիի միջոցով Դիարբեքիրի իշխողին համակրական գրություն է ուղարկում, որով խնդրում է. «Իմ եղբայր, շնորհ արեք ձեր իշխանության տակ գտնվող չարագործ քրդերին զսպեցեք»։ Իշխողը կարդալով նամակը

և նրա բովանդակությանը ծանոթանալով, մի մարդու միջոցով նամակ է ուղարկում [սուլթանին], որտեղ գրում է. «Եթե Շահ-Իսմայիլից կարող ես վրեժ առնել, վրեժ լուծիր նաև իմ Դիարբեքիրի երկու անգամ հարյուր հազար հրացանաձիգ քրդերից»։

...Սուլթան Սելիմը Իրանի շահին պարտության մատնելուց հետո, Բըյըքլի Մուհամմեդ փաշային 100 հազարանոց բանակով ուղարկում է Դիարբեքիրի վրա։ Փաշան բերդը պաշարում է։ Մոնլա Իդրիս Իմատիի օժանդակությամբ քրդերը ստիպված են լինում բերդը խաղաղությամբ փաշային հանձնել։ Իսկ քրդերը իրենց իշխանների հետ միասին, դուրս են գալիս բերդից և գնում դեպի Մարդին։ Սուլթան Սելիմը Դիարբեքիրը հատուկ գրությամբ և ընդմիշտ Մոնլա Իդրիսին է հանձնում։

Այնուհետև, սուլթան Սելիմը Բաղդատի վրա արշավելիս, երեք ամիս ձմեռում է Դիարբեքիրում և 10 հազար քիսե ակչե է կտրել տալիս։ Այդ փողի նմուշները կարելի է գտնել Դիարբեքիրի դաշտերում։ Հետո Դիարբեքիրում աշխարհահամար է կատարվում և վեզիրության կարգով էյալեթ է դառնում։

...Օրենքով վեզիրի խասը 12 անգամ 100 հազար և վեց հարյուր վաթսուն ակչե է։ Ունի 16 սանջաք. հինգ սանջաքը հյուքումեթ է։ Սանջաքներից 12-ը ուրիշ էյալեթների նման զեամեթներ և թիմարներ ունեն։ Բեյը նշանակվում և հեռացվում է պետության կողմից, իսկ 8 սանջաքը պատկանում է քուրդ բեյին։ Երբ Բըյըքլի Մուհամմեդ փաշան գրավում է այդ երկիրը, կայսերական հրովարտակով այդ սանջաքները մշտապես տրվում են յուրթլուքի և օջաքլըքի կարգով։ Նրանք չեն նշանակվում կամ հեռացվում։ Երբ բեյերից մեկը մահանում է, նրա սանջաքը անցնում է իր տղաներին կամ ազգականներին։ Ամբողջ եկամուտը արձանագրված է, կան զեամեթներ և թիմարներ[9]։ Պատերազմի ժամանակ զեամեթի և թիմարի տերերը պատերազմի են գնում ալայի բեյի և չերիբաշիի հետ՝ Դիարբեքիրի վեզիրի բանակի կազմում։ Եթե ֆերմանով որոշված ծառայությանը չգնան, նրանց սանջաքները ուրիշներին են տրվում։ Այդ սանջաքներից բացի, 5 սանջաք էլ արձանագրված են իբրև արտակարգ և նախապես սահմանված հյուքումեթներ։ Այս սանջաքներում եղած զեամեթների և թիմարների տերերը համարվում են սեփականատեր։ Ամբողջ եկամուտը պատկանում է իշխողներին։

Դիարբեքիրի օսմանյան սանջաքները հետևյալներն են՝ Խարբերդ, Էրղանի, Սիվերեկ, Նիսիբին, Հիսնի-Քեյֆ, Ձմշկածագ, Սղերտ, Միֆարկին, Ակչե-Կալա, Կարբ-Նիսիբին, Խարուր, Սենջար։ Դիար-

ջեքիրը սանջաքի կենտրոնն է։ Սանջաքների իշխողները բոլորը օսմանցի բեյեր են։ Յուրթլուքի և օջաքլըքի սանջաքները հետևյալներն են՝ Սեղման, Կուլեփ, Մեհրանիյե, Թերջիլ, Աթաք, Փերթեք, Չապաքջուր, Ջերմիկ։ Ըստ օրենքի, եթե օջաքլըք են եղել և նրանց բեյերը անժառանգ են մահացել, վերածվել են սանջաքների։ Ամեդի էյալեթում եղած հյուքումեթներն են՝ Ջեզիրե, Էգիլ, Գենջ, Փալաս, Ջեզհ։ Այս հինգ հյուքումեթները իբրև ազատ միրմիրանություն, տրվում են նրանց իշխողներին, սակայն նրանք պարտավոր են վերջինի հետ միասին պատերազմի գնալ։

Միր Շեհրի, Միր Փիսան, Միր Փոզան, Սիր Կանջուք և այլն՝ մոտ 300 աշիրեթի կտրիճներ կան։ Ունեն դեֆթերդար, գեֆթերի քեթխուգա և մալդեֆթերդարի։ Խասը 40399 ակչե է։ Փաշայի կենտրոնը Ամեդի լիվայում է և 9 զեամեթ ու 168 թիմար կա։ Այս սանջաքը ջեբելուների հետ միասին, ըստ կանոնի, 2000 զինված զինվոր ունի, իսկ առանց ջեբելուների՝ 700 զինվոր։ Պատերազմի ժամանակ ամբողջ Դիարբեքիրի էյալեթը 30.000 զինված զինվոր է տալիս, իսկ փաշան, ըստ խասերի, 3010 ընտրված զինվոր ունի։

Դիարբեքիրի էյալեթում օջաքի բեյերի և իշխողների խասերը այսպես են։ Հազմեի միրլիվայի խասը՝ 219.999, Էրղանիի միրլիվայի խասը՝ 200 510, Սիվերեկի միրի խասը՝ 403 043, Աթաքի միրի խասը՝ 447 200, Թերջիլի միրի խասը՝ 445 300, Ջերմիքի միրի խասը՝ 214 000, Հիսնի-Քեյֆի միրի խասը՝ 203 955, Էգիլի օջաքլըքի խասը՝ 296.750, Չապաքջուրի միրի խասը՝ 370.000, Չմշկածագի միրի խասը՝ 374.223, Սեղմանի միրի խասը՝ 349.007, Սղերտի միրի խասը՝ 223 772, Ակչե-Կալայի խասը՝ 200 000, Միր-Շեհիրի խասը՝ 191 517, Միր-Փեսփանի և Փոզանի խասը՝ 100 000, Միր-Կուլեբի օջաքլըքի խասը՝ 166 668, Միր-Խանջաքի խասը՝ 427 800, Միր-Փերթեքի խասը՝ 380 000, Գենջի միրի խասը՝ 278 300, Կարա Ամեդի դեֆթերդարի քեթխուգայի խասը՝ 100.924, զեամեթի դեֆթերդարի խասը՝ 80 000...

Դիարբեքիրի բերդի նկարագիրը: Շաթ-էլ-Արաբի եզերքին, Կըզ-Կալասի անունով նշանավոր մի բարձր ժայռի վրա, սև քարերից կառուցված և երկինք խոյացած ամրակուռ և բարձր մի բերդ է։ Թեև սեպ ժայռի վրա է կառուցված, բայց այդ բարձր լեռան գագաթը ընդարձակ և կանաչազարդ է։ Բերդի արևելյան կողմը թեքված է դեպի հյուսիս և կառուցված է երկինք խոյացած ժայռերի վրա։ Այս բարձր բերդի ներքևում են գտնվում Աղջկա քարայրները (Կըզ մաղարալարի)։ Այստեղ է նաև Յունիսի գերեզմանը։

Այստեղից մարդ չի համարձակվում ներքև նայել. կարծես դժոխային անդունդ լինի։ Այս վայրից մի մեծ գետ է հոսում և այդ պատճառով երկու կողմում ծաղկազարդ այգիներ և պարտեզներ են տարածված, Դիարբեքիրի ժողովուրդը 6 ամիս շարունակ այս զբոսավայրումն է ժամանակ անցկացնում։ Երբ բերդի աշտարակներից նայում ենք ներքև հոսող մեծ գետին, գետը մի առվակի նման է երևում։ Բերդի այս մասը վերին աստիճանի դեպի երկինք է սլացած։ Իսկ մյուս կողմերից՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից, հարթություն է։ Պարիսպների բարձրությունը 40 արշին է, որոնց հիմքը տաս արշին լայնություն ունի։ Այս բերդը գեղեցիկ սև քարերից կառուցված լինելու պատճառով Կարա Ամեդ է կոչվել։ Ճարտար վարպետը բերդը կառուցել է քառակուսի ձևով, սակայն հյուսիսից երկարաձիգ է և բոլոր աշտարակներն ու պարսպի ատամները իրար են նայում։ Պաշարման ժամանակ մեկը պաշտպանում է մյուսին։ (Բերդը) մարմար քարից է կառուցված և հիմնրված է սեպաձև ժայռերի վրա։ Պաշարվելու դեպքում թշնամին չի կարող ոչ մի կողմից անցքեր ու խրամատներ փորել և բերդը գրավել։ Բերդը կհանձնվի միայն այն դեպքում, երբ մի տարի պաշարվի և այնտեղ քաղց ու սով սկսվի։ Բերդը արևելքից խանդակների կարիք չունի, քանի որ նրա քառանկյունի ձևի արևելյան մասում շատ խոր անդունդ կա։ Սակայն հյուսիսից, հարավից և արևմուտքից խրամներ կան, իսկ հիմքերում Չինական պարսպի* նման աշտարակներ կան, որոնցից յուրաքանչյուրը մի բարձր բերդի է նման։

(Այս բերդը) ուրիշ բերդերի նման երեք-չորս հարկանի չէ. միայն մի հարկանի ամուր պարիսպներ ունի։ Ունի չորս երկաթյա դարպասներ։ Դաղ կափուսուն բացվում է դեպի հյուսիս, այս դարպասից են սկսվում Էգիլ, Էրղանի, Ջերմիք, Խարբերդ և Փալու տանող ճանապարհները։ Արևմուտք բացվող Ռում կափուսուն տանում է դեպի գերեզմանատունը և Կարադաղները։ Մարգին կափուսուն բացվում է դեպի հարավ, Ենիկափուն դեպի արևելք։ Այստեղից ներքև, Շաթ գետի կամրջով անցնելով հասնում ենք Միաֆարկին բերդի մոտի Բոխման կամուրջը, որտեղից մեկ մենզիլ հեռավորության վրա գտնվում է Հեզո բերդը։ Այս երկաթյա դարպասներով ամրակուռ պարսպի շրջագծի երկարությունը, նվաստիս քայլերով, 11000 քայլաչափ է, սակայն արևելյան կողմով անցնելը անհնա-

* Բնագրում՝ سد أجج

րին էր, քանի որ փաշայի պալատի դիմացը խորխորատ էː Դաղի դարպասից մինչև Մարդինի դարպասը ընկած բերդի ներքին մասի երկարությունը, եթե 2000 քայլաչափ հաշվենք, Կարա Ամեդ բերդի ամբողջ շրջագծի երկարության 14000 քայլաչափ կկազմիː Բերդի այս մասը, որը նայում է դեպի Շաթը, այսինքն՝ նրա հյուսիսային անկյունը, այնպիսի սև մարմար քարից է կառուցված, որի վրա երկաթը ոչ մի ազդեցություն չի գործում, այրելիս կրի չի վերածվումː Տարօրինակ մի հանք է, որը լեզվով չի կարելի նկարագրելː

Ներքին բերդի գովքը: *Ընդամենը 4000 քայլաչափ էː Բերդի ներսում 150 սենյակից բաղկացած և բազմաթիվ դիվանխաններով*[10] *մի մեծ ապարանք կաː Այստեղ եկող ամեն մի վեզիր մի սենյակ, բաղնիք, ավազան ու շատրվան է կառուցել և չորս հարկանի գեղազարդ մի պալատ է ստացվելː Բոլոր պատուհաններն ու պատշգամբները նայում են Շաթ-էլ-Արաբին և Շաթ գյուղի դաշտինː Ապարանքում շատ հին սրահ կա, որը կառուցվել է նախորդ սուլթանների կողմիցː Այս սրահի հին ոճով երփներանգ գեղազարդումը հիշեցնում է Եգիպտոսի Կահիրեի Սուլթան Կալավանի պալատըː Այս ապարանքի հիմնադիրը Սելիմ առաջինի վեզիր Բըյըքլի Մուհամմեդ փաշան էː Ապարանքը շատ մեծ ու ընդարձակ էː Քաղաքի մեջ, դեպի հարավ նայող երկաթյա մի դուռ ունի, որը մշտապես պահպանվում է բերդապահների կողմիցː Ներքին բերդում գտնվող ջրաղացների ջուրը, աստվածային հրաշքներից լինելով, ներքին բերդի ժայռից բխելով, պտտեցնում է ջրաղացքարը և փաշայի ապարանքից անցնելով բերդի պարսպի ստորոտը, դուրս է հոսում մի երկաթյա խողովակի միջով և բախվելով ժայռերին՝ Սելսեբիլ*[11] *ջրի նման խառնվում է Շաթ գետինː*

Դիարբեքիրի ջամիները: *Քաղաքի կենտրոնում գտնվող Ջամիի Քեբիր անունով հայտնի հնագույն տաճարը մի ջամի է, Դիարբեքիրի պարծանքըː Հույն պատմագիրները միաձայն վկայում են, որ այս հնագույն տաճարը կառուցվել է վեհափառ Մուսայի (Մովսեսի) ժամանակː Տաճարի ներքնամասի (հարեմ) աջ կողմում, ուղղահայաց սյուներից մեկի վրա եբրայերեն տարեթիվ կաː Բերդը ում ձեռքն էլ անցել է՝ այս տաճարը պահպանվել է իբրև տաճար... Համազոր է Հալեպի Ուլու, Շամի Էմևիյե ջամիներին, Երուսաղեմի Աքսասի մզկիթին, Եգիպտոսի Եզհերիյե ջամիին և Ստամբուլի Այա Սոֆիայինː Եկեղեցուց ջամիի վերածվելու մասին շենքի վրա հազարավոր նշաններ կան... Այս ջամին այնքան ընդարձակ է, որ նրանում 10.000 մարդ կարող է տեղավորվել...*

Այնուհետև էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Դիարբեքիրի մյուս բազմաթիվ ջամիները, մեդրեսեները, թեքիյեները, աղբյուրները, քարվանսարաները, խաները, շուկաները և այլն։

Բնակիչների դեմքն ու գույնը: Դիարբեքիրի օդը շատ լավն է, Նրա բնակիչները հիանալի ջուր են խմում և այդ պատճառով վարդագույն դեմք ունեն։ Ընդհանրապես միջահասակ, առողջ և բարեկազմ են։ Ապրում են ամենաքիչը մինչև 70—80 տարեկան հասակը և աշխատանքից ու վաստակից ետ չեն մնում։ Հաճախ հասնում են մինչև հարյուր տարեկանը։ Սիրելի և սրտագրավ երիտասարդ տղաները անհաշիվ են, նրանք աննման են իրենց գեղեցկությամբ և վայելչությամբ, խոսում են Արևելյան ժողովրդին հատուկ մաքուր լեզվով ու հռետորական ձևով, կարծես սրտաբեկ սիրահարներ լինեն։ Նրանց բոլոր շարժումներն ու արտահայտությունները մարդուն հիացմունք են պատճառում։ Բոլոր երիտասարդ տղաները նուրբ են և բարեձև։

Այս երկրում շատ պերճախոս և կարող բանաստեղծներ կան, որոնցից յուրաքանչյուրը նման է Ֆիզուլիին և Ռուհիին։ Շատերին հանդիպեցինք ու զրուցեցինք, իսկապես աննման, կատարյալ մարդիկ են։

Ավագանիի հագուստը: Աննման սամույրի և կզաքիսի մուշտակներ, սնդուս հագուստներ են հագնում։ Միջակ դրության մարդիկ ընտիր ասվիից են հագուստներ հագնում, իսկ ցածր դիրքի մարդիկ՝ հասարակ ասվիից։

Կանանց հագուստը: Բոլորը փաթաթվում են սպիտակ չարսավով, երեսները ծածկում են քողով, իսկ գլուխներին ոսկյա և արծաթյա թաքիյե (գդակ) են կրում։ Ոտքերին անպայման ջիզմե են հագնում։

Դիարբեքիրի ավագանիի ասելով քաղաքում՝ ապարանքներում, ազնվականների տներում մոտ 140 բաղնիք կա։ Պատճառն այն է, որ կանայք ծածկված ու պատվախնդիր են և միայն տնային բաղնիքներում են լողանում...

Էվ. Չելեբին նկարագրելով քաղաքի բազմաթիվ բաղնիքները, ավելացնում է.

Բոլոր բաղնիքները տաքացվում են քաղաքի աղբով։ [Բաղնիքները] խիստ տաք են լինում. քիչ մարդիկ են այս բաղնիքներում մեկ ժամից ավելի կարողանում տոկալ։ Ռումի երկրում անհնարին է բաղնիքները այս աստիճան տաքացնել փայտով։ Բաղնիքների

աղբով տաքացվելու օգուտներից մեկն էլ այն է, որ քաղաքում ոչ մի կտոր ավելցուկ և աղբ չի մնում։ Ամբողջը կողովներով հավաքում և տանում են բաղնիքները։ Բաղնիքներն աղբով տաքացնելու սովորությունը միայն Դիարբեքիրին հատուկ չէ. Արաբստանում բոլոր բաղնիքները աղբով են տաքացվում։

«Շաթ-էլ-Արաբ» վերնագրի տակ Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Շաթ-էլ-Արաբ գետը, նրա բազմաթիվ ճյուղերն ու վտակները, հիշատակում է բոլոր աղբյուրներն ու նրանցով ոռոգվող վայրերը...

Դիարբեքիրի հացահատիկները և բերքերը: *Բուն Դիարբեքիրը մի քարաստան է, սակայն նրա նահիյեները 7 տեսակ խոշորահատիկ ցորենի, գարու այնքան առատ բերք են տալիս, որ սոմարը[12] ծախվում է 10 ակչեով։ Պատճառը այն է, որ վիլայեթը ընդարձակ է և բարեշեն, ցանքսերը շատ են ու բերքը առատ։*

Արհեստները: *Դիարբեքիրում պատրաստված սուրը, դաշույնը, դանակը, ղեդդարեն[13], ոսկերչական գործերը, կարմիր բեզը, չուստերը, կոշիկները և ջիզմեները շատ արժեքավոր են և լավ որակի։*

Պտուղները: *Շաթի եզերքին մշակվող սեխի նման հայտնի և քաղցրահամ սեխը ոչ մի երկրում չկա, գուցե Վանի Բոհթանի սեխը սրան հավասարվի...*

Զբաղմունքը: *Բնակչության մեծ մասը զբաղվում է վաճառականությամբ, կան հարուստ առևտրականներ։ Մի մասն էլ ծառայում է։ Մնացածը քաղաքի արհեստավորներն են, որոնք ամեն տեսակի արհեստներով պարապում են, մասնավորապես շատ են ոսկերիչներն ու երկաթագործները։*

Էվ. Չելեբին ծանրանում է նաև Դիարբեքիրի թուրքական բարբառի առանձնահատկությունների վրա։ Նրանց բարբառից մի շարք օրինակներ է բերում։ Այնուհետև նկարագրում է քաղաքի զբոսավայրերը, ուխտատեղիները և այլն։

Էվ. Չելեբին Դիարբեքիրի իր երկար նկարագրությունների վերջում գրում է.

Այս քաղաքի շրջակայքում ապրում են բազմազան ցեղեր. բնակչությունը՝ քրդեր, թուրքմեններ, արաբներ, աջեմներ են, իսկ ռայաները հայեր են։ Բերդը գտնվելով Շաթի եզերքին, այն Տիգրիսի ջեզիրեն է համարվում, քանի որ Եփրատի և Շաթի միջև ընկած մասը կոչվում է Էլջեզիրե։ Օդի և եղանակի հիանալի լինելու շնորհիվ ժողովուրդը վերին աստիճանի նուրբ, երիտասարդությունը ազնիվ և խելացի է, խոսում են քրդերեն, արաբերեն և հայերեն։ Շատ պանդխտասեր, աղքատասեր, ուրախ, զվարթ և սրտառուչ

մարդիկ են։ Սրանց տղամարդիկ հաճելի, մաքուր համոզմունքի տեր և հավատացյալ են, կանայք բարեկիրթ և աստվածասեր են։ Կանայք, նույնիսկ փոքր աղջիկները, շուկա չեն գնում։ Վերին աստիճանի պատվասեր և բարոյական մարդիկ են։

(էջ 23—56)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԱՐԲԵՔԻՐԻՑ ՄԱՐԴԻՆ ԵՎ ՍԵՆՋԱՐ

Այս վերնագրի տակ էվ. Չելեբին միջանկյալ խոսում է Մեծ էլչեգիրիի մասին։ Այնուհետև նկարագրում է Մարդինի, Խաթունիյեի և Սենջարի բերդերը։

Նկարագրելով Սենջարի բերդը, էվ. Չելեբին մանրամասնորեն կանգ է առնում այդ բերդի մոտ գտնվող Սաչլի-Դաղ անունով լեռան շրջակայքում ապրող 45 հազար եզիդի և բաբերի քրդերի [Սաչլի քրդերի] վրա։ Նա պատմում է, որ իր փաշան՝ Մելեք Ահմեդ փաշան, Դիարբեքիրի վալի եղած ժամանակ, այդ ապըստամբ և թալանչի քրդերին կարգի բերելու համար, մեծ բանակով գնում է Սաչլի քրդերի վրա։ Խիստ կատաղի կռվից հետո Փալուի քրդերին պարտության է մատնում։ Փաշան քրդերին առաջարկում է ասելով. «Այգիի հարկը, ոչխարի գլխահարկը (աղնամ) և այլ պարտադիր տուրքերը պետք է վճարեք»։ Սաչլի քրդերի իշխողը փաշային տասը ջորու բեռ մետաքս է ուղարկում։ Այս դեպքը պատահել է էվ. Չելեբիի ներկա ուղևորությունից 15 տարի առաջ։

Այս առթիվ էվ. Չելեբին տալիս է մի շարք հետաքրքիր տեղեկություններ Սաչլի քրդերի մասին։

Սաչլի քրդերի բնութագիրը։ Սենջարի մի մասի Սաչլի դաղ կոչվելու պատճառն այն է, որ այստեղ ապրող ցեղերի բոլոր տղամարդիկ մազոտ են։ Բոլորի հագուստները գույնզգույն շալից և բրդից են։ Գոտիները մետաքսից են, գլխի փաթաթանները նույնպես գույնզգույն մետաքսից են։ Ոտներին կրում են փոչեքլի, փալսենտի, սեդիսի, ճեծարի կոչված պոչավոր չուստեր... Սրանց զենքերն են սուր, դաշույն, հրացան, ջաբ։ Ջաբ է կոչվում այն զենքը, որի մեջ դնում են Այնթաբի նետն ու աղեղը և կապում գոտուց։ Այնքան վարպետ են գնդակ արձակելու գործում, որ լվին աչքից և ուղտին ոտքից խփում են։ Սրանց հրացանները շատ անպետք են, բայց շատ լավ են նշան բռնում։ Ժողովուրդը առհասարակ կարճահասակ է, գլուխները ճաղատ, գրեթե վիզ չունեն, կարծես գլուխը անմիջապես մարմնից է սկսվում։ Ուսերը լայն, կուրծքը ուռած, մեջքը հաստ, բազուկներն ու սրունքները պինդ, ոտները մեծ, աչքերը սև և կլոր, հոնքերը շատ խիտ են։ Այլ քրդերը սրանց սեքիզ բըյըքլի (8 բեխավոր) են անվանում, որովհետև երկուսը բեխերից, երկուսը հոնքե-

րից, երկուսը քթածակերից, երկուսն էլ ականջներից են դուրս գալիս։ Սրանց մարմինը սև ոչխարի մորթու է նմանում... Տղաները 10 տարեկան հասակում դեռ անչափահաս երեխա են, սակայն մինչև 20 տարեկան հասակը հասունացած կտրիճների նման մազոտ դեմք կստանան։ Կանանց հագուստները հասնում են մինչև գետին... երեխաներին սկզբում սև շան կաթ են տալիս։ Երբ մեկը քարով խփի շանը, այդ մարդուն առանց խնայելու սպանում են։ Ամեն մեկը իր դռանը 5—10 շուն ունի. կերակուրը նախապես շանն են տալիս, միայն շանը կշտացնելուց հետո են իրենք ուտում։ Մի սև շունը ծախում են 1000 ղուրուշով, տասը ջորիով։ Այս քրդերը սոխն ու ջաչեգիլի (՜) պանիրը միշտ իրենց հետն են տանում։ Եթե մեկը բռունցքի հարվածով սոխը ճզմի, նրանք այդ մարդու գլուխը ջարդում և սպանում են։ Տարօրինակն այն է, որ եթե սրանցից հարուստ մեկը մեռնի, նրանք այդ մեռելին սոխի ջրով լողացնում և գերեզմանի վրա էլ սոխ են տնկում։ Բոլոր մեռյալների պատանքի մեջ շան մազ դնելը ընդհանուր սովորություն է։ Շատ անգամ այս մասին հարցրի սրանց գերիներից, բայց ուղիղ պատասխան չտվին, «սոխը լավ է» ասացին։ Այսպիսի մի առած կա՝ «Մի քրդի հարցրել են, եթե թագավոր լինես, ի՞նչ կուտես. նա պատասխանել է «սոխ... կուտեմ»։ Արդարև քրդերը սոխը շատ են սիրում։ Նմանապես տարօրինակ սովորություն է, եթե այս քրդերի շուրջը մի գիծ գծես, նրանք անկարելի է, որ այդ գծից դուրս գան, մինչև որ մեկը այդ շրջագծի մի մասը չջնջի։ Եթե իմանան, որ այդ շրջագծի մեջ պիտի մեռնեն, նորից դուրս չեն գա։ Այս երկրում սև շունը ծնելիս մեծ ուրախություններ տեղի կունենան։ Իսկ երբ շունը սատկի, սոխի ջրով լվանում և տանում են շներին հատուկ գերեզմանատունը։ Մեռնող շան հոգու համար կենդանի մնացած շներին ոչխարի խորոված են ուտացնում։ Սրանց շները իսկապես առյուծի են նմանում։ Այս երկրում բոլորովին դայլ չկա։

Տարօրինակ է, այս Սենջարի լեռը նվիրական երկիր լինելով հանդերձ, այնտեղ այսպիսի անհավատներ են ապրում...

Այս Սաչլի ցեղը մեծ բերքեր է ստանում... մեղրը, խաղողը աննման են։ Ջոր խաղողը (չամիչը) Բաղդատի, Բասրայի և Լհասայի վաճառականները շատ հաճույքով գնում են։ Շատ են նաև թթենիները, Մարդինի բերդում գործածվող խիստ թանկագին գլխանոցները Սենջարի մետաքսից են պատրաստվում...

(էջ 56—71)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԱՐԲԵՔԻՐԻՑ ՎԱՆ

Դիարբեքիրից տիկերի լաստ նստեցինք և Շաթ գետի վրայով շարունակեցինք մեր ճանապարհը։ Այստեղ տիկերի լաստ պատրաստում են կամուրջների մոտ։ Սրանք մի տեսակ նավ են. տիկերի վրա տախտակ է ամրացվում և սրանցով կարելի է ձիեր ու հազարավոր կանթար[14] բեռներ տեղափոխել, նարդի կամ սաթրանջ խաղալ, աջ ու ձախ դիտել, երբեմն բարեշեն գյուղերին մոտենալ, խոհանոցում պատրաստված կերակուրները ուտել և այս կերպով ապահով և հանգիստ մինչև Բաղդատ կամ Բասրա հասնել։ Այս տիպի նավեր (լաստեր) շինող հատուկ վարպետներ կան։ Դիարբեքիրի կամրջի մոտ նման բազմաթիվ պատրաստի լաստեր կան։ Նվաստս այդ լաստով մի ժամ ճանապարհ անցա և իջևանեցի Սաատի գյուղում, որը կանաչազարդ դաշտում ընկած պարտեզներով և այգիներով քրիստոնյաների հարուստ գյուղ է։ Այստեղ գողեր շատ կան։ Այդ գիշեր մեզանից մի հակ վրաններ գողացան։ Սակայն փառք աստծո. ետ վերցրինք և գողերից երկուսին սպանեցինք։ Այդտեղից շարժվեցինք նորից դեպի արևելք և եկանք Ջյոլ թեփե մենզիլը... այնտեղից դեպի հյուսիս գնացինք և հասանք Միաֆարկինի բերդը։*

Միաֆարկինի բերդի բնութագիրը: *Այս բերդը գտնվում է Շաթ և Բաթման գետերի միջև։ Այս գետերը միմյանցից անջատված լինելու պատճառով բերդը ստացել է Կալայի-միաֆարկին** (անջատված ջրի բերդ) անունը, որը աղավաղված ձևով Միաֆարկին է կոչվում։ Աջեմները «Կալայի միանի-ֆարկ»*** են ասում, որ նշանակում է «Մեջքը բարակ բերդ»։*

Հնագույն մեծ քաղաք և բերդ է։ Առաջին հիմնադիրը եղել է Մուսուլի բերդում թաղված վեհափառ Ջերջիս Բենի[15] ցեղից մեկը՝ Հանտիկ մելիքը, որը բերդը կառուցել է Ջերջիսի կարգով։ Սակայն հետագայում քաղաքի բնակիչները Ջերջիսին չեն հավատացել և Միաֆարկին բերդի մոտ գտնվող լեռան վրա Ջերջիսին քառասուն անգամ այրել են կրակի մեջ և նրա մոխիրը քամուն տվել։ Սակայն վեհափառ Իզզեթ Ռիհեի հրամանով Ջերջիսի փոշին նորից

---

* *Ներկայումս Դիարբեքիրի սանջաքի սահմաններում Սիլվան գավառի կենտրոնն է (ծանոթ. հրատարակչի)։*

** *Թուրքերենը՝* قلعة مافارقين

*** *Պարսկերենը՝* قلعة ميان فارقين

հավաքել են և նա կենդանացել է։ Այս դեպքը հիշված և արձանագրված է մի քանի արժեքավոր գրքերում։

Ներկայումս բերդի հետևում գտնվող բարձր լեռան վրա, Ջերջիսի մոխիրի ընկած վայրում, ոչ մի բույս կամ խոտ չի բուսնում։ Ջերջիսը այս բերդի բնակիչներին անիծել է և Վանա ծովի եզերքի Սիփանի սարից մի աժդահա է դուրս եկել ու բերդի ժողովրդին ամբողջությամբ ոչնչացրել է և բերդը անբնակ է դարձել։ Հետո այս բերդը քանդել է Նաբուգոդոնոսորը։ Ավելի ուշ անցել է Ալ-Աբբասիների ձեռքը և Հելաքուն այս բերդի ժողովրդին ոչնչացրել է և բերդը ավերել։ Հետագայում Սեյֆ-ուլ-Դևլե Իբն-Սեմդանին բերդը նորից վերակառուցել է և Քուրդիստանում մեծ հռչակ է ստացել։ Բերդը խիստ բարեշեն է դարձել և մոտ 70 հազար ձիավոր զինվոր է ունեցել։ Իսկ այլ զինվորների թիվը աստծուն է հայտնի։ Զինվորների թվի մեծությունը նրանից է երևում, որ քեյքավուսական խոհանոցում օրական 40 ուղտաբեռ աղ է գործածվել... Մինչև հիմա էլ երևում են Սեյֆ-ուլ-Դևլեի ապարանքների հիմքերը։ Հետագայում Թիմուրը նորից ավերել է այս բերդը. այդ ավերակների հետքերը մինչև հիմա էլ կան։

920 (1514) թվականին Սելիմ խան I-ը, վերադառնալով Չըլդըրի նվիրական պատերազմից, Դիարբեքիրի գրավման համար Բըյըքլի Մուհամմեդ փաշային սերդար է նշանակում, որը Դիարբեքիրի հետ գրավում է նաև այս բերդը։ [Սուլթան] Սուլեյման խանի աշխարհահամարով Կարա Ամեդը սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյը օրենքի համաձայն տարեկան 10 քիսե եկամուտ է ստանում, կադին տարեկան երեք քիսե է ստանում։ Ունի ալայի բեյ, չերիբաշի և մյուհթեսիբ, ինչպես նաև մյուֆթի, նագիբ, սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար և բերդակալ։ Սակայն բերդապահ զինվորներ և ռազմամթերք չունի։ Երկրի ներսում գտնվելով, դրանց կարիքը չունի։ Սակայն բերդում միրլիվան մի քանի թնդանոթ ունի. տոնական օրերին արձակում են այդ թնդանոթներից և գյուղերի մուսուլմաններին իրազեկ դարձնում։

Միաֆարկինի բերդի նկարագիրը: *Ռում պատմագիրները այս բերդի մասին գրում են, որ գտնվում է Ջեզիրեի Շաթի և Եփրատ գետի միջև ընկած Մեծ Ջեզիրեում։ Սակայն դա սխալ է։ Նվաստս այստեղ ապրել եմ մոտ տաս տարի, ամենուրեք շրջագայել ու դիտել եմ, հետաքրքրվել այս գիտությամբ, այնպես որ ինձ մանրամասնորեն հայտնի է։*

Մալաթիայի մոտ Եփրատ և Մուրադ գետերը, Քյոմյուր խանի

կողմից 40 մենզիլ տարածություն հոսելով, Կուրնե բերդի մոտ Շաթին են խառնվում և կազմում են Շաթ-ուլ-Արաբը, իսկ Շաթ գետը հոսելով Դիարբեքիրի մոտով, անցնում է Հիսնի Քեյֆի, Հավոյի, Մուսուլի, Բաղդատի, Կուրնեի կողքով և խառնվում է Եփրատ գետին։ Դիարբեքիրից կամուրջի տակով երկու օր շարունակ հոսում է դեպի հյուսիս և հասնում է Միաֆարկին բերդին։ Հետևաբար, այս բերդը ի՞նչպես կարող է Շաթի և Եփրատի միջև ընկած ջեզիրեում գտնվել։ Նվաստս անձամբ ուսումնասիրեցի և այսպես գտա։

Այս բերդը կառուցված է Շաթ և Բաթման գետերի միջև ընկած ջեզիրեում և բաժանում է այդ գետերը։ Բերդի հիմնական մասը նույն Միաֆարկին լեռան ստորոտում է։ Մի թնդանոթի գնդակի հեռավորությամբ դեպի արևելք, ընդարձակ, թեթևակի բարձրադիր հարթության վրա, կանաչազարդ վայրում, քառակուսի, ամրակուռ, սրբատաշ քարերից կառուցված գեղեցիկ մի բերդ է։ Հին շինություն է և ամեն մի քարը բաղնիքի գմբեթի և փղի չափ խոշոր է։ Պատերի բարձրությունը 20 արշինից ավելի չէ։ Ամրակուռ պատերի լայնությունը 16 արշին է։ Այնպես որ, Թիմուրը չի կարողացել [այդ պատերը] քանդել և նույնությամբ թողել է։ Շրջագծի երկարությունը 11000 քայլաչափ է։ Խրամները լցված են հողով ու ավազով։ Բերդը թեև մեծ է, բայց շենքերը շատ քիչ են. այգիներով և պարտեզներով, միհարկանի և երկհարկանի մոտ հազար հողածածկ լավ շինված տներ կան։ Նշանավոր շենքերից են՝ բեյի և Սեջահ բեյի ապարանքները։ Քիչ են նաև շուկաներն ու բազարները։ Բերդի չորս կողմում փոքրիկ աղբյուրներ են հոսում, որոնցից ամենաբարձրը կոչվում է Ավազանի աղբյուր։ Ալեքսանդր Մեծը խմել է այս ջրից և այստեղ մի ավազան է շինել տվել, որի համար էլ այդ անունն է ստացել։ Իսկապես, որ դրախտային վճիտ ջուր է։ [Այդ աղբյուրը] ջրում է այգիներն ու պարտեզները, ապա ներքև է հոսում և խառնվում Շաթին։

Այս բերդի տերիտորիայում Բասնեֆա անունով մի գետ կա, որը բերդից հեռու է, ոռոգում է մի շարք գյուղերի և ավանների ցանքսերը և հետո խառնվում է Եփրատ գետին։ Միաֆարկինի լեռներից բազմաթիվ առվակներ են հավաքվում և Հիսնի-Քեյֆի բերդի մոտ, Ջեզիրեում և Մուսուլում իրար են խառնվում։

Բերդի օդն ու ջուրը շատ լավն են և հայտնի են քուրդ գեղեցկուհիները։ Ունի շատ լավ խաղող։ Բերդի հյուսիսային կողմի լեռները ծածկված են այգիներով։ Ժողովուրդը առողջ և ամրակազմ է։ Բերդի հարավային կողմում դաշտերն են, որոնք տարածվում են

մինչև Հիսնի-Քեյֆը և Բաթմանի մեծ կամուրջը, որտեղից մեկ օրում կարելի է հասնել Խուսրևիե բերդը, իսկ հարավից՝ մեկ օրում, Հազոյի բերդը։

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Միաֆարկինի իսլամական ուխտատեղիները։

...Պատմագիր Մուկադդեսի ասելով, Նոյի ժամանակի ջրհեղեղից հետո, նրա ցեղից մեկը՝ Մելիք-Քուրդումը, ապրել է 600 տարի և շրջելով Քուրդիստանում, եկել է Միաֆարկին ու հավանելով տեղի ջուրն ու օդը, այնտեղ բնակություն է հաստատել։ Սրա որդիներն ու թոռները խիստ բազմացել են և ստեղծել Իբրանի (Եբրայերեն) և պարսկերեն լեզուներով կազմված մի նոր լեզու, որը սակայն ոչ եբրայերեն է, ոչ արաբերեն, և ոչ էլ պարսկերեն։ Այդ լեզուն ներկայումս կոչվում է քրդերեն և գործածվում է այս երկրում։ Քրդերենը ունի 42 բարբառ, որոնք իրար նման չեն և մի բարբառով խոսողը մյուսին կարող է հասկանալ միայն թարգմանչի միջոցով։

Քուրդիստան է կոչվում այն երկիրը, որի մի ծայրը հյուսիսում՝ էրզրումից և Վանից սկսած, հասնում է մինչև Հեքարի, Ջեզիրե, Ամադիե, Մուսուլ, Շեհրի Զոր, Հարիր, Արդալան, Բաղդատ, Դերնե, Դերթենկ և Բասրա։ 70 կոնաք տարածություն գրավող այս լեռնոտ երկիրը համարվում է Քուրդիստան և Քարաստան, ուր՝ Արաբական Իրաքի և Ղեմանի (՞) միջև, բնակվում են վեց հազար քուրդ աշիրեթներ և ցեղեր։ Աստված եթե կամենա իր տեղում այս աշիրեթների և նրանց աշիրեթապետների մասին կխոսենք։

Քուրդիստանի լայնությանը, երկարությանը չափ չկա։ Նրա արևելքում՝ Աջեմի սահմանի մոտ, Հարիրից և Արդալանից մինչև Շամի և Հալեպի հողը 20—25 կոնաք է։ Ամենանեղը՝ 15 կոնաք է։ Այս ընդարձակ երկրում 500 հազար հրացանաձիգ կա, որոնք բոլորը շաֆիներ[16] են։ [Քուրդիստանում] ընդամենը 776 բերդ կա, բոլորն էլ բարեշեն են։

Քրդական լեզուներից[17] հայտնի են, զազա, լոլո, հիքարիի, ավնիքի, մահմուդի և շիրվանի, ջեզիրիվի, փեսանի, սենջարի, հարիրի և արդալանի, սորանի, խալթի, ջեկվանի, ամադի, ռուզիկի լեզուները։

Այնուհետև, էվ. Չելեբին քրդական լեզվից բերում է բազմաթիվ նմուշներ, թվեր, խոսակցական կարևոր արտահայտություններ և այլն։

(էջ 75—76)

...Միաֆարկին բերդից շարժվելով դեպի հյուսիս, անցանք Բաթմանի կամուրջով և կանգ առանք։ Կամուրջի տակով գետը այնպիսի ուժգին թափով է հոսում, որ նրա ձայնից մարդու ականջ խլանում է։ Կամուրջը առանց սյուների է և գցված է ժայռերի վրայով։ Այստեղից են անցնում դեպի Դիարբեքիր, Միաֆարկին, Հազո, Բիթլիս, Վան և Քուրդիստանի այլ կողմերը տանող ճանապարհները։ Ալ-Աբբասիների ցեղից հարգելի մի անձ, իր արդար հարըստությունից 3000 քիսե փող է ծախսել, մի շարք ճարտարապետներ ու վարպետներ հրավիրել և շինել է տվել այս հսկա կամուրջը, որը կառուցման ձևով, հիմքի, բարձրության, երկարության և ամրության տեսակետից գերազանցում է Անատոլիայում եղած բոլոր կամուրջներին։ Գետի մեկ կողմը ժայռ, մյուս կողմը ավազ է։ Կամրջի վարպետը մտածել է, որ «Այս գետի վրա միաչքանի մի կամուրջ կառուցվելուց բացի ուրիշ հնարավորություն չկա», կամուրջի երկու կողմերում էլ հաստատ, ընդարձակ քարաշեն թմբեր է հիմնել և դրանց վրա բարձրադիր մի մեծ կամուրջ է կառուցել, որը հեռվից ուղեցույցի է նմանում։ Կամուրջի մեկ ծայրից մինչև մյուսը լրիվ 173 քայլաչափ է։ Հերսեքի երկրում կառուցված Մուսթարի կամուրջն էլ միաչքանի է, սակայն այս կամրջի ճարտարապետական նրբությունը, կանոնավորությունը ոչ մի կամուրջ չունի։ Ո՛վ հավատարիմ եղբայրնե՛ր, Աստվա՛ծ վկա, ես որ իմ թանկագին կյանքը ճանապարհորդությունների մեջ եմ փչացնում, այսպիսի հսկա և սարսափելի, կամարաձև կամուրջ չեմ տեսել...

Կամրջի երկու կողմում, բերդի դարպասների նման, երկաթյա դռներ կան։ Այս դռներից ներս, աջ ու ձախ կողմերում, կամրջի հիմքերին հավասար և կամրջի տակ խաներ կան, անցորդները այստեղ են իջևանում։ Կամրջի կամարի տակ բազմաթիվ սենյակներ կան, որոնց երկաթյա պատուհաններով պատշգամբներում նստում են հյուրերը և նրանցից ոմանք զրուցում են կամարի դիմացի կողմում գտնվող մարդկանց հետ, ոմանք էլ ցանցով ձուկ են որսում։ Ճարտար վարպետը դիտավորյալ է կառուցել այդ բոլորը։ Կամրջի աջ և ձախ կողմերում դրված բոլոր ճաղաշարքերը Նախիջևանի պողպատից են։ Վարպետը գործադրել է իր բոլոր ճարտարությունը և այդպիսի գեղեցիկ ճաղաշարքերի ցանց է կառուցել։ Այս հսկա կամրջի Հազոյի կողմի խանում նստում են Հազոյի բեյի մարդիկ և այդ կողմի անցորդներից տուրքեր են առնում, իսկ Միաֆարկինի կողմից նրա բեյի մարդիկ են տուրքեր առնում։ Այդ խան *կոչված շենքերից բացի շրջակայքում ուրիշ շենքեր չկան։ Թեև էրզրումի*

մոտի Հասան Կալայի դաշտի Արազ գետի վրայով գցված Չոբանի կամուրջն էլ մեծ է, բայց այս կամրջին չի հասնում։ Բրուսա քաղաքով Ռուհբան լեռից հոսող Իրղանտի գետի վրայի Իրղանտի կամուրջն էլ ուզել են այս Բաթմանի կամրջի ձևով կառուցել, բայց ոչ մի նմանություն... Արդարև, ճարտար վարպետը իր բոլոր կարողությունը գործադրել է այս կամրջի վրա և այնպիսի ճարտարություն է երևան բերել, որին հետագայում ոչ մի ճարտարապետ չի կարողացել հասնել։ Կամուրջը, հիմքից մինչև գագաթը, շինված է Դիարբեքիրի բերդի քարերից. կայծքարը այդ քարի համեմատությամբ դատարկ բան է։ Այս կամրջի վրա գցված քարաշեն մայթերը 700 տարուց ի վեր բնավ չեն քանդվել և կարծես թե նոր են վարպետի ձեռքի տակից դուրս եկել... Մի խոսքով այս կամրջի գովքն անելու համար լեզուն կարճ է և գրիչը անզոր։

Այդտեղից Բաթման գետի եզերքով շարժվեցինք դեպի արևելք և իջևանեցինք Խաս-չաիր կոչված վայրում... Այնտեղից եկանք Հազո բերդը։

Հազո բերդի բնութագիրը: Բերդի հյուսիսում գտնվող բարձր լեռները կոչվում են Զո լեռներ։ Բերդը կառուցվելուց առաջ Կարա-Կոյունլիներից մեկի՝ Կարա Յուսուֆ խանի, Կարա Զո ցեղը այս լեռներում է ապրել և այս պատճառով այդ անունն է ստացել։ Հետագայում այդ ցեղի մարդիկ հավաքվել են և այդ վայրում մի քաղաք է առաջացել, որը կոչվել է Զո քաղաք կամ Հազո բերդ։ Այնուհետև Ադրբեջանի իշխող Ուզուն Հասան շահը տիրացել է այս բերդին։ Խավարյալ Թիմուրը, երբ եկել է Միաֆարկին բերդը ավերելու, Բիթլիսի Աբդալ խանի նախնիներից մեկը տիրացել ու նորոգել է այս Հազո բերդը։ Հետագայում [սուլթան] Սելիմ խանը Չըլդըրի նվիրական պատերազմից վերադառնալիս, 920 (1514) թվականին Բիթլիսի իշխողը Սելիմին հպատակություն է հայտնել և բերդը հանձնել է նրան։ Սելիմ խանի հրամանագրով իբրև հյուքումեթ է արձանագրվել և իբրև էյալեթ շնորհվել է իր տիրոջը։ Սուլեյման խանի աշխարհահամարով համարվում է Դիարբեքիրի էյալեթի հինգ հյուքումեթներից մեկը... Ունի ալայի բեյ և չերիբաշի, սակայն ենիչերիի սերդար, մյուֆթի, նագիբ և այլն չունի։ Ամեն ինչ իշխողի ձեռքումն է. մինչև անգամ բերդը, ռազմամթերքը, բերդապահ ու բերդակալ զինվորները իշխողի կողմից են նշանակվում։

Հազոյի բերդի նկարագիրը: Զո լեռան ստորոտում, սեպաձև ժայռի վրա կառուցված փոքր բերդ է։ Շրջագծի երկարությունը 1600 քայլ է։ Արևելքից սեպաձև ժայռեր են, իսկ հարավից դաշտավայր

է, ունի այս կողմի վրա նայող երկաթյա մի դարպաս։ Ճանապարհը շատ թեք է, և դեպի ներքևի վարոշը իջնելը դժվարին է։ Բերդի մեջ առանց այգիների ու պարտեզների 150 հողածածկ տուն կա։ Բերդի կեսը բռնում է շրջապատի վրա իշխող Մյուրթեզա բեյի ապարանքը։ Այս բեյը Բիթլիսի Աբդալ խանի փեսան է... Ապարանքում ջրամբարներ և ջամի կան, իսկ մյուս շինությունները ներքևումն են։

Հազո ռաբարի գովքը: Հարավային կողմում, ընդարձակ մի վայրումն է բերդը և բաղկացած է 1000 հողածածկ տնից ու նոր է բարեշինվել։ Շուկայում հայտնի են ջամին և խանը։ Մի փոքր բաղնիք և 3 փոքր խանութ ունի։ Ներկայումս Մյուրթեզա բեյը այստեղ քարաշեն մի խան է շինել տվել, որը նման է ամուր բերդի։ Քարաստան է, պարտեզներն ու այգիները լավ չեն։ Ժողովուրդը քաջ է, նշանավոր են հետևակներն ու հեծյալները։ Աննման են զանազան տեսակի սրախաղերում և նետաձգության մեջ։ Վերին աստիճանի կրոնասեր, բարեպաշտ են և պատկանում են շաֆի դավանանքին։ Սրանց յայլաներում ապրում են խալթի, ղեկվաթի, զիխարի քրդեր, բայց նրանց հետ առևտուր չեն անում...

...Փա՜ռք Աստծո, այս մենզիլում հանդիպեցինք մեր էֆենդի Մելեք Ահմեդ փաշային, նրա ձեռքը համբուրեցինք և Դիարբեքիրի վալիի Ֆիրարի Մուստաֆա փաշայի նամակները և նրա տված բոլոր ավանդները փաշային հանձնեցինք։ Շատ գոհ մնաց, բոլոր վրանները իր հպատակներին ու մարդկանց բաժանեց և 32 քիսե փողով զինվորներին ուլուֆե (ռոճիկ) տվեց։

Այստեղից շարժվեցինք դեպի արևելք և հասանք Քեֆենդեր բերդը, որը ներկայումս Բիթլիսի խանի տերիտորիայում սուբաշիություն է և Բիթլիսի նահիյեներից է... Սրա հարավում, բարձր լեռների վրա երևում է Ջիրիքի բերդը... Այդտեղից թեք և քարքարոտ վայրերով Բիթլիսի գետի ափով շարժվեցինք դեպի արևելք և հասանք Ջիրիքի լեռան մոտ գտնվող Ջեմենտիր անունով վայրը։

ՄԵԼԵՔ ԱՀՄԵԴ ՓԱՇԱՅԻ ԲԻԹԼԻՍԻ ԽԱՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ ԽՆՋՈՒՅՔ

Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին պատմում է Բիթլիսի Աբդալ խանի Ահմեդ փաշային դիմավորելու, ամբողջ ճանապարհին փաշային տրված պատիվների և նվերների մասին։ Փոխադարձաբար փաշայի կողմից խանին, նրա որդիներին և մարդկանց տրված խալաթների, սամույրի մուշտակների և ոսկեզօծ գոտիների մասին։ Մեծ շուքով և հանդիսավորությամբ մտնում են Բիթլիս քաղաքը, որի ժողո-

վուրդը մեծ բազմությամբ դիմավորում է փաշային։ Փաշան ժողովրդին անսահման քանակությամբ ոսկի և ակչե է բաժանում։ Իջևանում են խանի այգիներում, որտեղ փաշայի հրամանով տասը օր հանգստանում են։ Էվ. Չելեբին Բիթլիսում շրջում և ծանոթանում է քաղաքի հետ։

Հին Բիթլիս քաղաքի բնութագիրը։ Էվ. Չելեբին սկզբում տալիս է Բիթլիս քաղաքի հիմնադրման մասին պատմագիրների հաղորդած ավանդությունները, որոնց համաձայն այս բերդի հիմնադիրը եղել է Ալեքսանդր Մակեդոնացին։ Ինչպես այլ առիթներով, այստեղ նորից կրկնում է, որ Ալեքսանդրը այդ ժամանակ տառապել է ծանր հիվանդությամբ ու փորձել է մի շարք գետերի ջրեր խմելով բուժվել և նրան շատ է օգնել Բիթլիսի ժայռի տակից հոսող ջուրը։ Այդ պատճառով իր Բիտլիսի անունով ծառային նա հրամայել է այդ տեղում մի այնպիսի ամրակուռ բերդ կառուցել, որ ինքը՝ Ալեքսանդրն անգամ, չկարողանա գրավել։ Հետո Ալեքսանդրը շարունակում է իր արշավանքը։ Վերադարձին Բիտլիսը բերդը կառուցել և նրա պաշտպանությունը իր ձեռքն է վերցրել։ Ալեքսանդրը բերդը պաշարում է, բայց իզուր։ 40 օր պաշարելուց հետո Ալեքսանդրը բերդը թողնում և գնում է դեպի Մուշ։ Այդ ժամանակ Բիտլիսը մեծ նվերներով գալիս է, բերդի բանալին Ալեքսանդրին է հանձնում և ասում. «Իմ տե՛ր, ձեր հրամանի համաձայն ես բերդը կառուցեցի այնպես, որ դուք էլ չկարողանաք գրավել»։ Ալեքսանդրը բերդի իշխանությունը հանձնում է Բիտլիսին։ Այս պատճառով բերդը կոչվել է Բիթլիս [Բիտլիսի աղավաղված ձևն է]։

...Աջեմ պատմագիրները այս քաղաքը հիշում են «Իսքենդերի Թախթգյահ»[18] անունով։ Ինվան պատմագիրը* այս քաղաքը անվանում է «Մեծ Ալեքսանդրետի բերդ»։ Մինչև հիմա էլ [բերդի վրա]. մի շարք տեղերում երևում են հունական ճարտարապետության նշաններ։ Քուրդիստանում շատ մելիքների ձեռքից-ձեռք է անցել, սակայն ավելի շատ այստեղ իշխել են Ադրբեջանի իշխողներ Կարա Կոյունլու Յուսուֆ Ջելալին և Ակ Կոյունլու Ուզուն Հասանը։ Առաջին անգամ այս վայրը քրիստոնյաներից գրավել է Ալ-Աբբասիներից մեկը՝ Սուլթան Էվհեդուլլահը։ Նրա իշխանության շրջանը կարճատև է եղել։ Քաղաքին տիրացել է Ադրբեջանի շահ Ուզուն Հասանը։ Հետագայում՝ 878 (1473) թվականին, երբ Հասան Շահը Թերջանի դաշտում պարտություն է կրում, նախկին դրությունը վերականգնվում է։ Ավելի ուշ, 920 (1514) թվականին Բիթլիսի խանը [սուլթան] Սելիմ I հպատակություն է հայտնում և ճյուֆումերի կարգով նրա որդիները մինչև հիմա էլ իշխում են իբրև խան, որոնց փադիշահական հրամաններում՝ վեհաշուք խան** տիտղոսն է տրվում...

---

* بنوان تاریخی

** خان عالیشان

Բիթլիսի բերդի տեղն ու նկարագիրը։ Դիվան և Օբիխ լեռների միջև, ընդարձակ և քարքարոտ մի դաշտում, Օբիխ ձորի ձախ եզերքին, Իսքենդերի ձորի աջ կողմում, երկու գետերի միախառնման վայրում, բարձր և սեպաձև մի ժայռի վրա կառուցված բարձր բերդ է, որի մարմար քարերից յուրաքանչյուրը փղի մեծության են։ Բարձրությունը՝ մինչև գագաթը, 600 քայլ է։ Ճանապարհը շատ թեք է և դժվարանցանելի։ Արևելքից ձգվում է դեպի արևմուտք։ Արևելյան կողմում խիստ բարձր մի աշտարակ կա, որից ցած գտնվող ձորն այնքան խորն է, որ մահվան դատապարտված մարդկանց նետում են այստեղից ցած և կտոր-կտոր անում։ Այդ պատճառով էլ այս աշտարակը Կանլի Կուլե (արյունոտ աշտարակ) է կոչվում։ Աշտարակի արևմուտքում, խանի պալատի մի անկյունում տեսակ-տեսակ ռազմամթերք է պահվում։ Աշտարակի վրա ընդամենը 670 պատնեշներ և ատամներ [պարսպի] կան։ Յուրաքանչյուրի վրա մի անցք կա, որից ցած նորից մի շարք անցքեր կան, որոնք հետագայում են բացվել։ Բոլոր պատերը անկյունաձև են և դուրս են ցցված, այնպես որ անկյունի աշտարակներից կարելի է միմյանց տեսնել։ Յուրաքանչյուր աշտարակում պահապանների տներ կան։ Հարավային կողմում, դեպի քաղաք տանող ստորին մասի վրա երեք հարկանի երկաթյա դարպասներ կան և այդ դարպասների արանքներն ամրացված են տեսակ-տեսակ զենքերով և գործիքներով։ Պահապանները գիշեր-ցերեկ հսկում են և ոչ ոքի չեն թողնում բերդ մտնել։ [Բերդի] չորս կողմը Բաբելոնի խորխորատների նման է։ Շրջապատում խրամներ չկան, քանի որ ամեն կողմից վեր են ցցված սեպաձև ժայռերը։

Բերդի շրջագծի երկարությունը 2900 քայլ է։ Սակայն դղյակի կողմը փակ էր և չկարողացանք չափել։ Այդ մասը հավանաբար 1000 քայլից ավելի է։ Այդ դեպքում ամբողջ շրջագիծը մոտավորապես 4000 քայլաչափ կլինի։ Պարիսպների բարձրությունը՝ 80, լայնությունը՝ 10 արշին է։ Բերդի ներսում 300 տուն կա, կեսը բռնել է խանի ապարանքը, որը բազմահարկ, աջեմի և հունական [ձևով] զարդարված սենյակներից բաղկացած գեղեցիկ մի շինություն է։ Ամեն մի խան մի բանով բարեզարդել է։ Մասնավորապես Աբդալ խանը մեծ գումարներ է ծախսել և այդ ապարանքը Ֆիղակայի պալատի նման մի մեծ ապարանքի է վերածել։ Բոլոր պատուհաններից և պատշգամբներից, բերդի աշտարակներից և պատնեշներից կարելի է տեսնել Դատվանի[19] լեռները։ Ժայռի ներսում շատ քարայրներ կան, որոնք լիքն են հացահատիկով և սննդամթերքով։

Այս քարայրներից ներքև իջնող ջրի ճամփաներ կան։ [Բերդում] մի ջամիից, մի մեդրեսեից և հացի ամբարներից բացի ուրիշ շինություններ չկան։

Բիթլիսի էյալեթը և հյուքումեթները: Վանի էյալեթում առանձին հյուքումեթ է։ Ստացված եկամուտը փադիշահի կողմից տրված է բեյին իբրև խաս։ Էյալեթից խանը ամեն օր մի քիսե ակչեի եկամուտ է ստանում։ Աստիճանը Վանի էյալեթի աստիճանն է։ Երկու հազար զինվորով իշխանություն է վարում։ Պատերազմ գնալու, կամ թե պետության բերդերը նորոգման հրավեր ստանալու դեպքում Վանի սերդարի հետ է գնում։ Քաղաք եկած քարավանների մաքսն ու տուրքը խանին է պատկանում։ Քաղաքում ապրող քրիստոնյաների [յակութի] և արաբ ռայաների գլխահարկը Վանի բանակին է պատկանում։ Տարեսկզբին Վանից մի աղա է գալիս, տուրքերը հավաքում է և խանին ռոճիկ է տալիս։ Իսկ Մուշի դաշտի տուրքերը, մշտական կարգով, Երևանի ֆաթիհ սուլթան Մուրադ խանի կողմից խանին է շնորհված։ Խանը այդ տուրքերից վճարում է բերդակալի և բերդի 200 զինվորների համար սահմանված վարձը։ Բերդի բանալիները գիշեր-ցերեկ իր մոտն է պահում։ Այս աստիճանի ազատ և բավականին ընդարձակ էյալեթ է։

Բիթլիսի էյալեթի սահմանները: Արևելքից սահմանակից է Վանա ծովի եզերքի Թախթէ Վան[20] անունով սուբաշիությանը։ Դարձյալ արևելքից սահմանակից է Հեքքարիի Ոստան բերդին։ Հարավից սահմանակից է Շիրվանի և Հիզանի [Խիզանի] բերդերին։ Նորից հարավից, մեկ մենզիլ հեռավորության վրա, սահմանակից է Ջիրիկի բերդին։ Արևմուտքից, երեք կոնաք հեռավորության վրա՝ սահմանակից է Դիարբեքիրի էյալեթի Հաղոյի բերդին, հյուսիսից, երեք մենզիլի վրա՝ Երջիլի բեյին, չորս մենզիլ (հեռավորության վրա)՝ Ջեբաքջուրի բեյին։ Մուշի դաշտով անցնելով Էրզրումի տերիտորիան, հյուսիսային կողմում Նամիրվանի բեյի սահմանն է։ Նորից դեպի հյուսիս, երեքօրյա հեռավորության վրա՝ Էրզրումի Սալազկերտի բեյի տերիտորիան է։ Հյուսիս արևելքում, Վանա ծովի եզերքին, Վանի սանջաքի Ախլաթի բեյի սահմանն է։ Արևելքում, Վանա ծովից այն կողմի հետ կապ չունի։

Խանի տնօրինության տակ կան 70 աշիրեթ և ցեղ։ Ամենակարևորը Մուտիկի բերդի Ալի բեյն է, որը 700 հրացանաձիգ զինվոր ունի։ Եթե խանը ցանկանա սրանցից [ցեղերից] 70.000 զինվոր կարող է վերցնել։ Բիթլիս քաղաքը 40 հազար բնակիչ ունի, որոնք պատկանում են ռուզիքի ցեղին։ [Սրանք] մյուս քրդերի նման քաջ

և արի չեն։ Բեխերը հինայած, աչքերին սուրմա քաշած, մաքուր ու առաքինի, քաղցրախոս մարդիկ են։ Բիթլիսի էյալեթի մարդահամարով 43.000 քրիստոնյա ռայաներ կան։ Ջիզիրեի կեսը պատկանում է Վանի բանակին, կեսը Աբդալ խանին։ Էյալեթում 13 զեամեթ և 214 թիմար կա։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Ըստ օրենքի, ջեբելուների հետ միասին 3000 զինվոր ունի, որոնք խանի դրոշակի տակ պատերազմի են գնում Վանի փաշայի բանակի հետ։ Բիթլիսը 150 ակչեի աստիճանով շերիֆ կաղա է։ Կաղայի իշխանության մեջ 17 նահիյե կա։ Սրանց գլխավորները Մուղիկի, Քեորի[21], Քևաշի, Ջիրդեխանի նահիյեներն են։ Օրենքի համաձայն, կադին տարեկան 80 քիսե եկամուտ է ստանում։ Իսկ եթե խաների հետ լավ հարաբերություն է պահպանում, ավելի շատ է ստանում։ Շաֆիի դավանանքից ունի մյուֆթի, նաղիբ, բերդակալ, հարկահավաք և շեհբենդեր[22], որոնք նշանակվում են խանի կողմից։ Սակայն տուրքերի աղան և ենիչերիի սերդարը նշանակվում են փադիշահի կողմից։ Ունի նաև մյուհթեսիբ, կափանդար[23] և բոյա էմինի[24]։

Բիթլիսի ջամիները: Հայտնի է մեծ քանակությամբ աղոթողներ ունեցող Սուլթան Շերեֆեդդինի հնագույն ջամին։ Շատ գեղազարդ է։ Կամարներն ու գմբեթը ամրակուռ են։ Հոյակապ մի մինարե ունի, որի նմանը ոչ միայն Բիթլիսում, այլ ամբողջ Քուրդիստանում չկա։ Վերին բերդում Բիթլիսի ջամին է, որը կառուցել է Բիթլիս բերդի հիմնադիրը՝ Ալեքսանդր Մեծի գանձապահ Բիտլիսը։ Սկզբում եկեղեցի է եղել, հետագայում սուլթան Էվհադ-Ուլլահը ջամիի է վերածել։ Մեկ մինարեով և հին ոճի ջամի է։ Սարաչխանեի ջամին, ներքին վարոշումն է... Տարօրինակն այն է, որ թեև բոլոր այս ջամիների հատակը պարսկական գորգերով և Սպահանի կարպետներով են ծածկված, սակայն ջամիների մի անկյունում վառարաններ են դրված, որոնք տաքացնում են ջամիները... և նամազի ջուրը։ Ջամիների մի անկյունում էլ սաթրանջ են խաղում, շաֆիի դավանանքը թույլ է տալիս այդ։

Այնուհետև էվ. Չելեբին նկարագրում է Բիթլիսի մզկիթները, մեդրեսեները, դպրոցները, մոտ 20 նաքշբենդի, գյուլշենի և բեկթաշի[25] թեքյեները...

Թաղերը՝ Խուսրև փաշա, Շամ Ջինդան, Ձորում, Ջինիդար, Կըզըլ մեսջիտ, Շեյխ Հասան, Ջիրք, Քեշուր, Գյոք Մեյդան, Քոմուս, Թեկելխան, Նեկշուտ, Արաբ Քյոփրուսու, Օվուլ Մեյդանի, Կարադերե, Ավիխ, Դեյիրման, Խանբաղի։ Կան նաև արաբների և քրիս-

տոնյաների թաղեր։ Քաղաքում հրեա, ֆրենգ և հույն չկա։ Քրիստոնյաները հարուստ վաճառականներ են։

Ապարանքները։ *Հայտնի են խանի, Բեշարիթ Աղայի, Մուստաֆա Աղայի, Կարա Մուհամմեդ Աղայի, Ալայբեյի, Հայտար Քեթխուդայի, Ջաքեր Աղայի, Արաբ Խալիլ Աղայի ապարանքները։*

Խաները։ *Ինը խան կա։ Մութաֆների, Շախանի, Խաթունիյե, Խոսրև փաշայի, Շերեֆխանի խաները և այլն։*

Շուկան, բազարը և բեդիստանը։ *Ընդամենը 1200 խանութ կա։ Ամենքից ավելի ճոխ ու գեղեցիկը ստորին վարոշում գտնվող Խուսրև փաշայի շուկան է, որը Բրուսայի Քելիչիքի շուկային է նման։ Բացի այդ, քարաշեն մի բեդիստան էլ կա։ Երկու տեղում խաղախորդարան կա։ Բիթլիսում պատրաստված գույնզգույն կաշիները աշխարհի երեսին չկան։ Ներկատներում հայտնի վարպետներ կան։ Այս երկրին հատուկ է դեղնագույն ներկը։*

Կափանի շուկան։ *Կառավարական կափանը այստեղ է։ Ամեն տեսակի մետաքսներ և կերպասներ, ստեկիքներ և խմելիքներ կան։ Բոլորը այս կափանն են բերում կշռում, սուլթանական տասանորդը*)ösur) *վճարում և հետո վաճառում։ Որոշված գնից ավելի վաճառել չի թույլատրվում։*

Կամուրջները։ *Բիթլիսում 17 գետակների վրա 11 քարաշեն կամուրջ կա, ինչպես օրինակ բերդի տակի Խաթունիյե կամուրջը, որի տակից հոսում է երկու զուլալ ջուր՝ Իսքենդեր և Ուխ գետակները։ Այնուհետև, Հուսուլ գետի կամուրջը, Էլբրուճ գետակի կամուրջը և այլն... Մեզ հայտնի ջրերի (գետակների) աջ ու ձախ կողմերում, այգիներով ու պարտեզներով բազմահարկ մեծ ապարանքներ կան, որոնք բոլորն էլ քարաշեն են։*

Տները ու շինությունները։ *Ներքին բերդի և ստորին վարոշի ընդամենը 8 թաղում, 7 ջրի եզերքին 5000 քարեշեն և գեղեցիկ տուն կա. բոլորն էլ ծածկված են մաքուր հողով։ Շատ տներ մեկը մյուսին են նայում։ Մեծ մասը բարձր, օդավետ, պալատանման տներ են։ Սակայն ստորին վարոշը իր մեջ չի ընդգրկում բոլոր տները։ Ստորին բերդում շուկան, բազարն ու բեդիստանն են միայն, կա նաև մի քանի հարյուր տուն։ Տները զարդարված են պարտեզներով ու այգիներով։ Բոլորը բլուրների ու ձորերի վրա են և քաղաքին գեղեցիկ տեսք են տալիս։ Սա Քուրդիստանի դրախտն ու պարծանքն է հանդիսանում։ Ստորին բերդը այնքան էլ ամուր չէ, կառուցված է Աբբասիներից մեկի կողմից։ Հարավից գետը զարնվում*

է պարսպին և այդ գնտակը կարծես բերդի խրամը լինի։ Դարպասներից մեկը դեպի արևելք, մյուսը դեպի արևմուտք է բացվում։

Բնակչությունը: *Այս քաղաքի ավազանին շատ հարդելի է։ Նրանք շատ երկար են ապրում և չնայած ուժասպառ են երևում, սակայն ձի են հեծնում, թուր խաղացնում, որսորդությամբ պարապում և առևտուրի են գնում։ Սովորական տարիքը 60—70 է, սակայն ավելի երկարակյացները հասնում են մինչև հարյուր տարեկանի և նրանց դեմքերը կարմրավուն է։ Առողջակազմ մարդիկ են։*

Հագուստները, կանանց, տղամարդկանց և ստրուկների անունները: *Թեև Քուրդիստան է, բայց սամույր մուշտակով խանի ծառայողներն ու ավազանին շատ են։ Միջակ վիճակի մարդիկ Շիրվանի մոտի Մատեն գյուղաքաղաքում պատրաստված կերպասից են հագնում։ Աղքատները բեզից հագուստներ են կրում։ Մի քանի ընկերներից իմացանք, որ բոլոր կանայք սպիտակ չարսավով են փաթաթվում, երեսները քողով են ծածկում և գլուխներին ոսկով և արծաթով զարդարված գդակներ են դնում։ Նրանց հագուստը ամբողջովին մետաքսից է։*

Տղամարդկանց անունները. Հեյդար աղա, Բեշարեթ աղա, Ջենդեղան աղա, Սելհան աղա, Ջիջրի աղա, Սեյֆի աղա, Շերեֆ բեյ, Ջիաէդդին և Բեդեր բեյ, Ալեմշահ բեյ, Քերար Կուլի բեյ, Յաշար բեյ։

Կանանց անունները հարցնելու հնարավորություն չունեցանք։ Խանի կինը, [սուլթան] Սուլեյման խանի վեզիր Ջալ փաշայի աղջիկ Խանըմ Սուլթանն է, որը 100 ստրկուհի ունի։ Ստրուկները մեծ մասամբ վրացիներ են, որովհետև Վրաստանը հյուսիսումն է և մոտ է։ Անունները՝ Սիյավուշ, Ռուսթեմ, Քյազըմ, Ջաքեր, Խենդան, Կրնան, Ուլան-ափարդը, Սալման, Դևլեթ, Խան Վերդի, Սեհրաբ, Շահսուվար է... Ստրկուհիները շուկա ու բազար դուրս չեն գալիս։ Նրանց անունները՝ Դիլդար, Թաբենտե, Էյլենջե, Ջեշմի սիյահ, Գյուհեր, Շեմսե, Դիլարա, Սուրեյա, Գելլի, Քոքբան, Նուրբան, Բաղը-Ջենան։

...Բիթլիսում ընդամենը 600 տնական բաղնիք կա։ Քանի որ քաղաքացիներն իրենց կանանց թույլ չեն տալիս բաղնիք գնալ, նրանք տնական բաղնիքներում են լողանում։ Եթե շուկայում մի կին տեսնեն, անարգում են։

Էվ. Չելեբին նկարագրում է նաև Բիթլիսի մի շարք վայրերը, բոլոր գետակները։ Ապա գովում է բուժեքի կոչված բարբառը։

Բիթլիսի ռումերի քրդերի բարբառը: *Սրանք [ռուժեքի քրդերը] հին քրդերից են։ Սակայն նրանք ճարտարախոս են և նուրբ լեզվով են խոսում։ Այնպիսի յուրահատուկ բառեր են գործածում, որ մյուս երկրների քրդերը չեն հասկանում։ Ռուժեքի քրդերը շատ լավ խոսում են նաև 12 քրդական այլ լեզուներով [բարբառներով]։ Բիթլիսի խանը՝ մեր բարեբար Աբդալ խանը, բանաստեղծ է, ճարտասան և տաղանդավոր գրող։ Նա հավաքել է Ռուժեքի ցեղի բազմաթիվ ընտիր բառեր ու խոսքեր և մի հիանալի* մուխամմես *է գրել։*

Այդ ոտանավորը Էվ. Չելեբին բերել է իր «Ուղեգրության» մեջ (հատ. 4-րդ, էջ 97)։

Բիթլիսի այգիները: *Խանի աղաներից մեկի՝ Միր Աբի, հաշվառումով Բիթլիսում ընդամենը 10 հազար այգի կա. երկրի բնակիչները՝ ավագանին ու պատվավոր մարդիկ, մեծ ու փոքր, բոլորը ամռանը գնում են այդ այգիները և լրիվ ութը ամիս այգիներումն են անցկացնում։ Բոլոր այգիներում տեսակ-տեսակ ու լավ կառուցված ավազաններ, շատրվաններ, բարձր շենքեր կան, որոնք հսկա տարածություն են գրավում, բայց ցաք ու ցրիվ վիճակում են։ Ամենաաչքի ընկնող վայրերը (այգիները) պատկանում են Յակուտի քրիստոնյաներին, որոնցից յուրաքանչյուրը քարաշեն պատերով ու պատնեշներով բերդանման այգիներ են։ Մի քանի այգիներ 2000 ղուրուշի բերք են տալիս։ Նշանավոր այգիներից են Շիրինի, Բաղդեղի, Արաբլիի, Հայդարի և Քարա Մուրադի այգիները։ Խանը անձամբ, երբեմն, այս այգիներն է գնում, զբոսնում ու զվարճանում է։ Յուրաքանչյուր այգում* ամառվա տուն *կոչված մի շենք կա, որտեղ մտնողը հիանում է։ Յուրաքանչյուրը կարծես չինական մի պատկերասրահ լինի, որտեղ գտնվող հազարավոր ծաղիկների բնական և անուշ բուրմունքից մարդ զմայլվում է։ Այս այգիների բոլոր ծառերը տնկված են սաթրանջի ձևով։*

«Խըյաբան-ի զեր»[26] *անունով խաղողի կախված ողկույզները դրված են եղեգից հյուսված վանդակների վրա։ Երբ մարդ շրջում է նրանց ստվերում, հիանում է։*

Վսեմ խանի այգու գոլֆը: *Այս դրախտանման այգին գտնվում է Բիթլիսի արևմուտքում, Նակելբան անունով սեպ ժայռի վրա։ Արևելքում և հարավում նմանապես ժայռեր են, իսկ ներքևից հոսում է գետը։ Ժայռի ամենաբարձր գագաթին մասամբ բնական, մասամբ արհեստական մի մեծ հարթավայր կա։ Հարթավայրի երկու կողմերում բերդի պատերի նման պատեր կան, որոնք աշտարակ-*

ներ և պատնեշներ չունեն։ Արևելքից և հարավից շատ բարձր սեպաձև ժայռեր են, որտեղ կառուցված է ամրակուռ պատերով խանի մեծ ապարանքը, որն ունի բազմաթիվ գեղազարդ սրահներ, մի քանի հարյուր պատուհան և պատշգամբ, արևելքից նայում է Դեյիրման Դերեսիին։ Այստեղ խանի զինվորների համար 700 սենյակ է կառուցված, իսկ սենյակների տակը՝ ախոռներ։ Ապարանքը չորս դուռ ունի... Արտաքին ապարանքի ճիշտ կենտրոնում մի մեծ հրապարակ կա, որտեղ ձիավոր զինվորները զինախաղեր են կազմակերպում։ Սրանք զանազան տեսակի ճարպիկ և ձեռնածու խաղեր են կազմակերպում և խանից նվերներ են ստանում... Զինվորների սենյակների վերևում գտնվում է հարեմի մի քանի հարկանի Քյաշի[27] անունով հախճապակյա ապարանքը, որը շրջապատված է Ալեքսանդրյան պարսպով։ Մի երկաթյա դուռ ունի, որտեղ գիշեր ու ցերեկ, սպառազինված, պահպանություն են անում 40—50 ներքինիացած հարեմի աղաները։ Հարեմի ներսը ինձ հայտնի չէ, քանի որ չտեսա։ Սակայն ըստ մեր լսածների այնտեղ ևս մի հրապարակ կա, որի չորս կողմում՝ 300 սենյակ... Հարեմի ներսում խանի համար 40—50 արհեստանոց կա, որոնց բոլորի մեջ խանը աշխատում է և խալիները մեկ արհեստանոցից մյուսը տանելը անկարելի է։

Էվ. Չելեբին խիստ չափազանցված և գունագեղ ձևով նկարագրում է Աբդալ խանի բազմաթիվ գիտությունների, արհեստների ու լեզուների ծանոթ լինելը։ Առանձնապես գովաբանում է խանի բժշկական ձիրքը, հիշելով մի շարք դեպքեր, երբ խանը մերձիմահ մարդկանց կենդանացրել և բոլորովին առողջացրել է, կույրերին տեսողություն է տվել, բժշկել է նաև ձիերին։ Հիանալի որսորդ է։ Վարպետ ճարտարապետ է, պալատի բոլոր շինությունները խանի ցուցմունքներով են կառուցվել։ Ժամագործության, փորագրության և այլ արհեստներում կատարյալ վարպետ է։ Երաժշտության և երգեցողության ասպարեզումն էլ գերազանց է. գրել է բանաստեղծություններ։

Խանը 14 որդի ունի, որոնք նմանապես ծանոթ են բազմատեսակ գիտելիքների, արվեստների և արհեստների։

Էվ. Չելեբիի ասելով, Արդալ խանը ամեն կերպ հովանավորել և օգնել է գիտնականներին, արվեստագետներին և այդ պատճառով էլ «Բիթլիս քաղաքը ներկայումս գիտության տեր մարդկանց կենտրոնն է»։

Հետո խիստ գովասանքով և բանաստեղծական լեզվով նկարագրում է խանի դրախտանման այգին, որտեղ աճում են խուրման և ամեն տեսակի ընտիր պտուղները։ Նկարագրում է այգում եղած շքեղ ավազանները և նրանց գեղատեսիլ շատրվանները, հազարավոր անուշաբույր և ընտիր ծաղիկները։ Ասում է, որ խանը իր այգու համար Սպահանից, Թավրիզից և Նախիջևանից վարպետ այգեգործներ է բերել տվել։

Այգու հյուսիսային կողմում խանը մի խոշոր ավազան է կառուցել։ Նա հատուկ նավակներ է շինել տվել և ինքը անձամբ թիավարելով իր ընտանիքին ծածկըված նավակով ման է ածել։

Էվ. Չելեբին ուժ տալով իր երևակայությանը, նկարագրում է խանի բաղնիքի բոլոր հրաշալիքները։ Արաբական ոճով, չինական հախճապակիներով և պարսկական պատուհան-փեղկերով շինված այս բաղնիքի ամենաբարձր գմբեթի վրա փորագրված է Ֆիզուլիի բաղնիքի մասին քերթվածը։ Բաղնիքում 300 շատրվան է եղել։ Հատակը եգիպտական ոճով գույնզգույն մարմարներով է ծածկված։ Խոսելով բաղնիքում ծառայող վրացի և չերքեզ ղուլամների մասին Էվ. Չելեբին ասում է. «...ամեն մեկի մեջքին հազար ղուրուշանոց ականազարդ գոտի կա, որոնց մեջ դաշույն և դանակներ են խրված։ Բոլորը սատաֆից շինված նալըններ* հագած շարժվելիս, կարծես Եդեմական դրախտի սիրամարգներ լինեն...»։ Բաղնիքի վերին աստիճանի գեղազարդ և հարուստ սարքավորանքի մասին խոսելիս ասում է. «...բոլոր ծորակները ոսկյա և արծաթյա են, թասերը՝ նմանապես»։ Բազմատեսակ անուշահոտություններով է հագեցած բաղնիքի մթնոլորտը։ Մի խոսքով «այս հոյակապ պալատի, բաղնիքի և դրախտանման այգու նկարագրության համար մարդկային լեզուն իսկապես անզոր է, որովհետև այս հոյակապ շինությունների գեղարվեստական նրբությունն ու գեղեցկությունը աննման է։ Նվաստս, իմ 41 տարվա ուղևորությունների ընթացքում նմանը չեմ տեսել... Մինչև անգամ Բաղդադի ֆաթիհը՝ սուլթան Մուրադը, այս բաղնիքում լողանալիս, սառը ջրի փոխարեն վարդաջուր, իսկ տաք ջրի փոխարեն խնկաջուր է հոսել։ Առանձին մի անկյունում հինգ սևաչյա դելլաք** ղուլամներ, մի այլ առանձին անկյունում հինգ փերիի նման, հրեշտակային գեղեցկությամբ և հրապույրով աննման կույս աղջիկներ Սուլթան Մուրադին ծառայություն են մատուցել։ Սուլթան Մուրադը սրանից շատ գոհ է մնացել և ասել. «Ինչ կլիներ, որ այս բաղնիքը իմ Դար-ուլ-Սեադեթում լիներ»***։ Երբ Մելեք Ահմեդ փաշայի հետ այս բաղնիքը մտանք, նա ասաց՝ «Այսպիսի բաղնիք աշխարհի երեսին չի տեսնըված»։

Խանի Մելեք Ահմեդ փաշայի պատվին տված խնջույքը։ *Այս առթիվ Չելեբին նորից անսահման հիացմունքով է խոսում խանի պալատի շքեղության, հարստության և ճոխության մասին ու ամենայն մանրամասնությամբ նկարագրում այդ խնջույքը։ Խնջույքի սեղանի վրա մատուցում են 14 տեսակ փլավ, բազմատեսակ քեբաբներ (խորովածներ)։ Իբրև խմիչք մատուցվում է Յեմենի սուրճ, բազմաթիվ շերբաթներ, ռեչիլներ, կաթ և այլն... Եվ այս բոլորը կրկնվում է տասն օր շարունակ...*

Էվ. Չելեբին բազմաթիվ էջեր է նվիրել փաշայի պատվին տեղի ունեցած բազմաթիվ ըմբիշների՝ փեհլևանների, և նման անձանց խաղերի և ամեն տեսակ խեղկատակությունների նկարագրությանը****։

---

* Նալըն, սարմուճակ՝ փայտյա կոշիկ, տնային բաղնիքի գործածության համար։

** Դելլաք, բաղնիքներում լողացողներին քիսեով շփելու և լվալու ծառայող։

*** Դար-ուլ-Սեադեթ (բառացի՝ երջանկության վայր), այդպես էր կոչվում Ստամբուլը։

**** Արդալ խանին Էվ. Չելեբին հատկացրել է ամբողջ 24 էջ։

Բիթլիս քաղաքի արհեստները: Ամենից առաջ, ինքը՝ Վսեմ խանը, 770 արհեստում (՞) կարող և ընտրյալ մի անձնավորություն է... չնայած 70 տարեկան է, այնուհանդերձ առողջակազմ է և կենսունակ...

Բիթլիսում պատրաստված շեյխանի, մեկրավի անուններով հայտնի սրերից ոչ մի երկրում չկան։ Դերձակները շատ լավ վարպետներ են։ Խաղախորդարաններում և ներկատներում դեղին, վարդագույն, երկնագույն, կանաչ, մանուշակագույն և բազմաթիվ այլ գույներով ընտիր կաշիներ են պատրաստում։ Եկող-գնացողները տանում են որպես նվեր։ Այս կաշիները արտահանվում են մինչև Ֆրենգիստան (Ֆրանսիա) և այնտեղ շատ բարձր են գնահատվում։ Այնտեղ ընդհանրապես պատրաստում են եղջերուի և թելաթին[28] անունով հայտնի կաշիները, սակայն Բիթլիսի կաշիների նման չեն կարողանում պատրաստել։ Նշանավոր է նաև Բիթլիսի նետն ու աղեղը։

Բնակիչները: Վսեմ խանը ունի 10.000 ծառայողներ, որոնք գիշեր ցերեկ գոտկատեղից շեյխանի և մեկրավի սրեր են կապում և կրծքներին Հալեպի վահաններ են ամրացնում, ձեռքներին հաստ գավազան են բռնում, գլխներին թելավոր ու գույնզգույն փաթթոցներ կապում և ներկվում են կապույտ, դեղին, սև, կարմիր հինայով։ [Բնակչության] մի մասն էլ այաններ և զեամեթների տերեր են, որոնք խաս և խարաջ են հավաքում։ Մյուս մասը վաճառականներն են, որոնք ընդհանրապես ապրանքներ են տանում դեպի Աջեմի երկիրը, Վրաստան և այնտեղից կերպաս են բերում։ Բնակչության մի մասն էլ արհեստավորներ են։

Բերքերը: Որովհետև այս քաղաքը բարձր լեռների միջև ընկած քարքարոտ վայրում է գտնվում, այգիները արհեստական են և երկրագործության համար դաշտեր չկան։ Ցորենն ու այլ հացահատիկները Ռահովայից և Մուշի դաշտից են ստանում։ Լեռներում ապրող քուրդ ռայաները կարմիր կորեկի հաց են ուտում։ Պտուղներից նշանավոր են 11 տեսակի տանձերը։

Ուտելիքները ու խմիչքները: Հայտնի են սպիտակ հացը, սպիտակ լավաշը և այլ բազմաթիվ տեսակի հացերը, փախլավան, կարկանդակը, կաքավի խորոված ու փլավը, նշանավոր են նաև բազմատեսակ օշարակներ՝ շերբաթները և շիրեները։

Այնուհետև Էվ. Չելեբին նկարագրում է Բիթլիսի զբոսավայրերը, բարեգործական (կրոնական) հիմնարկությունները և ուխտատեղիները։

...Բիթլիս քաղաքում մեր փաշա Մելեք Ահմեդ փաշայի հետ 9 օր գիշեր-ցերեկ հաճույքով և զվարճությամբ անցկացրինք, ըստ կարելվույն նրանց վիճակին ծանոթանալով գրի առինք։

Տասներորդ օրը փաշան պատրաստվեց մեկնելու դեպի Վան։ Վսեմ խանը Մելեք Ահմեդ փաշային նվերներ մատուցեց՝ երեք աննման կույս աղջիկ, երեք ղուլամ, 10 ընտիր ձի՝ բոլորը թանկագին սարքով, 3 հատ ականազարդ Մազանդարանի հրացան, 20 հատոր ընտիր գիրք, 3 հատ մետաքսով և ոսկեթելերով գործված Սպահանի խալի, 3 հատ Նախիջևանի գորգ, 40 հատ գույնզգույն սուր, 10 ջորի և 10 ուղտ։ Այս նվերները մատուցանելուց հետո «Մեր նվերները ընդունեցե՛ք» ասաց ու փաշայի ձեռքը համբուրեց...

Մեծ նվերներ են ստանում նաև փաշայի բոլոր մարդիկ։ Փոխադարձաբար փաշան խանին նվիրում է 8 սամույրի մուշտակ, և բաժանվելիս՝ փադիշահի պալատից ստացված սպիտակ սամույր մուշտակը խանին հագցնում և իր մեջքի ականազարդ դաշույնը նրա մեջքին է կապում։ Նվերներ են ստանում նաև խանի որդիներն ու մարդիկ։

Վերջում, «Մելեք Ահմեդ փաշայի խանին տված հանձնարարությունը» վերնագրով հատվածում, Էվ. Չելեբին հիշում է Բիթլիսի խանի անցյալի հետ կապված մի քանի կարևոր դեպքեր։ 1045 (1635) թվականին, երբ Երևանը գրավող սուլթան Մուրադը իջևանում է այդ պալատում, Մելեք Ահմեդ փաշան նրա (փադիշահի) սիլահդարն է եղել։ Խանը փադիշահին անսահման պատիվներ է տվել, իսկ փադիշահը Մուշի ամբողջ տուրքերը մշտապես խանին է շնորհել։ Իսկ երբ 1048 (1638) թվականին սուլթան Մուրադը Բաղդադը գրավելուց հետո վերադառնում է Դիարբեքիր, խանը դեռևս երիտասարդ և անփորձ, նրա մոտ է գնում, բայց այդ «նվիրական պատերազմը չի շնորհավորում», որի համար փադիշահը զայրանում է և հանձնարարում Ահմեդ փաշային խանից լուծել իր վրեժը։ Ահմեդ փաշան որոշ ժամանակ անց փադիշահի ֆերմանով մեծ ուժով խանի վրա է շարժվում, սակայն խանից 70 քիսե դրամ և մեծ քանակությամբ այլ ապրանքներ ստանալով, խանին անպատիժ է թողնում և գնում է Սենջարի լեռներում բնակվող Սաչլի եզիդի քրդերի վրա, 10 հազար մարդ է կոտորում և գերիներով ու ավարով վերադառնում է Դիարբեքիր։ Երբ Ահմեդ փաշան Էրզրումի վալի է նշանակվում, Բիթլիսի խանը նորից հանգիստ չի մնում և Էրզրումի էյալեթի Բինգյոլի յայլան բարձրացող քրդերից 70 հազար ոչխար է խլում, որի համար ոչխարի տերերը դիմում են Ահմեդ փաշային։ Երբ Ահմեդ փաշան գրավոր կերպով դիմում է խանին, վերջինս պատասխանում է. «Ես նրա էյալեթում չեմ, առանձին բարձր խան եմ, Մելեք փաշայի հետ ոչ մի կապ չունեմ»։ Այս պատճառով Ահմեդ փաշան պատրաստվում է նորից մեծ բանակով խանի վրա գալ։ Բայց այդ ժամանակ Ահմեդ փաշան սուլթան Իբրահիմի կողմից պաշտոնազուրկ է արվում...

Այս բոլորի մասին հիշատակելուց հետո նշում է, որ Մելեք Ահմեդ փաշան խանին ասում է՝ «...Ես Վանի էյալեթի տերն եմ, դու էլ իմ էյալեթի իշխանության ներքո ազատ իշխող ես և օջաքլըքի կարգով մշտապես այս էյալեթի տերն

ես... քրդական խառնվածքի պատճառով ապօրինի և անտեղի ընթացքի մեջ չպետք է գտնվես։ Ամեն կողմ ցրված աշիրեթի բեյերին լավ վերաբերմունք ցույց տալով, փադիշահի կողմից քեզ տրված ծառայությունները պետք է կատարես։ Մելեք եղբորդ խոսքերը ճիշտ են, եթե դու չարիաթից և ուղղությունից, ճշմարտությունից մի մազաչափ անգամ հեռանաս, գլխիցդ ձեռք քաշած կլինես։ Շնորհ արա, քանի դեռ ես Վանում եմ՝ դու ամբողջ ժողովրդի հետ լավ վերաբերվիր... Ճշմարտության ճանապարհից մի հեռանա,— ահա իմ խորհուրդը այս է»։

Խանի խնդրանքով էվ. Չելեբին մի քանի օրով նորից մնում է նրա մոտ, որի հետ խանը առանձնապես զրուցում է, նպատակ ունենալով նրա միջոցով փաշայի վստահությունը ձեռք բերել։ Հետո էվ. Չելեբին մեծ նվերներով և հատուկ նամակներով ուղևորվում է Վան։

(էջ 81—128)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ[29] ԲԻԹԼԻՍԻՑ ՎԱՆ

1065 թվականի նվիրական շաբան ամսի սկզբին մեր ծառաների հետ միասին դուրս եկանք Բիթլիսից և շարժվելով դեպի արևելք, անցանք Բիթլիսի ձորով, դաշտային ճանապարհով և 4 ժամ հետո իջևանեցինք Խուսրեվ փաշայի խանում։ Այն Բիթլիսի տերիտորիայում կառուցված մի հին խան է։ Շուրջը բոլորովին շինություններ չկան։ Հանգուցյալ բարեգործ Խուսրեվ փաշան այս խանից մինչև Վանա ծովը և մինչև Բիթլիս քաղաքը, խանի աջ և ձախ կողմերում, դաշտային ճանապարհի վրա 3 ժամ տևողությամբ կամարածածկ ճանապարհ է շինել տվել, որպեսզի ձմռանը բոլոր ճանապարհորդները, վաճառականներն ու ուխտագնացները այս կամարածածկ ճանապարհով անցնեն և նրանց համար ձմռանը տաք լինի, իսկ ամռանը՝ զով, որովհետև այս դաշտում այնպիսի ձյուն է տեղում, որ ոչ Էրզրումում, ոչ Մուշում և ոչ էլ այլ ծանոթ դաշտերում չի տեղում։ Ամբողջ 8 ամիս շարունակ այս դաշտը ծածկվում է մինարեի բարձրությամբ ձյունով և այս կողմից Բիթլիսի ճանապարհը փակվում է։ Այդ պատճառով հանգուցյալ փաշան մեծ գումար է ծախսում և երթևեկողների համար այդ դաշտի մեջ կառուցել է տալիս այս խանն ու խանի աջ և ձախ կողմերի կամարածածկ ճանապարհը։ Սակայն ժամանակի ընթացքում էվկաֆը թուլանում է և [այդ վայրը] քուրդ ցեղերի ապաստարանի է վերածվում, ու մի շարք տեղերում քանդվում է։ Սակայն շինության հետքերն ու մնացորդները պարզ երևում են։

Այս դաշտային ճանապարհով 3 ժամ շարունակ դեպի արևելք գնացինք, հասանք Թախթի-Վան բերդը։ Քրդերը այս բերդը Դատ-

վան են անվանում։ Այդ վայրը Վանի էյալեթի տերիտորիայումն է, Վանա ծովի եզերքին է և Վանի փաշայի խասն է։ Կառավարում է սուբաշին։ Հնում, [սուլթան] Սուլեյման խանի օրոք, Ջալ փաշան այստեղ մի փոքր բերդ է կառուցել, որն ամուր դերբենդ է[30]։ Շահ Թամասբի օրոք, երբ աջեմները գրավում են Ախլաթի, Ադիլջևազի բերդերը, այդտեղից նավերով Վանին օգնության գնալը արգելելու նպատակով ավերում են Թախթի-Վան բերդը։ Ներկայումս ծովեզերքին, բերդանման մի ամուր խան է նավահանգստի մոտ։ Այդ խանում իշխում է Վանի փաշայի աղաներից մեկը՝ իր 200 մարդկանցով։ Վանի բանակի կողմից մի աղա է նստած մաքսատանը և Վանա ծովով եկող ու գնացող նավերից սուլթանական տուրք և մաքսային տասանորդ է առնում։ Այս խանի շրջակայքում մի քանի քրդական տներ կան։ Մի ջամիից բացի, շուկա, բազար և այլ շինություններ չկան։ Սակայն այս վայրը պետք է նորոգվի ու բարեկարգվի, քանի որ շատ լավ նավահանգիստ ունի։

ՎԱՆԱ ԾՈՎԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԵՋ ԹԱՓՎՈՂ ԳԵՏԵՐԸ

Թախթի-Վան բերդի մոտ ճանապարհը բաժանվում է երկու ճյուղի։ Վանա ծովի հարավային կողմից աջ գնացող Գյուզել Դերե, Քիյավին և Սուլթան Կալայի սեպ և քարքարոտ ճանապարհը Հեքքարիի վիլայեթի միջով և Վանա ծովի եզերքով տանում է դեպի Վան։ Երկրորդը՝ Դատվանից դեպի հյուսիս, դարձյալ ծովեզերքով, անցնում է մի շարք բերդերով և 10 օրվա ընթացքում հասցնում է Վան։ Նվաստս, լուր ստացա, որ մեր փաշա էֆենդին այս ճանապարհովն է գնացել Վան, այդ պատճառով էլ մենք, ընկերներով Դատվանից դուրս եկանք և գնացինք հյուսիսային ծովեզերքով ու տեսանք, որ դաշտային ճանապարհի արևելյան վերջավորությունը ամբողջովին ծով է։

Վանա լճի նկարագիրը: *Ըստ Մուկադդեսիի պատմության, Նեմրուդը շրջագայելով աշխարհով մեկ, Վանա երկրի բարձրությունը ամբողջ աշխարհից ավելի բարձր է համարել և այստեղ հավաքելով բոլոր լեռնահատներին ու որմնադիրներին, 40 տարվա ընթացքում, այնպիսի նեմրուդական պարիսպ է կառուցել տվել, որ շինա-*

րարները մարմար քարերը հիմքից մինչև գագաթը կարողացել են բարձրացնել 7 օրում... Հետագայում, երբ Նեմրուդն ապստամբել է նվիրական Աբրահամի և աստծո դեմ, աստծո հրամանով Գաբրիել հրեշտակը իր թևով խփել է այդ բարձր լեռանը և խորտակել նրա վրա գտնվող բոլոր գեղեցիկ շինությունները ու անհետացրել երկրի երեսից։ Աստծո հրամանով այդ լեռը խորասուզվել է անդունդի մեջ և նրա փոխարեն այս Վանա ծովն է առաջացել։ Ծովի ամբողջ շրջագիծը 11 կոնաք երկարություն ունի։ Սա այնպիսի ծով է, որ ուրիշ ոչ մի ծովի հետ կապ չունի։ Նրա ջուրը վերին աստիճանի աղի է։ Արևելքից արևմուտք երկարությունը 68 մղոն է։ Ձմռանը ծովը շատ ուժեղ ալեկոծվում է։ Ծովի ամբողջ շրջագիծը 500 մղոն է... Ծովեզերքի մոտ 9 բերդով երկու մեծ կղզի կա, որոնցից մեկը կոչվում է Անդըս վար և ունի ամրակուռ բերդ ու հնագույն վանք, մյուսը Ախթամար անունով կղզին է, որը հիանալի նավահանգիստ ունի[31]։

Ծովի կենտրոնում խորությունը հասնում է 70 կուլաչի[32]։ Ծովի բոլոր կողմերում լավ խարսխատեղեր կան։ Այս ծովի մեջ ամեն կողմից 70 մեծ ու փոքր գետեր են թափվում։

Հարավից Գյուզել Դերե գետն է, որը սկիզբ է առնում Հեքարի վիլայեթի լեռներից։ Գավաշ գետը հոսում է Հեքարիի Ջյուլամերկի և Ոստանի բերդերի սարերից ու Կոսկուն Կըրանի մոտ թափվում է ծովը։ Դարձյալ հարավից մի գետ է հոսում և Ոստանի բերդի մոտ ծովն է թափվում։ Խոշաբի գետը [ժողովուրդը Խոշաֆ-սույու է անվանում] այնքան մեծ է, որ գարնանը բոլորովին անանցանելի է դառնում։ Այս գետին են խառնվում 7 փոքրիկ վտակներ, որոնք աստծով, իրենց տեղում կնկարագրենք։ Այս գետի ջուրը անուշահամ է։ Նրա վտակներից մեկը նույնպես Հեքարիի լեռներից է սկիզբ առնում, մյուսը Խոշաբի բերդից, մի այլ վտակ սկիզբ է առնում Մահմուդի երկրի Աբաղա ու Կարա-Կալա լեռներից և հոսելով Հեքարիի Ոստան բերդի ու Արտամետի այգիների միջով՝ ծովն է թափվում։

Հյուսիսից՝ Գետնք չայն է, որը գարնանը վարարում է։ Ակունքը արևելքում է՝ Աք-Քերփի և Զոմաքլի լեռներում է։ Ամիկ բերդի տակ թափվում է ծովը։ Այստեղից դեպի հյուսիս, վեց ժամ հեռավորության վրա հոսում է Կարա-չայը։ Սա ևս գարնանը հորդանում է։ Անցնելով Կասըմ Օղլու չայիրի դաշտով՝ Կարա Շեյխլերի մոտ թափվում է ծովը։ Հյուսիսից հոսող Ջանիկի գետը լավ ջուր ունի. ակունքը Բարկիրի [Բերկրի] լեռներում է։ Բերկրի բերդի մոտ

թափվում է ծովը։ Հյուսիսից հոսող Բենդի Մահի գետը Բերկրի բերդի մոտ թափվում է Վանա ծովը. հոսում է մի նեղ լեռնանցքով, ստորին հոսանքում քիչ աղի է, սակայն վերին հոսանքում՝ քաղցրահամ է։ Ակունքը նույնպես այս լեռներում է։ Սրա գետաբերանի մոտ Բենդի Մահին է։

Ընդհանրապես, Վանա ծովում մի մատնաչափ մեծության ձկներ անգամ չկան։ Սակայն տարին մեկ անդամ աստծո հրամանով այստեղ երևում են Վանա ծովի ձկները։ Այստեղից վերև, ամբողջ մի ամիս շարունակ հազարավոր մեծ ու փոքր ձկներ են անցնում և հավաքվում են Բենդի Մահի անունով վայրում ու այնտեղի ջրախոտերով ու արմատներով սնվում։ Կարմիր ձկները[33], կարծես, այստեղ ուխտի են գալիս։ Մի ամիս հետո, երբ ձկները ետ են դառնում, Բենդի Մահի կոչված վայրում Վանի դեֆթերդարի կողմից նշանակված աղան մի թումբ է կանգնեցնում, որից հետո բոլոր ձկները բանտարկված են մնում վերևի մասում և դեպի ցած՝ Վանա ծովը չեն կարող լողալ։ Դեֆթերդարի աղան հարյուրավոր ռայաների և ծառայողների հետ միասին ձկները բռնում և աղում են։ Հետո հազարավոր աջեմ վաճառականներ և Գյոք Դուլաքի հայեր այդ ձկները կառավարությունից գնում և հարյուրավոր ուղտի բեռներով տանում են Աջեմիստան, Լեխիջան (?), Բաքու ու Ադրբեջան և վաճառում։ Այս ձուկը շատ համեղ և չաղ է։ Այդ ձկան առևտուրից կառավարությունը տարեկան 9 բեռ ակչեի եկամուտ է ստանում, որից Վանի բանակին և լճի եզերքին գտնվող բերդերի մարդկանց ռոճիկ է տրվում։ Այս ձկները որսի օրը կարծես թե զգում են իրենց դրությունը ու այդ պատճառով զուր չէ, որ մարդկանցից փախչում են։

«Շերեֆնամեի» պատմության հեղինակը՝ Շերեֆ խանը, ասում է, որ այն թմբից դեպի վեր գտնվող այցելավայրը Մեծ Ալեքսանդրին է պատկանել։ Նա Բերկրի կոչվող վայրի ջուրն ու օդը շատ է հավանել և այնտեղ բնակություն հաստատել։ Իրեն և ժողովրդի սնունդի համար Վանա լճի ձկներին այստեղ թիլիսման է արել և այստեղ թողել։ Այդ պատճառով էլ տարին մի անգամ բոլոր ձկները հավաքվում են այդտեղ և վերադարձին որսվում։

Աստվածային գաղտնիք է. լճի մեջ այդքան գետեր են թափվում, բայց լճի ջուրը մի կաթիլով անգամ ոչ ավելանում և ոչ էլ պակասում է։ Լճի ջուրը վերին աստիճանի աղի է։ Եթե մեկը այդ ջրով մուսուլմանական լվացում կատարի, լվացված տեղը կայրվի. քիչ մարդիկ կարող են դիմանալ այդ ցավին։ Տարօրինակ գաղտ-

նիք է. այս ծովի եզերքին բնակվող պանդուխտ մարդիկ, երբ ծովում լվանում են իրենց հագուստները, օճառի ոչ մի կարիք չեն զգում։ Այդ ջրում լվանալուց հետո հագուստը բոլորովին մաքրվում է, իսկ բեղերը սպիտակում են և կարծես բամբակի են վերածվում։ Երբ փչում են հարավային և արևմտյան քամիները, լճում մեծ փոթորիկ է առաջանում։ Լճի վրա մոտ 20 նավ կա, որոնք քամու ուժով վաճառականներին բերդից բերդ են տանում։

Վանա ծովի եզերքին, Դատվանի խանի մոտ, Ռահ օվայի վերջում ընկած մի հովտում արտասովոր և շատ տարօրինակ մի երևույթ դիտեցինք։ Ըստ ավանդության, երբ Նեմրութը այստեղ սկսել է արհեստական լեռ կառուցել, Նեմրութականները դեպի այդ բարձր լեռը 70 ուղտաբեռ քարեր են տարել։ Ամենակարող աստծո հրամանով, այդ ուղտերն իրենց բեռների նման քար են դարձել։ Ներկայումս այդ ուղտերը կարգով, բոլորը իրենց բեռներով մնում են կանգնած, մի քանիսը ծռվել են, մի քանիսը մնում են կանգնած, մյուսներն էլ ընկել են։ Ներկայումս բոլորն իրենց վիճակում են գտնվում։ 3700 տարուց ի վեր, ոչ մեկը ավերման չի ենթարկվել։ Երբ դրանց դիտում ես հեռու տարածությունից, թվում է թե դեպի Վան գնացող մի քարավան է։ Բոլորը կայծքարից են։ Սակայն տարօրինակը այն է, որ իրենց ուղտերի քար դառնալը տեսնելով, ուղտապաններն էլ քար են կտրել, վիզները ծռած, գլխիկոր, աստվածային մեծության հանդեպ ձեռքերը բարձրացրած, լաց լինելիս և թողություն խնդրելու դիրքերում։ Ոմանք ծունկ են չոքած, ոմանք տարածվել են գետնին։ Մի քանիսն էլ պառկած վիճակում երկընքին են նայում։ Մարդ պետք է սրանց վրա նայի հավատացյալի աչքերով՝ իբրև աստվածային բարկության պատկերի... Երբ դիտեցի այդ բոլորը, սարսափեցի և աստվածային զայրույթի հանդեպ նորից բարձրյալն աստծո ապավինեցի։

Երբ այստեղից շարժվեցինք դեպի հյուսիս, մեր ընկերները ասացին. «Մեր սուլթա՛ն, եթե դուք ձեր ոտքերին չեք խնայում, ապա այս վայրին մոտ դիտելու արժանի մի տեղ էլ կա։ Այն էլ դիտենք և կտեսնենք, թե ինչ տարօրինակություն է»։ Նվաստս պատասխանեցի. «Ո՛վ իմ աչքի լույս, ուղևորության այս չարչարանքները հանձն առնելու նպատակս է դիտել հավիտենական աստծո բնության հրաշալիքները»։ Նրանք պատասխանեցին. «Մեր գլխի և աչքի վրա»։ Թողնելով դեպի Մուշի դաշտը տանող մեծ ճանապարհը, մի ժամի չափ դեպի հյուսիս գնացինք, այդտեղից սեպաձև ժայռերի միջով քառորդ ժամ էլ քայլեցինք և դիտեցինք հետևյալ սքանչելի տեսարանը։

Մինարեի նման սեպաձև ժայռի վրա շղթայակապ են արել մի մարդու, որի միայն ոսկորներն են մնացել. ոչ մարմինն է մնացել և ոչ էլ անդամները... Շղթաները ոչ միայն չեն փտել, այլ կարծես թե նոր են դուրս եկել վարպետի ձեռքի տակից։ Ոսկորները խիստ սպիտակ են, թևի ոսկորները հաստ են և 7—8 արշին երկարություն ունեն, գլուխը փոքր բաղնիքի գմբեթի չափ է, աչքի խոռոչներում մի մարդ հեշտությամբ կարող է մտնել և դուրս գալ. այդ խոռոչներում արծիվները նույնիսկ բույն են դրել։ Ըստ ավանդության, այդ ոսկորները վեհափառ Աբրահամին հավատացողներից մեկին են պատկանում։ Նեմրուդը նրան կապել է մի ժայռի վրա և տակը կրակ է վառել, սակայն աստված պահպանել է այդ մարմինը։ Ոսկորների մեծ մասը միաձուլվել են ժայռին և նույն գույնը ստացել։ Ժայռից դուրս են ցցված միայն բազուկները, սրունքները և գլուխը։ Ճանապարհից բավական հեռու է։ Շեյխ Մուստաֆա Ախլաթին[34] ասել է. Այս մարդը Աբրահամի ցեղից է. պատմությունը այդ է ասում։ Մուկադդեսին էլ այդպես է գրում։ Տարօրինակ է, որ ոսկորները 2000 տարի մնացել են և մինչև հիմա չեն փտել։ Ամենակարող աստծո կամքն է...

Այդ էլ դիտելուց հետո, Վանա ծովի եզերքով նորից դեպի հյուսիս գնացինք և չորս ժամից հետո հասանք Ազզաք գյուղը, որը Ախլաթի սանջաքի տերիտորիայում, ծովեզերքին ընկած բարեշեն գյուղ է։ Ծովեզերքով նորից երեք ժամ դեպի հյուսիս գնացինք և իջևանեցինք Բենգի Մահիում։ Սա կառավարական ձկնարան է, որը կառավարվում է Վանա դեֆթերդարի կողմից։ Նորից դեպի հյուսիս գնացինք և դիտեցինք Վանա ծովեզերքի աջակողմյան բարեշեն գյուղերը։ Վերջապես հասանք հնագույն Ախլաթ քաղաքը։

(Էջ 128—134)

Հնագույն Ախլաթ քաղաքի բնութագիրը։ Պատմում են, որ այս քաղաքում ապրողները Ադ ցեղից[35] են։ Ուժեղ քամիներից սարսափած, նրանք ապաստանել են քաղաքի դիմացի բարձր լեռներում գտնվող Սիփանա սարի մեծ քարայրների մեջ։ Քարայրներից յուրաքանչյուրում հեշտությամբ 3000 մարդ կարող է տեղավորվել։ Պատմագիրները այս քաղաքը անվանել են Դարբելե, որ նշանակում է օղուզ ցեղի քաղաք։ Քաղաքը մի մելիքից մյուսին է անցել և այնքան է ընդարձակվել, որ Վանի ծովեզերքով մի ծայրը հասել է մինչև Արճեշ բերդը։ Այգիները, պարտեզները և բանջա-

բանոցները մի ամբողջ ցանց են կազմում, իսկ նրա յայլան եղել է Սիփան լեռը։

Ախլաթ քաղաքի ավերման պատճառը։ *Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին տալիս է մի շարք ավանդություններ և կարևոր պատմական դեպքերի նկարագրությունը։ Այստեղ այդ ամենը տրվում է կրճատված։*

Հնում այս քաղաքը գտնվել է Մահանի[36] փադիշահի իշխանության ներքո։ Նա Մեմենքան փադիշահի վրա արշավանքի գնալու համար Ախլաթից իբրև օգնություն 100 հազար ձու է պահանջել։ Ժողովուրդը վախից հավաքել է ձվերը, բայց դժվարացել է ուղարկել։ Մահանի փադիշահը իմանալով ախլաթցիների անճարակությունը, ներում է նրանց և հրամայում, որ յուրաքանչյուրը իր տըված ձվերը ետ վերցնի։ Այս պատճառով ժողովրդի մեջ անհամաձայնություն է ծագում և նրանց դժբախտության ենթարկում։ Եվ իսկապես, շուտով քաղաքում ժանտախտ է սկսվում։ 19 հազար տուն այստեղից գաղթում է Եգիպտոս և դիմում Ալ-Աբբասիներից մեկին՝ Էլքիշ բերդի տեր Էլ-Մյուսթիքֆի Բաալլահին և բնակավայր խնդրում։ Սա Եգիպտոսի արևելքում ընկած Կըթբայ յայլայում նրանց բնակավայր է տալիս, և նրանք մի տարվա ընթացքում այդտեղ հողից մի ամուր քաղաք են կառուցում։ [Եգիպտոսում այդ ժամանակ աղյուսով պատեր չեն շինել]։ Ներկայումս Գահիրեի արևելքում, Թոփխանեի կողմը Ախլաթ Մահալասի [Ախլաթի թաղ] անունով մի թաղ կա, ուր կան հազարավոր ավերված տներ, սակայն շինությունների հետքերը պարզ երևում են։ Մահանի շահը Ախլաթի նկատմամբ կատարած բռնության համար պատժվում է և պարտվում։ Հետագայում Ադրբեջանի շահ սուլթան Ջելայիրը վերակառուցում է Ախլաթը։ Օսմանցիների նախնիներից մեկը՝ Էրթուղրուլի պապ Կայա Ալբ-բայը, սրա եղբայրը՝ Բայենդուր խանը և Էրթուղրուլի հայր Սուլեյման բայը, որը Եփրատ գետից անցնելիս խեղդվել է, զզվելով Ջինգիզի թաթարներից, թողնում են Մահանի երկիրը և գալիս Ախլաթ՝ սուլթան Ջելայիրի մոտ և իբրև բոյբեյի[37] բնակվում են այնտեղ։ Այս Ջելայիր ցեղը Ջինգիզ թաթարի եղբոր որդիներից կազմված մի խումբ քաջ մարդիկ էին։ Սուլթան Ջելայիրը Ակ-Կոյունլու շահերից է եղել և այդ պատճառով էլ նրա ցեղը կոյունլու է կոչվել։ Եկել են Միջագետքի Մահան երկրից։ Ախլաթից ամեն կողմի վրա արշավանքներ են կատարել ու հաղթանակել են, և այդ պատճառով սուլթան Ջելայիրը Ախլաթ քաղաքը որպես սեփականություն նրանց է շնորհել։ Տեղեկանալով այդ հաջողություն-

ների մասին, նրանց ազգականները եկել են Ախլաթ։ Դանիշմենդիներն էլ են գաղթում այստեղ և կայսեր երկրներից մի շարք վայրեր են գրավում։ Սրանց վրա նորից հարձակվում են թաթարական բանակները և 476 թվականին (?) Դանիշմենդի բեյը մահանում է և Ախլաթը մնում է Կարա Յուսուֆ-բին Ջելայիրին։ Սա 805 (1402) թվականին վախենալով Թիմուրից փախչում է (սուլթան) Յըլդըրըմ խանի մոտ։ Թիմուրը պահանջում է նրան և մերժում ստանալով, պատրաստվում է արշավել սուլթան Յըլդըրըմի վրա։ Ճանապարհին, 7 ամսվա ընթացքում, Ախլաթը բոլորովին ավերակ է դարձնում։ Ներկայումս էլ ավերված քաղաք է։ Հետագայում, 868 (1469) թվականին Ախլաթը անցնում է Ուզուն Հասան շահին։ Սակայն Կոստանդնուպոլսի ֆաթիհը՝ սուլթան Մուհամմեդ Ղազին, իր անթիվ զինվորներով, Թերջանի կռվում Ուզուն Հասանին պարտության է մատնում։ Սա փախչում է Թավրիզ և այնտեղ մահանում։ Դիակը բերում և թաղում են Ախլաթում։

Ավելի ուշ, Ախլաթը անցնում է Իրանի շահերի ձեռքը. 920 (1514) թվականին սուլթան Սելիմ I պարտության է մատնում Շահ Իսմայիլին։ Ախլաթի բնակիչները դիմելով սուլթանին խնդրում են, որ «փադիշահի մեծ նախնիների թաղված Ախլաթում իրենց համար մի բերդ կառուցի», բայց խնդիրը մնում է անհետևանք։ Վերջապես 926 թվականին սուլթան Սուլեյմանը մտնելով Աջեմի երկիրը, և Երևանը, Գենջեն, Նախիջևանը, Թավրիզը, Խոյը և այլ քաղաքներ գրավելուց հետո, վերադարձին գրավում է Վանը և նրա շրջակայքը, 70 բերդեր (955 թվականին) և Քուրդիստանի բոլոր բեյերը նրան հպատակություն են հայտնում։ Հետո Վանա ծովեզերքի Ախլաթ բերդը գալով, այցելում է իր նախնիների գերեզմանները և ֆերման տալիս Կոջա Ջալ փաշային՝ այստեղ մի ամրակուռ բերդ կառուցելու մասին։ Ջալ փաշան ժողովրդի հետ խորհրդակցում է և Ախլաթի ավերակներից հարավ, ծովեզերքի հարթավայրում ձեռնարկում է բերդի կառուցմանը...

(էջ 128—132)

Ախլաթ բերդի նկարագիրն ու գովքը: Կառուցվել է 965 (1557) թվականին, սուլթան Սուլեյմանի բնածին ճարտարապետական ճաշակով ու Ջալ փաշայի ձեռքով։ Ծովեզերքին կանգնած քառակուսի բերդ է։ Շրջագծի երկարությունը 3000 քայլաչափ է։ Ընդամենը 13 աշտարակ ունի, պատերը շատ բարձր չեն, խրամն էլ խոր չէ, սակայն բերդը շատ ամրակուռ է, պատերը շատ լայն են։ Ծովի

կողմը, եռահարկ երկաթյա դարպաս ունի, որի վերևում բերդի կառուցման մասին չելի[38] *տառերով գրված պատմության վերջին տողերը սրանք են.*

Հիանալի և հաճելի վայր,

*Ի՞նչ գեղեցիկ ամուր շինություն, 963 թվականին**։

Ծովի կողմը նայող այս դարպասը բերդի հարավումն է։ Բերդում մաքուր, հողածածկ, բարեշեն 350 տուն կա։ Կան նաև Սուլեյման խանի ջամին, բաղնիք, խան և 20 խանութ։ Բերդը Վանի էյալեթում է և Մուշի փաշայի բնակավայրն է։ Փադիշահի կողմից բեյին տրված խասը 410.000 ակչե է։ Ըստ օրենքի բեյը արդարացի կերպով տարեկան 20 քիսե եկամուտ է ստանում և 500 մարդով կառավարում է սանջաքի գյուղերը։ Ունի 44 զեամեթ և 130 թիմար։ Ունի ալայի բեյ, չերիբաշի, օրենքով՝ ջեբելուների հետ միասին, մոտ 1000 զինվոր, որոնք պատերազմի են գնում իրենց բեյի դրոշակի տակ։ 150 ակչեի աստիճանով կադա է և կադիի տարեկան եկամուտը երկու քիսե է։ Շեյխ-ուլ-իսլամ, նագիբ, քեթխուդա և սերդար չունի։ Շահբենդերը, հարկահավաքը, մյուհթեսիբը և սուբաշին Ստամբուլից են նշանակվում։ Ունի նաև բերդակալ և 100 բերդապահ զինվոր, որոնք ամեն գիշեր նվագում են և պատրաստ հսկում։ Ունի նաև բավականաչափ ռազմամթերք, մեծ և փոքր շահի, զարբազան և կալումբուրնե թնդանոթներ։ Ծովեզերքի նավահանգստում նըստում է մաքսատան էմինը, որն երթևեկողներից սուլթանական տասանորդ է առնում և բերդի զինվորներին ռոճիկ տալիս։ Ըլթիզամի գումարը 7 բեռ է։

Ախլաթի ավերակները: *Քաղաքի ավերակների մեջ բարձր գըմբեթներով շինված հարյուրավոր ջամիներ կան, որոնք շատ հին են։ Գմբեթները քարաշեն են և կրով ծածկված, բայց անմարդաբնակ են։ Այս ավերակները վեր են ածվել ագռավների և բուերի բները։ Օրինակ, այդպիսին է Էմիր խանի ջամին, որը կանգնած է դատարկ հրապարակում և որի պատերը դեռ փայլում են։ Տերը, այս հին քաղաքի գրողներից մեկը՝ Էմիր Կայընը, ջամիի չորս կողմի պատերի վրա գրի է առել քաղաքում եղած բոլոր ջամի, մզկիթ, խան և այլ շինությունները։ Նվաստս այդ գրությունները կարդացի և հնարավորության չափով գրի առա... Այս քաղաքի բարբառը մոտ է չաղաթայ և մողոլ բարբառներին։ Քաղաքի գրողը ջամիի պատին*

---

* عجیب مقام لطیف
زهی بنای متین، سنه ٩٦٣

գրել է. «Քաղաքում ընդամենը 35 հազար մեհրաբ[39] կա, [բայց այս թվերը չափազանցված են], 2000 մեդրեսե, 1000 բաղնիք, 2000 խան... 18 հազար աղբյուր... 10 հազար թաղ, 200 հազար տուն, 70 հազար ավազանիի ապարանք, 600 հազար խանութ, 3000 քարվանսարայ, 2000 խան (պանդուխտի), 900 հազար այգի ու պարտեզ և այլն»։

Այդ անձը նման մի շարք երևակայական բաներ է գրել և քաղաքը չափազանց մեծացրել է... Այս չափազանցությունները քաղաքի մեծությունն ու հզորությունը ցույց տալու համար են։

Քաղաքի հարյուրավոր մարդիկ ապրում են այգիներով և պարտեզներով, հիանալի ջրերով բարեշեն տներում։ Նրանք հաստատվել են այդտեղ և շատերի համար դարձել է ծննդավայր և փոխանցվել է սերնդից սերունդ։ Տները մեկը մյուսից հեռու են հարյուր մղոն[40]։ Բնակիչները վերին աստիճանի առաքինի և բարեկեցիկ մարդիկ են։ Քարայրներում, որոնք տանջանքի անկյուն են, նույն խսիրի վրա 40—50 տարի ապրող մարդիկ կան, որոնք այդքան ժամանակ մի պատառ կերակուր բերանները չեն առել։ Այդպիսին է Շեյխ Մուսթաֆա Ախլաթին, որ 40 տարուց ի վեր ծոմ է պահում. Հանեֆի դավանանքին է պատկանում։

Էվ. Չելեբին այցելության է գնում այդ բարեպաշտին։ Հիշում է նաև այլ քարայրաբնակ շեյխերի։

...Այս քաղաքի ավերակների գովաբանությունը անօգուտ է և դժվարին. իմ ճանապարհորդության ընթացքում հանդիպած ավերակները հետևյալներն են։ Աջեմի Իրաքում՝ Քուֆեն, հին Բաղդատը, Հին Մուսուլը, Միաֆարկինը, Արաբական Իրաքում՝ Անթաքիան, Եգիպտոսում՝ Իսքենդերիեն, Ասաքլանը, Թեբրիսթանը, Բասրայի Հորանը, Թարսուսը, Անատոլիայում՝ Բելադր, Մելախին, Այասլուքը, Այդընջքը, Ռումելիում՝ Աթինան (Աթենք), Կավալան, Ղրիմում՝ հին Ղրիմը, Շեհրաբին, Կերմանը, Էլբրուս լեռան ստորոտում՝ Իրաք-Դարյան (?) և այլն։

Ահա սրանց նման հարյուրավոր տարիներ շարունակ ավերված վիճակում գտնվող քաղաքներից մեկն էլ Ախլաթն է։ Նրանք, ովքեր ծանոթ են աշխարհի անց ու դարձին, հրաժարվում են վիճել, սակայն լեզուն չի կարող լռել։ Այս քաղաքները մեծ զոհողությունների գնով առաջ եկած բարեշեն վայրեր են եղել. մարդ երբ դիտում է դրանք ցավում է և ափսոս ասում։ Աշխարհի գործերը միշտ այսպես են, մի կողմը շինվում, մյուսը՝ քանդվում է...

Ախլաթ քաղաքի Ալ-Օսման սուլթանների նախնիների ուխտատեղիները: *Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին թվում է օսմանյան սուլթանների նախնիներից մնացած բազմաթիվ ուխտատեղիները, ինչպես՝ Կայա Ալփ բայի, Հասան Բայնդուր խանի, սուլթան Արգուլլահի, սուլթան Բոզաբայի և այլ ուխտատեղիներ։*

Ախլաթ քաղաքի հարստությունները: *Այս քաղաքի լեռներում շատ հանքատեսակներ կան, օրինակ՝ կարմիր զառիկ [զիրնիխ, զիրնիկ] անունով հայտնի հանքատեսակը. երբ այն խառնում են օճառին և քսում մարմնի վրա, բոլոր մազերը թափվում են և մարդու մարմինը բամբակի նման մաքրվում ու փափկում է։ Երբ բորոտությամբ տառապող ուղևորը ուտում է մի դիրհեմի մեկ վեցերորդի չափ, բուժվում է բորոտությունից, ֆրանկախտից [սիֆիլիս] և աղվեսացավից։ Դեղին զառիկի հանքատեսակը ստացվում է Ախլաթի հյուսիսում գտնվող լեռներից։ Սևահողի նման ծանր և մի տեսակ դեղին հանքատեսակ է, որ ուղարկվում է Իրան, Արաբիա և մինչև անգամ Ֆրենկիստան։ Քիմիայի վարպետները այս հանքատեսակը խառնում են մի շարք այլ դեղերի և ստանում են հատուկ պղինձ և մաքուր ոսկի։ Եթե մեկը դրանից կես մսխալ մի փոքր գավաթ ջրի մեջ լուծի և պառկելու ժամանակ խմի, մարմնի վրա եղած բոլոր մազերը կթափվեն։ Բայց դրանից պետք է զգուշանալ։*

Այս վայրերը այցելելուց հետո, ծովեզերքով նորից դեպի արևելք գնացինք և հասանք Ադիլջևազի բերդը (Արծկե)...

(էջ 134—142)

Ադիլջևազ բերդի բնութագիրը: *Հիմնադիրը եղել է Ադրբեջանի պարսկական շահ Թաջեդդին Ալիշանը։ Հետագայում բազմաթիվ մելիքների ձեռք է անցել։ Վերջապես, 940 (1533) թվականին բերդի մեջ պաշարված աջեմները օսմանցիների հարձակմանը չդիմանալով, բերդի բանալիները անձամբ (սուլթան) Սուլեյման խանին են հանձնել։*

Առաջին իշխողը եղել է Ջալ փաշան։

Ադիլջևազ բերդի նկարագիրը: *Վանա ծովեզերքին, երկինք սլացած մի ժայռի վրա սրբատաշ քարերով կառուցված ամրակուռ բերդ է։ Մինչև գագաթը հետիոտն կարելի է բարձրանալ կես ժամում։ Բերդը արևելքից ու հարավից ողողող Վանա ծովը այդ բարձրությունից մի փոքր ծովածոցի նման է։ Բերդի բարձր մասը երևում է միայն կեսօրին մոտ և պարզ եղանակին։ Ներքին բերդի շուրջը խրամ չկա և հնարավորություն էլ չկա, քանի որ շրջապատը արծվի բույներով պատված սեպաձև և մերկ ժայռեր են, որոնք անգամ եղունգով բռնելու տեղ չունեն։ Բերդը ունի 38 ամուր աշ-*

տարակ. ունի մեկը-մյուսի մեջ եռաՀարկ երկաթյա ամրակուռ մի դարպաս։ Բերդում առանց այգիների ու պարտեզների 70 նեղ տուն կա, որոնք բոլորն էլ Հողով են ծածկված։ Բերդում կան՝ Սուլեյման խանի ջամին, ռազմապաշարի մթերանոցներ և Հացահատիկի ամբարներ, ջրամբարներ, նվագախմբի աշտարակ և բերդապաՀի տուն։ Ունի բալյեմեզ անունով խոշոր թնդանոթներ, ուրիշ շինություններ չկան։ Շրջագծի երկարությունը 4000 քայլ է։ Բերդը իշխում է թնդանոթի գնդակի թռիչքի Հեռավորության վրա գտնվող մի բարձր սարի։ Այդ պատճառով բերդը երկարաձգվում է դեպի այդ կողմը։ Այս կողմից բերդին որևէ վտանգ չի սպառնում, որովՀետև թշնամու թնդանոթի գնդակը անցնում է վերևից և ձորն է ընկնում։ Դրանից ներքև բերդի ռաբաթն է, որը նմանապես սեպաձև ժայռի վրա է, բայց ավելի ցածր է։ Մի կողմը ծովեզերքի ժայռի վրա է, որտեղ երեք դարպաս կա։ Ախլաթի դարպասը նայում է Հարավ, մյուս դարպասը՝ դեպի արևելք և բացվում է Արճեշի ուղղությամբ։ Ստորին բերդը նույնպես ամրակուռ է և խոշոր քարերով է կառուցված։ Քառակուսի ձև ունի, դեպի Հյուսիս՝ ժայռերի վրա է և ավելի բարձր։ Այստեղ է Ուրդոնի դարպասը, որ միշտ փակված է մնում։ Ռաբաթի երկարությունը 6000 քայլ է։ ՆավաՀանգիստ նայող աշտարակներում շայիկա անունով խոշոր թնդանոթներ կան. ընդամենը 76 շաՀանե և բալյեմեզ թնդանոթներ կան։ Բերդում առանց այգիների և պարտեզների 300 Հին տուն կա, որոնք բոլորը կառուցված են քարուկրից։ Աջեմները մի քանի անգամ պաշարել են այս բերդը, սակայն վնասներ կրելով՝ Հեռացել են։ Այդ պատճառով բոլոր տները քարուկրով են կառուցված։ Բերդի արևմտյան կողմը այգիներով ծածկված լեռներ են։ Բերդի օդը լավ է, այդ պատճառով էլ բնակիչները առողջակազմ են։ Հարավից Վանա ծովն է։ Բերդում 1100 մեծ ու փոքր ապարանքներ և ռայաների լավ տներ կան։

Ընդամենը 8 թաղ կա և 7 մեՀրաբ։ Նշանավոր և բարեշեն է Զալ փաշայի ջամին։ Բերդից դուրս գտնվող Զալ փաշայի բաղնիքը առանձնապես լավը չէ. մի բաղնիք էլ քանդվել է։ Բերդում մի խան կա, բայց բեդիստան չկա։ Կա նաև փոքր շուկա։ Այգիների թիվը Հասնում է 7000-ի։ Արևելյան կողմում գտնվող զբոսավայրը մաքուր ջրի ավազան, շատրվաններ և այգիներ ունի։ Նշանավոր է Զալ փաշայի այգի-զբոսավայրը։

Բերդի իշխողները: Բերդը Վանի էյալեթում սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյի խասը, Սուլեյման խանի օրենքի Համաձայն, 154.036 ակչե է։ Օրենքով սաՀմանված տարեկան 8000 ղուրուշ եկա-

մուտ է ստացվում և բեյը պատերազմի է գնում 600 զինվորով։ Ունի ալայի բեյ և չերիբաշի։ Ջեբելուներով միասին բեյի դրոշակի տակ պատերազմի են գնում 1000 ընտրյալ զինվոր։ 150 ակչե աստիճանով շերիֆ կազա է։ Կադին տարեկան 1000 ղուրուշ եկամուտ է ստանում։ Ունի նաև մյուֆթի, նայիբ, մյուհթեսիբ, սուբաշի, շահբենդեր և մաքսատան էմին։ Սակայն իշխանությունը պատկանում է բերդապահին։ Բերդը ունի ընտրյալ զինվորներ, որոնք պատրաստ հսկում են գիշեր-ցերեկ։ Վանը մոտ լինելով, ենիչերիների աղայի կողմից ամեն անգամ մի չավուշ է գալիս և պատժում հանցագործ ենիչերիներին։ 1031 (1621) թվականին այս բերդում 6 օդա կափուկուլի ենիչերի, 2 օդա թնդանոթաձիգ, մեկ օդա ջեբեջի... բերդապահներ են եղել։ Ներկայումս էլ այս բերդում բալյեմեզ թնդանոթներ և անհաշիվ ռազմամթերք կա, որը այրում է աջեմների սիրտը։

Աղիլջեւազի ուխտատեղիները: *Երբ Ջալ փաշա-զադեն իշխել է այստեղ, Աջեմի շահի 8000 նյոքերներ մի գիշեր անսպասելիորեն թակարդ են լարել այգիներում։ Ջալ փաշա-զադեն իմանալով այդ, 60 մարդով գնում և աջեմներին այնպես է կոտորում, որ 8000 մարդուց միայն 50 մարդ է ազատվում։ Մի ղազի էլ նահատակվում է։ Այդ վայրը ուխտատեղի է... Հետո աջեմները նորից են հարձակվել և Ջալ փաշա-զադեին նահատակել են։ Գերեզմանը վերոհիշյալ նահատակի գերեզմանի մոտն է։ Կա նաև «Քառասուն եղբայրների ուխտատեղի». այսպես է կոչվել մեկ ժամում 40 զավակ ծնված լինելու պատճառով (:)։*

Սիփանա սարը (Սուբհան դաղը): *Սա Աղիլջևազ բերդի հյուսիսում երկինք խոյացած մի լեռ է։ Գիտնական Պտղոմեոսի [Բեթլիմիոս] կարծիքով երկրի 148 մեծ լեռներից մեկն է։ Ամեն տարի Թուրքմեն, խալդի, չեքվանի, զազա, լոլո, գիբարի, փեսանի, քյարքյարի ցեղերը, իրենց հարյուր հազարավոր կենդանիներով բարձրանում են այս լեռան բարձր գագաթը և ամառը այնտեղ անցկացնում... Այս լեռան վրա արածող ոչխարների մեծ մասը երկու գառնուկ է ծնում։ Տարօրինակ է, բայց Աղիլջևազի ծերերը վկայում են, որ մի կին մի անգամից յոթ զավակ է ծնել և իրենք տեսել են։ Նվաստս դրան չհավատալով առարկեցի և ասացի. «Աստվածային կամքին հակառակ է»։ Ի պատասխան՝ Սավուրի-օղլի, Դիզդար-օղլի և Միմինդի-օղլի անունով ծերերը, ինձ դատարան տարան և դատավոր Համիդ էֆենդիին մի ղուրուշ տալով ասացին. «Մեր էֆենդի, սուլթան Սուլեյման խանի ժամանակի Ջալ փաշայի մատ-*

յանը նայեցեք»։ [Դատավորը] անմիջապես բերեց Ջալ փաշայի մատյանը և գտավ [հետևյալ արձանագրությունը]. «Այդ դարում Սիփան լեռան յայլայում Մովել Սեջահ անունով կինը, 9 ամիս 10 օր հղիությունից հետո, մի ժամում 40 զավակ ծնեց, որոնցից 20-ը աղջիկ և 20-ը տղա էին»։

943 (1536) թվականի մատյանում արձանագրված տեսանք Ջալ փաշայի (սուլթան) Սուլեյման խանին այդ մասին տրված զեկույցը... սրանից առաջ չհավատացի, որ մի կին՝ մի անգամից յոթը զավակ է ծնել, հիմա ստիպված եմ հավատալ քառասուն զավակ ծնելուն։ Սիփանա սարի այդ առանձնահատկությունը անգամ արձանագրված է մատյաններում։ Աստված ամենակարող է!

Սիփանա սարում գայլ, վագր, աղվես, շնագայլ և բոլոր տեսակի վայրի գազաններ կան։ Այդ կենդանիները զուգավորվում են լեռան վրա, սակայն երբեք ձագեր չեն ունենում։ Այս լեռան վրա գայլն ու գառնուկը միասին են ապրում և գառան մի մազին անգամ վնաս չի հասնում։ Այդ պատճառով էլ այս լեռան վրա հովիվները առանձին նշանակություն չունեն։ Այստեղ Բաղդատի Սաբուր անունով շան նման ընտանեցված շներ կան։ Վայրի թռչուններն էլ են զուգավորվում այս լեռան վրա, բայց ձագեր չեն ունենում։ Այդ պատճառով էլ նրանք չեն բազմանում։ Սակայն անգղին ցեղակից թռչունները շատ են. նրանց մեջ կան այնպիսինները, որոնք ապրում են հազար տարի։ Այստեղ հավերը մեծ մասամբ օրական երկու ձու են ածում։

Ախլաթի և Սիփանա սարի միջև մի տեսարժան աղբյուր կա, որը հայտնի է Զեմենի աղբյուր անունով։ Ժայռերից բխելով ժեռ քարերի վրայով հոսում է ցած և նրա ձայնից մարդու ականջը խլանում է։ Նրա ձայնը լսվում է երկու փարսախ հեռավորության վրա։ Այդ աղբյուրը թափվում է մի փոսի մեջ։ Նրա ջուրը վերին աստիճանի աղի է և թունավոր, խմող մարդն ու կենդանին վայրկենաբար մեռնում են։ Մեզ հետ միասին եկող Հաջի Ջարալլահ անունով բարեգործ մի անձնավորություն այդ ջրի շուրջը մի ամուր պատ է կառուցել տվել, որպեսզի կենդանիները այդ ջրին չմոտենան։ Աղբյուրի շրջակայքում խոտի նմուշ անգամ չկա։

Այս լեռան հյուսիս-արևելքում, նույնպես լեռների միջև, մի մեծ ջերմուկ կա, որտեղ յայլա գնացողներն են լողանում։ Ավազանը ընդարձակ է, ջուրը տաք, որի բաղադրության մեջ ղառիկ կա։ Այդ ջրում լողացողների մազերն ու բեղերը թափվում են։ Սակայն կանանց համար շատ օգտակար է։ Սրա ցեխը բուժում է ըոըոտությունը։

Ադիլջևազ բերդի հյուսիսից, Սիփանա սարի ստորոտից սկիզբ առնող մի վճիտ աղբյուր կա, որի երկու կողմում շատ լավ քարեր կան. այս քարերով տներ են կառուցում։ Մի քանի ճարտարապետներ տախտակյա հատուկ սնդուկներ են պատրաստում, լցնում են այդ ջրով և ջրի մեջ քիչ աղ են լուծում։ Աստծո հրամանով այդ ջուրը քար է կտրում, որը մարմար քարի նման է, բայց շատ փափուկ է լինում։ Դռների և օջախների կամարներ, սանդուղքների աստիճաններ և այլ բազմաթիվ իրեր պատրաստելու համար, տախտակից կամ ցեխից հատուկ կաղապար են պատրաստում, մեջը լցնում են այդ ջրով և քար են ստանում։ Տարօրինակ բան է։ Աստված ամենակարող է!

Այսպես, Ադիլջևազը դիտելուց և ուսումնասիրելուց հետո, ծովեզերքով 9 ժամ ճանապարհ գնացինք և եկանք Դելիկլի-Թաշ (Ծակքար) կոչված գյուղը, որը ծովեզերքին ընկած 200 տնից բաղկացած գյուղ է։ Այնտեղից գնացինք Դեմիրջի գյուղը։ Վանա ծովից բավականին հեռու, Արճեշ բերդի տերիտորիայում գտնվող 300 տնից բաղկացած բարեշեն, քրիստոնյաների գյուղ է, բոլոր բնակիչները երկաթագործներ են։ Այստեղից գնացինք Քենզեք գյուղը, որը նույնպես ծովեզերքից հեռու է և Արճեշի տերիտորիայում 200 տնից բաղկացած գյուղ և բարեշեն զեամեթ է։ Այստեղ 7 դող բռնվեցին և փաշայի ապարանքի առաջ գլխատվեցին։ Ապա շարժվեցինք դեպի արևելք և հասանք Արճեշ բերդը։

Արճեշ բերդի բնութագիրը: *Այս վայրը երկար ժամանակ ձեռքից-ձեռք է անցել և վերջապես 521 (1127) թվականին անցել է Կըլըչ Արսլան շահի ձեռքը, որը այստեղ մի բերդ է կառուցել։ Հետագայում նորից մի մելիքից անցել է մի այլ մելիքի և վերջապես Կարա Կոյունլի շահերից մեկը՝ Կարա Յուսուֆ շահը, ավելի է բարեշինել։ Թիմուրը թեև ուզել է ավերել, բայց չի հաջողվել. միայն Մուշ քաղաքն է ավերակների վերածել։ Հետագայում 955 թվականին (սուլթան) Սուլեյման խանը Աջեմի երկրից վերադառնալիս, Արճեշի բերդը խլել է աջեմներից և կարգի բերել։*

Ներկայումս Վանի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է։ Բեյի խասը 300.000 ակչե է, բեյը տարեկան 10 քիսե եկամուտ է ստանում և 1000 զինվորով իշխանություն վարում։ 86 թիմար և 14 զեամեթ կա։ Ունի ալայի բեյ, չերիբաշի և յուզբաշի։ Օրենքով. ջեբելուների հետ միասին, 1000 զինված և կանոնավոր ընտիր ռազմիկներ ունի, որոնք պատերազմի են գնում իրենց բեյի հետ միասին։

Արճեշ բերդի նկարագիրը: Վանա ծովի եզերքին, ցածր ժայռի վրա, քառակուսի ամրակուռ բերդ է, որի ամեն մի քարը փղի մեծություն ունի. սպիտակ, փայլուն աննման մի բերդ է։ Չորս կողմի աշտարակները խիստ ամուր են։ Սակայն իր դիրքով իշխող բերդ չէ և այդ պատճառով պարիսպները այնքան էլ բարձր չեն, բայց այնքան լայն են, որ ձիավորը նրա վրա կարող է ջիրիդ խաղալ։ Շրջապատում խրամներ չկան։ Որոշ տարիներ՝ գարնանը, երբ Վանա ծովը ալեկոծվում ու բարձրանում է, այս բերդը 7—8 ամիս շարունակ մնում է ծովով շրջապատված. մի փոքր ճանապարհ է մնում միայն Ադիլջևազի կողմից։ Բերդը երկու դարպաս ունի. մեկը արևմուտք նայող Ադիլջևազի դարպասն է, որը համարվում է մեծը: Բերդում հազարի չափ հողածածկ տներ կան, մեկ էլ Սուլեյման խանի ջամին է, որը նորոգված Յուսուֆ շահի հին ջամին է... Կա մոտ 200 խանութ։ Ռազմամթերքը շատ է, 110 մեծ և փոքր թնդանոթ կա, որոնք Ադիլջևազ բերդի թնդանոթներից ավելի լավն են։ Բերդի հյուսիսում թնդանոթի արկի թռիչքի հեռավորության վրա գտնվող Ալա-դաղը (Սաղկոտն) ամբողջովին այգիներով է ծածկված։ Հուլիսին օդը շատ տաք է լինում, այդ պատճառով բնակիչների մեծամասնությունը քոչում է Ալա-դաղի այգիները և մոտ 6 ամիս այնտեղ զվարճանում։

Բերդի իշխողները: Մեծ իշխողները սանջաքի և ալայի բեյերն են։ 150 ակչեով կադա է, ունի սուբաշի, քաղաքի քեթխուդա և հարկահավաք։ Բերդում Դերգյահի Ալիի[41] ենիչերիներից նշանակված բերդապահ կա։ 300 մարդուց բաղկացած երեք վաշտի զինվորները միշտ պատրաստ են, որովհետև բերդը աջեմի սահմանի վրա է։ Մինչև անգամ, եթե բերդակալը բերդի արևմուտքում թնդանոթի արկի թռիչքի հեռավորության վրա գտնվող Արճեշ գետի կամրջով այն կողմն անցնի, իշխողը կզեկուցի Վանի փաշային, որ բերդակալը բերդը թողեց և պաշտոնազուրկ անել կտա։

[Բերդը] մի կողմից թերակղզի է, նավահանգստում հիանալի մի լիման կա, ուր վաճառականները Վանի նավերով ապրանքներ են բերում և մինչև Էրզրում տանում։ Բերդի բոլոր բնակիչները (սուլթան) Սուլեյման խանի օրոք Բոշնաքից [Բոսնիա] և Արնավուտլուքից [Ալբանիա] եկած հավատացյալներ են։ Կան շատ ուլեմաներ։ Անծանոթ քուրդ ցեղի մարդկանց թույլ չեն տալիս բերդը մտնել։ Բոլորը միմյանց ազգական են և իրար հետ հավատարիմ։

Արճեշ բերդի ջերմուկի հատկանիշները: Հյուսիսային կողմում, Էրզրումի ճանապարհի մոտ մի ջերմուկ կա, որտեղ ամեն ամռանը

Վանից, Բիթլիսից, Ախլաթից և Քուրդիստանից հազարավոր մարդիկ վրաններով, ուտելիքով և խմելիքով գալիս և ամբողջ երեք ամիս այստեղ ժամանակ են անցկացնում և ջերմուկում լողանում։ Ջերմուկում հնուց մնացած մեծ շինություններ կան, որոնց մի մասը, ասում են, Ալեքսանդրն է կառուցել։ Ջերմուկի ջուրը մի ջրաղաց կարող է աշխատեցնել։ Այս վայրի մոտ **Խաճերի աղբյուր** անունով մի ջուր կա, որը շատրվանի նման բխում է ժայռից և թափվում մեծ ավազանի մեջ։ Շատ վճիտ ջուր է, սակայն բավականաչափ տաք չէ, որովհետև վրան կամարներ չունի։ Հին վարպետները այս ժայռի վրա առյուծ են նկարել, որի բերնից ջուրը թափվում է ավազանի մեջ։ Ավազանի ջուրը, աստծո կարգադրությամբ, այնքան տաք է, որ կարծես պղնձի մեջ եռացրած լինի։ Այստեղ եփում են ոչխարի և այծի գլուխն ու խաշը։ Տարօրինակ աստվածային գաղտնիք է. այդքան տաք ջրից միայն երեք քայլ հեռավորության վրա, մի ժայռի ճեղքից այնպիսի սառը ջուր է հոսում, որ նևրուզի[14] օրն անգամ մարդ իր ձեռքը չի կարող այդ ջրի մեջ մտցնել...

Այստեղից փաշայի հետ միասին դուրս եկանք և անցնելով ձորակներով՝ իջևանեցինք Կարա Քյոփրյու անունով վայրում։ Այստեղ գտնվող գեղակերտ կամրջի կառուցողը հայտնի չէ։ Կամրջի տակով հոսում է Աքսու գետը, որը սկիզբ առնելով Ալա-դաղից և Սիփանա սարից, թափվում է Վանա ծովը։ Այս ջրի եզերքին շատ ընդարձակ եղեգնուտներ կան, որոնցից շատ լավ խսիր են պատրաստում։ Կամուրջի մոտ 300 տնից բաղկացած Փազար Քյոփրյու քրիստոնյա գյուղն է, որի բոլոր ռայաները խսիրագործներ են։ Գյուղը Վանի կուլիի խասն է։

Այստեղից նորից շարժվեցինք դեպի արևելք, անցանք եղեգնուտներով ու ճահճային վայրերով և հասանք Բենդի-Մահի գետին։ Այս գետը սկիզբ է առնում Բարգիրի [Բերկրի] լեռներից և հոսում է Բերկրի բերդի ստորոտով։ Վերը նշեցինք, որ այստեղ տարին մեկ անգամ խիստ առատ ձուկ է երևում։ Այդտեղից տեսանք Բերկրի բերդը։ Բերդում գտնվող բանակի և սանջաքի իշխող Շերեֆ խան Մահմուդին իր 5000 զրահավորված և զենքերի մեջ թաղված զինվորներով եկավ փաշային դիմավորելու և մեծ հանդիսավորությամբ հասանք Բերկրի բերդը։

(էջ 142—150)

Բերկրի բերդի նկարագիրը: Բերդը գտնվում է մի ծոցանման երկար ձորի վերջում. այդ ձորը (գետի անունով) կոչվում է Բեն-

դի-Մահի։ Բերկրին այդ ջրի արևելքում, սևս և սև ժայռերի վրա, բավականին բարձրադիր, խոշոր քարերով, հնգանկյունի ձևով կառուցված մի բերդ է։

Բերդը գտնվում է Մահմուդի քրդերի ձեռքը։ Բոլոր զինվորները քրդեր են։ Փադիշահի կողմից սահմանված բեյի խասը 200.000 ակչե է։ Ունի 97 թիմար և 7 զեամեթ։ Ունի նաև ալայի բեյ և չերիբաշի։ Նվիրական պատերազմի ժամանակ 3000 զինվոր են կռվի դնում։ Ունի նաև բերդապահ և սուբաշի։

Բերդը Բերկրի է կոչվում, որովհետև հիմնադիրը՝ Կըլըջ Արսլանը, այստեղ բռնել է շահի վաճառականների բեռները և նրանցից տուրք առել։ Քրդերը սրան «Բար-գիր կալասի»[43] են անվանում։ Բնակիչները շեհբազի և ղազի-մահմուդի ցեղերից են, որոնց հիանալի նժույգներից Քուրդիստանում ոչ մի տեղում չկա։

Բերդում կա Շերեֆ խանի ապարանքը, մի բաղնիք, մի խան, այգիներ ու պարտեզներ և բավականաչափ խանութներ։ Հայտնի են ջուրն ու օդը և խաղողը։ Այս բերդը Ադրբեջանին է պատկանել և 955 (1548) թվականին բերդում պաշարված քրդերը սուլթան Սուլեյման խանին հպատակություն են հայտնել, բերդը հանձնել են առանց կռվի և այդ պատճառով էլ իշխանությունը նորից իրենց է շնորհվել։ Բեյը Մահմուդիներից է։

Այս բերդից դուրս եկանք և շարժվելով դեպի հարավ, Հասան Թափա յայլան մնաց մեր ձախ կողմում։ Մահմուդի բոլոր քրդերը յայլա են բարձրանում այս լեռը։ Յայլայի գագաթը չբարձրացա, բայց նկատեցի, որ դեպի երկինք խոյացած մի յայլա է։ Այս լեռից այն կողմ ճանապարհը բաժանվում է, ձախակողմյան մեծ ճանապարհը տանում է դեպի Վանի բերդը, աջակողմյան ճանապարհը՝ դեպի Ամիկ բերդը։ Իջևանեցինք այստեղ, Զոմաքլի լեռան ստորոտում գտնվող Փաս գյուղում։ Վանի նահիյեներից է. այգիներով և պարտեզներով 100 տուն ունի։ Փաշայից իրավունք ստանալով այստեղից գնացի Ամիկ բերդը։ Երբեմն քարքարուտներով, երբեմն Վանա ծովի եզերքից դեպի հարավ ընկած բարեշեն և հարուստ գյուղերով անցնելով՝ 4 ժամից հետո հասանք Ամիկ բերդը։

Ամիկ[44] բերդի բնութագիրը։ Պատմագիրների վկայությամբ այդ բերդը կառուցել է Ադ ցեղը, որովհետև...* ժայռերի մեջ պահպանվել են Ադ ցեղի քարայրները, որոնց գովերգելու համար լեզուն անզոր է։

---

* Բնագրում բաց է թողնված։

Բերդը կառուցված է Վանա ծովի եզերքին, Սուլեյմանիեի[45] մինարեի հինգ բարձրությամբ, դեպի երկինք խոյացած մի սուր ժայռի վրա։ Աստված վկա՛, համարձակություն չունեցա այդտեղ բարձրանալ ու դիտել, որովհետև քարե սանդուղքի մի քանի հազար աստիճաններով գագաթը բարձրանալիս, նախ պետք է անցնեի ժայռին կպած ուղղաձիգ փայտյա սանդուղքներով, ապա՝ մինչև գագաթը հասնելու համար բարձրանայի հինգ քարե սանդուղքներով։ Պաշարման ժամանակ հիշյալ սանդուղքը պարանով վերև են քաշում և որևէ կողմից վերև բարձրանալն անհնարին է դառնում։ Բերդը չի իշխում իր շրջակայքի վրա։ Հարավից և արևմուտքից Վանա ծովն է և բերդը հրվանդանի նման ծովի մեջ խրված մի բարձր ժայռ է։ Տարօրինակն այն է, որ ժայռի ամենաբարձր մասում վճիտ և փոքր մի աղբյուր է հոսում։

Բերդում մի ջամի, մոտ 50 տուն, ամբարներում՝ կորեկ և բրինձ կա, ունեցել է 6 շահի թնդանոթ։ Բերդը իսկապես որ խիստ ամրակուռ է։ Եթե բերդում պաշար և ջուր լինի՝ գրավելը անհնարին է։ Նվաստս նման բերդ տեսել եմ Ադանայի վիլայեթի Սելեֆկեի սանջաքում, Լարենտիի մոտ, դա Էրմենաք բերդն է, որն իսկապես արժանի է դիտել։ Սակայն այս Ամիկ բերդը նրանից ավելի բարձր և ավելի ամրակուռ է։ 805 (1402) թվականին Թիմուրը եկել և տեսել է այս բերդը, սակայն ասել է. «Այս բերդը քանի շահերի բանակներ է խայտառակել։ Բերդը պաշարելու և խայտառակվելու փոխարեն ավելի լավ է թողնել ու անցնել»։ Եվ բոլորովին անուշադրության մատնելով թողել ու հեռացել է։

Վանա լիճը այս բերդի ստորոտում այնքան խորն է, որ մի քանի պարաններ իրար կապած, ուղղահայաց իջեցրել են ջուրը և հատակին չի հասել. այդ պատճառով բերդը կոչվել է Ամիկ։ Սակայն քրդերի մեջ աղավաղված ձևով գործածվում է Ամիք։ Ամուf էլ են ասում։ Շրջապատում արծիվների, բազեների և այլ թռչունների հազարավոր բներ կան։ Մի անգամ մսավաճառները ներքևում գոմեշ են մորթել և գլուխը մի կողմն են դրել, վերևից մի արծիվ սլացել և գոմեշի գլուխը առնելով բարձրացել է իր բույնը։ Այդ գոմեշի գլուխը մինչև հիմա էլ սպիտակ սնդուկի նման մնում է այդ ուժեղ թռչունի բնում։ Պետք է պատկերացնել, թե արծիվը ինչպիսի ուժ է ունեցել, որ փախցրել է 100 օկկա ծանրություն ունեցող գոմեշի գլուխը։

Բերդը գրավվել է Ռուստեմ փաշայի կողմից։ Ներկայումս Վանի էյալեթում է, Սուլեյման խանի օրոք փաշայի խասն է և վոյե-

վողայությունն է։ Վանի կադիի իշխանության ներքո նայիբություն է [կադիի փոխանորդ]։ Ունի բերդակալ և 50 զինվոր։ Ներքևի վարոշում այգիներով ու պարտեզներով մոտ 100 տուն, մի ջամի, խան, բաղնիք և փոքր շուկա կա։

Այս բերդը դիտելուց հետո, գնացինք դեպի արևելք և Ջանիկլեր գյուղի մոտ անցանք Ջանիկ, հետո Սորաչլի գետակները և հասանք Աբլան գյուղը։ Այստեղ փաշային տեսանք և ես նկարագրեցի Ամիկ բերդը։ Փաշան առանց տեսնելու՝ հիացավ։ Ներկաները նույնպես։ Այստեղից նորից շարժվեցինք դեպի արևելք և հասանք Կարա Քասըմ գյուղը։ Այնտեղից դուրս եկանք և իջևանեցինք Չայբաշի անունով վայրում, որը գետից քիչ հեռու, կանաչազարդ դաշտում ընկած 100 տնից բաղկացած բաբեշեն գյուղ է։ Գետը սկիզբ է առնում Չոմաքլի սարից և Վանի արևելքում, Թնդանոթի արկի թռիչքի հեռավորության վրա գտնվող Ակքիրփի լեռների մոտ թափվում է Վանա ծովը։

Փաշան այստեղ իջևանեց իր սերափերդեում[46], որտեղ փաշայի տեսության արժանացան Վան քաղաքի բոլոր այաններն ու ավագանին։ Այնքան թանկագին նվերներ մատուցեցին [փաշային], որ նկարագրել անհնարին է։ Մինչև հիմա Վան չէր եկել Մելեք Ահմեդ փաշայի նման հայտնի, բարձրաստիճան և փադիշահին փեսա վեզիր... Փադիշահի հատուկ և բարձր հրամանով, Վանի բերդը նորոգելու և բարելավելու համար նա մի կափուջի բաշի[47] էր ուղարկել։ Այդ օրից սկսած Վանի ժողովուրդը սարսափի մեջ էր։ Այդ պատճառով էլ Վանի ամբողջ շրջակայքից, մինչև անգամ Դիարբեքիրից, Հալեպից, Ռիթլիսից եկել էին փաշային դիմավորելու։ Փաշայի կողքին էին կանգնած՝ փադիշահի դերգահից Կաբա կուլաք Մուստաֆա աղա անունով հայտնի կափուջի բաշին՝ իր 40 կափուջիներով, Վանի աղաներից՝ Խուսրև փաշան, նրա քրոջ որդի՝ Սուլեյման բեյը և Հուսեյին աղայի որդիները։ Սրանք աքսորվել էին և կափուջի բաշին նրանց բերել էր Վանում թողնելու համար։ Վանի զորաբանակում տեղեկացել էին, որ Վանի այաններից մի քանի հարյուրի մասին սպանելու ֆերմաններ են տրված. այլևս այդ հայտնի էր բոլորին։ Այդ պատճառով այաններն ու ավագանին իրենց համար վախենալով, վերոհիշյալ գետի մոտ, մի գիշերվա ընթացքում մեծ քանակությամբ նվերներ էին բերել։ Աղաներն ու ենթակաները մեծ շնորհների արժանացան։

Գետի մոտ առավոտյան կանուխ այս վայրից շուտով Վան մտնելու մասին ֆերման տրվեց։

Զինվորական ուժերի նկարագրությունը: *Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին շատ մանրամասնությամբ նկարագրում է ի պատիվ փաշայի կազմակերպված մեծ շքերթը։*

Շքերթը տեղի է ունեցել 1065 (1654) թվականի ռեջեբ ամսի վերջին։ Շքերթին մասնակցել են բազմաթիվ և բազմապիսի զինվորական մասեր՝ իրենց հատուկ տարազներով և զենքերով։ Այնուհետև անցել են տասնյակ հարյուրավոր տարբեր կարգի ու աստիճանի փաշայի ծառայողները և այլն։ Հետո 500 հարգելի աղաներ, 300 կափուջի բաշիներ՝ սամույրի մուշտակներ հագած, հետո փաշայի [Վանի փաշայի] աստիճաններն ու զարդերը տանողները, ձիերը՝ միրախորների հետ միասին։ Չելեբին ասում է, որ, դրանց նկարագրության համար գրիչը անզոր է։ Հետո անցնում են 22 աստիճանավոր ներքին աղաները և 400 ներքին ղուլամները, «որոնց մի մասը վրացի և մեծ մասը աբաղաներ էին», հետո փաշայի տարբեր արհեստավորները... Այս մեծ շքերթի աջ ու ձախ կողմերում ողջույնի էին կանգնել փաշայի հատուկ ձիավոր զինվորական մասերը։ Հետո Բիթլիսի խանի քեթխուդան իր հազար ընտիր զինվորով, Հեքարիի քեթխուդան՝ 5000 զինվորով, Մահմուդիի խանը՝ 8000 զինվորով, Շիրվանի բեյը՝ 1000 զինվորով, Մեքսի բեյը, Քեսանի բեյը, Բայազիդի բեյը, Հիզանի բեյը, Փինյանիշի բեյը, Փիրեդուսի, Կարկառի, Աղաբիսի, Բենի Կոթուրի, Իսփերդի, Քարնի, Հիրունի, Զրիկի, Մուշի, Ադիլջևազի, Արճեշի, Բերկրիի բեյերի քեթխուդաները հազարական զինվորներով փաշային ողջունելու էին եկել...*

Չորս ժամվա ընթացքում գետի ակունքից մինչև Վան փաշային ողջունում են 30 հազար զինվոր։ Այնուհետև Ստամբուլից սուրհանդակ է գալիս և փաշային հասցեագրված նամակներ բերում։ Պարզվում է, որ Մեծ վեզիր Էրբիշ փաշան հեռացվել է և փոխարենը Կարա-Մուրադ փաշան է մեծ վեզիր նշանակվել։ Հեռացված վեզիրի մասին ափսոսանք հայտնող կնքապահ Օսման աղային Մելեք Ահմեդ փաշան իր ձեռքով մահացու ծեծ է տալիս...

Երբ մոտենում են Վանի բերդին, թնդանոթի և հրացանի համազարկերով ողջունում են փաշային։ Հետո փաշան իրեն դիմավորելու եկող Վանի բնակիչներին, րայա և գեդաներին** *ողջունելուց հետո, 1065 թվականի ռեջեբ ամսի վերջին մտնում է Վան, որտեղ վերին աստիճանի շքեղ խնջույք է տրվում։ Այնուհետև փադիշահի անունով Դիվան է բացվում, որտեղ դատում են 7 մարդու, որոնց ըստ փադիշահական ֆերմանի պետք է սպանեին։ Դրանցից չորսը դիվանից փախչում են, իսկ երեքը ուշաթափվում։ Պարզվում է, որ սրանք Վանի նախկին գերիշխող՝ Շեմս փաշա-զադե Մուհամմեդ Էմին փաշայի կողմից Վանում կազմակերպված ապստամբության գործակիցներից են։ Շարիաթի օրենքով դրանց մահվան են դատապարտում և գլխատում։ Հետո Դիվանում կարդացվում է փադիշահի խաթթ-ի շերիֆը[48], որով հրամայվում է 70 մարդու գլխատել և Ստամբուլ ուղարկել։ Դրանցից 45-ը ներկա են լինում Դիվանում, որոնց ոճրագործությունները քննում է փաշան և իրեն տրված փադիշահական լիազորության հիման վրա դրանցից 7-ին ազատում է, իսկ 38-ին հրամայում է գլխատել...*

Այնուհետև, փաշան, քաղաքի վերանորոգումը և ամրացումը սկսելու նպա--

---

* *Հավանաբար՝ Մոկս։*

** *Գեդա՝ բառացի նշանակում է աղքատ, մուրացիկ, այստեղ գործածվում է հասարակության ցածր դասի իմաստով, գյուղ։*

տակով. բոլոր բարձր աստիճանավորների հետ միասին գնում է բերդը դիտելու։ Նա տեսնում է, որ Վանի հյուսիսային կողմում, ժայռին կից, մեծ քանակությամբ հող է կուտակված։ Փաշան հարցնում է. «Ինչո՞ւ է բերդի մոտ այսքան հող կուտակված։ Այդ պատճառով, Աստված մի արասցե, թշնամին կարող է այս բերդը գրավել»։ Վանի ծերերը պատասխանում են. «Մեր սուլթա՛ն, Թիմուրն է երեք տարվա ընթացքում այս հողը այստեղ կուտակել տվել՝ բայց դարձյալ չկարողանալով բերդը գրավել, թողել ու հեռացել է։ Հետո այս բերդը 7 ամիս շարունակ պաշարել է Քել Ռուստեմ խանը։ Նորից այստեղ հող է կուտակել տվել և քիչ է մնացել բերդը գրավի։ Այդ ժամանակ Ալ-Օսմանի կողմից օգնության են հասնում Դեմիր Կազըք խալիլ և Կարա Մյուրթեզա փաշաները։ Իսկ երբ Քել Ռուստեմը խրամատները թողեց և հեռացավ, մենք էլ առավոտ վաղ Վանի դարպասները բացեցինք, հարձակվեցինք Աջեմի զորքերի վրա և նրանց կոտորեցինք... Այդ հողերը կուտակված են մնացել այն ժամանակից»։ Փաշան ասաց. «Քեթխուդա, իմ բոլոր օթաղները այստեղ հաստատիր. իմ բոլոր զինվորներն իրենց վրանները թող այստեղ կանգնեցնեն։ Ամբողջ էյալեթի և Վանի 27 սանջաքի ու օջաքլըքի իշխողները պետք է Վան գան, ծառայության անցնեն փադիշահին և մասնակցեն այս հողերը ծովը թափելու գործին»։ Բոլոր աղաները սկսում են հող կրել։ Մունետիկները քաղաքների բնակիչներին կոչ են արել անցնել աշխատանքի և բոլորը պարկերով ու այլ միջոցներով հողը կրել և ծովն են թափել... Մելեք Ահմեդ փաշան[49] Վանի սանջաքների բեյերին գրություններ է ուղարկում, իսկ քուրդ էմիրներին առաջարկում է մասնակցել «փադիշահական ծառայություններին»։

Այնուհետև էվ. Չելեբին գրում է. «Իսկ ես, նվաստս, որովհետև անծանոթ էի այս երկրին, սկսեցի դիտել և ուսումնասիրել Վանի բերդը»։

Դար-ի-իմանի[50], այսինքն Վանի բերդի գովքը: *Սկզբում այստեղ ապրել են Ադ և Սիմուդ ցեղերը։ Նրանք այս լեռներում մեծ քարայրներ ու խոռոչներ են փորել և բնակվել դրանց մեջ։ Աստվածային իմաստության շնորհիվ, նրանք կարողացել են օգտագործել ամենակարծր քարերն անգամ։ Հետագայում այս Վանի ժայռը մի շարք պետությունների ձեռքն է անցել։ Մարգարեի ծննդից 1600 տարի առաջ, վեհափառ Դավուդի [Դավիթի] օրոք, Մելիք Ջալութը[51] այս Վանի ժայռի վրա մի մեծ տաճար (վանք) է կառուցել։ Երբ վեհափառ Դավուդը, Աստված նրա հոգին լուսավորի, սպանում է Մելիք Ջալութին, այդ եկեղեցին ձեռքից ձեռք է անցնում և վերջապես, Մարգարեի ծննդից 881 տարի առաջ, անցնում է Մեծն Ալեքսանդրի ձեռքը։ Ալեքսանդրը այս տաճարը կոչում է* վան՝*, *որը տեղացիների կողմից աղոթատեղի իմաստով է գործածվել։ Հետագայում այն աղավաղվում է և* Վան *ձևը ստանում։ Ալեքսանդրի մահից 882 տարի հետո, աշխարհի պարծանքի [Մարգարեի] օրոք, Վանը անցնում է Նեշիրվանի ձեռքը։ Հետագայում, իսլամու-*

---

* Վանք, թուրքերեն գրված է انك,

թյան տարածման ժամանակ, Մուհամմեդի գործակիցներից մեկը դեսպանության կարգով գալիս է այստեղ և տեսակցություն ունենալով վանքի վարդապետի հետ, նրան և ուրիշներին ընդունել է տալիս իսլամական նվիրական կրոնը։ Վերոհիշյալի մահից հետո, Թաջէդդինը՝ Յըզդ-Ջըրդի[52] ցեղից մեկը, տիրանում է այս վայրերին, վերակառուցում է Վանի բերդը, կառուցում է նաև ստորին բերդը։ Հետագայում, 811 (1408) թվականին անցնում է Ադրբեջանի շահերից մեկի՝ Կարա Կոյունլի Կարա Յուսուֆ Ջելայիրի ձեռքը, որը սարսափելով Թիմուրից, փախչում է Յըլդըրմ խանի [սուլթան] մոտ։

Դարձյալ Ադրբեջանի շահերից մեկը՝ Ակ կոյունլու Ուզուն Հասան Բայենդուրին, հպատակվելով Թիմուրին, հետիոտն գնում է նրա կողքով, որի համար Թիմուրը նրան շնորհում է Ադրբեջանը, Ախլաթ քաղաքը և Վանի բերդը։ Սակայն հետագայում, 955 (1548) թվականին, Վանը անցնում է Շահ Թահմասբին։ 956 (1549) թվականին սուլթան Սուլեյմանի փադիշահության ժամանակ, Շահ Թահմասբի եղբայր Էլկաս Միրզան փախչում և գալիս է սուլթան Սուլեյմանի մոտ ու նրան մղում է Աջեմի երկիրը կողոպտելու և թալանելու։

Այդ ժամանակ Մեկթուլ Իբրահիմ փաշան մեծ սերդար է լինում։ Անատոլիայի, Կարամանի, Մարաշի, Դիարբեքիրի, Շամի, Հալեպի, Թարաբլուսի, Ուրֆայի և Ադանայի էյալեթների, ինչպես նաև ամբողջ Քուրդիստանի բոլոր զինվորները, Էլկաս Միրզայի օժանդակությամբ, շարժվում են և անցնելով մենզիլներով, Վանի բերդի դաշտում, շատ մեծ բանակ են դնում։ Այնտեղ բնակություն են հաստատում և հանգստանում իրենց վրաններում։ Բերդում պաշարված աջեմները չդիմանալով Ալ-Օսմանի հարձակմանը, վախից ամանով բերդի բանալիները հանձնում են մեծ սերդարին։ Բերդում գտնվողները քաշվում են Կարնը յարըք բերդը։ Նույն օրը Ամիկ, Սեբավան, Ոստան, Կեփան անունով չորս բերդերի բանալիները Մահմուդիի էմին բեյը հանձնում է սերդարին։ Այդ բերդերն ու նրանց հյուրումները շնորհվում է նրան։ Դրանից հետո բոլոր քրդերի հետ միասին, հպատակություն ու հնազանդություն են հայտնում և բերդերի բանալիները սերդարին են հանձնում նաև Ջերմ, Բիդգար, Բերկրի, Ռուսենի, Հել և Թենվիրզե անունով ամուր բերդերի իշխողները։

Մեծ սերդարը Վանի էյալեթը շնորհում է Շամի վեզիր Կոջա Խուսրև փաշային։ Սակայն Քուրդիստանի խաներից շատերը, ինչպես օրինակ, Բիթլիսի Շերեֆ խանը, թագադրված լինելով Շահ

Թահմասբի կողմից, երթևեկող իսլամ ղավիներին նեղություն է պատճառել և ճանապարհները կտրել։

Վանի բերդի և այլ 43 բերդերի գրավման լուրը սերդարը Հալեպի ձմեռանոցից շտապ տեղեկացնում է [սուլթան] Սուլեյման խանին։ Սուլեյման խանը ուշադրության կենտրոնում ունենալով այս կողմերը՝ պատրաստվում էր գալ։ Մյուս կողմից Վանի բերդին նախապես որպես իշխող նշանակված Ուսրև փաշան զբաղված է լինում Վանի բարեշինությամբ։ Երբ շահը տեղեկանում է, որ Ալ-օսմանները բերդը գրավել են, պատրաստվում է իրանյան և թուրանյան զինվորներով շարժվել Վանի վրա։ Սերդար Իբրահիմ փաշան մեծաթիվ զինվորներով անմիջապես շարժվում է Շահի վրա։ Նա Վանից շարժվում է դեպի արևելք և հյուսիս՝ դեպի Սալմաս։ Վանի և Սալմասի հեռավորությունը միմյանցից 7 փարսախ է։ Երբ շահը իմանում է Սերդարի գալու մասին, փախչում է դեպի Սպահան։ Սերդարն իր հաղթական բանակով վրաններ է կանգնեցնում Թավրիզի մոտ՝ Էսաղ Աբաղ անունով վայրում։ Բոլոր այանները, ուլեմաները և ավագանին նվերներով գնում են Իբրահիմ փաշայի մոտ և հպատակություն հայտնում։ Թավրիզ քաղաքում բոլորովին կողոպուտ տեղի չի ունենում։ Սակայն աջեմների ամենից շատ կուտակված վայրը՝ Կըզըլջա յայլան, կողոպուտի և թալանի է ենթարկվում։ Այդ պատճառով, Ուլամե փաշային սերդար են նշանակում և 10 հազար զինվորով ուղարկում են այնտեղ։ Բայց Ուլամեն այնտեղ պարտություն է կրում և փոքրաթիվ զինվորներով գալիս է Թավրիզ՝ սերդարի մոտ։ [Օսմանցիները] ավելի մեծ քանակությամբ զինվորներով հարձակվում և թալանելով ու կողոպտելով Թավրիզի մոտի Ուջան յայլան, Խոյը, Հրհնդը, Թեսոն, Սալմասը վրեժ են լուծում և անհաշիվ հարստություն ձեռք բերելով՝ մտնում են Թավրիզ։ Քսան օր հետո այնտեղից դուրս են գալիս և անցնելով Կոթուրի ձորերով ու Փինյանիշի քրդերի միջով՝ մտնում են Վան և նորից բարեշինում են Վանի բերդը. որովհետև Բիթլիսի Շերեֆ խանը փախել էր աջեմների երկիրը, Բիթլիսի էյալեթը իբրև նվեր տրվում է Ուլամե փաշային։ Հետո վերոհիշյալ սերդարը անցնելով Բիթլիսով, Հազոյով, Միաֆարկինով, Դիարբեքիրով՝ հասնում է Բաղդատի մոտ և տեսնում, որ (սուլթան) Սուլեյման խանը Բաղդատը պաշարել է։ Նորին վսեմություն փադիշահին նա հայտնում է իր հավատարմությունը։ Պաշարման 40-րդ օրը, 941 (1542) թվականին փադիշահը Բաղդատը գրավում է։ Վերադարձին տեղեկանում է, որ Ալմանների [Գերմանիայի] թագավորը շարժվել է Բելգրադի

վրա։ Շտապ վերադառնում է և Ալմանների երկրում գրավելով
Էրգուդ, Սելանկմեշ, Դոքին, Վարդին, Օսեք և այլ ընդամենը 76
բերդեր, հաղթական կերպով վերադառնում է իր մայրաքաղաքը։
Այդ ժամանակ Վան և Ադիլջևազ բերդերից օգնություն խնդրողներ
են գալիս և հայտնում, որ մոլորյալ շահը Վանն ու Ադիլջևազը գրա-
վել է։ Սուլթան Սուլեյմանը անմիջապես, երկրորդ անգամ ստիպ-
ված է լինում շարժվել Աջեմի վրա։

955 (1548) թվականի սեֆեր ամսի 7-րդ օրը սուլթան Սուլեյ-
մանը, շեհզադե Ջիհանգիրի հետ միասին անցնում է Սկյուտար և
այնտեղից իր անթիվ զինվորներով ճանապարհ կտրելով՝ գալիս է
Սեյդի Ղազի կոչված վայրը։ Այստեղ Սարուխանի վալի շեհզադե
Սելիմ խանը գալիս է կայսերական բանակ, արժանանում Նորին
Վսեմություն փադիշահի տեսությանը և նշանակվում Ռումելիի երկ-
րի վարչության թեկնածու։ Ապա ուղարկվում է սուլթանության երկ-
րորդ մայրաքաղաքը՝ Էդիրնե։ Այդտեղից Սուլեյման խանը դուրս
է գալիս և իջևանում է Ակ-շեհիրի մոտ։ Շեհզադե Բայազիդ խանը
իր բանակով գալիս է իր հորը՝ փադիշահին արժանի հարգանքներ
մատուցանելու...

...Փադիշահը իր դինվորների հետ միասին վերցնում է շեհ-
զադեին և ուղևորվում դեպի Վան։ Գալիս են Սվազ։ Ամասիայի իշ-
խող շեհզադե Մուստաֆա խանը գալիս և փադիշահի ձեռքը համ-
բուրում է... Այս շեհզադեին էլ է իր հետ վերցնում և իջևանում է
Էրզրումի բերդի մոտ։ Այստեղ երեք օր հանգստանում, զինվոր է
հավաքում և գալիս իջևանում է Ադիլջևազ բերդի մոտ։ Աջեմները
չեն կարողանում դիմադրություն ցույց տալ, ոմանք նավերով փախ-
չում են Վանի բերդը, ոմանք էլ դեպի Ոստան ու Դատվան։ Ադիլ-
ջևազ բերդը դատարկ են թողնում։ Այս բերդի մոտից փադիշահը
Ուլամե փաշային և Կարամանի բեյլերբեյի Փիրի փաշային 40 հա-
զարանոց բանակով ուղարկում է Վանի բերդը պաշարելու։ Սրանք
արագ հասնում են Վան, մտնում են խրամատները և Վանի շրջա-
նից հազարավոր զինվորներ են ուղարկում Աջեմի երկիրը կողոպ-
տելու և ավերելու։ Իսկ աշխարհակալ փադիշահը 10 օրվա ըն-
թացքում հասնում է Թավրիզի դաշտը, Շահ Թահմասբի եղբայր
Էլկաս Միրզային նորից սերդար է նշանակում և 40 օրվա ընթաց-
քում Համադան, Դերգեզիր, Էրդեբիլ, Նեհավենդ, Քաշան, Կազվին,
Մերաշե, Էսադ-Աբադ, Շեհրի Ուջան, Սպահան քաղաքների շրջան-
ներում, Իրաքում և Ադրբեջանում 76 քաղաք է գրավում և անսահ-

ման քանակությամբ ավարով Էլկաս Միրզայի հետ վերադառնում է Թավրիզ...

[Սուլթան] Սուլեյման խանը Թավրիզին խնայում է և չի կողոպտում։ Նա թույլ չի տալիս, որ ռայաներին և հասարակ ժողովրդին վնաս պատճառեն։ Միայն պարզապես հողին է հավասարեցնում շահի Թավրիզի ապարանքը և պարտեզները։ Նվաստս այդ ավերակները և քանդված վայրերը նկարագրել եմ 1058 (1648) թվականին՝ Թավրիզ գնալիս։

[Փադիշահը] դուրս գալով Թավրիզից և շարժվելով դեպի արևմուտք, հինգ օրից հետո հասնում է Վանի դաշտը։ Նա Ուլամե և Փիրի փաշաներին գտնում է Վանի խրամատներում։ Սադրազամ Ռուստեմ փաշային, 70 բեյլերբեյիների հետ միասին, պարտավորեցնում է գրավել Վանը։ Թշնամուն հանգիստ չի տրվում։ Առանց ժամանակ կորցնելու, բերդը գրավելու համար ծերերի մասնակցությամբ խորհրդակցություն է գումարվում։ Նախապատրաստվում են բոլոր անհրաժեշտ միջոցները։ Անթիվ զինվորներ ամեն կողմից մեղվի նման պաշարում են Վանի բերդը։ Պաշարումը տևում է 10 ցերեկ և գիշեր։ Բերդում պաշարված աջեմները սովին ու ծարավին չեն դիմանում և աման են խնդրում։ Տասներկուերրորդ օրը բերդի սիփահսալար[53] Ալի խանը, գիշերով, իր մարդկանց հետ պարաններով իջնում է բերդից, գնում Էլկաս Միրզայի վրանը և միջնորդություն խնդրում։ Նա էլ դիմում է Սուլթան Սուլեյման խանին և հայտնում բերդում գտնվողների խնդիրքը։ 955 (1548) թվականի ռեջեբ ամսի 20-րդ օրը, Սուլեյման խանը, վեզիր և բարձր սերդար Ռուստեմ փաշայի միջոցով, երկրորդ անգամ գրավում է Վանի բերդը։ Հետո 40 օր մնում է Վանի բերդում և այնպես է վերակառուցում ու բարեկարգում այն, որ նմանը չի կարող լինել։ Ներկայումս օսմանցիների ձեռքին ամրակուռ և ուժեղ մի բերդ է։

Վանի ժայռի գովքը: Ադրբեջանի տերիտորիայում է։ Հարավից, արևմուտքից և հյուսիսից շրջապատված է Վանա ծովով։ Արևելքից, հարավ-արևելքից և հյուսիս-արևելքից դրախտանման մի դաշտ է։ Այդ դաշտի կենտրոնում գտնվում է Վանի բերդը, որը նման է բեռնված և ծուռ գավակով ուղտի։ Ետևի մասը դեպի երկինք է խոյացած և գույնզգույն բուկալեմանի է նման։ Երկու կողմից ուղտի բեռան նման, խոշոր փորով, ներքևը առանց սյուների, պարապ ժայռեր են, որի հարավ-արևելքում, ժայռերի ստորոտում, գտնվում է ստորին քաղաքը, սա ցածր պարիսպներով մի վարոշ է։ Հյուսիսում գտնվող պարապ ժայռը, որտեղ Թիմուրը հող է կուտակել՝ քաղաքից դուրս է։ Այս կողմում եղեգնապատ ճահիճ է։

Ինչպես ասացինք, այս ժայռը ծնկաչոք ուղտի է նման, որի դեպի արևելք երկարած գլուխը, թնդանոթի ազդեցությունից ազատ ժայռեր են։ Ուղտի ետևի մասը դարձած է դեպի Վանա ծովը և նայում է արևմուտք։ Ուղտի ետևին նմանվող վայրից՝ անցնելով 7 աշտարակի և 7 հարկանի դռների վրայով, մի ժամվա ընթացքում սարսափով կարելի է բարձրանալ 3060 քայլաչափ բարձրություն ունեցող ժայռերի վրա։ Ներքևում գտնվում է Արաբ-Ջանի դուռը, որը բերդի ամենացածր պարիսպումն է։ Բերդի ժայռերը զանազան կողմերից շատ տարօրինակ տեսք ունեն. շատ տեղերում ժայռերը աժդահայի են նման և թեքված են ներքև՝ քաղաքի վրա։ Պարզ երևում են աժդահայի գլուխը, ոտներն ու վիզը։ Ժայռերից մի քանիսը նման են առյուծի, մի քանիսը՝ կոկորդիլոսի, մի քանիսը նավի, իսկ մի քանի ժայռեր էլ նման են նստած արծվի։ Այս ժայռերը ներքևից կարելի է շրջանցել երեք ժամվա ընթացքում, ժայռի մեջ 600-ի չափ մի քանի հարկանի խոշոր քարայրներ կան, որոնցից ամեն մեկը մի իշխանատան նման է։ Այս քարայրներից մի քանիսում մետաքսագործական արհեստանոցներ կան, որտեղ վարպետները իրենց ճախարակներով մետաքսի, բամբակի և այլ թելեր ու պարաններ են պատրաստում։ Հարյուրավոր քարայրներում թնդանոթի արկեր են պահվում, որոնց հաշիվը միայն աստված գիտե։ Մի քանիսն էլ լիքն են սև վառոդով։ Մի քանի քարայրներում անհաշիվ նետ, աղեղ, հրացան, սուր, վահան, կացին, բրիչ, թիակ, կումբարա[54], անիվ, կլոր քարեր և այլ բազմաթիվ տեսակի ռազմամթերք և պատերազմական իրեր կան։ 100 քարայր հատկապես լիքն են գարով, ցորենով, բրնձով, կորեկով, ոսպով, բակլայով, սիսեռով և այլով։ Քարայրներից մեկն էլ լիքն է կենդանիների ոսկորներով։ Մի քարայրում հազարավոր տարիներից ի վեր մնացած մեծ քանակությամբ չստեր, տրեխներ և նման անպետք իրեր կան։ Քարայրներից մեկի ջրի ավազանում կան քթանի յուղ, մյուսում սուսամի յուղ, մի ուրիշում՝ դեղին յուղ, մեկում՝ կուպր, մյուսում՝ ձյութ և այլ տեսակի յուղեր և ճարպեր։ 7 ավազանի մեջ բրդից ու մազից մաքրված և շերտ-շերտ կտրված կովի և գոմեշի կաշիներ են դարսված, որոնց վրա առատորեն մեղր է լցված և կաշվից հետք անգամ չի մնացել, ստացվել է մի տեսակ հիանալի քաղցրեղեն (ռեչել), որն ուտելով չես կշտանում։ Մի ուրիշ քարայրում աղած ձուկ, մի այլում աղած կովի, գոմեշի, ոչխարի, այծի միս է կուտակված։ Երեք քարայրում աղ կա։ 40 քարայր լիքն են եփած

կորեկի հացով, կարկանդակով, ալյուրով ու ձավարով, սրանց հաշիվը հայտնի է միայն աստծուն։ Մի քանի ավազաններում քացախ, մեղր, պանիր, ձիթապտուղի յուղ և մինչև անգամ գինի կա։ Գինին գործ են ածում իբրև դեղ կամ իբրև հարգանք տալիս են պաշարված քրիստոնյաներին։ Քարայրներից մեկում, աստծո հրամանով, նավթի յուղ կա, որը ժայռից հոսելով լցվում է մեծ ավազանի մեջ։ Երբ ավազանը լցվում է նավթով, կառավարությունը, Վանի դեֆթերդարի միջոցով, վաճառում է առևտրականներին։ Այս քարայրը միշտ գիշեր-ցերեկ, փակված է մնում։ Մի կողմումն էլ մեծ քանակությամբ հող է կուտակված, որպեսզի, աստված մի արասցէ, եթե նավթը բռնկվի վրան հող ածեն ու կրակը մարեն։ Մի խոսքով Վանի այս ժայռի մեջ մոտ 600 քարայր կա։ Որոնցից ոչ մեկը դատարկ չէ, բոլորը լցված են ռազմամթերքներով և այլ պատերազմական իրերով։

Սուլթան Սուլեյման խանը,— աստված նրա հոգին լուսավորի՛,— բազմաթիվ հաղթանակներ տանելով և բերդեր գրավելով, լրիվ գաղափար է կազմում ամեն հարցի մասին և իմանում է, թե դեպի բերդը ու բերդից դեպի թշնամին ինչպե՞ս պետք է թնդանոթ արձակել, բերդը ինչպե՞ս ռմբակոծել, բերդից արձակվող թնդանոթները ո՞ր դեպքում կարող են թշնամուն վնաս պատճառել։ Նա Վանի բերդի ամենաբարձր գագաթին 20, 30 և 40 թզաչափ[55] բալյեմեզ թնդանոթներ է դնում, այնպես որ, 4 ժամյա հեռավորության վրա գտնվող Արտամետի այգիներից թշնամու երևալուն պես, այս թնդանոթները, որ 40 մղոն հեռավորության վրա իշխել են Վանի դաշտի և ծովի վրա, մարդու շարժում անգամ թույլ չեն տվել։

Սուլեյման խանը նկատի ունենալով, որ եթե թշնամին մի կերպ կարողանա բերդի տակը հասնել, վերևում գտնվող երկար թնդանոթների գնդակները հեռու տարածության վրա արձակվելով, կարող են թշնամուն չդիպչել, հիշյալ քարայրներից մի քանիսում թնդանոթի անցքեր է բաց անել տալիս և շատ մեծ դժվարությամբ յուրաքանչյուրի մոտ թնդանոթներ է զետեղում։ Այդ թնդանոթները տեսնելիս մարդ սարսափում է։ Ոզնու փշերի նման բազմաթիվ բալյեմեզ թնդանոթներ են շարված և դրանց համար անհրաժեշտ արկեր և այլ ռազմամթերք պատրաստվել ու դրվել են ամեն մի թնդանոթի մոտ։ Սրանցից մի հարկ ներքև գտնվող քարայրները ծակել են և մի մարդ տեղավորվելու չափ լայնություն ունեցող այդ անցքերից քարագնդակ արձակող շայկա թնդանոթներ են գրել։ Դրանից էլ ցած, ստորին վարոշի բերդի պարիսպների, աշտարակների և պատ-

նեշների վրա, Յալիի դարպասից մինչև փաշայի աշտարակը, ապա Ռուստեմ և Խուսրև փաշաների աշտարակներից մինչև Օրթա Կափուն և Թավրիզի դարպասի աշտարակները մի-մի կարգ թնդանոթներ են շարված։ Այսպես, Վանի բերդի վրա, ինչպես կալիոն[56] նավի վրա, աջ ու ձախ կողմերից, քառահարկ թնդանոթներ են շարված։

Վանի բերդի նկարագիրը: Վերևում նկարագրված քարայրների վրա կառուցված, դեպի երկինք խոյացած այս ամրակուռ բերդի արևմտյան կողմում դռներ ունեցող 7 հարկանի աշտարակներ կան, որոնք իրար են նայում։ Դեպի հյուսիս նայող բաժան-բաժան ժայռերի վրա բերդի եռակի պարիսպներն են, որից այն կողմ բնակվում են ազաբների զորամասը[57] և այլ զինվորական մասերը։ Մյուս կողմում ժայռերի միջով մինչև ներքևի ճահճուտները իջնող Սուլուքի ճանապարհն է։ Այդ ուղղության վրա կանգնած աշտարակը ամրացված է բալյեմեզ թնդանոթներով։ Հարավ-արևելքից, ստորին քաղաքին նայող մասում, բերդը պարիսպներ չունի, ամբողջապես սեպաձև ժայռեր են։ Այստեղ են գտնվում ենիչերիների աղայի, բաշչավուշի և նրա քարտուղարի, բերդապահի և նրա քեթխուդայի ապարանքները, ինչպես նաև ենիչերիների, թնդանոթաձիգների և ջեբեջիների սենյակների պատերը և պատշգամբները։ Բերդի այս կողմի պարսպից ոչ ոք չի համարձակվի ներքև նայել։ Այս վայրում, դեպի ստորին քաղաքը դարձած ժայռերի մեջ է փորված Սուլուք տանող աշտարակի ճանապարհը, որով վերին բերդի ամենաբարձր գագաթից մինչև Խորխոր գետակի ժայռը հասնելու համար, պետք է իջնել հազար աստիճան ունեցող քարե սանդուղքով։ Կա նաև ջուր բերելու առանձին ճանապարհ։

Կըլըջ Արսլան փաշան այդպես է կառուցել, որպեսզի բերդի պաշարման ժամանակ իրարանցում տեղի չունենա։ Վանի բերդի այս ժայռից է հոսում Խորխոր անունով գետակը, որը կարող է ջրաղաց դարձնել։ Այս գետակի հիանալի ջրով են ոռոգվում խաղախորդարանից դուրս գտնվող այգիներն ու պարտեզները, և ապա թափվում ծովը։

Բացի այս բերդից, արևելքում, իմ կողմից ուղտի նմանեցրած վայրում, Քեսիք անունով մի փոքր բերդ էլ կա, որ կարծես թե ուղտի գլխի վրա կանգնած մի մեծ բերդ է։ Այս բերդը ենիչերիների վերին բերդից ավելի ցածրադիր է։ Սա էլ ունի ջրի առանձին ճանապարհ, բերդակալ զինվորներ ու ռազմամթերքի քարայրներ։ Այն նայում է Թավրիզի դարպասին։ Այս բերդն էլ չի կարելի ոչ մի կերպ գրավել։

Վերին բերդի տարածությունը: *Ոչ մի կերպ հնարավոր չեղավ քայլերով չափել այս բերդը, որովհետև ամեն կողմից ժայռեր ու անանցանելի վայրեր են։ Շրջապատում խրամներ չկան։ Արևելքից դեպի արևմուտք ձգված բարձր և աննման մի բերդ է։ Այս թեք բերդը բարձրանալու և ներքին բերդը հասնելու համար, որտեղ արևմուտք նայող երկաթյա եռակի դռներ կան, պետք է անցնել 3000 քայլ և 70 աշտարակ։*

Վանի բերդի դարպասների ետևում գիշեր ու ցերեկ, ամառ ու ձմեռ, մշտապես, հերթով պահպանություն են անում մի օր մի օդա ենիչերի, մի օր ազաբները, մի օր էլ պարսպի զինվորները։ Նույնիսկ երեխայի ու կնոջ թույլ չեն տալիս ներս մտնել։ Պատճառն այն է, որ մի անգամ, մի քանի հարյուր քրդեր կանացի հագուստ հագած բերդն են մտել ու գրավել։ Հետո Ահմեդ աղա անունով անվանի մի ղազի, իր կալվածքից 3000 Սեղեն գեչղի[58] *կտրիճներ հավաքելով, ծովի կողմից նավերով և բազմատեսակ խորամանկություններով ու վարպետությամբ բերդի վրա է հարձակվել, մտել բերդը և այն գրավող քրդերին այնպիսի հարված է հասցրել, որ շատերը բերդից իրենց ցած են գցել և կտոր-կտոր եղել։ Շատերին էլ սպանել է և նրանց դիակներով զարդարել բերդի աշտարակներն ու պատերը։ Այս դեպքը տեղի է ունեցել (սուլթան) Մուրադ IV-ի օրոք։ Դրանից հետո է, որ նույնիսկ երեխաներին ու կանանց ներս չեն թողնում։ Այդ ժամանակից սկսած Վանի համար 10 օդա ենիչերի է նշանակված։*

Այս դարպասից արևելք, մինչև Քեսիք աշտարակի գլուխը, բերդի երկարությունը՝ 1040 քայլ է։ Եթե հաշվի առնենք ներքևի 3060 քայլը, ստացվում է, որ Վանի բերդը ներքևից մինչև ներքին բերդի Քեսիք աշտարակը 4100 քայլ երկարություն ունի։ Սակայն կան տեղեր, որոնք միայն 200—300 քայլ լայնություն ունեն։

Վանի ներքին բերդի շինությունները: *Ենիչերիների, թոփչիների և ջեբեջիների մոտ 300 տուն կա։ Սրանք բոլորը ամուրի են, որովհետև այստեղ ամուսնացածներ չեն կարող լինել։ Միայն հյուսիսում, բաժան-բաժան պարիսպների մեջ գտնվող, դեպի դաշտը նայող Սուլուք աշտարակի մոտ ապրում են ամուսնացած մարդիկ։ Այստեղ է Սուլեյման խանի ջամին, որը հին վանքից վերածվել է ջամիի և որի մինարեն երկրաշարժից քանդվել է։ Ենիչերիների Օմեր աղան այդ մինարեն նորից վերակառուցել է։ Այդ ջամիի գմբեթը և մյուս ապարանքների տանիքները, մինչև կեսօր ամպերի մեջ են և չեն երևում։ Ոչ ոք չի կարող այստեղ նետ հասցնել։*

(Սուլթան) Մուրադ խան IV-ը Երևանի գրավումից վերադառնալիս, փահլևան Սարի Սոլաղին և Հաջի Սուլեյմանին կարգադրեց նետ արձակել և նրանց նետերը բերդից ավելի բարձր թռան։

Բերդում 7 մզկիթ, մեկ թեքիյե, 3 դպրոց և մոտ 10 փոքր խանութներ կան։ Տներից յուրաքանչյուրում մի լողարան կա։ Ամեն մարդ իր տան համար ձիով և ջորիով է ներքևից ջուր բերում և հավաքում է ջրամբարներում։

Կարևոր ծանոթություն: Ներքևի բերդի հարավ-արևելյան մասից դեպի քաղաքը նայող Քեսիք Թոփ քարայրի վերևում գտնվող մի բարձր ժայռ հղկել են քառակուսի ձևով, փայլեցրել և այնտեղ մի քանի տող կարևոր գրեր են գրել, որը պատկերներից և տարբեր նշաններից է կազմված. նվաստս չկարողացավ կարդալ։

Ստորին բերդը: Վերին բերդից հարավ-արևելք և նրանից ցած, մի ընդարձակ դաշտում կանգնած եռանկյունաձև ամուր մի բերդ է, որի վրա իշխում է միայն ներքին բերդը։ Արևմտյան և հյուսիսային կողմից միանալով վերոհիշյալ վերին բերդին՝ վերածվում է քառակուսի ձևի։ Ստորին բերդի և վերին բերդի միացման վայրում բոլորովին պարիսպներ չկան, միայն ներքին բերդի ժայռերն են։ Ստորին բերդի արևելքից դեպի հարավ և արևմուտք, բերդը պարիսպներ ունի։ Մի հարկը խիստ ամուր սրբատաշ քարերով կառուցել է տվել Թաջեդդին շահը։ Թեև ցածր է, բայց ամուր։ Շրջապատի պարիսպների լայնությունը մոտ 12 արշին է. հաստ և քարուկիրից կառուցված պատեր են։ Վելեդի աշտարակից մինչև փաշայի ապարանքի այգու մոտ գտնվող Քյոշկի աշտարակի միջև ընկած պարսպի պատերի լայնությունը մոտ 20 արշին է, իսկ դեպի էլմաչի փաշայի աշտարակը, որը մի քանի պաշարումներից հետո քանդվել էր՝ վերակառուցվել է. խիստ ամուր է և քառասուն քայլ լայնությամբ այնպիսի հաստ պատեր ունի, որոնց վրա կարելի է ջիրիդ խաղալ։ Շրջապատի բոլոր աշտարակների թիվը հասնում է 60-ի։ Սուլթան Վելեդի աշտարակը հսկում է բերդի պարիսպների վրա։ Բերդի վրա թնդանոթները շարված են ոզնու փշերի նման։ Յալիի դարպասի մոտ կան մի քանի աշտարակներ, դրանք Շահի փաշայի, Սուլեյման փաշայի, Քեթենչի Օմեր փաշա-զադե Մուհամմեդ փաշայի աշտարակներն են։ Վերջինիս կառուցման թվականը այս է. «Ջանք գործադրեց, Վանը նորից վերաշինեց 1055 (1645) թվականին»։ Այնուհետև նորոգեց Օրթակափուի, Վանի Ահմեդ աղայի, չերքես Իսքենդեր փաշայի, Ոլեմա փաշայի, Աթլի

փաշայի, Յասնի, Նակըշի, Էլմաջի փաշայի և Թավրիզի դարպասի աշտարակները։

Այս Թավրիզի դարպասի աշտարակի կողմում, Քեսիք գնեբոյունու (կտրված ուղտի վիզ) բերդից ներքև, սեպաձև ժայռերի վրա 38 ամուր, քարուկրից կառուցված մեծ աշտարակներ կան, որոնց չի կարելի լեզվով նկարագրել։ Ժայռերի մեջ մի աշտարակից մյուսին օգնության գնալու ճանապարհներ կան, որոնք հայտնի են միայն զինվորներին։ Այս դարպասի աշտարակի վրա շատ են թընդանոթները, որովհետև Վանի բերդին այս կողմից է վտանգ սպառնում։ Այդ պատճառով ստորին բերդի այս կողմում 5 հարկանի հաստ պատեր են կառուցված, որոնց վրա մի քանի հարկանի 40 քարայր կա։ Այս աշտարակների առջև, պարսպի ներսում, վերին աստիճանի հաստ և քարուկրից մի պատ է կառուցված։ Սրա վրա բազմաթիվ որմնախորշեր կան։ Այս պատի վրա թնդանոթներ չկան։ Պատի ներսում գետնահարկ, քարուկրից կառուցված ճանապարհներ են գցված, որոնց նպատակը այն է, որ եթե բերդի պաշարման ժամանակ թշնամին այնտեղ հող լցնի, պաշարվածները այդ ճանապարհներով խրամների մեջ կուտակված հողը դուրս կբեն և այսպիսով բերդը ազատեն հողի մեջ թաղվելուց։ Այս պատերի վերջից սկսած, Յալիի դարպասից մինչև Թավրիզի դարպասը, բերդը շրջապատված է խրամներով, որոնց լայնությունը 50—60 քայլաչափ է, բայց խոր չեն։ Այս պատճառով պաշարելը դժվար է։ Մի արշին խորությամբ փորելու դեպքում՝ ջուր է դուրս գալիս։ Այստեղ խրամատներ փորելը դժվար է։ Քել Ռուստեմ խանը Իրանի զինվորներով եկել է այս բերդի տակ, բավականին հեռավորությունից սկսել է հող կուտակել և հասել է խրամի եզերքին։ Կուտակված հողաթմբերի օգնությամբ բերդն է մտել։

Թավրիզի դարպասի կողմի խրամը 100 արշին լայնություն և 40 արշին խորություն ունի։ Այս կողմի զինվորները թշնամուց բոլորովին չեն վախենում։ Մինչև անգամ Քել Ռուստեմ խանի պաշարման ժամանակ, 7 ամսվա ընթացքում, ներքին բերդից միայն 7 անգամ են թնդանոթ արձակել։ Սուլթան Սուլեյման խանից մնացած քեսիք կոչված այս թնդանոթի բերանի մի մասը կոտրված է։ Մի անգամ բերդի ժայռի քարայրից արձակել են այս թնդանոթը և խորհրդակցության մեջ եղող 7 աջեմ խաներից յոթին էլ սպանել։

Ինչ դժվարություն և դժբախտություն պատահի, առաջինը ստորին բերդին է բաժին ընկնում։ Վանի կուլերի և բերդի մյուս կուլերի միջև տեղի ունեցած վեճի և առարկության մասին վանեցիները

այսպես են ասում. «Քել Ռուստեմ խանի ժամանակ մեր բերդում սով է եղել և մենք կատվի, հովվի շան, թերաշի (?), շան ձագի միս ենք կերել։ Մեր նահատակները կերել են իրենց քույրերի, հորեղբայրների, հորաքույրերի և իրենց զավակների միսը։ Վանա բերդի մի քարին հազար և մեկ գլուխ են տվել, բայց Վանի բերդը Քել Ռուստեմին չեն հանձնել»։ Նրանք պարծենում են այսպես։ Այնուհանդերձ ճիշտ է, որ (Վանի) կուլերը շատ համառ են։ 7 ամիս հետո Քել Ռուստեմը անհաջողությունից հուսահատված՝ թողնում է ռազմամթերքը, վառոդը, բանակը և փախչում։ Վանի կուլերը հետապնդում են Ռուստեմ խանին և հասնելով մինչև Սալմասի և Ուրմիայի դաշտերը, կոտորում են նրա զինվորներին։

Այնուհետև էվ. Չելեբին տալիս է Մելեք Ահմեդ փաշայի կողմից կառուցված շինությունների նկարագրությունը։

Վանի բերդի դարպասները: *Ունի չորս երկաթյա դարպաս, որոնցից ամենաամուրը դեպի արևելք բացվող Թավրիզի դարպասն է։ Սա՝ հինգ հարկանի, ծուռ ու մուռ ճանապարհի վրա բացվող մի դուռ է։ Այս կողմի պարիսպների վրա, դռների առջև, գիշեր ու ցերեկ պահապաններ կան։ Այս դարպասից ներս, Դևե-բոյնու և Քեսիք-կալա ժայռերի տակից մի աղբյուր է բխում, որը կարող է ջրաղացներ աշխատեցնել։ Դրախտային ջուր է և ոռոգելով քաղաքի մեջ գտնվող խանի, ջամիի, բաղնիքի և այլ բազմաթիվ շենքերի պարտեզները, դուրս է հոսում բերդից։ Սրա ակունքի մոտ մի հին աղոթատեղի կա, որտեղ աղոթում և նրա զուլալ ջուրն են խմում այս դարպասը հսկող պահապանները։ Երկրորդ դարպասը Օրթակափուն է, որը բացվում է դեպի հարավ և հարավ-արևելք, դեպի Արտամետի այգիները։ Սա եռահարկ երկաթյա դարպաս է, որի պարիսպների միջև ընկած տարածությունը լիքն է զենքերով։ Ունի մոտ 200 զինված պահապան։ Դարպասի մոտի խրամի վրա մի ամուր կամուրջ է գցված։ Երրորդ դարպասը Օղրենի դուռն է, որը ապարանքի պարտեզի անկյունում, դեպի հարավ նայող փոքրիկ երկաթե դուռ է, սա միշտ փակ է լինում և բանալիները փաշայի մոտ են պահվում։ Եթե գիշերով սուրհանդակ կամ Աջեմի ու Քուրդիստանի կողմից մարդ է գալիս, դուռը բաց են անում և փաշան ինքն անձամբ եկվորից տեղեկություն է ստանում։ Այս դռան մոտի խրամի վրա մի փոքր տախտակյա կամուրջ է գցված։ Գիշերները պահապանները հսկում են նաև այստեղ։ Չորրորդ դարպասը՝ Յալիի դարպասն է, որը նայում է դեպի արևմուտք։ Սա բաղկացած է*

քառահարկ երկաթյա դռներից և ամեն մի դարպասի մոտ զինված դռնապաններ են կանգնած։ Քանի որ այս դարպասը նայում է Նավահանդստին, այդ պատճառով էլ պահապանների թիվը շատ է։ Այստեղ մարդիկ կան նաև դեֆթերդարի և մաքստան էմինի կողմից։ Ամեն մի դարպասի պատերի միջև այնքան զենք ու ռազմամթերք կա. որը դժվար է նկարագրել։ Այս դարպասի մոտի խրամի վրա տախտակյա կամուրջ կա։

Վանի բերդի տարածությունը: Արևելյան կողմից՝ Թավրիզի դարպասից դեպի արևմուտք, մինչև Յալիի դարպասը, ստորին բերդի երեք կողմի պարիսպների երկարությունը ընդամենը 5000 քայլ է, իսկ եթե հաշվենք նաև ներքին բերդի ժայռը, ստացվում է 11 հազար քայլ։ Ամբողջ պարսպի վրա 4000 ատամ կա. պաշարման ժամանակ պարսպի ատամների միջև երկուական մարդ է կանգնում։ Ներկայումս, ամեն գիշեր 73 աշտարակի մեջ մշտապես պահապանություն են անում 500 սպառազինված մարդ։ Ամբողջ գիշերը 24 աղա և չավուշ առանց հագուստ հանելու, որպես հսկիչներ ման են գալիս և եթե ռաբաթի պահպանություն անողներից մեկին տեսնեն քնած վիճակում, 200 փայտի հարված են տալիս, այդ մասին հայտնում են փաշային և նրա կեդիքը[59] տալիս են ուրիշի, քանի որ նրանց ապրուստի հիմնական միջոցը սահմանված ուլուֆեն և դիրլիքն է[60]։

4—5 հազարի չափ պանդուխտ կտրիճներ կան, որոնք մաչուլչի են կոչվում։ Սրանք առանց վարձատրության պահպանություն են անում, բայց երբ մի կեդիք է ազատվում, օրենքով սրանց է տրվում։ Եթե մահացողն ունենա երիտասարդ տղա, կեդիքը որդուն է տրվում։ Փոքրահասակներին աստիճան և կեդիք տալը արգելված է։ Ամեն գիշեր այս պահապանները զինված հերթապահություն են անում և բերդի պարիսպների ու աշտարակների վրա զբաղվում են զանազան կատակախոսություններով։ Իսկ երբ թշնամու մասին մի որևէ լուր է ստացվում, բերդի պատերից երկաթե շղթաներով, սնդուկների մեջ վառվող ջահեր են կախում և խավար գիշերը լուսավորվում է ցերեկվա պես։ Երեկոյան և սալավաթի[61] աղոթքից հետո նվագախումբ է նվագում, բայց որովհետև շատ բարձր է, ստորին բերդում վերին բերդի նվագը դժվար է լսվում։

Վանի բերդի իշխողները: (Սուլթան) Սուլեյման խանի օրենսգրքի համաձայն Վանը էյալեթ է։ Սկզբում, Սուլեյման խանի օրոք, երբ Իբրահիմ փաշան գրավում է այն՝ որպես երկու թուղով էյալեթ, շնորհվում է Ուլամե փաշային։ Այնուհետև 953 (1547) թվականին, երբ աջեմները գրավում են Վանը, Սուլեյման խանը անձամբ գա-

լիս, պաշարում և Սադրազամ Ռուստեմ փաշայի միջոցով գրավում է այն։ Սկզբում իբրև արփալըք[62], վեզիրության աստիճանով շնորհվում է Ստամբուլում միջին դեֆթերդարի պաշտոն վարող Ջերքեզ Իսքենդեր փաշային, որը քաջ և հերոս անձնավորություն էր։

Սրա կայսերական խասը 11 անգամ 100 հազար և 32 ակչե էր։ Խասի համաձայն 3000 ջեբելու զինվորներով գնում էր հայտարարված պատերազմին։ Ըստ օրենքի, ոճիրների և մարդասպանությունների դատեր վարելու համար փաշան տարեկան ստացել է 40 հազար ղուրուշ եկամուտ։ Իսկ մեր էֆենդի Մելեք Ահմեդ փաշան հազար քիսեից ավելի եկամուտ ստացավ։ Փադիշահական Դերգահի ենիչերիների խասեքի[63] հարգելի աղաներից մեկին նշանակեց ենիչերիների աղա։ Մեր ժամանակ Դելի Աբդի աղան էր նշանակված, որը երեք օդայի 3000 ենիչերիների իշխողն էր։ Ջերիբաշին 3 օդայով 1000 ջեբեջի զինվոր ուներ։ Թոփչիբաշին 2 օդայով 1000 թընդանոթաձիգ ուներ։ Որպես հարգված անձնավորություններ ուրբաթ օրերը սրանք փաշայի հետ դիվան էին կազմում։ Իշխողներ էին նաև փաշայի քեթխուդան, փաշայի մյուսելլիմը և փաշայի քաղաքի սուբաշին։ Փադիշահի ֆինանսական դեֆթերդար Շանի էֆենդին նույնպես իշխող էր. սրա խասը 6487 ակչե էր։ Սա իր 150 մարդկանցով 7000 իշխողներից փադիշահական տուրքեր էր հավաքում և 70 բերդի կուլերին ու այլ ծառայողների նշանակում էր նախատեսված պաշտոնին։ Նա իրավունք ուներ փադիշահական Դիվանին ներկայանալ կաֆթանով։

Ջավուշների քեթխուդան, էմինը և քարտուղարը, թիմարի դեֆթերդարը, դեֆթերի էմինը, օրագրողը, հաշվետարը, մուկաթաջին[64] և մեկուֆաթչին[65] փադիշահի կողմից աստիճան ստացած իշխողներ են։ Սրանք, թվով ինը, համարվում են դիվանի խալիֆեներ[66]։

Օրենքով զեամեթների խասը 60999 ակչե է։ Սրանք էլ փաշայի հետ միասին պատերազմի են գնում։ Իշխողներ են համարվում նաև զեամեթի քեթխուդան, աջ զորաթևի աղան՝ Սուլեյման բեյը, ձախ զորաթևի աղան, պարսպի աղան, մեծ բերդակալը, Դեեբոյնուի բերդակալը, ստորին բերդի բերդակալը. մաքսատան էմինը, մյուհթեսիբ աղան, շահբենդեր աղան, սու-աղասին։ Այս սու-աղասի Գենջի աղան ջուր է տալիս 9000 թմբերի և ոռոգողներից տասանորդ է ստանում։ Սա էլ փաշայի աղաներից է։ Իր իշխանության տակ ունի 100 մարդ։ Փաշայի համար ստանում է 6 քիսե, իսկ իր համար 3 քիսե եկամուտ։ Աղբերի սուբաշին ևս համարվում է

առանձին պաշտոնյա և մաքրում է քաղաքի ճանապարհներն ու խրամները։ Արտամետի, Ոստանի, Գավաշի, Սորփի, Ամիկի նահիյեներից կաղին օրենքի համաձայն, տարեկան ստանում է 10 քիսե եկամուտ։

Մեծ իմամների դավանանքով մյուֆթի կա։ Սա իր ձեռքի տակ ունի նաև շաֆի, հանբելի և մալիքի դավանանքների մյուֆթիներ։ Նա կարող է բոլոր տեսակի դատերի համար ֆեթվա[67] տալ, ամեն մի ֆեթվայի համար 10 ակչե եկամուտ ունի։ Կա նաև նագիբ[68]։ Քաղաքի նայիբը[69] նույնպես ներկա է լինում փաշայի ղեկավարած բոլոր դիվաններին։ Նայիբը տարին մի անգամ շրջում է գյուղերը և գանձում իր եկամուտները։ Վանում ենիչերիների սերդարի և սիփահիների քեթխուդայի պաշտոն չկա։ Ենիչերիների աղան իշխում է ենիչերիների վրա, իսկ սիփահիների աղան՝ աջ և ձախ կուլերի աղաների վրա։

Վանի բերդի սիփահիներն ու ծառայողները: Աջ, ձախ, կամավոր, տեղական, պարսպի, ամուրի, թոփչի, ջեբեջի, վերին (բերդի) բերդակալ, Քեսիքի (բերդի) բերդակալ, ստորին (բերդի) բերդակալ, Յաշլի, Հասանի, Հյուսեյինի, չավուշների և այլ աղաներով Վանը 24 աղայություն ունի։ Աջ-կուլի զինվորները վերին աստիճանի քաջ են. նրանց աղան Խուսրև փաշայի քրոջ որդին է՝ Սուլեյման բեյը։ Ջախկուլի աղան Դեմիրջի-օղլին է։ Դաշլիները ապրում են վերին Դաշ-Կալայում, Յաշլիները՝ ստորին Յաշ պարսպի մեջ։ Տարօրինակ է. այս բերդում ապրողները իրար հետ ուժեղ թշնամիներ են, բայց երբ երևում է թշնամին, բոլորը միասնական և միասիրտ են դառնում։ Ջավուշները, ջեբեջիները և մյուսթահֆիզները[70], որոնք մշտապես զենք են մաքրում, թոփչիները, ազաբները, պարսպի մարդիկ՝ բոլորը, ուրախ և քաջ տղամարդիկ են։

Ըստ կանոնի, Վանի բերդը 6000 զինվոր ունի։ Եթե հաշվենք նաև Ամիկի, Արճեշի, Ադիլջևազի, Ախլաթի, Դատվանի և Ոստանի 6000 զինվորները, կստացվի, որ ընդամենը ծառայության մեջ են 12000 զինվոր։ Վանի դեֆթերդարը Գավաշի խասերից, Բենդիմահիի իլթիզամից, Վանի տուրքերից և մաքսերից, աղհանքերից, բազարների տուրքերից, Մուշի խարաջից, Բիթլիսի արաբների և հայերի խարաջներից, Բիրեջիկի մոտ Մուրադ գետով անցնող նավերի եկամտից, մի խոսքով, 370 արքունի գրասենյակներից տարեկան 600 ռումի քիսե եկամուտ է ստանում և ռոճիկ վճարում։ Եթե ռոճիկը մի ամիս ուշանում է, դեֆթերդարի, գրասենյակների 40 քարտուղարների և 24 աղաների գլխներին փոթորիկ է բարձրանում. գալիս են փաշայի դիվանը և դանգատ ներկայացնում։

Վանի էյալեթի սանջաքի իշխողները: Օրենքով Վանի սանջաքներում 37 իշխող կա։ Սակայն Ալ-Օսմանի կողմից սահմանված սանջաքների թիվը 20 է: Դրանք են Արճեշ, Ադիլջևազ, Մուշ, Բերկրի, Կարկառ, Քեսանի, Խիզան, Էսփաիրտ (Սպարկերտ), Աղա Քիս, Ճերվի, այսինքն՝ Շերվան, Էքրատ, Էքրատ բին-Կոթուր, Բայազիդի բերդը, Բերդա, Էրեջիք, Քուրլադըք, Զոբանլու, Շորքեր, Դալեկիրտ և Զրիկի։ Վանի սանջաքը փաշայի մայրաքաղաքն է։ Լիվաներում եղած բոլոր խասերն ու խարաջները Վանի կուլին են պատկանում։ Հողերը տասանորդ են տալիս։ Իբրև զեամեթ և թիմար տրված հարուստ և բարեշեն 700 դյուղ կա։

Վանի հրաժարեցման ենթակա չեղող հյուքումները: Վանի հարավ-արևելյան կողմում Հեքարիի հյուքումեթն է, որի մեջ մտնում են Ոստանի, Շատախի բերդի, Էշիրի, Ջյուլամերկի բերդի բարձրադիր խանությունները։ Ունի 47 հազար զինվոր։ Բոլորը արագաշարժ, ահարկու, քաջարի ցեղեր են։ Սրանք կզակի վրա ֆելեմենգների (հոլանդացի) նման մի փոքր մորուք ունեն. գլուխները կաթսայի նման է. շատերը ականջներին օղեր են կրում։ Բոլորը 40—50-ական դիրհեմի հրացան են արձակում։ Այն աստիճան լավ հրացանաձիգներ են, որ խփում են լվին անգամ։ Կռնակներին կրում են քրդական վահան, ձեռքներին կոփալ (կոպալ) կոչված կոշտ գավազաններ են բռնում, գլխներին գույնզգույն փաթթոցներ են կապում։ Սրանք իրենց ականջները ծակում են դանակով, արյուն հոսեցնում և այդ ծակերից աքաղաղի, սիրամարգի և բազեի փետուրներ են անցկացնում։ Բոլորը հագնում են գույնզգույն շալ և բրդե հագուստներ, որոնց փեշերը շերտ-շերտ է. շալվարը նույնպես գույնզգույն շալից է: Ոտներին կրում են փոշեֆլի, փանեաի, հեզարի, սիդի կոչված ամուր չստեր, որոնցից յուրաքանչյուրը երկու օկկա ծանրություն ունի։

Կռվի ժամանակ այս ջլու ցեղի մարդիկ, վահան չունենալու դեպքում, ոտքից հանում են չուստը և բռնում մի ձեռքում, իսկ մյուսով բռնում են դաշույնը կամ սուրը և հարձակվում. ամեն մեկը կարող է 10 մարդու դեմ գնալ։ Երբ Վանի կուլի մի զինվոր հարձակվում է թշնամու վրա, իբրև առած ասում են. «Հեքարիի ջելոյի նման չուստը ձեռքին հագած է գալիս»։ Հեքարին այս տիպի 10 հազար հրացանաձիգ ունի։ Սակայն կռվի ժամանակ 40—50 հազար զինվոր կարող է ունենալ, իսկ այդ 10 հազարը ուլուֆե ունեցող քաջեր են։ Սրանց դավանանքը ինձ հայտնի չէ։

Բիթլիսի հյուքումեթը: Այստեղի բարձր խանը՝ Աբդալ խանն

է։ Այս քրդերը ռոժեքի են կոչվում։ Ինչպես արդեն նկարագրել ենք, սրանք ևս Հեքարիի չափ զինվոր ունեն։

Մահմուդիի հյուքումեթը: *Մահմուդիներն ապրում են Վանի արևելյան կողմում, սեպաձև ժայռոտ լեռներում։ Սրանց և Աջեմի երկրի միջև ընկած է Շահ Գելդի կոչված լեռը։ Արևելքում աջեմների Կոթուրի բերդն է։ Ընդամենը 6000 զինվոր ունի։ Այստեղի հեծելազորն ամենաքաջն ու անվանին է ամբողջ Քուրդիստանում։ Սալմասի, Զորսի և Ուրմիայի դաշտերում շատ անգամ կռվել են Շահի բանակի դեմ և հաղթել։ Բեյը նստում է Խոշաբի բերդում։ Բեյը՝ Իբրահիմ բեյ անունով, մի կտրիճ երիտասարդ է։ Նա շատ անգամներ կռվի կրակի մեջ է մտել և դուրս եկել։ Մահմուդիներից են համարվում 120 աշիրեթի բեյեր, որոնք բոլորը ռոճիկ են ստանում Իբրահիմ բեյից։ Սրանց հողումն էլ խաս, թիմար, զեամեթ և խարաջ կա։ Հարավ-արևելքից սահմանակից են Հեքարիի երկրին և ազգական են նրա Շիրիզդան խանի հետ։*

Փինյանիշի հյուքումեթը: *Փինյանիշները ևս մահմուդի են համարվում, սակայն կազմելով առանձին հյուքումեթ, ընկած են դեպի արևելք, 6 կոնաք հեռավորության վրա։ Բեյը՝ Հասան բեյն է։ Կենտրոնը՝ Հասան-Կալասին է։ Սրանց երկիրը արևելքից, հարավից և հյուսիսից սահմանակից է աջեմների երկրին՝ Աջեմի Ուրմիայի խանությանը, որի խանը Ջոլաք Սուլթանն է։ Մշտապես աջեմների հետ կռվի մեջ են։ Ընդամենը 6000 զինվոր ունի, որոնք շատ երկարահասակ, առույգ երիտասարդներ են և քանիցս դիմագրավել են Ուրմիայի և Թավրիզի խաների 50 հազարանոց բանակին։ Սրանց հողում ևս խարաջ, խաս, թիմար և զեամեթ կա։ Աջեմների երկրում սրանց* Ղազի-կրան[71] *են ասում, որի պատճառը հետևյալ դեպքն է։ Սուլթան Մուրադ խանը երբ Երևանի վրա է գնում, աջեմները պատրաստվում են Երևանին օգնության հասնել. այս ցեղից Ջոլոք միր-Ազիզ անունով բեյը 8000 զինվորով Սալմաստի դաշտում կտրում է օգնության գնացողների ճանապարհը և 30 հազար շահսեևններին սրի է քաշում։ Նրանց թնդանոթներն ու ռազմամթերքը խլում և Երևան է ուղարկում։ Միաժամանակ մեծ ավար է վերցնում և հարստանում։ Ահա այդ ժամանակից սրանց* Ղազի-կոշան *են կոչում։*

Սրանց երկիրն ու բերդերը, եթե աստված կամեցավ, իր տեղում կնկարագրենք։ Արևելքում Բենի-կոթուր, Բիրեդուսի, Ջոլանի, Դում-Դեմի, Դենբուլի անուններով 5 հյուքումեթ կա։ Սուլեյման խանի օրենքով բոլորն էլ Վանին են հպատակվում։ Սակայն հետա-

գայում Սուլեյման խանի վեզիր Թեաշի Սուլեյման փաշան, երբ գրավեց Թավրիզ քաղաքը և մի մեծ բերդ կառուցեց, այս հինգ հյուքումեթը անջատեց Վանի էյալեթից և միացրեց Թավրիզի էյալեթին։ Իսկ երբ աջեմները նորից գրավեցին Թավրիզը, այս հինգ հյուքումեթր նորից վերամիացվեցին Վանի էյալեթին։

Մուրադ խանի մահվան տարին՝ 1049 (1640) թվականին, աջեմները զինվորներ թողնելով Բենի-կոթուր բերդում, խախտեցին հաշտության պայմանագիրը և այս 5 հյուքումեթները ստիպված հպատակություն հայտնեցին Աջեմին. որովհետև սահմանակից են Աջեմին, նրանց այգիներն ու արտերը անմիջապես կպած են իրար, նրանց բեյերը շահի կողմից չեն նշանակվում. պարզապես բոյբեյեր են։ Քանի որ Վանի սանջաքի բեյերի կայսերական խասերը մեր գրքի 1-ին հատորում նշվել է, կարիք չկա այստեղ նորից կրկնելու*։

Սուլեյման խանի օրենքով սահմանված Վանի էյալեթի զեամիթները և թիմարները ևս հիշատակված են մեր գրքի 1-ին հատորում**։

[Սուլթան] Սուլեյման խանի կողմից սահմանված կարգով, եթե օսմանյան փադիշահը Աջեմի վրա արշավանքի գնա, Վանից բանակի առաջապահը լինելու է Վանի բեյլերբեյին։ Առջևից որպես չերխեջի[72] գնալու է Հեքարիի խանը, իսկ սրանից առաջ, որպես գլխավոր չերխեջիներ, գտնվելու են մահմուդիները։ Այնուհետև, դրանցից առաջ գնում են փինյանիշի քաջերը, որոնք աջ և ձախ կողմերից կազմելով թեթև հսկիչ վաշտեր՝ պարտավորվում են ձեռք բերել գերիներ և գլուխներ։ Վանի փաշայի ետևից պետք է շարժվեն օսմանյան վեզիրները, իսկ նրանցից հետո ինքը՝ փադիշահը և կամ մեծ սերդարը։ Հետո գալիս են բոլոր միրմիրանները, իսկ ամենից վերջում՝ իբրև վերջապահ, Բիթլիսի խանը իր բոլոր զինվորներով, որոնք պետք է հսկեն ետ մնացողներին, հիվանդներին ու դասալիքներին։ Այս կարգով շարված հավատացյալների բանակի աջ կողմից գնում են Քուրդիստանի Իսփերտ, Շերվի, Չրիկի, Քյարնի, Հիրուն, Կարկառ, Աղա-Քիս, Քեսան, Մեքես, Բերդա, Լադիք, Օզեջիք, Դալեկիրտ, Ջոբանլու, Բենի-կոթուր անուններով 15 սանջաքի բեյերը, որոնց զինվորները թմբուկ են նվագում և առաջ շարժվում։ Իսկ ձախ կողմից գնում են Լամուս, Ադիլջևազ, Արճեշ, Բարկիրի,

---

* Հատ. I, էջ 192։

** Հատ. I, էջ 200 (ծանոթ. հրատարակչի)։

Բայազիդ, Ակչա-կալա, Սուրեգու, Կարաչա-կալա, Էքրատի-Մակու, Զիաեդդին, Աբաղա, Շաթաք (Շատախ) անուններով 15 սանջաքի բեյերի զինվորները։

Օրենքով բերդերի զինվորների կեսը պետք է մնա բերդում, իսկ մյուս կեսը պետք է պատերազմի գնա։ Բուն Վանի բերդը 6000 զինվոր ունի, իսկ մյուս բերդերը միասին դարձյալ 6000 զինվոր ունեն։ Ուրեմն, օրենքով, այս զինվորներից միայն 6000-ն են պատերազմի գնում։ Փաշան, ջեբելուների հետ միասին, 3000 զինվոր ունի. եթե դրան ավելացնենք մյուս սանջաքների զինվորները, ստացվում է 48 հազար ընտիր զինվոր, որոնք վերին աստիճանի խիզախ են և սպառազինված։

Վանի բերդի ջամիների բնութագիրը: Վերևի բերդում կա Վանէ-ջամի, որը վեհափառ Դավթի դարում կառուցված հնագույն տաճար է։ Հետագայում, երբ վեհափառ Էբուբեքիրը եկել է այստեղ, այն մզկիթի է վերածվել։ Մի քանի հարյուր մելիքների ձեռքից անցնելուց հետո, որպես ջամի է մնացել։ Վերջապես 940 (1533) թվականին սուլթան Սուլեյմանը նորոգել ու ընդարձակել է այն և անվանել սուլթան Սուլեյմանի ջամի։ Ջամին բավականին ընդարձակ է, ունի մի դուռ, մի մինարե։ Վերջինս խորտակվել է Վանում տեղի ունեցած մեծ երկրաշարժի ժամանակ։ Հետագայում ենիչերիների աղա Օմեր-աղան հոյակապ մինարե է կառուցել տվել, որը մինչև կեսօր ամպերի մեջ է լինում։ Միջնաբերդում ուրիշ ջամի չկա։ Բոլոր պատուհանները նայում են Ներքևի քաղաքին և Արտամետի դաշտի այգիներին ու պարտեզներին։ Ներքևի բերդում հետագայում կառուցված Ուլու ջամին կառուցվել է Ադրբեջանի իշխող Ակչա-կոյունլի Շահ Ջիհանի կողմից։ Սրանից ավելի մեծ ջամի չկա։ Ջամիի մեջ սյուների վրա հիմնված բարձր գմբեթը խոյանում է դեպի երկինք։ Այս ջամիի վարպետ-երկրաչափը [ճարտարապետը] ջամիի գեղազարդման համար գործադրել է իր ամբողջ շնորհքը: Բարձր գմբեթի բոլոր պատերի վրա, կարմիր և սև աղյուսներով տեսակ-տեսակ գրեր են շարված, որոնք սրբազան այեթներ են։ Այս գրությունների նմանը կա նաև Հոմսի բերդի պատերի վրա։

Այս ջամին շատ հին և վսեմ մի աղոթատեղի է, որը կառուցվել է արդար ու ազնիվ միջոցներով և դարձել է նվիրական սրբավայր: Հին ոճի մեհրաբ և մինբեր ունի, որոնք նույնպես գեղազարդված են։ Ունի նաև գեղեցիկ մինարե։ Մի խոսքով, այս ջամին աննման է. նրանում առկա նուրբ արվեստը, շլացուցիչ փարթամությունը ոչ մի ջամի չունի։

Խուսրև փաշայի ջամիի հիմնադիրը եղել է Սուլեյման խանի վեզիր Կոջա-Խուսրև փաշան, որը կառուցել է նաև Բիթլիսի բեզիստանը, քարուկրով շինված շուկան և Ռահ-Օվայի դաշտում գտնըվող մեծ խանը։ Այս գեղեցիկ ջամին կառուցել է տվել, երբ նա իշխում էր Վանում։ Այս ջամին Օրթա-կափուի ներսում է և մոտ է փաշայի ապարանքին. այդ պատճառով ամեն ուրբաթ օր փաշաները գալիս են այս ջամին։ Թավրիզի դարպասի մոտի ջամին նույնպես հին ջամի է. հիմնադիրը ինձ հայտնի չէ...

Այնուհետև, Էվ. Չելեբին խոսում է մեդրեսեների, կրոնական դպրոցների, աղբյուրների և այլի մասին։

[Վանի] մուսուլմանական թաղերը: *Նշանավորները Փաշայի, Խորխորի, Ուլու ջամիի, Սուլուքի, Իսքելեի, Օրթա-կափուի, Թավրիզի դարպասի թաղերն են։*

Փաշայի և այլ ապարանքների նկարագրությունը տալուց հետո, Էվ. Չելեբին գրում է. «Այս ապարանքներից բացի, ներքևի բերդում ընդամենը 8800 սենյակ կա. բոլոր տները ծեփված են կրով ու դաջով և շատ բարեշեն են։ Տները հիմնականում երկհարկանի են և քարուկրով կառուցված։ Փողոցները մաքուր են և սալահատակված»։

Հայկական երեք թաղ կա. [հայերը] ծառայում են բերդում և խարաջի փոխարեն պարտավոր են նորոգել բերդը։ Սրանցից բացի բերդում քրիստոնյաներ չկան։ Հայերը վաճառականներ են և բարեգործ։

Խաները. *Հայտնի են մաքսատան Քուրդ Ահմեդ-աղայի և Կափուի խաները։*

Շուկան և բազարները: *Բեզիստանը խիստ բարեշեն է և հարուստ։ Այստեղ էժան կարելի է գնել բոլոր տեսակի թանկագին ապրանքներ։ Շատ հարուստ են Խուսրև փաշայի, Մեզկիթլի և կոշկակարների շուկաները։*

Աղբյուրներն ու հոսող ջրերը: *Վանի ժայռի տակից աղբյուրներ են բխում։ Խորխոր կոչված վայրում ջրաղաց աշխատեցնող վճիտ մի աղբյուր է բխում, որն աննման է իր զուլալությամբ։ Մի գառնուկ ուտողը, եթե սրա ջրից խմի՝ անմիջապես կմարսի։ Սուլու աշտարակում էլ կա մի աղբյուր, որը ժայռերի միջով հոսում է ցած։ Այս Բալա-բուրջ[73] անունով աղբյուրին նայող մի հոյակապ աշտարակ կա, որտեղից հսկում են ջրի ճանապարհը։ Այստեղ ոզնու փշերի նման շարված են բալյեմեզ թնդանոթները։ Վանի բերդի հյու-*

աիսում կա մի աղբյուր, որին նայող աշտարակը կոչվում է Սու-կուլեսի[74]։ Այստեղ ժայռերից ցած իջնող ջրի ճանապարհ կա, որը Բալա-բուրջի և Սուլթան-Թյուրբեսիի ժայռերի միջով իջնում է դեպի ներքև։ Ջրի աշտարակը հսկելու նպատակով այս ճանապարհներին նայող աշտարակների վրա շարք-շարք բալյեմեզ թնդանոթներ են դրված։ Ոչ ոք չի կարող մոտենալ աշտարակին։ Վանում դրված թնդանոթները ոչ միայն մարդկանց թույլ չեն տա անցնելու այս վայրերով, այլև թռչուններին անգամ թույլ չեն տա այստեղ թառելու։ Վանի վերին և ներքևի բերդերում կա ընդամենը 760 թնդանոթ, որոնցից ամենաուժեղները կարճ խողովակով թնդանոթներ են, որոնք 50 օկկա ծանրություն ունեցող երկաթե գնդակներ են արձակում։

Բաղնիքները: Մեզկիթլի շուկայի ծայրում գտնվող Սուլթան համամին շատ գեղազարդ, հիանալի օդով ու ջրով բաղնիք է։ Նշանավոր են նաև Չիֆթե-համամը, Նաքըշլի-համամը, Թավրիզի դարպասի մոտ գտնվող Ջուքուր համամը։ Քաղաքի ազնվականների վկայությամբ 700 տնային բաղնիք կա։ Որովհետև վանեցիները բարկացկոտ, պատվի ու նամուսի տեր մարդիկ են, նրանց կանայք եթե չեն ուզում տանից դուրս գալ իբրև հանգուցյալներ, հարսանիքի, խնջույքի և այլ տեղեր բոլորովին չեն գնում։ Այդ պատճառով էլ պատվավոր մարդիկ իրենց տանը բաղնիքներ ունեն։ Բարձրաստիճան մարդիկ կեսօրից հետո հասարակական բաղնիքներ չեն գնում։ Այդ ժամանակ լողանում են բաղնիք չունեցող կանայք։ Սակայն այդ բաղնիքները գնալու համար հատուկ փողոցներ են հատկացված կանանց, և կեսօրից հետո ոչ ոքի չի թույլատրվում անցնել այդ փողոցներով։ Եթե կանանց ճանապարհին մի տղամարդ նկատվի, խիստ կերպով կպատժվի։ Այս ժողովուրդը այդ աստիճան պաշտպանում է կանանց պատիվը։

Ժողովուրդը, դեմքն ու գույնը. մեզ ծանոթ բարեկամները: Ընդհանրապես, ավազանին չափահաս հասակում ցորենագույն դեմք է ունենում. տարեց մարդիկ բարկացկոտ են և արի։ Երիտասարդները կռվի հակամետ են։ Ընդհանուր առմամբ երիտասարդները կլոր դեմքով են, բարեկազմ, վայելչատես և քաղցրախոս։ Աստված վկա՛, կանանց չտեսա։ Սակայն մեր ծանոթների կանանց վկայությամբ, բոլորը գեղեցիկ, բարեհամբույր, բարեպաշտ և առաքինի կանայք են. Նրանց անարատ աղջիկները, բացի իրենց հորից և եղբայրներից, ոչ մի տղամարդու երես չեն տեսնում...

Այս քաղաքի օդն այնքան հիանալի է, որ բժիշկների կարիք

չի զգացվում։ Բնակիչներն այնքան ընդունակ են և արժանավոր, որ նույնիսկ բժիշկներ ունեն։ Պույսի արվեստում աննման է Մեսում Չիլեբին։ Շեյխ Բայ-Չելեբին այնքան հնարագետ բժիշկ է, որ նույնիսկ Աթենքում նման բժիշկ չի եղել։ Վիրաբույժները նույնպես կատարյալ վարպետներ են...

Բանաստեղծները և գողները: *Ժամանակի բանաստեղծների սուլթանը՝ Շանի էֆենդին, հմուտ է բոլոր գիտությունների մեջ... Նշանավոր բանաստեղծներ են Վանի Չելեբին և Միր Սիփեհրին։*

Վանեցիների հագուստն ու կոշիկները: *Ընդհանրապես, Վանի ժողովուրդը հագնում է ասվիից հագուստ և լայն տափատներ։ Հագնում են նաև սամույրի մուշտակ։ Գոտկատեղին գույնզգույն մետաքսյա գոտի են կապում, որի արանքում անպայման դաշույն են խրում։ Գլխներին շատ մեծ թավշյա կավուք[75] են կրում։*

Կանանց հագուստները: *Բոլոր կանայք դեղին կոշիկներ (չեզմե) են կրում, գլխներին ոսկյա ու արծաթյա շարքեր կապում և ծածկվում են մետաքսով։*

Տղամարդկանց անունները: *Փեհլևան-օղլի, Չենտետան-օղլի, Դեմիրչի-օղլի, Բեշարեթ-օղլի, Ալի Շար-օղլի, Կըլըչ-օղլի, Քերեմեդդին-օղլի, Մալլի կիյա, Ռուսթեմ-աղա, Բյուրհան-աղա, Թաղեր-աղա, Էսեդ-բեյ, Ղազենֆեր-բեյ։*

Կանանց և աղջիկների անունները: *Աիշե, Ֆաթմա, Գյուլսում, Էսմախան, Էմհան, Սելիմե, Սալմե, Քալմե, Էսմա-խանըմ, Փերի Բոյ-խանըմ, Մեսեք-բայ, Դայե։*

Ստրուկների անունները: *Օսեֆ, Օրնեք, Չլըրգի, Հաք-Վերգի, Չոմեզ, Ջալ Իսքենդեր, Կուրաղ, Շեֆատ, Սերուր, Խարեմ, Լևենդ, Սիյամի, Փիրվիզ, Շյուքր-Ալլահ, Կասըմ, Շահ-Կըրան։*

Ստրկուհիների անունները: *Դիլ-Ֆիքար, Մերդեջան, Խեթմե, Վերեքե, Շաքիրե, Հինե, Մահիյե, Դերյե, Ջեհեր, Օհա, Սերդի, Բոյ, Ջան-Բայ, Դիլարամ, Փերչինի, Փերիշան, Ռումայե, Վեսիմե, Խալիսե, Չուչբան, Շահ Խուբան։*

Ալի Կուշչիի վկայությամբ այս վայրը [քաղաքը] գտնվում է 8-րդ սովորական կլիմայում, իսկ Բիթլիսի խանի կարծիքով՝ 3-րդ իրական կլիմայի կենտրոնից դեպի արևմուտք։

Եկեղեցիները: *Նշանավոր է Իսքելեի [Նավամատույցի] գյուղի եկեղեցին։ Յուրօրինակ և հիանալի եկեղեցի է Վանա ծովում ընկած Ահդըմ-Վար կղզու [Աղթամար] եկեղեցին [վանք] և Վանի արևելյան կողմում գտնվող Վարագ եկեղեցին [վանք]։*

Այնուհետև Չելեբին խոսում է Վանի թուրքական բարբառի մասին և բերում է մի քանի օրինակներ:

Բերքերը: [Վանը] ընդարձակ ու հարուստ երկիր է և բերքերի առատությամբ նմանը չունի: 7 տեսակ ցորեն, 7 տեսակ սև ու յուղալի գարի ունի, իսկ սիսեռի, բակլայի և այլ տեսակի բերքերի քանակը միայն աստված գիտե:

Զարգացած արհեստները: Այստեղի շենքերը կառուցող վարպետ-ինժեներների նման միայն Սակըզում (Քիոս կղզում) կան: Դերձակները հիանալի ֆիրենգի[76] հագուստներ են կարում: Սափրիչների խալաթները շատ մաքուր են: Շատ լավ վարպետներ են թամբագործները:

Ժողովրդի զբաղմունքը և վաստակը: Վանի ժողովուրդը բաժանվում է վեց դասի: Մի մասը փաշայի ծառայողներն են, որոնց պաշտոնը բերդի պահպանությունն է և ոչ մի այլ աշխատանքով չեն զբաղվում. միայն քաղաքում կարող են առևտուր անել: Մի մասը գնում է զանազան քաղաքներ ու երկրներ և ապրանքներ բերում: Մյուսները արհեստավորներ են: Մի մասն էլ ծառայում է դեֆթերդարի գրասենյակներում: Մի մասն էլ ուլեմաներն ու վագըֆի ծառայողներն են, իսկ մնացածը այգեգործներ և սպասավորներ են:

Ուտելիքները, բանջարեղենները, պտուղները և խմիչքները: Այստեղի անխոնով և այլ հոտավետ համեմունքով պատրաստված սպիտակ հացի նման ոչ մի երկրում չկա: Հայտնի են սպիտակ և վարդակարմրավուն լավաշը, բազմաթերթ չյորեքը, կաքավի մսով պատրաստված կարկանդակը, սաս թաբա կոչված և այլ տեսակի համեղ սուպերը: Բանջարեղեններից ամենուրեք հայտնի է Վանի կաղամբը, որի երկու գլուխը մի ուղտի բեռ է. թերթերը շատ բարակ են: Հայտնի են նաև կարոսը, քերևիզը [նեխուր], դդումը, սեխը, ձմերուկը, չիրիշ անունով հայտնի կանաչը և այլն: Պտուղներից հայտնի են 12 տեսակ կարմրագույն թեբքանի, ջան գյուլու, սեյլանի, զաֆերանի, շամի և այլ անուններով խնձորները, որոնք շատ համեղ են: Խնձորը այնքան առատ է, որ զվարճասերները խնձորի կռիվներ են սարքում: Հայտնի են նաև խաղողը, աբասի և մալաչա անուններով տանձերը: Խմիչքների մեջ հիանալի է Վարագա սարի մեղրից պատրաստված շերբեթը, որը դարչինի հետ խառնելուց և երեք օր պահելուց հետո, երբ խմում ես՝ հարբեցնում է: Սերքիլօղլուի և Շիրեի այգիների չիրան, 3 օր պահելուց հետո, մարդու մեջ ամբողջությամբ արյուն է դառնում: Կան նաև մի քանի տեսակ հիանալի շերբեթներ:

Կենդանիները: Ռումելիում՝ Սերեզի, Անատոլիայում՝ Ադանայի և Քուրդիստանում՝ Վանի գոմեշների նման ուժեղ և սոսկալի գոմեշներ աշխարհում չկան։ Այստեղի գոմեշները, մի տարի սնվելուց հետո փղի նման խոշոր են լինում։ Վանեցիները Նևրուզի օրերին կռվեցնում են այգ գոմեշներին, նժույգներին, ուղտերին, խոյերին և տարօրինակ տեսարաններ կազմակերպում։

Վանի զբոսատեղերը: Վանի Արտամետի այգիներից բացի, հեռու և մոտ վայրերում կա մոտավորապես 20 զբոսավայր, որոնց արժե գիտել։ Նախ, Վանի արևելքում, Թնդանոթի արկի թռիչքի հեռավորության վրա են գտնվում Աք Քիրփի Դաշի, Յալի Քյոյի, Էլե, Մելեք, Սարի-Գյոլ, Ջայբաշի, Կարակասրմ Ջայիրի, Մուրադ խան Սեֆեսի, Արտամետի այգիները։ Հայտնի զբոսավայրեր են՝ Միրի Բենդին, Մահի Բենդին, Խոշաբ Կոյաղին, Վարագի սարը, Նեքի Բերդիրի այգին և Կյոք-Կետիյի վանքը։

Այգիները: Վանի բերդի հարավ-արևելյան կողմում, խրամից այն կողմը, գերեզմանատան միջով անցնելով մինչև Արտամետ գյուղը, երկարությամբ և լայնությամբ 8 ժամյա տարածություն գրավող Վանի դաշտը ամբողջությամբ ծածկված է այգիներով, պարտեզներով և կանաչազարդ ծաղկաստաններով, որոնց թիվը, ըստ այգիների կառավարչի դեֆթերի 26 հազարի է հասնում։ Կառավարչին, նրա տված ջրի համար, ջրի տուրք են տալիս։ Մարդ, երբ մտնում է այս այգիների մեջ՝ կորչում է։ Ամեն մի այգում հոսող ջուր, ավազան և շատրվաններ կան...

(էջ 161—188)

Էվ. Չելեբին Վանի բերդի, քաղաքի և այլի մասին վերոհիշյալ տեղեկությունները տալուց հետո, շարունակում է Մելեք Ահմեդ փաշայի գործունեության հետ կապված դեպքերի նկարագրությունը։

...Մեր էֆենդին՝ Մելեք Ահմեդ փաշան, Վան մտնելուց հետո ձեռնարկել էր Թիմուրի կողմից բերդի առաջ կուտակված հողը մաքրելու և ծովը թափելու գործին։ Վանի էյալեթի բեյերին ու անկախ իշխողներին բարձր հրամաններ և հրավեր էր ուղարկել։ Բոլորը կատարյալ հնազանդությամբ սկսել էին գալ։ Քուրդիստանի անթիվ զինվորները, իրենց վրաններով, ուտելիքով, խմելիքով և փաշայի համար իրենց կողմից բերված մեծաքանակ նվերներով իջևանեցին Վանի դաշտում։ Բանակը այնքան մեծացավ, որ մի ծայրից մինչև մյուսը կարելի էր գնալ երկու ժամվա ընթացքում։ Դաշտում խանութներ և խոհարարների մոտ 3000 վրաններ կային...

Քուրդիստանի զինվորները հետզհետե գալիս և հավաքվում էին։ Միայն Հեքարիի խանը անձամբ չէր եկել և փոխարենը՝ թանկարժեք նվերներով և 6000 զինվորով Մոլլա Մուհամեդ Շաթաքի անունով քեթխուդային ուղարկել էր փադիշահական ծառայության։ Մահմուդի բեյերից ոչ Էվլիյա բեյը ինքն էր եկել և ոչ էլ օգնություն էր ուղարկել։ Նույնպես և Բիթլիսի Աբդալ խանը։ Այդ պատճառով «փաշան շատ վշտացավ և Էրզանացի Ահմեդ աղայի միջոցով խանին նամակ ուղարկեց։

Խանը ստանալով նամակը կարդացել և պատասխանել էր, որ «մեր ձին Վանից ջուր չի խմում». ապա նամակաբերին անքաղաքավարի վերաբերմունք էր ցույց տվել։ Կոսկոն ըրանի ճանապարհով աղան Բիթլիսից երկու օր ու գիշերում, առանց պատասխան նամակի — եկել էր փաշայի մոտ։ Երբ նա այդ մասին պատմում է փաշային՝ վերջինս բարկանում է և շատ վշտանում։

(էջ 188—190)

ԲԻԹԼԻՍԻ ԽԱՆԻ ՎՐԱ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՊԱՏՃԱՌԸ

Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին մանրամասնորեն պատմում է Բիթլիսի Աբդալ խանի դեմ կազմակերպված արշավանքի հանգամանքները։ Փաշան այդ օրը խնջույքի է հրավիրվում ենիչերիների Աբդի աղայի մոտ, որտեղ ներկա են լինում նաև Վանի և Քուրդիստանի բոլոր մեծամեծները և միաբերան գանգատվում են Բիթլիսի խանից։ Այդ ժամանակ ստացվում է նաև Ահմեդ փաշային ուղղված Էրզրումի վալի Թավաքչի Մուստաֆա փաշայի գրությունը, որով վալին հայտնում է, որ Բիթլիսի ավազակ խանը 10 հազար զինվորով անակնկալ հարձակվել է Մալազկերտի Մուհամմեդ բեյի երկրի վրա, կողոպտել, թալանել է ամբողջ սանջաքը, սպանել է մոտ 300 հավատացյալների և հափշտակել ու քշել-տարել է 40 հազար ոչխար։ [Էրզրումի] վալին առաջարկում է արշավանք կազմակերպել Աբդալ խանի վրա։ Հետո փաշայի մոտ Վանի և Էրզրումի ենիչերիների կողմից գանգատի են գալիս նաև մի խումբ մարդիկ և հայտնում են, որ երբ իրենք առևտուր անելու համար մտել են Բիթլիս, խանի մարդիկ նրանց կողոպտել և վիրավորել են։ Մելեք Ահմեդ փաշան ավելի է կատաղում և չորս դավանանքների շեյխ-ուլ-իսլամներին ֆեթվաներ է գրել տալիս, որոնց մեջ Բիթլիսի խանին բնութագրում է որպես ավազակ, վիլայեթներ թալանող և հարյուրավոր մարդկանց սպանող։

Մելեք Ահմեդ փաշան նպատակահարմար է համարում հետևյալ բովանդակությամբ մի նամակ գրել Բիթլիսի խանին՝ նրա դեմ պատերազմական գործողություններ սկսելուց առաջ։

Փաշան նամակում մեկ առ մեկ հիշում է Աբդալ խանի թե նախկինում և թե վերջերս կատարած չարագործությունները։

Այնուհետև, փաշան հայտնում է, որ ինքը Օսմանյան պետության անունից և շարիաթի սկզբունքներով որոշել է արշավել և դաժանորեն պատժել Աբդալ խանին։ Սակայն նախքան այդ որոշման իրագործումը, նա առաջարկում է խանին

անմիջապես ներկայանալ Վանի զորահավաքին, վերադարձնել հափշտակված բոլոր կենդանիներն ու իրերը... Հակառակ դեպքում փաշան սպառնում է ոչնչացնել նրան։

Աբդալ խանը իր պատասխան նամակում հայտնում է, որ իր մասին ներկայացված ամբաստանությունները ճիշտ չեն, որ նա Մալազկերտում հավաքել է իր օրինական ոչխարի տուրքը և որովհետև բեյը արգելք է հանդիսացել, այդ պատճառով էլ կռիվներ են ծագել։ Բիթլիսում նույնպես առևտրականներից օրինական տուրքեր է վերցրել և այլն։ Այնուհետև խանը խնդրում է հրաժարվել արշավանքի մտքից։

Միաժամանակ Աբդալ խանը անմիջապես պատրաստվում է պատերազմի։ Նա նամակներ է ուղարկում քուրդ բեյերին և զինվոր պահանջում։ Շրջապատի աշիրեթներից 17 հազար հրացանաձիգ է հավաքում, քաղաքի [Բիթլիսի] շրջակայքում խրամատներ է փորել տալիս, իսկ քաղաքում մշտապես 10 հազար զինվոր է պահում և պատրաստվում է կռվի։

Վանի ավագանին և բարձրաստիճան պաշտոնյաները թշնամաբար տրամադրված լինելով Բիթլիսի նկատմամբ՝ փաշային մղում են արշավանք սկսել խանի դեմ։

(էջ 190—200)

ԱՅՍ 1065 ՏԱՐՎԱ ՆՎԻՐԱԿԱՆ ՌԱՄԱԶԱՆԻ ՍԿԶԲԻՆ 40 ՀԱԶԱՐԱՆՈՑ ԲԱՆԱԿՈՎ ՎԱՆԻ ԲԵՐԴԻՑ ԲԻԹԼԻՍԻ ԽԱՆԻ ՎՐԱ ԿԱՏԱՐԱԾ ՄԵՐ ԱՐՇԱՎԱՆՔԸ[77]

Էվ. Չելեբին այս վերնագրի տակ մանրամասնորեն նկարագրում է Աբդալ խանի դեմ կազմակերպված արշավանքը։ Բանակը շարժվում է Վանա ծովի արևելյան և հյուսիսային ծովեզերքով՝ Բերկրի-Արճեշ-Ադիլջևազ-Սորփ-Ախլաթ-Ռահվա մարշրուտով։ Ճանապարհին բազմաթիվ զորամասեր միանում են փաշայի բանակին։

Պատերազմական գործողությունները խիստ մեծ ծավալ են ընդունում։ Ըստ գրիների տված տեղեկությունների Բիթլիսի շրջապատի խրամատներում 10 հազար հրացանաձիգ և 10 հազար հեծյալներ են եղել։ 50 հազարանոց բանակը պաշտպանել է քաղաքը։ Ժողովուրդը քաղաքից փախչում է սարսափից և խանի զինվորների անսահման բռնություններից խույս տալու համար։ Ճապաքչուրի և Չմշկածագի բեյերը խանին օգնության գալու ժամանակ՝ նրանց ճանապարհը կտրում է Դիարբեքիրի վալին և բեյերին շղթայակապ անում։ Դիարբեքիրի էյալեթից խանին օգնության է գնում Հազո բեյը [խանի փեսան]։ Վանի էյալեթի Ջրիկի, Սղերտ, Կարկառ և այլ բազմաթիվ վայրերի պետերը արտաքուստ ցույց տալով, որ իրենք հավատարիմ են կառավարությանը, իրենց զինվորներով օգնում են խանին։ Փաշան իր 70 հազարանոց բանակով Դատվանից շարժվում է դեպի Բիթլիս։

Սկզբում տեղի են ունենում առաջապահների փոքր մարտեր։ Խանը միշտ փորձում է փաշային հանկարծակիի բերել, բայց միշտ էլ անհաջող։ Բիթլիսում և խանի բանակում սով է սկսվում. պաշարը սպառվում է։ Խանի բանակում սկսվում է դասալքությունը։ Խանը քաղաքի ուլեմաներից և այաններից մարդիկ է ուղարկում

փաշայի մոտ, հարյուր քիսե փող խոստանում և ներողություն խնդրում։ Փաշան մերժում է և եկողներին ետ ուղարկում։

1065 (1654) թվականի ռամազան ամսի 24-ին, մեծ պատրաստություններից, հանդիսավոր արարողություններից և աղոթքներից հետո, փաշայի անմիջական ղեկավարությամբ և մասնակցությամբ, տեղի է ունենում հարձակումը։ Փաշայի զորամասերը պաշարում են Բիթլիսը։ Կռիվը վերին աստիճանի կատաղի և դաժան է լինում։ Փաշայի զինվորները հարձակվում են քրդերի խրամատների վրա, հազարավորներին սպանում են, իսկ մնացածներին փախուստի մատնում։ Էվ. Չելեբին գովաբանում է քրդերի սխրագործությունները։

Աբդալ խանը տեսնելով իր բանակի պարտությունը, վերցնում է իր ընտանիքը, հարստության արժեքավոր մասը ու 5000 հրացանաձիգ և փախչում է Մոտիկի (Մոտկան) լեռները։ Այնտեղ թողնելով ընտանիքն ու հարստությունը, ինքն անհետանում լեռների մեջ։ Փաշան նրա ետևից ուղարկում է խանի ոխերիմ թշնամուն՝ Մալազկերտի բեյին։ Փաշայի բանակը սկսում է կողոպտել ու թալանել Բիթլիսը։ Քաղաքի այաններն ու շեյխերը դիմում են փաշային և խնդրում դադարեցնել քաղաքի թալանումը, ասելով՝ «Ձեր թշնամին խանն էր, նա էլ, փա՛ռք աստծո, պարտվեց և փախավ»։ Փաշան կարգադրում է դադարեցնել թալանն ու ավերումները և հափշտակված իրերը վերադարձնել տերերին։ Չելեբին ասում է. «...Այս հրամանից հետո էլ շատ զինվորներ վերցնելով իրենց թալանած իրերը փախան դեպի լեռները»։

Մնում է գրավել Բիթլիսի ամրակուռ բերդը, որտեղ պահվել էին խանի հարստությունն ու գոհարեղենների մեծ մասը։ Երբ պատգամավոր են ուղարկում բերդի պաշտպաններին և առաջարկում հանձնվել, նրանք պատասխանում են. «...Բերդը խանինն է, օսմանցիներն ի՞նչ գործ ունեն այստեղ։ Եթե օսմանյան բերդ լիներ, նրա մեջ օսմանցի զինվորներ կլինեին. մենք բոլորս խանի զինվորներն ենք»։ Նրանք նույնիսկ ցանկացել են պատգամավորներից մի քանիսին բերդից ցած գցել։ Այնուհետև սկսվում է բերդի պաշարումը։ Թնդանոթներով ռմբակոծում ու քանդում են բերդը։ Պաշարվածները սպիտակ դրոշակ են բարձրացնում և հանձնում են բերդը։ Բերդի պաշտպանությունը հանձնվում է Յուսուֆ քեթխուդային, որը խանի պալատի 500 սնդուկները, գանձերի պահեստները կնքում է [Էվ. Չելեբիի կնիքով] և պարսպի դռները փակում։

Էվ. Չելեբիի վկայությամբ այդ պատերազմում խանի կողմից 1065, փաշայի կողմից 200 մարդ են զոհվում։

Փախստական Աբդալ խանին բռնելու համար ուղարկված Մալազկերտի բեյը ետ է գալիս ձեռնունայն։

Այնուհետև փաշայի մոտ են գալիս Շիրվանի, Խիզանի, Քյարնի, Էսփահրդի, Զրիկի և Քեսանի քուրդ բեյերը, որոնք իրենք անձամբ չմասնակցելով կռվին, օգնական զորք էին տվել Աբդալ խանին։ Վանի ավագանին և աղաները միաբան դիմում են փաշային և խնդրում ոչնչացնել բոլոր քուրդ բեյերին՝ իբրև պետության թշնամիների։ Փաշան կարգադրում է ձերբակալել նրանց։

1065 թվականին Բիթլիսում նոր խան է նշանակվում։ Դրա համար մեծ Դիվան է գումարվում, որին մասնակցում են Բիթլիսի այանը, բարձրաստիճան անձնավորությունները և աշիրեթի բեյերը։ Բոլորի առաջարկությամբ և խնդրանքով խան է նշանակվում Աբդալ խանի որդի Զիաեդդին բեյը, պայմանով, որ նա վճարի Վանի բանակին ունեցած 200 քիսե հոր պարտքը և վերադարձնի Մալազկերտի

բեյից հափշտակած 40 հազար գլուխ ոչխարը։ Բիթլիսի ներկայացուցիչները առաջարկում են Արդալ խանի հարստությունը վաճառել և մարել այդ պարտքերը։

Խանի իրերի մեջ կային 11 գեղակերտ սնդուկներ, որոնք պարունակում էին նվիրական և գեղարվեստական գրքեր, որոնք փաշայի կարգադրությամբ վերադարձվում են նրա որդուն՝ նոր նշանակված Ջիահդդին խանին, քանի որ նրա սեփականությունն էին։

Հրապարակորեն վաճառքի հանված անթիվ իրերի մեջ, որոնց մասին էվ. Չելեբին խոսում է շատ մանրամասնորեն, աչքի են ընկնում 17 ոսկեկազմ և տարբեր գրերով գրված 17 Նվիրական խոսքերը, ամենաընտիր թղթերի վրա գրված 1300 հատոր գեղարվեստական գրքեր, հայտնի իսլամ հեղինակների 70 թեֆսիրներ78, 1300 բառարաններ և կարևոր գիտությունների վերաբերյալ այլ գրքեր։ 20 հատոր Ֆիրդուսիի «Շահնամե», 1000 հատոր հայտնի բանաստեղծների դիվաններ, 260 գեղակազմ ժողովածուներ և այլն։ Էվ. Չելեբին ամենամեծ հիացմունքով է խոսում խանի գրական հարստության մասին և ավելացնում. «...փա՛ռք աստծո, նվաստս էլ [այդ գրքերից] մի քանիսին տիրացա։ Այս արվեստի երկերը այնքան էժան վաճառվեցին, որ վճարված փողը նրանց մի տարի արժեքից անգամ պակաս էր»։

«Խանի սեփական կնիքով կնքված 7 ուղտաբեռ սնդուկներից հանված կարևոր գրքերը» վերնագրի տակ էվ. Չելեբին թվարկում է բազմաթիվ, այդ թվում նաև հայտնի թուրք պատմագիրների երկեր, խանի սեփական երկասիրությունները պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներով, եվրոպական տպագրությամբ 200 ատլասներ ու քարտեզներ, բուսաբանական գրքեր և այլն։

«Այս բոլորը վաճառվում էին շատ ցածր գնով» — գրում է Չելեբին և ցասումով, միջանկյալ հիշում մի այսպիսի դեպք. ինչ-որ տգետի մեկը սուլթանական աճուրդից մի աննման «Շահնամե» է գնում 1600 ղուրուշով, տանում է իր վրանը և նկարը հարամ է ասելով՝ ոչնչացնում է գրքում եղած բոլոր նկարները, հանում է դիմանկարների աչքերը և բոլոր թերթերը ծակծկում։ Պատկերների մեջ եղած մարդկանց վիզը կտրելու միտումով՝ դանակով նրանց վիզը կտրում է, գեղարվեստական և նուրբ նկարները իր զզվելի թքովը կեղտոտում։ Փաշան իմանալով այս մասին, կարգադրում է այդ կափու-կուլի ենիչերիին հազար գավազանի հարված տալ, Շահնամեի արժեքը գանձել և բանակից վռնդել...

Էվ. Չելեբիի վկայությամբ խանի իրերի աճուրդը չորս օր է տևել։ Աճուրդից ստացված գումարով լրիվ վճարվում է Վանի բանակին խանի ունեցած 200 քիսե պարտքը, որից Վանի զորամասը փաշային իբրև վարձ տալիս է 50 քիսե։ Մալազկերտի բեյը իր 40 հազար ոչխարի փոխարեն ստանում է 70 քիսե, որից 50 քիսեն տալիս է փաշային, իսկ խանից խլված մնացած հարստության մասին ոչ ոք փաշային ոչինչ չի ասում։

Նոր նշանակված Ջիահդդին խանը, ըստ հին սովորության, Բիթլիսի ժողովրդից 300 քիսեի հարստություն է հավաքում, որից փաշային իբրև ծառայության վարձ տալիս է 100 քիսե փող, 5 ձի, 10 ջորի, 10 ղուլամ, 5 կույս աղջիկ, մի գունագեղ վրան և 50 անուշաբույր շամամ։ Բացի այդ փադիշահի կողմից իր բերաթը նորոգելու համար խոստանում է 100 քիսե...

Աբդալ խանին բռնելու համար ուղարկված Արճեշի, Աղիլջևազի և Մուշի բեյերը վերադառնում են ձեռնունայն, սակայն իրենց հետ բերում են Մալազկերտի բեյից խլված ոչխարների 20 հազարը, որը ցանկացել են վերադարձնել բեյին,

սակայն վերջինս չի ընդունել, քանի որ ոչխարների համար փաշա.ից արդեն ստա-ցել էր 70 քիսե։ Նա փաշային ասում է. «Այս ոչխարները ինձնից քեզ հալալ լինեն»։

Աղիլջևազի, Արճեշի և Մուշի բեյերը հանդիպում են խանի մարդկանց, նրանց հետ կռվի բռնվում, հարյուր մարդ են սպանում և մոտ հարյուրին գերի են վերց-նում և փաշային հանձնում։ Փաշան դահիճներ է կանչում գերիներին մահապատժի ենթարկելու համար։ Վանի աղաները բարեխոսում են և գերիներին փրկում մա-հապատժից։ Փաշան այդ գերիներին նվիրում է աղաներին։ Այնուհետև բոլոր ա-ղաներին ու բեյերին վարձատրելուց և առատ նվերներ բաժանելուց հետո, նոր խա-նից փադիշահի և սադրազամի համար ստացած 200 քիսե ոսկին Ստամբուլ է ուղարկում։

(էջ 200—260)

ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՎԱՆ 1065 ԹՎԱԿԱՆԻ ՆՎԻՐԱԿԱՆ ՌԱՄԱԶԱՆ ԱՄՍԻ 29-ԻՆ

Վերջին պահին նոր խանի խնդրանքով Մելեք Ահմեդ փաշան կալանավորված քուրդ բեյերից ազատում է Խիզանի բեյին, որի համար տեղնուտեղը փաշայի գանձարանն է մուծվում 13 հազար ոսկի, մեկ կանթար արծաթ և 20 զրահ։ Մնացած քուրդ բեյերի մա-սին փաշան սպառնալից տոնով ասում է. «Աստծով, հենց որ Վան հասնեմ, դիվան կկազմեմ և փադիշահական դիվանում կորոշեմ նրանց գլուխները թռցնել, որ մյուսներին էլ խրատ լինի, Վանի վալիներին հնազանդություն ու հպատակություն ցույց տան և փա-դիշահական հավաքին ներկա լինեն...»։

Նրանք ուղևորվում են Վանա ծովի հարավային եզերքով։ Սկզբում կանգ են առնում 300 տնից բաղկացած քրդական Տյուզել-դերե գյուղում, որտեղ լիճն է թափվում համանուն գետը։ Այնուհետև իջևանում են Սոր-ի գյուղում։ Այս գյուղի մասին Էվ. Չելեբին գրում է. «...Վանա ծովեզերքից հեռու, Վանի տերիտորիայում ընկած 200 տնից բաղկացած բարեշեն գյուղ է. ունի հին վանք, վարդապետները նվերներ բերեցին փաշային...»։

Առավոտ վաղ ճանապարհ ընկանք և հասանք Աղթամար կղ-զին. Մելիք Ջալութը այստեղ այնպիսի մի վանք է կառուցել, որ բոլոր քրիստոնյաների համար նվիրական վանք է համարվում։ Կղզին Վանա ծովի մեջ երկարությամբ արևելքից դեպի արևմուտք ձգված, երկինք խոյացած մի բարձր լեռ է։ Շրջագծի երկարու-թյունը 7 մղոն է։ Միայն հարավային կողմից մի դժվարանցա-նելի և մացառոտ ճանապարհ ունի, որը գտնվում է Վանա ծովի հարավում, Գավաշի սուբաշիության մեջ ընկած նավահանգստից

3 մղոն հեռավորության վրա։ Բարձր լեռան վրա վանքեր կան։ Վանքից եկած վարդապետների նվերներն ընդունվեցին [փաշայի կողմից]։ Նրանք փաշային «Բարի եկաք» ասացին և բերդից 7 շահի թնդանոթներ արձակեցին։ Երբ բոլոր վարդապետները նավակներով ետ էին դնում, նվաստս էլ իմ 7 ծառաներով, նույնպես նավակներով, գնացի կղզին դիտելու։ 700 քայլաչափ երկարությամբ, ամուր քարերով կառուցված հիանալի մի բերդ է։ Արևմուտքում մի փոքր դուռ ունի։ Բերդի միջի հիշյալ վանքը (Աղթամարը) հնագույն վանքերից է։ Երևանի մոտի Ուչքիլիսեն (էջմիածինը), Նախիջևանի մոտի Եղի-Քիլիսեն և Երուսաղեմի Կամամեի եկեղեցին սրա հետ համեմատած՝ աննշան են։ Այս վանքի կառուցվածքը, սենյակները և մնացած շինությունները եթե առանձին-առանձին նկարագրենք, շատ երկար կլինի։ 200-ից ավելի վարդապետներ և հոգևորական պետեր ունի, որոնք ժուժկալության, ծոմապահության ու բակլա ուտելու հետևանքով չորացել և կմախքի են վերածվել։ Շատ երիտասարդ ծառաներ ունեն, որոնք մեծ հարգանքով հյուրասիրում են. նրանք այնքան բարիքներ ունեն, անգամ թռչունի կաթ. հեռավոր երկրների բույսեր։ Մետաքսե վերմակներ և զերբաֆ անկողիններ ունեն, որոնցով սպասարկում են բոլոր հյուրերին։ Վանքի ներքևում մեծ քարայրներ կան, որոնք լիքն են ուտելիքներով և խմելիքներով։ Աշխարհից հեռացած (ճգնավոր) մոտ 300 դերձակներ կան։ Բոլորն ապրում են ուխտավորների նվերների հաշվին։ Ջուրը ջրամբարներումն է։

Դարձյալ նավակներով այստեղից անցանք մյուս կողմը և եկանք կղզուց 5 մղոն հեռավորության վրա ընկած Ակքիրփի։ Այստեղ բերդ չկա և գավաշցիների ճանապարհը անցնում է այստեղով։ Այստեղից փաշայի հետ միասին, Վանա ծովեզերքով գնացինք դեպի արևելք։ Մեր ձախ կողմում Վանա ծովը մի փոքր ծոց էր կազմում։ Վանա ծովի ալիքներն այնպես են փորել այդ ժայռերի ստորոտը, որ ժայռերի տակ դատարկ տարածություն է ստեղծվել։ Իսկ մեր աջ կողմում երկինք խոյացած Քեփասի ժայռ անունով բարձր լեռը, կայծքարի նման կրակ արձակող կարծր քարից է։ Այս երկրում դժվար անցանելի ճանապարհներին նեփան են ասում։ Վանա ծովի եզերքին Կոսկուս Կրրան ճանապարհի վրա ընկած Հեքարիի լեռներում գտնվող այս նշանավոր քեփանը նմանը չունի Ռումի, Արաբի և Աջեմի երկրներում։ Վերի ժայռերից եթե մարդ մի քար գլորի՝ կարող է ոչնչացնել հազար մարդ։ Ներքևում դժոխանման անդունդ է, իսկ վերևում սեպ ժայռ է։ Խիյարբի Ահմեդ փաշա անունով մի վեզիր

բարի գործ է ձեռնարկել այստեղ. ծովի կողմից, քարուկրից մի պատ է կառուցել և ճանապարհը լայնացնելու նպատակով սկսել է լեռան ժայռերը փշրել։ Աջեմներն ասել են, որ «դեպի մեր երկիրը գալու համար հեշտ ճանապարհ կստեղծվի» և արգելք են հանդիսացել։ Խոսքով այդպես են ասել, սակայն այդ խոսքի իմաստը այն է, որ նրանք ցանկացել են իրենց երկիրը պաշտպանել վեզիրից։ Այդ միջոցին մի գերեզման տեսանք ու մի մեծ արկած հիշեցինք։

(էջ 261—264)

Վաշտապետ Զոմարի արկածները։ Այս վերնագրի տակ Էվ. Չելեբին երկարորեն պատմում է նշանավոր թուրք ավազակապետ Զոմարի մասին։ Զոմարը սկսած 1055 (1645) թվականից մի շարք կարևոր պաշտոններ է վարել։ Հետո սկսել է ավազակություն անել և Գյուրջի Նեբի ու Կաթըրջի-օղլի հայտնի ավազակների հետ, Սկյուտարի մոտ, Սադրազամ Մուրադ փաշայի դեմ մղած պատերազմում պարտվել է և փախել։ Այգ կռվին ներկա է եղել ինքը՝ Էվ. Չելեբին։ Այնուհետև, հատուկ հանձնարարությամբ Շամ գնալիս, ճանապարհին, Ադանայի մոտի անտառում Չելեբին հանդիպել է Զոմարին, նրան Շամ տարել և ծառայության է նշանակել տվել Մյուրթեզա փաշայի մոտ։ Այնտեղից Մյուրթեզա փաշան փոխադրըվում է Սվազի էյալեթը, Զոմարին տանում է իր հետ և Նիկսար քաղաքի սուբաշի նշանակում։ Հետագայում այգ պաշտոնից Զոմարը հեռացվում և բանտարկվում է։ Բանտից փախչելով, 100 կտրիճներով կողոպտում է իրեն բանտարկող աղայի ագարակը և հափշտակելով նրա ձիերը, մեծ ավարով գնում է Վան՝ Մուհամմեդ էմին փաշայի մոտ, որն այդ ժամանակ Խոշաբի իշխողի՝ Մահմուդի Սուլեյման բեյի հետ թշնամության մեջ լինելով, Զոմարին սերդար է նշանակում։ Սա կողոպտելով ու թալանելով Հեքարիի և Մահմուդիի գյուղերը, մեծ ավար է բերում Վան։ 1060 թվականին, երբ Մելեք Ահմեդ փաշան մեծ վեզիր է լինում, Վանի Մուհամմեդ էմին փաշան ապստամբում է, բայց պարտվում, գալիս Մելեք Ահմեդ փաշային է ապավինում և ներման է արժանանում։ Իսկ Զոմարն ասում է. «էմին փաշայից հետո ինձ համար Վանում մնալը հարամ է» և փախչում է Ռիթլիսի խանի մոտ, որը նրան ընդունում և մեծ պատիվների է արժանացնում։

Վանի բանակը Զոմարին հրավիրում է Վան։ Սա իր 50 ընտիր քաջերով Կոռկուռ Կըրանի ճանապարհով Վան գնալիս, Քեփանում թակարդ մտած և իրեն սպասող Հեքարիի խանի 500—600 մարդկանց հետ կռվի է բռնվում։ Զոմարը իր թըշնամիներից հարյուրավորներին գետին տապալելուց հետո, ձին քշում, մտնում է ծովը և լողալով՝ բավականին հեռավորության վրա դուրս է գալիս ծովեզերք։ Նրան հալածող ձիավորները հասնում են Զոմարին, որը նորից կռվում է Ռուսբեսի պես և հետո մտնում է Սորեն Բաբա անունով ուխտատեղին և շարունակում կռվել պատուհանի անցքից։ Ի վերջո նրան սպանում են։ Նրան թաղում են այդ ուխտատեղիի մոտ, որը ներկայումս էլ ուխտատեղի է (՞)։

(էջ 261—271)

1065 (1654) ԹՎԱԿԱՆԻ ՋԻԼԳԱԴԴԵԻ 3-ՐԴ ՕՐԸ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻՑ ԴԵՊԻ ԱՋԵՄԻ ԵՐԿԻՐ

Էվ. Չելեբին Վանի բերդից 500 զինվորով շարժվում է դեպի արևելք, անցնում է 300 տուն և մի վանք ունեցող Ջեքուք (Ջևիկ) գյուղով, որի տուրքերը ստացել է Վանի բանակը։ Այնուհետև իջևանում է Վարագա վանքում։

Այս երկրում եկեղեցիներին վանք են ասում։ Այդ եկեղեցին Վարագա սարի ամենաբարձր գագաթից քիչ ցած, մի կանաչազարդ ծաղկաստանի մեջ քարուկրով կառուցված, գմբեթներով, բերդի նման, երկաթյա դարպասներով մի վանք է, որը ոչ մի հին վանքի նման չէ։ [Վանքում] 300-ից ավելի վարդապետներ և հոգևորականներ կան, որոնցից յուրաքանչյուրը ունի իր պարտականությունը։

Այդ գիշեր մեր 500 զինվորին այնքան լավ պատվեցին ու հյուրասիրեցին, որ անհնարին է նկարագրել։ Առավոտյան մեր ընկերներին և նվաստիս լուսանի մեկական մորթի նվիրեցին։ Հազար ու մի դժվարությամբ Վարագա լեռան ծառաստանները անցնելով, 5 ժամից հետո հասանք Հենդուսթեն (Հասպսթան) գյուղը, որը Վանի նահիյեում 300 տնից բաղկացած մի գյուղ է. խարաջը Վանի կուլին է պատկանում և գրանցվում է դեֆթերդարի կողմից։ Այստեղից դուրս գալով և անցնելով Կուլի չայիրով և Սուլեյման-բեյ չայիրով հինգ ժամից հետո հասանք Խոշաբի բերդը։

Խոշաբի բերդը: *Բերդի մոտով հոսում է Խոշաբ գետը, որի համար էլ բերդը այդպես է կոչվում։ Հին անունը Արջեքի-բալա է (Վերին Արճակ)։ Ալ-Աբբասի Հեքարին է կառուցել։ 800 (1397) թվականին անցել է Մահմուդիների ձեռքը. ներկայումս էլ Մահմուդի բեյերի կենտրոնն է։ Հետագայում, 1060 (1650) թվականին Սուլեյմանի Ջեման անունով մի բարձր խան այդ բերդը ընդարձակել է և արևելքից իշխող դիրք ունենալու համար՝ այդ կողմում կառուցել Կալայի-Սուլեյմանիյե բերդը, որի ամեն մի քարը մի փղի մեծություն ունի։ Յուրաքանչյուր քարի երկարությունը 20 ոտնաչափ է և ըստ երկարության պատի մեջ դնելով, ծայրերը պատից դուրս է հանել։ Թնդանոթի արկերի հարվածներին դիմանալու համար բերդի պատերը կառուցել է կրիայի ետևի մասի ձևով. որքան էլ թնդանոթով գնդակոծեն, ոչ մի ազդեցություն չի ունենում։*

1060 (1650) թվականին Շամի փաշա-օղլի Մուհամմեդ Էմին փաշան 29 օր ռմբակոծել է բերդը, բայց մի քար անգամ չի կարողացել տեղից շարժել և հուսահատված ետ է վերադարձել։

Օսմանյան երկրում բերդերի դարպասներն, ընդհանրապես, երկաթապատ տախտակե դռներ են, որոնց վրա կրակելիս տախտակը այրվում է, իսկ երկաթային մասերը քանդվում են։ Սակայն Խոշաբի բերդի դարպասների բոլոր մասերը շինված են 300 կանթար Նախիջևանի պողպատից, բոլորովին առանց փայտի։ Շենքի վարպետը այս դարպասն այնպես է ծածկել երկու աշտարակների միջև, որ բոլորովին չի երևում։ Բերդում իշխողից՝ Մահմուդի Իբրահիմ բեյից բացի ոչ ոք չի լինում։ Բերդը շատ փոքր է։ Շրջագծի երկարությունը 1200 քայլ է։ Բերդի մի անկյունը բեյին է հատկացված։ Ունի մի փոքր բաղնիք։ Հացահատիկի ամբարները նկուղներում են, որտեղ առատ ռազմամթերք և 10 շահի թնդանոթ կա։ Անձրևի ջուրը հավաքվում է ջրամբարների մեջ։ Ժայռերից մեկը փղի կնճիթի նման երկարած է դուրս։ Հանգուցյալ Սուլեյման բեյը այդ ժայռերի վրա երկաթե անիվներ է շինել և 100 կուլաչ երկաթյա շղթայով ներքևից հոսող Խոշաբ գետից վարպետորեն ջուր է քաշել տվել, որը ռաբաթի ժողովուրդը դիտում է շուկայից և զարմանում։

Չորս կողմից անառիկ ժայռեր են, շրջապատում խրամատներ չկան, հյուսիսից մի դարպաս ունի, որի մոտ, ներսից շատ խոր մի խրամ կա։ Սրա կամուրջը շինված է թնդանոթի տախտակներից։ Խրամը լցված է սահրինջի ջրով։

Ստորին ռաբաթը: Այս երկրում վարոշին ռաբաթ են ասում։ Այդ ռաբաթն ընկած է մի ձորի մեջ և չորս կողմից բարձրադիր է։ Արևմուտքում Խոշաբի գետն է։ Բերդի պարիսպները ցածր են, ունի 40 աշտարակ, երկու դարպաս։ Առանց խրամի շրջագծի երկարությունը 400 քայլ է։ Ռաբաթում 800 տուն, մի ջամի, մի խան, մի բաղնիք և մի քանի խանութներ կան։ Ուրիշ շինություններ չկան։

Մահմուդի ֆրդերի վիճակը: 955 (1549) թվականին սուլթան Սուլեյմանին հպատակություն հայտնելու և Թավրիզի, Նախիջևանի ու Երևանի արշավանքներին մեծ ծառայություն մատուցելու համար երկիրը իրենց է թողնվել և կառավարվում են յուրթլուքի ու օջաքլըքի կարգով։ Ներկայումս Վանի էյալեթում է և դրոշակի ու թմբուկի տեր օջաք-բեյի ունի։ Երկրում աշխարհահամար է կատարվել։ Սուլեյմանի օրենքով զեամեթներ և թիմարներ ունի։ Բեյի խասը իր երկրի եկամուտն է։ Այդպես էլ Վանի վալիի հետ գնում է պատերազմի։ Ասիթանեի (Ստամբուլի) կողմից սահմանված 150 ակչեով կադի ունի։ 8000 զինվոր է հավաքում։ Քանի անգամ դուրս են եկել Աջեմի շահի դեմ։ Շատ քաջ, անվեհեր ղազիներ են։ Բոլորը կար-

միր, կանաչ, դեղին, ալ ներկերով ներկված մորուքավոր մարդիկ են, կրոնասեր են և շաֆիի դավանանքին են պատկանում։ Եթե նրանցից մեկի սուտը բռնվում է, ասում են դու ստախոս ես և մշտապես արտաքսում են։ Մինչև անգամ չեն խնայում նրանց ընտանիքին ու զավակներին։

Խոշաբի գետը: Այս մաքուր գետը սկիզբ է առնում Հեքարիի լեռներից և Հասենի յայլաներից։ Բերդի մոտ Խոշաբ անունն է ստանում։ Հոսելով դեպի արևմուտք, անցնում է Վանի դաշտով՝ Արտամետի այգիներով և հետո՝ Ոստան բերդի մոտ, թափվում է Վանա ծովը...

Էրջեքի (Արճակ) բերդը: Սեպաձև մի ժայռի վրա քառակուսի կառուցված բերդ է։ Շատ բարձր էր և չկարողացա բարձրանալ ու դիտել։ Ներկայումս գտնվում է Մահմուդիի բեյի իշխանության ներքո։ Նախկինում այս բերդը Մահմուդիների կենտրոնն է եղել։ Հիմա այնքան էլ բարեշեն չէ։ Վանի էյալեթումն է և սանջաքի բեյություն է համարվում։ Ունի 2000 զինվոր։ Մահմուդիի լավագույն ձիերը այստեղ են լինում։ Տնտեսությունների եկամուտը բեյին օջաքլըք է եղել։ Բեյը բերդում է ապրում, իսկ ստորին ռաբաթն ընկած է մի ձորի մեջ և այգիներով ու պարտեզներով 500 տուն ունի...

Բերդը մի փոքրիկ լճակ ունի, որի մեջ ամբողջ Քուրդիստանում հայտնի 10 օկկա ծանրությամբ շատ լավ կարմրախայտ ձկներ կան։ Ձկնորսները որսում և սրան-նրան նվեր են տալիս։ [Այդ ձկները] բոլորովին ձկան հոտ չունեն...

Աբաղայի բերդի բնութագիրը: Աբակայի աղավաղված ձևն է։ Կայի նշանակում է փադիշահ... Վանից 10 ժամյա հեռավորության վրա է։ Դեպի արևմուտք տանող մի ճանապարհ ունի։ Բերդը հընգանկյուն է, կառուցված է սեպ ժայռի վրա և ամրակուռ է։ Ներկայումս գտնվում է Մահմուդի բեյի իշխանության ներքո։ Այստեղից գնացինք դեպի արևելք և 7 ժամ հետո հասանք Վանի Կարահիսար։

Վանի Կարահիսարը: Քրդերը այդ բերդը Կարաչքա կալա են կոչում։ Կառուցել է Ալ-Աբբասիներից մեկը՝ Ղիյասէդդին-բին էլ Սուկթեդիրը։ Շատ հին շինություն է։ Օսմանյան պետության մեջ վեցերորդը այս Կարահիսարի էքրատն է. մյուսներն են Աֆիոն Կարահիսարը, Շեբին Կարահիսարը, Դևելի Կարահիսարը, Անթալիա Կարահիսարը և Կարահիսարի Սահիբը։ Սա ևս մյուս կարահիսարներից ետ չի մնում։ Երկինք խոյացած, մի աննման լեռան վրա կանգնած բարձր բերդ է, բայց փոքր է։ Չորս կողմը անդունդներ են և չկարողացա որոշել, թե քանի քայլ է։ Ներկայումս Մահմուդիի

բեյերից մեկի՝ մեզ անվանակից Էվլիյա բեյի իշխանության ներքո յուրթլուք ու օջաքլըք է։ Ինքը (բեյը) թմբուկի և դրոշակի տեր հարգելի մի բեյ է, որն իր շնորքի շնորհիվ Քուրդիստանի բոլոր բեյերին իր հետ է կապել։ Չորս հազար ընտիր և լավ զինված զինվոր ունի...

Այնուհետև Էվ. Չելեբին շարունակելով իր ուղևորությունը, անցնում է Փասիք աղայի ու Մելահին գյուղերով և հասնում է Փինյանիշ բերդը։

Փինյանիշ բերդի բնութագիրը: *Կառուցված է երկինք խոյացած մի ժայռի վրա և դիտելու արժանի բերդ է, որի բոլոր աշտարակները, ատամները և պատերը ժայռեր են։ Մեջը 100 քարայր, 10 տուն և ջրամբարներ կան։ Քարայրներում հացահատիկների մեծ պաշար կա։ Բերդը իշխող դիրք ունի։ 1024 (1615) թվականին Քել Ռուստեմ խանը ամբողջ 8 ամիս այս բերդը պաշարել, թնդանոթներով ռմբակոծել է, սակայն ապարդյուն է անցել և ետ է դարձել։*

Հարավից մի դարպաս ունի, դեպի որը միայն սանդուղքներով կարելի է բարձրանալ, իսկ երբ սանդուղքը պարաններով վեր է բարձրացվում, արդեն ոչ մի կողմից չի կարելի վեր ելնել։ Շրջապատի լեռներում շատ կան վագր, լուսան և վայրի կենդանիներ։ Մի քանի քրդեր այստեղ թակարդներ են դնում և այդ կենդանիներն անցնելիս՝ մեջն են ընկնում. մորթը հարգի է։ Այստեղ ձիու մեծությամբ վագրեր կան։ Բերդից ցած, Բեզտուք ձորի եզերքին, 600 քրդական տուն կա, սակայն շրջապատում ռաբաթ չունի...

Այնուհետև, Չելեբին պատմում է, որ Հալեպի վալի Նեբշիր փաշայի գրգումով աջեմները այս ցեղի 40 հազար ոչխարը հափշտակել և քշել են. ինքը գնում է Իրան, այդ ոչխարները ետ վերադարձնելու պարտականությամբ։

Փինյանիշ ցեղի վիճակը: *955 (1548) թվականին փինյանիշ ցեղը հպատակվել է սուլթան Սուլեյման խանին, որը նրանց վիլայեթները իրենց է թողել ու օջաքի բեյ է նշանակել։ Ունի 600 զինվոր։ Սրանք ևս Մահմուդիներ են համարվում։ Նրանց տիտղոսը գրվում է «Փինյանիշի էմիրներ» ձևով։ Հավատարիմ, աչքաբաց, կրակոտ մարդիկ են, կեղծիք ու խարդախություն չեն սիրում...*

Այստեղից Էվ. Չելեբին անցնում է մի քանի գյուղերով. անցնում Կութուր բերդը, այնտեղից շարունակելով ճանապարհը՝ հասնում է Ուրմիայի բերդը։ Ինչպես արդեն նշվել է, Էվ. Չելեբին Մելեք Ահմեդ փաշայի հատուկ հանձնարարությամբ գնում է Ուրմիայի խանի մոտ։ Փաշան Ուրմիայի խանին գրած իր նամակում ա-

առաջարկում է նա վերադարձնել այն 40 հազար ոչխարը, որ խլվել է Փինյանիշի քրդերից, այդ քայլը համարելով երկու պետությունների միջև գոյություն ունեցող խաղաղության դաշինքի խախտում։ Էվ. Չելեբին կ-րողանում է բազմաթիվ ու թանկագին նվերներով և միաժամանակ Մելեք Ահմեդ փաշայի անունից սպառնալիք տալով, ստիպել Ուրմիայի խանին վերադարձնել հափշտակված ոչխարները։

Այնուհետև Էվ. Չելեբին ուղևորվում է դեպի Թավրիզ, որովհետև Մելեք Ահմեդ փաշան հատուկ գրությամբ դիմել էր նաև Թավրիզի խանին և առաջարկել պատժել Ուրմիայի խանին: Էվ. Չելեբին գալիս է Թավրիզ, ուր շղթայակապ բերել էին Ուրմիայի խանին։ Նա միջնորդում է Ուրմիայի խանին ազատելու համար, քանի որ հափշտակված ոչխարները վերջինս վերադարձրել էր։ Էվ. Չելեբիի առաջարկով Թավրիզի խանը, երկու երկրների միջև բարեկամական կապ հաստատելու համար, մեծ նվերներով հատուկ պատգամավորություն է ուղարկում Մելեք Ահմեդ փաշայի մոտ։ Էվ. Չելեբիի Թավրիզում գտնվելու ժամանակ Վանից սուրհանդակ է գալիս և հայտնում, որ փախստական Բիթլիսի Աբդալ խանը վերադարձել է և Մելեք Ահմեդ փաշան նրա վրա նոր արշավանք է պատրաստում...

(էջ 271—277)

* * *

Էվ. Չելեբին իր Ուղեգրության IV հատորի մնացած մասում նկարագրում է իր ուղևորությունը Թավրիզից դեպի Սպահան, Համադան, Շեհրի-Զոր, Մուսուլ և Բաղդատ։

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(1066 թ.=1655 թ.)

Բաղդատից Մուսուլ։ Սղերդ—Ոստան—Վան—Էրզրում—Ստամբուլ։ Նորից Վան—Բիթլիս—Արճեշ—Մանազկերտ—Խնուս—Բասեն (Հասանաբադ)։ Հետո Էրզրումից և Երզնկայից Թոքաթ։

Այս հատորի սկզբում Էվ. Չելեբին նկարագրում է իր ճանապարհորդությունը Բաղդատից մինչև Մուսուլ։

Այնուհետև Մուսուլից ուղևորվում է Քուրդիստան, անցնում մի շարք վայրերով ու գյուղերով, ապա կանգ է առնում Սղերդում։

Սղերդ բաղաքի բնութագիրը: *Ըստ հին պատմագիրների Եզտ Ջըրտ[1] շահի կողմից հիմնված հին քաղաք է։ Մի մելիքից անցնելով մի այլ մելիքի, ի վերջո եզիդի ցեղից գրավում է վեհափառ Օմերի որդի Աբդուլլահը։ 921 (1515) թվականին Սղերդի խանը, նշանավոր Մոլլա Իդրիսի համաձայնությամբ և հանձնարարությամբ, Դիարբեքիրի վալի և սուլթան Սելիմ I վեզիր Բըյըքլի Մուհամմեդ փաշային հպատակություն է հայտնում, որով իր երկիրը մշտապես տրվում է իրեն։ Հետագայում այս խանի սերունդը վերջանում է և այդ պատճառով ներկայումս դարձել է Դիարբեքիրի էյալեթի սանջաքի բեյի կենտրոնը։ Բեյի խասը 333.883 ակչե է, ունի 7 զեամեթ, 133 թիմար, ալայի բեյ և չերիբաշի։ Օրենքով սահմանված՝ ջեբեյուների հետ միասին, ընդամենը 800 զինվոր ունի։ Բեյն էլ 500 զինվոր ունի։ Պատերազմի են գնում Դիարբեքիրի վալիի հետ։ Զինվորները ընտիր են և լավ զինված։ Գիշեր ժամանակ Քուրդիստանի զինվորների շարքում Սղերդի զինվորների վրանները գտնելու համար՝ Դարի Սաիդ պետք է կանչել[2]։*

Քաղաքի արաբական անունը Դարի Սաիդ է։ Այստեղ թեև Քուրդիստան է, սակայն ժողովուրդը արաբերեն է խոսում. գիտեն

նաև քրդերեն, թուրքմեններեն և հայերեն։ Շարիաթի դատավորը չեյխ-ուլ-իսլամն է։ Չորս դավանանքի[3] մյուֆթիներ ունեն։ Ասիթանեի կողմից սահմանված 150 ակչեով կազա է։ Սիփահիի քեթխուդայի փոխարեն ունի ենիչերիի սերդար, մյուհթեսիր, չեհրենդեր և քաղաքի սուբաշի։

Սղերդի արևմտյան կողմում, չորս կոնաք հեռավորության վրա, Դիարբեքիրի բերդն է։ Դարձյալ դեպի արևմուտք Մարդինն է՝ երեք կոնաք հեռավորության վրա։ Հարավ-արևմուտքում, երկու մենզիլ հեռավորության վրա, Հիսնի Քեֆի բերդն է։ Հարավային կողմում, երեք մենզիլ հեռավորության վրա, Ջեզիրե քաղաքն է։ Արևելքում գտնվող Քեֆերեի գյուղաքաղաքը մեկ կոնաք հեռավորության վրա է։ Մուսուլը արևելքումն է, իսկ Սղերդը Մուսուլի արևմուտքումն է։

Սղերդ ֆաղաֆի տեղն ու նկարագիրը: Այս գեղեցիկ քաղաքը գտնվում է Շաթից [գետ] արևելք։ Գետից հեռու է կես մերհալե։ Լեռների մեջ, կանաչազարդ վայրում ընկած, դրախտանման այգիներով մի քաղաք է։ Քաղաքում հազվադեպ են փայտաշեն տներ։ Բոլորը քարուկրից, հիանալի կամարներով, բարեկարգ ու գեղեցիկ տներ են։ Բեյի ապարանքը իր էնդերունի և բիրունի[4] բազմաթիվ սենյակներով, զարդարված է գեղեցիկ այգիներով և պարտեզներով։

Հայտնի են [այս քաղաքի] ցորենը, բրինձը, բակլան, լոբին և կարմիր ստեպղինը։ Լեռները և ժայռերը ծածկված են բազմատեսակ պտուղներով, թուզով, բերում անունով պիստակով և արտահանվում են այլ երկրներ։

Այս քաղաքը դիտելուց հետո, մեր ընկերներով միասին ուղևորվեցինք դեպի հյուսիս և եկանք Քեֆերեի Շիրվան գյուղաքաղաքը։ Ժողովուրդը Քեֆերե է կոչում։ Այստեղ Դիարբեքիրի էյալեթի սահմանը վերջանում է և այդ պատճառով Քեֆերեն մտնում է Վանի էյալեթի մեջ և գտնվում է Շիրվանի իշխողի իշխանության ներքո։ Ընդարձակ հարթավայրում ընկած, այգիներով և պարտեզներով, հիանալի ջրով, բարեշեն ջամիով և մեդրեսեններով, խանով և բաղնիքներով, շուկայով և բազարով հարուստ մի գյուղաքաղաք է։ Ամբողջ Քուրդիստանի ժողովրդի հագած կարմրավուն շալն ու ասվի գործվածքները այստեղ են պատրաստվում։ Հարուստ ռայաները, քրիստոնյաներ յակուբի և հայ քյաֆիրներ են։

Այստեղից դարձյալ դեպի հյուսիս գնացինք և հասանք Մադեն գյուղաքաղաքը։ Այստեղ հանքեր (մադեն) շատ լինելու պատճա-

ռով քաղաքը Մաղեն է կոչվել։ Հիմնադիրը հայտնի չէ։ Գտնվում է Վանի էյալեթում։ Շիրվանի բեյի իշխանության ներքո է. մի աշիրեթի բեյ ունի։ Ունի պարտեզներ և այգիներ, ջամի և մեդրեսեներ, խան, բաղնիք, շուկա։ Այստեղի շալն ու ասվին նմանապես հայտնի են։

Այստեղից դուրս գալով եկանք Վանի դաշտում գտնվող Ոստան բերդը։

Ոստան բերդը: Ընկած է Վանա ծովի եզերքին։ Ունի այգիներ և պարտեզներ, ջամի ու մեդրեսեներ։ Գտնվում է Հեքարիի իշխողի տիրապետության ներքո։ Այս մասին արդեն գրել եմ...

1065 (1655) թվականին էվ. Չելեբին Վանից մեկնում է Ստամբուլ։ Ամիկ բերդից անցնում է Բարկիրի, Մալազկերտ, Երզնկա, Նիկհիսար, Մարզվան, Բոսյա, Իզմիր, Գեյբզե, Սկյուդար և 13-րդ օրը հասնում է Ստամբուլ։ Այնտեղ ներկայանում է Սադրազամ Սուլեյման փաշային և նրան հանձնում Մելեք Ահմեդ փաշայի նամակները։ Երբ սադրազամը էվ. Չելեբիին ասում է, որ ինքը մտադիր է Մելեք Ահմեդ փաշային կանչել Ստամբուլ, Չելեբին պատասխանում է. «...Վանը մի կղզի է, այնտեղ իմ էֆենդին ոչինչ չի կարողանում գանձել և հազիվ կարողացավ իր ծախքերը ծածկել։ Առանց փողի մարգը եթե Ստամբուլ գա, ի՞նչ հանույք կարող է ստանալ...»։ Սադրազամը Չելեբիին առաջարկում է պատրաստվել Վան մեկնելու համար։ Սակայն այդ ժամանակ Ստամբուլում տեղի են ունենում Աթ Մեյդանիի դեպքերը[5] և խռովությունները։ Սադրազամ Սուլեյման փաշան պաշտոնազուրկ է լինում։ Էվ. Չելեբին տեսակցություն է ունենում նոր սադրազամի՝ Սիվալ փաշայի հետ, և նրա հրամանով նորից մեկնում է Վան։

Սադրազամը ասում է. «Շուտով հասիր մեր եղբայր Մելեք Ահմեդ փաշային։ Էյալեթում թող գանձի իր ստանալիքը և սպասի իմ կողմից առաջիկայում ուղարկվող փադիշահական հրամանին և նրա համաձայն գործի»։ Ուղևորության 13-րդ օրը նա հասնում է Վան, ներկայանում է փաշային և պատմում բոլոր նորությունները։ Մի քանի օր հետո փաշան իր ստանալիքը գանձելու համար, էվ. Չելեբիին հատուկ նամակներով ու նվերներով ուղարկում է Բիթլիսի խանի ու Ջրիկի բեյի մոտ։ Բիթլիսի խանը էվ. Չելեբիին ընդունում է մեծ հանդիսավորությամբ ու պատիվներով։ Հետո Չելեբին գնում է Ջրիկի բեյի մոտ՝ Ջրիկի բերդը։ Էվ. Չելեբին գրում է. «Ջրիկի ցեղը Վանի էյալեթում ընկած առանձին բեյություն է կազմում։ 6000 հրացանաձիգ զինվոր և 20 աշիրեթի պետ ունի... Նվիրական պատերազմի ժամանակ առևտրականները 600 զինվոր են տալիս։ Ունի չերիբաշի, ալայի բեյ, 150 ակչեով կադի, սակայն մյուֆթի և նադիր չունի, ուլեմաները շատ են»։

(էվ. Չելեբի, հտ. V, էջ 20)

Այստեղից Չելեբին վերադառնում է Բիթլիս։ Խանը մեծ ջանք է թափում և 50 քիսե փող է հավաքում։ Էվ. Չելեբին այդ գումարը ուղարկում է Վան՝ փաշային։ Մնում է գանձելու ևս 20 քիսե։

Տեղեկություն է ստացվում, որ Մելեք Ահմեդ փաշան պաշտոնազուրկ է արվել և Վանը շնորհվել է Փեհլևի Ահմեդ փաշային։ Սակայն ձմեռվա խստության պատճառով Մելիք Ահմեդ փաշան որոշում է ձմեռել Վանում և գանձել իր ստանալիքները։

Այդ ժամանակ անսպասելի կերպով Բիթլիսում երևում է Մոտկանի (Մոտեկի) լեռներում թաքնված փախստական Աբդալ խանը։ Քաղաքում մեծ իրադարձություն է։ Ոմանք ողջունում են Աբդալ խանի վերադարձը, մյուսները վախենում են նրա վրիժառությունից։ Էվ. Չելեբին հարմարվում է պայմաններին և որպես դերվիշ ներկայանում է խանին։ Զիաեդդին խանը հոր ոտքն է ընկնում և հայտնում, որ ինքը իր հոր իշխանությունը պահպանելու նպատակով է համաձայնվել խան դառնալ։ Աբդալ խանը ձևացնում է, որ ինքը մտադիր չէ իշխանությունը իր ձեռքն առնել, միայն ցանկանում է իր կյանքի վերջին տարիները խաղաղ անցկացնել։

Էվ. Չելեբին արտաքուստ համակերպվում է ստեղծված իրավիճակին, սակայն միշտ զգույշ է լինում։ Այդ զգուշությունը ավելի է ուժեղանում, երբ Աբդալ խանի կինը նրան կանացի հագուստ է ուղարկում և առաջարկում ծպտված անմիջապես փախչել Բիթլիսից։ Էվ. Չելեբիի դրությունը ավելի է ծանրանում, երբ խանի կրտսեր որդիներն իր ներկայությամբ և դավադիր կերպով սպանում են Մելեք Ահմեդ փաշայի կողմից նշանակված Հեյդար քեթխուդային։ Չնայած Աբդալ խանը Չելեբիին շատ լավ վերաբերմունք է ցույց տալիս, նրան անվանում է «իմ որդի» և որդիներին ուսուցիչ նշանակում, նույնիսկ խոստանում է իր աղջիկներից մեկին նրան կնության տալ, առանձին տուն և այգի նվիրել, սակայն Չելեբին չի հավատում և ծրագրում է փախչել Բիթլիսից։ Այդ դրության մեջ Չելեբին Բիթլիսում մնում է երկու ամիս։ Սաստկաշունչ ձմեռը դժվարացնում է փախուստը։ Բիթլիսում շարունակվում են Մելեք Ահմեդ փաշայի կողմնակիցների զազանային սպանությունները։

Էվ. Չելեբին խորամանկությամբ վստահություն է ստեղծում իր շուրջը։ Զիաեդդին խանը մինչև անգամ Էվ. Չելեբիից չի հեռանում և նրա հետ միասին է քնում։ Սակայն Էվ. Չելեբին այդ ամենին չի հավատում և հաստատ որոշում է փախչել։

...Մի գիշեր դուրս է գալիս դիվանխանեից և տեսնում է, որ բոլոր պահակները խոր քնած են. գնում է ախոռ, և իր մարդկանց հետ՝ ձիով ու զինված, դուրս են գալիս դեպի Ռահովայի դաշտը և այնտեղից Դատվան։ Հասնելով Դատվան, տեղի իշխողից իմանում է, որ Մելեք Ահմեդ փաշային նրանք կհանդիպեն Ադիլջևազում։ Այստեղից 10 մարդ է վերցնում և շարունակում ճանապարհը։ Ճանապարհին Էվ. Չելեբին նկատում է, որ հարյուրից ավելի ձիավորներ հետևում են իրենց. այդ պատճառով շտապում է հասնել Ախլաթի բերդը։ Ետ մնացած 10 դատվանցիները կռվի են բռնվում հետապնդողների հետ և սպանվում։ Էվ. Չելեբին հասնում է Ախլաթի բերդը։ Բերդակալը Չելեբիին ճանաչում է և նրան փրկելու նպատակով հալածողների վրա կրակ է բաց անում, շատերին սպանում է, մնացածներին փախուստի մատնում։ Այստեղից Չելեբին օգնական զինվորներ է վերցնում և գալիս է

Ադիլջևազի բերդը։ Հետո Արճեշի մոտ պատահում է Մելեք Ահմեդ փաշային և պատմում իր արկածները։ Երբ Ձելերին իմանում է, որ փաշան մտադիր է Բիթլիսով անցնել, նրան համոզում է հրաժարվել այդ մտքից և գնալ Էրզրումով։

(էջ 10—39)

1066 (1655) ԹՎԱԿԱՆԻ ՄԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՃԵՇԻ ԲԵՐԴԻՑ ԴԵՊԻ ՍՏԱՄԲՈՒԼ

Մեր փաշա էֆենդիի հետ միասին, ցրտաշունչ ձմեռվա պայմաններում, Աք Սարայ բերդից դուրս գալով և շարժվելով դեպի հյուսիս, անցանք մի շարք բարեշեն գյուղերով և հասանք Դաշկին գյուղը։ Էրզրումի էյալեթի տերիտորիայում ընկած բարեշեն հայկական գյուղ է։ Այստեղից գնացինք Մանազկերտի (Մելազգերտ) բերդը։

Մանազկերտի բերդը: *Առաջին հիմնադիրը եղել է Եզդ Ջըրդ շահը։ Աջեմի լեզվով այս բերդը կոչվում է Խան Ղազենֆեր Շահի բերդ։ Մոնղոլերեն՝ Մելազջերդ, արաբերեն՝ Սուրի-Սեբուա։ Վերանորոգել է ադրբեջանցի Կըլըչ Արսլանը։ Քրդական որոշ ցեղեր այս բերդը անվանում են Մելազերդ, մյուսները՝ Մելազկերտ։ Այս վերջին անունը կապված է բերդի կլորաձևության հետ։ Էրզրումի էյալեթում առանձին սանջաքի բեյի կենտրոն է։ Բեյի խասը 100.000 ակչե է։ Լիվայում 14 զեամեթ և 282 թիմար կա։ Ունի ալայի բեյ, չերիբաշի։ Օրենքով սահմանված ջեբելուների հետ միասին 1500 զինվոր ունի։ Սրանք մասնակցում էին Բիթլիսի խանի դեմ մեր մղած կռվին։ Մենք գիտենք, որ պետք եղած դեպքում մինչև 3000 զինված զինվոր կարող է տալ։ Սրանք ևս վշտացած էին Բիթլիսի Աբդալ խանից և նրա բանակին առաջին անգամ պարտության մատնեցին մալազկերտցիները։ Մի խոսքով, ընտիր և հաստ սրտի տեր զինվորներ են։ Օսմանների կողմից 150 ակչեով նշանակված մի կադի շարիաթի օրենքով այստեղ երկու տարի դատավորություն է արել և տարեկան 2000 ղուրուշ ստացել։ Թեև Քուրդիստան է, հասկայն բնակիչները շաֆիի դավանանքից են և նվիրական շարիաթին են հպատակվում։ Այլ կառավարիչներ չունեն և վարչական գործերը հանձնված են միրլիվային։ Արդարադատությունն ու իրավունքը այստեղ ամուր է, որովհետև ժողովուրդը քաջ է և ուժեղ։*

Մանազկերտ բերդի տեղն ու նկարագիրը: *Բերդը գտնվում է կլորաձև ժայռի վրա և ամբողջովին կառուցված է կտրված քարե-*

րով։ Ներքին պարիսպը լավ է պահպանվել. տների թիվը ինձ հայտնի չէ։ 878 (1473) թվականին Ակ Կոյունլու սուլթան Ուզուն Հասանը ձեռնարկել է բերդի գրավումը, սակայն (սուլթան) Ցաթիրը նրան պարտություն է մատնել և բերդի ժողովուրդը հպատակեցրել է իրեն։ Հետագայում, Բայազիդ Վելիի օրոք, աջեմները գրավել են այս բերդը, սակայն 922 (1516) թվականին սուլթան Սելիմ 1-ը Չըլդըրի նվիրական պատերազմում աջեմին պարտության է մատնել և այս բերդը այդ օրից մնացել է օսմանցիների իշխանության տակ։

Բերդը երեք կողմից իշխող դիրք ունի և արևելքում՝ մի դարպաս։ Կտրված ժայռերի միջով ձորն իջնող ջրի ճանապարհ կա։ Այգիներն ու պարտեզները այնքան էլ լավը չեն։ Բերդն էլ գրեթե ամբողջությամբ ավերվել է Թիմուրի կողմից։ Քաղաքը նույնպես բարեշեն չէ։ Ունի մոտ 2000 տուն, մի ջամի, երկու մեդրեսե, մի փոքր բաղնիք, ուր միայն 5 մարդ կարող է տեղավորվել, մի խան, մոտ 50 խանութ և 7 կրոնական դպրոց։ Քաղաքը գտնվում է 18-րդ սովորական կլիմայի կենտրոնում։ Էրզրումից երեք մենզիլով հեռու է։ Բիթլիսը հարավ արևելքումն է և 2 մենզիլով ավելի մոտ է։ Վանի բերդը գտնվում է արևելքում և չորս մենզիլ հեռավորության վրա է։ Ախլաթ բերդի և Մանազկերտի միջև ընկած տարածությունը 7 փարսախ է, բարձր լեռներով անցնող ուղիղ ճանապարհներ ունի։ Քաղաքի օդն ու ջուրը առողջարար է և այդ պատճառով բնակիչները առողջակազմ են։ Ձմեռը խիստ ցրտաշունչ է լինում։ Քաղաքի միջով հոսող գետը սկիզբ է առնում Բինգյոլի լեռներից։

Սաստիկ ցրտերի պատճառով մի ամիս փակված մնացինք այս քաղաքում և մեզ հրամայվեց հանգստանալ։ Աստծո նախախնամությամբ, մի օր այնպիսի մի կարկուտ տեղաց, որի ամեն մի հատիկը 100 դիրհեմ էր կշռում։ Շատ կենդանիներ կոտորվեցին։ Մեկ ժամից հետո փաշայի մոտ կարկուտի մի հատիկ բերեցին, որը ճիշտ մեկ օկկա կշռեց, և այդ այն դեպքում, որ մինչև փաշային հասցնելը, հավանաբար 50 դիրհեմի չափ արդեն հալվել էր։ Այդ կարկտի հատիկը վեցանկյունանի էր և նման Սուլեյմանի կնիքին, ուներ սագի հավկիթի մեծություն։

Երբ ձմռան սաստիկ ցրտերի պատճառով մենք մնացել էինք այս քաղաքում, մեր փաշային ուղղված բարեկամական նամակներ և նվերներ ստացվեցին Բիթլիսի Աբդալ խանից։ Նվաստիս 6 ձի և երկու զամբյուղ հագուստ էր ուղարկել։ Այնուհետև, իբրև նվեր, իմ չորս ստրուկի համար տասնական ալթուն ճանապարհածախս և

մի-մի ձեռք հագուստ, իսկ Նվաստիս էլ 200 ղուրուշ և երկու ջորաբեռ քաղցրեղեն, հալվա ու այլ ուտելիքներ էր ուղարկել։ Իր բարեկամական նամակում նա գրում էր. «Էվլիյա էֆենդի, ինչո՞ւ վախեցաք և փախաք այն գիշերը։ Չգիտե՞ք, որ մեր երկրի վիճակը ի սկզբանե այդպես է եղել։ Ահա իմ կողմից ձեզ նվիրված ներկատան եկամտից[6] Ձեր մեծությանը ուղարկում եմ 200 ղուրուշ։ Աստծո անունով խոստանում եմ, որ որքան ժամանակ նվաստս՝ Աբդալ խանը, կենդանի է, ամեն տարի ձեր եկամուտը ձեզ կուղարկեմ։ Բարի աղոթքդ մի մոռանա»...

Այնուհետև Չելեբին նկարագրում է Մանազկերտի բեյի ցույց տված արտակարգ հյուրասիրությունը և պատիվները։ Այստեղից նրանք ուղևորվում են դեպի հյուսիս և անցնում Կազ-քյոյի միջով, որը մի լճի եզերքին ընկած, 500 տնից բաղկացած մի գյուղ է։ Լիճը շատ հարուստ է կարմրախայտ ձկով։ Այստեղ սագեր և բադեր շատ են լինում, որի համար էլ լիճը կոչվել է Կազ-գյոլի[7]։ Ապա անցնելով Էնբեր-Բաբա սուլթանիի ուխտատեղիով՝ իջևանում են Խնուսի բերդում։ Բեյի հրամանով Խնուսից 5—6000 ռայաների ուղարկում են ճանապարհը ձյունից մաքրելու։ Այնուհետև կանգ են առնում Աղըը-աշըք մաղարա[8] անունով գյուղում, որն Արաքս գետի ափին ընկած բարեշեն գյուղ է։ Գյուղացիների բոլոր կենդանիները ամառ-ձմեռ պահվում են քարայրներում, որոնք ամռանը հով, իսկ ձմռանը տաք են լինում... Ապա անցնում են Ալթուն Հալքալի կամրջով։

Այս հսկա կամուրջը կառուցված է Արաքս գետի վրա և մի բարձր ժայռից ձգվում է դեպի մյուս ժայռը։ Կամուրջը ծիածանի գոտու է նման և շատ հազվադեպ կամուրջ է։ Տաղանդավոր վարպետը կամրջի կամարի ամենաբարձր կետից մաքուր ոսկուց մի մեծ օղակ (հալքա) է կախել։ Այդ օղակի պատճառով էլ կամուրջը կոչվում է Հալքալի։ Նպատակը այն է, որ եթե ժամանակի ընթացքում կամուրջը քանդվի, այդ ոսկյա օղակի արժեքով վերանորոգվի այն։ Բազմաթիվ քուրդ ավազակներ փորձել են այս բերդին տիրանալ, բայց մահացել են։ Իսկ կամուրջի մոտի բնակիչները պահպանում են այդ օղակը։

Այս կամրջի տակով հոսող Արաքս գետը սկիզբ է առնում Բինգյոլի լեռներից և հոսելով Մանազկերտի բերդի մոտով, անցնում է Խնուսի բերդից 3 ժամվա հեռավորության վրա գտնվող Չոբանի կամրջի տակով, ապա հարյուրավոր գյուղերից ու ավաններից հոսելով՝ Երևանի բերդի մոտ խառնվում է Զանգի գետին, իսկ Զանգի գետը Կուր գետին է խառնվում (?) և թափվում է Խազերի ծովը[9]։

Հետո նրանք անցնում են Բասենի դաշտի գյուղերով և կանգ առնում Հասան Աբրադ բերդում։ Այդտեղից շարժվում են դեպի արևմուտք և իջևանում Ջաֆեր Էֆենդի գյուղում։

Տերը՝ Ջաֆեր էֆենդին, էրզրումի գրողներից է։ 300 տնից բաղկացած հայկական գյուղ է... Այդ ցրտաշունչ ձմռանը հենց որ մտանք հայերի տները, կարծես թե հավերժական կյանք ստացանք։ Էրզրումի բոլոր տների տանիքները շինված են նավի կայմերի նման փայտերից, որոնք գերան են կոչվում։ Ջամի շատ ծանր փայտեր են. այդ գերաններն իրենց տներում շարում են ծիծեռնակի թևերի նման։ Բոլոր ռայաների տները բաղնիքի պես տաք են։

Տան տանիքի կենտրոնում ծխնելույզի նման բաց տեղ կա (երդիկ), իսկ տան մեջտեղում փորված թոնիրներում կենդանիների աթար են վառում և այդ թոնրի մեջ գաթա, հարիսա, քյուլումբի (?), լախշա, կերփալ, ապուր, սխտորով խարխանայի ապուր, թանապուր են եփում ու բոլոր եկող-գնացողներին առատորեն կերակրում։ Այս վայրերը վերին աստիճանի բերքառատ են։ Տնամեջի բոլոր կողմերում գոմեշներ և կովեր են կապված։ Նրանց շնչառությունից տները բաղնիքի նման տաքանում են։

Այնուհետև, հանդիպում են Էրզրում, Երզնկա և անցնելով մի շարք գյուղերով ու քաղաքներով, նրանք կանգ են առնում Թոքաթում։

Թոքաթի բերդը։ Արաբ, աջեմ, ռում և հայ պատմագիրների[10] վկայությամբ Թոքաթի բերդը Ռումի երկրում է։ Պատմագիրների կարծիքով առաջին հիմնադիրը Ամալեկե ցեղից մեկը՝ Ամասիայի բերդի կառուցող Դուկ-Ադ անունով անձնավորությունն է։ Այստեղի բնակիչները սկզբում ապրել են քարայրներում։ Ներկայումս այստեղի քարայրներում մարդ կորչում է։ Հետագայում, երբ ժողովուրդը բազմացել է, քարայրներից դուրս են եկել այս բարձր լեռան վրա և սրբատաշ քարերով հնգանկյունի մի պարիսպ են կառուցել, որը Ամասիա բերդի նման ամրակուռ և անառիկ մի բերդ է։ Ժամանակի ընթացքում մի պետությունից անցել է մի այլ պետության ձեռքը։ Հիջրեթի 567 (1171) թվականին Ալ-Սելջուքիներից մեկը՝ Էլմելիք ուլ-Ազիզ Կըլըչ Արսլան Շահ իբն-Մասուդը, այս բերդը սրի ուժով գրավել է կայսրից և ոչնչացրել է այստեղի քյաֆիրների և անհավատների ցեղը։

Այնուհետև, Կոնիայի սուլթան Ալաէդդինի ժամանակ, Սելջուքյան պետության անկումից հետո, ռումերը առիթից օգտվելով, նորից գրավում են այս բերդը։ Այդ դարում, օսմանցիների երևան գալու ժամանակ, Էրթուղրուլին և Օսմանջղին օգնելու համար, Հաջի Բեկթաշ Վելի Խորասանին[11], մեր մեծ նախահայր, թուրքերի թուրք խոջա Ահմեդ Եսևիի հրամանով գալիս է Ռումի երկիրը։ Երբ մոտե-

նում է Թոքաթի բերդին, բոլոր քյաֆիրները դիմավորում են նրան և քաղաքից դուրս, Սյունբյուլլի անունով հայտնի այգու մեջ նրան մեծ պատիվ ու հարգանք են տալիս։ Վեհափառ Բեկթաշը քյաֆիրներից պահանջում է բերդը, սակայն նրանք չեն տալիս։ Նա ասում է. «Աստծով, մոտ ժամանակներս Յըլդըրըմի նման մի քաջ անձնավորություն երևան կգա և բերդը կգրավի»*։ Այնուհետև Սյունբյուլլի կոչված վայրում թողնում է իր մի խալիֆային, որը ներկայումս հայտնի է Սյունբյուլլի բաբա անունով ու բացառիկ արժանիքների տեր անձնավորություն է եղել և ներկայումս թաղված է այնտեղ։

Այստեղից (Բեկթաշը) գնում է Կարամանի երկիրը և այնտեղ տեսակցություն է ունենում Խորասանի անվանի մարդկանց՝ վեհափառ Սուլթան ուլ-Ուլեմայի և վեհափառ Մևլանայի հետ։ Որոշ ժամանակ անց, երբ Սելջուկյան պետությունը 600 թվականին կործանման եզրին էր, նորից Մևլանայի ու Հաջի Բեկթաշի օժանդակությամբ Էրթուղրուլի պետությունը կարճ ժամանակամիջոցում ուժեղանում է և մի շարք նվաճումներից հետո, Սեկյուտջիք անունով գավառաքաղաքում նա պետության ղեկավարությունը հանձնում է իր որդուն՝ Օսման խանին, որը փող կտրելու իրավունքով և խութբեով անկախություն է ձեռք բերում։ Հետո Հաջի Վելին Կըր Շեհիրում ուղևորվում է հավիտենական աշխարհը։ Ավելի ուշ, նրա մարգարիտի նման խոսքը իրականանում է։ (Սուլթան) Յըլդըրըմ խանը Թոքաթ քաղաքը պաշարում, թշնամու ձեռքից գրավում է 795 (1393) թվականին և միացնում Օսմանյան պետության կալվածներին։ Դարձյալ նույն ժամանակաշրջանում Ադրբեջանի կարակոյունլի Կարա-Յուսուֆը Թիմուրից փախչում է Յըլդըրըմ խանի մոտ և փակվում Թոքաթի բերդում։ Թիմուրը մեծ բանակով գալիս և սկսում է գնդակոծել Թոքաթը, սակայն մի քար անգամ չի կարողանում տեղից շարժել և խայտառակ ու հուսահատված ետ է վերադառնում։ Թիմուրը Յըլդըրըմ խանից պահանջում է Յուսուֆ Ջելայիրին, սակայն մերժում է ստանում, որի հետևանքով Յըլդըրըմի և Թիմուրի միջև թշնամություն է ծագում և պատճառը լինում է Յուսուֆ Ջելայիրի Թոքաթում ապաստան գտնելը։ Ի վերջո, երբ Թիմուրը Յըլդըրըմ խանին պարտության է մատնում, Յուսուֆը

---

* Այս տողերը արհամարհական ժպիտով չպետք է կարդալ։ Պետք է նկատի ունենալ այն ժամանակը և այն միջավայրը։ Այդ ավանդությունը այսօր էլ շատերի միտքը զբաղեցնում է։ Հարդելի ուղևորը ինչարկե գրում է այն, ինչ որ լսել է։ Այդ պատճառով էլ նրան չպետք է դատապարտել (ծանոթ. հրատարակչի)։

Թոքաթից գնում է Եգիպտոս՝ չերաքեսների մոտ։ Իսկ երբ Թիմուրը սատկում է, Յուսուֆ Ջելայիրը նորից սկսում է իշխել, Թիմուրի շեհզադեների մեջ խռովություն է առաջացնում, երեքին էլ սպանում է և այդպիսով իր վրեժը լուծում։ Մի խոսքով, Թոքաթի բերդը Թիմուրից սկսած պաշարել են մի քանի հարյուր ջելալիներ և ջեմալիներ, բայց նրա պարիսպների ամրակուռ քարերի մի փոքր մասն անգամ չեն կարողացել պոկել և խայտառակ կերպով ետ են վերադարձել։ Ահա այս աստիճան ամուր և անառիկ բերդ է։

Թոքաթի բերդի տեղն ու նկարագիրը: Երբ (սուլթան) Յըլդըրըմ խանը գրավում է այս բերդը, պատմագիրները նրան անվանում են Դար-ուլ Նեսր։ Սակայն մոնղոլական լեզվով Սուբարո են կոչում (**բարո**՝ նրանց լեզվով բերդ է նշանակում)։ Արաբստանում այս բերդը Դուկաթ է կոչվում։ Արաբստանում բակլայի նման **թերմես** անունով մի բանջարեղեն կա, որը ալյուրի վերածելով՝ օգտագործում են որպես օճառ և ձեռքեր են լվանում ու մաքրում։ Սա կոչվում է դուկաթ։ Աջեմների լեզվով քանջուհ է կոչվում, որ նշանակում է գարու վիլայեթ։ Եվ իսկապես, գարին, Կարամանի երկրի գարու նման մաքուր է ու առատ և այդ պատճառով աջեմները Թոքաթի և Սվազի երկրները Արփա-չուքուրի են կոչում։ Հայերը այս քաղաքին Թոխաթ են ասում։

Հին և մեծ քաղաք է։ Թուրքերը հնում **Թոք-աթ** (կուշտ ձի) են կոչել։ Բերդը կառուցված է մի բարձր ժայռի վրա, ամրակուռ սրբատաշ քարերով, բայց շատ մեծ չէ։ Շրջագծի երկարությունը 1060 քայլաչափ է։ Ամեն կողմից ամրացված է աշտարակներով, պատնեշներով ու պատերով, բայց շրջապատում խրամներ չունի։ Անմատչելի և անառիկ բարձր պարիսպը խոյացած է դեպի երկինք։ Չորս կողմում դժոխային անդունդ է և խրամների համար բոլորովին տեղ չունի։ Արծվի և բազեի բներով ծածկված ամեն կողմ նայող մի դարպաս ունի։ Պարսպի ներսում գտնվում են բերդապահի բնակարանը, քեթխուդայի, իմամի, մյուեզզինի և բերդի նվագախմբի բազմաթիվ սենյակներով տները։ Ունի նաև հացահատիկի ամբարներ, ջրի ավազաններ, Ջեյլանի ճանապարհ անունով ջրի ճանապարհ, որը 362 աստիճան ունեցող քարե սանդուղքով իջնում է դեպի գետը... Մեկ ժամում քչերը կկարողանան բարձրանալ դեպի երկինք խոյացած այս բերդը։ Այդ պատճառով էլ դռները մշտապես փակ են։ Բերդապահները շարունակ պահակություն են անում։ Նրանք զինված ու պատրաստ վիճակում են, որովհետև ցածում ապրող քաղաքացիների բոլոր թանկագին ապրանքները

70—18

պահվում են բերդում։ Թոքաթի բոլոր ոճրագործներն ու մարդասպանները կալանավորված են այս բերդում, որի բանտը նման է Երուսաղեմի և Աջեմի Քահքահա բերդերին։ ...Թոքաթի բերդում կուտակված ռազմամթերքը ոչ մի բերդում չկա։

Թոմաք քաղաքի իշխողները: *(Սուլթան) Սուլեյման խանի աշխարհահամարով Սվազի էյալեթում առանձին սանջաքի բեյություն է եղել: Հետագայում, 1026 (1617) թվականից, Վալիդե սուլթանների[12] կայսերական խասն է եղել և ներկայումս, ամեն տարի, 1000 բեռ ակչեով իլթիզամի է տրվում: Այստեղ իշխում է 500 ձիավորով մի վոյվոդա, որը հավաքում է փադիշահական եկամուտը և Ստամբուլ ուղարկում: Բարձր հյուքումեթ է և քաղաքացիներն ազատված են բոլոր սովորական տուրքերից։ Շարիաթի դատավորը 500 ակչեի աստիճանով մոլլա է, և իր իշխանության ենթակա գյուղերից տարեկան շատ մեծ եկամուտ է ստանում: Ունի առանձին մյուֆթի։ Ունի նաև նաքիբ, սիփահիի քեթխուդա, ենիչերիի սերդար, բերդապահ և բերդի պահապաններ, քաղաքի նաքիբ, քաղաքի մյուհթեսիբ, քաղաքի քեթխուդա, խարաջի աղա, մաքսատան էմին և փողերանոցի էմին։ Քանի որ այս քաղաքը նախկինում եղել է սելջուկների կենտրոնը և դանիշմենդների մայրաքաղաք, արժանացել է (սուլթան) Յըլդըրըմ Բայազիդի համակրանքին։ Ինձ հայտնի է, որ այստեղ փող է կտրվել այսպիսի դրոշմով—*عز نصره ضرب فی توقات

Այնուհետև, Էվ. Չելեբին նկարագրելով այս քաղաքի ջամիները, հատկապես կանգ է առնում Ջինջիրլի ջամիի վրա, որի մասին գրում է. «...Այս լուսավոր ջամիի տերիտորիայում է թաղված Վրաստանի արքա Մարուլ (կամ Մարալ) խանի աղջիկ Փերիխանը, որ եղել է Իրշիր փաշայի կինը և աշխարհի գեղեցկուհիների՝ Զելիխայի, Կիզոֆեի, Բյուլկեյսի և Կլեոպատրայի նման մի փերի է եղել»։

(Էջ 39—58)

Փերիխանի մասին Էվ. Չելեբին հիշատակում է նաև հետևյալ դեպքը։ Սուլթան Իբրահիմ խանը Վարդար Ալի փաշայից պահանջում է իրեն տալ այդ գեղեցկուհուն։ Փաշան այդ պահանջը համարելով ապօրինի և շարիաթին հակառակ, մերժում է և Փերիխանին բանտարկում է Թոքաթի բերդում։ Գեղեցկուհին հավանաբար այնտեղ էլ մահանում է։

Ապա Չելեբին մանրամասնորեն նկարագրում է մեսջիդները, մեդրեսեները, թեքիյեները, աղբյուրները, թաղերը, ապարանքները և այլն։

Առևտրական խաները: *Բոլորը քարուկրե կամարներով, բերդի նման ամուր խաներ են։ Դյորմեջիների շուկայում է Դալ խանը, ենիչերիների աղա Յազլի աղայի խանը, Աթ-բազարում է Աբդյուլ Ռահման-Բիշիի խանը, Վարդան-օղլիի խանը. այս վերջինը կա-*

ռուցել է այդ անունով մի հայ, որտեղ իջևանում են բոլոր աջեմ վաճառականները...

Բեդիստանը և խանութները: Գեղեցիկ է աճուրդի բազարը: Այս քաղաքը թեև բլրոտ և ձորոտ մի վայրում է կառուցված, սակայն վերին աստիճանի բարեշեն է և հարուստ: Շուկան ու բազարները խիստ բարեկարգ են և առատ: Աճուրդի շուկան, Հալեպի և Բրուսայի շուկաների նման կառուցված է շատ կանոնավոր և հարմար ձևով: Բերդի մոտի շուկան նույնպես բարեշեն է և բազմամարդ: Սրճարանները այնքան բարեկարգ են, որ վիշտ ունեցողը կփարատի իր վիշտն այս սրճարաններում: Այստեղ լինում են առակախոսներ, ղաղել կարդացողներ, բանաստեղծներ և երգիչներ...

Էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրելով Թոքաթի բաղնիքները, ավելացնում է, որ ըստ քաղաքի երևելիների, միայն այանների և ազնվականների համար 1045 բաղնիք կա, որի համար պարծենում են...

...Թեև փոքր քաղաք է, բայց տարածված է ութ բլուրների, ձորերի, հարթությունների ու ժայռերի վրա, և ունի 2—3 հարկանի ապարանքներ և այլ հիանալի տներ, որոնց բոլորի պատշգամբները նայում են դեպի հյուսիս և արևելք: Լեռների վրա մեկը մյուսից բարձր կառուցված օդավետ, քարուկրից, կարմիր կղմինդրով ծածկված բազմաթիվ և գեղեցիկ տները այս քաղաքին տալիս են յուրօրինակ տեսք: Ստորին քաղաքի շուրջը վարոշի պարիսպներ չկան, բայց ամեն կողմից դարպասներ ունի և ջելալիների ու ջեմալիների հարձակումներից ապահովված է:

Թոքաթի կարևոր վայրերը: Այս հնագույն քաղաքում բազմաթիվ հոյակապ և դիտելու արժանի շինություններ կան, օրինակ Քերզելիք լճի կամուրջը, որը հոյակապ ճարտարապետական մի կառուցվածք է: Թոքաթի բերդի դիմաց Աք Սու-բայիրի անունով մի բարձր ժայռ կա, որի ամենաբարձր գագաթին մի քանի տարի է, ինչ կենարար մի տաք աղբյուր է երևան եկել: Բարեգործ մարդիկ այս ջրի վրա կամուրջներ են գցել և այն դարձել է հիանալի ավազանով ջերմուկ: Քաղաքից դուրս Քեմեր-քյոփրյու անունով մի կամուրջ կա, որը հայտնի մեծ կամուրջ չէ: Տարօրինակն այն է, որ կամրջի տակով այս երկրում Իչմե-սույու անունով հայտնի աղի ջուր է հոսում: Ամեն տարի, հուլիս ամսին հազարավոր հիվանդ մարդիկ սոված վիճակում խմում են այս աղի ջրից և ստամոքսը մաքրում... սիրտ են թափում և 7 օրից հետո մարդու մարմինը բուժվում է բոլոր տեսակի հիվանդություններից: Այնքան օգտա-

կար ջուր է, որ գյուգյումներով[13] նվեր են տանում գյուղերին և քաղաքներին...[*]

Ծերերի և երիտասարդների դեմքն ու գույնը: *Ժողովուրդը ընդհանրապես կարմրավուն է։ Շատ երկար են ապրում, մինչև 100 տարեկան ապրողներ էլ կան։ Անգամ այդ հասակում աշխատում են։ Աղջիկները գեղեցիկ են և հաճելի, նրանց խոսակցությունը քաղցրահնչուն է, ատամները մարգարիտի նման։ Բոլորը խստորեն ծածկվում են և պարկեշտ ու առաքինի խաթուններ են։*

Այս քաղաքը թեև ընկած է 7—8 ձորի մեջ, սակայն հյուսիսային քամու կողմը բաց է և այդ պատճառով օդը շատ հիանալի է, ձմեռը մեղմ, պտուղները շատ առատ, ժողովուրդը շատ առողջակազմ...

Եկեղեցիները: *Քաղաքի Դաշ-Ներդիպանի վանքը ռումերին է պատկանում։ Բերդի մոտ մի վանք կա, քաղաքում՝ Բյոյուք-Թեփե թաղում՝ Կաթնապուրի վանքն է. կաթով պատրաստված ապուրը հայերեն կոչվում է կաթնապուր։ Վերևում հիշված քարի ճեղքից հոսող կաթից այս եկեղեցում կաթով ապուր են եփել և այդ պատճառով եկեղեցին կոչվել է Կաթնապուրի։ Շատ հին վանք է։ Քաղաքի հարավ արևելքում է գտնվում Հաչ լեռան վանքը, իսկ հյուսիսում Մուհամմեդ էջիբի մոտ ևս մի վանք կա։ Քերքուշ անունով՝ քաղաքին նայող վանքանման մի վայր կա, ուր գնում են քյաֆիրները և մի քանի հիմար մուսուլմաններ և ուխտ անում, նվերներ տալիս, որը պարզապես տգիտություն է...։ Այս քաղաքում ֆրենգ և կրբգի չկա, սակայն ռայաները բավականին շատ են և բոլորը հայեր ու հրեաներ են, վաճառական աջեմներ էլ կան։*

Կարևոր արհեստները: *Այստեղի սպիտակ և փափուկ բեզը, ապակու քարերը անգամ Լահուրի երկրում[14] չեն պատրաստվում։ Շատ հայտնի են ոսկու նման փայլուն, ծաղկազարդ վերմակի երեսները, վարագույրները, պղնձագործների պատրաստած կաթսաները և սահանները։*

Ժողովրդի զբաղմունքը: *Մի մասը վոյվոդային ենթակա պաշտոնյաներ են, մյուսները ուլեմա, սյուլեհա և էվկաֆի ծառայողներ, մնացածները հարուստ վաճառականներ են, իսկ ժողովրդի մեծամասնությունը այգեպաններ և երկրագործներ են։*

---

[*] *էվ. Չելեբիի, այդ ուշիմ ուղևորի, ամենուրեք հանքային ջրերի մասին տված պարզամիտ տեղեկությունները, անգամ ջրերի բաղադրությունը որոշելու համար բավարար համոզեցուցիչ կարող են համարվել, որոնք ներկայումս էլ արժանի են ուշադրության (ծանոթ. հրատարակչի)։*

Բերբերը: *Յոթ տեսակի ցորեն կա։ Գարին լավ որակի է և շատ առատ։ Բակլան, ոսպը և այլ ընդեղենը նույնպես շատ առատ են։ Հայտնի է հյութալի պտուղներից պատրաստված խոշաբը։*

Այնուհետև Լվ. Ջելերին նկարագրում է Թոքաթի բազմաթիվ զբոսավայրերը։

Ժողովրդի հատուկ բարբառը: *Թեև ռումի երկիր է, սակայն ժողովուրդը և ռայաները իսկական թուրքեր են։ Ունեն իրենց հատուկ բարբառը, բայց քաղաքի թե հասակավորները և թե երիտասարդները խոսում են մաքուր թուրքերեն և հայերեն... գիշեր-ցերեկ շփման մեջ են հայ ռայաների հետ։ Ուլեմաները ծանոթ են իսլամական իրավունքին, օրենքներին, սակայն պարսկերեն բոլորովին չգիտեն։*

Թոխաթի շրջակայքում հոսող գետերը: *Թոքաթ քաղաքի մոտով հոսում է Թուղանլի գետը, որը սկիզբ առնելով քաղաքի մոտ գտնվող Թուկաթի և Թուղանլի լեռներից, անցնում է բերդի առջևից և հին Իյնե բազարից, հետո շրջանցելով Կազի-գյոլը ու Թուրհալ գյուղաքաղաքը և հոսելով Ջենկելլի-բելով, Դարվի-կարի և Գեյլան կամուրջների միջև խառնվում է Ջեքիրկե գետին։ Երկու կամուրջն էլ կառուցված են քարուկրով։ Այդտեղից անցնում է Ֆիրհատ-բողազիով և մտնում է Ամասիա։ Այս նկատի ունենալով, թոքաթցիները ամասիացիներին ծաղրելու համար՝ իբրև ժողովրդական ասացվածք, ասում են. «Թոքաթը ապականում է, Ամասիան խմում է»...*

Ամասիայից հետո Թուզանլի գետը ստանում է Ջհարշամբա անունը և ոռոգելով մի շարք գյուղերի ու քաղաքների ցանքսերը, Սամսուն բերդից արևելք՝ թափվում է Սև ծովը։ Թուզանլին ունի մի շարք վտակներ։

Թոխաթին սահմանակից խաղաքները: *Արևելքում Ենի Շեհիրն է և մեկ մենզիլ հեռավորության վրա է։ Սվազ քաղաքը հեռու է մեկ մերհալեով։ Սվազի և Թոքաթի միջև Արա Յաթին է։ Զիլե քաղաքը Թոքաթի հյուսիս-արևելքումն է։ Թուրհալի և Ամասիայի բերդերը Թոքաթի հյուսիսումն են, որտեղից ճանապարհը գնում է դեպի Արա Յաթի։ Մարզվանը և Կյումյուշը նրանցից հեռու են մեկ կոնաքով։ Թոքաթի արևմտյան կողմում, Արա Յաթիի տերիտորիայում գտնվող Զորում և Կազ-օվա գավառներն են։ Թուրհալի բերդից մինչև Զիլեի բերդը մեկ կոնաք է։ Իսկ Իսքիլիբ բերդը ավելի հեռու է։*

Լրացում Թոխաթ խաղաքի մասին: *Այս հիանալի, օդասուն քաղաքի չորս կողմում տարածված ծառազարդ այգիների և բանջա-*

րանոցների միջով հոսող հիանալի ջրերը ոռոգում են դրախտանման պարտեզներ, որտեղի սոխակների դայլայլն ու երգը զմայլում են մարդու հոգին։ Պտուղները խիստ առատ, ընտիր և համեղ են, և որպես նվեր ուղարկվում են ամենուրեք։ Քաղցրությունը և թարմությունը կարծես մշտական են և օրերով նրանց համն ու հոտը չի անցնում։ Յուրաքանչյուր այգում տեսակ-տեսակ քյոշկեր և բխող աղբյուրներով ավազաններ կան, որոնք զարդարված են բազմատեսակ ծառերով։ Բնակիչներն ընդհանրապես զբոսասեր, ուրախ, օտարասեր, անհոգ, քաղցրալեզու, հանգիստ ու առաքինի մարդիկ են և որովհետև վաճառականներ են՝ բոլորին լավ վերաբերմունք են ցույց տալիս։ Հակամետ են բարեգործական հիմնարկություններ կառուցելու և բարեգործությամբ զբաղվելու։ Ջամիները, ապարանքները և մյուս շինությունները շատ ամրակուռ են և գեղեցիկ։ Նրանց ջամիները մտնելիս մարդ զմայլվում է։ Այս քաղաքի շենքերի նման մաքուր ու գեղեցիկ են միայն Հալեպի շենքերը։ Վարպետ երկրաչափները գործադրել են իրենց ամբողջ կարողությունը և քաղաքի շենքերը կառուցել են Ամասիայից ավելի գեղեցիկ և վարպետորեն։ Շենքերի պատերը զարդարել են բուքալեմուն նկարներով։ Քաղաքի բնակիչները վերին աստիճանի վեհանձն են ու շինարար և այդ պատճառով էլ քաղաքը օրեցօր ավելի է բարեշինվում։ Քաղաքի տեղը ընդարձակ է ու բերքառատ և կարծես աշխարհում նրմանը չունի։ Վեհափառ Բեկթաշիի բարի աղոթքների շնորհիվ ժողովուրդը մշտապես անթիվ բարիքների մեջ է։ Այս հին քաղաքը ուլեմաների, ֆուզելաների և բանաստեղծների կենտրոնն է ու բնակավայրը։ Ուլեմաները փիլիսոփայության մեջ շատ էլ հմուտ չեն, սակայն դիտեն Մուհամմեդի ավանդությունները՝ Իլմի-հադիսը[15], իսլամական իրավունքը և կանոնները։ Բոլորը շատ կրոնասեր, հավատացյալ մարդիկ են։ Բեյերն ու հասարակ մարդիկ, բոլորը՝ եկող գնացողներին առատորեն հյուրասիրում են...

Այնուհետև Էվ. Չելեբին նկարագրում է Թոքաթի մուսուլմանական ուխտատեղիները։ Թոքաթից նա մեկնում է Ստամբուլ։

(էջ 58–75)

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ*

Книга III.

ЭВЛИЯ ЧЕЛЕБИ

(Р е з ю м е)

В томе приводятся материалы из десятитомника турецкого путешественника XVII в. Эвлия Челеби, касающиеся истории армянского и соседних с ним народов Закавказья.

Во время своего более чем сорокалетнего путешествия Челеби почти всегда находился на государственной службе и имел особые поручения: иногда он действовал как духовное лицо—имам или муэдзин, иногда как сопровождающий высокопоставленных лиц—в качестве секретаря или собеседника, или как секретарь-сборщик налогов, нарочный посланец.

Благодаря этим должностям и поручениям его принимали с почетом как в Турции, так и в соседних странах, что облегчало его путешествие и давало ему доступ во все правительственные учреждения, дворцы высокопоставленных лиц и в крепости, имеющие военное значение. Ему было разрешено знакомиться со всякими документами и памятниками.

В отдельной статье приводятся сведения о жизни и деятельности Эвлия Челеби. Труды этого «известного кругосветного путешественника» в течение многих лет оставались вне поля зрения турецкой историографии и не были напечатаны, в то время как на Западе они были удостоены внимания и изу-

* III книга сборника «Турецкие источники об Армении, армянах и других народах Закавказья» входит в общую академическую серию «Иностранные источники об Армении и армянах», как четвертый том указанной серии.

чения (Фон-Гаммер и др.). И только в конце XIX—начале XX в. в Турции были опубликованы первые шесть томов книги путешествий Эвлия Челеби, позже—остальные тома. Из советских востоковедов труды Эвлия Челеби были изучены академиком И. Крачковским и В. Бартольдом. Они отметили особое значение этих трудов, их историко-географическую, лингвистическую, этнографическую и археологическую ценность, как источник для изучения жизни, культуры и быта народов Ближнего Востока. В предисловии отмечается также, что некоторые тома Эвлия Челеби были переведены на европейские языки и в последнее время—на русский язык, что во II, III, IV и V томах имеется очень богатый и ценный материал о социально-экономическом положении, жизни и быте армянского и соседних с ним народов Закавказья.

* * *

Том I—целиком посвящен Стамбулу. В молодые годы Челеби объезжает Стамбул и его окрестности, изучает достопримечательные места, дворцы, строения, культурные памятники доосманского и османского периодов. От его внимания не ускользают имеющиеся в Стамбуле и в его окрестностях минеральные руды и воды. Особое место он уделяет также административно-военным и экономическим законоположениям султанов Мухамеда II Фатиха и Сулеймана—Законодателя, которые определяли военно-феодальный строй Османской империи, а также условия жизни армянского и других народов Закавказья. В этом томе освещены политические и военные события, связанные с деятельностью султанов Сулеймана, Селима II, Мурада III, Османа II и Мурада IV. Здесь же говорится о населении Стамбула, его сословиях, ремесленниках, приводятся цифровые данные. Много места уделено всеобщей переписи, проведенной по ферману султана Мурада IV в 1638 г., согласно которому переписи подлежали мечети, церкви, учебные заведения, ханы, бани, карвансараи, дворцы, источники воды, исламские, христианские и еврейские кварталы, благотворительные учреждения и т. д. На основании упомянутого фермана, в течение трех месяцев в Стамбуле проводилась всеобщая перепись, в результате которой был состав-

сарии, находится благоустроенный и заселенный новый город—Новая Кесария». Челеби описывает улицы, мечети, дворцы, многочисленные лавки, богатые урожаи, благосостоятельность и быт населения... Образованные жители города разговаривают на персидском и арабском языках.

Из Кесарии Челеби прибывает в Сваз (Себастия). Приводя сведения о прошлом этого города, он отмечает: «Сваз перешел к османцам в период правления султана Елдырым-Баязида. Во время похода Тимура город подвергся большим разрушениям. Тимур вырезал около семидесяти тысяч жителей и улемов города». Далее Челеби отмечает обилие урожаев и чрезвычайную дешевизну: «1 кила пшеницы приносит 40 кила урожая, 1 ока (1 кг. 225 г.) хлеба и 6 ока корма лошадей стоят 1 акча» и т. д. Город приносит султану доход 1100 киса (киса—500 куруш) в год, доход везиря составляет 200 киса.

По пути в Диарбекир Челеби упоминает о городах Диврики, Эгин (Акп), Арабкир и особенно о г. Харберд. Здесь он приводит несколько необоснованных этимологий и легенд о происхождении названия Харберд. В их числе Челеби упоминает следующую легенду: «Несколько христианских народностей имели своим культом осла, почему этот город по-персидски был назван Дари-Харбут». Очень вероятно, что легенда о культе осла берет свое начало со времен тотемизма. Не имея понятия о тотемизме, Челеби культ осла бессознательно приписывает христианским народам. Говоря об озере Харберда, Челеби вновь возвращается к этому вопросу и пишет: «В озере имеется один остров, где построен монастырь, в котором похоронен осел, возведенный в культ. Патриарх и монахи бальзамировали тело осла и мумию его положили в монастыре».

Из Харберда Челеби направляется в Пертек, Чимышкацак, Палу, Чапакджур, Гянджу, Атак, в долину города Муш, который в этот период входил в эйалет Вана. Приведя сведения о Муше, он упоминает легенду, касающуюся горы Супан (Сипан). «Здесь закован семиглавый великан, голос которого слышен один раз в 40—50 или 70—80 лет, в течение 5—10 дней показывает свой хвост..., однажды он освободился и съел всех немрутов и уничтожил жителей Муша. По этой причине город был назван Муш (по-персидски муш означает мышь)». Челе-

возвращения Султана-Махмуда IV—в 1045 (1635 г.) аджемы вновь захватывают Реван, «благоустраивают и укрепляют его». В городе имеется «2060 домов с земляными крышами, особенно благоустроен ханский дворец».

Направляясь в Баку, Челеби останавливается в большом городе Гянджа, «потом описывает» города Арш (Ареш), Шаки, Ниазабад и другие. Челеби упоминает о горе Альберс (Эльбрус), «одной из самых высоких гор, половины высоты которой даже никто не сумел достичь» (стр. 294). Далее приводятся сведения о крепости Шамахи, упоминается, что там имеется сорок ханств, сорок нахие, семьдесят крепостей и около 1300 благоустроенных сел.

Особое внимание уделяется г. Баку и нефти: «около города в семи местах имеются нефтеносные места, в которых нефть разного цвета—желтого, красного, черного... Население нахие (района) употребляет для светильников черную нефть... В нахие Баку имеются такие солончаковые места, где человек и лошадь, ступив на землю, могут обжечь ноги..., погонщики караванов спускают в вырытые ямы котлы и моментально варят пищу... Нефть у моря и в районе Мескета кипя, выходит из-под земли. Добычей нефти занимается особое управление (эманат), которое приносит шаху доход в семьдесят тысяч туманов... Нефть собирают из нефтяных луж в бурдюки и везут в страну аджемов, узбеков, в Индию, Ирак, Курдистан, Грузию, Алосман и в другие страны, где крепости и дворцы освещаются лампадами, наполненными этой нефтью».

Далее описывается крепость Баб-эль-Эбв (Дербент), которая по словам автора «построена Александром Македонским и имеет большое военное значение... Здесь проходит через дагестанские горы до Черного моря трехслойная стена, протяженностью в семь конак (однодневный путь)».

Из Дербента Челеби направляется в Грузию, проезжает Кахетию и останавливается в Тифлисе, где его внимание привлекают крепости и горячие воды такой температуры, «что в них можно сварить баранью голову и ноги... На обоих берегах Куры имеются Большая и Малая крепости, соединенные мостом». Говоря о роде грузинских царей, Челеби приводит легенду о происхождении двенадцати племен, говорящих на раз-

ных языках. Проехав крепость Азгур, Челеби приезжает в Ахалцих, знакомится с крепостью Члдир и Ардаган.

В 1057 г. (1647) Челеби вторично приезжает в Реван (Ереван), по пути останавливается в Карсе, подробно описывает крепость, упоминает о крепости Кахзван, где, по его словам, добывают соль и камень «вире», который используется в медицине и идет на изготовление мельничных жерновов. Из Ревана, Челеби опять направляется в Эрзерум, по пути останавливается в Шорагале, «известном своими музыкантами и задушевными песнями, именуемом Шорагер». Из Эрзерума Челеби по фирману падишаха направляется в Байбурт, Гюмушхане, Гортум и Акчакала и приводит о них интересные сведения.

Том III. В 1057 г. (1647) возобновив свое путешествие, Эвлия Челеби из Стамбула направляется в Шам (Дамаск) По пути он останавливается в различных городах, в том числе в Адане. Челеби описывает крепость Аданы. Далее он проезжает через шестнадцатиарочный мост р. Сигун и прибывает в г. Мсис, «имеющий тысячу мастерских чоха». Крепость Мсис была разрушена испанскими кораблями.

Проезжая города Искендерун (Александретту), Антакия, Хама, Итам Челеби в 1059 г. (1648) присоединяется к османской армии, идущей в поход на Дурзистан, и прибывает в г. Мараш. Челеби приводит ряд легенд об одном из древних цезарей—Джим-Джиме, который был сказочно богат. Он пишет: «В городах и горах проживают туркменские племена, переселившиеся из Бухары и говорящие на двенадцати языках (наречиях). Из Мараша Челеби приезжает в Зюлкадерне—Карс, являющийся центром санджака (уезда). Отсюда он направляется в яйлу Гексун, где «проживает много туркменских племен». Челеби отмечает, что здесь имеется одно армянское село, именуемое Деирман-Богазы, в котором есть монастырь и пятьсот домов. Далее Челеби направляется в г. Кесария (Кайсари), о котором он дает довольно подробные сведения: «во время халифата Омера царь Херкие занял Кесарию и разрушил его, город и до сих пор находится в разрушенном состоянии. После многократного перехода города из рук в руки, им завладели ал-османы. На расстоянии восьми тысяч шагов от древней Ке-

сарии, находится благоустроенный и заселенный новый город—Новая Кесария». Челеби описывает улицы, мечети, дворцы, многочисленные лавки, богатые урожаи, благосостоятельность и быт населения... Образованные жители города разговаривают на персидском и арабском языках.

Из Кесарии Челеби прибывает в Сваз (Себастия). Приводя сведения о прошлом этого города, он отмечает: «Сваз перешел к османцам в период правления султана Елдырым-Баязида. Во время похода Тимура город подвергся большим разрушениям. Тимур вырезал около семидесяти тысяч жителей и улемов города». Далее Челеби отмечает обилие урожаев и чрезвычайную дешевизну: «1 кила пшеницы приносит 40 кила урожая, 1 ока (1 кг. 225 г.) хлеба и 6 ока корма лошадей стоят 1 акча» и т. д. Город приносит султану доход 1100 киса (киса—500 куруш) в год, доход везиря составляет 200 киса.

По пути в Диарбекир Челеби упоминает о городах Дивриги, Эгин (Акп), Арабкир и особенно о г. Харберд. Здесь он приводит несколько необоснованных этимологий и легенд о происхождении названия Харберд. В их числе Челеби упоминает следующую легенду: «Несколько христианских народностей имели своим культом осла, почему этот город по-персидски был назван Дари-Харбут». Очень вероятно, что легенда о культе осла берет свое начало со времен тотемизма. Не имея понятия о тотемизме, Челеби культ осла бессознательно приписывает христианским народам. Говоря об озере Харберда, Челеби вновь возвращается к этому вопросу и пишет: «В озере имеется один остров, где построен монастырь, в котором похоронен осел, возведенный в культ. Патриарх и монахи бальзамировали тело осла и мумию его положили в монастыре».

Из Харберда Челеби направляется в Пертек, Чимышкацак, Палу, Чапакджур, Гянджу, Атак, в долину города Муш, который в этот период входил в эйалет Вана. Приведя сведения о Муше, он упоминает легенду, касающуюся горы Супан (Сипан). «Здесь закован семиглавый великан, голос которого слышен один раз в 40—50 или 70—80 лет, в течение 5—10 дней показывает свой хвост..., однажды он освободился и съел всех немрутов и уничтожил жителей Муша. По этой причине город был назван Муш (по-персидски муш означает мышь)». Челе-

би, узнав об этой легенде от народа, истолковал ее по-своему.

Особый интерес представляют приводимые Челеби сведения о паломничестве в монастырь Сурп-Карапет (Чаклик-килисе) Муша. Хоть они несколько и преувеличены, но характерны: «Каждый день в монастыре в тысячах котлов дается обед паломникам, а в праздничные дни закалывают сто овец и пять коров, пекут 50 сомар (16 пудов) пшеничного хлеба. Каждый год из стран Руми, Араби и Арджема сюда приходят на паломничество тысячи людей. Они обедают и молятся здесь об исполнении своих желаний». Говоря об этом, Челеби добавляет, что эта вера бессмысленна.

Из долины Муша через яйла Бингёл Челеби вновь направляется в Сваз. Он пишет, что «эти яйла чрезвычайно богаты и в течение 7 месяцев сюда приезжает много народа, который зимой спускается в низменность». Путешественник приводит много сведений о жителях Бингёля, их хозяйстве, богатстве полезными ископаемыми, в особенности сурьмой, о цветах, растениях. Особо отмечает целебные свойства многочисленных озер и рек. В связи с Бингёлем, Челеби упоминает о многочисленных яйлах Анатолии.

В 1060 г. (1650) Челеби приезжает в Сваз и отсюда направляется в Стамбул.

Том IV. В 1065 г. (1654) Челеби начинает путешествие из Скюдара, по пути останавливается в Малатии. Он пишет: «Из-за этого города имели место тысячи боев, из османцев Малатию впервые занял султан Елдырым-Баязид. После него город перешел к Тимуру, который превратил его в свою зимовку. Однако султан Сулейман-Канони окончательно овладевает городом. Малатия имеет укрепленную крепость. Город благоустроен, окружен фруктовыми и цветочными садами. Зернопродукты и урожай очень обильны. Большая часть населения занята садоводством. Душистые яблоки и груши Малатии общеизвестны».

Из Малатии Челеби направляется в Эргани и останавливается в Диарбекире (Кара-Амед). Говоря о Диарбекире, Челеби упоминает о трудностях, созданных курдами в этих краях, вследствие чего султан Селим посылает туда стотысячную армию и занимает город, в котором зимует и чеканит де-

сять тысяч акча, их образцы можно было найти на полях Диарбекира. Далее Челеби упоминает о восьми «ердлуках» в «оджакликах», имеющихся в эйалете Диарбекир и о пяти «укюматах» в эйалете Амед, которые являются полузави-
«укюметах» в эйалете Амед, которые являются полузависимыми. Челеби дает описание дения о сильно укрепленной крепости Диарбекир, Челеби говорит: «Крепость подобна китайской стене, каждая ее башня является как бы крепостью». Челеби упоминает также о многочисленных строениях, образе жизни, ремеслах и быте народа.

Из Диарбекира Челеби направляется в Мардин и Сенджар. Он приводит очень интересные сведения о сачлэ (волосатых) курдах. Описывает Миарфакин огромный и великолепный мост Батман.

Следующий город, описываемый путешественником,—это Битлис. На нем он останавливается очень подробно, особенно на событиях, связанных с битлисским курдским ханом Абдалом, типичным вождем курдского племени и крупным феодалом. В пределах своих владений он был полузависимым. Благодаря уму, храбрости и разбойничеству, Абдал-хан приобрел большое богатство и создал для себя цареподобную жизнь, которая мало чем отличалась от жизни стамбульского султанского двора и образа жизни самого султана. Как в эйалете Диарбекира, так и в районе Битлиса курдами созданы свои «укюметы». По словам Челеби, Битлис являлся особым укюметом в пределах Ванского эйалета, «доход, получаемый в Битлисе, дарился бею как хас. В эйалете хан имел ежедневный доход в несколько киса акча. Пошлины и дани, собираемые от караванов, прибывших в город, также принадлежали бею». Очень интересны следующие подробности: «Под своим правлением хан имел 70 аширатов и родов, которые поставляли ему 70 тысяч солдат. По переписи в эйалете Битлиса проживают 43 тысячи христиан райя». Благодаря своему исламскому фанатизму, Челеби не признает, что большинство этих христианских райя являлись армянами и что ремесла и торговля Битлиса находились в руках армян. О быте Битлиса Челеби приводит много интересных сведений, однако подчас сопровождает их баснословными цифрами. Например: «В Битли-

се имеется 10 тысяч садов», и еще: «курдский Абдал-хан Битлиса всячески опекал ученых, людей искусства и поэтому город стал центром науки». Челеби поэтическим языком восхваляет райский сад хана, где произрастают хурма и другие редкие фрукты. Если иметь в виду суровый климат и естественные условия Битлиса, то трудно поверить правдоподобности этих восхвалений. Вряд ли в течение 3—4 веков климатические условия могли бы так сильно измениться.

В 1065 г. (1665) Челеби из Битлиса направляется в Датван, что на берегу озера Ван, и далее в г. Ван. Описания озера, города и крепости приводятся с большими подробностями. Интересны сведения о ловле рыбы тарех: «В год один раз в местности Банди-Маси ловят большое количество тареха, тысячи купцов-аджемов и армян—покупают у правительства эту рыбу и на сотнях верблюдов везут ее в Аджемистан, Азербайджан и Баку. Торговля этой рыбой приносит правительству годовой доход в девять вьюков акча». Любитель легенд и сказок, Челеби вспоминает об одной очень распространенной легенде о Ване. Он пишет: «Согласно легенде, когда Немрут начинал строить искусственную гору, в конце Рахова, люди Немрута привезли туда 70 верблюжьих вьюков камней. По велению всемогущего аллаха верблюды окаменели подобно тем камням. В настоящее время эти верблюды со своими вьюками стоят караваном. В течение трех тысяч лет ни один из них не потерпел никакого изменения. Когда смотришь на них издали, то кажется, что караван движется в направлении Вана»

Говоря об Ахлате, Челеби упоминает о его развалинах, которые до сих пор являются предметом изучения археологов.

Далее Челеби переходит к Адильджевазу. Описывает гору Сипан (Субхан), Арчеш, Беркри, Алик и Ван, который он называет Дариман (местом веры). В описаниях Челеби Ван занимает большое место. Вначале он приводит сказочную историю Вана, от древних времен до того времени, когда после длительной и ожесточенной войны с Ираном Ван был захвачен султаном Сулейманом—в 955 г. (1649). О скале-крепости Ван он пишет: «...что она подобна нагруженному, коленопреклоненному верблюду. Высота скалы составляет 3600 шагов, на нее можно подняться в течение часа, притом с большим

риском. Во многих местах скала похожа на великанов и наклонена в сторону города. Часть скалы похожа на льва, часть на крокодила, часть на корабль и, наконец, другая часть—на сидячего орла. В скале имеется около 600 многоэтажных больших пещер, в которых размещены склады для пушечных снарядов, пороха, разного оружия и мастерские. Сто пещер заполнены ячменем, горохом и другими зерновыми продуктами, разными маслами и нефтью. Имеются многочисленные пещеры, заполненные разными съедобными продуктами и запасами...». По словам Челеби, на самой высокой части крепости султан Сулейман установил пушки, которые держат под обстрелом территорию в 40 миль. На более низких местах скалы также установлены пушки.

Челеби упоминает также об укюметах Экарни, Махмуди и Битлиса, в составе эйалета Вана. Говоря о городе, он описывает его кварталы, рынок, торговые ряды, протекающие воды, быт народа, ремесла и другие занятия. Упоминает также о писателях и поэтах, подробно рассказывает о вражде бейлербея Вана Мелек Ахмет-паши с битлисским курдским ханом Абдалом. Абдал-хан не захотел подчиниться Мелек Ахмет-паше. Разбойничьи дела Абдал-хана, как-то: нападение на хана Маласкерта Мухамед-бея и кража 40 тысяч голов овец, послужили причиной похода. Абдал-хан набирает 17 тысяч стрелков и готовится к войне. Ахмет-паша с 40-тысячным войском движется на Абдал-хана. Челеби пишет: «Военные действия приобретают большой размах, хан защищает Битлис 10 тысячами стрелков и 10 тысячами всадников. Во время осады в городе начинается голод. Войска наши ломают сопротивление врага. Абдал-хан бежит в Мотканские горы. Победители грабят город. Знатные люди и шейхи города обращаются к Ахмет-паше с просьбой прекратить грабежи и убийства. После занятия города войсками паши, начинается конфискация богатств двора хана. Новым ханом Битлиса назначается сын Абдал-хана—Зиаэддин-хан, который подарками и взятками старается задобрить Ахмет-пашу». По свидетельству Челеби, «в связи с этими событиями, его эфенди—Ахмет-паша добывает очень большое богатство и крупную денежную сумму».

Из Битлиса Челеби снова направляется в Ван. По его просьбе Ахмет-паша освобождает бея Хиджани, за что он получает 13 тысяч золотых и один кантар серебра. Паша грозится по прибытии в Ван наказать непокорных курдских беев

Продолжая свой путь, Челеби останавливается в Ахтамаре, изучает остров и монастырь. Он пишет: «Этот монастырь имеет более 200 монахов и священных лиц, которые воздержанием, постом высохли и превратились в скелеты. Несмотря на это, монастырь очень богат, имеет все блага. Здесь живут триста портных, отшельников.

После этого Челеби направляется в страну аджемов, по пути останавливается в монастыре Варак, где проживает более 300 монахов. Здесь его одаривают и хорошо угощают. Отсюда Челеби направляется в крепости Хошаб, Абага и Пилиамиш.

Далее Челеби описывает Тавриз, Сапаган, Амадан, Шехридор и Багдад.

В конце тома Челеби упоминает об известном турецком разбойнике—капитане Чомаре.

Том V. В этом томе описание своего пути Челеби начинает с Багдада, Мосула и Курдистана, останавливается в Сгерте. По его словам, Сгерт—древний город, который, оставаясь под властью нескольких меликов, во время султана Селима I перешел в руки османцев и в постоянное владение беeклы Мухамед-паши, позднее присоединился к эйалету Диарбекир в качестве санджака. Челеби пишет: «Хотя здесь и Курдистан, но народ разговаривает на арабском языке, а также знает курдский, туркменский и армянский языки». Он упоминает об обилии урожаев в Сгерте. Отсюда Челеби направляется в крепость Востан, на берегу Ванского озера. В это время, в связи с восстанием на Атмейдане Стамбула, друг и покровитель Челеби—Мелек Ахмет-паша—лишается должности. По этой причине Челеби с ним с большими трудностями, в условиях суровой зимы, возвращается в Эрзерум. По пути Челеби останавливается в крепостях Манаскерт и Хнус, описывает их. С большим восторгом описывает мост Халкалы (мост с кольцом) на реке Аракс. На самой высокой точке моста подвешено золотое кольцо. По словам Челеби, «при разрушении моста, стоимостью упомянутого кольца можно восстановить его».

Продолжая путешествие, Челеби останавливается в армянском селе Джафер-Эфенди, имеющем 300 дымов. Внимательный в отношении быта и обычаев народов, Челеби упоминает о маленьком, но характерном обычае. Предварительно отмечая, что крыши домов покрыты толстыми поленами, похожими на мачты корабля и называемыми «герак», Челеби пишет, что в центре крыши имеется отверстие, похожее на дымоход и называется «ертик». В середине дома в земляном полу вырыта яма называемая «тоныром», в котором готовят гату, хариса, суп из мацони (танапур). В качестве топлива используют «атар» (кизяк). Всех пришельцев угощают танапуром.

Отсюда Челеби направляется в Токат, приводит историю крепости и упоминает о том, что крепость сильно укреплена «Несколько сот джелали (повстанцев) осаждали крепость, но ввиду сильного укрепления крепости не смогли нанести ей ни малейшего вреда и позорным образом вернулись обратно».

Говоря о джами (мечетях) города, Челеби останавливается на интересном факте. В мечети Дзенджирли похоронена красавица—дочь грузинского хана Марул (Марал) по имени Перихан, которая, подобно Клеопатре и Бюлгейс, считалась одной из красавиц мира. О ней Челеби пишет: «Султан Ибрагим требует от Вардар-Али-паши передать ему эту красавицу. Однако паша, считая это требование незаконным и противным шариату, отказывает султану и прячет красавицу в крепость Токат». Вероятно, она здесь и скончалась.

В окрестностях крепости на вершине горы имеется горячий источник Ак-субайри, который является жизнетворным горячим источником.

Благотворители построили здесь замечательный бассейн. Говоря о монастырях Токата, Челеби пишет: «Здесь греки имеют один монастырь, армяне также имеют монастырь под названием Катнапур. В этом городе райя очень многочисленны и все они армяне и евреи. Имеются также персидские купцы. Хотя турки говорят на особом наречии, но пожилые говорят также на чистом турецком и армянском языках. Турки постоянно находятся в дружеских взаимоотношениях с армянскими райями».

TURKISH SOURCES*

III book

Evliya Chelebi

by A. KH. SAFRASTIAN

The third volume of the „Travels" of Evliya Chelebi, the famous 17th century Turkish traveller, „Turkish sources on Armenia, the Armenians and other Transcaucasian peoples" deals wholly with his travels in those areas. The materials are versatile and rich; they provide historical, geographic, linguistic, archeological, ethnographic, trade and agricultural, cultural and public life data.

During his travels Evliya Chelebi has covered an extensive area and observed and studied vast regions such as Anatolia, Armenia, the Transcaucasus, Northern Caucasus, Mesopotamia, Syria, Palestine, the Arabian Peninsula, the European part of Turkey, Southern Russia, the Ukraine, Moldavia, Poland, Hungary and other countries.

The fruits of his keen interest and relentless labour are compiled in ten volumes, entitled „Travels". As academician Krachkovsky points out, the ten volume „Travels" of Evliya Chelebi is one of the principal documents characteristic of the epoch; it is a most valuable original source for the history of his period. It ranks among the best works in oriental studies and is in all respects an **inexhaustible source** of cultural and historical research.

---

* The third volume of the „Turkish Sources on Armenia, the Armenians and other Transcaucasian Peoples", is included in the general academic series of „Foreign Sources on Armenians", as the fourth volume of the abovementioned series.

The orientalists of Moscow and Leningrad have undertaken the translation and publication of materials from Evliya Chelebi's work that refer to the history and culture of the peoples of the Soviet Union. The first issue of „Evliya Chelebi's Travel Book" has come out of print. It treats of notes on the Ukraine and Moldavia.

The present volume of „Turkish sources..." quotes translations from Evliya Chelebi's statements on Armenia and the neighbouring countries. The data can serve as an important original source for a many-sided study of the mediaeval history of the Armenian people.

The world-wandering traveller has undertaken a number of long journeys in Armenia (Eastern, Western, Cilicia) and he has been almost to every area populated with Armenians. In his 1st, 2nd, 3rd, 4th and 5th volumes of „Travels" numerous data are produced on almost all the towns of Armenia, often including settlements and villages, the occupation of the people of those areas, their crafts and trade, language, culture, way of life, customs and faiths. He describes fortresses and structures he has seen in various regions of the country, roads and bridges, monasteries and churches, various quarters in urban areas and their houses, vineyards, gardens etc.

According to statements by Turkish, European and Soviet scholars studying Evliya Chelebi's rich historical heritage, he is regarded as a realistic observer and a zealous traveller expressing his views in a sincere way. Therefore we can derive a great deal of valuable information and data from his „Travels" on the history, social and economic life of Armenia and her neigbouring peoples.

With this aim in mind we translated many quotations by Evliya Chelebi that shed lightion the life of Armenia and her neighbours during that period. Those materials make up the third volume of „Turkish sources...".

The materials included in the volume are supplemented with extensive notes.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

1. Իսլամական կրոնով արգելվում է դիմանկարների և արձանների միջոցով հավերժացնել նշանավոր մարդկանց հիշատակը: Ահմետ Միդհագը այդ է ակնարկում:

2. «Թուրքական պատմության էնջյումենը» գիտական ընկերությունը հիմնվել է Ստամբուլում նախապատերազմյան տարիներին, որի շուրջն են խմբվել ժամանակի նշանավոր թուրք պատմաբանները: Ընկերությունը ունեցել է իր օրգանը՝ «ترك تاريخى انجمنى مجموعه سى»: Հետագայում, քեմալական Թուրքիայում այդ ընկերությունը վերակազմվում և կոչվում է սկզբում՝ «Թուրքական պատմության ուսումնասիրության ընկերություն», այնուհետև «Թուրքական պատմության ընկերություն» („Türк Tarih Kurumu“):

3. Էվ. Չելեբին նկարագրելով մեծ շքերթը, ուշագրավ ու կարևոր տեղեկություններ է հաղորդում Կոստանդնուպոլսի և առհասարակ Թուրքիայի քաղաքների XVII դարի սոցիալ-տնտեսական կյանքի, կուլտուր-կենցաղային պայմանների, սովորությունների և մասնավորապես բազմաթիվ արհեստների, նրանց համքարային կազմակերպությունների մասին: Հայ ժողովրդի պատմության համար ևս այդ տեղեկությունները կարևոր են, քանի որ, ինչպես հայտնի է, Կ. Պոլսի հայերը կարևոր տեղ են գրավել արհեստների, առևտրի և այլ բնագավառներում:

4. Էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեջ (հատ. 4, էջ 161—188) Վանի բերդի նկարագրությունը գրավում է 27 էջ: Այդ բերդը և նրա քարաժայռի բնական ու արհեստական քարայրները, բերդի պատմական ու ռազմական նշանակությունը մեծապես հետաքրքրել են նրան: Նա շրջագայել և մեծ հետաքրքրությամբ դիտել ու նկարագրել է բերդի բոլոր մասերը:

Բիթլիսից Վան ուղևորվելիս էվ. Չելեբին հիշատակում է Խոսրև փաշա խանից մինչև Վանա լիճը և այնտեղից մինչև Բիթլիս տանող ճանապարհների վրա կառուցված կամարները, «որպեսզի ձմռանը բոլոր ճանապարհորդները, վաճառականները և ուխտագնացները այս կամարների տակով ուղևորվեն, ձմռանը նրանց համար տաք կլինի, իսկ ամռանը՝ զով...» էվ. Չելեբին նշում է, որ «ներկայումս այդ կամարների շատ մասեր քանդված են, սակայն այս կառույցի հետքերն ու որոշ մասերը պահպանվել են»:

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

1. Այս հատորի բովանդակությունը անմիջականորեն կապ չունի ներկա աշխատության հիմնական ուսումնասիրության՝ Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների պատմության հետ:

Սակայն նկատի ունենալով, որ այս հատորում Էվլիյա Չելեբիի կողմից առաջ քաշված հարցերը և Ստամբուլի՝ իբրև Օսմանյան կայսրության մայրաքաղաքի և նրա կուլտուրական կենտրոնի, մանրամասն ուսումնասիրությունը և Օսմանյան կայսրության պետական-վարչական, սոցիալ-տնտեսական կառուցվածքի մասին տրված խիստ հետաքրքիր տեղեկությունները հիանալի ներկայացնում են XVII դարի Թուրքիան և հնարավորություն տալիս ավելի լավ պատկերացնելու այդ երկրում ապրող ժողովուրդների քաղաքական, տնտեսական և կուլտուրական վիճակը, անհրաժեշտ համարեցինք այս հատորից քաղվածարար թարգմանել և տալ նրա ամենահետաքրքիր մասերը։

2. Էվ. Չելեբին և այլ թուրք պատմագիրներ հաճախ Ստամբուլը անվանում են «Իսլամբոլ» (իսլամը շատ), որն հառնամ զուրկ է որևէ հիմունքից և արդյունք է իսլամական ֆանատիզմի։

3. Օսմանյան պետության XVII դարի վարչական բաժանման միավորների, վարչական և զինվորական պաշտոնների մասին այստեղ հիշված բառերի բացատրությունը տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության II հատորի բառարանում։

Կանունի սուլթան Սուլեյմանի ժամանակ գոյություն ունեցող հողային կազմակերպությունը հետևյալ պատկերն ուներ. ծառայության փոխարեն տրվում էր ռոճիկ կամ հողամաս՝ խաս, զեամեթ և թիմար անուններով (has, zeamet, timar) որոնք կոչվում էին դիրլիք (dirlik):

Թիմար էին կոչվում այն դիրլիքները, որոնց տասանորդի (ösur) տուրքը տարեկան 3000 ակչեից մինչև 20.000 ակչե էր։

Զեամեթ էին կոչվում 20.000 ակչեից 100.000 ակչեով դիրլիքները։

Խաս էին կոչվում 100.000 ակչեից ավելի դիրլիքները։

Թիմարի տերերը իրենց թիմարի յուրաքանչյուր 3000 ակչեի համար պարտավոր էին ջեբելու կոչված մի զինված զինվոր տալ։ Զեամեթի տերերը՝ 5000 ակչեի փոխարեն։

Դիրլիքների ամենաբարձր խասերը հատկացված էին փադիշահներին, նրանց շեհզադեներին, վեզիրներին, բեյլերբեյիններին և սանջաքի բեյերին*։

4. Ռեճա կամ Ռուճա — ռուսաց հին անունն է։

5. Իլթիզամ — բառացի նշանակում է վարձակալություն ստանձնել, դա Օսմանյան պետության մեջ շատ հնուց մինչև վերջերս գործադրվող պետական տուրքերի և եկամուտների տարբեր ճյուղերի (գլխավորապես գյուղատնտեսական) դանձման կապալառուական սիստեմ էր, կապալառուն (մյուլթեզիմը)՝ նախապես պետության վճարելու և երաշխավորելու պայմանով, կապալով էր վերցնում որոշ հարկերի (դրանց թվում նաև տասանորդի-աշարի) գանձումը։ Կապալառուն կոչվում էր իլթիզամի կամ մյուլթեզիմ։

6. Սալյանե — հպատակներից տարեկան միանվագ առնված հարկը։ Օսմանյան պետության հպատակ որոշ երկրներ (Եգիպտոս, Հաբեշստանը և այլն) միանվագ սալյանե էին վճարում և այդ պատճառով էլ կոչվում էին սալյանեով կառավարվող երկրներ։

---

* Օսմանյան պետության վարչական բաժանման և հողերի թիմար-զեամեթային բաժանման մասին մանրամասնությունները տրված է «Արևելագիտական ժողովածու» Ա. գրքում տպագրված «Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում» հոդվածում, Երևան, 1961, էջ 285—303։

7. 10 անգամ 100.000=1.000.000։ Այս ձևով հաշվումը սովորական էր մեր դարերում։

8. Քեֆե — այսպես էր կոչվում Ղրիմի թերակղզու արևելյան կողմում գտնվող գլխավոր ընդարձակ-նավահանգիստը՝ Թեոդոսիան։ Հիջրեթի X դարի վերջերին Քեֆեն կազմում էր էյալեթ և ուներ 554 թիմար ու զեամեթ, և իր բեյլերբեյին։

9. Սուրրե — բառացի նշանակում է ակնեի, փոքր քսակ։ Սուրրե էին կոչվում սուլթանների կողմից նվիրական Մեքքա և Մեդինա քաղաքներին մեծ հանդիսավորությամբ ամեն տարի ուղարկված թանկարժեք նվերները (մարգարիտներով և ալմաստներով զարդարված խալաթներ և այլն) և մեծ գումարի դրամը։ Այս նվիրատվությունը կոչվում էր «սուրրեի-հյումայուն»։ Սուրրեն տանում էր փադիշահի կողմից նշանակված բարձրաստիճան մի անձնավորություն, որը կոչվում էր Սուրրե էմինի։ Սուրրեն ուղարկվում էր Հիջազի շերիֆին հատուկ փադիշահական մենշուրով (հրովարտակ)։

10. Դեֆթեր քեխուդասի* — դեֆթեր՝ հաշվեմատյան, քեթխուդա կամ ռեիսը՝ կառավարիչ։ Այդպես էր կոչվում էյալեթի ամբողջ հաշիվների բարձր կառավարիչը։

11. Դեֆթիր էմինի — բոլոր տեսակի հարկերի կառավարիչը, որ ավելի ուշ կոչվում էր վերգի էմինի (հարկերի տեսուչ)։

12. Տիմարի դեֆթերդար — թիմարների հաշվետար պաշտոնյա։

13. Չավուշների քեխուդա և էմին — այդ դարաշրջանում չավուշները սպաների պաշտոն էին կատարում։ Չավուշների քեթխուդան և պետը ավելի բարձրաստիճան անձնավորություն լինելով, էյալեթի բոլոր չավուշների ղեկավարն էր համարվում։

14. Ալայ բեյ — այդպես էր կոչվում ամբողջ էյալեթի սիփահիների պետը։ Պատերազմի ժամանակ էյալեթի զորքերը հավաքվում էին ալայի բեյի դրոշի տակ և շարժվում նրա հրամանով։

15. Չերիբաշի — չավուշը՝ գործ է ածվում (այդ դարաշրջանում) սերհենգ, բաշբուղ, սալար տերմիններին հոմանիշ իմաստով։ Ոչ կանոնավոր զինվորական մասերի ղեկավարը, գլխավորը, հրամանատարը։ Չերի՝ զինվոր (ասքեր), այս բառից կազմվեց ենիչերի (նոր զինվոր).

16. Վալիդե խասի — վալիդե՝ բառացի նշանակում է մայր։ Վալիդե կոչվում էին սուլթանների հարազատ մայրերը, Վալիդե խասին՝ վալիդեին հատկացված խասը։

17. Բոյբեյի — այսպես էին կոչվում փոքր աշիրեթների (ցեղերի) պետերը։

18. Յուրթլուք և օջաքլըք — այդպես էին կոչվում այն հողերը (գլխավորապես պետության սահմանների վրա), որոնք կառավարվում էին պետության կողմից նշանակված հատուկ մարդկանց կողմից։ Վերջիններս պարտավոր էին պահպանել երկրի սահմանները և իրենց կողմերում փադիշահական բանակի ռազմական գործողությունների դեպքում միանալ սերասքերի բանակին։ Այդ հողերը ժառանգաբար անցնում էին նրանց որդիներին կամ ընտանիքի անդամներին։

19. Ռուզնամեչի — բառացի՝ օրագրություն կազմող. այդպես էին կոչվում ամենօրյա դեպքեր արձանագրողները։

---

* Այս և հետագա մի շարք վարչական ու տնտեսական պաշտոնների անունները տալիս ենք թուրքական ձևով, որովհետև թարգմանությունը դժվարհասկանալի կլինի։

20. **Մալ դեֆթերդար** — *էյալեթի ելեմտական գործերի (ֆինանսների) կառավարիչը։*

21. **Վանը** *հեղինակն անվանում է սեղղի-իման (հավատքի պարիսպ)։*

22. **Էրզրումի սանջաքների** *քանակն ու թվարկումը այստեղ ճիշտ չի տրված։ Չելեբին իր «Ուղեգրության» II հատորում խոսելով այդ մասին, նշում է 12 սանջաք՝ Կարահիսար-ի Շարքի, Քղի, Բասեն (Փասեն), Իսպիր, Խնուս, Մալազկերտ, Թեգման, Կուզիչան, Թորթում, Մժնկերտ, Մամրվան, Էրզրում։*

23. **Ենիչերիների աղա** — *ամբողջ ենիչերիական բանակի պետը, որը մեծ հեղինակություն ու իրավունքներ ուներ։*

24. **Նիշանջի բաշի** — *Նիշանջիներ կոչվում էին օսմանյան կառավարության այն բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք փադիշահի կողմից տրված ֆերմանների և բերաթների վերևում թուղրա (փադիշահին հատուկ դրոշմ) էին դրոշմում, այլ կերպ ասած՝ պետական քարտուղարի պաշտոն ունեին։ Դրանց գլխավորը նիշանջի բաշի էր կոչվում։*

25. **Կափուջի բաշի** — *կափուջի նշանակում է դռնապան։ Սուլթանի պալատում կափուջիները ավելի բարձր համարում ունեին, նրանք պահում էին փադիշահի ասպանդակը և արքունական բարապանի պաշտոնն էին վարում։ Այդ ծառայության պետը կոչվում էր կափուջի բաշի։ Կափուջի բաշիությունը արքունական բարձր աստիճաններից էր համարվում։*

26. **Միրախոր** — *փադիշահական ախոռապետ։*

27. **Ջաշնիգիր բաշի** — *ջաշնիգիր կոչվում էր փադիշահական արքունիքի ուտելեղենի որակը և համը ստուգող հատուկ պաշտոնյան։ Ջաշնիգիր բաշի՝ այդ պաշտոնյաների պետը։*

28. **Մյութեֆերրիֆա** — *բառացի նշանակում է տարբեր, զանազան ծախսեր։ Արքունիքի զանազան (նախապես տեսակն ու քանակը որոշված) ծախսերի հատուկ պաշտոնյա։*

29. **Չաուրջի բաշի** — *չաքըր՝ գորշ բազե. չաքըրջի էին կոչվում պալատական այն ծառայողները, որոնք թռչունների որսի ժամանակ գորշ բազեներ (չաքըր) էին բռնում։ Չաքըրջի բաշի՝ դրանց գլխավորը, պետը։*

30. **Սիլահդար աղա** — *սիլահդար էին կոչվում փաշայի կամ մեծերի զենքերը պահպանողները և կառավարիչները։ Դրանց պետը (արքունի պալատում) կոչվում էր սիլահդար աղա։*

31. **Աջ ուլուֆեջի** — *ենիչերիական կազմակերպության մեջ ուլուֆեջիները որոշ զինվորական խումբ էին կազմում և պատերազմի ժամանակ մի մասը բանակի աջ, իսկ մյուսը՝ ձախ կողմում գտնվելու պատճառով կոչվում էին աջ ուլուֆեջիներ և ձախ ուլուֆեջիներ։*

32. **Ձախ ղուրեբա առաներ** — *ղուրեբա՝ ղարիբ բառից, պանդուխտ՝ ղուրեբա էին կոչվում ենիչերիական զինվորների այն խմբերը, որոնք հավաքվել էին Ստամբուլից շատ հեռու վայրերից։ Սրանք էլ բաժանվում էին աջերի և ձախերի, որոնց պետերը կոչվում էին ղուրեբա աղաներ։*

33. **Սեքբան բաշի** — *սեքբան կոչվում էին ենիչերիներին կցված հատուկ զորամասերը։ Սեքբան բաշի՝ այդ զորքերի պետը, աղան։*

34. **Յայա բեյի** — *ենիչերիները հետիոտն զորամասերը կոչվում էին յայա։ Յայա բեյի՝ այդ զորամասերի պետը։*

35. **Ջեբեջու** (*կամ ջեբեջի*) — *ըստ որոշ կանոնների և նորմաների, թիմարի և զեամեթի տերերի կողմից տրված հետեակ և լավ զինված զինվորները կոչվել են ջեբեջու։*

36. Կըլըչ — բառացի սուր։ Կըլըչ էր կոչվում թիմարի և զեամեթի եկամտի յուրաքանչյուր 3000—6000 ակչեն։ Կըլըչ ճաՙՙը (սրի իրավունք) էր համարվում թիմարի և զեամեթի եկամտի այն մասը, որն անմիջականորեն վերաբերում էր թիմարի և զեամեթի տերերին։

37. Թեզքերեով և առանց թեզքերեի — թեզքերե կոչվում էր այն պաշտոնական թուղթը, որը կառավարության կողմից, իբրև հպատակության փաստաթուղթ (անձնագիր), տրվում էր արհեստավորներին, կալվածատերերին և այլն։ Թիմարի տերերը նույնպես ստանում էին այդ պաշտոնական թուղթը։

38. Էշքինջի — պատերազմի գնացող սիփահի զինվոր։

39. Մևլևիյեր — մեծ կադիի (կադի) կրոնական աստիճանը և նրա կադիության շրջանը։ Տվյալ ժամանակաշրջանում քաղաքի շարիաթական վարչությունը։

40. Ջամի և մեսջիդ — ջամին ավելի մեծ է լինում, ունի մինբեր և մինարե։ Այստեղ կատարվում է ուրբաթ օրվա նամազը և խութբե է կարդացվում։ Մեսջիդը ավելի փոքր է և առանց մինարեի։

41. Դար-ուլ-կուրա — նվիրական կուրանի (ղուրան) ընթերցանության վայր, դպրոց։ Դար-ուլ-հատիս—նվիրական մարգարեի (Մուհամմեդ) հատիսները՝ խոսքերը, կարդալու և ուսումնասիրելու վայր, դպրոց։

42. Սեբիլխանե — ճանապարհների և հրապարակների վրա հատուկ շենք, որի պատուհաններում անցորդների համար մշտապես խմելու ջուր էր լինում։

43. Ասես բաշի — ոստիկանական գիշերային հսկողության պետը, որն իրավունք ուներ կասկածելի մարդկանց ձերբակալել, տները խուզարկել և շարիաթի օրենքով մահվան դատապարտվածներին սպանել։

44. Սուբաշի, սուբաշիություն — սուբաշիները ջրի և ոռոգման կարիք ունեցող վայրերում հսկում էին խմելու և ոռոգման ջրերի բաժանման և կարգավորման գործը։ Օսմանյան պետության սկզբնական շրջանում, սուբաշիները կարգապահության հսկող լայն իրավունքներ ունեցող հատուկ պաշտոնյաներ էին։ Հետագայում այդ պաշտոնը կոչվեց քաղաքային մյուֆեթիշ (հսկող, քննող)։ Սուբաշիություն՝ սուբաշիի իշխանությունը և այդ իշխանության վարչական շրջանը։

45. Աջեմի օղլաններ — այն անչափահաս զինվորներն էին, որոնցից պատրաստվում էին ենիչերիական բանակի գլխավոր կադրերը։ Աջեմի՝ բառացի նշանակում է անփորձ։ Աջեմի օղլանների մեծամասնությունը կրթություն ստանալով կազմում էր ենիչերիական բանակի հիմնական մասը։ Մյուսներն, աշխատում էին նավերում, դղյակներում և իբրև որակյալ բանվորներ՝ ջամիների կառույցներում։

46. Լաղըմջիներ — պատերազմի ժամանակ բերդերի տակ ստորերկրյա անցքեր փորողներ և պայթեցնողներ։

47. Ջիֆթջի — հողամշակությամբ զբաղվող, երկրագործ։

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

1. Էյրի (հունգարերեն՝ Eger, գերմաներեն՝ Erlau) —Էյրին գավառական կենտրոն է և ամուր բերդաքաղաք Ավստրիայում։ Այս բերդը գրավել է սուլթան Մուհամմեդ III-ը 1005 (1596) թվականին։ Սուլթանը ավստրիացիների խաթվան բերդի վերագրավման ժամանակ իսլամական զինվորների լրիվ բնաջնջման փոխարեն, սրի է քաշում Էյրիում գտնվող բոլոր ավստրիական զինվորներին։

Օսմանցիների իշխանության շրջանում Էյրին առանձին էյալեթի կենտրոնն է եղել: Էյրի սուլու՝ Էյրիի միջով հոսող գետ:

2. **Սուլթան Ուզուն Հասան** — իսկական անունը էբու-ուլ- Նեսր Մուզաֆերեդ-դին է: Իրանի և Քուրդիստանի իշխողներից էր և պատկանում էր Ակ կոյունլի թուրքմենական ցեղին: 857 (1453) թվականին կարա կոյունլիներին գերիշխող Ջահանգիրի դեմ մղված պատերազմում նրան պարտության է մատնել և գրավելով նրա երկրի մեծ մասը՝ Դիարբեքիրում սուլթանություն հայտարարել: Սուլթան Ուզուն Հասանը վենետիկցիների և Կարամանի էմիրի դրդումով պատերազմում է օսման-յան երկրի դեմ և գրավում Էրզրումը, Բայբուրդը և Երզնկան: Սակայն սուլթան Մուհամմեդ II Ֆաթիհը 878 (1473) թվականին հարյուր հազարանոց բանակով ջախջախում է Ուզուն Հասանի բանակը: Ուզուն Հասանը ստիպված հաշտություն է կնքում: Հետագայում Ուզուն Հասանը գրավում է Վրաստանը: Մահացել է 883 (1478) թվականին:

3. **Ֆաթիհ**, էբու-էլ-ֆեթհ, բառացի նշանակում է գրավող, նվաճող: Այս տիտղոսը տրվել է Ստամբուլը գրավող սուլթան Մուհամմեդ II-ին:

4. Էվ. Չելեբիի այս և նման բազմաթիվ «ստուգաբանությունները» բանա-գրոսիկ են և անհիմն:

5. **Բարեգործական էվկաֆը** — (էվկաֆը վակֆի հոգնակին է): Վակֆ էին կոչվում այն հողերն ու անշարժ կալվածները, որոնք իրենց տերերի ցանկությամբ և շարիաթական կարգով հատկացվում էին բարեգործական նպատակների: Ջամիների և մզկիթների վակֆերը շատ մեծ էին: Վակֆերը հատկացվում էին նաև մեդրեսե-ներին: **Էվկաֆի հյումայուն** էին կոչվում փադիշահների կողմից տրված և հատ-կացված հողերն ու կալվածները: **Էվկաֆ նեզարեթի** կոչվում էր այն մինիստրու-թյունը, որը հսկում էր փադիշահական վակֆերին և բարեգործ մարդկանց կողմից ջամիներին ու մեդրեսեներին հատկացված վակֆերի գործերի վրա:

6. Ներկայումս Ակչե Աբագ կաղայի (գավառ), կենտրոնն է Փոլթա նավա-հանգիստը:

7. **Թարեբի էֆզուն** — ըստ Էվ. Չելեբիի բանագրոսիկ ստուգաբանության թա-րեբ՝ ուրախություն, հրճվանք, էֆզուն՝ առատ, շատ: Այստեղից էլ ուրախության և հրճվանքի վայր:

8. **Թարեբի-զեն** — բառացի՝ կանացի ուրախություն:

9. **Երկու թուղ** — Թուղ կոչվում էր այն հատուկ նշանը, որը պատրաստվում էր ձիու պոչի մազերից: Հնում օսմանյան վեզիրներին և փաշաներին, ըստ իրենց աս-տիճանի, տրվում էին 1, 2 և 3 թուղ, որի համար էլ նրանք կոչվում էին՝ **մեկ, երկու և երեք թուղով փաշաներ:**

10. **Արփալըք** — ուլեմաներին և բարձր պաշտոնյաներին փողով կամ մթեր-քով տրված թոշակ, հատկացում: Որոշ էյալեթներ և երկրներ «արփալըքի կար-գով» տրվում, շնորհվում էին վեզիրներին և փաշաներին:

11. **Ընկույզի եկամուտ** — Տրապիզոնի և առհասարակ Սև ծովի այդ շրջա-նում կաղինի և ընկույզի մշակությունը տարածված և զարգացած լինելով, Տրա-պիզոնի իշխողների եկամտի մեջ ընկույզի (և կաղինի) եկամուտը կարևոր տեղ էր գրավում: Էվ. Չելեբիի այդ ակնարկը ցույց է տալիս, որ Տրապիզոնի էյալեթում այդ մշակությունը կարևոր նշանակություն է ունեցել նաև XVII դարում:

12. **Գրանցում** (թահրիր) — օսմանյան կայսրության մեջ **թահրիրի** (աշխար-հահամարի) կարգը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից: Մանսուրի Զադե

Մուսթաֆա Նուրի փաշան իր հայտնի «Նեթաիջ-ուլ-վուկուաթ»* գրքում նշում է, որ «Նոր երկրներ և շրջաններ գրավելուց անմիջապես հետո, տեղի էր ունենում գրանցում (թահրիր), որով որոշվում էր ամեն գյուղի տասանորդի եկամուտը և բնակչությունը, ըստ տների (խանե), ինչպես նաև ամեն կազայի առանձին կամ կոլեկտիվ օգտագործված անտառների և արոտատեղիների քանակը։ Այսպես, եթե մի սանջաք հարյուր բեռ ակչեի տասանորդի եկամուտ ունենար, նկատի առնելով, որ տվյալ շրջանը ունի դիրլիքների բոլոր տեսակները, վերոհիշյալ հարյուր բեռից 20 բեռը համարվում էր խաս, 10-ը՝ զեամեթ, 40-ը՝ թիմար, 20-ը՝ էվկաֆ, 10-ը՝ օջաքլըք և յուրթլուք: Նման գրանցում տեղի է ունեցել նաև 1003 (1624—26) թվականին Վրաստանի վիլայեթում, որի հիման վրա կազմվել է «Վրաստանի վիլայեթի մանրամասն դեֆթեր»** անունով պատմական փաստաթուղթը, որը պահվում է Թբիլիսիի պետական թանգարանում։

13. Բոյբեյի — տե՛ս հատ. I, ծանոթ. 17։

14. Մյուհթեսիբ — քաղաք ներմուծվող ու վաճառվող մթերքներից, իրերից օրինական տուրք ստացող պաշտոնյա։ Մյուհթեսիբ աղա՝ այդ պաշտոնյաների պետը, գլխավորը։ Աբբասյանների ժամանակ քաղաքի կարգապահության, կշիռների և չափերի ճշտությանը հսկող պաշտոնյան կոչվում էր նաև իհթիսարչի։

15. Լազգի, լազ — ըստ էվ. Չելեբիի Տրապիզոնի արևելքում, Գեզգի լեռան շուրջը ապրող ժողովուրդը գեզգի, կամ աղավաղված ձևով լազգի (լազ) է կոչվում։ Սակայն, ինչպես հայտնի է, ընդունված է այդ ցեղը լազ անվանել։ Սև ծովի հարավ-արևելյան ափին Ճորոխ գետի և Տրապիզոնի միջև ընկած երկրամասը կոչվում է Լազիստան։

16. Կլիմա (իքլիմ) — հնագույն աշխարհագրական կարգով երկրագնդի բնակեցված քառորդ մասը, հասարակածից մինչև հյուսիսային բևեռը, բաժանվում էր 7 կլիմայական գոտիների: էվ. Չելեբին առանձին երկրների, վայրերի և քաղաքների կլիման որոշելիս նկատի ունի վերոհիշյալ բաժանումը։

17. Սիջիլլ — այն հիմնական դեֆթերն է, որի մեջ արձանագրում են դատարանի կողմից հաստատված որոշումները և պայմանագրերը։

18. Ոսկեզրոշմի արհեստ — իրերի վրա ոսկյա թելերով գեղազարդելու արհեստ։

19. Դրոշմ — (բնագրում՝ Սիքքե) փողերի և դիրհեմների (կշռաքարերի) վրա խփված կնիք (դամղա)։

20. Դեար կամ դևիր — թանաք և գրիչ տեղավորելու հատուկ սարք — որ կրել են մեջքին՝ գոտկատեղում։

21. Ռիքդան — գրության վրա թանաքը չորացնելու համար գործածվող և մի կողմում մանր անցքեր ունեցող տուփ, որի մեջ կա հատուկ ավազափոշի։

22. Կարանֆիլ — խմիչք պատրաստված մեխակից։

23. Միսքեր — մուսկաթ, մշկահոտ խմիչք։

24. Նազիլլի — Թուրքիայի քաղաքներից՝ Իզմիրի էյալեթում։

25. Քեֆե — տե՛ս հատ. I, ծանոթ. 8։

26. Խամսին — բառացի՝ հիսուն։ Ըստ հնում ընդունված կարգի, ձմռան 40 օրյա (էրբային) ժամանակամիջոցին հետևում էր 50 օրյա շրջանը, որը խամսին էր կոչվում։

---

* منصوری زاده مصطفی پاشا، نتائج الوقوعات

** دفتر مفصل ولایت گورجستان

27. Ջիրիտ — ջյունտելիՖ անունով հայտնի զինվորական խաղերից մեկը, որն օսմանյան բանակում գոյություն է ունեցել դեռևս սուլթան Յըլդըրըմ Բայազիդի ժամանակից։ Ջիրիտի խաղին մասնակցող զինվորները, ընդարձակ տարածության վրա, կատաղի ու չվարժեցված ձիեր էին հեծնում և սովորում սուր ու տեգ գործածել։ Ավելի ուշ այդ խաղերը տարածվեցին Ստամբուլի տարբեր շրջաններում։

Թուրքական պատմագիրների ասելով, այդ խաղերով զբաղվող զինվորներն էլ դառնում են օսմանյան հեծելազորի հիմքը։

Հետագայում, ջիրիտի խաղը տարածվում է նաև քաղաքների կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների և ժողովրդի բարձր դասերի շրջանում։ Քաղաքներում ջիրիտի համար կային հատուկ հրապարակներ, որոնք հարմարեցված էին այդ խաղին։

28. Չորբաջի — ենիչերիական բանակի վաշտապետը (յուզբաշի) կոչվում էր չորբաջի։ Ամեն մի ենիչերիական վաշտում՝ հրամանատարի իրավունքով, մի չորբաջի կար։ Չորբաջիները ունեին իրենց հատուկ տարազը։

Չորբաջին այլ իմաստներ էլ ունի. քրիստոնյա վաճառականները և երևելի անձնավորություններն էլ էին չորբաջի կոչվում։ Գյուղերում չորբաջի էին կոչվում հյուրեր ընդունող մուխթարները և աքսակալները (ծերերը)։

29. ԱզաՖի արշավանՖը — Ազաք (Ազով) բերդի վերագրավման համար 1052 (1641) թվականին տեղի ունեցած պատերազմը էվ. Չելեբին անվանում է սրբազան պատերազմ (ղազա)։ Մասնակցելով այս պատերազմին էվ. Չելեբին մանրամասնորեն նկարագրում է այն։

Ազաքը (Ազով) գտնվում է Ազովի ծովի հյուսիս-արևելյան ափին, Դոն գետի գետաբերանից 10 կիլոմետր դեպի հյուսիս։ Բերդը գրավել էր սուլթան Ֆաթիհը։ Ազաքը 162 տարի օսմանցիների իշխանության ներքո մնալուց հետո, 1042 (1632) թվականին օգտվելով Ղրիմում տեղի ունեցած խառնակությունից Դոնի կազակները գրավում են Ազովը։ Ավելի ուշ՝ 1052 (1642) թվականին օսմանցիները Ազովը վերագրավելու առաջին անհաջող փորձից հետո, կազակները գրավում են բերդաքաղաքը, վերաշինում և Ազովում պահապան զինվորներ են նշանակում։

30. Ֆաշե — թուրքերը Ռիոն գետը անվանում էին Ֆաշե։

31. Օսմանյան պատմության մեջ Աբխազիան կոչվում է Աբազա։ Այդպես են կոչվում նաև Աբխազիայում ապրող բազմաթիվ ցեղերը։

32. Կուրեյշական ցեղ — Արաբական թերակղզում, Հիջազի շրջանում ապրող և իշխող հնագույն ցեղը կոչվել է կուրեյշական ցեղ, այդ ցեղին պատկանողները՝ կուրեյշիներ։ Մինչև իսլամի ծագումը Հիջազի գլխավոր քաղաք Մեքքան կուրեյշական ցեղի ձեռքումն է եղել։ Մուհամմեդը նմանապես եղել է կուրեյշիներից։

33. Քանի որ էվ. Չելեբին և այլ թուրք պատմագիրներ իրենց երկերում, ընդհանրապես գործ են ածում լուսնային տարվա ամիսները, այստեղ բերում ենք այդ ամիսները.

1. Մուհարրեմ
2. Սաֆեր
3. Ռեբի-ուլ էվվել
4. Ռեբի-ուլ ախըր
5. Ջեմազիյել-էվվել
6. Ջեմազիյել-ախըր
7. Ռեջեբ
8. Շաբան
9. Ռամազան
10. Շեվվալ
11. Զիլզադե
12. Զիլհիջջե։

էվ. Չելեբին և Թուրք պատմագիրները գործ են ածում հիջրեթի թվականները և իսլամական լուսնային ամիսները։ Ներկա աշխատության մեջ մենք գրեթե միշտ հիջրեթի թվականների կողքին նշում ենք նաև համապատասխան եվրոպական տարեթվերը։ Քանի որ դժվար է (տեխնիկական տեսակետից) հիջրեթի տարեթվերի հետ միասին նշել նաև իսլամական լուսնային ամիսներին համապատասխանող եվրոպական ամիսները և ամսաթվերը, խորհուրդ ենք տալիս անհրաժեշտության դեպքում օգտվել այդ նպատակով կազմված և 1940 թվականին Հ. Ա. Օրբելու խմբագրությամբ լույս տեսած շատ արժեքավոր աշխատությունից։

Иосиф Орбели. Синхронические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летоисчисление.

1961 թվականին լույս տեսավ նաև երկրորդ հրատարակությունը*։

34. Ամալեճե կամ Ամլաճ ցեղը արաբական հնագույն ցեղերից է։ Վերին սատիճանի կատաղի, բարոյապես քայքայված և ավազակաբարո ցեղ է եղել։ Եմենից արտաքսվելով տարածվել են զանազան վայրեր։ Սրանցից սերվել են Բահրեյնում, Օմանում ու Մեդինայում ապրողները և կոչվել ջասիմներ։ Ամալեքե ցեղի մի քանի խմբեր մեր թվականությունից երկու հազար տարի առաջ գաղթել են Եգիպտոս, որտեղ իշխել են մի քանի հարյուր տարի։ Իշխել են նաև Ասուրիայում։ Հետագայում, մի շարք խռովությունների և պատերազմների հետևանքով, Ամալեքե ցեղը տարրալուծվել է այլ արաբական ցեղերի մեջ։

35. Դար-ուլ-մելիք, դար՝ արաբերեն նշանակում է վայր, տեղ, հիմնարկություն. մելիք՝ վեհապետ, արքա։ Դար-ուլ-մելիք՝ արքայանիստ վայր, մայրաքաղաք։

36. Խութբե կարդալ և փող կտրել — ուրբաթ օրվա և բայրամի (իսլամական տոն) նամազների ժամանակ ջամիում խաթիբի կարդացած աղոթքը, որը կազմված է Ղուրանի որոշ այեթներից և հադեսներից։ Խութբեում հիշվում է նաև իսլամական խալիֆայի (սուլթանի) անունը։ Իր անունով խութբե կարդալ տալը և փող կտրելը համարվում էր սուլթանության և գերիշխանության հիմնական արտահայտություններից մեկը։

37. Խաս սարայ, արքայական պալատ։

38. Այան, էշրաֆ, ուլեմա, սյուլեհա — էվ. Չելեբին հաճախ հիշատակում է քաղաքների բարձր դասերի վերոհիշյալ ներկայացուցիչներին։

Այան — բառացի նշանակում է երևելի, հայտնի։ Այան էին կոչվում քաղաքների ավագանիները (ոչ հոգևորական և ոչ զինվորական դասերից)։ Այան նշանակում է նաև ծերակուտական։ Մեջլիսի այան ծերակույտ, սենատ։

Էշրաֆ — շերիֆ բառից, ազնվացեղ, ազնվական։

Ուլեմա (հոգ. ալիմի) — Իսլամի աստվածաբանության և իրավագիտության գիտնականներ, որոնք ունեին իրենց հատուկ տարազն ու աստիճանը։

Սյուլեհա — սալիհ բառից, երկյուղած, առաքինի և բարեպաշտ, աղոթքով և ծոմապահությամբ ապրող հավատացյալ անձինք։

39. Ջելալի — բառացի նշանակում է ապստամբ, ըմբոստ, ավազակ։ XVI

* Հիջրեթի թվականներին համապատասխան եվրոպական տարեթվերը տվել ենք մեր «Թուրքական աղբյուրները...», աշխատության I հատորում, էջ 339—348։

դարում Թուրքիայում լայնորեն տարածված գյուղացիական ապստամբական շարժում։ Այդ շարժման ղեկավարներից էին Կարա Յազըջին և Դելի Հասանը*։

40. Այս գետը ներկայումս կոչվում է Քիլքեթի գետ, որը հոսում է Կարահիսար-ի Շարքիի կողմից։

41. Բեդիստան (կամ բեզիստան) — ծածկված ու պարսպապատված հատուկ շուկա, որտեղ թանկարժեք իրեր, զենքեր ու գոհարեղեններ են վաճառվում։

42. Քանլի փունար — արյունոտ աղբյուր։

43. Լոքմա — բառացի՝ պատառ։ Մահացածների հիշատակին բաժանված փոքրիկ թխվածքը կոչվում է լոքմա։

44. Ըլըջա — Իլիջայի աղավաղված ձևը, որ նշանակում է տաք աղբյուր, ջերմուկ։

45. Նեդիմ — բարձրաստիճան պաշտոնյաներին, ինչպես նաև փադիշահին զվարթ պատմություններով զբաղեցնողը կոչվում էր նեդիմ, իսկ պաշտոնը՝ նեդիմություն։

46. Ակչակոյունլու — կամ Ակ կոյունլի և Կարա կոյունլի։ Թուրքմենական աշիրեթական իշխանությունների գերդաստաններ են, որոնք XV դարում ստեղծել էին բավականաչափ ուժեղ պետություններ։ Կարա կոյունլի էին կոչվում, որովհետև սրանց դրոշակի վրա սև ոչխարի (կարա կոյուն) պատկեր կար։ Ակ կոյունլիները հայտնի էին նաև Բայնդուրյան անունով։ Կարա կոյունլիները 819 (1407) թ. գրավեցին Ադրբեջանը (Իրանը), սակայն 50 տարի հետո նրանց իշխանությունը խորտակվեց Ակ կոյունլիների ձեռքով։ Ակ կոյունլիների իշխողներից ամենահայտնին է եղել սուլթան Ուզուն Հասանը (տե՛ս «Ուղեգրության» II հատորի երկրորդ ծանոթագրությունը)։

47. Աբազա փաշա — Աբազա Մուհամմեդ փաշայի մասին է խոսքը, որը վեզիրության աստիճանով Էրզրումի վալի եղած ժամանակ, երբ իմանում է Ստամբուլում ենիչերիների անկարգությունների և ապստամբության մասին, ոչնչացնում է Էրզրումում եղած բոլոր ենիչերիներին, ապստամբություն բարձրացնում և մեծ բանակով շարժվում է Ստամբուլի վրա, լուծելու համար ենիչերիների ձեռքով նահատակված սուլթան Օսմանի արյան վրեժը։ Անկարայում Աբազա փաշայի դեմ դուրս է գալիս Չըլեբի Չաղե Մուհամմեդ փաշան, որը թեև Աբազա փաշային վերջնական պարտության չի մատնում, սակայն խոչընդոտում է նրա առաջխաղացումը Ստամբուլի վրա։ Երկու տարի հետո, 1032 (1622) թվականին Կեսարիայում Աբազա փաշան ներման է արժանանում և այդպիսով նրա ապստամբական շարժումը լիկվիդացվում է։ (Մանրամասնությունները տե՛ս «Թուրքական աղբյուրները...», հատ., I, էջ 82—85)։

48. Սմիսար — ներկա անունը Սամսատ է։

49. Կալայի-Էլ-Ռումի — Ուրֆայի սանջաքին ենթակա Ռում-կալասին է Հալեպի վիլայեթում։

50. Ջեննեթ-փունարի — դրախտի աղբյուր։

51. Քիլե — հացահատիկի քանակության չափ Անատոլիայում, որը շրջաններին համապատասխան փոփոխության էր ենթարկվում։

* Ջելալիների ապստամբական շարժման մասին մանրամասնությունները տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի... մասին» աշխատության I հատորում, էջ 82—85։

52. Նևրուզ — բառացի նշանակում է նոր օր: Հին Արևելյան օրացույցներում Նևրուզը, այսինքն, հին առմարով մարտի 9-ը համարվում էր նոր տարվան և գարնան սկիզբը։

53. Սաղամանդր — թուրքերեն՝ Սեմենտեր, իրանական առասպելի համաձայն Սաղամանդրը կրակի մեջ ապրող մի առասպելական կենդանի է:

54. Զոբան Քյոփրյուսի — հայտնի Հովիվի կամուրջ։

55. Այստեղ էվ. Չելեբին թույլ է տալիս աշխարհագրական անճշտություն, փոխանակ նշելու, որ Զանգուն թափվում է Արաքսի մեջ, գրում է, թե Արաքսն է թափվում Զանգուի մեջ և բացի այդ անճշտորեն Զանգուն՝ հիշատակում է Քուռ գետի հետ միասին։ Ուղեգրության խմբագրի և հրատարակչի ուշադրությունից են վրիպել են այդ անճշտությունները:

56. Ուչքիլիսե — էջմիածինն է։

57. Բախթ Նասար — Նաբուգոդոնոսորն է։

58. Տե՛ս այս գլխի 55-րդ ծանոթագրությունը:

59. Ջեբրի, Ջաֆերի, Կադերի — իսլամական կրոնի աղանդավորներ, որոնք հիմնել են նույն անուններով հայտնի աղանդները: Այսպես, ջաֆերիները հետևում են շիի դավանանքի այն աղանդին, որ հիմնել էր Իմամ Ջաֆերը: Ջեբրիները պատկանում էին մարդկային կամքը ուրացող Ջեբրիյե աղանդին: Կադերի աղանդի հիմնադիրը՝ Աբդյուլ Վագեր Գիլանին է եղել։ Այս աղանդին հետևողները ջեբրիներին հակառակ տեսակետներ ունեին: Այս և մի շարք այլ աղանդներ տարածված էին Իրանի շիիների դավանանքին հետևողների մեջ:

60. Նաքշի ջիհան — բառացի նշանակում է աշխարհի նկար։

61. Բուքսլեմուն — արաբերեն՝ քամելիոն։ էվ. Չելեբին գործ է ածում բազմագույն, գունագեղ իմաստով։

62. Մյունշի — մատենագիր։

63. Շահ-էֆրասյաբ — Փիշգադյան թուրք իշխանավորներից է։ Հարձակվել է Իրանում իշխող Մենուչեհրի վրա և նրան փախուստի մատնել: Սակայն, հետագայում հաշտություն է կնքել Ջիհուն գետից այն կողմը գտնվող երկրներն իրեն մնալու պայմանով։ Ավելի ուշ, Իրանի վրա է հարձակվել և մեծ ավերումների և կոտորածների պատճառ դարձել։ Ի վերջո էֆրասյաբը Զալ-իբնի Սամ խանի կողմից պարտության է մատնվել և փախուստի դիմել:

64. Մոլորյալ շահ (Շահի-գյումրահ) — թուրք պատմագիրները իսլամական երկրորդ հիմնական՝ շիի դավանանքին պատկանողներին (իսլամական կրոնի տեսակետից) մոլորված են համարում։ Այդ պատճառով, երբ խոսում կամ գրում են Իրանի շահերի մասին, առհասարակ գործ են ածում մոլորյալ ածականը:

65. Նաֆիի — իսլամական դավանանքներից մեկը։

66. Փեչե — մանուկ, ձագ։

67. էվ. Չելեբին Կուր գետը միացնելով Թերեքին թույլ է տալիս աշխարհագրական կոպիտ սխալ։

68. էվ. Չելեբին Թավրիզի և պարսկական քաղաքների վարչական պաշտոնների անունները տալիս է պարսկական ձևով, որոնք հաճախ տարբերվում են թուրքականից։ Այսպես, պաշտոնների շարքում հիշվում է շեյխ-ուլ-սադաթ, սեյիդների շեյխ, որն համապատասխանում է թուրքականի շեյխ-ուլ-իսլամին։ Այնուհետև՝ քալանթար, մունշի՝ բալտուլար, դարուղա՝ ոստիկանապետ, կափուչիբաշի՝ կարգապահության հսկող պաշտոնյաների պետը, յասաուլ-աղա՝ խանի թիկնապահների պետ և այլն։

69. Բեքյար-խան — ամուրիների պանդոկ:

70. Նշանակում է ջանք է գործադրում երկու կարևոր խնդիր իրագործելու ուղղությամբ։

71. Էսքի շեհիր — հին քաղաք։

72. Զանգի, Արազ և Կուր գետերի մասին — ինչպես ծանոթագրություններում նշել ենք, այս գետերի մասին էվ. Չելեբիի պատկերացումները ճիշտ չեն։ Թե էվ. Չելեբին և թե այլ թուրք պատմագիրներ Զանգին համարում են «մեծ և ընդ-վարանցանելի» գետ։ Այդ որոշ չափով կարող է ճիշտ համարվել, երբ նկատի առ-նենք XVII դարի տեխնիկան (ռազմական և առհասարակ)։ Իսկ, երբ էվ. Չելեբին Արաքսը (Արազը) թափում է Զանգի գետի մեջ, կամ հիշում է Զանգի-Կուր գե-տերը միասին, դա անշուշտ կոպիտ աշխարհագրական սխալ է։ Թե ինչպես այդ սխալները վրիպել են էվ. Չելեբիի «Ուղեգրության» խմբագրի և հրատարակչի ուշադրությունից, որոնք հաճախ տալիս են որոշ ծանոթություններ և ուղղումներ, դա անհասկանալի է։

73. Հավանաբար Մինգեչաուրի աղավաղված անունն է։

74. Այս և հաջորդ երկիր (ülke) բառերը գործ են ածվում գյուղ, վայր իմաստով։

75. Ֆարիճե — հանգուցյալների համար կարդացված հոգեհանգստի իսլա-մական աղոթքը։

76. Կասաբա — գյուղաքաղաք։

77. Մահանի երկիրը — Իրանի Կերման էյալեթի մի գյուղաքաղաքի անունն է։ Ըստ թուրքական [օսմանյան] ավանդությունների, օսմանցիների նախնիներից մեկը՝ էրթուղրուլի հայրը՝ Սուլեյման Շահը, Անատոլիա գաղթելուց առաջ իշխել է Մա-հան անունով երկրում։

78. Հեյճաթի դաշտը — Ռուսաստանի հարավում, Վոլգա և Դոն գետերի միջև ընկած դաշտավայրը թուրքական աղբյուրներում կոչվում է Հեյհաթի դաշտ։ Այստեղ ապրող թուրքական ցեղերը XI—XII դարերում հիմնեցին Կըփչաքների պետությունը։

79. Խաթայ — Չինաստանում, Դեղին գետի հյուսիսում ընկած երկիր է, որ-տեղ թուրքական ցեղեր են բնակվում։ Արևելյան թաթարներից յութինները, այս եր-կիրը նվաճելով մի խանություն են կազմել, որի հետևանքով Չինաստանը երկու մասի է բաժանվել, հարավային մասը կոչվել է Չին, հյուսիսայինը՝ Խաթայ։

80. Խութեն, Խարն կամ Խուրուն — Չինական Թուրքեստանի հնագույն անունն է, որը ընկած է Տիբեթի հյուսիսում և արևելքում։ Սրա գլխավոր քաղաքներն են Քաշղարը և Ակ-սուն։

81. Ֆաղֆուր — հնում Չինաստանի կայսրին տրված տիտղոսներից է։ Չի-նական ազնիվ հախճապակիից ամանները ևս ֆաղֆուրի են կոչվել։ Ֆաղֆուրի երկիր գործ է ածվել Չինաստան իմաստով։

82. Մոսկոլուներ — նաև Մոսկո, այսինքն Մոսկվա, մոսկվացի։ Թուրքական պատմագիրները մոսկոլուն, ընդհանրապես գործ են ածում ռուս իմաստով։

83. Թելարին — կաշի։

84. Այստեղ, ինչպես նաև մի շարք տեղերում աշխարհի կողմերը սխալ են նշված, որը կարծում ենք, գալիս է ոչ այնքան էվ. Չելեբիից, որքան արտագրող-ներից և հրատարակիչներից։ Դժվար է ենթադրել, որ էվ. Չելեբին չի կարողացել որոշել, թե Կուր գետը ծովն է թափվում ոչ թե Բաքվի հյուսիսից, այլ հարավից։

85. Էմաներ — Կառավարական առանձին վարչություն. օրինակ՝ մաքսի էմա-նեթ, քաղաքային էմանեթ և այլն։ Էմին—կառավարիչ։

86. Նենենգ փիլ գյուշի — փղի ականջով կոկորդիլոս։

87. Այստեղ, հավանաբար, տպագրական սխալի հետևանքով 2 անգամը դարձել է 20 անգամ։

88. Էվ. Չելեբին իր «Ուղեգրության» մեջ բազմիցս նկարագրում է Սև և Կասպից ծովերը։ Այս ծովերը ստորերկրյա կապով միացած լինելու ավանդությունը, որ պահպանվել է մինչև մեր օրերը, այդ ժամանակաշրջանում չէր կարող չգրավել Էվ. Չելեբիի ուշադրությունը։ Նա իր «Ուղեգրության» I հատորում առանձին հատված է նվիրել Սև ծովին, նշելով, որ ջրհեղեղից առաջ Սև ծովը Ստամբուլի մոտ միացած չի եղել Միջերկրական ծովին։ Նա նշում է նաև Սև ծովի այն ժամանակի գրաված ընդարձակ տարածության, նրա և Խազերի ծովի կամ Գիլանի և Դեմիր Կափուի ծովերի հետ միացած լինելու մասին։ Ավելի հետաքրքիր տեղեկությունների շարքում նշում է, որ ինքը մասնակցելով Մոսկվայի արշավանքին, տեսել է, ինչպես թաթարական զինվորները Հեյհաթի դաշտում (տե՛ս ծանոթագ. 78) և որոշ վայրերում հողը փորելիս, ծովային կենդանիների մնացորդներ են դուրս բերել։ Այս և նման խիստ արժեքավոր մտքերի և փաստերի հետ միաժամանակ Էվ. Չելեբին հիշում և ձգձգված պատմում է մի շարք առասպելական դեպքերի և մարդկանց մասին, որը,—բնականաբար, բացատրվում է իր ժամանակի գիտական մտքի և գիտելիքների զարգացման ցածր մակարդակով։

89. Էջուչի պարիսպը — Նկատի ունի չինական պարիսպը։

90. Ֆաչէ գետ — տե՛ս հատ. II, ծանոթ. 30։

91. Էմևիներ — առաջին չորս խալիֆաներից հետո, Շամի-Շերիֆում (Դամասկոս) հիջրեթի 41 թվականին կազմակերպված առաջին իսլամական պետությունը կոչվեց Էմևիների պետություն: Այս պետությունը գոյություն է ունեցել 91 տարի, որին կառավարել են 14 փադիշահներ։ Կործանվել է 132 թվականին Աբբասյանների կողմից։ Էմևի Աբդյուլ Մելեքի կողմից Էնդելուսում (Անդալուզիա) հիմնած էմևիների մի այլ պետությունը իր գոյությունը շարունակել է մինչև հիջրեթի 423 (1031) թվականը։

92. Նեշիրվան — Իրանի Սասանյան շահերից է։ Սա իր հոր՝ Կուբատի, և հռոմեացիների միջև տեղի ունեցած երկարատև պատերազմների հետևանքով քայքայված երկիրը վերաշինում է և 523 թվականին խաղաղության դաշնագիր կնքում։ Սակայն, շատ չանցած, պատերազմական գործողություններ է սկսում և գրավում է Սիրիան, Կապադովկիան, Միջագետքը ու Հռոմեական կայսրության որոշ երկրամասերը և ստիպում է կայսրին տարեկան 30 հազար ոսկի տուրք վճարել։ Առաջանալով դեպի Արևելք մի քանի երկրամասեր է գրավում Հնդկաստանից, ձեռք է գցում Դաղստանը ու Խազերի ծովեզրերը և Դեմիր Կափուի շրջանում մի մեծ պարիսպ է կառուցում։

93. Միջին Մաջարիստան — Հունգարիան է։

94. Խոսքը Շերեֆ խան Բիթլիսիի երկասիրության՝ «Շերեֆնամե»-ի մասին է։ Այդ գիրքը, որ ավարտվել է 1005/1596 թվականին, ընդգրկում է Քուրդիստանի պատմությունը։ Շերեֆ խան Բիթլիսին սերում է քրդական ռուզեքի ցեղի պետերի ընտանիքից։ Հայրը՝ Էմիր Շեմսեդդին խանը, Թուրքիայից գաղթում է Իրան և ծառայության մտնում շահի մոտ։ Շերեֆ խանը կրթություն է ստանում շահ Թահմասբի արքունիքում։ Հետագայում նա Շահ Իսմայիլ III-ի կողմից նշանակվում է որպես Իրանի բոլոր քրդերի էմիր-ուլ-ումերա։ 1578—1590 թվականների թուրք-իրանական պատերազմի ժամանակ Շերեֆ խանը անցնում է Թուրքիա։ Սուլթան Մուրադ III-ը ժառանգական կարգով նրան խան տիտղոսով տալիս է Բիթլիսի սանջաքը։

«Շերեֆնամենը» երկու հատոր է և գրված է պարսկերեն։ Թարգմանվել է ֆրանսերեն և թուրքերեն։ Ֆրանսերենը՝ Chéref-nameh ou histoire des Kourdes, par Cheref, prince de Bidlis։ Հրատարակվել է երկու անգամ՝ Պետերբուրգում 1860 թվականին և Կահիրեում՝ 1931 թվականին։

95. Այստեղ աղավաղված է։ Հավանաբար խոսքը վերաբերում է ավերված բերդերից բերված 170 թնդանոթներին։

96. Խուղա-խուր — խուղա՝ աստված, խուր՝ բարի։

97. Հանեֆի (حنفى) և Շաֆիի (شافعى) դավանանքները — իսլամական հիմնական դավանանքներից առաջին և երկրորդն են, որոնք կոչվել են իրենց հիմնադիրների անունով (Իմամէըու Հանիֆե և Իմամ Շաֆի)։

98. Նայիբություն — նայիբ՝ բառացի նշանակում է փոխանորդ, տեղակալ։ Նայիբ էր կոչվում կադիի փոխանորդը, այսինքն մի կազա (գավառ) արփալըքի կարգով (տե՛ս ծանոթ. 10) վերցրած կադիին փոխարինող անձը, որ կոչվում էր նայիբ-ի կազա։ Նայիբները, ինչպես և կադին, շարիաթական դատավորներ էին։

Նայիբություն՝ այդ պաշտոնը և նրա ընդգրկած շրջանն է։

99. Նեմրուդ՝ Ներրովդ — ըստ ավանդության Բաբելոնը նվաճող և այնտեղ իշխող արքաներից առաջինն է, որը կառուցել է Բաբելոնի աշտարակը։ Ինչպես Եգիպտոսի վեհապետներն են ստացել Փարավոն ընդհանուր անունը, այնպես էլ Բաբելոնում իշխողները կոչվել են Նեմրուդ։ Բառացի նշանակում է կարծրասիրտ, դաժան և դժնդեմ անձնավորություն։

100. Կարա կոյունլի — տե՛ս հատ. II, ծանոթ. 46։

101. Դար-ուլ-բեդրիս, Դար-ուլ-հադիս և Դար-ուլ-կուրա — դար՝ վայր—տեղ, ուսումնարան։ Սրանք իսլամական կրոնական ուսումնական հիմնարկություններ են, որտեղ սովորում և ուսումնասիրում էին ղուրանը, հադիսները՝ մարգարեի խոսքեր և ավանդություններ, և առհասարակ պատրաստվում էին կրոնական գործունեության։ Այդպիսիները կոչվում էին Դար-ուլ-բեդրիս (ուսուցման վայր, դպրոց), դար-ուլ-հադիս (հադիսների ուսուցման վայր) և դար-ուլ-կուրա (Ղուրանի ընթերցանության ուսուցման վայր)։

102. Դեֆթերի խաքանի — արքունական մատյան։ Պետական մատյան, որի մեջ արձանագրվում էին կալվածներն ու նրանց վերաբերող տեղեկությունները։

103. Սանջբենդի — իսլամական աղանդավորական միաբանություն է։

104. Դուղման — բառացի նշանակում է օջախ, գերդաստան, մեծ և պատվավոր ընտանիք։ Չելեբին և այլ թուրք պատմագիրներ ու գրողներ, ըստ արևելյան սովորության, հատուկ և հասարակ անուններին (հնչմանը ներդաշնակ) ավելացնում են ածականներ։ Օրինակ, Քեչկվանի-դուղման, Նախիջևանի—Նակշի Ջիհան, Վանի—սեդդի իման և այլն։

105. Մերհեմ — սպեղանի, դեղ։

106. Սուլթան Հյուսեին Բայկարա — Թուրքեստանի սուլթաններից է, սերվել է Թիմուր Լենգի և մասամբ Ջինգիզի գերդաստանից։ Հիջրեթի 875 (1470) թվականին պատերազմելով իր հոր գահը հափշտակողների դեմ և ետ խլելով՝ իշխել է 33 տարի։ Վերոհիշյալ սուլթանը, պատմագիրների վկայությամբ, վերին աստիճանի արդարասեր, գիտությունն ու արվեստը հովանավորող անձնավորություն լինելով, Արևելքում մեծ հռչակ է վայելել։ Հայտնի բանաստեղծ Միր Ալիշերի Նավոյը սուլթանի վեզիրն է եղել, իսկ Արդուլ Ռահման Ջամին՝ նրա բանաստեղծը։

107. Շորագեր — Շորագյալ բերդի կառուցման պատմության մասին խոսելիս

Էվ. Չելեբին հիշում է մի ավանդություն, որով այդ բերդի կառուցումը կապում է Թուրքեստանի սուլթան Հյուսեին Բայկարայի հետ։ Իբր թե Բայկարան այդ բերդը կառուցել է հայտնի երաժշտագետ և գիտնական Շորագերի խորհրդով։ Էվ. Չելեբին այս ավանդությանը ավելացնում է արաբ պատմագիր Թոհֆեի մի վկայությունը այն մասին, որ Արևելքում հայտնի այդ երաժշտագետն է հորինել երաժշտական գիտության 48 բարդություններից մեկն՝ իր անունով հայտնի շոռագէրը։ Հեղինակի և նրա հորինած երաժշտական բարդության, այսինքն շորագերի անունով քաղաքը կոչվել է Շոռագյալ։

Թե էվ. Չելեբիի Շոռագյալ անվան ստուգաբանությունը որքանով է համապատասխանում իրականության, դժվար է ասել անհրաժեշտ պատմական տեղեկություններ չլինելու պատճառով, սակայն, այնուամենայնիվ արժանի է ուշադրության։

108. Սոֆա — տան տարբեր սենյակների միջև ընկած միջանցքի կամ դռների առջևից անցնող աղբյուրների եզրերին պատրաստված նստելու տեղ։

109. Էբու-Էլ-Ֆեթհի — տե՛ս հատ. II, ծանոթ. 3։

110. Սխալ է, հավանաբար 6000 զինվոր պետք է լինի։

111. Տաբբէ — բառացի նշանակում է կենդանի։ Տաբբէթ-ուլ-արզ՝ առասպելական կենդանի, որը պետք է երևա դատաստանի օրը՝ սեռի հետ միասին։

112. Էվլիյա Չելեբին իր այս և նախորդ մի շարք նկարագրություններում բոլորովին «անկեղծորեն» բերում է բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս սուլթանական Թուրքիայում տիրող բարքերը։ Սկսած փադիշահից, այսինքն իսլամական խալիֆայից, սադրազամներից—վեզիրներից, սերասքերներից և այլ բարձրաստիճանավորներից մինչև շարքային զինվորները ծայր աստիճան բարոյական անկում են ապրել։ Մեգրելիստանում կատարված հակամարդկային արարքների «նկարագրությունը» դրա պերճախոս ապացույցներից մեկն է։

Էվ. Չելեբիի սույն վկայությունը (Քեֆթան փաշայի կույս աղջիկների գնումը) մի անգամ ևս գալիս է ապացուցելու, որ XVII դարի երկրորդ կեսին ևս, օսմանյան արքունիքում, քաղաքներում և բանակում «ստրուկները» ու «ստրկուհիները» (այսինքն՝ պատանիները և կույս աղջիկները) դարձել են նորին վսեմություն սուլթանի, վեզիրների և փաշաների վավաշոտության զոհերը, նվեր են տրվել և ստացվել, վաճառվել են... Եվ տարօրինակն այն է, որ էվ. Չելեբին ոչ միայն չի խորշել նկարագրել այդպիսի հրեշային վարքն ու բարքը, այլև ինքն էլ ստացել է իր «համեստ» բաժինը։

Ժամանակակից թուրք պատմաբանները և այլ հեղինակներ պարծենում են իրենց միջնադարով, այն անվանելով «բարձր կուլտուրայի, գիտության և արվեստի դար»։ Նրանք «պնդում են», որ սուլթանական Թուրքիայում առհասարակ «ճորտատիրություն գոյություն չի ունեցել»։

Հապա ի՞նչ անուն տալ մաքրարյուն թուրք, հավատացյալ էվ. Չելեբիի կողմից բազմիցս հիշված և գովաբանված գարշելի արարքներին, ճորտությունից ավելի վատթար բարբարոսական ստրկատիրությունը հիշեցնող, դեպի մարդն ունեցած անմարդկային վերաբերմունքին, երբ «ղուլամներն» ու «ջարիյեները» (գեղեցիկ տղաներն ու ստրուկ աղջիկները) նվերի առարկա են եղել։ Դեռ ավելին, միջնադարի թուրքական պատմության մեջ կան փաստեր, երբ սուլթանին հարկատու իշխողները (օր. Մեգրելիայի իշխողները) այլ հարկերի հետ միասին, իբրև «հարկ» ամեն տարի պետք է սուլթանական արքունիք ուղարկեին որոշ թվով կույս աղջիկներ ու գեղեցիկ պատանիներ։ Ավելացնենք նաև, որ մինչև XIX դարի սկզբին Օս-

մանյան կայսրության մայրաքաղաքում՝ Ստամբուլում, քաղաքի կենտրոնում դեռևս գոյություն է ունեցել «ստրուկների շուկա»* որտեղ գնվել ու վաճառվել են երիտասարդ տղաներ ու աղջիկներ։

113. **Դարի-ֆելլահ** — *դար՝ վայր, տեղ, ֆելլահ՝ երկրագործ, մշակ։ Դարի-ֆելլահ նշանակում է երկրագործների վայր։*

114. **Կըզլար աղասի** — *Կըզլար աղասի էր կոչվում սուլթանի հարեմի կառավարիչը։ Կըզլար աղասի՝ այսինքն աղջիկների աղա։*

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

1. **Էվ. Չելեբիի** *կենսագրականում արդեն ասվել է նրա չափազանցություններին և առասպելներին հավատալու մասին։ Մարաշ քաղաքի և Ջեմիջիմե կայսեր առասպելական հարստության ու «կաթի ավազանի» մասին ևս նա անհավատալի չափազանցությունների է հասնում։ Այստեղ ուշագրավն այն է, որ Մարաշի բարեշինության ու հարստության մասին հորինված առասպելները Էվ. Չելեբին, ըստ իր սովորության, գրի է առել նույնությամբ։ Կասկած չկա, որ նման առասպելները բոլորովին անհիմն չեն։*

2. **Մավերա էլ Նեհր** *(արաբ.)—մավերա՝ անդր, այն կողմ։ Օրինակ, Մավերա-ի Կովկաս՝ Անդրկովկաս։* **Մավերա էլ Նեհր**՝ *գետի այն կողմը։ Այդպես էր կոչվում Սիհուն գետի այն կողմում գտնվող երկրամասը, որը Միջին Ասիայի պատմության մեջ կարևոր դեր է կատարել։*

3. **Քենդ** — *հրատարակչի ծանոթագրության մեջ ասված է, որ քենդ քաղաք է նշանակում։ Ժամանակակից ադրբեջաներենում գործ է ածվում* գյուղ *իմաստով։ Ըստ բառարանագետ Շեմսեդդին Սամիի Թուրքերեն ծագումով քենդ բառը գործածվում է նաև պարսկերենում։ Բուն իմաստը բերդ, պարիսպ է, սակայն ներկայումս այդ իմաստը չի պահպանվել։ Հնում մի շարք մեծ քաղաքների անունները* **Քենդ** *բարդությամբ են կազմվել, օրինակ՝ Տաշքենդ, Սեմերքենդ, Խոքենդ և այլն։ Նոր Թուրքերենում փորձեր են արվում վերականգնել* **Քենդ**-*ի հին իմաստը. այսպես, բաշքենդ բառը գործ է ածվում մայրաքաղաք իմաստով (Բաշքենդ)։*

4. **Էրջիսը** *ներկայումս կոչվում է Էրջիաս լեռ և գտնվում է քաղաքի ոչ թե հյուսիսային, այլ հարավային կողմում։*

5. **Ալ-Դանիշմենդ** — *Ալ՝ գերդաստան, դինաստիա։ Օրինակ՝ Ալ-Օսման՝ օսմանյան դինաստիայի սուլթաններ։ Դանիշմենդների իշխանությունը Անատոլիայում սկսվել է 1071 թվականից և շարունակվել մինչև 1177 թվականը (1660—1763)։ Հիմնադիրը Ալփ. Ասլանի Թուրքմեն բեյերից մեկն է, Մելիք Դանիշմենդ Ահմեդ Ղազին։ Պետության կենտրոնը եղել է Սվազը։*

6. **Բոյաջի կափուսի**—*ներկարարի դուռ։*

7. **Քեչի կափուսի** — *այծի դուռ։*

8. **Միմար Սինան** — *Սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակաշրջանի Թուրք ճարտարապետ, որ հայտնի է Միմար Սինան կամ Կոջա Սինան անուններով։ Միմար Սինանը կառուցել է բազմաթիվ ջամիներ, կամուրջներ և այլ շինություններ, որոնցից ամենահայտնին Ստամբուլում Սյուլեյմանիյեի ջամին է։*

9. **Քիսե** — *դրամի քսակ։*

---

* اسیر بازاری

10. Մյուհրեսիր — տե՛ս հատ. II, ծանոթ. 14։

11. Մելևի — դերվիշական միաբանություն, որը հիմնել է Ջելալեդդին Ռումին։

12. Քեյմուրաս — Շահ, Իրանի առասպելական պատմության համաձայն Քեյմուրասը ապրել է մեր թվարկությունից երեք հազար տարի առաջ և հայտնի է Գյուլշահ անունով։ Ըստ իրանական ավանդությունների Ադամի որդիներից է։ Իշխել է 30 տարի։ Հիմնել է Դիմավենտ, Բելխ և այլ քաղաքները։

13. Ջեհակ — ըստ Իրանի առասպելների՝ Փիշտատյան շահերից է և ապրել է մեր թվարկությունից երկու հազար տարի առաջ։

14. Չելեբի սուլթան Մուհամմեդ — 816—824 թ. (1413—1421)։

15. Բայազիդ — սուլթան Բայազիդ II-ն է (1481—1512 թ.)։

16. Սիր — հավանաբար սուրբ բառի աղավաղումն է։ Պետք է լինի սուրբ Նշան։

17. Դար-ուլ-բեդրիս (արաբ.) — Դար — վայր, տեղ։ Գործ է ածվում շատ բարդություններում, ինչպես օրինակ՝ դար-ուլ-հարբ պատերազմավայր, դար-ուլ-խեւլաֆե՝ խալիֆայի վայր, դար-ուլ-շեֆեկա՝ որբանոց, դար-ուլ-ֆինուն՝ համալսարան, դար-ուլ-մուալիմին՝ ուսուցչանոց և այլն։ Այստեղ գործածված դար-ուլ-թեդրիսը նշանակում է դպրոց, ուսումնարան, մեդրեսե։

18. Թեքիյե — իսլամական աղոթավայր, մենաստան։ Թեքիյե էին կոչվում իսլամական շեյխերի, դերվիշների հովանավորության տակ գտնվող նրանց աղոթավայրերը և բնակավայրերը։ Թեքիյեում ապրող դերվիշները կոչվում էին Թեքիյե-նիշին, այսինքն մենաստանավոր, մենաստանում բնակվող։

19. Քիլե — գրիվ, հացահատիկների չափ, որը հավասար է 45 լիտրի։

20. Օկնա — ծանրության չափ, հավասար է 1 կգ. 282 գր.։

21. Էվ. Չելեբին փոխանակ նշելու ջամիի կառուցման համար ծախսված գումարը, այն արտահայտում է Սելջուկյան սուլթան Ալաեդդինի ռումիով, այսինքն Սվազից ստացած «Յոթ ռումի խարաջով»։ Խարաջը, ինչպես հայտնի է, շարիաթական այն գլխահարկն է, որ գրեթե բոլոր իսլամական երկրներում գանձվել է ոչ-իսլամ հպատակներից։ Էվ. Չելեբին նշում է, որ ջամիի պատի վրա պատմության ձևով է գրված նրա կառուցման թվականը։ Այստեղ, պատմությունը պետք է հասկանալ գաղտնագիր արձանագրության ձևը։ Հնում կարևոր դեպքերի, նշանավոր անձանց գործերի և մահվան, մեծ շենքերի և կառուցումների տարեթիվը նշվել է գաղտնագիր ոտանավորներով (բեյթ), որոնց մեջ օգտագործվել են արաբական տառերի թվական արժեքը։ Թարիխ կամ բեջնիս կոչված այս ձևը միջնադարյան գրականության տարածված ձևերից է։ Միջնադարյան հայ գրողներն էլ գործածել են թարիխ և բեջնիս գրելաձևը, օրինակ՝ մեծ գուսան-բանաստեղծ Սայաթ-Նովան։ Միջնադարյան թուրք պատմագիրների երկերում, այդ թվում նաև Էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեջ հաճախ կարելի է հանդիպել այդպիսի թարիխների։

22. Մինբեր — ջամիների այն աստիճանավոր ամբիոնը, որտեղ բարձրանում է խաթիբը և խութբե (մաղթանք, աղոթք) կարդում։

23. Էբու-էլ-ֆեթհ — տե՛ս հատ. II, ծանոթ. 3։

24. Բուդին (Բուդուն, Բուդա) — Մաջարիստանի (Հունգարիայի) մայրաքաղաքը և օսմանյան հին բեյլերբեյիության կենտրոնը։ Բուդին քաղաքի դիմաց գտնվող Փեշթե քաղաքը հետագայում միացել է նրան և կազմվել է Հունգարիայի ներկա մայրաքաղաք Բուդափեշթեն (Բուդապեշտը)։

25. Բերայա (եզ. բերիյե) — բառացի նշանակում է մարդիկ։ Գործ է ածվում սովորական հպատակներին ռայաներից տարբերելու համար։

26. Սովորական հարկեր (թեքալիֆի էորֆիյե)—Էվ. Չելեբին հաճախ է հիշատակում այն ժամանակ Թուրքիայում գոյություն ունեցող հարկերը։ Այդ մասին որոշակի պատկերացում կազմելու համար, ընդհանուր ծանոթություն ենք տալիս հարկերի մասին։

Օսմանյան պետության մեջ և Արևմտյան Հայաստանում հարկերը ունեցել են հետևյալ պատկերը։

Բազմատեսակ հարկերը բաժանվել են երկու հիմնական կատեգորիայի՝ շարիաթական հարկեր (թեքալիֆի շերիյե) և սովորական հարկեր (թեքալիֆի էորֆիյե)։

Շարիաթական հարկերի հիմնական տեսակները, որոնք հայտնի էին զեքաթ, աշար, խարաջ և ջիզիյե անուններով, շարիաթի համաձայն նշանակված հարկերն էին։ Դրանց հիման վրա անձնական սեփականության և տնտեսության տարբեր ճյուղերի համար, երկրի տարբեր մասերում և տարբեր ժամանակաշրջանում նշանակվել են 80 տեսակ բազմապիսի հարկեր։

Օրենքով սահմանված հարկերը մուսուլմանների և ոչ-մուսուլմանների համար տարբերվել են ըստ տեսակի և քանակի։ Օրինակ՝ իսփենջ անունով անձնական հարկը մուսուլմանների համար սահմանվել է 22 ակչե, իսկ ոչ մուսուլմանների համար՝ 25 ակչե։

Այդ հիմնական համարվող բազմաթիվ հարկերից բացի, պետության եկամտի գլխավոր աղբյուրը կազմել են նաև տարբեր տուրքեր անունով 350-ից ավելի՝ գլխավորապես անհրաժեշտ կարիքների և մթերքների վրա նշանակված տուրքերը։ Այս տուրքերը շարունակվել են մինչև Թանզիմաթը։

Սովորական հարկեր անունով 97 տեսակի տուրքերը երկրի պատերազմական կարիքների, բանակի, նավատորմի, ճանապարհների, սուլթանական արքունիքի բազմատեսակ կարիքների համար, նշանակվել են թե կենտրոնական կառավարության և թե վիլայեթների վարչության կողմից։

27. Էվ. Չելեբին Արաբկիրը ստուգաբանում է բռնազբոսիկ կերպով։ Նախ Արաբկիրը վերածում է «Արաբգեր»-ի (արաբ և գեր)։ Գիր կամ գեր ածանցը պարսկերենում կատարող, անող իմաստն ունի, օրինակ՝ զեր-գիր՝ ոսկերիչ։ Արաբ-գերը ստուգաբանում է Արաբի կառուցած իմաստով։

28. Մուկադդեսի (կամ Մակդիսի) պատմություն — X դարի երկրորդ կեսի արաբ ուղեգիր և աշխարհագրագետ Մուկադդեսին, ծնվել է Երուսաղեմում։ Մոտ 20 տարի ճանապարհորդել է Արևմտյան Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում։ Իր հավաքած նյութերի, ինչպես նաև նախորդ արաբ աշխարհագրագետների աշխատություններից քաղած տեղեկությունների հիման վրա Մուկադդեսին կազմում է երկրագնդի կլիմայական գոտիների մասին աշխատությունը, որը կոչվում է «Կլիմաների ճանաչման ամենալավ հրահանգը»։ Միջնադարի արաբ և պարսիկ աշխարհագրագետները, ինչպես նաև Էվ. Չելեբին լայնորեն օգտագործել են Մուկադդեսի կազմած «Կլիմայական գոտիները», որը վերաբերում է երկրագնդի այն ժամանակ հայտնի արևելյան կիսագնդի հյուսիսային կեսին։

29. Բախտ-ու-Նասր — Նաբուգոդոնոսորն է։

30. Դար-ի խարփութ — բառացի՝ էշի կուռքի վայր։ Էշի պաշտամունքի մասին խոսելիս, Էվ. Չելեբին, հավանաբար, առանց լրիվ պատկերացում ունենալու, նկատի է ունեցել կենդանիների թոթեմական պաշտամունքը։

Վաղ տոհմային հասարակության դարաշրջանում թոթեմիզմ է կոչվել այն կրոնական հավատալիքը, որի համաձայն մարդկանց որոշ խումբ (հաճախ ամբողջ տոհմը) որևէ կենդանու, բույսի կամ բնական երևույթի հետ ունեցել է տոհմային կապ։ Այդ կենդանին կամ բույսը համարվել է այդ տոհմի թոթեմը (պաշտամունքի առարկան)։ Թոթեմին չէր կարելի սպանել կամ գործածել իբրև ուտելիք։ Պետք է ենթադրել, որ Էվ. Չելեբիի նշած էշի պաշտամունքի ավանդությունը կապված է թոթեմիզմի հետ։

31. **Խարբիտ** — խար պարսկերեն նշանակում է փուշ։ խար-բիթ (հավանաբար բեյթ)—փշի տեղ, փշավայր։

32. **Հասան Զիյադ էոլքեսի** — Հասան Զիյադի երկիր։

33. **Ղուսլ** — բոլոր տեսակի կեղտոտություններից մաքրելու համար՝ շարիաթի կարգով ամբողջ մարմնի լվացումը։

34. **Ջեմ** — տիտղոս է, վարպետ, մելիք, շահ իմաստով։ Իրանական առասպելներից մեկում գինու և խրախճանքի վեհապետի անունն է։

35. Այս թիվը աղավաղված է, հավանաբար պետք է լինի հազար։

36. **Վոյվոդա** — ռուսական (воевода) բառից։ Քաղաքի կամ ավելի մեծ վարչական միավորի կարգ ու կանոնը հսկող պաշտոնյա։ Ավելի շատ գործածվում է եվրոպական մասում՝ Սերբիայում, Էֆլաքում, Բոգդանում և այլն։

37. **Էրզանեն** (Արդնին) Փալուի ոչ թե արևմուտքում է, այլ հարավում, իսկ տարբերդը՝ ոչ թե հյուսիսում է, այլ արևմուտքում։

38. **Իսքենդեր-Զյուլքարնեյն** — Ալեքսանդր Մեծին տրվել են այս անունները՝ Իսքենդեր-ի Ռումի, Իսքենդեր-ի Յունան, Իսքենդեր-ի Զյուլքարնեյն։ Այս վերջինը հիմնականում գործածվում է արաբական պատմագիրների և գրողների կողմից։ Զյուլքարնեյն նշանակում է երկու կոտոշավոր։ Այս առասպելը Էվ. Չելեբին իր «Ուղեգրության» մեջ հիշատակում է մի քանի առիթներով։

39. **Նեդիմ** — այն անձինք, որոնք իրենց զվարճախոսություններով զբաղեցնում են սուլթանին։

40. **Չըլդըրի նվիրական պատերազմը** — Չըլդըրը Կարսի վիլայեթի Չըլդըր կազայի (գավառ) կենտրոնն է եղել, որը 17-րդ դարում առանձին էյալեթ է կազմել։ Այստեղ հիշատակված Չըլդըրի նվիրական պատերազմը տեղի է ունեցել 985 (1578) թվականին օսմանցիների և սաֆևիների միջև։ Թուրքական բանակի հրամանատարը եղել է Օսման փաշան։ Իրանյան բանակը պարտության է մատնվել։ Վրացական բազմաթիվ բերդեր ստիպված հպատակություն են հայտնել օսմանցիներին։ Քարթլիի թագավոր Դավիթը, դատարկելով իր մայրաքաղաք Թիֆլիսը, փախել է։ Թիֆլիսը գրավվել է օսմանցիների կողմից առանց կռվի։ Դրանից հետո օսմանցիները գրավում են Քարթլին և այն վերածում օսմանյան էյալեթի՝ փաշայության աստիճանով. իբրև բեյլերբեյի նշանակում են Կասթեմունիի սանջաքի Մեհմեդ բեյին։

41. **Մերհալե** — մեկօրյա ճանապարհ։

42. **Շերեֆնամե** — տե՛ս հատ. II, ծանոթ. 94։

43. **Նեմրուդ** — Բաբելոնի առասպելական աշտարակը կառուցող արքան։ Ընդհանրապես գործ է ածվում վեհապետ, արքա իմաստով։

44. **Մուշ** — պարսկերեն նշանակում է մուկ։

45. **Զանլի Քիլիսե** — բառացի նշանակում է զանգակավոր եկեղեցի։ Թուրքերեն այդպես են կոչում Մուշի սուրբ Կարապետի վանքը։

46. Մյուսելլիմ — միջին աստիճան ունեցող քաղաքային վարչության պաշտոնյա։

47. Հավանաբար եպիսկոպոս պետք է լինի։

48. Քաֆիրիստան — Քյաֆիր՝ անհավատ։ Իսլամական կրոնի համաձայն բոլոր ոչ-մուսուլմանները համարվում են անհավատներ՝ քյաֆիր։ Քաֆիրիստան՝ քյաֆիրների երկիր, ոչ-մուսուլմանական երկիր։ Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող լեռնոտ երկիրը նույնպես կոչվել է Քաֆիրիստան։

49. Պետք է լինի Երևանի մոտ։

50. Հյուսեին Բայկարա — տե՛ս հատ. II, ծանոթ. 106։

51. Պետք է լինի սուրբ Կարապետ։

52. Վեճափառ Յանյա — Հովհաննես Մկրտիչ։

53. Չոբանյաններ — խոսքը XIV դարում Էրզրումում իշխող հայտնի Չոբանյան դինաստիայի մասին է, որի նշանավոր ներկայացուցիչն է եղել Թիմուր-Դաշը։ Այս դինաստիան իշխել է մինչև XV դարի սկիզբը։ Այնուհետև իշխանությունը անցել է Ակ-կոյունլի թուրքմենների ձեռքը։

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

1. Վեճափառ Յունիս — հայտնի է Չյունուն անունով. ծագումով ասորի է, խորայելացի։ Քրիստոսից 770 տարի առաջ ապրած նվիրական անձնավորություն է։

2. Դեյրի-Մեսիհ — բառացի նշանակում է Մեսիայի վանք։

3. Մեսիհ — Մեսիա՝ Քրիստոս։

4. Կիյա — ծանրության չափ է և հավասար է 1 կգ. 282 գրամի։

5. Կայսերական դեֆթերխանե — Դեֆթերխանե էր կոչվում պետական այն վարչությունը, որտեղ արձանագրվում էին հանրային հողերն ու կալվածները և նրանց վերաբերյալ առուծախի և փոխանցման գործողությունները։

6. Վեճափառ էբուբեքիրը — Մուհամմեդից հետո, առաջին Ռաշիդյան խալիֆան է։

7. Ջիզիյե — կոչվել է նաև Ջիզիեի-շերիյե (շարիաթական գլխահարկ)։ Այս հարկը Օսմանյան պետության հիմնադրումից սկսած վերցվել է քրիստոնյա հպատակներից և երկրներից (օրինակ՝ Վենետիկի և Սերբիայի կառավարություններից)։ Սկզբում քրիստոնյա հպատակները ջիզիե են վճարել այսպես. բարձր դասը՝ 30 ակչե, միջակ դասը՝ 20 ակչե, ցածր դասը՝ 10 ակչե։ Սուլթան Մուրադ III-ի ժամանակ (1574—1595) խմիչքների վրա նշանակված տուրքը ավելացվում է ջիզիեի վրա, որից հետո այդ հարկը ըստ դասերի բարձրացվում է 45, 30 և 15 ակչեի։ Այդ դարաշրջանում մեկ ակչեն 30—40 փարայի էր հավասար։ Հետագայում այս հարկի գումարը նորից փոփոխությունների է ենթարկվում։ Այսպես, Քյոփրյուլու Մուստաֆա փաշայի սադրազամության ժամանակ այս հարկը վերցվել է 48, 24 և 12 դիրհեմ արծաթով։ 1855 թվականից ջիզիեի հարկը վերանվանվում է «Բեդել-ի ասքերիյեի», այսինքն զինվորական ծառայության փոխարեն վճարված հարկ։ Քրիստոնյաները զինվորական ծառայության չէին կանչվում և փոխարենը վճարում էին 50, 30 և 15 ղուրուշ։ Այս հարկից ազատված էին հոգևորականները, կառավարական պաշտոնյաները, անչափահասները, ծերերը, սուլթանական բերաթներով և վեզիրների հրամաններով ներվածները։ 1908 թվականին օսմանյան

սահմանադրության հրապարակումից հետո վերոհիշյալ զինվորական հարկը վերացվեց և քրիստոնյաներն էլ զինվորական ծառայության կանչվեցին։

8. Յարլիղ — փադիշահական ֆերման։

9. Գրքում բիմարը սխալմամբ բյուչար է տպագրվել։ Այդ սխալը կրկնվում է մի քանի տեղերում։

10. Դիվանխանե — ընդարձակ սրահ։

11. Սելսեբիլ — դրախտում հոսող ականակիտ ջուրը։

12. Սոմար — հացահատիկի կշռման չափ, հավասար է 16 փթի։

13. Ղեդդարե — երկու կողմից հատող ծանր սուր։

14. Կանթար — հայերեն կենդինար։ Ծանր ապրանքներ կշռելու հատուկ կշեռք։ Մեկ կանթարը հավասար է 44 օկկայի։ Նոր կանթարը՝ 100 կիլոգրամի։

15. Ջերգիս կամ Ջերջիս — քրիստոնեական ավանդությունների համաձայն՝ քրիստոնեական 91 թվականին Մուսուլ քաղաքում Ջերջիսը քրիստոնեական կրոն է քարոզել ու տարածել և տեղի իշխողի՝ Զազանի կողմից, անասելի և դաժան չարչարանքների է ենթարկվել և նահատակվել։ Նրա հետևորդները՝ 34 հազար մարդ, բոլորը ոչնչացվել են։

Պաղեստինի Քանանի երկրում Ջերգիս անունով մի ցեղ է ապրել։

16. Շաֆիի (شافعی) դավանանք—իսլամական չորս հիմնական դավանանքներից երկրորդն է։ Հիմնադիրը եղել է Մեքքայում և Մեդինայում իսլամական կրոնի ոգով կրթված Իմամ Շաֆին։ Մահացել է հիջրեթի 197 թվականին Եգիպտոսում և թաղված է այնտեղ։

17. Էվ. Չելեբին քրդական լեզուներ ասելով նկատի ունի քրդական բարբառները։

18. Թախթգյահ — մայրաքաղաք, գահավայր։

19. Դադվանի լեռները գտնվում են Վանա լճի արևմտյան եզերքին։

20. Թախթի Վան — Դադվանն է։

21. Քեոր — հավանաբար Սուրբ Գևորգ։

22. Շեհբենդեր — ընդհանրապես գործ է ածվում հյուպատոս իմաստով, այստեղ ունի առևտրական գործերի գործակալի իմաստ։

23. Կափանդար — շուկայի մեծ կշեռքով՝ կափանով կշռող։

24. Բոյա էմինի — ներկի էմին։

25. Նաքշբենդի, գյուլշենի և բեկրաշի — աղանդներ են։

26. «Խըյաբան-ի զէր» — ոսկյա ծառուղի։

27. Քյաշի — Իրանի Քյաշան քաղաքում պատրաստված ընտիր հախճապակի։

28. Թելաթին է կոչվել Ռուսաստանում ձիու կաշիից պատրաստվող ամուր և փափուկ կաշին։

29. Էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեջ սխալմամբ տպված է 1605 թ., պետք է լինի 1065 (1654) թվական։

30. Դերբենդ — կիրճ, կապան։

31. Էվ. Չելեբին սխալվում է։ Նախ կղզիները երկուսը չեն, այլ չորսը։ Կղզիների անունները նույնպես ճիշտ չեն։ «Ահտըմ վար» անունը աղավաղված է, պետք է լինի Ախթամար։ Այս կղզին ունի ամրակուռ բերդ և հնագույն վանք։ Այդ վանքը Ախթամարի հայկական կաթողիկոսության կենտրոնն է եղել։ Հետևաբար Ախթամար անունը սխալմամբ հիշվում է երկու անգամ։ Մնացած երեք կղզիներից

լիմում և Կտուցում մենաստաններ կան, իսկ չորրորդը՝ Աստեր կղզին, անբնակ է։

32. Կուլաչ — խորության չափ է և հավասար է 1895 մետրի։

33. Էվ. Չելեբին կարմիր ձկներ է անվանում տառեխ անունով հայտնի ձկներին։

34. Շեյխ Մուսաաֆա Ախլարի — Էվ. Չելեբին «Ախլաթի ավերակներ» հատվածում գրում է, որ Շեյխ Մուստաֆա Ախլաթին հանեֆի դավանանքին պատկանող բարեպաշտ անձնավորություն է եղել։

35. Ադ ցեղը (قبيلة عاد)—Աստվածաշնչական ավանդությամբ Հաբեթի որդի Ագի ցեղն է, որն ըստ ավանդության ապրել է մեր թվականությունից երեք հազար տարի առաջ։

36. Մահանի փաղիշահը — Մահանի երկրի մասին տե՛ս հատ. II, ծանոթ. 77։

37. Բոյբեյի — տե՛ս հատ. I, ծանոթ. 17։

38. Ջելի — արաբական տառերով այն խոշոր գրերը, որոնք պարզ են, խոշոր և հեռվից կարելի է հեշտությամբ կարդալ։

39. Մեհրաբ — ջամիների, մզկիթների բեմը։ Մեհրաբից իմամը նամազ է անում և քարոզ կարդում։

40. Սխալ է, կարող է լինել հարյուր արշին կամ քայլաչափ։

41. Դերգյահ-ի ալի-ղներգյան (պարսկերեն)—բառացի նշանակում է դուռ, դռան ճակատ. ալի՝ բառացի նշանակում է բարձր, բարձրագույն, օրինակ՝ Բաբը Ալի նշանակում է բարձրագույն Դուռ, օսմանյան կառավարության կենտրոնական շենք, որը գործ է ածվում կենտրոնական կառավարության իմաստով։ Դերգյահի Ալի՝ փադիշահական, սուլթանական Բարձր Դուռ։

42. Ներուզ — տե՛ս հատ. II, ծանոթ. 52։

43. Բարկիր կալասի — բերդ Վանի շրջանում։

44. Ամիկ — (արաբ, ամիք) բառացի նշանակում է խոր։

45. Սուլեյմանիյե — սուլթան Սուլեյմանի կողմից կառուցված հայտնի ջամի Ստամբուլում։

46. Սերափերզե — նշանակում է արքունի տաղավար։

47. Կափուչի բաշի — տե՛ս հատ. I, ծանոթ. 25։

48. Խաթթ-ի Շերիֆ — խաթթ՝ փադիշահական հրովարտակ, ֆերման, շերիֆ նվիրական, բարձր, վսեմ։ Խաթթ-ի շերիֆ կամ խաթթ-ի հյումայուն կոչվում էին պետական կարևոր հարցի մասին սուլթանների ձեռքով գրված և պաշտոնապես կարդացված ֆերմանները։

49. Մելեք Ահմեդ փաշա — Էվ. Չելեբին բոլոր առիթներով գովաբանում և դրվատում է իր հովանավոր և մեկենաս Մելեք Ահմեդ փաշային, իբրև կարող, իմաստուն և արդարասեր պետական գործիչի։ Սակայն փաստերը չեն հաստատում այդ։ Մելեք Ահմեդ փաշան եղել է միջնադարյան ռազմաֆեոդալական Թուրքիայի տիպիկ պետական գործիչ, որն իր մեջ մարմնավորել է սուլթանական ռեժիմի բոլոր բացասական գծերը,—կողոպուտով, թալանով, հափշտակությամբ, սպանություններով, կաշառքներով և նման միջոցներով անչափ հարստանալու, շռայլ ցոփ կյանքով ապրելու անհագ ցանկությամբ։

Մելեք Ահմեդ փաշան Անատոլիայի մի քանի էյալեթներում (Էրզրում, Բաղդադ, Վան և այլն) վալի է եղել։ Լինելով սուլթան Մուրադ IV-ի փեսան նշանակվել է նաև որպես սադրազամ։ Սադրազամության պաշտոնում մնացել է մեկ տարուց քիչ ավելի։ Հրաժարականի պատճառը եղել է այն, որ պետության ֆի-

Նանսակյան ծանր վիճակը թեթևացնելու համար, նա փորձել է շրջանառության մեջ դնել կեղծ դրամ, և ենիչերիներին ռոճիկ վճարել այդ դրամով, իսկ կեղծ դրամի փոխարեն հավաքել է ոսկեդրամը։ Պատմագիր Ի. Հ. Դանիշմենդի վկայությամբ Ահմեդ փաշայի այս «միջոցառումը» էսնաֆների ոտքի կանգնելու և ժողովրդական ապստամբության պատճառ է դարձել *։

Այս փաշայի Վանի վալիության շրջանի մասին Էվ. Չելեբիի հաղորդած տեղեկությունները և փաստերը, Բիթլիսի քուրդ Աբդալ խանի հետ ունեցած հարաբերությունները պերճախոս կերպով բնորոշում են Մելեք Ահմեդ փաշային։ Այդպիսին է եղել Օսմանյան կայսրության միջնադարյան ռազմաֆեոդալական իշխանությունը, սկսած փադիշահ-խալիֆայից, սադրազամներից, վեզիրներից, փաշաներից մինչև վիլայեթների, սանջաքների և գավառների իշխանավորները, որոնք բոլորը Աստծո, շարիաթի և Մարգարեի անունից դաժանորեն հալածել ու տանջել են իրենց բարբարոսական ռեժիմի դեմ ամենափոքր հակառակություն ցույց տվողներին, անխնա շահագործել են ժողովրդական միջին և ցածր խավերին, անհագորեն ծծել են գյուղացիության արյունը։

50. Դար-ի իման — բառացի նշանակում է հավատքի վայր։

51. Ջալուր (Մելեկ Ջալուր) — Պաղեստինի վեհապետներից մեկի կողմից խաչակիրների վրա ուղարկված բանակի հրամանատարը, որն իր քաջագործությամբ հայտնի առասպելական անձնավորություն է։

52. Յըզդ Ջըրդ — Սասանյան արքաներից է, որը իշխել է V դարի սկզբին։ Հայտնի է եղել իր բռնությամբ և կոպտությամբ։

53. Սիփահսալար — զինվորական հրամանատար, սերդար, սերասքեր։

54. Կումբարա — պայթուցիկ նյութով լցված ռումբ, նռնակ։

55. Թզաչափը կամ թիզը հավասար է 0,233 մետրի։

56. Կալիոն — հին պատերազմական նավի մի տեսակ։

57. Ազաբների զորամաս — ազաբ բառացի նշանակում է ամուրի։

Ազաբների զորամաս էր կոչվում օսմանյան բանակի միավորումներից մեկը, որի զինվորները ամուրի էին և ամուսնանալու իրավունք չունեին։ Այդ զորամասը մտնում էր էյալեթի զինվորների կազմի մեջ։

58. Սերդեն գեչդի էին կոչվում օսմանյան բանակի փոքր զինվորական խմբերը, որոնք ունեին հատուկ զինվորական պարտականություն։ Նրանք անսպասելիորեն մխրճվում էին թշնամու բանակի խորքերը կամ պաշարված բերդը։ Սերդեն գեչդի զինվորների հարձակումները ընդհանրապես վերջանում էին հաջողությամբ։ Երբ պաշարված բերդի գրավումը ուշանում էր, այդ դեպքում դալ կըլըչ (սուսերամերկ) զինվորները, գիշերով, աննկատելիորեն, սանդուղքներով մտնում էին թշնամու բերդը և հակառակորդի բանակում շփոթություն առաջացնելով՝ հեշտացնում էին բերդի գրավումը։

Սերդեն գեչդի և Դալ կըլըչ զինվորական խմբերը օսմանյան բանակում խոշոր դեր են խաղացել և սարսափ տարածել։

59. Կեդիկ — որևէ մեկին մշտական ծառայության կամ պաշտոնի նշանակումը. կեդիք ունեցողը կոչվում է կեդիկլի։

60. Դիրլիկ — ապրուստի միջոց։ Թուրքական ավատական սիստեմում դիրլիք

---

* I. H. Danişmend, Izahlı Osmanlı tarihi Kronolojisi, cild III, s. 509.

էին կոչվում թիմարի և զեամեթի սիփահիներին իրենց տարեկան եկամտի չափով տրված հողաբաժինները։ Մանրամասնությունները տե՛ս հատ. I, ծանոթ. 3։

61. Սալավար — (եզ. սալվե կամ սելաթ), բառացի նշանակում է աղոթք, նամազ։ Վտանգի պահին կարդացված հատուկ աղոթք։

62. Արփալըք — տե՛ս հատ. II, ծանոթ. 10։

63. Խասեքի — փադիշահի պալատում ծառայող այգեպանների հատուկ դասը և նրանց սպաները։

64. Մուկաթաա, մուկաթաաջի — մուկաթաա էին կոչվում այն հողերը, որոնց տասանորդի հարկը տրվում էր որոշ մարդկանց, առանց այդ հողերը ծախելու իրավունքի։ Այդ հողերը կոչվում էին մուկաթաալը ճողեր։ Մուկաթաաջի՝ մուկաթաայի գործերին հսկող պաշտոնյա։

65. Մեկուֆաթչի — վակֆներին հսկող պաշտոնյա։

66. Դիվանը խալիֆեճեր — դիվանը փադիշահի և վեզիրների հատուկ դիվանատուն է։ Խալիֆե կամ քալիֆե նշանակում է քարտուղար։

67. Ֆեթվա — շարիաթական սկզբունքների համաձայն մյուֆթիի կողմից որևէ հարցի մասին (առանց անունը հիշելու) գրի առնված և տրված վճիռ։ Հաճախ կոչվում է ֆեթվայի շերիֆ (նվիրական ֆեթվա)։

68. Նազիր — որևէ ցեղի կամ աշիրեթի ղեկավար կամ փոխանորդ։ Նազիր էին կոչվում այն թեքիյեում շեյխին օգնող և նրան փոխարինող ստաժավոր դերվիշները։

69. Նայիբ — փոխանորդ, կադիի՝ դատավորի փոխանորդը։

70. Մյուսթահֆեզ էին կոչվում զինվորական ծառայությունը ավարտած, պահեստի դասից հետո միայն երկրի պահպանության ծառայող զինվորները։

71. Ղազի-Կըրաճ — ղազիներին ջարդող։

72. Չերխեջի — բանակի առջևից շարժվող թեթև զորամաս, առաջապահ։

73. Բալա բուրջ — բարձր աշտարակ։

74. Սու-կուլեսի — ջրի աշտարակ։

75. Կավուք — խույր, հին ձևի գլխարկ, որը պատրաստվում էր բամբակից, բավականին բարձր էր և վրան փաթթոցներ էին փաթաթում։

76. Ֆիրենգի — եվրոպական տարազ։

77. XVI—XVII դարերի թուրք և օտար պատմիչների վկայությամբ Օսմանյան կայսրությունը բաժանված է եղել ոչ-միատեսակ հիմունքներով վարչական միավորների։ Ասիական մասի հարավ-արևելքում, սահմանամերձ շրջաններում և, մասնավորապես, քրդական ցեղերով բնակեցված շրջաններում եղել են մի շարք կիսաանկախ վարչական միավորներ։ Դրանք էին ճյուքումեթճերը, յուրթլուքճերը և օջաքլըքճերը։

Օսմանյան ռազմա-ֆեոդալական պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել ինքնավարության. ազգությունների և ցեղերի ինքնորոշման մասին։ Այդ հյուքումեթների և օջաքլըքների առկայությունը կարելի է բացատրել սուլթանական Թուրքիայի ֆեոդալական մասնատվածությամբ, կենտրոնական իշխանության թուլությամբ և մասամբ նաև սահմանային շրջանները տեղական ուժերով պաշտպանելու քաղաքականությամբ։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, այդպիսի կիսաանկախ վարչական միավորներ են եղել քրդական տարբեր ցեղերով բնակված շրջանները։ Թուրքական սուլթանները անկարող լինելով, երբեմն նաև ձեռնտու չհամարելով, քրդական ցեղերի (աշիրեթ) լրիվ հպատակեցում կենտրոնական իշխանու-

թյանը, նրանց շնորհում էին վերոհիշյալ անուններով կիսանկախ իշխանություններ, որոնցից, հարկավ օգտվում էին քրդական ցեղապետները (աշիրեթապետները) և ստեղծում էին իրենց շահերին համապատասխան մեծ և փոքր իշխանապետություններ:

Այս առումով թուրքական կենտրոնական իշխանության և քրդական տեղական ցեղապետների շահերը մասամբ համընկնում էին։ Սակայն երբեմն այդ հյուքումեթները, ի վնաս կենտրոնական կառավարության, ուժեղանալով՝ վերածվում էին կենտրոնախույս, անկախ շրջանների՝ իրենց բանակով, ներքին կազմակերպությամբ և հաճախ Ստամբուլի սուլթանական արքունիքը հիշեցնող սեփական արքունիքով և շքեղությամբ։ Սրա ամենատիպիկ օրինակը Բիթլիսի հյուքումեթի իշխող քուրդ Աբդալ խանն է։

Էվ. Չելեբիի «Ուղեգրության» մեջ և այլ թուրքական աղբյուրներում հիշատակվում են 16—17-րդ դարերում գոյություն ունեցող հյուքումեթները և օջաքլըքները:

ա) Դիարբեքիրի էյալեթը ունեցել է հետևյալ հյուքումեթները. Փալու, Գենջ, Ջեզիրե, Էգիլ, Հեզզո, Թերջիլ, Սառու (կամ Սավուր)։ Իսկ իբրև յուրթլուք և օջաքլըք՝ Սեղման, Կուլեր, Փերթեքերք, Չեպաքջուր, Ջերմիկ, Մեհրանիե, Թերջել, Աթաք:

բ) Վանի էյալեթում կային Հեքարիի, Բիթլիսի, Խիզանի, Խոշաբի (այլ անունով Մահմուդիյե) հյուքումեթները և Էրկիրի օջաքլըքը։

գ) Մի շարք աղբյուրներում նշվում են, որ օջաքլըքներ ունեցել են նաև Չըլդըրի, Բաղդադի էյալեթները և այլն։

Վերոհիշյալ վարչական միավորները տարբերվում էին իրենց քաղաքական-վարչական իրավասություններով։ Նրանցում ընդհանուրն այն էր, որ Ստամբուլի կենտրոնական իշխանությունը անմիջապես չէր միջամտում նրանց ներքին կառավարման գործերին։ Բոլորը, այս կամ այն չափով, հարկային և զինվորական որոշ պարտավորություններ ունեին սուլթանական կառավարության հանդեպ:

Այս ընդհանուր բնութագրմանը բնորոշ օրինակ կարող է ծառայել Բիթլիսի Աբդալ խանի քրդական հյուքումեթը: Նախապես պետք է նշել, որ Էվ. Չելեբին, ըստ իր սովորության, չափազանցություններ է անում և փորձում է Աբդալ խանին ներկայացնել իբրև տաղանդավոր գիտնական, գրականագետ, լեզվաբան, հարուստ և ուժեղ մի իշխանավոր։

Աբդալ խանը իսկապես իր հյուքումեթի սահմաններում իշխել է գրեթե անկախորեն, հսկայական հարստություն է դիզել ի հաշիվ քրդական ցեղերի անխնա շահագործման և կողոպտման։ Աբդալ խանը լինելով մի ավազակաբարո անձնավորություն, միժամանակ անխնա կողոպտել ու թալանել է թուրք, հայ և այլ ազգությունների իշխողներին, վաճառականներին և աշխատավոր տարրերին։

Թեև Էվ. Չելեբին լռությամբ է անցնում, սակայն պատմությունից հայտնի է, որ այդ դարաշրջանում, Բիթլիսի հայ վաճառականները Փոքր Ասիայի և Եվրոպայի շուկաներում լայն առևտրական գործունեություն են ծավալել։ Կասկած չի կարող լինել, որ Աբդալ խանի համար հարուստ հայ վաճառականները եկամտի կարևոր աղբյուր են հանդիսացել։ Էվ. Չելեբիի հիացմունքով նկարագրած Բիթլիս քաղաքի բարձր կուլտուրական կյանքը, նրա շքեղություններն ու ճոխությունները, անտարակույս, մեծ չափով եղել են հայ վաճառականների կուտակած հարստությունների արդյունք։ Էվ. Չելեբին գտնում է, որ Բիթլիսի բարգավաճման գոր-

ծում մեծ դեր է կատարել Արդալ խանը, որն անկասկած ճիշտ չէ և արդյունք է էվ. Չելեբիի դեպի ոչ-իսլամները ունեցած անբարյացակամ վերաբերմունքի և իր իսլամական ֆանատիզմի։

Եթե քուրդ Աբդալ խանը հանդիսանում է XVII դարի Թուրքիայի ռազմաֆեոդալական վարչական-կառավարական սիստեմի՝ հյուքումեթների տիպիկ ներկայացուցիչը, ապա սադրազամ Մելեք Ահմեդ փաշան իր մեջ մարմնավորում է այդ դարաշրջանի (և հաջորդ դարերի) սուլթանական ռեժիմի պետական բարձր պաշտոնյաների (վեզիր, սադրազամ, բեյլերբեյի և այլն) տիպարը։ Վանի էյալեթի տիրակալ Մելեք Ահմեդ փաշան եղել է այդ ընդարձակ ու կարևոր էյալեթի բացարձակ տերն ու տնօրենը, ունեցել է վարչական-քաղաքական, ռազմական անսահմանափակ իրավունքներ և այդ ամենը օգտագործել է իր անսահման հափշտակությունների, կողոպուտների և կաշառակերությունների համար։ Նա վայելելով սուլթանի համակրանքն (անշուշտ կարճատև) ու վստահությունը՝ դարձել է էյալեթի բացարձակ տիրակալը։ Շատ հատկանշական է Աբդալ խանի դեմ Մելեք Ահմեդ փաշայի կազմակերպած արշավանքը, որը ոչնչով չէր տարբերվում երկու պետությունների միջև մղվող պատերազմական գործողություններից։ Այդ պատերազմը Էվլիյա Չելեբին նկարագրել է իր բոլոր մանրամասնություններով։ Աբդալ խանի պարտությամբ և փախուստով սկսում է խանի արՐունիՐի և նրա անբավ հարստությունների թալանումը, որի մեջ Մելեք Ահմեդ փաշան ստանում է իր առյուծի բաժինը։

Մելեք Ահմեդ փաշայի և Աբդալ խանի հարաբերությունները բնորոշ են միջնադարյան սուլթանական Թուրքիայի ռազմաֆեոդալական կարգերի համար և հետևաբար, որպես պատմական փաստ արժանի ուշադրության։ (Տե՛ս նաև այս հատորի 49-րդ ծանոթագրությունը)։

78. **Թեֆսիր** — ղուրանի որոշ խոսքերը մեկնաբանելու և բացատրելու, ինչպես նաև անհրաժեշտ մանրամասնություններ տալու համար գրված գրքեր։

79. **Ձերբաֆ** — ոսկեհուռ դիպակ։

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. **Եգտ Ջըրտ** — տե՛ս հատոր IV, ծանոթագրություն 52։

2. Օսմանյան բանակի մեջ տարբեր վիլայեթների կամ գավառների զինվորները տարբեր անուններով էին կոչվում։

3. **Չորս դավանանք** — Մուհամմեդ մարգարեի հիմնած իսլամական կրոնը. անփոփոխ և անաղարտ չի մնացել։ Ժամանակի ընթացքում երևան են եկել տարբեր դավանանքներ, ինչպես Հանեֆի, Մալիքի. Շաֆիի և Հանբելի, և աղանդներ, ինչպես Շիի։

4. **Էնդերուն և բիրուն** — Էնդերուն (պարսկ.) բառացի նշանակում է ներս, ներքին։ Էնդերուն է կոչվել սուլթանական արքունիքի ներքին մասը, այսինքն հարեմը՝ իր բազմաթիվ աղաներով, ներքինիներով և ծառայողներով։ Բիրուն (պարսկ.) բառացի նշանակում է դուրս, արտաքին։ Սուլթանական արքունիքի արտաքին մասը, որը համեմատաբար ավելի բաց էր և որտեղ գտնվում էր արքունիքի գրասենյակը, իր բոլոր հարակից մասերով։ Այստեղ սուլթանը ընդունում էր իր վեզիրներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, ինչպես նաև օտար դեսպան-

ներին և հյուրերին։ Էնդերունի և բիրունի ծառայողների հսկայական բանակներն ունեին իրենց հատուկ վարչական կարգը և սովորությունները։ Էնդերունի ղեկավարները կոչվում էին Ներքին աղաներ (ին․ աղալարը), իսկ բիրունինը՝ դըրսի աղաներ (դըշ աղալարը)։

5. Աթ-մեյդանիի դեպքերը — Աթ-մեյդանին (բառացի՝ ձիու հրապարակ) Ստամբուլի սուլթան Ահմեդի հրապարակի հին անունն է։ Աթ-մեյդանիի դեպքերը տեղի են ունեցել 1066 (1651) թվականի մարտի 4-ին։ Պատճառը եղել է այն, որ սիփահիների և ենիչերիների ռոճիկը կառավարության կողմից վճարվել է ոչ-լիարժեք փողերով (ակչե)։ Այդ փողերը սարրաֆները վերցրել են շատ պակաս արժեքով։

Նախապես պլանավորված սիփահիները և ենիչերիները հավաքվում են Աթ-մեյդանիում և պահանջում են սուլթանից 30 մարդու գլուխներ (կառավարության ղեկավարների և արքունիքի աղաների)։ Երիտասարդ փադիշահ սուլթան Մուհամմեդ IV-ը ստիպված է լինում բավարարել ապստամբների պահանջները։ Ապստամբներն ամեն օր (իրենց ցուցակով) մի քանի մարդիկ էին գտնում, սպանում և նրանց դիակները գլխիվայր կախում էին սուլթան Ահմեդի (Աթ-մեյդանի) հրապարակում և ցուցադրում ժողովրդին։ Այդ դեպքերի կապակցությամբ Ստամբուլում 5 օր կյանքը կանգ է առնում։

6. Էվ. Չելեբիի Բիթլիսում եղած ժամանակ Աբդալ խանը նրան մի ներկատուն է նվիրել։

7. Կազ-գյոլի — սագի լիճ։

8. Աղզը-աչըք մաղարա — բերանը բաց քարայր։

9. Էվ. Չելեբիի այս սխալի մասին տե՛ս հատոր II, ծանոթագրություն 72։

10. Էվ. Չելեբին օգտվելով բազմաթիվ արաբ, պարսիկ, հույն, հայ և այլ պատմագիրներից, իր նկարագրած և ուսումնասիրած գրեթե բոլոր քաղաքների մասին տալիս է պատմական տեղեկություններ։ Այդ պատմական տեղեկությունները և ստուգաբանությունները հաճախ ավանդական, նույնիսկ առասպելական բնույթ ունեն։ Սակայն, այնուհանդերձ, Չելեբիի կողմից օգտագործված պատմական աղբյուրները, այն էլ XVII դարի պայմաններում, երբ նա գրեթե անընդմեջ մոտ չորս տասնամյակ շարունակ ճանապարհորդել է զանազան երկրներ, անպայման դժվարացել է ուսումնասիրել այդքան բազմաթիվ և բազմալեզու աղբյուրները։ Էվ. Չելեբին իր օգտագործած պատմական բազմաթիվ աղբյուրների մասին ոչ մի լրացուցիչ տեղեկություն չի տալիս, չի նշում այդ պատմագիրների երկերի անունները, օգտագործված էջերը և այլն։ Այս հանգամանքը շատ է դժվարացնում նրա կողմից օգտագործված աղբյուրների հայտնաբերումը։ Հավանաբար այդ աղբյուրների մի մասը մեզ չի հասել, գուցե և չեն տպագրվել։ Այս պատճառներով միշտ չէ որ մենք հնարավորություն ենք ունեցել այդ աղբյուրների մասին տալ կոնկրետ ծանոթություններ։ Այսպես, Էվ. Չելեբին Թոքաթի բերդի մասին հատվածում իր օգտագործած արաբ, աջեմ, հույն աղբյուրների հետ հիշում է նաև հայկական աղբյուրների մասին, առանց նշելու, թե ո՞ր աղբյուրներն են եղել իր ձեռքի տակ։ Չենք կասկածում, որ Էվ. Չելեբին իսկապես ուղղակի կամ անուղղակի կերպով ծանոթ է եղել միջնադարյան հայ պատմագիրների աշխատություններին։ Նրա «Ուղեգրության» մեջ կան որոշ նյութեր, որոնք ցույց են տալիս, որ Էվ. Չելեբին ծանոթ է եղել նաև հայերեն լեզվին (դժվար է ասել, թե ինչ չափով)։ Նա հաճախ հիշում է հայերեն բառեր և արտահայտություններ, տալով նրանց ճիշտ իմաստը

(օրինակ՝ վանք, գերան, վարդապետ, մշակ, մեռոն, կաթնապուր, հայկական հագուստներ, կոշիկներ և այլն)։ Առհասարակ բոլոր մեծ և փոքր լեզուների մասին էվ. Չելեբիի հետաքրքրությունը, այդ լեզուներից բերված բառերի, խոսակցությունների, առածների շատ հարուստ նմուշները, ցույց են տալիս նրա առանձին հետաքրքրությունն ու վերաբերմունքը դեպի մուսուլման և ոչ-մուսուլման ժողովուրդների լեզուները։

11. Հաջի Բեկթաշ Վելի Խորասանի — *իր ուսումը ստացել է Խորասանում հայտնի Շեյխ Լոկմանի Խորասանիի մոտ։ Բեկթաշ Վելին այցելել է մուսուլմանական բոլոր նվիրական վայրերը և գալով Անատոլիա, շարունակել է կրթել և պատրաստել իր նմաններին։ Մահացել է 738 (1337) թվականին։*

12. Վալիդե սուլթան—*վալիդե (արաբ.) նշանակում է մայր։ Վալիդե սուլթան էին կոչվում օսմանյան սուլթանների հարազատ մայրերը, որոնք թե փադիշահական արքունիքում և թե կառավարության գործերում լայն իրավունքներ ունեին։ Վալիդե սուլթանները բացարձակ հեղինակություն ունեին հարեմում։ Սուլթանները հաճախ պարտավոր էին լսել և հաշվի առնել Վալիդե սուլթանների ցանկությունները և առաջարկները։ Վալիդե սուլթանները հաճախ մասնակցել կամ կազմակերպել են պալատական դավադրություններ։ Վալիդե սուլթանները ունեին շատ ընդարձակ հողեր, որոնցից հսկայական եկամուտ էին ստանում։ Այդ եկամտի որոշ մասը նրանք հատկացնում էին վակֆներին կամ այլ բարեգործական հիմնարկներին։*

13. Գյուգում — *երկարաձև նեղ բերանով ջրի պղնձյա սափոր։*

14. Լահուրի երկիր — *Հնդկաստանում, Ռավ գետի եզերքին ընկած Լահուրի էյալեթի կենտրոնը կոչվում է* Լահուր: *Անցյալում խիստ բարեշեն է եղել, բայց հետագայում ավերվել է։ Լահուրում պատրաստվել են շատ հայտնի զենքեր և մասնավորապես մետաքսյա գործվածքներ։*

Լահուրը երկար ժամանակ եղել է մոնղոլական փադիշահների կենտրոնը։

15. Իլմ-ի հադիս — *իլմ (արաբ.)՝ գիտություն, հադիս նշանակում է Մուհամմեդի խոսքեր և գործեր։ Իլմ-ի հադիսը Մուհամմեդի գործունեությունն ուսումնասիրող գիտություններից է։ Այդ գիտության կարևոր մասերից է շարիաթական օրենքների և կանոնների վերաբերյալ գիտությունը, որը կոչվում է* Իլմ-ի ֆըկհ: *Մուսուլմանական արդարադատությունն ու դատավարությունը հիմնված է ֆըկհի վրա։*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղա Մուհամմեդ փաշա, *Էրզրումի վալի* — *58, 59, 67, 135, 290*
Աբդալ խան, *Բիթլիսի քուրդ խան* — *163, 166, 194, 195, 197, 199, 202—204, 243, 252—255, 263, 267—270, 303, 305—307*
Աբդյուլ Կադեր Գիլանի, *իսլամական կադեր աղանդի հիմնադիր* — *291*
Աբդյուլ Մեթալիբ — *158, 159*
Աբդուլլահ, *վեհափառ Օմերի որդին* — *264*
Աբդուլ Ռահման Ջամի, *բանաստեղծ* — *294*
Աբրահամ — *209, 212*
Ադամ — *297*
Ալա աղա — *57*
Ալաչա Աքլի Հասան աղա — *73*
Ալեքսանդր խան-օղլի, *վրացի զինվորական ղեկավար* — *129*
Ալեքսանդր Մակեդոնացի — *39, 88, 99—101, 104, 107, 125, 165, 168, 170, 191, 196, 199, 210, 223, 228, 299*
Ալեքսանդր Մեծ — *տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի*
Ալ-Ջյուլկադեր Ալա-Ուդդևլե — *142*
Ալի Աղա — *88*
Ալի Աղա, *Կարսի դիզդար* — *123*
Ալի բեյ, *Գենջի իշխող* — *168*
Ալի բեյ, *Մուտիկի իշխող* — *198*
Ալի խան, *Թավրիզի իշխող* — *74*
Ալի խան, *Վանի խան* — *232*
Ալիխան-օղլի Գենջալի, *Երևանի խան* — *65*
Ալի Կուշչի, *թուրք գրող* — *249*
Ալի Ջավուշ — *147*
Ալփ Ասլան — *296*
Ակ-բաշ-Աղա — *147*
Ահմեդ աղա — *236*
Ահմեդ աղա, *Էրզանացի* — *252*
Ահմեդ Միդհատ, *թուրք գրականագետ* — *8, 9, 281*
Ահմեդ Ջևդեթ, *թուրք հրատարակիչ* — *9*
Արիստո (Արիստոտել) — *72, 78*
Աքասերետեն — *162*

Բաբարթին Հինդի (Էբու-Ջենդ Հինդի) — *148, 149*
Բախր Նասար (Բախտ-ուլ-Նասր) — *տե՛ս Նաբուգոդոնոսոր*
Բակր փաշա — *130*
Բահրամ Յուրի — *72*
Բահրամ փաշա — *118*
Բայազիդ խան, *Սուլեյման Կանունիի շեհզադե* — *231*
Բայազիդ-Վելի — *տե՛ս Սուլթան Բայազիդ խան II*
Բայենդուր խան — *213*
Բայրամ փաշա, *Ստամբուլի մեծ վեզիր* — *33, 82, 83*
Բարթոլդ Վ., *սովետական ակադեմիկոս, արևելագետ* — *10, 11*
Բաքի — *6*
Բեթլեմյոս *տե՛ս Պտղոմեոս*
Բելամ իբն Բաուր — *173*
Բեյդիվան, *վրացական առասպելական իշխանազուն* — *108*
Բայրքլի Մուհամմեդ փաշա, *Սելիմ 1-ի մեծ վեզիր* — *132, 159, 162—164, 167, 181, 184, 190, 264*

Բիթլիս (Բիդլիս). *Ալեքսանդր Մակեդոնացու գանձապահը* — *104, 106, 166, 196, 199*
Բլանլի Ալի փաշա — *116*
Բյուլգեյսե — *155, 274*

Գենջի աղա — *241*
Գյունդուզ-բայ խան, *Ակ կոյունլի շահերից* — *122*
Գյուրջի Մուհամմեդ փաշա, *Անատոլիայի վեզիր* — *83*
Գյուրջի Ների, *ավազակ* — *258*

Դաբանի Յասը Մուհամմեդ փաշա. *սադրազամ* — *71, 83, 84*
Դադիանի. *վրացի իշխանազուն* — *108*
Դանիշմենդ Ի. Հ., *պատմագիր* — *303*
Դավիթ խան, *Վրաստանի թագավոր* — *104, 299*
Դավիթ *(մարգարե)* — *108, 228, 246*
Դարա շահ, *Բաքվի բերդի կառուցողը* — *94*
Դելի Աբդի աղա, *Վանի ենիչերիների աղա* — *241, 252*
Դելի Հասան, *Թուրքիայում գյուղացիական ապստամբական շարժման ղեկավարներից* — *290*
Դեյի Հյուսեյին փաշա, *ծովակալ* — *83*
Դեմիրջի-օղլի — *242*
Դեսթե խանի — *72*
Դերվիշ-աղա, *Սեֆեր փաշայի քեթխուդան* — *112, 136*
Դեֆթերդար-զադե Մուհամմեդ փաշա, *Էվլիա Չելեբիի ուղեկիցը Էրզրում գնալիս* — *52, 74, 94, 129, 137*
Դիզդար-օղլի — *219*
Դիլավեր փաշա-զադե Մուրադ փաշա — *147*
Դիշլենկ Հյուսեյին փաշա — *58*
Դուկ-Աղ — *271*
Դելեթ Միրզա խան — *72*

Եզդան Բեհրամ — *168*
Եզդ Ջիրդ *(նաև Յըզդ Ջըրդ)* — *90, 92, 101, 106, 264, 268, 303, 306*

Զալ-Իբնի Սամ խան — *291*
Զալ փաշա-զադե — *201, 208, 214, 217, 219, 220*
Զեբիդե. *Հարուն էլ-Ռաշիդի տիկնանցից* — *75*
Զելիխա — *274*
Զեհակ Մարի — *149, 297*
Զեմերիա, *իսլամական նվիրական անձ* — *144, 149, 155, 159*
Զիաեդդին բեյ, *Բիթլիսի Աբդալ խանի որդին* — *254, 255, 267*
Զյուլֆիմար խան — *71*
Զոլաք Սուլթան խան, *Ուրմիայի խանի որդին* — *244*

Էբշիր փաշա, *Հալեպի վալի* — *262, 274*
Էբուբեքիր, *խալիֆա* — *180, 246, 300*
Էբու-Լ-Ֆեթհ — *տե՛ս Սուլթան Ֆաթիհ Մուհամմեդ II Ղազի*
Էբու-ուլ Նեսր Մուզաֆերեդդին — *տե՛ս Սուլթան Ուզուն Հասան*
Էզին — *157*
Էլ Մելիք Իզեդդին — *115*
Էլմելիք ուլ-Ազիզ Կըլըչ Արսլան Շահ Իբն-Մասուդ — *տե՛ս Կըլըչ Արսլան*
Էլմելիք-ուլ-Մուզաֆֆեր. *սուլթան, Դիարբեքիրի իշխող* — *180*
Էլմուքեմիդ Բաալլահ. *Կուլեբ բերդի հիմնադիր* — *168*
Էլմյուքեվեքիլ-Ուլալահ, *Աբասյան, խալիֆա* — *75*
Էլ-Մյուսթիքֆի Բաալլահ — *213*
Էլ-Մուսթենսեր Բաալլահ — *115, 116*
Էմին բեյ, *Մահմուդիի բեյերից* — *229*
Էմին Օմեր բին-Լոկման, *մեհափառ Օմերի որդին* — *157*
Էմիր-Գյոնե խան, *Երևանի խան* — *82, 85*
Էմիր Թիմուր — *81*
Էմիր Կայըն — *215*
Էմիր Ումրան-Լոկման — *155*
Էոզդեմիր-զադե Օսման փաշա *(նաև Էոզդեմիր-օղլի Օսման փաշա)* — *75, 76, 87—89, 93, 95, 98—101*
Էսփոզան, *Ռաքբե կայսրի աղջիկը* — *177*
Էսիրլի Ռամազան Էֆենդի — *111*

Էվլիյա բեյ, *Մահմուդիի բեյերից* — 252, 262
Էրբիշ փաշա, *մեծ վեզիր* — 227
Էրզեն Բայ բին-Սոկրար-բին Կյունդուզ բայ, *Ակ Կոյունլի փադիշահներից* — 57
Էրթուղրուլ, *Ալ-օսմանների նախահայրը* — 57, 213, 271, 272, 292
Էրջիշնե, *կայսր* — 144, 149

Թակիանոս — 163
Թաջեդդին Ալիշան, *պարսկական շահ* — 217, 229, 237
Թավաքչի Մուստաֆա փաշա, *Էրզրումի վալի* — 252
Թեմեր Սերխան — 26
Թեմրեղ — 108
Թեմրիս խան-օղլի, *Վրաստանի խաներից* — 82, 102, 103, 129, 130
Թեփան Ահմեդ Աղա — 136, 137
Թիմուր-դաշ, *Չոբանյան դինաստիայի ներկայացուցիչ* — 300
Թիմուր — *տե՛ս Լենգ Թեմուր*
Թիմուր Կազըք Խալիլ փաշա — 58
Թոհֆե, *պատմագիր* — 100, 123, 295
Թոփալ Մուհամմեդ փաշա-զադե Հասան փաշա — 116
Թոքմաք խան, *սերդար* — 81, 82, 85
Թևաշի Սուլեյման փաշա, *Սուլեյման կանունիի վեզիր* — 245

Իբն-ի Բաթուրա — 5, 8, 12
Իբն-ի Իսհակ — 100
Իբրահիմ Բեյ, *Խոշաբի իշխող* — 244, 260
Իբրահիմ բեյ, *Փալուի իշխող* — 164, 165
Իբրահիմ էֆենդի, *շեյխ* — 115
Իզզեր Ռիճեյ — 189
Իմամ Ալի Ռիզա — 70
Իմամ Կուլի խան — 105
Իմամ էրու Հանիֆե, *Հանեֆի դավանանքի հիմնադիր* — 294
Իմամ Շաֆի, *Շաֆիի դավանանքի հիմնադիր* — 72, 294, 301
Իմամ Ջաֆեր — 291

Ինվան, *պատմագիր* — 155, 196
Իսա Չելեբի, *Յըլդըրմ Բայազիդի շեհզադե* — 52, 134
Իսքենդեր Զյուլկառնեյն — *տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի*
Իսքենդեր շահ — 98
Իուտերայ խան — 104

Լալա *կամ* Լալա Մուսրաֆա փաշա — *տե՛ս Լալա Կարա Մուսթաֆա փաշա*
Լալա Կարա Մուսրաֆա փաշա, *Սուլթան Մուրադ III-ի վեզիր, սերդար* —87—89, 93, 112—114, 116, 118
Լալա Ֆերհատ փաշա — *տե՛ս Ֆերհադ փաշա*
Լենգ Թեմուր — 40, 52, 53, 70, 109 116, 122, 123, 132, 134, 149 — 153, 157—160, 164, 170, 177, 190, 191, 194, 214, 221, 225, 228, 229, 232, 251, 269, 272, 273, 294
Լևենտ խան-օղլի Էրքելադ բեյ — 88, 114, 129

Խալիդ իբնի Վելիդ, *Երուսաղեմի սերդար* — 144, 162, 163
Խալիֆա, *մեծ սերդար* — 180
Խալիֆ Իդրիս — 163
Խանըմ Սուլթան, *Բիթլիսի Աբդալ խանի կինը* — 201
Խերասան բեյ — 115
Խիյաբի Ահմեդ փաշա, *վեզիր* — 257
Խոշ-Աղա — 49
Խոջա Ահմեդ Եսևի, *Թուրքերի նախահայրերից* — 271
Խոջա-խան Լեճազանի — 81
Խոջա Սատիխան — 97
Խուսրև փաշա, *սուլթան Մուրագ IV-ի ժամանակակից* — 59
Խուսրև փաշա, *Սուլեյման Կանունիի վեզիր, Վանի էյալեթի իշխող* — 207, 226, 229, 230, 242, 247

Կաբա Կուլաք Մուստաֆա աղա — 226
Կազըք Խալիլ — 228
Կարըրջի-օղլի, *ավազակապետ* — 258

Կայա Ալբ-բայ — *213*
Կայա Սուլթան, *սուլթան Մուրադ IV-ի որդին — 69*
Կասրոխին, *Կայսր — 157*
Կարա Անմեդ, *Դիարբեքիրի մելիք — 163*
Կարա Մուսթաֆա փաշա, *Մուրադ IV-ի ենիչերիների աղա — 83*
Կարա Մուրադ փաշա — *227*
Կարա Մուրթուզա փաշա — *26, 228*
Կարա Յազըչի — *53*
Կարա Յուսուֆ, *քուրդ ցեղապետ — 66*
Կարա Յուսուֆ-բին Ջելայիր. *Ադրբեջանի Կարա Կոյունլի շահերից — 109, 116, 123, 134, 214, 221, 229, 272, 273*
Կարա Յուսուֆ խան, *Կարա Կոյունլի խաներից — 194*
Կարա Սայիդ. *Ջելալիների ապստամբության պարագլուխներից — 53*
Կարշաչայ խան — *102*
Կըլըչ Արսլան — *153, 221, 224, 235, 268, 271*
Կըյթասի բեյ — *87*
Կիամելեր — *136*
Կիդոֆե — *274*
Կլեոպատրա — *274*
Կոչու Ջալ փաշա — *տե՛ս Ջալ փաշա-զադե*
Կոջա Խուսրև փաշա—*տե՛ս Խուսրև փաշա*
Կոջա Սեֆեր փաշա, *վեզիր, Ախալցխայի իշխող — 26, 112, 129, 130, 136*
Կոջա Ֆերհաա փաշա — *տե՛ս Ֆերհադ փաշա*
Կոստանդին Կայսր — *21, 38, 40*
Կրաչկովսկի Ի., *սովետական ակադեմիկոս, արևելագետ — 10—12*
Կուբաթ փաշա — *95*
Կուրատ — *293*

Հաբեբ, *դիցաբանական — 302*
Հազո բեյ — *253*
Հաթեմ դայի — *158, 159*
Համիդ էֆենդի — *5, 219*
Հայդար փաշա — *79*
Հանտիկ Մելիք — *189*
Հաջի Բեկթաշ Վելի Խորասանի — *271, 272, 278, 308*
Հաջի Ջարալլահ — *220*
Հաջի Սուլեյման, *լարախաղաց — 237*
Հասան — *242*
Հասան բեյ — *244*
Հասան-դադե, *ծովակալ — 69*
Հասան Շահ — *196*
Հարուն-էլ Ռաշիդ, *Բաղդատի խալիֆա— 75, 149 157, 176*
Հելաֆու խան — *75, 98, 116, 190*
Հեյդար — *267*
Հեշամ-բին Աբդյուլ Մելիք — *109*
Հերսեֆ Զադե Ահմեդ փաշա — *48*
Հեֆարի, *Ալ-Աբասիներից — 259*
Հյուսեյին — *242*
Հյուսեյին Աղա-զադե, *էրզրումի ալայի բեյ — 58*
Հյուսեյին Բայկարա — *տե՛ս Սուլթան Հյուսեյին Բայկարա*
Հյուսնի փաշա — *105*
Հուսեյին աղա, *Վանի աղաներից — 226*

Ղիյասեդդին-բին էլ Սուկբեդիր — *261*

Մահմուդ III — *70*
Մահմուդ փաշա — *116*
Մահմուդ փաշա-Աթիկ, *Յաթիհի վեզիրը — 38, 126*
Մանսուր Զադե Մուսթաֆա. Նուրի փաշա — *286, 287*
Մարալե — *Վրաստանի առասպելական իշխանազուն — 108*
Մարկո Պոլո — *8, 9*
Մարուլ (Մարալ) խան, *Վրաստանի արքա — 127, 274*
Մելեք Անմեդ փաշա, *վեզիր, էվ. Չելեբիի էֆենդին — 34, 66, 69, 187, 195, 204, 206, 207, 226—228, 239, 241, 251, 252, 256, 258, 262, 263, 266, 267, 302, 303, 306*
Մելիք Դանիշմենդ Ահմեդ Ղազի — *296*
Մելիք Ջալութ — *228, 256, 303*
Մելիք Քուրդում — *192*
Մեկթուլ Իբրահիմ փաշա, *Սուլեյման Կանունիի մեծ սերդարը — 229, 230, 240*
Մեհմեդ բեյ — *299*

Մեհմեդ-բին Ռիշար, իմամ — 141
Մեմենման, *փադիշահ* — 213
Մեմուն, *խալիֆա* — 75
Մենգեր Բարա — 164
Մենուչեհր — 70, 291
Մեջենդի խան — 122
Մեսուտ Չիլերի, *տե՛ս Շեյխ Բայ-Չե-լերի* — 249
Միխալ Շահ — 99
Միմար Սինան, *ճարտարապետ* — 146—148, 296
Միմինդի-օղլի — 219
Միր Աբի — 202
Միր Ալիշերի Նավոյի — 294
Միր Սիփեհրի — 249
Միրվան-էլ-Համար — 73
Միր Ֆերրահ — 84
Մյուրբեգա բեյ, *Հազոյի իշխող, Բիթլիսի Աբդալ խանի փեսան* — 195
Մյուրբեօա փաշա, *Շամի, հետագայում Սվազի իշխող* —152, 172, 258
Մյուրբեգա փաշա. *Սուլթան Մուրադ IV-ի ժամանակակից, Երևանի իշխող* — 84
Մյուֆրի Լֆենդի — 147
Մոլլա Իդրիսի Բիթլիսի — 162, 163, 181, 264
Մոլլա Մուհամմեդ Շաֆար — 252
Մոնլա Կուրբեդդին — 73
Մովսես, *նվիրական անձ* — 184
Մուավիյե — 144
Մուկադդես, *պատմաբան* — 159, 165, 166, 192, 208, 212, 298
Մուհամմեդ բեյ — 252
Մուհամմեդ բին Դանիշմենդ բին-Մելիք Ղազի — 176
Մուհամմեդ փաշա, *Գենջի իշխող, Ֆեր-հադ փաշայի ժամանակակից* — 86
Մուհամմեդ փաշա, *Էրզրումի վալի, Եվլ. Չելեբիի ժամանակակից* — 131
Մուհամմեդ փաշա. *Հալեպի վալի, Սուլ-թան Մուրադ III-ի ժամանակակից* — 89
Մուհամմեդ, *մարգարե* — 78, 84 100, 127, 176, 229, 278, 285, 288, 300, 306, 308
Մուղազ խան — 120
Մուսա, *Յըլդըրմ Բայազիդի շեհզադե* — 134
Մուստաֆա խան, *Ամասիայի իշխող, Սու-լեյման Կանունիի շեհզադե* — 231
Մուսթաֆա փաշա, *Էրզրումի վալի* — 105
Մուսթաֆա փաշա, *Մարաշի էյալեթի մյութասարիֆ, Մուրադ III-ի ժամա-նակակից* — 89
Մուրադ փաշա, *սադրազամ* — 258
Մելանա, *նվիրական անձ* — 272

Յահյա, *նվիրական անձ* — 149, 300
Յաշլի — 242
Յեզիտ-բին Աբդել Մելեք — 100, 293
Յըզդան Կուլի — 71
Յըլդըրմ Բայազիդ — *տե՛ս Սուլթան Յըլդըրմ Բայազիդ խան*
Յունիս (*Նաև Ջյունուն*), *նվիրական անձ* — 176, 179, 182, 300
Յուսուֆ, *քեթխուդա* — 254
Յուսուֆ Ջելալի, *Ադրբեջանի իշխող, Կա-րա Կոյունլի շահերից* — 196

Նարուզողոնոսոր — 69, 159, 190, 291, 298
Նաջիբ *էֆենդի* — 147
Նասրեդդին Խոջա — 150
Նեմրուդ — 108, 170, 208, 209, 211, 212, 294, 299
Նեջարի — 6
Նեջիբ Ասըմ, *թուրք պատմագիր* — 8,9
Նեռ — 295
Նոյ — 99, 192
Նեշիրվան-Ադիլ — 57, 68. 69, 101, 103, 104, 107, 109, 119, 120, 158, 159, 176, 180, 228, 293

Շահ Աբբաս — 76, 78, 92
Շահ Էլկաս Միրզա — 75. 92, 93, 229—232
Շահ Էֆրասյաբ 71, 291
Շահ Թահմասբ խան — 86, 92, 93, 208, 229—231, 293

Շահ Իսմայիլ — *81, 92, 101, 103, 109, 110, 119, 120, 132, 134, 168, 181, 214, 293*
Շահ-Մնֆի — *72*
Շահ-Շափուր — *68*
Շահ-Ջիհան. *Ակ Կոյունլի իշխողներից — 246*
Շանի էֆենդի — *241, 249*
Շեմսեդդին Սամի. *Թուրք բառարանագետ — 296*
Շեմս փաշա-զադե Մուհամմեդ էմին փաշա. *Վանի իշխող — 227, 258, 259*
Շեյխ Բայ-Չելեբի — *249*
Շեյխ Լոնմանի խորասանի — *308*
Շեյխ Մուստաֆա Ախլաթի — *212, 216, 302*
Շեյխ Սեֆի. Շահ Իսմայիլի հայրը — *78, 109*
Շերեֆ խան. *Բիթլիսի խան, «Շերեֆնամեի» հեղինակը — 163, 210, 229, 230, 293*
Շերեֆ խան Մահմուդի — *223*
Շիրե — *250*
Շիրիզդան խան — *244*
Շիրին — *56*
Շորագեր — *123, 294, 295*

Չաղան — *301*
Չալըք Սնֆի աղա — *123*
Չելեբի էվլիյա — *5—17, 21, 22, 32—37, 44, 46, 51, 52, 55—57, 61, 63, 65, 68, 70, 73, 74, 76—79, 90, 94, 100, 103, 108, 117—119, 124—129, 131, 133, 135, 138, 140—143, 146, 148, 149, 153—155, 160, 175, 179, 185—187, 192, 195, 196, 199, 201—204, 206, 207, 213, 216, 217, 227, 228, 239, 247, 250—256, 258, 259, 262—264, 266, 267, 270, 274—278, 281, 282, 284, 286—289, 291—299, 301—303, 305—308*
Չելեբի Սուլթան Մուհամմեդ — *տե՛ս Սուլթան Չելեբի Մուհամմեդ խան*
Չեմափուր — *169*
Չերքիս Բեն (Ջերքիս) — *189, 190, 301*
Չերքեզ Իսքենդեր փաշա — *241*
Չերքեզ Մուհամմեդ փաշա, *սերդար—58*
Չոլոք Միր-Ազիզ — *244*
Չոմար, *հայտնի ավազակապետը — 258*
Չրաղ խան — *100*
Չնելի-զադե — *147*

Պտղոմեոս — *147, 219*

Ջալուք — *տե՛ս Մելիք Ջալութ*
Ջահանգիր, *Կարա Կոյունլի իշխողներից — 286*
Ջանփոլադ-զադե Մուստաֆա փաշա — *83*
Ջաֆեր էլ Մեսուր — *141*
Ջաֆեր էֆենդի, *էրզրումի գրող — 124, 271*
Ջաֆեր փաշա — *76, 116*
Ջելալեդդին Ռումի — *297*
Ջեմիշիմե, կայոր — *142, 149, 296*
Ջեմշիդ — *163*
Ջիհանգիր, *Սուլեյման Կանունիի շեհզադե — 231*
Ջինգիզ խան — *213, 294*
Ջղալե Զադե Մուհամմեդ փաշա — *290*
Ջղալե-զադե *Յուսուֆ փաշա — 76, 82*

Ռակքե, *կայսր — 176, 177*
Ռեշատ Էքրեմ Կոչուն, *Թուրք պատմագիր — 12*
Ռեվան Կուլի խան — *81*
Ռիզա-էդդին խան — *72*
Ռուժի — *6*
Ռուհի — *185*
Ռում-օղլի Խերդիլիե, *կայսր — 37, 144*
Ռուսթեմ — *258*
Ռուստեմ փաշա — *225, 232, 241*

Սաղման, *քուրդ բեյ — 163*
Սայար-Նովա — *297*
Սավուրի-օղլի — *219*
Սարի Սոլաղ — *237*
Սեհրան խան — *167*
Սեյդ Ջաֆեր Բաթալ Ղազի — *149, 157*
Սեյդի Ահմեդ փաշա — *127—131*
Սեյֆ-ուլ-Դիլե Իբն-Սեմդան — *190*

Սերֆիլ-օղլու — *250*
Սեֆեր փաշա — *տե՛ս Կոշա Սեֆեր փաշա*
Սիմոն — *108*
Սինան — *տե՛ս Միմար Սինան*
Սիվալ փաշա — *266*
Սյունբյուլլի Բաբա — *272*
Սոլաք Զադե, *պատմագիր* — *34*
Սոլաք Ֆիրհատ փաշա-զադե Մուհամմեդ փաշա — *105*
Սուլեյման, *նվիրական անձ* — *155*
Սուլեյման բայ, *Էրթուղրուլի հայրը* — *213*
Սուլեյման բեյ, *մահմուդի, խոշաբի իշխող* — *260*
Սուլեյման բեյ, *Վանի աղաներից* — *226, 241, 242*
Սուլեյման Չեման — *259*
Սուլեյման շահ — *57, 68, 292*
Սուլեյման Չելեբի, *Յըլդըրմ Բայազիդի շեհզադեն* — *134*
Սուլեյման փաշա, *սադրազամ* — *266*
Սուլթան Ալաեդդին Քեյկուբադ Սելջուկի — *37, 152, 156, 157, 176, 271, 297*
Սուլթան Ահմեդ Ջելայիր — *32, 134*
Սուլթան Բայազիդ խան *II* — *40, 45, 54, 125 134, 141, 150, 155, 269, 297*
Սուլթան Բերկոկ — *134*
Սուլթան Զահրեդդին — *133, 134*
Սուլթան Էվհադուլլահ — *166, 180, 196, 199*
Սուլթան Իբրահիմ խան — *40, 130, 206, 274*
Սուլթան Կալավուն — *184*
Սուլթան Հյուսեյին Բայկարա — *122, 171, 294, 295, 300*
Սուլթան Մելիք-Իդեդդին Իյդուլլահ — *116*
Սուլթան Մելիք Ղազի, *Ալ-Դանիշմենդներից* — *52, 149*
Սուլթան Ֆաթիհ Մուհամմեդ II Ղազի — *21, 22, 38, 40, 42, 48, 52, 54, 58. 65, 125—127, 134, 136, 214, 269, 286, 288, 295*
Սուլթան Մուհամմեդ խան *III, Էյրիի ֆաթիհ* — *71, 73, 86, 285*
Սուլթան Մուհամմեդ IV — *26, 307*
Սուլթան Մուհամմեդ Շահ-Ղազան — *75*
Սուլթան Մուսթաֆա խան — *87, 88, 106*
Սուլթան Մուրադ *I* — *40*
Սուլթան Մուրադ *III* — *75, 81, 87, 88, 90, 93, 98, 100, 104, 106, 116, 293 300*
Սուլթան Մուրադ *IV* — *5, 10, 26, 31—34, 40, 59, 66, 69, 71, 72, 74, 76, 80, 82—85, 98, 111, 123, 198, 204, 206, 236, 237, 244, 245, 302*
Սուլթան Յըլդըրմ Բայազիդ խան — *37, 52, 109, 133, 134, 138, 149, 150, 176, 214, 229 272—274, 288*
Սուլթան Չելեբի Մուհամմեդ խան — *134, 150, 152, 155, 157, 158, 297*
Սուլթան Ջելայիր — *213*
Սուլթան Սելիմ խան *I* — *25, 39, 40, 45, 103, 109, 110, 112—114, 132—134, 136, 155, 159, 162—164, 167, 168, 180, 181, 184, 190, 194, 196, 214, 264, 269*
Սուլթան Սելիմ *II* — *32, 231*
Սուլթան Սուլեյման Կանունի — *10, 22, 27, 30, 32, 40, 41, 58, 66, 69, 70, 75, 81, 82, 92, 93, 116, 119, 120, 123, 126, 127, 132, 135, 144, 146, 147, 150, 157, 158, 162, 167, 177, 190. 194, 201, 208, 214, 217—222, 224, 225, 229—232, 234, 238, 240, 244—247, 260, 262, 269, 274, 282, 296, 302*
Սուլթան Ուզուն Հասան — *38—40, 48, 58, 65, 68, 109, 119, 122, 125—127, 132, 134, 194, 196, 214, 229, 269, 286, 290*
Սուլթան ուլ-Ուլեմա — *272*
Սուլթան Քերիմ-էդդին — *116*
Սուլթան Օսման *II* — *32, 290*

Վանի Չելեբի, *Վանի բանաստեղծներից* — *249*
Վարդար Ալի փաշա — *274*

Ուլամե փաշա — *92, 125, 230, 231,*
Ուշար խան — *122*

Փեհլեի Ահմեդ փաշա — *266*
Փերթև փաշա — *9, 93*
Փերիխան — *274*
Փիր Դեդե — *Սուլթան* — *138*
Փիր փաշա — *92, 231, 232*

Քեթենչի Օմեր փաշա, *Տրապիզոնի իշխող* — *39, 47*
Քերֆուչ փաշա — *130*
Քել Ռուստեմ խան — *228, 238, 239, 262*
Քեյմուրաս շահ (Գյուլշահ), *Իրանի շահերից* — *87, 149, 297*
Քեյքավուս — *108*
Քեսթիֆան — *156*
Քեֆթան փաշա — *295*
Քյոփրյուլու Մուստաֆա փաշա — *300*
Քյուչյուկ Ահմեդ փաշա — *83*
Քյուրդյան Յ. — *14, 15*

Օրֆիթայ խան, *Ակ-Կոյունլի խաներից* — *122*
Օկչի Զադե — *43*
Օմեր աղա. *Վանի ենիչերիների աղա* — *236, 246*
Օմեր աղա, *Քեթենչի Օմեր փաշայի քեթխուդան Տրապիզոնում* — *47*
Օմեր *(վեհափառ), Նվիրական անձ* — *142, 144, 155, 157, 180, 264*
Օսման աղա — *227*
Օսման խան, *Հաջի Բեկթաշի որդին* — *272*
Օսմանջըղ — *271*
Օսման փաշա, *Չըլդըրի ճակատամարտում բանակի հրամանատար* — *105, 299*
Օրբելի Ի. Ա. — *289*

Ֆաթիհ — *տե՛ս Սուլթան Ֆաթիհ Մուհամմեդ II*
Ֆելասեկե — *149*
Ֆերհադ — *56*
Ֆերհադ. *առասպելական հերոս* — *52, 166*
Ֆերհադ փաշա, *Սուլթան Մուրադ III-ի մեծ սերդարը* *79, 81, 82, 85, 86, 90, 93, 103, 104, 112*
Ֆիզուլի. *պարսիկ բանաստեղծ* — *6, 185, 204*
Ֆիլկոս-Յունանի, *Ալեքսանդր մեծի իմաստուն, բժիշկ* — *125, 166, 170*
Ֆիրաբի Մուստաֆա փաշա, *Դիարբեքիրի վալի* — *195*
Ֆիրդուսի — *255*
Ֆիրուզ Աղայ — *116*
Ֆոն Համմեր, *գերմանացի արևելագետ* — *9, 14*

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբասա, նաև Շահնազե (*Աբխազիա*) — 40, 45, 49—51, 288
Աբասիստան — *տե՛ս Աբազա*
Աբաղա, *գավառ Վանի էյալեթում* — 74, 209, 246, 261
Աբարան (Ապարան), *գյուղ* — 122
Աբդալլար, *գյուղ* — 122
Աբլան, *գյուղ*, — 226
Աբխազիա — *տե՛ս Աբազա*
Աբյուր — 59
Ադանա — 15, 23, 25, 54, 110, 141, 142, 174, 225, 229, 251, 258
Ադիլջևազ (Արծկե) — 15, 26, 30, 32, 169, 176, 208, 217, 219, 221, 222, 227, 231, 242, 243, 245, 253, 255, 256, 267
Ադրբեջան — 15, 39, 40, 57, 58, 65, 68, 71, 73, 74, 76, 79, 81, 85, 93, 103, 109, 110, 119, 125, 169, 194, 196, 210, 213, 217, 224, 229, 231, 232, 246, 272
Ազաք (Ազով), *բերդ* — 45, 49, 51. 64, 100, 288
Ազգիրխան (Աստրախան) — 94
Ազդուր (Ալեքսանդրի Դուռ) — 37, 106, 107, 109, 123
Ազզաք, *գյուղ Ախլաթի սանջաքում* — 212
Ազովի ծով — 288
Աթաք, *բերդ Դիարբեքիրի էյալեթում* — 25, 29, 141, 168—170, 172, 182, 305
Աթենք — 157, 216, 249
Աթինա — *տե՛ս Աթենք*
Ալա-դաղ (*Ծաղկոտն*) — 222, 223
Ալ, *բերդ Ախալցխայի մոտ* — 112
Ալբերզ — *տե՛ս Էլբրուս*
Ալեքսանդրեպ — 141, 142
Ալթուն Կալասի — 112
Ալման — *տե՛ս Գերմանիա*
Ալ-Օսմանի երկիր — *տե՛ս Թուրքիա*
Ախալցխա — 15, 26, 29, 37, 82, 106, 107, 109—113, 117, 118, 124, 129, 130, 136
Ախալքալաք — 31, 112,
Ախար, *բերդ Վրաստանում* — 130
Ախարիս, *բերդ Արդահանի մոտ* — 113
Ախթամար — 12, 16, 209, 249, ՝256, 257, 301
Ախլաթ — 26, 32, 57, 64, 176, 198, 208, 212—217, 220, 223, 229, 242, 253, 267, 269
Ակ-դաղ — 52, 53
Ակսարա (*դաշտ*) — 56
Ակ շեհիր — 231
Ակչա Կալա — 25, 29, 37, 124, 125, 127, 131, 181, 182, 246
Ակչե Աբադ — 286
Ակ սարայ — 149, 268
Աղաչ բաշի, *լեռ Տրապիզոնի մոտ* — 47
Աղաքիս, *սանջաք Վանի էյալեթում* — 26, 30, 227, 243, 245
Աղզը-աչըք մաղարա, *գյուղ* — 270
Աղրի-դաղ — *տե՛ս Արարատ*
Ամադիե — 192
Ամասիա — 15, 25, 28, 31, 37, 38,

52—56. 133, 138, 139. 151, 154, 176, 177, 231, 271, 277, 278
Ամեդ — *տե՛ս Դիարբեքիր*
Ամիկ (Ամիք), *բերդ Բերկրիի շրջանում* — 176, 209, 224—226, 229, 242, 266, 302
Այասլուք — 216
Այդընջըք — 155, 216
Այնթապ — 28, 31, 109, 139, 142, 143, 154, 187
Այնի-Հայաթ-գյոլի, *լիճ Բինգյոլում* — 174
Ան (Անի), *բերդ* — 120
Անտ — 59
Անասա — 51
Անատոլիա 7, 14—16, 22, 23, 30, 32, 37, 42, 82, 83, 116, 121, 124, 125, 129, 132, 134, 136, 138, 154, 171, 174, 176, 185, 193, 216, 229, 251, 257, 271, 290, 292, 296, 302
Անատոլի Հիսար, *բերդ Բոսֆորում* — 34
Անդրկովկաս — 5, 13, 15—17, 281, 296
Անթալիա Կարահիսար — 134, 261
Անթաքիա — 141, 142, 216
Աշերդ — 127
Աչըք-բաշի — *տե՛ս Քութախիա*
Աջարա, *բերդ* — 26, 110, 113
Աջեմ, Աջեմի երկիր, Աջեմիստան — *տե՛ս Իրան*
Առտեր, *կղզի* — 302
Ասաքլան — 216
Ասիա — 13, 298, 305
Ասիթանե — *տե՛ս Ստամբուլ*
Ասրեզ, *գետ* — 65
Ասորիա — 289
Ավարի երկիր — 98, 103
Ավխեթչի, *բերդ* — 113
Ավստրիա — 285
Ատալիա — *տե՛ս Անթալիա*
Արաբական թերակղզի — 288
Արաբկիր — 25, 28, 31, 151, 156, 158, 159, 173, 298
Արաբիա, Արաբի երկիր — 7, 154, 171, 186, 217, 257, 273
Արաբստան — *տե՛ս Արաբիա*
Արազ (Արաքս) — 67, 70, 73, 74, 80, 84, 111, 119, 120, 122—124, 194, 270, 291, 292
Արա Յաթին — 277
Արարատ, *լեռ* — 119, 172, 175
Արդալան — 192
Արդահան — 26, 29, 32, 37, 82, 106, 110, 112, 113
Արդենիչ — *տե՛ս Արտանուշ*
Արեշ (նաև Արս) — 37, 87—90, 103, 107
Արթեֆ, *հայկական գյուղ* — 67
Արդնի — *տե՛ս Էրգանի*
Արնեշ *(նաև Արջիշ)* — 15, 26, 30, 32, 176. 212, 218, 221, 222, 227, 242, 243, 245, 253, 255, 256, 264, 267, 268
Արնավուտլուք (Ալբանիա) — 222
Արտանուջ (Արդանուջ) — 26, 29, 32, 110, 113
Արտամետ, *գյուղ Վանա ծովեզերքում* — 209, 234, 239, 242, 246, 251, 261
Արփա-չայ — 119, 120, 122, 123
Արփա Ջուքուրի — *տե՛ս Սվազ*
Արֆաթե, *լեռներ* — 143
Աքար — 125
Աք-սու *(նաև Գիլան-չայի), գետ* — 89—92, 143, 223, 292
Աք-սու, *գյուղաքաղաք* — 92
Աք-սու բայիր, *ժայռ* — 275
Աք-Քերփի, *լեռ* — 209, 226, 257
Աևադեն-գյոլի, *լիճ Բինգյոլում* — 173
Աֆիոն Կարահիսար — 136, 261
Աֆրիկա — 298

Բաբելոն — 197, 294, 299
Բաբ-էլ-Էբվաբ — *տե՛ս Դերբենդ*
Բաթա — 59
Բաթման *(նաև Բեթման), գետ* — 166, 176, 189, 191—194
Բաթումի — 29, 31, 37, 40, 41, 48, 129
Բալա-բուրջ, *ժայռ* — 248
Բալիս *(ներկայումս՝ Մեսքենե)* — 59
Բալլի-գյոլի, *լիճ Բինգյոլում* — 174
Բահրեյն — 289

Բաղդադ — 23, 24, 32, 34, 72, 75, 78. 84, 134, 137, 149, 165, 181, 188, 189, 191, 192, 204, 206, 216, 220, 230, 263, 264, 302, 305
Բաղեն — 165
Բաղբ — 108
Բուղինկ — 159
Բայազիդ, բերդ — 26, 30, 32, 84, 124, 227, 243, 246
Բայբուրդ — 37, 47, 49, 124, 126, 127, 132, 180, 286
Բասեն — 26—28, 32, 58, 65—67, 115, 124, 264, 270, 284
Բասնեֆա, գետ — 191
Բասրա — 23, 24, 59, 165, 166, 188, 189, 192, 216
Բատելչանլի — 115
Բարկիր Կալասի — տե՛ս Բերկրի
Բարդուզ, բերդ — 115
Բաքու — 15, 37, 81, 85, 94—98, 101 102, 106, 210, 292
Բաֆրա — 147
Բեզտուք, ձոր — 262
Բեքայիճ — 60
Բելաղ — 216
Բելամ — գյոլի, լիճ Բինգյոլում — 173
Բելգրադ — 230
Բելխ — 124, 297
Բեհիստուն — 80
Բեյ-Բազար — 53
Բեյթ-էլլեհեմ (Բեթղեհեմ) — 171
Բենդեր-բաբ (Բաբ-էլ-էբվաբ) — տե՛ս Դերբենդ
Բենդի Մահի, գետ, նաև վայր — 210, 212, 223, 224, 242
Բենի Կոթուր — 26, 30, 227, 230, 244, 245, 262
Բեչնե — 130
Բերդա — 26, 30, 243, 245
Բերկրի (Բարղիր) — 26, 30, 32, 176, 209, 210, 223, 224, 227, 229, 243, 245, 253, 266, 302, 305
Բեքեմ, գյուղ — 122
Բիղզար, բերդ — 229
Բիթլիս — 11, 15, 26, 104, 163, 166, 168—170, 176, 193—203, 205—207, 223, 226, 227, 229, 230, 242, 243, 245, 247, 249, 252—255, 258, 263, 264, 266—269, 281, 293, 303, 305, 307
Բինգյոլ — 59, 67, 68, 119, 125, 132, 141, 143, 165, 167, 172—175, 206, 269, 270
Բիրեդուս — 244
Բիրեջիկ, բերդ — 59, 117, 242
Բյոյուք չայիր — 175
Բյուտուրք — 26
Բոզդան — 299
Բոզավոր — 25
Բոզ-թեփե — 43, 45
Բոզոք — 28
Բոլու — 52
Բոհթան — 186
Բողազքեսեն — 54
Բողտա, դաշտ — 130
Բոսնիա (նաև Բոշնաք)—24, 125, 138 222
Բոր. քաղաք — 149
Բորիստան — 86
Բրուսա — 55, 87, 146, 175, 176, 194, 200, 275
Բուդապեշտ (Բուդին, Բուդա) — 24, 157, 297
Բուլաք, գյուղ — 123
Բուլուկ — 52
Բուխարա — 124

Գահիրե — տե՛ս Կահիրե
Գանավքարիզ, գետ Սամսունում — '38
Գավաշ, Վանի գավառներից, նաև գետ— 209, 242, 256
Գեզգի, լեռ — 42, 287
Գեղերլեր-սույու, գետ — 145
Գելիյե, բերդ — 39
Գեյբդե — 266
Գենջ, քրդական հյուքումեթ Դիարբեքիրի էյալեթում — 14, 25, 167, 168, 182
Գեոնեք չայ — 209
Գերգեզ, գյուղ — 74
Գերմանիա — 7, 230, 231

Գիլան — 95, 96, 98, 101, 102, 106
Գիլանի ծով — տե՛ս Կասպից ծով
Գիյեխ — 305
Գյանջա (Նաև Գենջե) — 15, 37, 76, 81, 82, 86, 87, 93, 107, 112, 214
Գյոլի Հիսար, բերդ — 56
Գյոքղուլաք, գյուղ — 122, 210
Գյոքսու — 91, 143
Գյուզել Դերե — 208, 209, 254
Գյումյուշ — 52, 139, 277
Գյումուշխանե — 26, 125, 126
Գյուրջիստան — տե՛ս Վրաստան
Գորիլ — 26, 39
Գունիա — 26, 41, 48—50, 127—129, 131, 137
Գուրբելի — 91
Գուրնա — 165

Դաղիանի — 26, 91
Դալեկիրտ — 243, 245
Դաղստան — 50, 87—91, 96 98—103, 109, 123, 293
Դամասկոս — 15, 22, 23, 109, 116, 125, 130, 141, 142, 144, 158, 161, 178, 184, 192, 229, 258, 293
Դանիա — 7
Դանուբ — 50, 96
Դաշկին, գյուղ — 268
Դատանլի — 127, 128
Դատվան — 169, 176, 197, 198, 208, 211, 231, 242, 253, 267, 301
Դար-ի Իման — տե՛ս Վան
Դարճեմա, բերդ — 141
Դար-ու-Սեադեթ — տե՛ս Ստամբուլ
Դարյան (Դարյալ) — 100
Դելիկլի-թաշ (Ծակ քար), գյուղ — 221
Դեճլիգի Ջերջե — 23
Դեղին գեա — 292
Դեմիր. Դեմիր Կափու — տե՛ս Դերբենդ
Դեմիրչի Հասան, գյուղ Երևանի մոտ — 86
Դեմիրջի, գյուղ Վանի մոտ — 221
Դեյիրման-Բողազ — 144
Դեյիրման Դերե, նավահանգիստ — 48, 203
Դեյրի Մեսիհ, գետ — 177
Դենբուլ — 244
Դեշան, լեռ — 139
Դերանիյե — 129
Դերբենդ — 50, 76, 93, 95, 97—101, 103, 165, 293
Դերգեզիր — 231
Դերբենկ — 192
Դերնե — 192
Դիալե, գետ — 165
Դիարբեքիր — 16, 23—25, 29, 31, 34, 60, 109, 152, 155, 159, 160, 162—166, 168, 172, 174, 176, 179—187, 189—191, 193—195, 198, 206, 226, 229, 230, 253, 264, 265, 286, 305
Դիմավենտ — 297
Դիվան, լեռ — 197
Դիվանե Դերեսի, բերդ Թորթումի մոտ — 127
Դիվրիկ — 25, 28, 31, 141, 151, 155—157
Դոն — 288, 292
Դոքին — 231
Դուբլիջե, գյուղ — 159
Դում-Դեմի — 244
Դումլի բաբա — 59
Դուշ Կիյա — 123
Դուրգիստան — 142
Դևե Բոյուն — 65, 239, 241
Դևելի Կարահիսար — 261

Եավիսեն, նավահանգիստ — 50
Եգիպտոս — 7, 23, 24, 40, 125, 134, 184, 213, 216, 273, 282, 289, 294, 301
Եմեն — 289
Ենի Շեհիր — 277
Եվրոպա — 9, 13, 105
Երզնկա — 14, 15, 37, 64, 128, 132—135, 264, 266, 271, 286
Երս, գետ — 74
Երուսաղեմ — 142, 144, 171, 184, 257, 274, 298

Եփրատ — 59, 60, 114, 117, 125, 132 155—159, 165, 172, 177, 179, 186, 190, 191, 213
Երևան — 14, 15, 17, 32, 37, 60, 65—67, 71, 74, 76, 79—85, 93, 96, 101, 111, 112, 115, 118, 120, 122, 123, 125, 170, 172, 175, 198, 206, 214, 237, 244, 257, 260, 270, 282, 300

Զանգի (*Զանգու*) — 67, 70, 73, 81, 83, 85, 122,, 123 172, 270, 291, 292
Զարեհավան — 26, 29, 37, 117, 120
Զար-չայիր — 129
Զեռ — 171
Զեյթուն — 52
Զենուն-Աբադ — 52
Զերնեկ-գյոլի, լիճ Բինգյոլում — 174
Զեքեմ, *բերդ* — 104, 105
Զեքուք (Զնիկ), *գյուղ* — 259
Զիաեդդին, *բերդ* — 68, 246
Զիլե — 25, 277
Զինխան, *բերդ* — 124
Զինուս, *գյուղ* — 74
Զղանոս, *լեռ* — 43
Զյուլկադերիե — 28, 141, 143
Զո, *լեռներ* — 194
Զրիկ (*նաև Զիրիկ*) — 26, 195, 198, 227, 243, 245, 253, 254, 266

Էգիլ — *տե՛ս Էգին*
Էգին (*նաև Ակն*) — 25, 29, 141, 156—158, 165, 167, 182, 183, 305
Էդիրնե — 93, 146, 231
Էլբիստան — 143, 149
Էլբրուր, *գետ* — 200
Էլբրուս (Էլբիզ) — 50, 51, 91, 99, 100, 103, 123, 172, 216
Էլ Հասե — 24
Էլենջար Վան, *բերդ* — 73
Էլ Ջեզիրե — 25, 186, 187
Էլքիշ, *բերդ* — 213
Էմիր-Ախոր — 127
Էյդ, *գյուղ* — 114
Էյերլի, *լեռ* — 59, 173
Էյրի — 24, 38, 73, 86, 285, 286
Էյրի սույու — 286
Էյուբ — 33, 34
Էնգյուրի (Անկարա) — 140
Էնտելյուս (Անդալուզիա) — 293
Էնտեր, *գյուղ* — 56
Էշիր — 243
Էոզբեկ — 98
Էոզի — 24
Էջմիածին — *տե՛ս Ուչքիլիսե*
Էսադ Արշադ — 230, 231
Էսբերզան — 157
Էսփահան (Սպահան) — 30, 243, 254
Էսփոզան, *լեռ Մալաթիայի մոտ* — 177—179
Էսքի շեհիր — 85
Էվեջիք — 30
Էր գյոլի, *լիճ Բինգյոլում* — 173
Էրգանե — *տե՛ս Արղնի*
Երզուղ — 231
Էրդեբիլ — 78, 79, 231
Էրեջիք — 243
Էրզրում (Էրզենի Ռում) — 7, 14—16, 23, 25—28, 31, 37, 43, 46 47, 51, 52, 57—66, 68, 74, 79, 82, 83, 94, 105, 109, 110, 113—115, 117—119, 122—129, 131—136, 143, 150, 154, 165, 172, 173, 175, 192, 193, 198, 206, 207, 222, 231, 252, 264, 268, 269, 271, 284, 286, 290, 300, 302
Էրբեֆ, *բերդ* — 67
Էրղանի — 25, 31, 165, 176, 179, 181—183, 299
Էրղուն, *բերդ* — 111
Էրմենաք — 225
Էրջեք (Արճակ), *բերդ* — 261
Էրջիշ — *տե՛ս Արճեշ*
Էրջիս (Էրջիաս), *լեռ* — 144, 147, 1 296
Էրս-*տե՛ս Արեշ*
Էքրատ — 26, 30, 243
Էքրատ Բենի Կորուր — 243
Էքրատի-Մակու 246
Էֆլաք — 299
Էֆրեսյար — 115

Ըլըջա, *գյուղ* — 57, 132

Թաբարիստան — 131, 138
Թալըշ, *գյուղ* — 120
Թախտի Մեշան — 165
Թախտի վան — *տե՛ս Դատվան*
Թակուկ — 59
Թաման, *թերակղզի* — 51, 91
Թավրիզ — 15, 32, 37, 74—76, 78—80, 89, 93, 94, 98, 108, 203, 214, 230—232, 244, 245, 260, 263- 291
Թարաբլուս-ի Շամ — 23, 24, 229
Թարսուս — 25, 216
Թեբրիսբան — 216
Թեղման — 284
Թել, *գետ* — 178
Թեմշիվար — 24
Թենվիզե — 229
Թեսոն — 230
Թեովի — 74
Թերեմ, *գետ, նաև բերդ* — 74, 98, 102, 175, 291
Թերկոս, *բերդ* — 21
Թերջան — 40, 56, 58, 125, 180, 196, 214,
Թերջանլի Ալի Աղա, *գյուղ* — 57
Թերջիլ, *բերդ նաև գետ* — 25, 29, 31, 60, 169, 182, 198, 305
Թեքելի, *գյուղ* — 120
Թեքհիս — 127
Թեքման — 28, 32, 58
Թեքրիխ — 60
Թիզ, *գետ* — 171
Թիլ-չայի — *տե՛ս Գյոք-սու*
Թիրե — 126, 175
Թիֆլիս — 15, 37, 76, 78, 91, 103—107, 109, 112, 287, 299
Թոխմա, *գետ* — 178
Թոսյա — 266
Թորթում — 27, 28, 32, 37, 58, 64, 113, 124, 125, 127, 128, 284
Թոփխանե — 213
Թոքաթ — 15, 25, 38, 54, 150, 154, 155, 264, 271—275, 277, 278, 307
Թուզանլի — 53, 54, 56, 277
Թուզ-Ասար, *լեռ* — 151
Թուր-Ալիմ — 80
Թուկար, *լեռ* — 277
Թումանիս — 76
Թունիս — 23, 24
Թուրան — 76, 100
Թուրհալ — 277
Թուրքեստան — 292, 294, 295
Թուրքիա — 7, 12, 14, 23, 32, 52, 54, 58, 59, 93, 96, 106, 109, 116, 119, 121, 125, 143, 144, 152, 155, 159, 170, 228, 229, 243, 260, 281, 282, 287, 290, 293, 295, 298, 302, 304, 306
Թուրքմենիստան — 132, 138
Թևաչ — 245

Ժան, *գետակ* — 74

Իզմիր — 22, 63, 266, 287
Իզվիլի — 165
Իզոլի քուրդեր — 59
Իլյաս-գյոլի, *լիճ Բինգյոլում* — 173
Իյնե-փազարի — 52, 53, 277
Ինեքի, *բերդ* — 114
Իշիվան — 159
Իշմե-գյոլի, *լիճ Բինգյոլում* — 174
Իսկյուբ — 125
Իսպիր — 27, 28, 32, 37, 58, 64, 110, 124, 128, 284
Իսփերդ — 227, 245
Իսքելե — 249
Իսքենդեր, *գետ, ձոր* — 197, 200
Իսքենդերիե — 216
Իսքենդերուն — *տե՛ս Ալեքսանդրեթ*
Իսքիլիբ — 277
Իսֆահան (Իսպահան) — 78, 168
Իրան — 8, 15, 37, 55, 65, 66, 68, 71, 73, 74, 76, 79, 81, 82, 84—87, 89—94, 96, 98, 100, 101, 103, 104, 105, 107, 109—111, 115, 117, 119—122, 124, 132, 139, 150, 155, 171, 172, 180, 192, 205, 210, 214, 216, 217, 219, 221, 228, 229, 231, 238, 239,

244, 245, 257, 259, 260, 262, 274, 286, 290—293, 297, 301
Իրանի Ադրբեջան — 52
Իրաք — 60, 96, 192, 216, 231
Իրաք-Պարսյան — 216
Իրիրաբ. լեռ — 112
Իրդանտ. գետ — 194
Իքի-Նեխի. լեռ — 120

Լադիկ (*նաև Լատիք*) — 37, 52, 138, 139, 154, 245
Լադիստան — 129, 287
Լանուրի երկիր — 276, 308
Լամուս — 245
Լատիք. *լիճ* — 138
Լարենտի — 225
Լեխիջան — 210
Լեհաստան — 7
Լեսան — 29
Լիմ. *կղզի* — 302
Լիյոն. *լեռ* — 75
Լիվանն — 26, 29, 110
Լհասա — 188
Լոզի — 32
Լոնդոն — 10, 14, 154
Լոռի. *բերդ Գուգարքում* — 107, 110
Լոռի — 89
Լևենտի երկիր — 88

Խաբուր — 25, 181
Խազերի ծով — *տե՛ս Կասպից ծով*
Խաբայ — 95, 292
Խաբլե — 110
Խաբվան — 285
Խաբուն-գյոլի. *լիճ Բինգյոլում* — 174
Խաբունիյե — 187
Խայաթ — 98
Խանի. *սանջաք Վանի էյալեթում* — 26
Խանի ձոր — 115
Խանչա — 41, 180
Խանչաք. *խաս Դիարբեքիրի էյալեթում* — 29, 122
Խաս չաիր — 194
Խարան. *լեռ* — 70
Խարբեր. *բերդ* — 113

Խարփուր (Խարբերդ) — 25—29, 31, 141, 159—162, 165, 181, 183, 299
Խաքիչ — 29
Խեզո — 167
Խեբենի երկիր — 103
Խելի Քուֆե — 59
Խերբվիս (Խրրբիչ) — 26, 32, 110, 112
Խերփութ — 29;
Խըզըր-գյոլի. *լիճ Բինգյոլում* — 173
Խիզան — 198, 227, 243, 254, 256, 305
Խնուս — 27, 28, 32, 37, 58, 67, 68, 132, 264, 270, 248
Խոյ — 79, 80, 214, 230
Խոշաբ. *գետ և բերդ* — 209, 244, 258—261, 305
Խոշ օղլան. *գետ* — 47
Խոշա-բայի. *գյուղ* — 85
Խոջուջան — 117
Խորասան — 272, 308
Խորխոր. *գետ Վանում* — 235, 247
Խոքենդ — 296
Խրու — 25
Խուբան — 48
Խութեն (Խաբն) — 95, 98, 292,
Խուարեզիե — 192

Կարարբա — 50
Կարոտ. *գետ* — 88
Կազան — 89, 102
Կազաք (Կազակի երկիր) — 45, 98
Կազ-գյոլի. *լիճ* — 270, 277, 307,
Կազի օզլի — 56
Կազվին — 231
Կազ-քյոյ. *գյուղ* — 270
Կաղ-օվա — 277
Կալա Թիմանի. *գետակ* — 39
Կալայի-էլ Ռում (Ռում Կալեսի) — 59, 290
Կալայի-Սուլեյմանի. *բերդ* — 259
Կալմախ (Կալմիկ) — 95, 98, 102
Կախեթ — 103, 105, 107
Կանիրե — 75, 184, 213, 294
Կաղզվան (*նաև Կաղզման*) — 26, 29, 37, 82, 118, 119, 125
Կամշի. *բերդ* — 79

70—22

Կալբաք-խան, հրվանդան — 101
Կանձա — 24
Կաշի — 103
Կապադովկիա — 293
Կասարա, գյուղաքաղաք — 292
Կասըմ օղլու, չայիր — 209
Կաստեմունի — 105, 299
Կասպից ծով — 50, 51, 67, 70, 74, 81, 91, 94, 97—101, 106, 123, 270, 293
Կավալա — 216
Կավզե — 139
Կարա Ամեդ — տե՛ս Դիարբեքիր
Կարա Արդահան — տե՛ս Արդահան
Կարաբաղ — 37, 73, 74, 76, 89
Կարաբաղլար — 70
Կարա Գյունեք, գյուղ — 114
Կարադաղներ — 76, 183
Կարադաշ — 25
Կարա Դաշլըքի Կարս — 116, 143
Կարա-Թիրի, գյուղ — 121
Կարաբովե — 125
Կարա-Կայա, լեռ — 209
Կարահիսար էֆրատ — 261
Կարահիսար-ի Շարքի — տե՛ս Շաբին Կարահիսար
Կարահիսար-ի Սահիբ — տե՛ս Աֆիոն Կարահիսար
Կարաման — 22, 23, 92, 174, 229, 231, 272, 273
Կարա Շեյխլեր — 209
Կարա-չայ, գետ — 209
Կարաջալար, գյուղ Շաբին Կարահիսարի մոտ — 56
Կարաջա-կալա — 246
Կարա-Քասըմ, գյուղ — 226
Կարա-Քյոփրյու — 165, 223
Կարբ-Նիսիբին — 181
Կարկառ — 26, 30, 227, 243, 245, 253
Կարնա — 137
Կարնը յարըք, բերդ — 229
Կարս — 14, 23—26, 28, 31, 37, 82—84, 112, 113, 115— 120, 122—124, 141, 143, 299
Կարսի Մարաշ — տե՛ս Զուլկադերիյե
Կեզան, բերդ — 113
Կեմրեք — 49
Կեջվան — 26, 29
Կեսարիա — 15, 83, 141, 144, 174, 290
Կերման — 216, 292
Կերջաս, լեռ — 132
Կերքյոք, գետ — 54
Կեփան — 229
Կեքրոզե — 52
Կեֆալե — 52
Կըզըլ ըրմաք, գետ 147
Կըզլար Կալասը, բերդ — 112
Կըզ-Կալասի, լեռ — 182
Կըբբայ — 213
Կըլլի-գյոլ, լիճ Բինգյոլում — 173
Կըրկիսա — 59
Կըրշեհիր — 132, 272
Կիլիկիա — 14, 15
Կիպրոս — 69, 70
Կիրասուն, բերդ — 37—39
Կյումյուշ — տե՛ս Գյումյուշ
Կնուր, գետ — 88
Կոթուր — տե՛ս Բենի Կոթուր
Կոմի-դամի, գյուղ — 124
Կոմուքի երկիր — 100
Կոնիա — 83, 143, 271
Կոշլունջա, կիրճ — 87
Կոջա-Կալափի — 139
Կոջա-էլ — 161
Կոսկուն կրան — 209, 252, 257, 258
Կոստանդրնիյե — տե՛ս Ստամբուլ
Կոստանդնուպոլիս — տե՛ս Ստամբուլ
Կովկաս — 7, 36, 296
Կտուց, կղզի — 302
Կուբան, գետ — 91
Կուզիջան, սանջաք Էրզրումի էյալեթում — 27, 28, 58, 284
Կուզուլի-բաբա, գյուղ — 67
Կուլեր (Կալեք) — 25, 29, 31, 168, 182, 305
Կուլի չայիր — 259
Կումլե — 130
Կուշ-գյոլի, լիճ Բինգյոլում — 173
Կուր — 67, 74, 85—87, 89, 91—93, 96, 103, 104, 106, 107, 270, 291, 292

Կուրեն, բերդ — 59, 91
Կուրու-չայ — 132
Կուֆաչ, գյուղ — 80
Կիփչաք — 64, 100—102

Հաբեշ (Հաբեշստան) — 7, 24, 282
Հաբուս, գյուղ — 161
Հազմե — 182
Հազո (նաև Հեզո) — 176, 183, 191, 195, 198, 230, 305
Հալեպ — 15, 23—25, 77, 89, 109, 117, 137, 142, 159, 175, 178, 184, 195, 205, 226, 229, 230, 262, 275, 278, 290
Համա — 54, 142
Համադան — 32, 78, 231, 263
Հայաստան — 5, 7, 13—17, 22, 281, 282, 290, 297
Հաջի Հարամի, գյուղ — 79
Հաջի Մուրադ, բերդ — 138
Հաջրեֆ (նաև Հեջրեք) — 26, 32, 110, 112
Հասան Աբադ — տե՛ս Հասան Կալա
Հասան Ջիյադ էոլմեսի (Հասան Ջիյադի երկիր) — 299
Հասան Թափա — 224
Հասան Կալա — 37, 43, 58, 65, 66, 83, 115, 124, 194, 244, 264, 270
Հատիշե — 59
Հարեմե-գյոլի, լիճ Բինգյոլում — 173
Հարիր — 192
Հերսի — 57
Հեզեք Ալի, գետ — 165
Հել — 229
Հեմազար, բերդ — 113
Հեմեշղեֆ — 94
Հեյճար — 92, 292, 293
Հենդուսբեն (Հասպսբան), գյուղ — 259
Հերսեֆի — 193
Հեֆարի — 26, 125, 192, 198, 208 209, 227, 243—245 252, 257, 258, 261, 266, 305
Հիդան — տե՛ս Խիդան
Հիյե — 59
Հիջազ — 283, 288
Հիսնի Քեֆ — 25, 29, 31, 60, 181, 182, 191, 192, 265
Հիրունի — 227, 245
Հնդկաստան — 45, 59, 96, 149, 293, 300, 308
Հոլանդիա — 7
Հոմս — 142, 246
Հոջոջան — 26, 28
Հորան — 216
Հրենդ — 230
Հունաստան 144, 154, 157, 308
Հունգարիա — 7, 9, 103, 171, 292, 297
Հուսուլ, գետ — 200

Ձիրդեխան — 199
Ձոխուրիե, գյուղ — 103

Ղազի Սեֆեր փաշա, բերդ — 113
Ղազվին — 32
Ղալաբա — 33, 34
Ղեման — 192
Ղրիմ — 7, 24, 36, 45, 46, 100—102, 139, 216, 283, 288

Ճորոխ (նաև Չորուխ), գետ — 46, 49, 50, 129, 131, 287

Մադեն — 201, 265, 266
Մազանդարան — 84, 206
Մալազկերտ (Մանազկերտ) — 27, 28, 32, 37, 58, 67, 120, 198, 252—255, 264, 266, 268—270, 284
Մալաթիա (նաև էսփողան, Թակբե)— 28, 59, 109, 155, 157, 158, 174, 176—179, 190
Մալբա — 51
Մալբեփե — 54
Մախչա (Մաչկա) — 26
Մախջիլ, սանջաք Չըլդըրի էյալեթում— 26, 29, 110, 113
Մակեդոնիա — 154
Մակու — 62, 155
Մաճանի երկիր — 57, 90, 126, 139, 213, 292, 302
Մանմուլ Աբադ — 89, 90, 93

Մահմուդի — *26, 209, 227, 229, 244, 258, 261*
Մահնոզ — *48*
Մաղազբերդ — *տե՛ս Մալազկերտ*
Մաղնիսա — *175*
Մամա-խաթուն — *37, 57, 132*
Մամրվան — *27, 58, 113, 114, 284*
Մաջարիստան — *տե՛ս Հունգարիա*
Մավերա էլ նեհր — *143, 296*
Մարաշ — *15, 22, 24, 31, 89, 109, 110, 141—144, 149, 154, 174, 176, 177, 229, 296*
Մարաշի Կարս — *116*
Մարդին, *բերդ* — *89, 155, 176, 181, 184, 187, 188*
Մարզվան (*նաև Մերզիֆուն*) — *37, 52, 125, 138—140, 154, 266, 277*
Մեգրելիստան — *26, 37, 40, 41, 46—50, 91, 99, 128—131, 295*
Մեդինե — *158, 283, 289, 301*
Մեզիտխան — *79*
Մեզիրեր, *գյուղ* — *158*
Մելախի — *216*
Մելաճին, *գյուղ* — *262*
Մելլիի Ռիվան, *գյուղ* — *80*
Մեծ Արդահան — *տե՛ս Արդահան*
Մեծ Արբեֆ, *գյուղ* — *67*
Մեծ Վալե — *112, 113*
Մեծ Փելունայի երկիր — *88*
Մեհրանիե — *25, 169, 182, 305*
Մեյտանչեմ — *115*
Մենարմըմ-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *174*
Մենբեջ, *գյուղ* — *117*
Մենգեր Բաբա — Ազիզ, *լեռներ* — *164*
Մեջնուն Ջաբ, *գետ* — *60*
Մեսմենե — *տե՛ս Բալիս*
Մետադե, *քաղաք* — *79*
Մերաշե — *231*
Մերենտ — *74, 76*
Մերվե, *բերդ* — *130*
Մեմես — *245*
Մեմսի (*հավանաբար՝ Մոկս*) — *227*
Մեմրեմ — *45*
Մեմուրուտ — *86, 87*
Մեմմա — *24, 158, 283, 288, 301*
Մըսըր — *տե՛ս Եգիպտոս*
Մժնկերտ — *27, 28, 58, 115, 284*
Միաֆարկին (*նաև Միղարկին, Միֆարկին*) — *25, 29, 60, 168, 176, 181, 183, 189—194, 216, 230*
Միհենք-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *174*
Միջագետք — *7, 11, 40, 213, 293*
Միջերկրական ծով — *293*
Միջին Ասիա — *296*
Միսկին-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *173, 174*
Միսմեր (Մեսմեր) — *95—97, 99, 102*
Մյուքարեմ, *գյուղ* — *133*
Մոլդավիա — *7, 13*
Մոհնադի, *բլուր* — *83*
Մոսկվա, Մոսկովի *երկիր* — *տե՛ս Ռուսաստան*
Մոտիկ (Մոտկան) — *198, 199, 254, 267*
Մսիս — *141*
Մսրա — *24*
Մուան-օղլի, *լեռ* — *125*
Մուղան — *89*
Մուշ — *12, 16, 26, 30, 141, 165, 166, 168—170, 172, 196, 198, 205—207, 211, 215, 221, 227, 242, 243, 255, 256, 299*
Մուսուլ — *23, 24, 60, 176, 179, 189, 191, 192, 216, 263—265, 301*
Մուրադ գետ (*նաև Մուրադ չայ*) — *59, 159, 162—169, 172, 190, 242*

Յակուտ — *202*
Յեմեն — *204*
Յոլան Մեսջիդ, *լեռ* — *47*
Յուվանե — *128*

Նազիլլի — *45*
Նախաջ — *131*
Նախիջևան — *37, 68—74, 76, 80, 81, 84, 89, 93, 94, 116, 121, 123, 171, 203, 206, 214, 257 260*
Նակելբան, *ժայռ* — *202*
Նամերվան — *28, 32, 198*
Նեզերբար, *բերդ* — *113*

Նեհավենդ — 78, 231
Նեջալս — 127
Նոսֆ-Լիվանե — 26, 110
Նիյազաբադ — 37, 90
Նիսիբին — 25, 29, 31, 181
Նիքերդ — 127, 131
Նիքհիսար (*նաև Նիքսար* — 37, 54, 56, 138, 149, 154, 258, 266
Նովերոգրդեն — 125, 126

Շաբին Կարահիսար — 14, 27, 28, 32, 37, 49, 56, 58, 135—137, 261, 284, 290
Շաբուրան — 37, 95, 98
Շաթ, *գյուղ* — 184
Շաթ (Շաթ-էլ Արաբ), *գետ* — 59, 60, 165, 166, 169, 182—184, 186, 189—191, 265
Շահ գելդի, *լեռ* — 244
Շամախի — 15, 37, 76, 81, 91—93, 95, 97, 102
Շամի Շերիֆ — *տե՛ս Դամասկոս*
Շայի, *գյուղ* — 88
Շանա, *գյուղ* — 48
Շատախ — 243, 246
Շարաբ-խանե, *գյուղ* — 80, 122
Շելուն, *լեռ* — 70
Շեհեր, *նահիյե՝ Էրզրումում* — 132
Շեհիր, *միր՝ դիարբեքիրի էյալեթում* — 182
Շեհրաբի — 216
Շեհրի Զոր — 23, 24, 193, 263
Շեհրի Ուջան — 231
Շեյբանի, *բերդ* — 112
Շեքի — 88—90, 103
Շին — 155
Շիրի, *լեռ* — 142, 143
Շիրվան — 50, 76, 81, 82, 87, 88, 90, 92—95, 98, 101, 104, 198, 201, 227, 243, 245, 254, 265, 266.
Շորադյալ — 37, 80, 82, 120, 122, 294, 295
Շոր-դյոլի, *լիճ Բինգյոլում* — 174
Շորքեր — 243
Շուշալե — 88
Շուշատ — 91
Շուշիկ, *բերդ* — 37, 65, 68
Շներկեր — 32
Շեշատ — 26, 29, 110, 112, 113

Ոստան — 198, 209, 229, 231, 242, 243, 261, 264, 266

Չաթ — 156, 159, 165
Չաղիսման, *բերդ* — 113
Չաղնի Գյոլի-Հիսար — 49
Չայբաշի — 226
Չարշամբա, *Թուզանլի գետի մի հատվածը* — 38, 54, 277
Չաքլեք — 110
Չեբաքչուր (*նաև Ճապաղջուր, Ճաբաքջուր*) — 25, 29, 31, 141, 165—167, 182, 198, 253, 305
Չեմենտիր — 195
Չենկելլի-բել — 277
Չըրգե, *գետ* — 165
Չերգ, *գյուղ* — 99
Չերքեզիստան (Չերքեզի երկիր) — 45, 50, 101, 102
Չեքիրկե, *գետ* — 277
Չըլդըր — 23, 24, 26, 29, 32, 37, 40, 103, 104, 106, 109—114, 129, 155, 159, 167, 180, 190, 194, 269, 299, 305
Չինաստան — 95, 292
Չինարլի — 165
Չիք — 131
Չմշկածագ (Չմշկեզեք) — 29, 31, 141, 156, 159, 163, 181, 182, 253
Չյոլ-թեփե — 189
Չոբանլի (*Չոբանլու*) — 32, 243, 245
Չոմաքլի, *լեռ* — 209, 224, 226
Չորս, *բերդ* — 80, 244
Չորում — 25, 28, 31, 140, 151, 277

Պաղեստին — 7, 14, 15, 301, 303
Պարսկաստան — *տե՛ս Իրան*
Պետերբուրգ — 294

Ջաբեր — 59
Ջարչա — *տե՛ս Գյումյուշխանե*
Ջաղ, *գետ* — 112

Ջանիկ — 25, 28, 31, 38, 151, 209, 226
Ջանիկլեր. գյուղ — 226
Ջանչա — 27, 124
Ջավդար. գյուղ — 138
Ջաֆեր Էֆենդի. գյուղ — 270
Ջեբբար-դյոլի. լիճ Բինգյոլում — 174
Ջեբլ-Լիբնան — 125
Ջեդիդի Սեյդա — 23
Ջեզայիր (Ալժիր) — 23, 24
Ջեզիրե. Հյուքումեթ Դիարբեքիրի էյալեթում — 60, 167, 182, 190—192, 199, 265, 305
Ջեզճ — 182
Ջեբլե — 32
Ջենովա — 38
Ջեսկե — 168
Ջերմ. բերդ—229
Ջերմիկ. սանջաք Դիարբեքիրի էյալեթում — 25, 29, 31, 182, 183, 305
Ջիհան. գետ — 291
Ջյուլամերկ, գավառ Վանի էյալեթում— 209, 243
Ջոլան — 244

Ռաբչե — 50
Ռակա — 24
Ռակբե — տե՛ս Մալաթիա
Ռահ-օվա — 205, 211, 247, 253, 267
Ռայ. գետ — 308
Ռանաշոճ, լեռ — 87
Ռաքվա — 59
Ռաքքա — 60
Ռեհա կամ Ռուհա — տե՛ս Ուրֆա
Ռիզե — 26, 48
Ռինեբ — 95
Ռուլնիրլ-գյոլի լիճ Բինգյոլում — 173
Ռուհբան, լեռ — 194
Ռուհբեյե — 59
Ռում, Ռումի Երկիր — տե՛ս Անատոլիա
Ռումելի — 22, 23, 30, 32, 82, 83, 116, 125, 138, 216, 231, 251
Ռուսաստան — 7, 94—96, 98, 292, 293, 301
Ռուսեն — 229

Սաատի, գյուղ — 189
Սալբաշ-գյոլի. լիճ Բինգյոլում — 174
Սալմաս — 80, 230, 239, 244
Սակզ (Քիոս կղզի) — 250
Սամսուն — 37, 38, 54, 139, 277
Սաչլի-դաղ. լեռ — 187
Սաոին — 110
Սարալ — 94
Սարիզելեղ — 56
Սարու կամ Սավուր — 305
Սարուխան — 231
Սեբաստիա — տե՛ս Սվազ
Սեբավիսն — 229
Սեղան — 95
Սեղերկ. գյուղ — 70
Սելանիկ — 126
Սելանկմեշ — 231
Սելեֆկե — 25, 116, 143, 174, 225
Սեկյուտչիք — 272
Սեճլան, լեռ — 75
Սեղման, բերդ — 25, 163, 182, 305
Սեմարզե — 130
Սեմերքենդ — 296
Սեմսեմատ — 28
Սեմրե, կաղա Ամասիայի սանջաքում — 52
Սեմրիք. խաս Չըլդըրի էյալեթում — 29
Սեյդի Ղազի — 231
Սեյֆեդդին, գյուղ — 80
Սենդբաս-գյոլի, լիճ Բինգյոլում — 174
Սենջակ — 125
Սենջան, լեռ — 75
Սենջար. սանջաք Դիարբեքիրի էյալեթում — 25, 31, 181, 187, 188, 205
Սետեշե — 50
Սերան — 73
Սերբիա — 299—300
Սերե — 39
Սերեբրենիչե — 125
Սերեզ — 251
Սերիր Էլլան, քաղաք — 91, 103
Սեֆար — 29
Սեֆաւքե — 115
Սեֆեր աղա, գյուղ — 67
Սեֆյան, գյուղ — 79

Սիր-Նիշան, *լեռ* — 151
Սիլիսրե — 51
Սիլիվր — 21
Սիլվան — 169
Սինուն, *գետ* — 141
Սինոպ — 37, 139, 157
Սիս — 25
Սիվրի-Իսմեյլ — 50
Սիտերկիփսի — 126
Սիրիա — 7, 14, 293
Սիփան (Սուբհան) — 169, 175, 176, 190, 212, 213, 219—221, 223
Սկյուդար — 15, 33, 34, 52, 82, 83, 141, 176, 231, 258, 266
Սղերտ (*նաև Դարի Սաիդ*) — 26, 29, 181, 182, 253, 264, 265
Սմիսար (Սամսաա) — 59, 290
Սյուրմենե — 48
Սողանլի-բելի — 124
Սորաշլի, *գետ* — 226
Սոր-ի, *գյուղ Վանա լճի ափին* — 256
Սորփ, *Վանի գավառներից* — 242, 253
Սոսո-Մարուն (*նաև Սոսի — Միրվան*) — 73
Սպահան — 199, 203, 206, 230, 231, 263
Սվազ — 15, 16, 23—25, 28, 31, 83, 109, 110, 138, 141, 144, 145, 149—155, 157, 158, 172, 175, 176, 231, 258, 273, 274, 277, 296, 297
Ստամբուլ — 5, 6, 9, 10, 12, 14—16, 21, 22, 33—38 40, 42, 50—52, 58, 63, 69, 76, 82, 83, 87, 92, 93, 113, 131, 140, 141, 148, 161, 175, 178, 184, 204, 214, 215, 227, 241, 256, 260, 264—266, 268, 274, 278, 281, 282, 284, 286, 288, 290, 293, 296, 302, 305, 307
Ստորին Զաբ, *գետ* — 60
Սրուչ, *գյուղ* — 117
Սուլեյման բեյ, *չայիր* — 259
Սուրան-Բյուրբեսի, *ժայռ* — 248
Սուլթան Կալայի — 208
Սուլթան Մելիք Ղազի, *Թեքիյե Քեմախի բերդի մոտ* — 132
Սուլթանչըմ, *գյուղ* — 88
Սուլու — 53
Սուկարի, *նավահանգիստ* — 50
Սուրան (Սուրամ), *բերդ* — 107
Սուրեգու — 246
Սևերեկ *կամ Սիվրիկ* — 25, 29, 31, 181, 182
Սև ծով — 21, 33, 35, 37—39, 42, 43, 45, 47, 49—51, 54, 91, 97, 99, 100, 127, 128, 136, 147, 277, 286, 287, 293

Վալախիա — 7
Վալդար — 113
Վան — 11, 12, 15, 16, 23, 24, 26, 30, 32, 73, 74, 93, 104, 117, 124, 155, 169—172, 174, 176, 186, 189, 192, 193, 198, 199, 206—208, 210—212, 214, 215, 218, 219, 221—232, 234—240, 242—256, 258—261, 263, 264, 266, 269, 281, 284, 302, 303, 305, 306
Վանա լիճ (*նաև Վանա ծով*) — 11, 15, 57, 161, 169, 175, 176, 190, 198, 207—212, 214, 217, 218, 221—226, 232, 234, 249, 253, 256, 257, 261, 266, 281, 301
Վանի Կարահիսար — 261
Վարագ — 12, 16, 171, 174, 175, 250, 251, 259
Վարդին — 231
Վեդանե — 32
Վենետիկ — 300
Վերայ — 52, 53
Վերին Զաբ, *գետ* — 60
Վերնիշան — 124
Վիեննա — 10
Վոլգա — 292
Վրաստան — 15, 23, 26, 36, 40, 41, 48—50, 59, 82, 88,, 91, 96, 102—105, 107—110, 112, 114, 120, 123, 125, 127, 129, 131, 201, 205, 274, 286, 287
Վրիշան — 117

Տաշքենդ — *296*
Տիբեթ — *292*
Տիգրիս — *60, 186*
Տրապիզոն (*նաև Թերեքի էֆզուն*) — *23, 24, 26, 29, 31, 37—49, 54, 58, 109, 125, 127, 129, 131, 132, 134, 136, 286, 287*

Ուզբեկստան — *96*
Ոյխ, *գետ* — *200*
Ուկրաինա — *13*
Ուման — *51*
Ումուռում-դեռե — *114, 115*
Ունիյա, *բերդ* — *38*
Ուշքիլիսե — *12, 16, 37, 68, 70, 121, 171, 257, 291*
Ուջան — *75, 79*
Ուրմիա — *239, 244, 262, 263*
Ուրֆա — *15, 23, 229, 282, 290*

Փազար Քյոփրյու, *գյուղ* — *223*
Փալաս — *182*
Փալու — *25, 141, 164, 165, 167, 183, 187, 299, 305*
Փաս, *գյուղ* — *224*
Փասիք աղա, *գյուղ* — *262*
Փեթեք — *32, 110*
Փենեք — *26, 29*
Փեսփան — *182*
Փերթեք — *25, 29, 32, 113, 141, 162, 182*
Փերթեքերք — *26, 29, 110, 305*
Փերնաք — *130*
Փերշեթնե — *125*
Փերփոյում, *բերդ* — *39*
Փերքանի, *բերդ* — *112*
Փիթանշի, *լեռներ* — *73, 74*
Փիժեն — *115*
Փիլեազդի, *լեռ* *119*
Փիյաս — *142, 175*
Փինյանիշ — *26, 227, 230, 244, 262, 263*
Փիր-Դեդե — *139*
Փիրեղուս — *227*
Փոզան — *182*

Փոզբան — *29*
Փոլթա, *նավահանգիստ* — *39, 286*
Փոլթա-բազար — *39*
Փոսխով — *26, 29, 32, 110, 112*
Փորոզ — *39*
Փոփոլ — *39*
Փոքր Ասիա — *7, 11*
Փոքր Արդահան — *26, 28, 117*

Քահքահա — *274*
Ջան, *գյուղ* — *59*
Քանան — *301*
Քանլի-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *174*
Քաշան — *231, 301*
Քաշղար — *292*
Քասիմ-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *174*
Քարբլի — *299*
Քաֆիրստան — *300*
Քեղշի — *123*
Քեթուր — *132*
Քելեք Հեզար Ահմեդ. *գյուղ* — *86*
Քեմախ (Իարի-ֆելլահ) — *37, 59, 132, 133, 150, 180*
Քենդերե, *գյուղ* — *87*
Քենզեի, *բերդ* — *113*
Քենզեք, *գյուղ* — *221*
Քեսան — *26, 227, 243, 245, 254*
Քեսրիֆան. *բերդ* — *156*
Քեսիք, *բերդ* — *235, 238, 242*
Քեսիք կալա, *ժայռ* — *239*
Քեսիքքենդ, *գյուղ* — *73*
Քեսկին — *25*
Քերեքոռե — *47*
Քերեմիլ — *79*
Քերիմ, *բերդ* — *105*
Քերմլի — *56*
Քերջաս — *132*
Քեջկվան — Դուղման, *բերդ* — *115*
Քեջվան — *117*
Քերքես-գյոլի, *լիճ Բինգյոլում* — *174*
Քերքերան — *139*
Քերքնազ — *52*
Քեփան — *258*
Քեփաս, *ժայռ* — *257*
Քեֆե (Թեոդոսիա) — *24, 46, 51, 92, 283*

Քեֆենդեր, *բերդ, գետ* — 166, 195
Քեֆերե — 265
Քիլվերի, *գետ* — 290
Քիյափին — 208
Քինավա, *բերդ* — 113
Քիս — 51
Քիֆի — *տե՛ս Քղի*
Քիֆի (Քղի) *լեռներ* — 172
Քղի — 28, 32, 58, 125, 284
Քյուրնի — 227, 245, 254
Քյոմուր, *գյուղ, գետ* — 132
Քյոփրյու — 52, 139
Քյոքսեն, *յայլա* — 142
Քյուչյուք-Ակչե — 127
Քյուչյուք-Կալա — 131
Քոլե, *բերդ* — 113
Քոյուն-Դեշիա — 88, 89
Քոսխեր (*Կվիշխեթ*), *բերդ* — 107, 111
Քոսովա — 40
Քորլատեք — 32
Քութայիսի — 26, 91, 108, 109, 112, 130
Քուռ — *տե՛ս Կուռ*
Քուրդիստան — 7, 15, 25, 65, 96, 132, 160, 165, 167, 171, 178, 180, 190, 199—201, 214, 223, 224, 229, 239, 244, 245, 251, 252, 261, 262, 264, 265, 268, 286
Քուրլադըք — 243
Քուֆե — 216

Քևաշ — 199
Քևոր — 199

Օսչըք — 164
Օրիխ, *լեռ* — 197
Օքոր — 50
Օղե, *լեռ* — 111
Օղուրխա — 112
Օզեչիք — 245
Օլթի — 26, 29, 32, 110, 113
Օղչե — 32
Օղուզ, *գյուղ* — 90
Օման — 289
Օնեչ, *ձոր* — 166
Օշարլի, *գյուղ* — 80
Օսեք — 231
Օսմանյան երկիր — *տե՛ս Թուրքիա*
Օսմանցըք — 52, 139
Օվա — 53
Օսետի, *բերդ* — 103

Ֆաղվուրի երկիր — 95, 97, 98, 292
Ֆաշե, *Ռիոն գետը* — 50, 51, 99, 100, 228, 293
Ֆենյի փերևելի, *գյուղաքաղաք* — 48
Ֆերեհ-գար — 91
Ֆերհադի լեռներ — 56
Ֆիրհատ-բողազի — 277
Ֆրանգստան (Ֆրանսիա) — 68, 69, 121, 171, 205, 217

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առաջաբան 5

Հատոր առաջին
(1041—1050 թթ. — 1631—1640 թթ.) 21

Հատոր երկրորդ
(1050—1058 թթ. — 1640—1648 թթ.) 37

Հատոր երրորդ
(1057—1060 թթ.—1647—1650 թթ.) 141

Հատոր չորրորդ
(1065 թ. =1654 թ.) 176

Հատոր հինգերորդ
(1066 թ.—1655 թ.) 264

Резюме 279

Ամփոփում (անգլերեն) 291

Ծանոթագրություններ 293

Անձնանունների ցանկ 323

Տեղանունների ցանկ 331

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գ

ԷՎԼԻՅԱ ՉԵԼԵԲԻ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
արևելագիտության սեկտորի գիտական խորհրդի
որոշմամբ

Պատ. խմբագիր՝ Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագիչ՝ Ա. Հ. ՉՈԼԱԽՅԱՆ

ՎՖ 05376, Հրատ. № 2583, ԽՀԽ № 976, պատվեր 70, տպաքանակ 3000

Հանձնված է արտադրության 18/II 1966 թ., ստորագրված է տպագրության 18/II 1967 թ., տպագր. 21,75 մամուլ, Հրատ. 19,23 մամուլ, թուղթ № 1, 60×92¹/₁₆.
Գինը 1 ռ. 40 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության № 24